



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

### About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

22 14387.31

Harvard College  
Library



FROM THE BEQUEST OF  
**JOHN HARVEY TREAT**  
OF LAWRENCE, MASS.  
CLASS OF 1862





*Burd*

# **TIMOTHEUS ÄLURUS' DES PATRIARCHEN VON ALEXANDRIEN WIDERLEGUNG DER AUF DER SYNODE ZU CHALCEDON FESTGESETZTEN LEHRE**

**ARMENISCHER TEXT**

**MIT DEUTSCHEM UND ARMENISCHEM VORWORT, ZWEI TAFELN  
UND DREIFACHEM REGISTER**

**HERAUSGEGEBEN**

**von**

**LIC. DR. KARAPET TER-MEKERTTSCHIAN  
UND**

**LIC. DR. ERWAND TER-MINASSIANTZ  
ARCHIMANDRITEN IN ETSCHMIADSIN**

---

---

**LEIPZIG**

**J. C. HINRICH'S<sup>E</sup>CHE BUCHHANDLUNG**

**1908**

**P**



**TIMOTHEUS ÄLURUS'  
DES PATRIARCHEN VON ALEXANDRIEN  
WIDERLEGUNG  
DER AUF DER SYNODE ZU CHALCEDON  
FESTGESETZTEN LEHRE**

**ARMENISCHER TEXT**

**MIT DEUTSCHEM UND ARMENISCHEM VORWORT, ZWEI TAFELN  
UND DREIFACHEM REGISTER**

**HERAUSGEGEBEN**

**VON**

**LIC. DR. KARAPET TER-MEKERTTSCHIAN  
UND**

**LIC. DR. ERWAND TER-MINASSIANTZ  
ARCHIMANDRITEN IN ETSCHMIADSIN**

---


**LEIPZIG**

**J. C. HINRICH'S'sCHE BUCHHANDLUNG**

**1908**

L 44387.31

0 L 44231.2.30



Das ganze Buch, außer Titel und deutschem Vorwort, ist in der Klosterdruckerei  
von Etschmiadsin gedruckt worden.

**DEN HOCHERWÜRDIGEN THEOLOGISCHEN FAKULTÄTEN**

**ZU**

**MARBURG UND GIESSEN**

**FÜR DIE IHNEN VERLIEHENE LIZENTIATENWÜRDE**

**MIT DANKBARKEIT GEWIDMET**

**VON DEN HERAUSGEBERN**



## Vorwort.

Wegen des ausführlichen armenischen Vorwortes, das hinter diesen Zeilen folgt, darf ich mich an dieser Stelle kürzer fassen.

Auf diese Schrift des Timotheus Älurus, des Patriarchen von Alexandrien, hat zuerst Lic. Dr. Karapet Ter-Mekertschian im Jahre 1897 aufmerksam gemacht; und weil er die Bedeutung der Schrift besonders für das Verständnis des Monophysitismus voll würdigte, begann er sie aus der einzigen, sehr alten, zum Teil schon verdorbenen Pergamenthandschrift abzuschreiben, um die Herausgabe fertigzustellen. Er wurde aber durch anderweitige Arbeiten daran gehindert, bis nach 10 Jahren, im Jahre 1906, der Unterzeichnete sich bereit erklärte beizutragen und der Erzbischof Sukias Parzian die Druckkosten bereitwillig übernahm. Nach mühsamer und ermüdender Arbeit ist es uns endlich vergönnt, die Schrift des Timotheus Älurus dem gelehrten Publikum vorzulegen.

Ich erachte es für unnötig, an dieser Stelle auf die Persönlichkeit und Lebensschicksale des Timotheus Älurus († 31. Juli 477) einzugehen. Wer sich über ihn unterrichten will, der kann alles Nötige im Artikel „Monophysiten“ von G. Krüger in der PRE<sup>3</sup>, Band 13, S. 377—380 beisammen finden. Ich möchte daher hier nur kurz von seinen Schriften handeln.

Es ist bekannt, daß Timotheus Älurus Anfang 460 in die Verbannung nach Gangra und dann nach Cherson wandern mußte, wo er über 15 Jahre blieb. In diesen langen Jahren der Verbannung saß der überzeugte Monophysit nicht müßig. Er verfaßte Abhandlungen und stellte die Zeugnisse der Väter gegen das Konzil von Chalcedon und die von ihm festgesetzte Zweiaturenlehre zusammen. Aus dieser von uns herausgegebenen Schrift (S. 329—330) erfahren wir, daß er ein anderes Werk verfaßt hat: „Ein Buch der Worte Gottes, wie ich es gelernt habe von hl. Evangelisten und hl. Aposteln und hl. Propheten und von den hl. Erzbischöfen“. Der Zweck jenes nicht vorhandenen und dieses in 2 Teile zerfallenden Buches (S. 1—52 und 52—Ende) ist nach seinen Worten: seine Anhänger und diejenigen, die die Wahrheit sehen wollen, von der Lehre der Synode zu Chalcedon fernzuhalten. Besonders bedeutsam ist an dieser Schrift die Tatsache, daß wir daraus erfahren, daß Timotheus Älurus und seine Anhänger mit Eutyches

nichts zu tun haben wollen und ihn sogar unter ausdrücklicher Nennung seines Namens verdammen (S. 145, 146, 170 und 239). Diese Tatsache mögen jetzt diejenigen nicht mehr außer acht lassen, welche bis jetzt gewohnt waren, Eutychianismus und Monophysitismus ohne weiteres zusammenzuwerfen.

Es ist uns leider nicht möglich geworden zu untersuchen, in welchem Verhältnis die von uns herausgegebene zweiteilige Schrift zu jenem Werke des Timotheus steht, das in einer alten syrischen Handschrift (vom Jahre 562) des British Museum erhalten geblieben ist<sup>1</sup>. Fr. Loofs, der die Fragmente des Nestorius herausgegeben hat<sup>2</sup>, hat auch aus jener syrischen Handschrift die Stücke des Nestorius herausziehen lassen. Jene Fragmente entsprechen nur z. Teil denen, die in diesem Werke vorliegen. Meist sind sie aber verschieden und rufen deshalb die Meinung hervor, jenes sei ein anderes Werk des Timotheus Älurus, vielleicht das oben erwähnte, armenisch nicht erhaltene Werk.

Einige Briefe von Timotheus sind auch bei Zacharias Rhetor erhalten geblieben. Man braucht nur Zach. Rhetor S. 38—51 den Brief des Timotheus Älurus<sup>3</sup> durchzulesen, um sich davon zu überzeugen, daß Timotheus selbst von dieser, von uns herausgegebenen Schrift Gebrauch gemacht hat und die Zeugnisse der Väter, die er hier gesammelt, dort ausgeschrieben hat. Vgl. z. B. ein Stück des Julius von Rom, hier S. 9, bei Zach. Rhetor S. 42. Ein Ambrosiusfragment, hier S. 18, dort 48. Fragmente des Gregorius Thaumaturgus, hier S. 20—21, 60, dort 44. Basilius der Große, hier S. 21, dort 45. Johannes Chrysostomus, hier S. 77, dort 47 usw.

Bei Zach. Rhetor<sup>4</sup> finden wir auch ein Fragment des Briefes des Dioskoros an Sekundianos, welches auch in unserm Buche steht, vor einem Fragment aus dem Briefe an die Mönche des Hennatons<sup>5</sup>.

Timotheus Älurus wurde durch seine Tätigkeit und Schriften für die Monophysiten so bedeutend, daß er einfach mit Cyrill und Dioskoros genannt wird, auch in der armenischen Literatur. So nennt ihn einen orthodoxen Vater und Märtyrer der bedeutende armenische Kirchenlehrer Wr̄tanēs Kertogh (Ende des 6., Anfang des 7. Jahrhunderts)<sup>6</sup>, und seitdem behauptet er diese seine Stellung in der armenischen

1) Cod. Mus. Britt. Addit. 12 156. Vgl. W. Wright, Catal. S. 639—648.

2) Nestoriane. Die Fragmente des Nestorius gesammelt, untersucht und herausgegeben. Halle 1905.

3) Die sog. Kirchengeschichte des Zacharias Rhetor; in deutscher Übersetzung hrsg. von K. Ahrens und G. Krüger. Leipzig 1899.

4) A. a. O. S. 6—8; vgl. Anm. S. 304.

5) Siehe Timotheus, Widerlegung, S. 278.

6) Buch der Briefe, Tiflis 1901, S. 91, 94.

Kirche. Er wird demnach oft erwähnt in der dogmatischen Literatur<sup>1</sup>, auch von solchen Männern wie Stephanus Philosophus von Siunik<sup>2</sup> (8. Jahrhundert) und Kirakos von Ganzak<sup>3</sup> (13. Jahrhundert).

Von besonderer Bedeutung ist die Frage nach der Übersetzung dieser Schrift des Timotheus Älurus ins Armenische. Es ist von vornherein klar, daß eine solche Arbeit nur dann übersetzt wird, wenn sie notwendig gebraucht wird. Das ganze Buch ist gegen das Konzil zu Chalcedon und den Tomos Leonis verfaßt. Ein solches Buch konnte also ins Armenische übersetzt werden, als die Streitigkeiten um die Lehre von Chalcedon auch in Armenien Eingang gefunden hatten, nachdem das Henotikon Zenos hier angenommen wurde. Demnach konnte das Buch nicht vor 506, der Synode des Babken zu Dwin, übersetzt worden sein; aber auch nicht nach 554, der zweiten Synode zu Dwin, unter Katholikos Nersed II<sup>4</sup>, da ja, wie wir gesehen haben, Ende des 6., Anfang des 7. Jahrhunderts Timotheus' Buch als schon armenisch vorhanden erwähnt wird<sup>5</sup>.

Außerdem haben wir auch ein ausdrückliches Zeugnis des Patriarchen Photius von Konstantinopel (24. Dez. 858—25. Sept. 867; wiederum 878—Dez. 886), wonach diese Schrift des Timotheus Älurus unter Katholikos Nersed II, also um die Mitte des 6. Jahrhunderts, ins Armenische übersetzt worden ist<sup>6</sup>. Da bei Photius auch Abdišo der Syrer<sup>7</sup> genannt wird, der als eifriger Vorkämpfer des Monophysitismus bekannt ist, so liegt die Vermutung nahe, daß diese Schrift des alexandrinischen Patriarchen durch sein Anstalten und tatkräftige Mitwirkung übertragen worden ist. Damit ist m. E. die Zeit der Übersetzung dieser „Widerlegung“ ins Armenische endgültig festgestellt.

Die Bedeutung der Schrift des Timotheus Älurus für die armenische Literatur ist die, daß sie eine Art armenisch für die dogmatischen Ausdrücke geschaffen hat, die seit dem 6. Jahrhundert im Gebrauch sind. Außerdem hat diese Schrift für die armenischen Theologen als Fundgrube gedient, woraus sie ihre Waffen entnahmen und sich zum Kampf gegen das Chalcedonense rüsteten. Deshalb ist die Schrift auch

1) Buch der Briefe, S. 259, 300, 491.

2) A. a. O. S. 329.

3) Kirakos von Ganzak, Venedig 1865, S. 21.

4) Vgl. über die beiden Synoden zu Dwin Erwand Ter-Minassiantz, Die armenische Kirche in ihren Beziehungen zu den syrischen Kirchen. Leipzig 1904. S. 30—54.

5) Buch der Briefe, S. 101, 103, 128, 140.

6) Brief des Photius an Zacharia, Katholikos der Armenier. Vgl. Правосл. Иллестр. Сборникъ. XI, 1; Петербургъ 1892, hrsg. von A. Papadopulo-Kerameus. S. 179—210; uns interessiert S. 180—181.

7) Vgl. über ihn Erwand Ter-Minassiantz, Die armen. Kirche, S. 42—48.

so früh ins Armenische übertragen worden. Die unzähligen Zitate, die daraus entnommen sind, werden wir hier nicht aufführen. Es werden einige markante Beispiele genügen. So finden wir schon bei Matūsala (7. Jahrh.)<sup>1</sup> das Fragment des Gregorius Thaumaturgus<sup>2</sup>. Ein Fragment des Cyrill<sup>3</sup> finden wir bei Johann Ozniensis (8. Jahrh.)<sup>4</sup>, ein Fragment des Julius von Rom<sup>5</sup> bei Chosrowik (8. Jahrh.)<sup>6</sup>; ein anderes von demselben Julius von Rom<sup>7</sup> bei Katholikos Sahak (7. Jahrh.)<sup>8</sup>.

Dasselbe Verhältnis finden wir auch bei Nerses Schnorhali (12. Jahrhundert) zu Timotheus Älurus. Man braucht nur einige Zeilen aus seinem Briefe an Jakob d. Syrer zu lesen, um sich von der Richtigkeit unserer Meinung zu überzeugen<sup>9</sup>. Auch die noch unedierte Schrift des Anania von Sanahin (11. Jahrh.) „gegen die Zweinaturenlehrer“ bringt eine große Zahl von Zitaten aus verschiedenen Vätern, wie Irenäus, Gregorius Thaumaturgus, Julius von Rom, Johannes Chrysostomus, Athanasius, Cyrill, die großen Kappadocier usw., die sich alle bei Timotheus finden (vgl. z. B. das große Fragment des Julius von Rom, hier S. 259—262). Aller Wahrscheinlichkeit nach hat Anania von Sanahin die Schrift des Timotheus benutzt.

Das Gesagte möge für die Bedeutung des Werkes des Timotheus Älurus für die armenische Literatur zeugen. Die zahlreichen Fragmente aber, die in dem Buche vorhanden sind, besonders auch die Stücke aus den Schriften der „Häretiker“, die als „Lästerungen“ eingeführt werden, können auch für die allgemeine christliche Literatur von Bedeutung sein. Sie müssen deshalb erst daraufhin untersucht werden. Leider fehlen uns hier, in Etschmiadsin, die Mittel zu solch einer Untersuchung.

Speziell für die armenische Literatur und Sprache hat die Übersetzung dieser Schrift noch die Bedeutung, daß sie endgültig zeigt, wie grundlos die Annahme ist, das 6. Jahrhundert sei für die armenische Literatur fruchtlos und eine Zeit des Niederganges gewesen (siehe noch F. N. Fincks sehr minderwertige Geschichte der armenischen Literatur, Literaturen des Ostens, VII 2, und die orientalischen Literaturen in „Die Kultur der Gegenwart“ I 7, wo er mit bewunderungswürdiger Leichtfertigkeit alles das nachagt, was andere schon längst gesagt

1) Vgl. Stephanus Orbelian, ed. Schahnazarian, S. 166.

2) In diesem Buche, S. 20, Zeile 25—30.

3) Hier, S. 179.

4) Johann Oznezi's Werke. Venedig 1833. S. 51.

5) Hier, S. 261.

6) Chosrowik, Werke. S. 179.

7) Hier, S. 132 f.

8) Katholikos Sahak im Buch der Briefe. S. 446 f.

9) Vgl. Timotheus S. 190, 219, 226—229 mit Nerses Schnorhali's Briefsammlung. Etschmiadsin 1865. S. 320, 326, 327—329.

haben und was jetzt für die Kenner der armenischen Literatur seit langem überholt ist). Wir sehen im Gegenteil, daß zu der ganzen dogmatischen Schriftstellerei der Armenier — und das ist einer der reichhaltigsten Abteilungen der armenischen Literatur — gerade im 6. Jahrhundert der Grund gelegt worden ist.

Die armenische Übersetzung der Schrift des Timotheus Älurus ist aus dem griechischen Original erfolgt. Das wird bezeugt und erwiesen nicht nur durch zahlreiche Wortbildungen nach griechischem Muster, besonders mit Präfixen, sondern auch durch die Schriftstellen, die zumeist dem griechischen Original entsprechen. Aber auch die ganze Farbe und Ausdrucksweise der Übersetzung spricht dafür, daß die armenische Übersetzung aus dem Griechischen geflossen ist. Das wird auch durch eine Vergleichung der Nestoriusfragmente klar. Hier sieht man wieder, daß unsere Nestoriusfragmente den griechisch, nicht syrisch erhaltenen Fragmenten entsprechen. Vgl. Timotheus' Widerlegung, S. 100, 109 und 151 mit Fr. Loofs, Nestoriana, S. 234<sub>16</sub>—235<sub>6</sub>; 273<sub>18</sub>—274<sub>17</sub>; 275<sub>9—11</sub>.

Obgleich die Sprache der Übersetzung nicht mustergültig ist und von der Sprache eines Eznik, Eliše und der hl. Schrift sehr stark abweicht, ist doch diese Übersetzung auch für die Entwicklung der armenischen Sprache bedeutsam. So wird hier stets *Ղ* gebraucht statt des späteren *Լ*; ebenso *Ւ* statt *Ւ*; auch Präfix *Ն* statt *Յ* usw.

Die Pergamenthandschrift — nach dem Katalog Karinians Nr. 1945, welche jetzt die Nr. 1988 trägt — schweigt völlig über ihre Entstehungszeit. Aber das Pergament ist so alt und stellenweise so verdorben, die wenigen renovierten Blätter aus Papier (im ganzen 7 Blatt vorn und 1 Blatt am Ende. Die ganze Handschrift besteht aus 321 Blättern; Größe der Blätter 29×18, davon beschrieben 22<sub>½</sub>×13) scheinen auch so alt zu sein, daß die Handschrift kaum nach dem 9. oder 10. Jahrhundert geschrieben und nach dem 12. Jahrhundert renoviert worden sein kann. Die zwei Tafeln, die wir beigegeben haben, mögen zeigen, wie die armenischen Buchstaben im 10. Jahrhundert und früher ausgesehen haben. Das erste Blatt ist verkleinert und nach langem Suchen deshalb gewählt worden, weil zum Glück auf ihm alle armenischen Buchstaben vorkommen. Das zweite Blatt ist nur die zweite kleinere Hälfte der betreffenden Seite, in Originalgröße der Buchstaben.

Die mühevolle Arbeit haben wir Herausgeber den Theologischen Fakultäten zu Marburg und Gießen als Dank für die uns verliehene Lizentiatenwürde gewidmet. Wir sind überzeugt, daß alle Mitglieder derselben die Notwendigkeit und den Wert dieser Arbeit voll würdigen werden.

Etschmiadsin, August 1908.

Erwand Ter-Minassiantz.







University of California, Berkeley  
College of Education

"LITERATURE - LITERATURE - LITERATURE"

*U.S. GOVERNMENT PRINTING OFFICE: 1913. 100-1100.*

卷之三

THE READING AND WRITING OF THE ENGLISH LANGUAGE

— 1 —

WILHELM BÖHME

POLY(1,4-BUTADIENE) - NITRILE

THE ECONOMIC HISTORY REVIEW



## ՅԱՌԱՋԱԲԱՆ

---

Տիմոթէոս կլուրոսի կամ Կուզի այս գրուածքի հայեցն թարգմանութեան վրայ առաջին անգամ ուշադրութիւն է դարձել Կարապետ ծ. վարդապետը գեռ և 1897 թուին։ Այդ թուականի և Արարատ Հ-ի Մայիս տետրակում (էջ 199—203) նա հրատարակեց Իրենիոսի մի քանի հատուածներ Մայր Աթոռի մատենադարանի Կարինեան ցուցակի № 1945 (ոչ 1955, ինչպէս տպուած է Արարատում) ձեռագրից, որ այժմ կրում է 1988 համարը։ Ուրիշների նման Կարապետ վարդապետն էլ սկզբում համարել է այդ ձեռագիրը և Վկայութիւնների մի ընդարձակ ժողովածու և, որի սկիզբն ու վերջը պակաս է։ Այդ սխալի պատճառն այն է, որ մագաղաթեայ ձեռագիրը սկզբից և վերջից կարկատած է թղթով և թեթև կերպով նայողի վրայ յիշաւի թերի ձեռագրի տպաւորութիւն է անում, այն ինչ ընագրից գոնէ ոչ մի տող անդամ պակաս չէ երեսում։ Սակայն Կարապետ վարդապետը մի քիչ աւելի մանրամասն հետազոտելով ձեռագիրը, շուտով տեսնում է, որ իւր առաջ ունի Աղէքսանդրիայի պատրիարք Տիմոթէոս Կուզի գրուածքը Քաղկեդոնի ժողովի վարդապետութեան գէմ։ Այդ մասին նա խկոյն տեղեկութիւն է տալիս նոյն 1897 թուի և Արարատ Հ-ի Յունիս տետրակում (էջ 251—257), համառօտ կերպով պարզելով հեղինակի գործունէութեան և նրա գրուածքի նշանակութիւնը և մի քանի հատուածներ արտատպելով Ս. հայրերի վկայութիւններից։ Ապա Կարապետ վարդապետը սկսում է արտագրել ձեռագիրը, հրատարակութեան համար պատրաստելու նպատակով,

բայց հաղիւ քառորդ մասը արտագրած, նա ստիպուած է լինում դադարեցնել գործը, տպագրութեան միջոց չունենալու և ուրիշ աշխատանքներով ծանրաբեռնուած լինելու պատճառով:

1906 թուականին ապա ընկերացաւ Երուանդ Վարդապետը և շարունակեց արտագրութիւնը. իսկ երբ գերապատիւ Սուքիաս արքեպիսկոպոսը սիրալիք կերպով յանձն առաւ տպագրութեան ամբողջ ծախքը՝ գործը յաջողութեամբ միասին յառաջ տարանք և ահա ամբողջ աշխատութիւնը դնում ենք գիտական աշխարհի դիմաց:

Որպէսզի հասկանալի դառնայ, թէ ինչ կարևորութիւն ունի այս գրուածքը և ի՞նչպէս է եղել, որ նա Հայոց եկեղեցու դաւանաբանական գրականութեան մէջ դարագլուխ է կազմել և առաջնորդ ու օրինակ հանդիսացել հայ դաւանաբանների համար, պէտք է համառօտ կերպով ծանօթանալ հեղինակի՝ Տիմոթէոս Կուղի անձնաւորութեան ու գործունէութեան հետ<sup>1</sup>:

Ցայտնի է, որ Քաղկեդոնի ժողովը իւր վարդապետութեամբ արեւելցիներին իրենց հաւատից զրկելուց զատ, աթոռից լրկել էր նաև մի բնութեան վարդապետութեան անյողգյողդ պաշտպան Աղէքսանդրիայի պատրիարք Դիոսկորոսին: Վերջնիս իւր աքսորավայրն ուղեկցել էր ուրիշների հետ միասին նաև մի երէց Տիմոթէոս անունով: Այս Տիմոթէոսը, որին հակառակորդները իւր վախտութեան համար<sup>2</sup> Ա՛լօւրօս (այդ պատճառով էլուրոս), այսինքն Կատու (այդտեղից հայերէն Կուղ կոչումը) անունն են տուել, այժմ դառնում է եղիտական միաբնակութեան պարագլուխը և աշխատում է ամեն կերպ հեռու պահել իւր հօտից քաղկեդոնականութիւնը: Թէ որքան մեծ է

1) *Տես նրա մասին ընդհանրապէս* G. Krüger, Artikel «Monophysiten» Realencyklopädie für protestantische Theologie und Kirche. 3. Auflage. Band 13. Leipzig 1903. S. 377—380.

2) Die sogenannte Kirchengeschichte des Zacharias Rhetor. in deutscher Übersetzung herausg. von K. Ahrens u. G. Krüger, Leipzig 1899. IV 1. էջ 23, 24 շար.

Եղել նրա ազդեցութիւնը և գործունէութեան հետևանքները, երեսում է այն հանգամանքից, որ ժամանակակիցները նրան Տիմոթէոս Մեծ անունն են տուել<sup>1</sup>:

Տիմոթէոս կուրոսը բարեկամական յարաբերութեան մէջ էր եղել արգէն Կիւրեղ Աղէքսանդրացու հետ և հրատարակել էր նրա գրուածքները՝ ինչպէս երեսում է խմբագրութեանը փոքր ինչ մօնոֆիզիտական գունաւորութիւն տալով<sup>2</sup>: Սրան, հակառակ կայսերական քաղաքականութեան ազդեցութեամբ ընտրուած Պրոտերիոսի, մեծ խռովութեամբ ու աղմուկներով Աղէքսանդրիայի պատրիարք են ընտրում և եպիսկոպոսական ձեռնադրութիւն տալիս: Պրոտերիոսին օգնութեան է գալիս թէե զինուորական ոյժը և Տիմոթէոսը ստիպուած է լինում առ ժամանակ հեռանալ քաղաքից, բայց նրա կուսակիցները շուտով յաղթող են հանդիսանում, Տիմոթէոսը կրկին վերադառնում է, 457-ի զատկին սոսկալի խռովութեան ժամանակ սպանւում է եկեղեցում Պրոտերիոսը և նա դառնում է Աղէքսանդրիայի անվիճելի պատրիարքը: Պատրիարքական աթոռը բարձրանալուն պէս նա անմիջապէս սկսում է իւր իշխանութիւնը հաստատուն դարձնելու համար մաքրել եպիսկոպոսական աթոռները քաղկեդոնականներից և բազմութիւն կաղմելով նզովում է Քաղկեդոնի ժողովը: Աթոռից զրկուած եպիսկոպոսները մի կողմից դիմում են Հռովմի օգնութեան, միւս կողմից կայսեր<sup>3</sup>: Տիմոթէոսի կուսակիցներն էլ մի խնդրով գիմում են Լեռն կայսեր<sup>4</sup>. իսկ Տիմոթէոս ինքն ևս մի տեղեկագիր է ուղարկում<sup>5</sup>, որ կորած է:

Պէտք էր սպասել, որ կայսը անմիջապէս կպատժէր Աղէքսանդրիայի խռովարաններին. յիրաւի նա մի խիստ քննութիւն նշանակեց Պրոտերիոսի սպանութեան համար

1) Զաքարիա Հոետոր. Դ. 1. էջ 22.

2) Հմմտ. Theophanes Konfessor, Chronographie (810-ի և 815-ի

մէջ) Leipzig 1883—85. 111, 9 շար.

3) Զաքարիա Հոետոր Դ. 4., Mansi 7, 524—530.

4) Mansi 7, 536—537.

5) Զաքարիա Հոետոր Դ. 5.

և մամնակիցներին ծանր կերպով պատժեց. բայց Տիմոթէոսին ձեռք չտուեց գեռ ևս, թէև Հռովմի Լևոն եպիսկոպոսը նրան հեռացնել էր պահանջում։ Կայսը ուզում էր ժողով հրաւիրել և յոյս ունէր, որ պապն էլ ներկայ կլինի ժողովին. բայց Կոստանդնուպօլսի Անատոլիոս եպիսկոպոսը համոզեց նրան յետ կենալ այդ մտադրութիւնից և գրա փոխարէն բոլոր եպիսկոպոսներից գրաւոր կարծիք պահանջել Քաղկեդոնի ժողովի և Տիմոթէոսի պատրիարքութեան օրինաւորութեան մասին։ 457 թուի Հոկտեմբերին կայսը այդ մտքով մի շրջաբերական ուղղեց եպիսկոպոսներին, կցելով նաև Եգիպտոսի քաղկեդոնական եպիսկոպոսների բողոքներն ու Տիմոթէոսի կողմնակիցների թըղթերը։ Եպիսկոպոսների պատասխաններն աննպաստ էին Տիմոթէոսի համար. Լևոն պապն էլ 458-ի Օգոստոսի 17-ին պատասխանեց և նրա նշանաւոր թուղթը կայսը ուղարկեց Տիմոթէոսին, որը մի ընգարծակ գրութեամբ ստիպուած եղաւ պաշտպանելու իրեն<sup>1)</sup>։

Մինչ այս մինչ այն մեռաւ Կ. Պոլսի պատրիարք Անատոլիոսը և նրան յաջորդեց մի ջերմ քաղկեդոնական՝ դիտուն Գեննադիոսը, որ ամեն կերպ աշխատեց հեռացնել տալ Տիմոթէոս Էլուրոսին իւր աթոռից։ Վերջապէս յաջողուեց այդ նրան և 460 թուականի սկզբին, մեծ ազմուկներից յետոյ, հեռացրին Տիմոթէոսին քաղաքից և Կ. Պոլսի վրայով նախ Գանգրա, ապա Խերսոն աքսորեցին<sup>2)</sup>.

Երկար ժամանակ մնաց Տիմոթէոսը աքսորի մէջ. բայց 474 թուին վախճանուեց Լևոն կայսը և շատ կարճ ժամանակից յետոյ նաև նրա թոռը՝ Լևոն Բ., այնպէս որ կայսրութիւնն անցաւ նոցա ազգական Զենոնին։ Սակայն Զենոնը չկարողացաւ դիմանալ Բասիլիսկոս բոնաւորի դէմ, որ 475-ին հալածեց նրան և իւր դահը հաստատելու համար բացարձակ կերպով անցաւ միաբնակների կողմը։ 476-ին մի հրովարտակ արձակեց նա, որով դատապարտում

1) Զաքարիա Հոետոր Դ. 5, 6.

2) Զաքարիա Հոետոր Դ. 9.

էր Քաղկեդոնի վճիռները։ Այդ հրովարտակին իրենց համաձայնութիւնն յայտնեցին 500 եպիսկոպոս և աքսորուած միաբնակները, ինչպէս Անտիոքի պատրիարք Պետրոս Թափիչը (Գնաֆէոս կամ Թուլլօ) և Տիմոթէոս Էլուրոսը, կրկին վերադարձան իրենց աթոռները<sup>1)</sup>։ Տիմոթէոսը մինչև անգամ Բասիլիսկոսի պալատում ամենաազգեցիկ անձնաւորութիւնն է դառնում։ Սակայն երկար չէ տեսում այս անգամ նրա իշխանութիւնը. Բասիլիսկոս բռնաւորի հետ թեքւում է նաև նրա աստղը։ 476 թուականի Օգոստոսին կամ Սեպտեմբերին Զենոնը կարողանում է նորից մայրաքաղաք վերագառնալ, առ ոչինչ է հրատարակում իւր նախորդի բոլոր կարգադրութիւններն ու իրեն էլ բանտարկում Կապադովկիայի մի դղեակում։

Միմպլիցիոս պապը (468—483) արդէն Բասիլիսկոս բռնաւորից պահանջել էր հեռացնել աթոռից արևելքի և Ամենազլխաւոր խոռվարար Ճի՞ն՝ Տիմոթէոս Էլուրոսին։ Այժմ Ճի՞նոնին շնորհաւորելով իւր յաղթանակը և յորգորելով Քաղկեդոնի վարդապետութիւնը անսաղարտ պահպանել, յիշեցնում է նրան էլ այդ մասին։ Սակայն նախ քան վերստին աքսորելու կարդագրութիւնը տեղ հասնելը ծերունի պատրիարք Տիմոթէոս Էլուրոսը վախճանւում է 477 թուականի Յուլիսի 31-ին։

Տիմոթէոս Էլուրոսը պարապ չէր նստել երկար տարիներ իւր աքսորավայրում։ Ինուու լինելով հօտից և այլ ևս չկարողանալով անմիջական մասնակցութիւն ունենալ իւր եկեղեցու համար այնքան կարևորութիւն ունեցող դաւանական վէճի մէջ Քաղկեդոնի ժողովի մասին, նա իւր ժամանակը գործ է դրել Քաղկեդոնի ժողովի վարդապետութեան դէմ ընդարձակ հերքումներ գրելով։ և նրա այդ դործունէութեան արգիւնքներից մէկն է անշուշտ մեր այս հրատարակութիւնը։ Որ Տիմոթէոս Էլուրոս ուրիշ աշխատանքներ էլ է ունեցել, և յատկապէս աքսորավայ-

1) Տես Սրուանդ վարդապետ, Ընդհ. Եկեղեցական Պատմութիւն, հատոր Ա. 1908, էջ 338—334.

բում կատարած, այդ երեսում է սոյն գրքի վերջաբանից (Էջ 329—330), ուր հետևեալն է ասուած.

«Եւ այսուհետև Տիմոթէոսի, (անիմա)ստնագունի ամենայն մարդոյ, յարտասահմանութեան պարապաւզի, սակա ոչ ուրանալ ինձ զուղիզն հաւատ և պատրաստապէս ունելով զիս մեռանել վասն Տեաւն մերոյ և Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի, երաց զիմս միտս ինքն Յիսուս և գործակցեաց ինձ, և շարագրեցի նախ այսորիկ մատեան Աստուծոյն Բայից, որպէս ուսայ վ սրբոցն աւետարանչաց և ի սրբոց առաքելոց և ի սրբոց մարգարեից և ի սրբոց և ուղղափառ եպիսկոպոսապետաց, թերեւ լսելով նոցա մոլորեալքն յուղղափառ հաւատոյն և ներգրաբար ուրացեալքն զՏէրն, և բաժանել զնա յերկուս ընութիւնս, որք հաւասարեացին նոցայն ամպարչտութեան, դարձին և ապաշաւեսցն Աստուծոյ և փախիցեն զառ ի Աստուծոյն նոցա ի վերայ կացեալ բարկութիւնն եւ իրը յոլով ամանակաւ . . . . մնացին ի նոյն չարահաւանութեան, հնծելով իմ ի վերայ յամառութեան եղելոյ նոցայն ապստամբութեան. դարձեալ Աստուծոյ ինձ գործակցաւզի և իմաստնացուցչի զիս՝ զանգրականս և զախմարս, ըստ չափոյ, զոր աւանդեաց ինքն Տէր իմաստութեան ինձ նպաստիս, դրեցի և այժմ յերկուս մատեանս, ընտրեալ դարձեալ ի սրբոց զրութեանց և զվարդապետութիւն սրբոցն և ուղղափառաց եպիսկոպոսապետացն, զորս աղաւթեմ մասն ընդունել ի Տեառնէ՝ հանդերձ ամենեքումքը ուղղափառաւքն, առ ի հաստատունս և արիս և հիմնացեալս լինել զուղղափառս ի ձեռն աստուածաշունչ նոցայն բանից»:

Այդ խօսքերից պարդ կերպով երեսում է, որ Տիմոթէոս էլուրոսը մի քանի գրական աշխատանքներ է ունեցել, որոնց բոլորի նպատակն էլ եղել է երկու բնութեան վարդապետութեան դէմ կոիւ մղել և իւր հօտը նրանից զգուշացնել: Այդ նպատակի մասին նա մի քանի անգամ բացորոշ կերպով յայտարարում է իւր գրքի մէջ (տես Էջ 34, և յատկապէս 36): Առաջին աշխատանքի մասին ոչինչ ասել չենք կարող, որովհետև նրա մասին ուրիշ ոչ մի տեղեկութիւն չունինք: Իսկ վերջին երկուսի մասին («գրեցի և այժմ յերկուս մատեանս») պէտք է ենթադրել, որ բովանդակուած են այս հրատարակութեան մէջ, որը արտաքինով էլ կարծես երկու մասի է բաժանում: Մենք տեսմում ենք այդպէս, որ մի նախաբանից (Էջ 1) ու հայ-

բերի ընդարձակ վկայութիւններից յետոյ (էջ 2—34), հեղինակն ինքն իւր կողմից սկսում է Ս. Գրքից բերած վկայութիւններով ապացուցանել հակառակորդների մոլորութիւնը (էջ 34—52): Ապա վերջացնում է իւր գրքի այս առաջին մասը և մի երկրորդն է սկսում հետեւեալ վերնագրով (էջ 52).

ՀԱԿԱԾԱՐԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԶՏՈՄՄԵՆ ՂԵՒՇՆԻ ԵՒ ՍԱՀՄԱՆՆ ՔԱՂԿԵԴՈՎՆԻ ԵՂԵԼՈՅ ԺՈՂՈՎՈՅՆ ԽՆԴՐԵԼՈՎ ՄԵՐ ԵՒ ԱՅՂ ԱՀՐԻՆԱԿՍ.

Այսուհետեւ մի քանի խօսքով պարզում է մասցած ամբողջ դրքի ծրագիրը (էջ 52).

«Սրդ՝ վասն զի բարումս և աւգտակարս պիտառութիւնս հրանելեացն մերոց հարանց ընտրեցաք. հարկաւոր համարեցայ աերիս նախագրել զի Տոմսէն Ղեւոնի հայհոյութիւնս և սահմանս Քաղկեդովնի ժողովոյն և հերձուածուածոց մարդոց վարդապետութիւնս, որոց բազամապէս դատապահն նախասացեալն առօն և սահմանն ի Քաղկեդովնի ժողովոյն. իսկ ընդիմակացսս սրբոցն հարանց վարդապետութեանց. իսկ յետ այսոցիկ ընդդէմ ասել ըստ կարի մերում նոցայն հայհոյութեանց Տէրամբ, և առդնել պիտառութիւնս սրբոցն հարանց՝ հասաւատիչս առ ի մէնջ ասացելոցն, իսկ տապալիչք նախասացելոցն հայհոյութեանցն հերձուածողաց և նողվիչս զնոցայն ամպարչառութիւն ու

Ուրեմն Տիմոթէոս Էլուրոսի երկու մասից բաղկացած գրուածքը, որ գոյութիւն է ունեցել Գեննադիոսի վկայութեան համաձան նաև լատիներէն, անշուշտ նաև ասորերէն թարգմանութեամբ և որը մինչև այժմ կորած էր, հրատարակում է այստեղ առաջին անգամ հայերէն, նախնեաց թարգմանութեամբ։ Շատ կարեոր է այս գրուածքը յատկապէս այն պատճառով, որ ինչպէս տեսանք, նրա հեղինակը շատ եռանդուն մասնակցութիւն է ունեցել դաւանական վիճաբանութիւնների մէջ Քաղկեդոնի ժողովից յետոյ և պարզում է մեզ այն դիրքը, որ բոնել էին իսկական միաբնակները թէ դէպի Քաղկեդոնի ժողովը և թէ դէպի իրենց կուսակցութեան ծայրայեղ ներկայացուցիչները, ինչպէս օրինակ Եւտիքէսը, որին Տիմոթէոսը յականէ յանուանէ յիշելով նզովում է և մերժում ամեն հաղորդակ-

**ցութիւն (տես էջը 145, 146, 170 և 239):** Ուրեմն Քաղկեդոնի ժողովի հակառակորդների դաւանական ուղղութեան մասին մենք կարող ենք այժմ այս գրուածքի շնորհիւ գաղափար կազմել հէնց իրենց ամենազլիսաւոր հակաքաղկեդոնականների խօսքերից. և այդ հանգամանքը աւելի ևս բարձրացնում է այս գրուածքի արժէքը, որովհետեւ մինչև այժմ Տիմոթէոսից միայն հատակոտորներ ունէինք և մի երկու նամակ, պահուած Զաքարիա Հոետորի եկեղեցական պատմութեան մէջ (էջը 28—31., 38—51., 52—55):<sup>1)</sup> Բացի դրանից գիտէինք, որ Բրիտանական Մուգէում ասորերէն մի ձեռագիր կայ, որ պարունակում է իւր մէջ հակաքաղկեդոնական վկայութիւնների և թըղթերի մի ժողովածու, մեծ մասամբ Տիմոթէոսի գրուածքներից, որն այդ պատճառով էլ «Տիմոթէոսի Գիրք ընդդէմ ժողովոյն Քաղկեդոնի» վերնագիրն ունի (Cod. Mus. Britt. Addit. 12156. հմմտ. W. Wright, Catal. 639—648): Խչ կապունի այդ ասորերէն ժողովածուն և մեր հրատարակութիւնը, դժուար է ասել. Նեստորի գրուածքների մնացորդներն հրատարակող Ֆրիգրիս Լօօֆու այդ ձեռագրից հանել է տուել Նեստորին վերաբերեալ հատուածները<sup>2)</sup>. այդ հատուածները մասամբ համապատասխանում են այս գրքի մէջ եղածներին, բայց մեծ մասամբ տարբեր են և կարծել են տալիս, թէ Բրիտանական Մուգէումի ասորերէն ձեռագիրը Տիմոթէոսի մի այլ նման աշխատութիւն է բովանդակում իւր մէջ Քաղկեդոնի ժողովի դէմ, գուցէ այս գրքի յիշատակարանում յիշուած առաջին գիրքը:

Բոլորովին պարզ է ընդհակառակն Տիմոթէոսի ընդարձակ նամակի յարաբերութիւնը (Զաք. Հոետոր էջ 38—51) մեր այս հրատարակութեան հետ. այնտեղ զանազան հայրերից վկայութիւններ են բերուած և այդ բոլոր վկա-

1) Die sogenannte Kirchengeschichte des Zacharias Rhetor; in deutscher Übersetzung herausgegeben von K. Ahrens und G. Krüger. Leipzig 1899.

2) Nestorianus. Die Fragmente des Nestorius gesammelt, untersucht und herausgegeben von Dr. Fr. Loofs. Halle 1905.

յութիւններն համարեա առնուած են մեր այս գրքից, որն այդպիսով հէնց իրեն Տիմոթէոսի համար էլ ծառայել է իրեւ վկայութեանց գիրք և զինարան հակառակորդների դէմ կռուելու համար։ Այդ բանին համոզուելու համար բաւական է համեմատել Հակաճառութիւն Տիմոթէոսի էջ 9, Հոռվմայ եպիսկոպոս Յուլիոսից բերած վկայութիւնը Զաք. հոետոր էջ 42, ուր գտնուած է նոյն վկայութիւնը. ապա Ամբրոսիոսի հատուածը՝ մեր գրքում էջ 18 և այնտեղ էջ 48. Գրիգոր Սքանչելագործից հատուածներ մեր գրքում էջ 20—21 և 60, այնտեղ նոյնը՝ էջ 44. Բարսեղ Կեսարացի՝ այստեղ էջ 21, այնտեղ 45. Յովհան Ուկերերան՝ այստեղ 77, այնտեղ 47. այդպէս էլ Աթանաս, Կիւրեղ և այլն։

Տիմոթէոսի և իւր գրուածքի նշանակութիւնն այդպիսով մեծ է. և մենք տեսնում ենք, որ նա յիրաւի անցնուս է միաբնակութեան ամենանշանաւոր հայրերի շարքը և յիշում է յաճախ Կիւրեղից անմիջապէս յետոյ, Դիոսկորոսի հետ միասին, նաև հայոց Եկեղեցական գրականութեան մէջ։ Այդպէս օրինակ թուղթ Սորմենայ Ստրատելատի առ Վըթանէս Քերթող<sup>1</sup> կարդում ենք.

«Եթէ զԴիւսկորոսին առէք, զՏիմոթէոսին Աղէքսանդրացւոյ, որ ընդդէմ բարեպաշտութեան հոգեկիր հարցն յանդգնեցան ասել, ուստի և մերժեցան ի սրբոյ Եկեղեցւոյ և անջինջ վիճակիցան յիշատակի նզովից, զայդ և մեք քաջ զիտեմք . . .»<sup>2</sup>

Որին Վըթանէս Քերթողը պատասխանում է 2.

«Զի զոր մեր պատուական հարցն և հոգեկիր վարդապետացն ընդ ուղափառ հովիւսն և ընդ մարտիրոսս է դասեալ՝ զ Դէոս կորոս և զ Տիմոթէոս Աղէքսանդրացի, անջինջ նզովից վիճակի առնեք արժանի, ուստի և մոլորեցուցիչ կարդալով»։

Ուրեմն Տիմոթէոս Աղէքսանդրացին է. դարու սկզբին Հայոց Եկեղեցու մէջ ընգունուած է ուղղափառ հովիւների և մարտիրոսների շարքում։ Այդ բանը շեշտել կարեոր ենք համարում, որովհետեւ մի կողմից նշանակութիւն ունի

1) Գիրք Թղթոց, Տփխիս 1901. էջ 91.

2) Գիրք Թղթոց, էջ 94.

**Տիմոթէոսի գրքի թարգմանութեան ժամանակը որոշելու համար,** իսկ միւս կողմից տեսնում ենք, որ այս ժամանակներից սկսած Տիմոթէոսը այդ դիրքը պահում է Հայոց եկեղեցում։ շատ անգամ այնուհետև առանձին պատկառանքով յիշում է նրա անունը վաւերական և անվաւեր գրուածքներում իրրե ուղղափառութեան հաւատարիմ ներկայացուցիչ<sup>1)</sup>։ բայց այդ շատերից կրաւականանք միայն երկուսն յիշելով։

**Սիւնեաց Ստեփաննոս Մեծ իմաստասէր** եպիսկոպոսի թղթի մէջ, որ նա դրել է Անտիոքի եպիսկոպոսին, կարգում ենք<sup>2)</sup>.

«...Եւ զսուրբն Յուլիոս Աղկորնացին և զԱնատոլիս և զՍիմոթէոս, հանդերձ այլ հայրապետաւքն նզովեաց»։

**Իսկ Կիրակոս Գանձակեցին նրա մասին գրում է** 3)։

«Եւ Տիմոթէոս երէց ուղիղ հաւատով և իմաստաէր, որ զամէն արտևստի զիրան գրեաց, հաւաքեալ զամննայն բանս աստուածայնոց արանց ընդդէմ ամենայն հերձուածողաց»։

**Տեսնենք այժմ, թէ երբ է թարգմանուել այս կարեսոր գրուածքը հայերէն և այնուհետև ինչ գեր է խաղացել Հայոց եկեղեցական գրականութեան մէջ։**

Առանց արտաքին որ և է ցուցումն կամ վկայութիւն ունենալու արդէն կարելի է ասել, որ այնպիսի մի գրուածք, ինչպէս Տիմոթէոսի ներկայ երկասիրութիւնն է, միայն այնպիսի պատմական շըջանում թարգմանուել կարող էր, երբ Հայոց եկեղեցին ստիպուած էր անհրաժեշտաբար մասնակցութիւն ունենալ դաւանական վէճերի մէջ և այսպէս կամ այնպէս իւր դիրքը որոշել բաղմաթիւ կուսակցութիւնների և դաւանութիւնների նկատմամբ։ Հայոց եկեղեցու համար այդ շըջանն սկսում է իսկապէս Զ. դարու սկզբից, Բարգէնի կաթուղիկոսութեամբ։ Յայտնի է, որ Բարգէնը Դուխնում մի ժողով գումարելով 505/06-ին մերժում է ամբողջ Հայոց եկեղեցու հետ Նեստորականութիւնը, գուցէ

1) Հմմտ. Գիրք Թղթոց էջք, 259, 300, 491.

2) Գիրք Թղթոց, էջ 329.

3) Կիրակոս Գանձակեցի, Վենետիկ 1865, էջ 21.

Նեստորականութեան ներքոյ, ինչպէս այդ ժամանակները յատկապէս միաբնակների մօտ սովորութիւն էր, նաև Քաղկեդոնականութիւն հասկանալով, և հաւանօրէն համաձայնութիւն է յայտնում Զենոնի Հենոտիկոն կոչուած հրովարտակին<sup>1:</sup>

Ի՞նչ է լինում դրանից յետոյ Հայոց եկեղեցում, գժրախտաբար մանրամասն կերպով յայտնի չէ մեզ. այսքանը գիտենք միայն, որ Զ. դարու երեսնական թուականներին Հայոց կաթուղիկոս Քրիստափոր Ա. ոչ միայն բացարձակ կերպով միաբնակների կողմն է բռնում, այլ և ճանապարհորդում է ասորիք, միաբնակներին մխիթարելու և նրանց համար եպիսկոպոսներ ձեռնագրելու համար<sup>2:</sup> Վերջնականապէս և վճռական կերպով սակայն հայերը մերժում են Քաղկեդոնականութիւնը Ներսէս Բ. կաթուղիկոսի օրով (548/49—556/57) Դուկինի Բ. ժողովում 554 թուին։ Այդ ժողովից առաջ արգէն Ներսէս Բ. որոշ կերպով յայտնել էր իւր դիրքը, եպիսկոպոս ձեռնագրելով ասորիների համար հակաՍերեան, ուրեմն Յովկիանիտ միաբնակ Աբդիշոյին և ուղղափառ համարելով նրան։ Մեր բոլոր ունեցած տեղեկութիւնների համաձայն հէնց այս ժամանակ էլ պիտի տեղի ունեցած լինի զանազան գաւանական կուսակցութիւնների վճռական մաքառումը Հայոց եկեղեցում, որից յաղթող են դուրս դալիս ծայրայեղ միաբնակները<sup>3:</sup> Անշուշտ այդ պայքարի ժամանակ պիտի կատարուած լինի Տիմոթէոս Ելուրոսի այս գրուածքի թարգմանութիւնը, որ ամենալաւ զէնքերն էր մատակարարում հայ եկեղեցականներին Նեստորականութեան և Քաղկեդոնականութեան դէմ մաքա-

1) Տես այդ մասին Erwand Ter-Minassiantz, Die armenische Kirche in ihren Beziehungen zu den syrischen Kirchen bis zum Ende des 13. Jahrhunderts. Leipzig 1904. S. 30—39.

2) Հմամատ. Erwand Ter-Minassiantz, Die armenische Kirche etc. S. 55—57 և 171—177.

3) Ներսէս Բ.-ի ժողովի, Աբդիշոյի ձեռնադրութեան և Հայոց եկեղեցու հետ ունեցած յարաբերութեան, այլ և Հայոց եկեղեցու գաւանական դիրքի մասին տես մեր վերի յիշուած գիրքը էջ 39—54.

ոելու համար։ Եւ մենք յիրավի տեսնում ենք, որ Տիմոթէոսի գրուածքը վրաց բաժանման շրջանի դաւանաբանական գրութիւնների մէջ որոշ կերպով յիշւում է մի քանի անգամ<sup>1</sup>։ ուրեմն ամեն կասկածից դուրս է, որ այն Զ. դարու վերջին և է.-ի սկզբին հայերէն թարգմանութեամբ գործածական է արգէն։

Բայց մենք հնարաւորութիւն ունենք աւելի առաջ գնալու և որոշ կերպով ապացուցանելու, որ Տիմոթէոսի գիրքը յիրավի, ինչպէս վերևն ասացինք, թարգմանուել է Ներսէս Բ. կաթուղիկոսի օրերում, պայքարի ամենատաք ժամանակը, ուրեմն Զ. դարու կէսերին։ Այդ մասին բացարձակ վկայութիւն է տալիս մեղ Կոստանդնուպօլսի Փոտ պատրիարքը (24 Դեկտեմբերի 858—25 Սեպտեմբերի 867., Բ. անդամ 878—Դեկտեմբեր 886) Հայոց Զաքարիա կաթուղիկոսին գրած մի թղթի մէջ «Վասն երկու միաւորեալ բնութեանց մի անձնաւորութիւն գոլոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և վասն ճշմարտախոռութեան ժողովոյ Սուրբ հարցն, որ ի Քաղկեդոն»։ Այդ թղթի մէջ կարդում ենք հետեւալը Քաղկեդոնի ժողովի և հայերի մասին<sup>2</sup>.

«... Եւ հայք վտանդեալք ի հինգ պարոից, ոչ զօրեցին և պարապեցան դալ ի ժողովն. վասն այնորիկ ոչ ենաս պատճառ ժողովոյն ի հայք հաւասաւեաւ. բայց հակառակութիւն ինչ վասն ժո-

1) Տես Գիրք Թղթոց էջ 101 և 103. թուղթ Պետրոսի. «Եւ ունի քո աստուածափրութիւնդ զամնապատուականին և ղերաննելի հաւըն մերոյ Տիմոթէի զգիրս՝ որ ընդդէմ Քաղկեդոնի ժողովին . . . . և զի և այլոց բազմաց եպիսկոպոսաց ին յաղագս այսոցիկ ոլէաք, զիւտ քո իմաստութիւնդ յառաջասացելոց զրոց երանելոյն Տիմոթէոսի», Նոյն զիրքն յիշւում է նաև էջ 126. պատճառք Դ. ժողովոյն երկաբնակացն, Մովսէսի վրաց «ուղղափառ եպիսկոպոսի. և վերջապէս էջ 140. թուղթ Գ. Մովսէսի առ Վրթանէս Քերդող. հմմա. Աւխտանէս Բ. ղլ. Իւ. էջ 48. «... Զիրք երանելոյն Տիմոթէոսի բովանդակ ստացայ . . . »։

2) Ամբողջ թուղթը տես՝ Правосл. Сборникъ. Томъ XI, Выпүскъ I, С.-Петербургъ 1892. изд. А. И. Пападопуло-Керамесъ էջ 179—210. Անգ հետաքրքրող կտորը էջ 180—181.

զովոյն ոչ գոյր, այլ ամենեքեան ընդունէին զժողովն մինչև ի ծողովն Դվնայ, որ լինին ամենայն ամբ Զ. և Դ. յերկու ամացն Մարկիանոսի կայսեր, մինչև ցԺ. ամեն Յուստիանոսի և մինչև ցԶ. ամեն Ներսէսի կաթուղիկոսի, որ Աշտարակացն էր, որ արար զժողովն ի Դվին ի սկզբան թագաւորելոյն Հայոց Պարսից, և ի Դ. և ի Ժ. ամբն Խոսրովու Պարսից արքային և ի ձեռն Սրդիչոյի ասորոյ, որ եկեալ էր ի Սասոնոյ ի Սարաբթոյ վանիցն և այլք ընդ նմա, որ ձեռնադրեցան. (ընկալան նաև). զԴիռսկորոս և զՓիլակոն<sup>2</sup> եպիսկոպոս ի Նաբուք քաղաքէ և զԴիմոթէռս Ազէքսանդրացին, որում Կուզն կոչեն. ՈՐ ԶԳՐԵԱՆՍ ԹԱՐԳՄԱՆԵՑԻՆ Ի ՀԱՅՍ, որ կոչին յետին թարգմանիչք, որ ունի բազում չարախօսութիւն վասն ժողովոյն Քաղկեդոնի ի նոցին թարգմանութեանն ։

Այդպիսով ուրեմն Տիմոթէոս Էլուրոսի այս գրուածքի թարգմանութեան ժամանակը ակնյայտնի կերպով Զ. դարու կէսերը պիտի համարել: Կասկած լինել այդ մասին կարող չէ, ոչ միայն այն պատճառով, որ Փոտ պատրիարքի վկայութեան համաձայն այդ գիրքը Ներսէս Բ. կաթուղիկոսի օրովէ թարգմանուած, այլ գլխաւորապէս նաև այն, որ մի կողմից, ինչպէս տեսանք, այս գրուածքը որոշ կերպով յիշւում է իբրև Քաղկեդոնի ժողովի հակաճառութիւն Զ. դարու վերջի և է. դարու սկզբների գրագրութիւնների մէջ, իսկ միւս կողմից նրա հետքերը կարելի է ապացուցանել և գտնել հայոց եկեղեցական գրականութեան մէջ նոյն այդ ժամանակներից սկսած։

Այստեղ պէտք է գլխաւորապէս ուշադրութեան առնել այն մեծ նշանակութիւն ունեցող հանգամանքը, որ այս գրուածքը մի տեսակ հայերէն է ստեղծել դաւանաբանական խնդիրների համար՝ որոշ դաւանաբանական արտայայտութիւններ ու բանաձեռք, որոնք յաջորդ դարերում

1) Թուականները չփոթած են. Մարկիանոսի Բ. տարուանից 84 տարի հաշուելով կստանանք 535/36 թուականը, որ համապատասխան է Յուստինիանոսի Ժ. տարուան. բայց Խոսրով Անոշարգանի ԺԴ. տարին կլինի 544-ը, իսկ Ներսէս Բ.-ի Զ. տարին 554-ը:

2) Հրատարակութեան մէջ զՓլաբիանոսն. ծանօթութեան մէջ՝ Տօն. զՓլակոսն. ի հարկէ պէտք է լինի՝ զՓլակոսն. (=Փիլքսենոս Մարուգեցի):

ընդհանուր գործածութեան մէջ են մտել դաւանական թղթերի մէջ և այլ գրուածքներում։ Եթէ ոչ Ներսէս Բ.-ից մնացած դաւանական թղթերից, գոնէ նորա յաջորդ Յովհաննէս Բ. Գաբրեղենցու (556|57—571[573]) Աղուանից եպիսկոպոսներին ուղղած թղթի մէջ<sup>1</sup>՝ նշմարելի են արդէն Տիմոթէոսի Հակաճառութեան պարզ հետքեր՝ թէ ոճի և թէ գաղափարների կողմից։ Իսկ վրաց բաժանման շրջանի դաւանաբանական գրազրութեան մէջ, ինչպէս տեսանք, այդ գրուածքը մի քանի անգամ որոշ կերպով յիշւում է իրեւ ամենակարևոր յիշատակարաններից մէկը, որից հայ և հայերէն կարգացող մարգիկ քաղկեդոնական ուսման մոլորութիւնները ճանաչել և նրա դէմ զինուել կարող էին։ Այդ հանգամանքը ցոյց է տալիս, թէ որչափ շուտ հեղինակութիւն ստացաւ Տիմոթէոսի գիրքը և ընդհանուր գործադրութեան մէջ մտաւ։

Բաւականանանք այժմ մատնացոյց անելով Տիմոթէոսի Հակաճառութեան մի քանի հետքեր Հայոց եկեղեցական գրականութեան մէջ, այդ խնդրի մանրամասն ուսումնասիրութիւնը ուրիշ ժամանակի թողնելով։ Ոճի և գաղափարների նմանութիւններն ու նոյնութիւնները չենք արձանագրում, այլ յիշատակում ենք միայն այն վկայութիւնները Ա. Հայրերի գրուածքներից, որոնք ամենայն հաւանականութեամբ Տիմոթէոսի Հակաճառութիւնից են առնուած։

Այգպէս՝ արդէն Մաթուսաղայի թղթի մէջ<sup>2</sup> գտնուած ենք Գրիգոր Սքանչելագործից բերած այն վկայութիւնը, որ արձանագրուած է մեր հրատարակութեան մէջ էջ 20, տող 25—30. «Որ ոք ասէ այդ ախտակրեալ և այդ ոչ ախտակրեալ . . . . » և այն։

Ուշագրութեան արժանի է այդ տեսակէտից յատկապէս կիւրեղից վերցրած մի վկայութիւն Յովհան Օձնեցու երեսութականաց ճառի մէջ<sup>3</sup>, որն ամբողջութեամբ, դար-

1) Գիրք Թղթոց էջ 81—84.

2) Տես Ստեփ. Օրբելեան. հրատ. Շահնազարեանի, էջ 166.

3) Յովհաննու Օձնեցոյ Մատենագրութիւնք, Վենետիկ 1833, էջ 51.

Ճուածքներով ու արտայայտութեան եղանակով ցոյց է տալիս, որ անպատճառ Տիմոթէոսի գրքից է վերցրած<sup>1)</sup>.

### Տիմոթէոս էջ 179.

«Այդ և ոչ ի մարմնոյ բնուու-  
թիւն փոխարուսեալ Բանին. փոխարուսեալ Բանին, այլ  
այդ և ոչ մարմնոյն ի նորայն. այդ և ոչ մարմնոյն ի նորայն, այլ ի  
ի յատկութեան ըստ բնութեան յատկութեան ըստ բնութեան  
Երկաքանչիւրոյ մնացելոյ և իմա-  
երկաքանչիւրոյ մնացելոյ և իմա-  
ցելոյ, ըստ այժմուս մնդ աւան-  
ցեցելոյ Բանին, անձառելի և ա-  
նասելի միաւորութիւն մի մնզ նասելի միաւորութիւնն՝ մի մնզ  
եցոյց Որդոյ բնութիւն»:

### Օձնեցի էջ 51.

«Ոչ ի մարմնոյ բնութիւն  
թիւն փոխարուսեալ Բանին, այլ  
այդ և ոչ մարմնոյն ի նորայն, այլ ի  
ի յատկութեան ըստ բնութեան յատկութեան ըստ բնութեան  
Երկաքանչիւրոյ մնացելոյ և իմա-  
երկաքանչիւրոյ մնացելոյ և իմա-  
ցելոյ, ըստ այժմուս մնդ աւան-  
ցեցելոյ Բանին՝ անձառելի և ա-  
նասելի միաւորութիւն մի մնզ նասելի միաւորութիւնն՝ մի մնզ  
եցոյց Որդոյ բնութիւն»:

Այստեղ ուրիշ թարգմանութեան մասին խօսք անգամ  
լինել չէ կարող. իսկ եթէ Օձնեցին մի այլ աղբիւրից է  
վերցրել վկայութիւնը, անշուշտ վերջնական աղբիւրը դար-  
ձեալ Տիմոթէոսի գիրքն է:

Տիմոթէոսի Հակաճառութեան մէջ եղած Յուլիոս  
Հոռվմայեցու մի հատուած մէջ է բերում նաև Խոսրովիկը<sup>2)</sup>  
Սարգիս եպիսկոպոսին գրած թղթի մէջ. ահա այդ հատ-  
ուածը երկու տեղում.

### Տիմոթէոս էջ 261.

«Եւ որպէս լուաք Պաւղոսի  
զՔրիստոս ախտակիր, ոչ մար-  
մարար լուաք և ոչ զաստուա-  
ծութիւնն ախտակրական կար-  
ծեցաք, այսպէս և արարեալն և  
ծառայն. ոչ մասնաբար ասի և ոչ  
զաստուածութիւնն առնէ եզա-  
նելի և ծառայական, և դարձեալ  
անարարածն ոչ զմարմինն անեղ  
առնէ և ոչ մարմնաբար ի վերայ  
աստուածութեանն միայնիոյ ա-  
պի»:

Նոյնն է ապացուցանում նաև «Սրբոյ վարգապետին  
Սահակայ Հայոց կաթուղիկոսի և մեծի թարգմանչի ընդ-

### Խոսրովիկ էջ 179.

«Որպէս և Յուլիոս Հոռվմայ  
հայրապետ ասէ. զՊօղոսի ասել  
զՔրիստոս ախտակիր ոչ մասնա-  
բար իմանամք և ոչ զաստուա-  
ծութիւնն ախտակրական կար-  
ծեմք, այս և արարեալն և ծառայն  
ոչ մասնաբար ասի և ոչ զաս-  
նելի և ծառայական, և դարձեալ  
ծառայական և դարձեալ անեղն  
ոչ զմարմինն առնէ անեղ և ոչ  
մասնաբար ի վերայ աստուածու-  
թեանն միայնոյ ասի»:

1) Տիմոթէոսի Հակաճառութիւն էջ 179.

2) Հրատ. Գարեգին վ. Յովաչիկեանի. էջմիածին 1899 (1903).

դէմ երկաբնակաց Նեստորականացն»<sup>1)</sup> ընդարձակ դաւանական գրուածքի մէջ եղած մի վկայութիւնը, վերցրած Հռովմայ Յուլիոս (337—352) եպիսկոպոսի երկերից, որը երկու անգամ կրկնուած է Տիմոթէոսի Հակաճառութեան մէջ (էջ 8 և 132):

**Տիմոթէոս էջ 132.**

«Իսկ որ զյերկնուստն Աստուած խոստովանեն ի կուսէ տուած խոստովանին ի սրբոյ կումարմնացեալ և մի գոյ ընդ մարտոյն, զուր ծփեն ի բայսն ի մարմնովն, ի գուր ծփին ի բանանոցայցն ամպարշտութիւնսն արտաք երեալք. քանզի ասեն և նոքա. որպէս լսեմ, երկուս բնութիւնս . . . . .»:

Եւ այդպէս մինչև 133 էջ:

**Գիրք Թղթոց էջ 446.**

«Որ զյերկնուստ Աստուած խոստովանին ի սրբոյ կումարմնացեալ, և ոչ մի գոյ զնանոցա ամպարշտութեանն արտաք երեալք. զի ասեն և նոքա. որպէս լսեմ, երկուս բնութիւնը . . . . .»:

**Այդպէս մինչև 447 էջ:**

Նոյն յարաբերութիւնը նկատելի է նաև Ներսէս Շնորհալու Յակովը ասորի վարդապետին գրած թղթի և Տիմոթէոսի Հակաճառութեան մէջ: Այստեղ ոչ միայն Գրիգոր Սքանչելագործից վերցրած վկայութիւնն է դեռ կատարում (Տիմոթէոս էջ 190 հմմտ. թուղթ Շնորհալու Յակոր ասորում. Ընդհանրական, հրատ. էջմիածնի 1865 էջ 320), այլ առհասարակ նման են կարելի է ասել բոլոր գաղափարներն ու արտայայտութեան եղանակները: Այդքանին համոզուելու համար բաւական է համեմատել Տիմոթէոս էջ 219, 226—229 և Շնորհալու թուղթ էջ 326, 327—329:

Ինչպէս յայտնի է, Անանիա Սանահնեցին էլ (ԺԱ. դար) մի գեռ ևս չհրատարակուած գրուածք ունի «Բան

1) Գիրք Թղթոց 413—482. եթէ գրուածքի վերնագիրն ուղիղ է և Սահակ Կաթուղիկոսն է հեղինակը, միայն Սահակ Գ. Զորափորեցին կարող է լինել (678—է. դարու վերջերը). Հմմա. այդ մասին Erwand Ter-Minassiantz, Die armen. Kirche etc. էջ 136 շար. և Des hl. Irenäus Erweis der apostolischen Verkündigung, hrsg. von Karapet Ter-Mekerttschian und Erwand Ter-Minassiantz, Leipzig 1907. յառաջաբան էջ V.

Հակաճառութեան ընդդէմ Երկաքնակաց » վերնագրով<sup>1)</sup>, Պետրոս Գետագարձ կաթուղիկոսի հրամանով գրած, որի մէջ նա բազմաթիւ վկայութիւններ է բերում եկեղեցական հայրերից, յատկապէս իրենիոսից, Գրիգոր Սքանչելագործից, Յուլիոս Հռովմայեցուց, Յովհան Ոսկեբերանից, Աթանասից, Կիւրեղից, Մեծ Կապագովկացիներից և այլն, որոնք մեծ մասամբ նոյնանում են Տիմոթէոսի գրքում եղածների հետ։ Բոլորը մէկ առ մէկ թուել աւելորդ ենք համարում. բաւականանում ենք յիշելով, որ Յուլիոս Հռովմայեցու մեծ հատուածը (Տիմոթէոս էջ 259—262) ամբողջովին կայ Անանիայի Հակաճառութեան մէջ, ինչպէս և Սքանչելագործի հատուածները։

Այսքանը կարծում ենք լիովին բաւական է պարզելու համար Տիմոթէոսի գրքի ունեցած մեծ նշանակութիւնը Հայոց եկեղեցական գրականութեան տեսակէտից և ապացուցանելու, որ յիրաւի այդ դիրքն, ինչպէս ասացինք, ծառայել է Հայոց եկեղեցու վարդապետների համար իբրև զինարան Քաղկեդոնի վարդապետութեան դէմ կոռուելու համար։ Այդ է անշուշտ պատճառը, որ Տիմոթէոսի Հակաճառութիւնը այնքան վաղ թարգմանուել է Հայերէն։

Սակայն Տիմոթէոսի Հակաճառութեան նշանակութիւնը մինչեւ այժմ ասածներով դեռ չէ սպառուած։ Ուշադրութիւն պիտի դարձնել այն հանգամանքի վրայ, որ այդ դրքի մէջ ժողոված բաղմաթիւ վկայութիւններ յայտնի եկեղեցական հայրերի, նաև հերետիկոսների, այնպիսի գրուածքներից են, որոնք կամ անուամբ միայն յայտնի են, կամ ամենեւին յայտնի չեն։ Ուրեմն դեռ ուսումնասիրութեան առանձին խնդիր պիտի լինի, թէ որ կտորները նրա մէջ ուրիշ տեղերից յայտնի են, որոնք անյայտ և ինչ է նրանց նշանակութիւնը ընդհանուր եկեղեցական գրականութեան համար։

Բացի այդ՝ Հայոց գրականութեան պատմութեան և լեզուի տեսակէտից էլ մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում ներկայ հրատարակութիւնը։ Սրանով պարզում է

1) Տես Երուանդ սարկաւագ, Հաղբատ և Սանահին վանքերը. Արարատ 1901. Մայիս-Յունիս, էջ 275—276.

վերջականապէս, թէ որչափ անհիմն է այն հայեացքը, իբր թէ Զ. դարն անպտուղ է եղել Հայոց գրականութեան համար. մենք տեսնում ենք, որ ընդհակառակն մեր եկեղեցական գրականութեան ամենահարուստ ճիւղերից մէկը՝ դաւանաբանականը, հէնց այս դարում է ստեղծուել: Պէտք է ի նկատի ունենալ նաև այն, որ այն ձեռագիրը, որից անում ենք այս հրատարակութիւնը, ամենայն հաւանականութեամբ գոյութիւն ունեցող հայերէն ձեռագիրների շարքում ամենահներից մէկն է, եթէ ոչ ամենահինը: Դժբախտաբար նրա գրութեան ժամանակը որոշելու համար նշ մի հետք չի մնացել: Բայց այն մագաղաթը, որի վրայ նա գրուած է, այնչափ հին է, նոյն իսկ այն նորոգած մի քանի թղթէ թերթերը սկզբում և վերջում (7 թերթ սկզբում և 1 թերթ վերջում) այնքան են հնացել, և թէ այն գիրը, որով նոքա գրուել են և թէ բուն ձեռագրի գիրը այնպիսի հնութեան դրոշմ են կրում, որ դժուար կարող է ձեռագիրը թ—ժ. դարից այս կողմ դրուած և ժիշտից այս կողմ նորոգուած լինել: Ինչպէս յիշել ենք հրատարակութեան ընթացքում, շատ տեղ նոյն իսկ անվերծանելի է ձեռագիրը: Անշուշտ ձեռագրի խոր հնութիւնն է պատճառ, որ լեղուի նկատմամբ նորա մէջ պահուած են այնպիսի հնաբանութիւններ, որ աւելի ուշ գարերի ձեռագրերում փոխուել, ժամանակի գործածութեան համաձայն հարթուել են. օրինակ «զ» բաղաձայնի մշտական գործածութիւնը փոխանակ «լ»-ի. «ե»-ի խիստ յաճախակի և լեզուաբանական տեսակէտից ուղիղ գործադրութիւնը փոխանակ «է»-ի. Ներգոյական հոլովի համար «ն» նախդիր, փոխանակ «յ»-ի. այնպիսի յունաբանութիւններ, ինչպէս իդական դերանունների գործածութիւնը իրենց հոլովներով (սէ, սէրա, նէ, նէրա). առ, բաց, ստոր, վայր, վեր, տար, արտ և այլն նախդիրներով կաղմուած բառեր և այլն: Այս տեսակէտից լեզուագէտների և բանասէրների համար ներկայ գրուածքը առատ նիւթ է մատակարարում:

Բացի վերեն յիշուած յունաբանութիւններից, թէ Սուլը գրքից բերած վկայութիւնները և թէ թարդմանութեան

ամբողջ դոյնն ու ոճը ցոյց են տալիս, որ թարգմանութիւնը կատարուած է յունարէն բնագրից։ Այդ է ցոյց տալիս նաև այն, որ Նեստորի հատուածները մեր գրքում ոչ թէ ասորերէն մնացած հատուածներին են նման, այլ բառացի կերպով յունարէն հատուածներին։ Այգափէս օրինակ Տիմոթէոսի Հակածառութիւն էջ 100, 109 և 151 համեմատ է կամ բառացի նման յունարէնին (Fr. Loofs, Nestorianæ, 234<sub>16</sub>—235<sub>5</sub>; 273<sub>18</sub>—274<sub>17</sub>; 275<sub>3</sub>—11):

*Եւ այսպէսն իսկ զՊիղատոսն ապարանել ոչինչ էր այդ հաւատալոյ եթ' ոչ զդատիցեալն գոլ Աստուած. զի և 15 դատապարտեալ ի Պիղատոսէ, տեսլեամբ \* երեսէր սորին կնոշն<sup>3</sup>, զի լուութեամբ զարութիւնն \*\* հիասցի, իսկ հարցեկութեամբն ծանիցէ, եթ' ոչ զմարդ այդ զԱստուած դատիմ. վասն որոյ երկուցեալ դատաւղն ի դատեցելոյն և յաւէտ ինքն դատապարտեալ երկիւղիւ դատեցելոյն, քան դատելով 20 ինքն զարհուրեցուցանէր զՏէրն. վասն որոյ լուացեալ զձեւուն ասելով՝ «Անպարտ եմ յարենէս յայսմանէ» <sup>4</sup>:*

**Եւ յետ այդոց. |**

13v. *Յայտնի այսուհետե Տէրն և մատնելով ոչ զայսայսնեացի ի մահուանէն, այդ յաւէտ մերկացաւ առ նա և 25 հալածէր փախուցեալ զաւձն, զի ոչ իբր մեռանելով Տէրն, այդ իբր զմահն յայս հալածելով:*

**Եւ յետ այդոց.**

*Զի զենաւ ոչ յայդ մասն, այդ ի կողն, ուստի հոսեցաւ արիւն և ջուր<sup>5</sup>. զի և վասն զի նախկին ի ձեռն ի կողեց*

\* ) Լուսանցքում՝ «յանուրջա».

\*\*) Հարութիւնն(?).

<sup>1)</sup> Հմմտ. Ղուկ. Ա. 26—35. <sup>2)</sup> Հմմտ. Խոայի կ. 14.

<sup>3)</sup> Հմմտ. Մատթ. Իկ. 19. <sup>4)</sup> Մատթ. Իկ. 24. <sup>5)</sup> Հմմտ.

Ցովհ. Ժթ. 34.

ստեղծեցնոյ կնոջն ներամտեաց խարէութիւնն, այսպէս կոռ-  
դիւք\* երկրորդ Ս.դամայ լուացումն և մաքրութիւն առաջնոյն  
եղիցի՝ լուացումն արեամբ, իսկ մաքրութիւն ջրով. և այս  
ոչ ըստ գիտելութեան կատարիւր բանսարկուին, զի և զոր  
երկնչէր եղանիլ մահն՝ մեռաւ Տէրն, և նա կողոպտեցաւ\*\*, Յ  
և կարծեցեալ յաղթահարեալ զՔրիստոս ի մահուանն առա-  
ւել ինքն ցուցաւ մեռեալ, և պարծեցեալ մարդ վար(կ?)անել,  
և արար ճանաչել եթ' Աստուած է:

Երանելոյ \*\*\* Եպիփանեայ եպիսկոպոսի Կիւայրու՝ ի  
բանեն որ յաղազս սրբոյ Երրորդութեանն. 10

Ինքն այսուհեաև սուրբն Բան, կենդանին, որ ներէու-  
թեանն թագաւորն երկնային, հարացատն Որդի միշտ ընդ  
Հաւր, ի Հաւրէնի ծնեալ, անմարիմնական ի Հաւրէ և յառաջ 14x.  
եկեալ բացափայլութիւնն փառաց, զըծաւորութիւնն էու-  
թեան, կերպն ելով Հաւր ճշմարտութեամբ, աթոռակիցն 15  
Հաւր, որոյ թագաւորութեանն ոչ եղիցի վախճան, յաջմէն  
Հաւր, դատաւորն կենդանեաց և մեռելոց, կեանքն ի կենաց,  
էակն իմաստութիւն յիմաստութենէ, ազբեւր ելով յաղբերէ.  
«Զի զիս, ասէ, լքին(?)աղբեւր ջրոյ կենդանւոյ. և փորեցին  
իւրեանց գուբս ծակոտակէս»<sup>1)</sup>. գետն յաւետաղոյզ ուրախա- 20  
րաբն(?) նդիմուածովք(?) զքաղաքն Աստուծոյ, յաղբերէն յա-  
ռաջ նկեալ, յորմէ գետք յորովայնէն իւրմէ հոսին. մա(ն)կանն  
Դաւ.թեան, արմատն Ծեսեական, ծաղիկ զի՞ նմանէ, առեւծն,  
թաղաւորն յազնէն Յուղայ. ոչխարն բանական, քարն 25  
կենդանի, մնծին խորհրդոյ հրեշտակ, մարդն ճշմարտու-  
թեամբ եղեալ՝ Աստուածն ճշմարտութեամբ ելով, ոչ յե-  
ղեալ զբնութիւնն, ոչ այզայզելով զաստուածութիւնն,  
ծնեալն մարմնով, մարմնացեալն Բանն մարմին եղեալ,  
ունաւողն ընդ մէջ եղելոյ զարմին: Զի Բանն ոչ ասաց եղեալ,  
այդ յետ ասելոյն Բան անորոշաբար | ասէ զմարմինն, իսկ 30 14v.  
յետ մարմնոյն ասէ եղն, զի եղեն ի Մարեմայ ներգործիցի,  
զի Բանն ի վերուստ առ ի Հաւրէ ծանիցի. այս սուրբս,  
կենդանիս Բան, առ Հաւրն Աստուած, մնծին խորհրդոյ  
հրեշտակ, պատմաւղն խորհրդոյ Հաւրն, հայրս հանդեր-

\* ) Լուսանցքում՝ «ի ձե(ռն) կողից».

\*\*) Անդ «կապտեցաւ».

\*\*\* ) Եղագբում՝ «Երանելիոյ».

1) Երեմ. Բ. 13.

ՑԻՄԱՐԴԻՆԻ ՀԱՎԱԱՌՈՒԹԻՒՆ

ձելոյ յաւիտենին<sup>1)</sup>. ինքն եասաց. «Ոչ ոք գիտէ զաւըն և գժամ<sup>2)</sup> և «Ոչ ոք զիտէ զնրդին ևթ' ոչ Հայրն»<sup>3)</sup>: Արդ, որպէս մնծ Հայրն, զի զիտէ զնրդին, և ոչ հրեշտակքն (յերկքն?) յերկնի, քանզի և ոչ զիտեն, և ոչ Որդին խմա-  
 5 ցումնակի զայս ասէ, ևթ' միայն Հայր: Արդ, ևթե այսու-  
 հետեւ զիտէ Որդին զՀայրն, իսկ մնծադոյն Հայրն քան  
 զաւըն և գժամ, և ոչ հակածառէ, իբր զմեծադոյնն  
 զիտաւղն զնուաղն անզիտանայ. զի ոչ ոք զիտէ զՀայրն  
 ևթ' ոչ Որդին. այսպէս Որդին մնծ, զի զիտէ զՀայրն. ևթե  
 10 զիտէ այսուհետեւ զՀայրն՝ զմեծադոյնն, զփոքըն իբր ան-  
 զիտանայ, այս է՝ զաւըն և գժամ. որոնեած զաստուածային  
 զրիցնալոն և ուսիր Սրբոյ Հոգւոյն զաւրութիւն. և ինքն  
 15r. Հոգին զիտակն զՀայրն և զՈրդին բացայայ|(տեսցէ) քեզ  
 զԲանին զՈրդւոյ<sup>\*</sup> Աստուծոյ (զ)զիտութիւնն, զի մի մոլո-  
 15 բեսցիս ի ճշմարտութենէն և կորուացես զքոյինդ անձն:

Սրբոյ Կիւպրիանոսի եպիսկոպոսի եւ. վկայի՝ ի մեկ-  
 նուրենէն որ յաղազս ողորմածութեան.

Ցոքունք և մնծամնծք պատահնեցին, սիրելք ևզրարք,  
 աստուածային բարեգործութիւնք, յըրոց զմնր փրկութիւն  
 20 Աստուծոյն Հաւը առատ և փարթամ մարդասիրութիւնն  
 գործեաց և միշտ գործեացէ. վասն որոյ պահել զմեղ և  
 կենագրեն Հայրն զՈրդին առաքեաց, զի զմնդ նորոգնս(ցէ)  
 առաքեցեալ Որդին, կամնցեալ որդի մարդոյ լինել. իբր զի  
 զմնդ Որդիս Աստուծոյ կացուացէ: Նուաստացոյց այսուհետեւ  
 25 զինքն, զի գժւզովուրզս զբացընկեցիկն վերստին ստասցի.  
 վիրաւորեցաւ, զի զմերսն վէրսն բժշկեացէ. ծառայեաց  
 որպէս (զի) ի ծառայութենէ յազատութիւն դծառայեալսն  
 նմա ածցէ. մահ յանձն եառ, զի մահկանացուաց զանմահու-  
 թիւնն հատուացէ:

30 Սրանելոյ Ամբրոսեայ եպիսկոպոսի Մեզիդանացւոց.

Ինքնն խաւսի և ոչ միով ամննայն երբեք տրամարանէ  
 յեղանակաւ. հայնցիր ի նա, այժմ փառն Աստուծոյ,  
 15v. իսկ այժմ մարդոյ| ախտակրութիւն, զի իբր Աստուած

\* ) 2եռազբում՝ «Որդիոյ».

1) Հմմտ. Եսայի Թ. 6. 2) Մատթ. ԻԴ. 36, Մարկ. ԺԴ. 32.  
 3) Ղուկ. Թ. 22.

ցուցանէ զաստուածայինն, վասն զի Բան է. իսկ իբր մարդ խաւսի զմարդկայինն, վասն զին խմում գոյացութեանն տրամարանէր:

Երանելոյ Գրիգորի Սբանչելագործի եպիսկապոսի Նեղկեսարեայ՝ ի բանեն որ յաղազ յարութեան. 5

Եւ ստէպ ստէպ յ(ը)նթրիս կոչիւր, և յերեսս ամնայն մարդկան ուտէ և ըմպէ, ոչ պատրելով զնոսա, և ոչ որպէս կարծեն ոմանք, թուելութեամբ զայս առնելով, և այսչափ իսկ առաջաբերիւր կերակրոյ և ըմպելիոյ, որպէս ի կարծիս տանել կերաւողի և գինեճանի\*: իսկ եթ' ոք բռնադատեալ 10 ասէ, եթեն թուելութեամբ ուտէր և ըմպէր, վասն որոյ և ասեին զնշմարիտն, ոչ գիտակք կերող զնա և գինեճան, զայսպիսին դադարեցուցանել ի ճառեցելոցն. «Քանզի նեն, ասէ, Յովաննէս Մկրտիչ ոչ ուտելով հաց և ոչ ըմպելով գինի, և ասեն՝ գն ունի. ևկն Որդի Մարդոյ ուտելով և 15 ըմպելով, և ասեն՝ ահա մարդ կերող և գիներբու»<sup>1</sup>. քանզի իւր ասաւողիցելոյ, եթե «Եկն Որդի Մարդոյ ուտելով և ըմպելով», իշխն տակաւին ասել՝ ոչ ևս կերեալ իւր և ոչ արբեալ, անհաւատութիւնն է առ նոր(րա՞յն վարդապետութիւնն. 16r.

20

Եւ յետ այդոց.

Եւ դթլիատութիւնն իսկ, զոր թլիատեցաւ, զմող ոչ նեղէ ասելով՝ մարմին դոլ նոման մնդ զպարատեալն:

Եւ դարձեալ.

Ամնայն ուրեկ հաւասաւոյ այսորիկ ելոյ, ոյազագս 25 անթլիատութեանն խնդրեսցի, ինքն այսուհետեւ թլիատութիւնն ննդել կարէ զհակառական. զի հոգեկան մարմին պարատեալ<sup>\*\*</sup> երկաթով հողեղինաւ ցուցանել ոչ ևս կարասցեն. վասն որոյ ոչ դանդաղեցան ոմանք ի նոցանէ իրակել յաղազս անթլիատութեան և շարագրութիւնս առնել իբր 30 աւրէն ցուցանելով, եթե զատաւ ի հոգեկանացն գոյացութիւն. այդ ոչ նուաղագոյն քան զառաջինն անձկասցին և որք անձնական ասեն գոլ զմարմինն Քրիստոսի՝ զնոյն

\* ) Լուսանցքում՝ «արբեցողի».

\*\*) Անդ՝ «Թլիֆ(ատեալ)».

1) Մատթ. ԺԱ. 19., Ղուկ. է. 34.

իսկ տարակուսեսցուք յաղազս արևան և ջրոյ, արտադատալոց ի կողիցն նորա, խոցեալ աշտեիւն ի զինաւորէնւ իսկ գիտաւոյին լսել ասացելոց գաղափարք բնեուացն կացեալք ի մարմնի նորա զեկուցանեն, եթե մարմին հակառակափար՝ ոչ աստուածայնադոյն և ոչ գեր ի վերոյ վիրաց:

16v.

ՅԵՅ ՍԱԿԱԿԱՆՈՒՅՑ.

(Ո՞ր?)ոց այսպէս ունաւզաց ոչ ես հաւանելի, որք ասեն Մարեմաւ և ոչ ի Մարեմայ զնա եղանիլ, որպէս և Պաւզոս 10 գիտելով ասէ. «Իսկ յորժամ եկն յրունին ժամանակին, առաքեաց Աստուած զմրդին իւր եղեալ ի կնոջէ, եղեալ ընդ աւրինափ, զի զնդագինաւորսն գնեսցէ»<sup>1)</sup>. ղի ոչ ասաց կանամբ եղեալ, այդ ի կնոջէ:

ՅԵՅ ՍԱԿԱԿԱՆՈՒՅՑ.

15 Միանդամայն իսկ և ի թուելութիւնն \* փակին. քանզի թուեալն գոլ մարմին և երեւալն ամենեցուն նման գոլ մարմնոյ, ոչ ելով ի դոյացութիւնէ մարմնոցն, ոչ այդ ինչ բայց թուելութիւն կտանիլ:

Նորին՝ ի բանեն օր յաղազս մարմնաւորութեան եւ 20 հաւատոյ.

Որ ոք ասէ թուելութեամբ յայտնել զՔրիստոս աշխարհի և ոչ խոստովանէ զնա ի մարմնի, որպէս գրեալ է, նզովեացի:

ՅԵՅ ԱՅԼՈԾ.

25 Որ ոք ասէ այդ ախտակրեալ և այդ ոչ ախտակրեալն և ոչ խոստովանէ զնոյն զանախտակիր Բանն մարմնով իւրով ախտակրեալ, | որպէս գրեալ է, նզովեալ լիցի: Որ ոք ասէ այդ նախ քան զյաւիտեանս Որդին Աստուծոյ, և այդ առ վերջինս, և ոչ խոստովանէ զնոյն նախ քան զյաւիտեանս՝ զնոյն առ վերջինսս, որպէս գրեալ է, նզովեացի:

<sup>1)</sup> Լուսանցքում՝ «կարծիս»

<sup>2)</sup> Գաղատ. Դ. 4. 5.

Եւ յետ սակաւուց.

Որ ոք ասէ անարարակ զմարմինն Քրիստոսի, և ոչ խոստովանէ զինքն զանարարակն զԱստուածն Բան յարարակէ մարդկութենէս մարմնաւորութիւն և զներմարդութիւնն ընդունել, որպէս զրեալ է, նզովնացին 5

Նորին՝ ի բանեն որ յաղագս հաւատոյ ըստ մասանց.

Եւ է Աստուած ճշմարիտ անմարմինն ի մարմինի երես-  
եալ կատարեալ ճշմարտական և աստուածային կատարե-  
լութեամբն, ոչ երկու դէմք և ոչ երկու բնութիւնք, քանզի  
և ոչ քառս երկրպագել ասենք՝ զԱստուած և զՈրդին 10  
Աստուածոյ և զմարդքն և զՀոգին Սուրբ. վասն որոյ և նզո-  
վենք զայսպէս ամպարշտեալսն.

Երանելոյ Բասդի եպիսկապոսի՝ ի բանեն որ յաղագս  
Մրգոյ Հոգւոյն.

Այդ սակայն միանգամայն զղանալան կիրարկութեանն 15  
ցուցանելով, միանդամայն և զեղիսութիւն ոմանցն վարկա-  
պարագի | յարդարելով կարծաւղացն ողեկան գոյ զԾեառնն  
մարմինն, զի ցուցիէ, թե ի մարդկային դանդուածոյ  
մարմինն այն մածաւ, զերենելագոյնն ձայն նախապա-  
տուեաց. քանզի կնաւն առուղեկան հանդերձեալ էր զմտաւ 20  
ծութիւնն ծննդեանն ցուցանել, իսկ ի կնոջէն բաւականա-  
բար առզեկուցանել գհաւաս(ա)րութիւն բնութեանն, և  
ծնիցելոյն առ ծնաւղն:

Եւ յետ այդոց.

Քանզի ոչ այսքան երկին և երկիր և մեծութիւն 25  
ալեացն և ի ջուրսն սպարենաբուծեալք, և ցամաքայինք  
կենդանեաց և բոյսք և աստեղք և աւղք և ժամանակք  
և զարմաղան ամենայնիս յարդարումն զզերունակ հա-  
րստութեանն ասկացուցէ, որ քանզի կարել զԱստուածն  
զանտեսանելին անտիստարար մարմնուի զրկափառնիլ մահ- 30  
ուան, զի զմեղ իւրուզ ախտակրութեամբն զանտիստութիւն  
չնորհեացէ:

Նորին՝ ի բանեն, որոյ սկիզբն՝ եթե բնութեամբ  
Աստուած Ուրին.

Աբարեալն ոչ ի դոյացութենէ արարաւոյն, իսկ ծնեալն 35

ի նմանէ գոյացութենէ ծնաւղին. հչ նոյն ապա առնելն  
18r. և | (ծնա)նել:

Նորին՝ ի Եերբողենեն որ յերանելին (այն?) Յուղիսա.

Եւ զինչ պարս գիտքունան ասել վասն մեր Աստուած  
5 ի մարդկան, վասն ապականեցելոյ մարմնոյս. «Բանն մար-  
մին եղեւ և տաղաւարեաց ի մեզ»<sup>1)</sup>, ընդ անչնորհակալսն  
բարեգործակն, առ զերիսն աղատարարն, առ նատեալսն  
ի խաւարի արեգակնան արդարութեան, ի վերայ խաչն  
անախտակիրն, առ մանն կեանքն, առ դժոխս լոյն,  
10 յարութիւնն վասն անկելոցսն:

Երանելոյ\* Գրիգորի եպիսկապոսի Նազանգացւոյ՝ ի  
բանեն որ առ Երախայոց (վար)դապետութիւնն.

Իսկ զԱստուածն ի մարմնի երեսեալ մեղ՝ զապացու-  
թիւնն ինդրաւաղն առ ներգործութիւնան հայեսցի. քանդի-  
15 և բոլորովին իսկ գոլ զԱստուած ոչ ևս ոք այդ աղացու-  
թիւն ունիցի բայց զըստ ներգործութեանն վկայութիւն:

Եւ յեթ սակաւուց.

Աստուծոյ կենագործելն զմարդիկ, Աստուծոյ պահ-  
պանելն նախախնամութեամբ զէակս, Աստուծոյ կերակուրս  
20 և ըմպելիս որք մարմնով զկենդանութիւն ընկալան չնոր-  
հել, Աստուծոյ բարեգործել զմազթականան, Աստուծոյ  
զառյեղեալն ի ներգեռութենէ բնութիւն դարձեալ ողջու-  
թեամբ առ ինքն | \*\* .... Աստուծոյ ամեննեցուն վիրե .....  
18v. աւրինակաբար .... երկրի, ծովու, աւգոյ և ի վեր քան  
25 զիմանալիսն աեղեաց, Աստուծոյ առ ամենայնան բաւական  
զաւրութիւն ունել և նախ քան զամենայն մահու և ապա-  
կանութեան զոլ զեր ի վերոյ. արդ եթ' ուրուք այսոցիկ  
և այսպիսեաց՝ թերագոյն է այս (յա)զագս նորա պատ-  
մութիւն յիրաւի զի խորհուրդն մեր որք արտաքրոյ հա-  
30 ւասայս մերց առարազրեին. իսկ եթ' որով իմանչ Աստուած  
ամենայն յաղագո նորա զրուցարութիւնս աւսանի  
զիսոչընդունան? հաւատույ:

\* ) 2եռազբում՝ «երանելիոյ». Երկու տող խիստ եղծուած է, ո-  
ինչ որ հնարաւոր էր կարդալ, դրինք.

Նորին՝ ի բանեն որ ի յիսներեակն \*.

Համարձակեացի ոք արդեւք եւ (?) զամնայն պարմանագունացն և առ նորն Աղամ գո(լ) Աստուածն իմ և Տէր Յիսուս Քրիստոս ի հոյն և ընդ մեղաւք Աղամայ եւթանասներորդ և թներորդ թիւ ըստ Ղուկայ ազգաբանու- 5  
թեանն<sup>1</sup> վերոտնելով:

Եւ յետ սակաւուց.

Իսկ ոյք են քրիստոսիկն. կուսի ծնունդ, մառը, խանձարքութիւն, հրեշտակք փառաւորաւդք, հովիւք առջնթացաւդք, աստեղ արշաւան, մոդաց երկրագութիւն եւ 10  
ընծայաբերութիւն, Հերովդեայ ման(կա)սպանութիւն, փախուցեալ յԵղիստոս, վկրակեալ յԵղիւղտոսէ, թղիսանեալ,  
մկրտեալ, վկայեալ ի վերուստ, փորձեցեալ, քարկոծեալ,  
մատնեալ, բենուեալ, թաղեալ, յարուցեալ, գալ հանդերձեալ:

19r.

Նորին՝ ի բանեն որ առ արիանոս.

15

Ամնայն եղիցի մարդասիրին մարդասիրական, որպէս զի և Յրիստոսի աշակերտացն զի՞նչ մնծագոյնու արդեւք տացուք, ևթ' Աստուծոյ և մասնեցնոյ վասն մեր՝ մեք նմանիցն և ոչ զփոքունան թողայուացուք:

Նորին՝ յաւազին բանեն որ յսդագս Արդեոյ.

20

Քանզի այս բնութիւն ծննդեան՝ նոյն գոլ ծնաւղին ըստ բնութեան:

Եւ յետ այլոց.

Եւ զի՞նչ Աղամն. ոչ միայն ի մարդկան սակեղծուած Աստուծոյ, և բնաւ. ասասցես արդեւք միայն մարդ, ոչ 25  
ես. իսկ ընդէր արդեւք. վասն զի ոչ մարդկութիւն ստեղծուածն, քանզի ծնեալն մարդ, այսպէս և ոչ անծինն միայն Աստուած, թեպէտ և մէնոյ Հաւը. այդ ընկալ և զծնեան զրէ Աստուած, քանզի յԱստուծոյ, ինոպէտ և յոյժ ևս անծնատէր:

30

\* Հուսանցքում՝ «պենտակոսին».

<sup>1)</sup> Հմմտ. Ղուկ. Գ. 23—38.

Նորին՝ ի բանեն որ յաղագս Սրբոյ Հոգւոյն.

Անա իսկ և նորին ոմն ոչ ծնունդ, | իսկ ոմն ծնունդ  
բայց նոյնագոյ(?), որ և առընթերանային իրրե յաւէտ նման-  
կաց. իսկ մի իմն ի մերոցն ասացեալ, որ և ամեննեցուն  
5 ծանաւթ: Յայզն փոխեցաց բան. Աղամն զի՞նչ ոք էր՝  
ստեղծուած Աստուծոյ. իսկ զի՞նչ Եւայն՝ հաստումն ստեղ-  
ծուածոյն. իսկ զի՞նչ Սէլին՝ երկակաց ծնունդ. արդեւք  
նոյն քեզ երեխցի ստեղծուածն և հա(ս)տումն և ծնունդն.  
իր իսկ նոյնագոյք սայք կամ զի՞նչ և իր ոչ խոստո-  
10 վանեալ ապա և զանազանապէս ենթակա նորին գոլ  
գոյացութեան հնարաւոր:

Նորին՝ յաստուածայայտնու թիւնսն.

Անմարմինն մարմնանայ, անտեսանելին տեսանի,  
անշաւչափն չաւչափի, Որդին Որդի լինի. «Յիսուս Քրիս-  
15 տոս երէկ և այսաւոր, նոյն եւ յաւիտեանս»<sup>1)</sup>. հրեայք գայ-  
թագլեացին, հեթանոսք կատակեսցեն<sup>2)</sup>, հերձուածողք լեզ-  
ուագարեսցեն. յայնժամ հաւատասոցեն, յորժամ տեսցեն  
յերկինս համբարձեալ. իսկ եթ' ոչ յայնժամ, այդ յորժամ  
յերկինուստն զայցէ, և այսք ի վերջոյ. իսկ այժմ աստուա-  
20 ծայայսնութիւն է, եկացուրդս թեսպէտ ծննելութիւն. քանզի  
ասին երկու(քեա?ին յերկուց կացելոց առա(տութե?)անց միոււմ  
իրի. քանզի յայտնեց(աւ.) Աստուած (մար)դկան ծննդեամբ.  
զի՞ն (ե)լով և միշտ եալ, յաւէտն զոլոյ ի վեր քան զպատ-  
ճառ և զբան, իսկ միւտն վասն մեր եղեալ ի վերջէ, զի  
25 որ զդոլն ետ, և զբարին գոլ չնորդիցէ:

Եւ յետ այդոց.

Գորքը մի և յետոյ տեսցես և ի բաց ապաւաւառեալ  
զՅիսուս ի Յորդանան զիմն ապաւառութիւն, մանաւանդ  
սրբելով ապաւառութեամբն զջուբս. քանզի և ոչ ինքն  
30 կարաւանայը բացապաւառաւթեան, բարձաւոյն զմեզս  
աչխարհիս, զոր և պատառեալ զերկինս տեսանել զրեալ է,  
և ի զաւակակցէն Հոգւոյ վկայեալ և փորձեցեալ և  
յաղթեալ և ի հրեշտակաց սպասաւորեալ և բժշկելով  
զամնայն հիւանդութիւնո և զամնայն մեղկութիւն, և

1) Երբ. ԺԴ. 8.

2) Հմմտ. Ը. Կորնթ. Ա. 23.

կենագործնեղվ զմնանաւս. որպէս իցիւ, զի և զքեղ դէարափառութեամբդ դիակնացնալ և զդիւ ի բաց վարելով՝ զոմանս իրաւի, իսկ զոմանս աշակերտաւոքն և հացիւք սաւկաւուք կերակրեալ բիւրաւորս, և հետեակեալ ծովային երկարութիւնն և առ մատ(նեալ) և խաչեցնալ և իւաչ....\* 5 20v. զիմն մնջո իրը գառն պատարագեալ և իրը քահանայ պատարագեալ և իրը մարդ թաղեալ և իրը Աստուած յարուցնալ, ապա և վերացնեալ և գալ հանդերձնեալ:

Եւ յետ ստկաւուց.

Ընդ ամննայն ուղևորեա ամբծաբար ընդ հասակմն 10 Քրիստոսի և զաւրութիւնս. իրը զթրիստոսի աշակերտ մաքրեցիր, պարատեցիր, ի բաց զերծո զ'ի ծննդմնէն ծածկոյթ. յետ այսորիկ ուսոյ ի մեհենին, զասաւուածավաճառողան ի բաց վարեա, քարարկեցիր, եթե զայս պիտայցէ կրել. և դանիլասցիս զարկանա(ց)զմն, քաջ գիտեմ, փախիցնս և 15 ընդ մէջ նոցա իբ(ր) Աստուած, քանզի Բանն ոչ քարկոծի:

Նորին.

Որ ոք ոչ Աստուածածին զՄարիամ կարծէ, որիշ է յաստուածութենէ:

Եւ յետ ստկաւուց.

20

Որ ոք ոչ երկրպագէ զխաչեցնալն՝ նղով եղիցի և կարդեսցի ընդ աստուածասպանսն:

Երանելւոյ Գրիգորի Լայիսկապոսի ի Նիւսայ.

Այս խոհեսցի, ասէ, ի ձեզ որ ի Քրիստոս Յիսուս, որ ի կերպի Աստուծոյ և լովոչ յափշտակութիւն համարեցաւ զդոն 25 հան|գէտ| Աստուծոյ, այդ զինքն թափեաց զկ(արգ) ծառայի 21v. առեալ. զինչ աղքատա(գոյն?) ի վերայ Աստուծոյ քան զծառային կերպ. զինչ նուաստագոյն առ թագաւորն բոլորեցուն, բայց զի ի կցորդութիւն աղքատութեան մերոյա քնութեան կամաւորաբար զոլ. և թագաւորն թագաւոր-30 բուցելոցն և տէրն աիրացելոցն զաղաինականն կերպ զզենու. գատաւորն ամննայնի հարկարեր հարստացնեցն եղանի. արարածոյս տէրն յայրի իջավանէ. որ զամենայն ի բամ:

\* ) Բառի շարունակութիւնն տնվերծանելի.

ունի, ոչ դտանէ տնզի լիջավանին, այդ ի մսուր անքանիցն առընկեցանի. մաքորն եւ անարաւան զմարդկայնւոյ բնութեանս յանձն առնու ազտ, և ընդ ամեն սայնս աղքատութեանս մերոյ անցանելով մինչ ի մահու. ժամանեաց 5 փորձութիւն: Տեսանէք զիամաւոր աղքատութեանն զչափն.

կեանքն մահու ձաշակէ. դատաւորն ի դա(տա)ստան ածի. կնաց էակացս տէրն ընդ համարով դատչի լինի. ամենայնց զերաշխահականց զաւրութեանց թագաւորն դահճացն ոչ բաց մղէ ձեռս. առ այս քեզ, ասէ, աւրինակ

21v. 10 նուասա| խոհութեանն հայնսցի ի չափի:

Երանելոյ Յովիաննու եպիսկոպոսի Կոստանտինոպողոսացոյ՝ ի կարեաւուտէն (որ?) յԱռաքեալ.

Քամովի զամնայն աւրէնն լցւալ, յըրում և զթլիատութիւնն և զաէ յանիծիցն ի բաց զձարեաց, որ ի ձեռն 15 յանցումանն, խաչիւն. ոչ եթող կործանիլ զիսոսաւումնն: Արդ, յորժամ ասէ սպասաւոր թլիատութեանն, զայս ասէ, եթ՝ եկեալ և զամնայն աւրէն արարեալ, և թլիատեցեալ և եղեալ զարժ Արքահամու: Ելոյծ զանէծան, դադարեցոյց գուհանաւն բարկութիւն. ըմբռն այսուհետեւ եարար զհան- 20 դերձեալն ունել զիսոսաւումնն, մի հազ աղատացեալք ի թհամութենէն: Իրը զի մի ասիցեն այսովիկ մնզադրեալքս. իրը արդեւք Տէրն թլիատիւր և զամնայն պահէր աւրէնն, ընդդիմակն զնա դարձւացնէ. ոչ ես զի մնասցէ աւրէնն, զայս եարար, ասէ, այդ զի զնա լուծցէ և զքեզ յանդ 25 հանցէ ի նորայն անիծից, և աղատացուցէ բալորովին յիշանաւթենէ նորա:

Եւ յես այլոց, իբր առ եւեւութականն նառելով, ասէ.

22r. Այդ ով ցուրան նոցա բան. և կամ զկերպ ծառայի եառ ասնն յորժ(ամ զափ)ածանելինն պարագաւտեալ լուաց 30 զուսա աշակերտացն. այս կերպ ծառայի է. այդ ոչ է այս կերպ ծառայի, այդ զրբ ծառայի. զի այդ է զործ զոլ ծառայի և կերպ ծառայի առնուլ: Իսկ էրում ոչ ասաց, եթե գործ եարար ծառայի, որ հաւասարոյն էր, և ոչ ուրեւք ի զրեցելումն կերպ փոխանակ գործոյ ասացեալ, 35 քանդի յուժ ընդ մէջն. քանզի սմն բնութեան է, իսկ սմն ներգործութեան, և ի սովորութեան իսկ ոչ ուրեւք զկերպն փոխանակ գործոյ ասացնալ ասնուէք, և այզազդ և ոչ գործն նաս ըստ նուս, և ոչ պարագաւտաց. զի եթ՝

երեսւթիւն իրն էր, ոչ էր ձշմարտութիւն, եթ' ոչ ձեռս  
ունէր իբր լուաց, եթ' ոչ քամակ ունէր իբր զվածաննլին  
պարագաւաւեաց և զոր հանդերձս եառ, քանզի եառ զհան-  
դերձս իւր ասէ, իբր զի և ոչ գործ աստանաւը գտանի եղեալ,  
այդ պատրանք են միայն, և ոչ լուաց զաշակերտսն. զի 5  
եթ' անմարմին բնութիւնն ոչ երեսցաւ ի մարմնի, ոչ էր,  
ով արդեւք զաշակերտսն լուաց. զինչ ևս գարձեալ առ  
Պաւղոս Սամոստացին. քանզի զինչ նա ....\* եւ սա զնոյն. 22v.  
այդ ոչ է այ .... \*\* ափումն բնութեանն գոլ մարդկայնւոյ  
և մարդ սոսկ լուանալ գնոմածառայական: 10

## Եւ դարձեալ.

Զինչ ևս ասեմք առ նոսա, եթե մարդ զմարդս լուաց,  
ոչ թափեաց, ոչ նուաստացոյց զինքն, եթե մարդ ելով  
ոչ յափշտակեաց զդոյն հանդէա Սատուծոյ, ոչ գովկիի.  
քանզի Սասուածն ելով մարդ եղանիլ բազում նուաս- 15  
տութիւն, բազում թափումն, անձառելի, անզրուցատրելի:

## Եւ յիտ այլոց.

Աւստի վայել էր ըստ ամենայնի եղրարց նմանել.  
ծնաւ, ասէ, կերպակրեցաւ, աճեաց, կրեաց զամենայն, որպէս  
պիտանացու կատարումն մեռաւ. այս է ըստ ամենայնի 20  
եղբարց նմանել: Սրդ, վասն զի յրբունս տրամաբաննաց  
յաղագս մեծութեանն նորա, և զի վերնափառաց յեա  
այսորիկ զտնաւրէնութեանն Բանն շարժէ, միայն ոչ ասե-  
լով, այսպէս մնձն էակն, բացափայլութիւն փառաց, էակն  
դժաւորութիւն ենթակայութեան(ն) նորա, զյափտեանն 25  
արարաւոն, յաջմէ Հաւը նատեալ կամնցաւ(?)\*\*\* ..... յամա-  
նայնի լինել, և վասն այսորիկ ... զայս զաւրութիւն ....  
մեղ (?) ի խոնարհ եկն և ... բռնահարեաց և բիւրս սմա (?)  
դրժեաց բարիս, զման ելոյծ, զրանսարկու(?) զուռզութեանն  
արտաքս ենան, զմեղ ի ծառայութենէ աղատեաց, և ոչ եղբայ- 30  
րութեամին միայն պատուեաց, այդ և այլովք բիւրուք:

## Եւ յես այլոց.

Ի՞անզի բնշանակը Յիրիսասոի եղեաք, բնոդունիոր ի  
նմանէ ասէ. մի նշաբ մեք և նա. զի նիւ ինքն զլուխ

\* Մազաղտթը ծակծկուած է.      \*\* Նոյնպէս.      \*\*\* Այս բառից  
սկսած հինգ տաղ խիստ եղծուած է. ինչ որ հնաբաւոր էր կարդալ, զրինք:

իսկ մնք մարմինք, ժառանգակիցք և մարմնակիցք՝ մի մարմին եմք, ի մարմնոյ նորա և յոսկերաց նորա<sup>1</sup>:

Նորին՝ յաղագս աւտուածային ծննդեանն, եւ ասէ վասն սրբոյ կուսին.

5 Եւ փոխանակ արեգական դարեգակալնն արդարութեան անպարազրաբար տարեալ, և մի խնդրեսցես իբր. քանդի ուր Աստուած կամի, յաղթահարի բնութեան կարգաւորութիւն, քանդի կամնցաւ, կարաց, ստորիջեաց և եցոյց արշաւանակից ամսնայն Աստուածոյ .....\* |ծնանի և էակն և(զան)ի որպէս ոչ

23v. 10 էր. քանդի ելով Աստուած ևղանի մարդ, ոչ արտակացեալ ի գոլոյն Աստուած. քանդի և ոչ ըստ արտակացութեան աստուածութեանն ևղանի մարդ, և ոչ ըստ նախսահատութեան ի մարդոյ եղել Աստուած. ա(j)զ Բան ելով վասն անախտակրութեան մարմին ևղե, անփոխարկելի մնացելոյ բնութեանն:

Եւ ի վերայ բերէ այսոցիկ.

Ի վերայ աթոռոյ բարձու և վերամրածելոյ նստեալն՝<sup>2</sup> ի մսուր գնանի, անյայտն և պարզն և անմարմինն՝ ձեռաւք մարդկայնուովք պատատի. զմեղացն ի բաց կորզաւող կապանս՝ 20 ի լիանձաբուրս հիւսանի:

Երանելոյ Սեւերանեայ Եպիսկապոսի Գաբաղացեաց.

Քանդի ծ(ն)եալն ի վերուստ ի Հաւրէ Բանն անճառաբար, անասակի, անհասաբար, յաւէտապէս, նոյն ինքն ամանակաւ ի ստորուստ ծնանի, ի Մարեմայ կուսէն, զի ի 25 ստորուստ յառաջադոյն ծնեալքն ի վերուստ ծնանիցին երկրորդ անդամ, այս է յԱստուածոյ:

Երանելոյ Յովաննու Եպիսկապոսի Երուսաղէմացւոյ՝ յարտադրութենէ նորա, որ յաղագս հաւատոց.

24r. Եւ յաղագս մարդկութեան Տեառն |մ:րոյ Յիսուսի Քրիս- 30 տոսի Աստուածոյ և իմեւ մարմնաւորութեան\*\*, խոստովանելք,

\*, Մի բառ եղծուած.      \*\*) Զեռազրում «մարմնաւորութեան».

1) Հմմատ. Խիես. Ե. 30.

2) Հմմատ. Եսակի Զ. 1.

Աթե Աստուածն Բան մշտնջենաւոր, Աստուծոյ Որդին Մէ-նածին առ ի փրկութիւն ազգի մարդկան ի Մարեմայ Սրբոյ կուսէ և Հոգեւոյ Սրբոյ ծնիցեալ ի կնոջէ, որպէս եասաց Առաքեալ, և մարմին առեալ ի նմանէ, հոմագոյ մերոյս մարմնոյ, ճշմարտապէս և նչ թուելութեամբ, ճշմարտապէս ի 5 նմա զմերսն համբերեաց կիրս, իբր զմեղ և ոչ թուելութեամբ, վաստակեալ յուղեւորութեան և իբր զմեղ ննջեալ, և իբր զմեղ ի վարոցին \* ի Պիղատոսէ, գարածոյն որ ի վիրացն զգացեալ և յապտակիին դաւոցն իմացեալ, և ի հարկանիլ բեկուացն յոտս նորա և ի ձեռս գարածոյ վշտից զգացեալ, որպէս 10 էսայիս յաղագս նորա (ա)ապդ. «Վա զմեղս մեր բերէ և յաղագս մեր վշտանայ. և մեք համբերեցաք զնա զոլ ի դաւս և ի վէրս և ի հիւանդութեան. իսկ ինքն վիրաւորեցաւ վասն մողաց մերոց և մեղկացեալ է վասն անաւեննութեան մերոյ»<sup>1:</sup>

Եւ դարձեալ.

15

Մարդ ի հարուածս ելով և դիտելով բերել մնդկութիւն<sup>2:</sup>. իսկ հաւատամբ և Պաւղոսի ասաւզի յաղագս նորա. «Քանզի ոչ ունիմ(ք) քահանայապետ ոչ կարող ախտակցել հիւանդութեանց մերոց, իսկ հմուտ ըստ ամենայնի ըստ նմանութեան զմերն առանց մեղացը<sup>3:</sup>, Խոստովանեմք իսկ 20 և անձն զնա բանական ունել, նոյնակիր մերոց անձանց զվասն մերոց ախտից, և ճշմարտապէս համբերեալ զնա զախտակրութիւնս մերոց անձանց, ասէ տրտութիւն և խոռվութիւն և յոյժ տիրութիւն. քանզի զայս աւետարանքն յաղագս նորա ուաստանեն, յիշելով զնա ասացեալ. «Տըր- 25 տում է անձն իմ մինչ ի մահ»<sup>4:</sup>, և «Եյժմ անձն իմ խոռվածալ»<sup>5:</sup>. և դարձեալ յաղագս նորա ըստ Մարկոսի աւետարանին գրեալ. «Սկսաւ հիանալ և յոյժ տիրել»<sup>6:</sup>, Եւ որպէս խոստովանեմք զմարմնոյ նորա կիրս ըստ ճշմարտութեան եղանիլ և հչ ըստ երեւթութեան, այսպէս և 30 զանձինն ըստ ճշմարտութեան և հչ ըստ երեսթութեան եղանել հաւատամբ: իսկ զասացաւզն զնա խարազանեալ՝ հչ վշտանալ, կամ խաչեալ՝ ոչ ցաւել ի զբսեռան ի նմա վարսիլ, իբր և գհերձուածողս նղովեմք. իսկ խոստովանեմք,

24v.

25r..

\* Լուսանցքում՝ «խա(րազա)նիլ».

<sup>1)</sup> Եսայի Եֆ. 4. 5.      <sup>2)</sup> Հմմա. Եսայի Եֆ. 3.      <sup>3)</sup> Եբր.

Փ. 15.      <sup>4)</sup> Մատթ. ԻԶ. 38., Մարկ. Փ. 34.      <sup>5)</sup> Յովհ. Փ. 27.

<sup>6)</sup> Մարկ. Փ. 33.

եթե ճշմարտապէս մնուաւ (վ)ասն մնդաց մնրոց և զի թաղեցաւ մարմինն նորա անանձն եղեալ, և զի յարեւաւ եռաւրեայ ի մնուելոց ճշմարտապէս, և եթե յետ յարութեանն ընդ աշակերտսն եկեր և եարբ՝ ճշմարտապէս և ոչ ըստ 5 երևոյթութեանք, և զի վերացաւ ի յերկինս և եկեսցէ ի կատարածի յաւիտենիս դատել զեկնդանիս և զըմնոեալս:

Երանելոյ Աստիկայ եպիսկապոսի կոստանինոպողացւոյ.

Այսաւր Քրիստոս Տէրն գմարդասիրութեանն ծնելու-  
10 թիւն ընկալաւ, քանզի աստուածութեանն արժանաւորութիւն նախ քան զաշխարհս ունէր \*:

Ապա այնոցիկ ի վերայ բերէ դարձեալ.

Մարդասիրութեան Բանն թափի անթափելի գոլով  
զբնութիւնն. քանզի զինքն թափեաց զկերպ ծառայի  
15 առեալ, անմարմինն վասն քո մարմնանայ, քանզի «Բանն  
մարմին եղեւ»<sup>1</sup>. որոնմանն \*\* ոչ ենթանկելին \*\*\*,  
25v. բնութեանն անմարմնութեան, շաւշափի. | անսկիզբնա ընդ  
սկզբամբ լինի. մարմնականաւ կատարեալն աճէ. անյեղեա-  
զուկն նախահատէ. փարթամն յիշավանի ծնանի. պարար-  
20 կաւզն զերկինն ամսպսիսանձարրապատի, թագաւորն ի մասուր  
ստորանկանի:

Երանելոյ Թեօվիդիղեայ եպիսկապոսի Աղեքսանդրեայ՝  
ի բանին առձայնականէ.

Քանզի և համբակ եղեալ Եմմանուէդ խոստովանիւր,  
25 մոգայն առ նա գոլով և երկրպագելով Աստուած գո  
զերմեալն գոչելով. զի և մարմնով խաչեցեալ զարեգական  
ամիկոմվեաց ճառագայթս, աւտար պամնչելութեամբ զ(ր)ն-  
առանեկանն հաւաստեցուցանէր աստուածութիւն, ոչ ուրեք  
ցրեալ զինքն կամ լուծեալ յորդիս, ի փրկիչս երկուս:

30 Նորիմ՝ ի համերերդէ առաջնորդէ տաւնականին.

Իսկ զծովն վայրենեաւք ի բարձունս ամբարձեալ կո-

\* ) Հուսանցըում՝ «նախ քա ... որարկու .... աշխար .... խագայ....»

\*\*) Անդ՝ «շաւշափ(մա)նն».                \*\*\*) Անդ՝ «ստորանկելին».

<sup>1)</sup> Յովհ. Ա. 14.

խակաւք առ բաղձական նաւելոցն ստորախչտեցոյց խաղաղութիւն, Աստուած իսկապէս խոստովանիւր, և երեւեալ մարդ, մարդ մերով նմանութեամբս տայր քաջուացի զարմանալեաց գործոցն իմանալ, զի և թագաւոր և Աստուած երեւեաց և աներեւութիւն է արարածոց, տուեալ զինքն 5 26v.

ըստ(?) մեղս նմանութեան, զի մար(...?) բարուզ(?) ընտանեան վարեցեալ բնութեամբն ի նմանութիւն երկնայնոյն քաղաքաւորութիւն ածյէ, և երեւեալ յերկրի, ոչ(?) յերկնից զինքն վոփակացոյց, անապատ զանտիսն թողեալ, այդ և զայն մատակարարելով, և ունակութեամբ առ մեղս հաւասարու- 10 թեան եղեւալ մարդ զներմարդութիւն իւր զներանձնաւոր և ններամիտ \* տնաւրինելով. «Ի վերայ երկրի երեւեաւ և ընդ մարդկան շրջեցաւ»<sup>1</sup>, ոչ մարդ անկատար և ոչ Աստուած կարաւտացեալ, առ իմաստունսն հաւատացեալ:

Երանելոյ Կիւրդի եպիսկապոսի Աղեքսանդրեայ՝ ի 15 բանեն որ յաղաղս ներմարդուրէանն.

Եւ այսպէս եղիցի ապա ճշմարիտ, եթ' Աստուածածին եղև կոյան սուրբ, ի բաց ծնեալ հրաշավիառաբար զմին Քրիստոս նմանապէս մեզ ընդունաւ.ղ մարմնոյ և արեան, և հոմագոյ նէմայ իսկ և մեզ ըստ մարդկայնոյն, իրր զի 20 գոլ զմարմինն յԱստուածածին Մարեմայ. քանզի ոչ նմանագոյ, որպէս թուեցաւ ոմանց հերձուածողաց, այդ նոյն(ագոյ) այս (?) ի մերս ի գոյացութիւնն | ...\*\*

26v.

Նորին՝ երե Տէր(?) Քրիստոս.

Եւ (սա?) այսպէս ..... \*\*\* իցէ. իրր զի կամ զաստուա- 25 ծայինն կարծել Բանին բնութիւն յեղափոխեալ յոր ոչն էր, կամ փոխաբնակել զմարմինն ըստ այդայդութեան յեղանակէ ինոյն ինքն ի Բանն, քանզի անհնար իսկ. մին Որդիւ մի նորա բնութիւն գոլ ասենմք, թեպէտ և ընդունելութեասք իմանի եղանելն մարմնոյ\*\*\*\*, անձն ունաւղին իրացական: 30

\* ) Լուսանցքում՝ «մեղաւոր».      \*\*) Երկու տող եղծուած և յաջորդ վերնագիրը հազիւ վերծանելի.      \*\*\*) Մի տող եղծուած.

\*\*\*\*) Լուսանցքում՝ «մսոյ».

<sup>1)</sup> Բարուք Դ. 38.

Նորին՝ ի հինգերորդ բանեն առ Կորնթացիս յառաջին բուղբն.

- Եւ հարկաւորապէս (առ?) արդեան ժամանակս ոչ  
մեռանել միայն, այդ և թաղիլ ասի զնա, քանզի հաւած  
տացուցանէ զմեռանելն ըստ ձշմարտութեան Եմմանու(էղ).  
Պնանի և ի շիրմի, բայց վեր(ակեն)ցաղեաց, որպէս և ասացի  
այժմ, ի ձեռն մեռանելոյն մարմնով հաւատացուցանելով թե  
եղեւ մարմին, և թեպէս Աստուած ելով Բան, իսկ ի ձեռա  
կոխելոյ գրահ եթ' Աստուած ըստ բնութեան է, լրջապէս  
27r. 10 բացայատէր. քանզի որպէս է մարդկայնոյն(?)...\*, այսպէս  
աստուածականն յաղթել զմահն:

Նորին ի լուծմանեն տասներորդ նզովմ(աճ?).

- Իսկ առ պատճառասէրան զնոյն ասեմք. ուսարութ  
նեղեալքդ ընդունել զ'ըստ Քրիստոսի խորհրդոյ զհիմնն.  
15 զտնտեսութեանն զառաջին զսկզբունա և զնոյն իսկ, զի այս-  
պէս ասացից, զ'իներքս միսեալն. հաւատացէք ընդ մեզ  
եւոթնաւանդ(?) աստուածային զրիցելոց տուք այսուհետեւ  
Որ ոք զշմարտութեանն վիճակ խոստովանելով, եթ' ինքն  
Մենածինն Աստուծոյ Բանն ի գոգմն ելով Հաւրն  
20 որով ամենայնն և նորում ամենայն՝ եղեւ մարմին, ծնե-  
լութիւն համարեալ ի Սրբոյ Կոււէն, զ'ըստ մարմնոյն ասեմ.  
և անուանեցաւ Որդի մարդոյ և նմապէսնն զկցորդութիւն  
ընկալաւ արեան և մարմնոյ, այսպէս առ դրեցելոցն և  
զայսպիսի պարշտելին, և զշմարտագոյն հաւատն ընկալե-  
25 լոց ամենայն երեսնոցի մի ըստ միոջէ կոխան և ձիավարելի  
և ոչինչ զառիվեր կամ խաչոր. քանզի գրեալ է, եթե ամե-  
նայն առաջի ....\*\* և ուղիղք, որք գտանեն զխորհուրդա:

Երանելոյ Ամփիղոքեայ եպիսկապօսի Իկոն(ացւոյ?)  
ի բանեն, որ յաղագս մարմնոյ ծնելութեան.

- 30 ձշմարտութիւնն ծանուցաւ, չնորհ եկն, կեանքն  
յայսնեցան. Աստուծոյն ելով Որդի, յԱստուծոյն Բան մար-  
մին եղեւ վասն միր, զի զըմահկանացուս ի կեանսն յաւի-  
տենականս յարուացէ, ի մեռելոցն կանգնեսցէ Սրարիչն  
բոլորեցուն, նախն ամենայն արարածոց՝ երեսեւաց և անե-  
35 բնութից. ընդ միայնում Հաւր և Հոգույ ելով անմահ.

\* ) Մի անգերծանելի բառ.      \*\* ) Մի անգերծանելի բառ.

այսաւը ահա մեզ ի կուսէ ծնաւ առ ամենայն մեղաց,  
թանց մարդոյ կամ եթ' առն:

Երանելոյ Պրոկրի եղելոյ եպիսկապոսի Կոստանդի-  
նոպոլսի յետ Նեստորի լուծմանն, վասն զի զայս խաւսեցաւ,  
որպէս ասեն, նսելոյ Նեստորի, եպիսկապոս ելով Կիլիկիայ 5  
զառաջինն. ի խաւսիցն որ ի ծնունդն Քրիստոսի:

Եթ' Աստուծոյ անարդութիւն յարգանդն գալ, և հրեշ-  
տակաց (ան)արգութիւն մարդոյ սպասաւորել. Էակն ըստ  
բնութեան անախաւակիր եղն ի ձեռն զթոյ յոքնախաւակիր.  
ոչ ի նախահատութենէ եղն Աստուծո Քրիստոս, քաւ լիցի, 10  
այդ զթովնել եղն մարդ, Աստուծո ելով, որպէս հաւատամք.

ոչ մարդ աստուածացեալ քարոզեմք, այդ Աստուծոյ մար-  
մնացեալ հաւատամք. գլուխանիկան աղախինն առգրեաց  
մայր, ըստ գոյացութեանն անմայր, ըստ տնտեսութեանն  
անհայր. ապա թե ոչ՝ իբր ինքն ըստ Պաւղոսի անհայր և 15  
անմայր. եթե սոսկ մարդ՝ ոչ անմայր, քանզի ունի մայր.  
եթե մերկ Աստուծած՝ ոչ անհայր, քանզի ունի հայր. իսկ  
այժմ ինքն անմայր, որպէս ստեղծաւդ, անհայր որպէս ստեղ-  
ծուած:

Եւ դարձեալ.

20

Եւ ինի մարդ, որպէս դիտէ ինքն. քանզի Բան մեկ-  
նել զրաշալին ոչ կարէ, և մեռանի, որով եղեն, և  
փրկանաւորէ որով էրն ըստ Պաւղոսի ասելոյ. յորում ու-  
նիսք զիրկութիւն արեամբ նորա զթողութիւն մեղադ:

Եւ դարձեալ.

25

Ոչ ամաչեաց մարդասէրն զ'ի կնոջէ երկնն. քանզի  
կենդանութիւն էր իրաւորեալն. ոչ շաղախիցաւ բնակելով  
մասնկունս, զորս ինքն առանց անարգանաց արուեստագոր-  
ծեաց. եթ' ոչ կոյս մնացն, սոսկ մարդ ծնիցեալն, և  
ոչ ես հրաշալի ծնունդն. իսկ եթ' և յետ ծննդեանն մնաց| 30  
կոյս, այսպէս անձառաբար ծնաւ, որ և դրացն փակեցելոց  
անարգելաբար ի ներքս ևկն:

Եւ դարձեալ.

28v.

Մի ամաչեաց զերկնն, ով մարդ, քանզի սէ մեզ  
եղն փրկութեան պատճառ. եթ' ոչ ի կնոջէ ծնաւ, ոչ ես 35

<sup>1)</sup> Հմմա. Հռովմ. Գ. 25.

մեռաւ. իսկ եթ՛ ոչ մեռաւ, ոչ և մահուամբ խափանեաց գունաւղն հարստութեան մահու, այս է զրանսարկուն:

Եւ յետ այդօց.

Քանզի ինքն և զ'ի փշոցն զգեցաւ պսակ և զփշոցն ելոյծ 5 դատավարութիւն. ինքն ի գոգ(ն) Հաւրն և յորովայնի Կուսին. ի գիրկս մաւրն և ի վերայ թեսոց հոգմոց. ի հրեշտակաց երկրպագիւր և ընդ մաքսաւորս բազմիւր. Սարափին ոչ հայէր և Պիղատոս հարցանէր. ծառայն ապտակէր և արարածս քստմնիւր. ի վերայ խաչի մածնոյր 10 և աթուն ոչ մերկանայր. ի գերեզմանի ստորանկիւր և զերկին ձգեաց իբրև զիորան. ընդ մեռեալս համարեցաւ, և զդմոխս կոզոպտեաց. ի խոնա(բ)հ մոլորեալ զրպարտիւր, և ի վեր սուրբ փառարանիւր: |

- 29r. Արդ այսք ամենեքեան սրբոցն և երիցս երանելեաց 15 հարա(ն)ցն մերոց փրկանակը առտութիւնք և վկայութիւնք և խոստովանութիւնք ուղղափառութեան հաւատոյ յաղագս Տեառն մերոյ և Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի իբր ի միոյ բերանոյ Սրբովն Հոգովն խաւեցեալք, որք և աշակերտք առաքելոցն և նորին իսկ Տեառնն ցուցանին 20 ամենեքեան այսոքիկ ուղղափառ հաւատովն իւրեանց. իւրաքանչիւր ոք նոցա ժառանգաւոր եղեալ հայրենի և փրկական գանձու առողջական հաւատոյ, աղաւթեմք իսկ և զմնզ մինչ ի վախճան նմանողս և ժառանգակիցս ուղղոյ նոցայն հաւատոյ լինել և խոտորիլ յամենայն հերձ 25 ուածողաց, զորս և երանելիք առաքեալքն և հարքն մեր քարոզեցին և զնոցայսն անձնապականս վարդապետութիւն. քանզի ահաւասիկ ամենայն սուրբք եկեղեցեացն հպիսկապոք և եպիսկապոսապետք եղեալք վարդապետք ուղղափառ հաւատոյ ի գալստենէն Փրկչին և Տեառն մերոյ 30 Յիսուսի Քրիստոսի մինչ ի մել, և Աստուած խոստովանեն զծնիցեալնի ի Սրբոյն կուսէն և անյեղակարար և անխառնապէս մարդ եղեալ ըստ ճշմարտութեան մնալովն Աստուած. և մի զնա խոստովանեն հանդերձ իւրով մարմնովն և նմա առբաշխեն զամենայն զաստուածավայելուչ զմարդ 35 կայինս, Աստուած ասելով զախտակրեալն ի մարմնի իւրում, և զյարուցեալն և զհամբարձեալն յերկինս, և զգալոցն դատել զկենդանիս և զմեռեալս: Իսկ զասաւղմն երկուա ընութիւնս ի վերայ միոյ Քրիստոսի և զոչն խոռ-
- 29v.

տովանաւզս գհոմագոյ եակն Հաւր եղեալ ըստ մարմնոյ մարդկան հոմագոյ, մնալով Աստուած, նզով արարին հանդերձ նոցայն մահաբեր վարդապետութեամբ։ Քանզի հինք երկոքեան հերձուածքս և բացաքարոզեալք ի սրբոց առաքելոցն և յերանելեացն մերոց հարանց ուղղափառացն 5 եպիսկապոսապետաց. քանզի ոչ լուացաւ երբեք ոք եպիսկապոս կամ եպիսկապոսապետ ի գալստենէն Քրիստոսի մինչ ի մեր ժամանակս զոցայսն ամպարշտութիւնս խոհեցեալ կամ ուսուցեալ, որ ոչ ի բաց քակեալ և արտաքս հանեալ ի քահանայական արժանաւորութենէ։

10 30r.

Քանզի երանելիք հարքն մեր և եպիսկապոտք առ երանելեաւ կիրիղղաւ եպիսկապոսապետաւ Աղեքսանդրացւոց եկեղեցւոյն՝ նմանողք սրբոցն հարանց իւրեանց և նախանձաւորք ուղղոյ նոցա հաւատոյ եղեալք, զայսպէս խորհեցաւզս զամպարիշտն Նեստորիոս, և երկուս բնութիւնս քարոզելով 15 զիրիստոսն և ոչ խոստովանելով Աստուած գոլ զծնիցեալն ի Սրբոյ Կուտէն, և ոչ Աստուածածին զնէ հաւատալով, վկայութեամբ սրբոց հարանց իւրեանց զսա խայտառակեալ ըստ յԵփեսոն(ս) առաջնով սրբով ժողովովն լուծին և նզովեցին զնա և զամպարիշտ իւր ազանդն, և վկայք մեզ 20 են առ Քրիստոս Այսքանք ելով ժողովեալքն յայնժամ սուրբք հարք զամպարշտաց(?) ուրացողքն ի Քաղկեդոնի ղՏէրն թեպէտն բազմութեամբ իւրեանց հարստացուցանել \* յուսացան զամպարշտութիւնն, իբր զի կրկնապատիկ(ք?) զինքեանս առ այն որ ի Նիկեա եղն սուրբ ժողովն, զի 25 և սովու(?) մեծագոյն գոլ թուեսցին. քանզի ասեն ոմանք զասսա գոլ զթիւն վեց հարիկ երեսուն և վեց: | Նոյն աւրինակ և որք առ երկրորդաւն յԵփեսոս սրբով ժողովովն, պետաւորելով այսմիկ երիցս երանելւոյ հաւր մերոյ և եպիսկապոսապետի և խոստովանողի Դիոսկորի, ընդ որում 30 առընթեր եաք յայնժամ ես իսկ և երանելի իմ եղբայրն Անատողիոս երէց: Քանզի յոլովաց և յայնժամ հաւաքեցելոց ընդ նմա եպիսկապոսաց և նզովելով ձայնիւք զամպարիշտ աղանդն երկուց բնութեանցն և մեծամեծ աղազակաւք գոչելով հրապարակաւ ամենեքեան միաբան. 35 որպէս երկուս բնութիւն զիրիստոս նզովէ, զայս Նեստոր խորհեցաւ. և զձեռս սասանելով ներգրաբար իւրեանց նզովա-

30v.

\* ) Զեռագրի մէջ է՝ «հարստացուցանել». երկի «ցուռն կրկնուել է. կամ գուցէ «հարստացեալ ցուցանել» պէտք է կարդալ»

- բանութիւնք առեալ լինեին ի յիշատակարանսն, և զայս-  
պէս խոհեցաւղն Փղաբիանոս և ոչ կամեցաւղն զամպա-  
րիշտ աղանդն երկուց բնութեանցն նզովել, ի բաց քակե-  
ցին, իրը զնեստորի քարոզելով աղանդս. նորին խորհե-  
5 ցաւղն և զամպարիշտ թեւոդորիտոս և Ղեռնոս(?), և  
ոմանս այզս հանդերձ նոքաւք ի բաց լուծին և նզովե-  
31r. 9 գնոսա և զամպարիշտս զնոցա աղանդս, և վկայք  
մեզ և այսոքիկ ի յիշատակարանսն, ի ձեռն իւրեանց  
ստորագրութեանց զամպարշտութենէ երկուց բնութեանց  
10 և երկարնակաց, յոլովք ելով և ընկերանք զթիւն. թե-  
պէտն յետոյ ի Քաղկեդովնի միաբան ամենկքեան ուրա-  
ցան ձեռագրաւ, և զինքեանս նզովեցին այսպիսիքս, զամ-  
պարշտութեանն ի ասհման հաւատոյն իւրեանց հաստա-  
տելով և զայզս հանդերձ ամպարիշտ թեւոդորէտաւ ըն-  
15 կալեալ իւրեանց հայհոյութեամբն, զորս և խայտառակել  
ի հակածառութեանն հարկաւորիմք, թեապէտ ոչ կամելով  
հանդիպեցուցանել զնոսա Ղեւովնայ և Նեստորի հայհո-  
յութիւնց, զի մանկանց եկեղեցւոյ յայտնիս կացուացուք  
ծածկեցելոյ վեսակարութեանն, առ սպանումն անձանց  
20 զիսրամանկութիւնն, առ ի յոչ զոք ընդունակ կամ աշա-  
կերտ սատսնայական խրտոյն(?) եղանիլ, այդ իւրաքանչիւր  
ոք փախնուլ ի սատակիչ նոցայն վարդապետութենէ:
- 31v. Արդ այսր աղագաւ առ իմզզուչութիւն և կամեցելոցն  
ընթեռնուլ՝ նախադասեցի զվարդապետութիւն սրբոցն հա-  
25 բանց, զի զկեցեալք գհոգեկան զրահս ուղղափառ հաւատոյ  
նոցա զաւրավարելով նոցա և ուսուցանելով զիւրաքանչիւր  
դարանի հերձուածողական կորստենէն զիփախուսանն, առաջի  
դալ կարասցուք յաղազս Քրիստոսի պատերազմի ամենայն  
քրիստիանուք և փողոտել զթչնամիս խաչին Քրիստոսի  
30 բանիք Սրբոյ Հոգւոյն ջղաւորեալք և անծակելիք մնալ  
ի վիժեցելոցն զՔրիստոսէ հայհոյութեանց բանից, ի հեշ-  
տափիրացն առաւել քան սատուածասիրաց ունաւզացն  
կերպաւորութիւն բարեպաշտութեան, իսկ զաւրութիւն  
նորա ուրացաւղաց, վասն առժամանակեան փառաց և  
35 խրախութեան յաւիտենիս այսորիկ, հնագոյնք յԵփեսոս  
զամպարշտս թեանն աղանդս ի բաց քարոզելով, յետ այ-  
սորիկ ամենկքեան որքա ի Քաղկեդովնի զԾէրն ուրացան,  
առանց միայնուոյ երանելիով Հաւը մերոյ և խոստովանողի  
Դիոսկորի եպիսկապոսապետի Քանդի յԵփեսոս, որպէս  
32r. 40 յառաջազոյն ասացաք, աղազակեին. «Որ ոք ասէ երկուս  
բնութիւնն զմին Տէր՝ նզով լիցի». իսկ ի Քաղկեդովնի նոյնք

յոլովիւք այդովք զրով սահմանեցին ի ձեռ(ն) իւրեանց զինքեանս նզովելով, «Որ ոչ ասէ երկուս բնութիւնս զմին Քրիստոս՝ նզովք». և այս եղև, զի անաւրէնութիւն նոցա յաւտնի լիցի ամենեցուն, որպէս և յառաջ քան զնոսա հերձուածողացն եղև։

5

Որք այսուհետեւ կամիցիք կեալ բարեպաշտաբար Յիսուսի Քրիստոսի և քրիստիանոսք անուանիլ և գոլ, և ոչ երկարնակք և նեստորիանոսք՝ կաղէք և կալարուք զառտուութիւնս, զորս ուսուցին սուրբ առաքեալքն և վարդապետք եկեղեցւոյ, և մի զանցանէք զայսօքիւք, զի 10 մի ժառանգակիցք լինիցիք յաւիտնական պատժոյն, որ զյանցաւորսն որոշեալ է յարդար դատաւորէ և Աստուծոյ մերոյ Յիսուսի Քրիստոսի, ի բաց տալ իւրաքանչիւրում յաւուրն դատողութեան: Քանզի ասե իսայեաւ մարդարէիւ ի նմին կատարածի, իբր զի արդարք երկրպագուղք նմա 15 ի վերինն Երուսաղէմ արտաքս ելցեն ասէ, «Եւ տեսցեն, ասէ, զվանգս \*մարդկան զյանցաւորացն առ իս. քան- 32v. զի որդն նոցա ոչ վախճանեցի և հուրն նոցա ոչ շիջի, և եղիցի ի տեսիլ ամենայն մարմնոյ»։<sup>1</sup> Քանզի գիտեմք զասաւզն. Շիմ է վրէժինդրութիւն և ես հատուցից, ասէ 20 Տէր՝<sup>2</sup> և դարձեալ՝ «Դատի Տէր զմողովուրդ իւր, ահաւոր անկանել ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ»։<sup>3</sup> Մրցեցարհէք այսուհետեւ, Եղբարք<sup>4</sup> որպէս ասաց առաքեալն. զնոյն ցուցանելով փոյթ առ հաստատութիւն յուացյն մինչ ի կատարած, զի մի ներգեւք \*\* լինիցիմք, իսկ նմանողք և 25 ժառանգակիցք նախազրիցելոցն ամենեցուն սրբոցն և հըռչակաւրացն ուղղափառութեան եպիսկոպոսաց և եպիսկոպոսապետաց ամենայն աշխարհի, ի ձեռն ուղիղ հաւատոյ ժառանգաւղաց զիսուտումն Աստուծոյ։

Քանզի և առ սակաւ դոյզն դոյզն գալոցն եկեսցէ և ոչ 30 անգանհացէ. իսկ «Արդարն իմ, ասէ, ի հաւատոյ կեցցէ»<sup>5</sup> յայտ է զի յուղղափառէ, քանզի առանց հաւատոյ ուղղոյ անկարելի զոք հաճոյանալ Աստուծոյ։ Հաւատասցէք առաքելոցն Տեառն, եթե հանդերձեալ է Դերաքրիստոսնիցալ և եթե 33r. դալուստ Տեառն մերձեցաւ. մի նմանեցուք հեղնողացն 35

\* ) Լուսանցքում՝ «սուկեր(ս)»      \*\*) Անգ՝ «անմիաք».

<sup>1)</sup> Եսայի 42. 24.      <sup>2)</sup> Բ. Օրէնք ԼԲ. 35. հմմտ. Հուվմ. ԺԲ. 19. Երբ. Ժ. 30.      <sup>3)</sup> Երբ. Ժ. 31.      <sup>4)</sup> Ա. Կորնթ. ԺԴ. 39 (?).      <sup>5)</sup> Երբ. Ժ. 38. հմմտ. Հուվմ. Ա. 17., Դաղաւ. Պ. 11. (Ամբակաւմ Բ. 4).

- գվերջինս աւուրս, ասելով ընդ նոսա. ուր է խոստումն  
զալստեան նորա: Զգուշացուցին զմեզ առաքեալքն վասն  
վերջնոցս այսոցիկ աւուրցս և զորս յառաջ ասացին.  
Ժնքերեաս \* տեսանեւք կատարեալ: <sup>1)</sup> Քանզի Յակովոս
- 6 սփոփէ և որք վասն ծշմարտութեանն կրեն՝ ասելով. «Եր-  
կայնմտեցէք այսուհետե, եղբարք. հաստատեցէք զիրտս  
ձեր, զի գալուստն Տեառն մերձեցաւ. մի հառաջէք, եղ-  
բարք իմ, զմիմեանց, զի մի դատիցիք. ահա դատաւորն  
առաջի դրացն կայր. աւրինակ, եղբարք, ախտակրութեան
- 10 և երկայնամտութեան կալարհւք զմարգարէսն, որք խաւ-  
սեցան անուամբն Աստուծոյ. ահա երանեւք զհամերողս(ն).  
զհամբերութիւնն Յովա լուարնւք և զկատարումնն Տեառն  
տեսէք, զի բաղմախնամ է Տէր և գթածու: <sup>2)</sup> Նմանա-  
պէս իսկ և երանելին Պետրոս զնոյնս իրատէ և յառաջ
- 15 ասէ եթե վախճանի աւուրցն մերձանալով ժամանակի  
կատարածին զտունն Աստուծոյ հաւատացեալքն ուրանալ  
պատրաստեալ են զէքրն և ինցեամբք հալածեն զեկեղե-  
ցին Աստուծոյ: «Սիրելիք, ասէ, մի զարմանայցէք ի ձեզ  
հրաւորութեան առփորձութիւն ձեզ եղելոյ, իբր աւտարի
- 20 ձեզ պատահեցելոյ» <sup>3)</sup>: Նման ի Պաւոսէ ասացելոյն, եթե  
«Պարտ և հերձուած ի ձեզ գոլ, զի ընտիրքն յայտնի  
եղիցին ի ձեզ» <sup>4)</sup>: Եւ որպէս յորժամ ասէ. «Քանզի և  
յորժամ եաք առ ձեզ, յառաջ ասեաք ձեզ, եթե հան-  
դերձեալ եմք ճգնել, և այժմ զունաւզն գիտէք, առ ի
- 25 յայտնել զնա նիւքում ժամանակի. քանզի խորհուրդն ահա  
ներգործի անաւրիչնութեան, միայն ունաւզն այժմ մինչ  
ի միջոյ բարձցի, և ապա յայտնեցի անաւրիչն, զոր  
Տէր Յիսուս ծախսաց ոգւոյ բերանոյ իւրոյ, եւ խափա-  
նեաց յայտնութեամբ գալստեան իւրոյ» <sup>5)</sup>:
- 30 Մի այսուհետե զարմացիք, ասէ Պետրոս, հրացեալք  
վասն Քրիստոսի փորձութեամբք և ընտրեալք. քանզի  
նախ լուարուք, այդ ըստ որում հաւասար էք Քրիստոսի  
ախտակրութեանն՝ խնդացէք, զի և յայտնութեամբ փա-  
ռաց իւրոց դարձեալ խնդայցէք ցնծալով: |եթե նախատիցիք  
35 յանուն Քրիստոսի՝ երանելիք, զի փառացն և զաւրութեան  
և Աստուծոյ Հոգին ի վերայ ձեր հանգուցեալ է: Քանզի

\* Լուսանցքում՝ «մերը աշաւ(ք)».

<sup>1)</sup> Ա. Կոքնթ. Ժ. 12 (?). <sup>2)</sup> Յակովոյ Ե. 8—11.

<sup>3)</sup> Ա. Պետրոս Դ. 12 շաբ. <sup>4)</sup> Ա. Կոքնթ. Ժ. 19.

<sup>5)</sup> Բ. Թեսաղ. Բ. 5—8.

մի ոք ի ձէնջ կրեացէ իբրև զսպանող կամ գող կամ չարարար, կամ իբր աւտար եպիսկապոս. իսկ եթե իբր քրիստիանոս, մի ամաչեսցէ, այդ փառաւորեսցէ զԱստուած ի վերայ անուանս այսորիկ. Քանզի ժամանակ սկիզբն լինելոյ զդատաստան ի տանէ Աստուծոյ. իսկ եթե ն նախ ի մէնջ, զինչ կատարած անհաւասիցն Աստուծոյ աւետարանին. և եթ' արդարն հազիւ կեցցէ, ամպարիշտն և մնդաւոր ուր երեւիցի. իբր զի և որք կրենն ըստ կամացն Աստուծոյ, հաւատարիմ Արարչի առջրեսցեն զանձինս իւրեանց ի բարեգործութիւնս<sup>1:</sup>

10

Եւ դարձեալ սիոփէտ ասելով. «Զուարթացարհւք, հակեցէք, զի հակառակորդն ձեր բանսարկուն իբրև առեւծ գոչելով զգնայ, ինդրե զո կլցէ. որում ընդդէմ կացէք հաստատունք հաւատովիւ, զիտելով զնոյնս ախտակրութեանն որ յաշխարհի ձերոյ եղբայրութեանն կատարեալ»<sup>2:</sup>

15

Քանզի բազումք են ծշմարտապէս յաշխարհի, յազագս (ս)ակաւ չահի երկրայնիոյ դժնեապէս խոշտանգեալք և զատապարտեալք, զի ոչ համբերեմք արիաբար յաղագս ծշմարտութեան վասն ակնկալութեանց երկնային բարեացն. քանզի մեզ, ասէ, չնորհեցաւ յաղագս Քրիստոսի ոչ միայն ի նա հաւատալ այդ և վասն նորա կրել: Եւ ներկրորդում դարձեալ թղթին զնոյնս յիշեցուցանէ առաջինն առաքելոց հաստատելով զմեզ և ուղղապէս հաւատալ ի Քրիստոս ասելով. «Փութացայց իսկ և յամենայն ժամ ունել զեզ յետ իմոյ արտաքս ուղենորութեանն զսոցուն յիշաւոց առաջինն առնել, քանզի ոչ իմաստական առասպելաց հետեւացեալք ծանուցաք ձեզ զԾեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զաւրութիւնն և զգալուստ, այդ ինքնատեալք եղեալք նորայոյն մեծութեանն Քանզի առեալ յԱստուծոյ Հաւրէ պատիւ և փառս ձայնի բերեցելոյ նոմա այսպիսւոյ ի մեծավայելուչն փառաց՝ սահ է Որդի իմ սիրելի, յոր Եսն հաճեցայ, և զայս ձայն մեք լրւաք յերկնուստ բերեալ, ընդ նմա եալք ի լերինն սրբում»<sup>3:</sup>

34v.

Ո՞չ եթ' երկու բնութիւնք է Որդիդ իմ, և ոչ եթե յայդմիկ է Որդին իմ, այդ սա է զոր տեսանէք, ասէ, 35 Որդի իմ սիրելի: Եւ դարձեալ զեկուցանէ յաղագս հանդերձելոցն լինել սուտ վարդապետս ի վախճանի ժամանակին և զուրացութիւնն նոցա նշանակէ, ասելով. «Եղին

1) Ա. Պետր. Դ. 12—19. 2) Ա. Պետր. Ե. 8. 9. 3) Բ. Պետր. Ա. 15—18.

իսկ և սուտ մարգարէք ժողովրդեանն, որպէս և ի ձեզ  
եղիցին սուտ վարդապետք, որք ի ներքս ածցեն հեր-  
ձուածն կորստեան և զգնաւողն զնոսա զՏէրն ուրա-  
ցողք, ի վերայ ածելով իւրեանց զարագապէսն կորուստ,  
5 և բազումք հետեասցին նոցայն անպիտանութեան, որովք  
ճանապարհն ճշմարտութեան հայոյուսցի, և աւելաստա-  
ցութեամբք ստեղծական բանիւք զձեզ վաճառաշահես-  
ցեն, որոց դատաստանն ի վաղուց ոչ դատարկանայ և  
կորուստ նոցա ոչ (նիր)հեսցէ»<sup>1</sup>: Եւ զի մի ոք մոլորեսցի  
10 առաւելութեամբ արժանաւորութեանն կամ կարծիցէ ամ-  
պարտ գոլ (?) այսոցիկ\*, վասն այսորիկ զստուգութեան  
վարդապետութիւն ի վերայ բերէ ասելով. «Զի եթ՛ Աս-  
35v. տուած հրեշտակացն յանցուցելոց՝ խնայեաց»<sup>2</sup> և մի ըստ  
միոցէքն, Եւ սիրեցեալն ի Տևառնէ Յովաննէս աշակերտն  
15 յառաջագոյն զգուշացուցանէ զմնզ ասելով զԴերաքրիստոսն  
յեկեղեցեացն արտաքս գալ \*\*. «Մանկնեալ, վերջին ժամ է,  
և որպէս լուարուք, եթե Դերաքրիստոսն զայ, և այժմ  
դերաքրիստոսք բազումք եղեն, ուստի ճանաշեմք, եթե  
վերջին ժամ է. ի մէնջ արտաքս ելին, այդ ոչ են ի մէնջ.  
20 քանզի եթ՛ եին ի մէնջ, մնային արգեւք ընդ մեզ. այդ  
զի յայտնեացին, եթ՛ ոչ են ամեննեկիան ի մէնջ»<sup>3</sup>: Եւ  
Պաւղոս Եփեսացւոց երիցանցն նախավկայէր՝ ասելով. «Ես  
գիտեմ, զի յետ բացերթութեան իմոյ ի ներքս եկե(ս)ցեն  
գայդը ծանունք ի ձեզ, ոչ ինայոցք հաւտիդ, և ի ձէնջ  
25 այտուտա յարիցեն արք խաւառզք զթեւրս, առ ի կորզել  
զաշակերտս զհետ իւրեանց, վասն որոյ հսկեցէք». <sup>4</sup>: Իրը  
զի մ(ի) ոք զարմասցի ի վերայ եղելոյ ուրացութեանն,  
նիրհեցելոցն հովուաց ի Քաղկեդոնի. քանզի յառաջագոյն  
36r. ասացին յաղագս նոցա առաքեալքն, |զի իրացն ժամանա-  
30 ցելոց՝ իւրաքանչիւր ոք զինքն պահեսցէ. «Ո՞վ է, ասէ,  
սուսն, եթ՛ ոչ ուրացողն, եթե Յիսուս ոչ է Քրիստոսն.  
սա է Մոլարն և Դերաքրիստոսն, ուրացողն զՀայրն և զՈր-  
դին. ամենայն ուրացող զՈրդին և ոչ զՀայրն ունի»<sup>5</sup>: Եւ  
դարձնալ. «Ալիքիլք, մի ամենայնի հոգւոյ հաւտատաք. այդ  
35 փորձեցէք զովիսն, եթե յԱստուծոյն է. զի բազումք սուտ  
մարգարէք արտաքս եկին յաշխարհ: Յայսմիկ ճանաշի Որ-

\*). Լուսանցքում «զայսիսիս».

\*\*). Անդ՝ «առնել».

<sup>1)</sup> Բ. Պետք. Բ. 1—3.

<sup>2)</sup> Բ. Պետք. Բ. 4.

<sup>3)</sup> Ա. Յովհ. Բ. 18—19.

<sup>4)</sup> Գոբծք. Ի. 29—30.

<sup>5)</sup> Ա. Յովհ. Բ. 22—23.

գին Աստուծոյ. ամենայն ոգի, որ խոստովանէ Յիսուս  
դՔրիստոսն ի մարմնի եկեալ՝ յԱստուծոյ է նա. և ամեն  
ոգի, որ ոչ խոստովանէ զՅիսուսն՝ յԱստուծոյ ոչ է: Եւ  
այս է Դերաբրիստոսին, զոր լուարուք եթե գայ, և այժմ  
յաշխարհի է»<sup>1)</sup>. «Անա դուք զոր լուարուք ի սկզբանէ ի ձեզ ճ  
մնասցէ, եթ՛ ի ձեզ մնայցէ զոր իսկզբանէն լուարուք,  
և դուք յՈրդուջ և ի Հաւը մնայք»<sup>2)</sup>.

Ոչ լուաք ի սկզբանէ իսկ մկրտեալք, եթ՛ երկու  
բնութիւնք է Քրիստոսն և ոչ եթ՛ ոչ եկն Որդին  
Աստուծոյ մարդկային մարմնով յաշխարհ, այդ զինչ ինքն 10  
ուսուցանէ ասելով աշակերտն. «Եւ գիտեմք, եթ՛ Որ-  
դին Աստուծոյ եկն և ետ մեզիմաստութիւն, զի գիտի-  
ցեմք զճմարիտն Աստուած, և եմք ի ճշմարտում Որդւոյ  
Նորա Յիսուսի Քրիստոսի. սա է ճշմարիտն Աստուած և  
կենդանութիւն յաւիտենական»<sup>3)</sup>: Նմանապէս իսկ յաղագս 15  
Նորա և Պաւոս ուսոյց. «Եթ՛ և յիսրայէղէ ըստ մարմնոյն  
Քրիստոսն, և եթ՛ ինքն է էակն ի վերայ ամենեցուն Աս-  
տուած, բարեբանեալ յաւիտեանս ամէն»<sup>4)</sup>: Եւ պատուի-  
րեաց ասելով. «Որ ոք ձեզ աւետարամիցէ աւելի քան զոր  
առէքն՝ նզով եղիցի»<sup>5)</sup>: Եւ զի մի ոք յանդուգն գոլ կար- 20  
ծիցէ ի զեպիսկապոս նզովմէ, այդ ուսուցանելով վարդա-  
պետութիւն, պատուիրեաց. «Եթ՛ և մեք առաքեալքս և եթե  
հրեշտակ յերկնուստ աւետարանեսցէ, քան զոր աւետա-  
րանեցաքն ձեզ՝ նզովեալ եղիցի»<sup>6)</sup>: Եւ երանելին Յուդաս  
առաքեալն ի բոլորականին\* երկուցեալ և ինքն զգուշացոյց 25  
զմեղ յաղագս հանդե(ր)ձելոցն ուրանալ զՏէրն՝ ասե լով.  
«Սիրելիք, զամենայն փոյթ արարեալ զրել ձեզ յաղագս  
հասարակական մերոյ փրկութեան, հարկաւորութիւն կա-  
լայ զրել ձեզ մաղթելով նահաստակիլ մի հազ տուելով սըր-  
բոցն հաւատովի Քանդի առատեցին ոմանք մարդիկ ի վա. 30 37r.  
զուց յառաջաղբեալք յայս գատապարութիւն ամպարիշտք,  
զայն մերոյ չնորհն վոլսաղրաւզի ի զեղիսութիւն. և զմի-  
այնն իշխանականն և զՏէրն մեր Յիսուս Քրիստոս ուրա-  
ցողք»<sup>7)</sup>: Ապա յետ սակաւուց աւալե զայսպիսիսն ասելով՝  
«Վայ նոջա», երգակից սրբոյ Պետրոսի բարբառեալ. եթ՛ ոչ 35

\* ) Լուսանցքում՝ «ի կաթողիկէ».

<sup>1)</sup>) Ա. Յովհ. Թ. 1—4.      <sup>2)</sup>) Ա. Յովհ. Բ. 24.      <sup>3)</sup>) Ա. Յովհ.

Ե. 20.      <sup>4)</sup>) Հոսվմ. Բ. 5.      <sup>5)</sup>) Գաղատ. Ա. 9.      <sup>6)</sup>) Գաղատ.

Ա. 8.      <sup>7)</sup>) Յուդայի Աստուել 3—4 համար.

միայն ուրացան զՔրիստոսն, և այդ և եղբայրասպանութեանն կայինա նմանողք եղեն և մոլորութեամբ Բաղասամայ՝<sup>1</sup> գուրբըն հաւատոյս պատուիրան մատնեցին և զնախագահութիւնս խնդրելով կորեան:

5 Համբերեցնէք այսուհետեւ, եղբարք, մինչ ի վախճան մրցելով վասն Քրիստոսի ըստ առաքելոցն պատուիրի, հիմնացեալք և անշարժելիք: Քանզի, որպէս ահա նախասցաւ, հինք պատահեցին երկրեան այսոքիկ հերձուածքս յամանակացն երանելոյն Յուղեայ Հոռվմայն եպիսկապոսապետի և երանելոյն Աթանասեա հաւրն մերոյ եպիսկապոսապետի Աղեքսանդրացոցն եկեղեցւոյ, և ինցունց յարաքելոցն տարաքարողեալք մինչ ի կատարուանն երանելոյ և ուղղափառի թագաւորի թեւողուի: Իսկ յետ նորա կատարմանն ի յետինս ճշմարտապէս յայսուիկ յաւուրս եւուրս եկեղեց ժամանակաց դժնեից, որպէս եասաց առաքեալն, համարձակեցաւ երկոցունց այսոցիկ հերձուածոցս սատակիչն վարդապետութիւն յաշխարհի, սէ ի ձեռն մերա քարոզեալք, և ունակցեն զիրեարս իրը քորք եալք, և մի հայր ունիին՝ զատանայ: Քանզի պատճառաւ երկաբնութեանցն համարձակի միւսն հերձուած ի ձեռն այսր անդր ընթացողացն յաշխարհի սուտ մարդարեկիցն, ոչն խոստովանողաց զԾէրն մեր Յիսուս Քրիստոս ի մարդկային մարմնի եկեալ, և հչ մարդ եղեալ՝ ըստ ճշմարտութեան մնալով Աստուած: Եւ պատճառաւ այսոցիկ որոշողքն զԱստուածն Բան ի յատկէ իւրմէ մարմնոյն երկաբնակք համարձակին, զորս յայտնապէս զեկոյց ի բոլորականին Յուղաս առաքեալ. այդ վայ նոյա, ասէ, զի եղբայրասպանք են և մոլորեցան սակս աշխարհական փառաց ի ճշմարտութենէն, և հակաբանութեամբ Կորիսայ կորեան<sup>2</sup>:

37v. 10 38r. 15 38g. 20 25 30 35 30 35

10 Համբերեցնէք այսուհետեւ, եղբարք, մինչ ի վախճան մրցելով վասն Քրիստոսի ըստ առաքելոցն պատուիրի, հիմնացեալք և անշարժելիք: Քանզի, որպէս ահա նախասցաւ, հինք պատահեցին երկրեան այսոքիկ հերձուածքս յամանակացն երանելոյն Յուղեայ Հոռվմայն եպիսկապոսապետի և երանելոյն Աթանասեա հաւրն մերոյ եպիսկապոսապետի Աղեքսանդրացոցն եկեղեցւոյ, և ինցունց յարաքելոցն տարաքարողեալք մինչ ի կատարուանն երանելոյ և ուղղափառի թագաւորի թեւողուի: Իսկ յետ նորա կատարմանն ի յետինս ճշմարտապէս յայսուիկ յաւուրս յաւուրս եկեղեց ժամանակաց դժնեից, որպէս եասաց առաքեալն, համարձակեցաւ երկոցունց այսոցիկ հերձուածոցս սատակիչն վարդապետութիւն յաշխարհի, սէ ի ձեռն մերա քարոզեալք, և ունակցեն զիրեարս իրը քորք եալք, և մի հայր ունիին՝ զատանայ: Քանզի պատճառաւ երկաբնութեանցն համարձակի միւսն հերձուած ի ձեռն այսր անդր ընթացողացն յաշխարհի սուտ մարդարեկիցն, ոչն խոստովանողաց զԾէրն մեր Յիսուս Քրիստոս ի մարդկային մարմնի եկեալ, և հչ մարդ եղեալ՝ ըստ ճշմարտութեան մնալով Աստուած: Եւ պատճառաւ այսոցիկ որոշողքն զԱստուածն Բան ի յատկէ իւրմէ մարմնոյն երկաբնակք համարձակին, զորս յայտնապէս զեկոյց ի բոլորականին Յուղաս առաքեալ. այդ վայ նոյա, ասէ, զի եղբայրասպանք են և մոլորեցան սակս աշխարհական փառաց ի ճշմարտութենէն, և հակաբանութեամբ Կորիսայ կորեան<sup>2</sup>:

30 Քանզի հչ հաւատացեալք ճշմարտապէս քահանայացին Քրիստոսի, երանելում հաւրն մերում՝ Դիսուկորի, այդ ընդդիմացեալք նմա՝ կրկնակի մեռան: Քանզի երկուս և չարութիւնս եարարին՝ զԾէրն իւրեանց ներգրաբար ուրացան՝ զաղբեւրն կենդանութեան, և զինքեանս նզովեցին: Սակս որոյ և բացակրիրեն վայրենութեամբն՝ հալածելով զՔրիստոսի հաւատան, զյանդիմանիչս զնոսա և զասաւզմն՝ «Որում ստորագրութեան ձերում հաւատացուք, յեփեառանին եթ՛ ի Քաղկեդովնին: Եւ վասն զի ընքեանք ներգրա-

<sup>1)</sup> Յուղ. 11. <sup>2)</sup> Հմմա. Յուղայի թուղթ 11 համար.

բար ուրացան զՏէրն մեր և զԱստուած Յիսուս Քրիստոս  
և թուին խաղաղութեամբ վարիլ, հչ ուրուք նոցա հակա-  
րանելով, թեաէտե զՔրիստոսի խաղաղութիւնն հչ ունին  
և ոչ սպան ընդ անապատութիւն երեւելագունաց քաղա-  
քացն. վասն այսորիկ որպէս գրեալ է գոչելով և ես տրուաս 5  
ուղղափառաց եպիսկապոսացն Տիմոթեոս առ Աստուածն. |

«Ի բաց հալածեայ զիս նախանձ տան քոյ. զի մոռացան 38v.  
զպատուիրանս քո թշնամիկ իմ»<sup>1</sup>, և նախանձեցայ յառ ա-  
նաւրէնսն, խաղաղութիւն մեղաւորաց տեսանելով. զի յա-  
ռաջահատեն ամպարիշտք առ ի վատթարն, մոլորեցուցիչք 10  
և մոլորեալք. և խոնեցողքն կնալ բարեպաշտաբար ի Քրիս-  
տոս Յիսուս հալածին. նախանձելով նախանձեցայ Տեառն  
Ամենակալի<sup>2</sup> և Աստուծոյ մերում Յիսուսի Քրիստոսի. հչ  
միայն զիս ուղղափառ գոլ ասելով, քանզի և ճշմարտապէս  
ուղղափառք անթիւք յաշխարհի, զորս(<sup>3</sup>) Քրիստոսն Տէրն 15  
գիտէ, քանզի ծանեաւ Տէր, ասէ, զեալմն իւր<sup>3</sup> և զոչ ուրա-  
ցողմն զնա, այզ մինչ մահու մրցեալս յաղագս ճշմարտութեանն  
Աստուծոյ, պատերազմելով յաղադս նոցա և հանդերձելոց  
իւր դատաւորին խոստովանել ի նոսա առաջի Հաւր իւրոյ և  
արբոցն հրեշտակաց, որպէս խոստացաւ. Նախանձելով նա-  
խանձեցուցի Տեառն Ամենակալի, զի լքին զնա եկեղեցեալյ  
առաջնորդք և մոռացաւղ եղեն պատուիրանացն նորա. | ի  
մարդիկ անդ Աստուծոյ փոխադրեցին զյոյս և քաջալերեալք  
կառաւք և ձիովք, որովք և պատերազմին զհաւտս Տեառն  
և զուղղափառն ի Քրիստոսասէր քազաքին Աղեքսանդրի և 25  
յամենայն Եգիպտոսի, եւղիպդէ(<sup>3</sup>) և ի Պաղիստինէ և յայզս  
քաղաքս, սպանին և սպանանեն մինչեւ յայժմ և հալածեն,  
և զզոհարանսն հոգեկան պարշտութեանն բեկին և մանրե-  
ցին բազում անգամ և պարապել արարին\*, առ ի յոչ  
կամել զուղղափառ զժողովուրդս հաւանել նոցայն ամպա-  
րշտութեան. և խնդրեն զանձն իմ, զփոքուս և անպի-  
տան ծառայիս Յիսուսի, և հչ պատահնն. մինչ եթե Տէրն  
իմ և Աստուած Յիսուս Քրիստոս թողացուացէ զայս լինել  
բատ ինքեան կամաց, առնելով և այսուիկ ողորմութիւն  
մեծ ընդ իս անարժանի. քանզի հչ հաւ անկցի յերկիր 35  
առանց Աստուծոյ<sup>4</sup>, ըստ նորին Տեառնն բանի:

\* ) Լուսանցքում՝ «զատ(ար)կանա(յին)».

<sup>1)</sup> Սազմ. ՃԺԸ. 139.

<sup>2)</sup> Հմմա. Դ. Բագ. ՃԲ. 10. 14.

<sup>3)</sup> Հմմա. Բ. Ցիմով. Բ. 19.

<sup>4)</sup> Մասթ. Ճ. 29.

Վասն այսորիկ և ոչ ամենեին երկուցեալ զառժամանակեանս սպառնալիս թշնամեայն Աստուծոյ, քաջալերեալ ի բարեխաւութիւնս սրբոցնէ ուղղափառաց իմոց հարանցն, ներգրաբար և ես խորհեալ եմ դարձեալ ընդդէմ ասել նոցայն 5 ամպարշտութեան, քաջայոյս ելով ի զարութիւնն Տեառն իմոյ և Աստուծոյ Յիառուսի Քրիստոսի, ասաւզին ուղղափառի ամենայնի. «Յորժամ ի ներքս բերիցեն զձեղ առ պետութիւնս և իշխանութիւնս, մի հոգայցէք իբր կամ զի՞նչ պատասխանիցէք կամ զի՞նչ ասիցէք, քանզի Սուրբ Հոգին 10 ուրաւացէ զձեղ զորս պարտ ասել. զի ոչ իցէք դուք խաւսաւզքն, այլ Հոգի Հաւըն իմոյ՝ խաւսունն ի ձեզ Եւ տաց ձեզ բերան և իմաստութիւն, որում ոչ կարացեն լնդդիմակացել կամ ընդդէմ ասել ամենայնք հակառակորդք ընդ ձեզ»<sup>1)</sup>. Հաւատալով այսուհետեւ անստին Աստուծոյ իմոյ, զի 15 գործակցեացէ իմումն նուաստութեանս, ահա զայս և նախ այսորիկ ի սակաւում արարեալ, և այժմ հետեւելով սրբոց իմոց հարանց, ի բաց քարոզել խորհեալ եմ և խայտառակել զասաւզան երկուս բնութիւնս զմին Քրիստոս, և զնոցայն ամպարշտութիւն ամենեցունկամնեցելոցն յայտ առ- 40ր. 40. աւգնականաւք առ այս և զաւրավարաւք հոգեկանաւք Քրիստոսի վարեցեալ առ վասն Քրիստոսի պատերազմն, սրբովք իմովք հարամբք, և առաջնորդեալ ի նոցանէ զթագաւորական ճանապարհն ուղղափառութեան հաւատոյն և խոստովանելով զմին Տէրն մեր և Աստուած Յիսուս Քրիս- 25 տոս, զնոյն Աստուած ելով և նախ քան զմարմնաւորութիւնն և յետ անյեղի և անխառնելի իւրոյ մարմնաւորութեանն ի սրբոյ կուսէն. «Քանզի Յիառուս Քրիստոս երէկ և այսաւը, ինքն և յաւիտեան»<sup>2)</sup>: Քանզի ինքն ասէր Տէրն յետ լինելոյն ըստ մեղ. «Նախ քան զերպահամ լինել եմ 30 ես»<sup>3)</sup>, և դարձեալ. «Ես զիեղ փառաւորեցի ի վերայ երկրի, զգործն կատարեալ, զոր նտուք ինձ զի արարից. և այժմ փառաւորեան զիս, Դուռ Հայր, առ Քեզ ընկեան փառաւքն, զոր ունեի նախ քան զաշխարհիս գոլ, առ Քեզ»<sup>4)</sup>:

Եւ զի ինքն էր ծնեալն ի կուսէն ըստ մարմնոյն և յա- 35 տուկ ունելով մայր զՍուրբն կոյս, և կերպ ծասայի առեալ և կրեալ զան մեր մարմնով և ի շիրմի սերտ վիրմի քարա-

1) Մարկ. Ժ. 11., Ղուկ. Խ. 13—15. Ժ. 11—12., Մատթ.

Ժ. 19. 20.

2) Եբր. Ժ. 8.

3) Յովհ. Ը. 58.

4) Յովհ. Ժ. 4—5.

տացելոյթաղիցեալ, և զԱբրահամ կոչաւդն և արտաքս  
ածաւդն ի գաւառէ քաղդէացւոց իբր նախ քան զԱբրա-  
համ ելով և նախ քան զաշխարհա գոր, գոչէ ի ձեռն էսա-  
յեայ մարգարեի, ասելով. «Յորովայնէ մաւր իմոյ կոչեաց  
զանուն իմ և եղ զբերան իմ իբրե զդանակ առւր, և ընդ<sup>5</sup>  
ծածկութիւ ձեռին իւրոյ ծածկեաց զիա»<sup>1</sup>: Եւ յետ սա-  
կաւուց այսպէս ասէ. «Տէր ստեղծաւդն զիս յորովայնէ ծա-  
ռայ իւր»<sup>2</sup>: Քանզի մարմին հաստատեցեր ինձ, ասէ ի ձե-  
ռըն սաղմուերգին, և յայնժամ գամ առնել զկամս Քո<sup>3</sup>:  
Եւ յետ սակաւուց դարձեալ իբր ի Հաւրէ առ Որդին ասէ.<sup>10</sup>  
«Ահա եղի զքեզ ի լոյս աղգաց, առ ի գոլ զքեզ ի փրկու-  
թիւն մինչ ի սպառումն երկրի»<sup>4</sup>: Եւ Մէնածինն յաւե-  
տարանսն զսոյն հաստատելով ասէր. «Ես եմ լոյս աշխար-  
հի»<sup>5</sup>. և «Ես լոյս յաշխարհս յայս եկի»<sup>6</sup>, Եւ յետ սակաւուց  
ասաւդն եթե «Յայնժամ գամ առնել զկամս Քո» առ ի<sup>15</sup>  
մարգարէիւն. «Զի է զի եկի (ե՞) ոչ էր մարդ. կոչեցի և ոչ  
էր լսաւդ. մի ոչ հարատիցէ ձեռն իմ առ ի փրկել, կամ  
ոչ կարիցեմ ապրեցուցանել. ահա սպառնմամբ իմով անա-  
պատեցուցից զծով և եղից զգեստ անապատս, և չորասցին  
ձկունք նոցա առ ի յոչ գոլ ջուր և մեոցին ի ծարաւոյ. և<sup>20</sup>  
զգեցուցից զերկինս խաւարաւ և եղից իբրե զվահան զվե-  
րարկու նորա»<sup>7</sup>: Տեսանես ամենայն ուրեք միւնոյն քարո-  
ղելով զինքն Տէրն, և նախ քան զմարմնաւորութիւնն և  
մարմնով. քանզի եկելոյ իւր յերկիր՝ «չ լուան նմա հրեայր,  
կոչաւդի և ասաւդի իբրե Աստուծոյ. «Եկամք առ իս ամեն-<sup>25</sup>  
նայնք վաստակեալք և ծանրաբեռնեալք և ես հանգուցից  
զձեզ»<sup>8</sup>. այդ և խաչելով այպանեին, ասեին զգեցաւդին զեր-  
կին խաւարաւ յայնմ աւուր. «Եթ՛ Որդի ես Աստուծոյ, ապ-  
րեցն զքեզ ինքն և էջ ի խաչէդ և հաւատացուք ի քեզ»<sup>9</sup>:

Վասն այսորիկ իբր առ նոսսա պատասխանեալ, եկեալ ընդ<sup>30</sup>  
առնել զկամս Հաւրն. «Մի ոչ հարստէ ձեռն իմ առ ի փրկել  
կամ ոչ զաւրեմ ապրեցուցանել. ահա սպառնալեաւք իմովք  
անապատացուցից զծով և եղից զգեստն անապատս. ցամա-  
քեացին ձկունք նոցա առ ի յոչ գոլոյ ջուր, և մեոցին ի ծա-  
րաւոյ, և զգեցուցից զերկինս խաւարաւ և եղից իբր զվահան 35

<sup>1)</sup> Եսայի Խթ. 1—2.      <sup>2)</sup> Եսայի Խթ. 5.      <sup>3)</sup> Սաղմ.  
լթ. 9.      <sup>4)</sup> Եսայի Խթ. 6.      <sup>5)</sup> Յովհ. Ը. 12.      <sup>6)</sup> Յովհ.  
ԺԲ. 46.      <sup>7)</sup> Եսայի Ե. 2—3.      <sup>8)</sup> Մատթ. ԺԱ. 29.      <sup>9)</sup> Մատթ.  
Եկ. 40., Մարկ. ԺԵ. 30. 32.

<sup>1)</sup> Եսայի Խթ. 5.      <sup>2)</sup> Եսայի Խթ. 5.      <sup>3)</sup> Սաղմ.  
լթ. 9.      <sup>4)</sup> Եսայի Խթ. 6.      <sup>5)</sup> Յովհ. Ը. 12.      <sup>6)</sup> Յովհ.  
ԺԲ. 46.      <sup>7)</sup> Եսայի Ե. 2—3.      <sup>8)</sup> Մատթ. ԺԱ. 29.      <sup>9)</sup> Մատթ.

զվերարկու իւր» : Քանդի ինքն էր գալոցն ի Սիովիչ վրկել  
և ի բաց դարձուցանել զամպարշտութիւնսն Յակովիայ, ի  
նմին իսկ ի մարգարեին դոչաւզն իբր առ Սիովի կամ եկե-  
ղեցին. «Զի ես Աստուած քո խռովեցուցիչ զծով և հընչե-  
ցուցիչ զկրխական նորա, Տէր Սարաւաւթ անուն իմ»<sup>1)</sup>: Ապա  
յետ սակաւուց ասելն. «Եղից իբր զվահան զվերարկուն  
երկնի»<sup>2)</sup>: Գոչէ դարձեալ ասելով. «Տէր տայր ինձ լեզու  
խրատու. ի ժամանակի յորժամ պարտ ասել բան»<sup>3)</sup>: Եւ  
յաւետարանան ասէր. «Բանն զոր լսէք ոչ է իմ, այդ առաք-  
10 չին զիս Հաւր. և առ ի յինչն ոչ խաւսիմ, այդ զորս  
լուայ ի Հաւրէ իմմէ զայս խաւսիմ»<sup>4)</sup>: «Եղ զիս ի վաղոր-  
դայն, ասէ մարգարէիւն դարձեալ. յաւել ինձ ունկն առ  
ի լսել և խրատն Տեառն բանայ իմ զականջս. և ես ոչ ան-  
հաւանիմ և ոչ ընդդէմ ասեմ»<sup>5)</sup>. քանդի եղեւ հաւանական  
42r. 15 իւրումնի Հաւր մինչեւ մահու, ասէ, իսկ մահու խաչի»<sup>6)</sup>.  
Զթիկունս իմ ետու ի վարոցս \* և զծնաւսու իմ յապտակս,  
և զերեսս իմ ոչ ի բաց դարձուցի յամաւթոյ թքելոցն, և  
Տէր աւգնական իմ եղեւ. վասն այսորիկ ոչ պատկառեցի,  
այդ եղի զդէմս իմ իբրն հաստատուն վէմ և գիտացի  
20 եթ' ոչ ևս ամաչեցից, զի մերձ է արդարացուցիչն զիս:  
Ո՞ դատիչն իմ, ընդդիմացի ինձ միանգամայն և ո՞ դա-  
տապարտիչն իմ, մերձեսցի առ իս. ահա Տէր աւգնէ ինձ.  
ո՞ չարչարեսցէ զիս. ահա ամեննեքեան դուք իբր հանդերձ  
մաշեսջիք և իբր զցեց կերիցէ զձեզ. Ո՞վ ի ձեզ երկու-  
25 ցեալն ի Տեառնէ լուիցէ ձայնի մանկան նորա, գնացելոցն  
ի խաւարի ոչ է նոցա լոյս, հաւատացէք յանուն Տեառն  
և հաստատեցարուք Աստուծով. ահա ամեննեքին դուք հուր  
այրէք և զաւրացուցէք զբոց, գնալ հրով լուսոյ ձերոյ և  
բոցով զոր ի բաց վառեցէք. վասն իմ եղեւ այս ձեզ. ի  
30 տրտութեան ննջեսջիք. լուարհնէք ինձ հալածիչք զար-  
դարն և խնդրովք զՏէրն»<sup>7)</sup>: Իբր առ աշակերտանին Յով-  
սէփ Արիմաթացի քաջն և արդարն բանաօր(?) խնդրեաց  
համարձակեալ առ Պիղատոսէ զխաչեցեալն Տէրն փառաց,  
և թաղեաց զնա հանդերձ Նիկողէմաւ, ի նորում իւրում  
35 չիրմի, զոր էր քարատեալ իւր \* ի վիմէ: «Լուարհնէք ինձ,

\* ) Լուսանցքում՝ «մար(ակս ?).      \*\* ) Անդ՝ «ինքեան».

<sup>1)</sup> Եսայի ԵԱ. 15. Հմմտ. Նաղմ. ԿԹ. 8. և Սողմ. 2Ը. 10.

<sup>2)</sup> Հմմտ. Եսայի Ե. 3.      <sup>3)</sup> Եսայի Ե. 4.      <sup>4)</sup> Յովհ. ԺԹ. 10. 24.

Հ. 40. ԺԵ. 15.      <sup>5)</sup> Եսայի Ե. 4—5.      <sup>6)</sup> Հմմտ. Փիլիպ. Բ. 8.

<sup>7)</sup> Եսայի Ե. 6—ԵԱ. 1.

ասէ հալածիչք, դարդարն և խնդրողք զՏէրն, հայեցարուք  
ի սիրտն վէմ, զոր քարատեցէք և ի խորութիւն գրին,  
զոր փորեցէք. հայեցարուք յԱբրահամ հայրն ձեր, ի Սառա  
երկնիչն ձեր, զի մի էր և կոչեցի զնա և բարեբանեցի զնա  
և սիրեցի զնա և բազմացուցի զնա, և զքեղ այժմ մխիթա-  
րեցից, Սիրիվա<sup>1)</sup>, Յուսացարուք, ասէ, ուղղակի շուրջ հա-  
յեցողք, խնդրողք զշրիմն, զիմ յարութիւնն եղեալք ակն  
ունաւղք, գիտելով եթե զամենայն կարեմ իրը Աստուած.  
և բազմացուցից զձեղ և մխիթարեցից ուղղապէս, քանզի  
նկատեցէք, ասէ, զԱբրահամ հայրն ձեր և նմանեցէք զնորա 10  
հաւատն առ իս եղեալն. քանզի ես եմ կոչաւզն զնա և  
բարեբանաւղ և սիրաւղ և բազմացուցիչ նորա, և զձեղ  
այժմ մխիթարեցից, ասէ, յարուցեալն ի մեռելոց և բարե-  
բանեցից զձեղ և սիրեցից և բազմացուցից, որպէս զհայրն  
ձեր զԱբրահամ:

Ամաչեսցեն զմարգարէմն հրեամքն և արիանուք և եր-  
կաբնակք, և ամենեցուն հերձուածողացն ժողովք, որք զԱս-  
տուածն Աբրահամու, Սահակայ և Յակովրայ ոչ խոստովա-  
նեն ճշմարիտ գոլ Աստուած, զառաւղն ծառայի կերպ, և  
մի եալ հանդերձ իւրով մարմնով, և ոչ հաւատալով նմա 20  
ասաւղի՝ «Նախ քան զԱբրահամ եղանիլ ես եմ, և նախ  
քան զայխարհ գոլք<sup>2)</sup>, այդ անպատկառաբար ասելով և նո-  
քին ընդ հրեայսն Աստուծոյն Աբրահամու՝ Տեառն մերում  
Յիսուսի Քրիստոսի. «Յիսուն ամս ոչ ես ունիս, և զԱբրա-  
համ տեսեր»<sup>3)</sup>. և քարկոծելով զ' ի կուտէն ծնիցեալն, զՏէրն 25  
փառաց, ամպարիշտ բանիւք, ասելով. «Ենդէր դու մարդ իլով  
առնես զքեղ ինքն Աստուած»<sup>4)</sup>. քանզի և նոցա ասէ Քրիստոս.  
«Մոլորիք ոչ գիտելով զգրիցեալսն\* և ոչ զզաւրութիւն Աս-  
տուծոյ»<sup>5)</sup>, «Բանզի ինքն էր ճշմարտապէս նախ քան զմար(մ)՝  
նաւորութիւն բարեբանաւղն զԱբրահամ և ինքն էր մարդ 30 43v.  
եղեալն. և մնաց Աստուած անյեղիլ և մարմնով. և վկայէ Մեղ-  
քիսեղեկն բարեբանեալ զԱբրահամ ասելով. «Բարեբանեալ  
Աբրահամ յԱստուծոյ բարձրելոյ, որ եարար զերկին և զերկիր  
և բարեբանեալ Աստուած բարձրեալ, որ ետ զթշնամիս քո  
ընդ ձեռամբ քով»<sup>6)</sup>, Արդ նախ ամենեցուն Մեղքիսեղեկ 35  
բարձրեալ եասաց զբոլորեցունն Աստուած. յաստուածային

\* ) Լուսանցքում՝ «գրութիւնն».

<sup>1)</sup>) Եսայի ծԱ. 1—3.      <sup>2)</sup>) Յովհ. կ. 58. և Ժէ. 5.

<sup>3)</sup> Յովհ. կ. 57.      <sup>4)</sup> Յովհ. ժ. 33.      <sup>5)</sup> Մատթ. իթ. 29.

<sup>6)</sup> Ենդ. ԺԴ. 19—20.

գրիցեալսն Աստուծոյ միայնում վայելուչ գիտելով զայսպի-  
սիմն, իսկ բանականաց արարածոցն ոչ զոք այսպիսաւով կար-  
գայ անուամբ, այդ միայն բարեբանեալն Աստուծ, Արա-  
րիչն զերկին և զերկիր: Եւ վկայէ յաղագս որդուոյ Արրահա-  
նու և Դաւթի Յիսուսի Քրիստոսի երանելին Պաւլոս. «Եթ՝  
ի նմա արարան ամենայնք երևելիք և աներեսյթք, և  
նմա կորասցի ամենայն ծունր, երկնայնիոց և երկրայնիոց  
և սանդարամետականաց, և խոտոլանեացէ ամենայն լեզու  
իբր Աստուծոյ երւմ»<sup>1</sup> և յայտնողի զժածկոյթս մարդկան

44r. 10 յայնմ աւուր, և առ արժանաւորութիւն իւրաքանչիւրում  
հատուցանաւովի: Քանզի զիտէր և մարմնով զմտածութիւնս  
փարիսացւոցն, որպէս ասէ աւետարանիչն և զՓարաւովն  
պարտաւորեալ պարտուք\* յաղագս Սառայի, կնոջ Արրա-  
համու<sup>2</sup>. և ասացեալ նմա եթե կին պատահեաց Արրա-  
15 համու, յաղագս որոյ ասէ Պաւլոս թե «յիսրայէզէ ըստ  
մարմնոյ Քրիստոսն, և ակն ի վերայ ամենայնի Աստուծ  
բարեբանեալ»<sup>3</sup>, որպէս և ասաց Մեղքիսեղեկին յաղագս  
Բարձրելոյն Աստուծոյ: Եւ երանելին իսկ Յովք Բարձրեալ  
զնա զիտէ, և նախ մարմնաւորութեանն և մարմնով, իբր  
20 զԱստուծ արարիչ և դասիչ ամենայնիս ասելով. «Եւ  
այժմ ներկինս ահա վկայն իմ, իսկ զիտակակիցն իմ ի  
բարձրեալս. ժամանեաց իմ պաղատս առ Տէր, իսկ առաջի  
Նորա ծորեացէ իմ ակն, և իցիւ յանդիմանութիւն առն  
առաջի Տեառն, և Որդւոյ մարդոյ որ հուալ առ նա»<sup>4</sup>: Ո՞վէ  
25 այս զիտակս զքո գործս և հանդերձեալ դասել և յան-  
դիմանել զիւրաքանչիւր. ասա յայտնապէս, երանելի Յովք.  
«Որ պրկեաց, ասէ, զերկին միայն»<sup>5</sup>. յայտ է եթե Քրիս-  
տոս Յիսուս, որպէս նախասացաւ. և զինացեալն իբր յա-  
տակի ի վերայ ծովու. վկայեն իսկ զայս դարձեալ Քրիստոսի  
30 աւետարանիչքն: Եւ յետ այդոց դարձեալ ի Յովք, եթե զա-  
մնայնան ի ձեռն նորին Բարձրելոյ եար(ար) Աստուծն  
և Հայր. ասէ իսկ մինչ նախերգանն, եթե ոչ երկիւղ առ  
ի նմանէ Արարիչն զամենայն ի բարձրելում: Ահա զզնա-  
ցեալն ի վերայ ծովուն զՔրիստոսն և արարիչ և դատիչ և  
35 բարձրեալ Աստուծ լարեբանեալ քարոզեն աստուծային

\* ) Լուսանցքում՝ «փորձ(եալ) փորձ(ութ)եամբ(ք)».

<sup>1)</sup> Փիլիպ. Բ. 10—11. Հմմա. Ա. Կորնթ. Ը. 6.      <sup>2)</sup> Հմմա.  
Եննդ. ԺԲ. 10—20.      <sup>3)</sup> Հմմա. Հոռվմ. Թ. 5.      <sup>4)</sup> Յովք. ԺԶ.  
19—21.      <sup>5)</sup> Յովք. Թ. 8.

գրիցեալքն, զՈրդին Աբրահամու և Դաւթի ըստ մարմնոյ։ Ճուցցեն մեզ յայսոսիկ երկարնակքն զերկուց բնութեանցն Քրիստոսի զանազանութիւնն)ան, որպէս ընքեանք ասեն, եթե կարեն: Նոյնք իսկ և ի սաղմոսան գրեալ են յաղագս Քրիստոսի, քանզի ասէ. «Մայր Սիոնին ասէ մարդ և մարդ 5 ծնաւ ի նմա, և ինքն հիմնեաց զնա Բարձրեալն»<sup>1</sup>. և դարձեալ. «Աստուած յայտնապէս եկեսցէ»<sup>2</sup>. յայտ է զի յերկրորդում նորա գալստեանն, որպէս եասաց ե(ւ) որդին և Տէրն Դաւթի յաղագս իւր:

«Քանզի, որպէս, ասէ, փայլակն արտաքս գայ յա- 10 րեելից և երեխիմինչ ի մուտս, այնպէս եղիցի և գալուատ 45r.

Որդւոյ Մարդոյ. և առաքէ զերեշտակս իւր Տէրն հրեշտակացն Որդի Մարդոյ և ժողովեացեն զ(ը)նտրեալս իւր ի քա- սից հողմոց երկնի, ի ծայրիցն երկնից մինչ ի ծայրս իւ- րեանց»<sup>3</sup>: «Աստուած յայտնապէս եկեսցէ, Աստուած մեր 15

և ոչ լոեացէ, հուր առաջի իւր այրեսցի և շուրջ զինքեամբ մրրիկ յոյժ, առկոչեսցէ զերկին ի վեր և զերկիր առ ի զա- տուցանել զժողովուրդ իւր»<sup>4</sup>: Քանզի առկոչեսցէ յայն- ժամ յերկնի հրեշտակականս կարդաւորութիւն, զ' ի յեր- կիր առաքեալս ի սպասաւորութիւն վասն հանդերձելոցն 20

ժառանգել փրկութիւն, և եկեսցէ հրեշտակաւք իւրովք Որ- դին Մարդոյ, որպէս եասաց Տէրն<sup>5</sup>: Եւ առաքէ զնոսս որոշել զժողովուրդ իւր յ'ոչն ժողովրդենէ իւրմէ, զոր տակաւին ասէ Դանիէլ. «Հազարք հազարաւորք պաշտեին զնա, և բեւրք բեւրաւորք կային առ նմա»<sup>6</sup>, Եւ դատարան 25 նատոյց<sup>7</sup>. «Ժողովեցէք նմա, զսուրբս իւր, զկտակաղրեալմն, նմա կտակ առ ի զոհս. և պատմնն երկինք զարդարութիւն 45v.

Նորա, զի Աստուած դատաւոր է»<sup>8</sup>: Որդին Աբրահամու. ըստ մարմնոյ յայտ է զի և Աստուած Աբրահամու. յոր- ժամ ասէ նոցա ի ժամանակի հնձոցն. «Ժողովեցէք զորոմնն 30 և կապեցէք զնոսս խրձունս խրձունս առ ի յայրել զնոսս հրով. իսկ զցորեանն ժողովեցէք ի շատեմարանն իմ»<sup>9</sup>, որ աւրինադրեաց ի մեզ յերկրի երկեալ զոհել նմա զոհ գո- վութեան և տալ\* նմա Բարձրեցելոյն ընդ Հաւր և Մրբոյ

\* Լուսանցքում՝ «(մ)ատուցանել».

<sup>1)</sup> Սաղմ. 2.2. 5.      <sup>2)</sup> Սաղմ. Խթ. 3.      <sup>3)</sup> Մատթ Խթ. 27, 31.      <sup>4)</sup> Սաղմ. Խթ. 3—4.      <sup>5)</sup> Հմմտ. Մատթ. ԺԶ. 27. Խթ. 31., Մարկ. Ղ. 38., Ղուկ. Թ. 26.      <sup>6)</sup> Դանիէլ կ. 10. 7) Դանիէլ կ. 26.      <sup>8)</sup> Սաղմ. Խթ. 5—6.      <sup>9)</sup> Մատթ. ԺԹ. 30. Տասոթիսի հակառակութիւն

Հոգւոյն զաղաւթս, և առ ի կոչել զնա ի նեղութեան. և ապրեցելոց փառաւորել զնա. իսկ մեղաւորաց, հանդերձ հրեիւք, և որք ասենն զնա գոլ արարած, և ոչ նոյնագոյ եալ իւրումն Հաւր, հանդերձ երկարնակաւքն, որք մարդ 5 զնա պարզաբար սոսկ քարոզեն և ոչ Աստուած, և ամենայն հերձուածողաց սատանայական պարուց, ասէ Որդին Մարդոյ յայնոմ աւուր. կարծեցէք, անաւրէնք, եթե եղէց ձեզ նման մարդ պարզաբար, կամ եթ՛ իբր ամենաըրումն ածայց և ես ի դատաստան, և հչ հաւատացէք,  
 10 եթ՛ Աստուած եմ, դատաւոր արդար և հզաւր և երկայնամիտ<sup>1</sup>. յանդիմաննեցից զձեղ և առկացուցից առ երսս ձեր զոր գործեցէք իւրաքանչիւր, և հասուցից իւրաքանչիւրում ըստ գործս իւր<sup>2</sup>: Քանզի ինքն է բարձրեալ ահաւոր և թագաւոր մեծ ամենայն երկրի<sup>3</sup>, վերացեալն  
 15 յերկինս աղջակաւ, որում և երզեմք իմաստաբար Աստուծոյ մերում ելով ճշմարտի և կենդանութեան յաւիտենականի, և թագաւորի ամենայն երկրի, և նատելոյ յաթոռ փառաց իւրոց՝ փառաւորչին զիւրսն առաքեալսն հանդերձ ամենայն սրբովք, ժողովեցելոց իւրեանց ի սրբ-  
 20 բոց հրեշտակաց. ընդ Աստուծոյն Արրահամու, յափշտակեցելոց յամաս ի հանդիպումն Տեսան յաւդ և այսպէս յամենայն ժամ ընդ Տեսան և զելոց<sup>4</sup> և ընդ ելում Աստուծոյ Արրահամու և բարձրելումն ահաւորի և թագաւորի ամենայն երկրի Աստուծոյ՝ Որդեոյն Մարդոյ, ըստ զրի-  
 25 ցելոց մարդարեիցն և Նորոց Կտակարանաց:  
 ի նոյն իսկ այսուհետև հպեալք ի պատերազմի ճա-  
 46v. կատաստելիս՝ տեսցուք զթշնամիս երկնայ | նոյ և յաւիտենականի թագաւորի Քրիստոսի, ընդդէմ բարբառաւզս հայհոյաբարս որպէս Աստուծոյն Բանի և ասաւզս. մի քա-  
 30 րողեր զայս յաղակս քո ինքեան մարդարեիւքն և առաքելովք, զի մի Աստուած հաւատասցիս մարմնացեալ, և ծնիցեալ ի Սրբոյ Կոււէն, և խարազանեալ<sup>\*</sup> իբր մարդ՝ քոյին մարմնով, և ապտակեալ և ընդ երեսս թիեալ, և զնչըն անելով աւզնական, և վասն այսորիկ ոչ պատկա-  
 35 ռեւալ, այդ եղեալ զերեսս իբր հաստատուն վէմ, զի մերձանայ արդարացուցիչն զքեզ<sup>5</sup>: Ողջ պահիլ<sup>\*\*</sup> վայել է

\*) Հուսանքում՝ «մտրակեալ».

\*\*) Ընդ՝ «ապրիլ».

1) Հմմտ. Սամզ. է. 12. 2) Հմմտ. Սազմ. ԿԱ. 13., Մատթ. ԺԶ. 27., Հոռվմ. Բ. 6. 3) Սաղմ. ԽԶ.3. 4) Հմմտ. Ա. Թեսաղ. Դ. 16. 5) Հմմտ. Եսայի. Ե. 6 շաբ.

երկաքանչիւրոյ քոյ բնութեանդ առանձնաւորութիւն բնակաւղի քո ի Մարեմայ մարդում. քանզի ոչ մարդ պարտիս լինել, այդ ընտանենալ ի Մարեմայն մարդոյ ըստ ունակութեան միաւորութեամբ. մի ինչ նուաստ առ ի քեզ քարոզեր աշխարհի. քանզի Աստուած ևս կարող, և զնուաստին 5 և զմահկանացուի և անկարի մարդոյն ի Մարեմայն ծնեցելոյն ընտանեցուցանել պարտիս ունակարար, ի աննուաղապէս պահիլ վայել է երկաքանչիւրոց քոյ բնութեանդ առանձնաւորութիւն, զի մի կարծիցիս մարդ ի կուսէ ծնիցեալ, այդ իրը բնակելով յայնմիկ որ ի կուսէ մարդն. և 10 զի մի ի կուսէ մարդն ծառայականի ելով կերպութեան Աստուած առ յոմանց հաւատասցի, զի ժամանակ իմն ընդ նմա գոլ հանդերձեալ ևս Աստուած ելով ի վերայ նորա. զի եղիցի ժամանակ յորժամ առ իրեարս հչ իցէք՝ յատկապէս պարտիս ներգործել զքոյսն իրը Աստուած և բա- 15 ցափայլել պանչելեաւք, զի մի Աստուած կարծեսցիս կրկնական և յատկապէս ներգործել ի Մարեմայն մարդ պարտի զիւրան և թշնամանացն կամ եթի ախտակրութեանն համբերել. զի մի նախ քան զերահամ ոք զնա համարեացի, կամ նախ քան զախարհ գոլ՝ յիմնեմեան չե ևս եղեալ. 20

Այսպիսիք ուգեմն երկարնակացն յանդգնական հայ- հոյութիւնք զՔրիստոսէ բանսարկուապէս խաւեցեալք. իսկ մեք հետեացե(ա)լք աստուածայնոց զրիցելոցն և վարդապետութեանց սրբոցն հարանցն, և շարայարեալք նոցա առ պատերազմ՝ ասենք վկացելոց համերցն շանց և մարմ- 25 նաւորաւք զինուք և բանիւք յաւիտենիս այսորիկ քաջալերեցելոց. «Դուք գայք ի վերայ մեր սրով և նիզակաւ և ասպարաւ և հայնոյական բանիւք, և մեք շարայարեացուք, ձեզ առ պատերազմ անուամբ Տեառն Աստուծոյ Սարաւութիւն մարտակցին իսրայէղի, զոր դուք հայնոյէք, և փա- 30 կեացէ զձեզ Տէր ի ձեռս մեր, որպէս ի վերայ եղեւ Դաւթի և Գողիակու»<sup>1)</sup>: Խցոյին հերձուածողացն թերանք ի Տեառն Աստուծոյ մերմէ. ամաչեսցեն զմարդարէն վկայիչսն զԱստուածն Աքրահամու՝ զբարձրեալն և զբարեբանեալն, զարարիչն երկնից և երկրի զսա գոլ ի սրբոյ կուսէ ծնի- 35 ցեալ, ծառայի առեալ զկերպ, մարմին հաստատեալ նմա Աստուծոյ և Հաւը և ստեղծեցելոյ նորա նորովայնի մաւր ըստ մարմնոյ, և ականջս ունելով, և լոյս ելով աշխարհի և կարացեալ փրկել և ապրեցուցանել. և խաւարեցուցեալ|

47r.

47v.

1) Հմետ. Ա. Թագ. ծէ. 45—46.

- 48r. գերկիր(?) և սպառնալեաւք անապատայուցեալ զծով. քանդի  
ինքն էր որ տիրեր բռնութեան ծովու և զշարժութիւն  
կոհակաց նորա ընդելուցանէր<sup>1</sup>, և զնացեալ իբր ի յատա-  
կի ի վերայ նորա՝ զիւրն թիկունս տուեալ ի խարազանիլ,  
5 և զծնաւտս յապտակիլ և զդէմս թուրս ընդունել, և եղեալն  
ի շիրմի քարատելում վիմի և յարուցեալ ի մեռելոց, զԱբ-  
րահամն կոչաւզ և բարեբանաւզ զնա, իջեալն ինքն և վե-  
րելեալ, և մարմնացեալ ի Կուսէն, Աստուած աղաղակաւ,  
բարձրեալ ելով ահաւոր և երկաբոյս ոչ եղեալ, այզ մնա-  
10 ցեալ Աստուած Աբրահամու, և ինքն դատի զաշսարհ  
նարդարութեան. քանզի ծնիցեան մարդն յերկրի ի Կուսէ՝  
ինքն էր որ հիմնեաց զերկիր, բարձրեալն. սա էր, յա-  
ղագս որոյ ասէր առավեալն. «Աթոռ քո Աստուած, յա-  
փտեան յափտենի, գաւազան ուղղութեան գաւազան ար-  
15 քայութեան քոյ. սիրեցեր զարդարութիւն և ատեցեր անի-  
րաւութիւն. այսուիկ եաւծ զքեզ Աստուած Աստուած քո  
եւզմեծութեան, քան զհաւասարորդս քո»<sup>2</sup>. «Եւ գու սկըզ-  
բանն Տէր զերկիր հիմնեցեր և գործք ձեռաց քոց են եր-  
կինք»<sup>3</sup>. քանզի աւծեալն առ ի յԱստուածոյ և հիմնացուցիչ  
20 զերկիր իբր Աստուած ելով և մարմնով. ինքն էր որ նախ  
մարմնաւորութեամբն եասաց Յովբայ փոթորկաւ և ամ-  
պովք. «Ո՞ւր եիր ի հիմնելն ինձ զերկիր»<sup>4</sup>, և ըստ միո-  
ջէքն՝ ըստ մարմնոյ յիսրայէջէ Քրիստոն, եակն ի վերայ  
ամննեցուն Աստուած բարեբանեալ, յափտեանս ամէն<sup>5</sup>:
- 48v.

25 Հականառական երկրորդ զտոմսէն Ղեւոնի,  
եւ սահմանն Քաղկեդովնի եղելոյ ժողովոյն՝ խնդ-  
րելով մեր եւ այդ աւրինակս.

- Արդ, վասն զի բազումս և աւգտակարս պիտառու-  
թիւնս \* երանելեացն մերոց հարանց ընտրեցաք, հարկա-  
30 ւոր համարեցայ սերկս նախադրել զ' ի տոմսէն Ղեւոնի  
հայհոյութիւնս և սահմանս Քաղկեդովնի ժողովոյն և հեր-  
ձուածողաց մարդոց վարդապետութիւնս, որոց բաղաձայ-  
նապէս \*\* գտանին նախասացեալն տոմս և սահմանն ի  
49r. Քաղկեդովնի ժողովոյն, իսկ ընդդիմակացսս սրբոցն հարանց  
35 վարդապետութեանց. իսկ յստ այսողիկ ընդդէմ ասել  
ըստ կարի մերում նոյցայն հայհոյութեանց Տէրամբ, և

\* Հուսանցքում՝ «վկայութիւնս».      \*\*) Անդ՝ «ձայնակցարար».

<sup>1)</sup> Հմմա. Սաղմ. 2Ը. 10.      <sup>2)</sup> Սաղմ. ԽԴ.7—8. հմմա. եբբ.  
Ա. 8.      <sup>3)</sup> Սաղմ. ՃԱ. 26.      <sup>4)</sup> Ցավը. ԼԸ. 4.      <sup>5)</sup> Հմովմ. Թ. 5.

առդնել պիտառութիւնս սրբոցն հարանց՝ հաստատիչս առ  
ի մէնջ ասացելոցն, իսկ տապալիչք նախասացելոցն հայ-  
հոյութեանցն հերձուածողաց, և նզովիչս զնոշայն ամպա-  
րըշտութիւն։

Ա. գլուխ հայիոյութեանց առաջին ի թղթոյն 5  
Ղեռվնայ.

Եւ իմաստութեանն շինաւղին իւր տուն<sup>1</sup>, Բանն մար-  
մին եղեւ և տաղաւարեաց ի մեզ<sup>2</sup>. այս է՝ յայնում մարմին,  
զոր եան ի Մարիամա, և զոր հոգւով կենցանութեան  
բանականի անձնաւորեաց։

10

Պիտառութիւնն հերձուածողացն, որոց բաղա-  
ձայնին նախասացեալին ի Ղեռվնայ.

Պաւղոսի Սամոսացւոյ հերձուածողի հայիոյութիւնն.

Եթ՛ աւգոէ իմաստութիւն զմարդն որպէս աւգոէ  
ոչ ևս ինքն ժամանեալ վնասեացի. բնակեաց իսկ ի մարդում 15  
յա(յս)միկ լուով զսա ամենայն աւրինակաւ, և բնակեաց իրը  
ոչ յումեկ (եր)բէք իւր էրն, որպէս հնա(րեացի) անմարմին 49v.  
բնակել ի մարմինի, այս է բոլորում մարդում, այսպէս  
բնակէ, զի մի ի Դաւդայն աւծեալ աւտար իցէ իմաստու-  
թեանն, և մի իմաստութիւնն յայլում այսպէս բնակից։ 20

Եւ յետ այդոցն.

Ի միում Տէրն իշխանապէս ի սմա, քանզի և ի մար-  
դարէնն էր և ի Մովսէսի և ի բազում տեարս, այդ առա-  
ել ի Քրիստոսի իւր ի բազնի Աստուծոյ։

Նեստօրի հերձուածողի հայիոյութիւնն, որ յաղազս 25  
Եերմարդութեանն.

Խոստովանեալ, ասէ, զբագինն այդ ներքնակեցելումն  
շարայրեալ. թող Աստուծոյն Բանի շարայրիլ զբագինն  
զնմանի, մի զբնակեալն զԱստուծ յիւրմէն մերկացուա-  
ցես բագնէ, և մի զբագինն ի բնակեցելոյն որոշեացես աս- 30  
տուածութենէն, մի զանգցես զբնութիւնսն և մի դարձեալ  
զարժանաւորութիւնն այսր անդր կորպիսցես. քանզի անո-  
րիշ շարայրութիւնն և անխառն։

1) Առակ. Բ. 1.

2) Յովհ. Ա. 14.

Նորին տեսաէ ի՞՞.

50r. Զսա առասեմք . . . . . \* ոչ յեղութիւն աստուածային  
բնութեանն առ ի մարմին, այդ զբնակութիւնն զառ ի  
մարդն:

5 Նորին.

Կամիս և այդ ի վերայ այսորիկ զերրորդութեանն  
ներգործութիւն. բնակեաց Որդին ի մարմին, առ կացոյց \*\*  
Հայրն մկրտեալ, եստեղ ի կուսին Հոգին:

Նորին տեսաէ ի՞՞.

10 Բանն մարմին եղև և տաղաւարեաց նըմեզ<sup>1</sup>, այս է  
զմերն զգեցաւ բնութիւն. քանզի տաղաւար ը(ն)կալաւ  
Բանն զմարդկութիւնն:

Թեւօդորիթայ հերձուածողի հայհոյութիւնք.

Եթ՛ այսուհետեւ ոչ եղև մարմին Բանն, այդ մարմին  
15 կենդանի և բանական եառ՝ ոչ ինքն բնութեամք ի կուսէն,  
ծնանի յզիցեալ, և ստեղծեալ և կերպացեալ, և ակիզբն  
անտուստ գոլոյ առեալ և ընդ Հաւր եալ և ընդ Հաւր ծանու-  
ցեալ և երկրպագեալ, այդ ինքնեան բագին ի կուսական որո-  
վայնի ստեղծեալ, առ դոյր ստեղծելումն և սազմնացելումն

50v. 20 և կեր| . . . . . \*\*\* և ծնիցելումն . . . . . , \*\*\* զուրբն զայն  
Կոյսն Աստուածածին առասեմք, ոչ իբր զԱստուած բնու-  
թեամք ծնիչ, այդ իբր զմարդ ստեղծչին զնա միաւորեալ  
Աստուծոյ:

Եւ յետ այդոց.

25 Եւ վասն զի ոչ ամենայն էր Աստուծոյն կերպի,  
այդ բագին էր բնակիչ ունելով ըստ Պաւղոսի ձայնին,  
քանզի ի նմա, ասէ, հաճեցաւ ամենլրումն Աստուածու-  
թեան բնակել մարմնապէս՝ ոչ մարդածին, այդ Աստուա-  
ծածին զկոյսն առասեմք. զմին ստեղծման և կերպութեան  
30 և միաւորութեան, իսկ զմիւն միաւորութեան եղեալ  
առասութիւն:

\* ) Մի անվերծանելի բառ.      \*\*) Լուսանցքում՝ «բաղկացոյց».  
\*\*\* ) բառի շարւնակութիւնն անվերծանելի է.      \*\*\*\* ) մի ան-  
վերծանելի բառ.

1) Յովհ. Ա. 14.

Հականառութիւն առ ասացեալսն ի Ղեղվնայ  
եւ նախ հան զնա հերձուածողացն.

Հերձուածողացն նորա վարդապետաց յայտնելով  
զնորա ամպարշտութիւնն իբր հետևեցելոյ իւր նոցայցն  
վարդապետութեանց ենթակացեսցի \* յիրաւի զնոցանէ եղե- 5  
լոց նզովիցն ի սրբոցն հարանց Քանզի երանելի առա-  
քեալն Պաւլոս զմարմնացեալն Աստուածն Բան հանգերձ  
իւրով մարմնով Քրիստոս անուանեաց, և Աստուծոյ զաւ-  
րութիւն և իմաստութիւն զսա քարոզեաց ընդ երկնաւս <sup>1:</sup> 51r.  
Զի ոչ, որպէս նորում վարդապետիս թուի, տաղաւարեաց 10  
ի Մարեմայն մարդ Աստուածն Բան, իբր այդ ելով քան  
զ' ի կուսէն ծնիցեալ Փրկիչն Քրիստոս Տէրն. քանզի տուն  
անուանեաց նորս վարդապետ զ' ի Մարեմայն առեալ՝ բնա-  
կել զԱստուածն Բան ի տանն աւրինադրէ, որպէս թուի  
հերձուածողաց նորայն վարդապետաց. զի մի Աստուածն 15  
Բան, որպէս ինքն կոչէ իմաստութիւն, թափեալ զինքն  
գտանիցի, և մի տուեալ վասն մեր ի Հաւրէ ըստ գերա-  
զանցութեան սիրոյ. «Զի այսպէս սիրեաց Աստուած զաշ-  
խարհ, ասէ Աւետարանիչն Յովաննէս, իբր զի զՈրդին  
իւր Մէնածին նտ վասն մեր» <sup>2:</sup> այդ և զի մի Տէրն փառ- 20  
ուաց, այդ Տեառն փառաց տունն ասիցի զխաչն համբերիչն  
զվասն մերն, և զման և զթաղումն և զյարութիւնն:

Այդ ոչ այսպէս ուսուցին աստուածային զրիցեալքն,  
այդ զինքն Բանն մարմին եղեալ, տաղաւարեալ կամ բնա- 51v.  
կեալ ի մեզ ի մարդկան. «Քանզի բնակեցայց ի նոսա, ասէ, 25  
և առդնացից և եղէց նոցա Աստուած, և ընքեանք եղիցին  
իմ ժողովուրդ» <sup>3:</sup> Խսկ բնակել զՔրիստոս ի սիրտս մեր,  
աղաւթէ երանելին Պաւլոս <sup>4:</sup>, Խսկ բնակել ի մարդում Աս-  
տուծոյ միայնում յատուկ է, և հչ մարդոյ: Եւ յառ երրա-  
յեցիս թզթին զՔրիստոսն Որդի հարազատ քարողէ Հաւրն 30  
և արարիչ բոլորեցուն, և գերունելով անբաղդատարար ա-  
մենայնի համանգամայն արարածոցս. «Քանզի, ասէ, և Մոլ-  
ուէս հաւատարիմն բոլորում տան նորա իբր բուժաւզ <sup>\*\*</sup> առ  
ի վկայութիւն խաւեցելոցն. Խսկ Քրիստոս իբր Որդի  
և տուն նորա, որոյ տուն եմք մեք» <sup>5:</sup> Խսկ Քրիստոսի իւր 35

\* Լուսանցքում՝ «պարտասրեսցի».      \*\*) Անդ՝ «(ոպ?)ասաւոր  
(ծ)առայ».

<sup>1)</sup> Տես Ա. Կոբիթ. Ա. 24.      <sup>2)</sup> Յովհ. Գ. 16.      <sup>3)</sup> Եղեկ.  
Լէ. 27 և այլուր.      <sup>4)</sup> Հմմտ. Դաղատ. Գ. 6 ևն.      <sup>5)</sup> Եբր. Գ. 5—6.

նչ առւն և հչ բնակիչ ասի նաստուածային գրիցելումն,  
թեպէտ և ուրեք մարդկայնովք վարի ձայնիւք վասն տըն-  
տեսութեանն, զի մի կրեոյթ կարծիցի մարմնաւորութեան  
իւրոյ խորհուրդն, այդ ըստ ճշմարտութեանն մարդ եղեալ  
ճ տնաւրինաբար այն հաւատայցի մնացեալն անյեղումն  
լոնութեան: Քանզի Կի՞ Աստուած էր հանդերձեալն յերկրի  
երեւել և ի կուտէ ծնանիլ, Խսայի մարդարէանայ ասե-  
լով. «Ահա Աստուած մեր զատաստան հատուցանէ և հա-  
տուցէ, Խնքն եկեսցէ և կեցուացէ զմեզ. յայնժամ բաց-  
10 ցին աչք կուրաց և ականջք խլաց լուկցեն»<sup>1)</sup>, և ըստ  
միոցէքն: Եւ Ահա Աստուած մեր, ահա Տէր գայ հարդա-  
տութեամբ և բազուկ իւր տիրականութեամբ»<sup>2)</sup>, և «Ահա  
Կոյս նորովայնի կալցի և ծնցի որդի, և կարդասցեն զանուն  
Նորա Եմմանուէդց»<sup>3)</sup>. և զի Շոյի անուն իւր մնձի խորհրդ-  
15 դոյ հրեշտակ, Աստուած հզաւրա: Եւ ինքն իսկ նախ քան  
զյափիտեա(ն)ց յաղազս ի կնոջէ ըստ մարմնոյ ծննդեանն  
տնաւրինականի մարդարէիւն ասէ. Շուարնուք ինձ կզիք  
և հայեցարեւք ազինք, յետ բազում ամանակի կացցէ,  
ասէ Տէր, յորովայնէ մաւր իմոյ կոչեաց զանուն իմ»<sup>4)</sup>:  
20 Ահա և զկամաւոր և անկիր և անճառելի յղութիւնն իւր  
զեկուցանէ նորովայնի մաւր, և առանձինն մայր կոչէ  
զաւորք Կոյսն, և անուն կոչեցեալ նմա առ ի Հաւրէ: Իսկ  
եթե տուն իւր շինեաց և յայնժամ|բնակեաց ի Մարեմայն  
մարդ յԱստուծոյն Բան, արտաքոյ ելով ամննայնիւ ի շի-  
25 նեցելոյն տանէ, մինչ զի իննամսեա ամանակաւ զսա  
շինիցէ, այդ ելով քան զ' ի Մարեմայն իւր տուն, ապ' ու-  
րեմն և ոչ շարառեցաւ անճառաբար մարմնացեալն յարգան-  
դին Կուսին Աստուածն Բան, որպէս նմա թուի, և ոչ Աս-  
տուածածին սուրբն Կոյս, և իբր մնաց յղացեալն և ծնեալ  
30 կոյս: Այդ մարդարէն վկայէ և գոչէ զսորա ստութիւն, մա-  
նաւանդ իսկ ինքն Աստուածն Բան մարդարեիւն, ապա  
իբր առ նոյն ծնիցեալն ի կուտէն ասի մարդարեիւն. «Եւ  
Սերոյիմացիք արք բար(ը)ձունք առ քեզ անցցեն և քեզ  
եղիցին ծառաքք, և յետոյ քոց հետեւսցին կապեալք ձե-  
35 ռակապաւք, և ի քեզ աղաւթեցեն, զի ի քեզ Աստուած  
է, և հչ է Աստուած բայց քո»<sup>5)</sup>. ասէր իսկ Խնքն Տէրն,  
եթե «Հայրն յիս մնալով առնէ զգործս Խնքն»<sup>6)</sup>, և եթե

<sup>1)</sup> Խսայի Լ. 4—5.<sup>2)</sup> Խսայի Խ. 10.<sup>3)</sup> Խսայի Է. 14.<sup>4)</sup> Խսայի Թ. 6.<sup>5)</sup> Խսայի ԽԹ. 1.<sup>6)</sup> Խսայի Խ. 14.<sup>7)</sup> Յովհ. ԺԹ. 10.

«Հայրն իմ ընդ իս է և ոչ եթող զիս միայն, զի ես հաճոյս նմա առնեմ յամենայն ժամ»<sup>1</sup>, և «Հայրն իմ յիս և ես իշաւր»<sup>2</sup>. Էջ իսկ և Հոգին Սուրբ մարմնական տեսակաւ իրբ աղաւնի յերկնուատ և մնաց ի վերայ նորա»<sup>3</sup>, զի այսպէս ասէր Տէրն. «Հոգի Տեսառն առ իս, որոյ սակա եաւծ զիս»<sup>4</sup>, և  
և ըստ միոջէքն, Վասն այսորիկ և բագին եասաց զիւրն մարմին. իբր աւծեալ տնաւրինաբար Սրբովն Հոգւով և ունելով նինքեան զՀայրն և զՀոգին Սուրբ. զի և մերքն մարմինք իւրով\* չնորհաւն կոչեսցի բագին ի միզն բնակեցնելոյ Սրբրոյ Հոգւոյն. «Զի անդամէ եւկ մարմնոյ նորա»<sup>5</sup> և «Ի լրբ-<sup>10</sup> մանէ նորա մեք ամենեքեան եառաք»<sup>6</sup>, և «Եինիմէ ի վերայ հիման առաքելոցն և մարգարեից ելոյ ծայր անկիւնոյ ինքեան Յիսուսի Քրիստոսի, յորում ամենայն շինուած յաւդակապեալ աճէ ի բագին սուրբ Տէրամեր»<sup>7</sup>:

Այդ թեսպէտ և էր ի նմա Հայրն և Հոգին Սուրբ, այդ<sup>15</sup> վկայէ մարգարեիւն, և՛՛ ոչ էր Աստուած բայց նորա<sup>8</sup>. Քանզի մնալով Աստուած եղեւ անխառնաբար և անյեղապէս մարդ, և նոյնագոյ էր Հաւր և Սրբոյ Հոգւոյն և յորժամ եղեւ ըստ մնզ. իսկ մարմնաւորութեանն և ծնելութեանն 53v. նորա յեղանակ անճառելի և անպարիմանալի ամենեցուն է<sup>20</sup> և որպէս միայն զիտէ ինքն Մէնածինն Աստուած ընդ իւրումն Հաւր և Հոգւոյն Սրբոյ: Քանզի և երանելի աւետարանիչն Յովաննէս զնիսկզբանն Աստուածն Բան առ Աստուած, որով ամենայն եղեւ՝ զսա մարմին եղեալ քարոզեաց, մնալովն Աստուած, տաղաւարել ի մեզ՝ ի նա հաւատացնեալս: 25 Քանզի և նախածին եղեալ ի բազում եղբարս, և տեսեալ յառաքելոցն՝ վկայի և այսպէս փառս ունելով Մէնածնի առ ի Հաւրէ, լի չնորհիւ և ծնմարտութեամբ. զի ի լրմանէ նորա մեք ամենեքեան եառաք զնորհս Սրբոյ Հոգւոյն<sup>9</sup>, և ընդունիչք նորա եղեաք. և երանելիքն իսկ հարք, որք<sup>30</sup> ի նիկէա, զ՝ ի գոյացութենէն Հաւրն Աստուած յԱստուծոյ զսա զասն մեր և զասն մերոյ փրկութեան ստորիջեալ և մարմնացեալ և կրեալ և յարուցեալ ուսուցին, որպէս և աւետարանիչն Յովաննէս. և ոչ ուրեկը տուն անուանեցին զՔրիստոս, և զիմաստութիւնն կամ եթե զԱստուածն 35

\* ) Լուսանցքում՝ «նորա».

<sup>1)</sup> Յովհ. Ը. 29. ԺԶ. 32.      <sup>2)</sup> Յովհ. Ը. 38. ԺԹ. 10. 11., Հմմտ. Ժէ. 21.      <sup>3)</sup> Հմմտ. Մատթ. Գ. 16., Մարկ. Ա. 10., Ղուկ. Գ. 22., Յովհ. Ա. 32—34.      <sup>4)</sup> Եսայի. ԿԱ. 1.      <sup>5)</sup> Եփես. Ա. 30.      <sup>6)</sup> Յովհ. Ա. 16.      <sup>7)</sup> Եփես. Բ. 20—21.      <sup>8)</sup> Հմմտ. Եսայի. ԽԵ. 14. և այլուր.      <sup>9)</sup> Հմմտ. Յովհ. Ա. 1—14.

- 54r. Բան | բնակեալ ի նմա, այդ զմին և գնոյն, նոյնագոյ ելով  
Հաւըն և Սրբոյ Հոգւոյն: Արդ, եթ' որպէս թուեցաւ  
ապականչին\* աստուածայնոց զրիցելոցն և սրբոյ կանոնին,  
բնակեաց Աստուծոյն Բան ի Մարեմայ մարդումն, աս-  
ծ առածազգեաս էր մարդ Քրիստոսն, և ոչ եղեւ մարդ Աս-  
տուծոյն Բան՝ մնալովն Աստուած, այդ ի մարդ բնակեաց:  
Քանզի զայս յառաջիկայն յայտնապէս ուսուցանէ շինե-  
լով ի վերայ չարապէս ի նմանէ գրեցելոյ հիմանն՝ Նեստո-  
րի հերձուածոյն:
- 10 Ի՞ր արդնէք բնակէ Քրիստոս յամենայն սուրբս, եթ'  
ոչ Աստուած գոյր և մարմնով. ասէ իսկ՝ նախ քան զԱր-  
րահամ եղանել ես եմ<sup>1</sup>, և այս ըստ մարմնոյ Որդի ելով  
Դաւթայ, քանզի միայնւոյ Աստուծոյ յատուկ ի սուրբս  
բնակել: Իսկ զինչ աւելի սրբոց մարգարեիցն երեսցի ար-  
դ գեւք ի Քրիստոսի. այդ ասացեալ և ցուցեալ ահա, զի  
Մուսէս ընդ ընտոծինս կարգեալ Աստուծոյ, իսկ Քրիստոս  
ամենայնի Տէր, իր Որդի Աստուծոյ և Աստուած. քանզի  
Նրկրպաղի և յամենայն հրեշտակաց Աստուծոյ, և նովաւ  
եարար զյաւիտեանս Հայրն եղելոյ նախծնի ի բազում
- 54v. 20 Կդրաբս և վկայեցելոյ դարձեալ, եթև մնաց բացափայլումն  
և գծաւորութիւն ենթակակայութեանն Հաւը, և ի նմա  
կեամք և չարժիսկ և եմք: Քանզի նմա ասացաւ ի Դաւ-  
թայ և ի Պաւղոսէ. «Եթու քո Աստուած յաւիտեան յա-  
ւիտենի»<sup>2</sup>. քանզի ապաւառութիւն մեղաց մերոց արա-  
բեալ, պատուական արեամբ իւրով սրբեալ զմեղ և փըր-  
կանաւորեալ, նստաւ ընդ աջմէ Աստուծոյ՝ Աստուած ելով  
մարմնով: Եւ զի պատուական արիւն նորա արիւն Աս-  
տուծոյ է՝ Պաւղոս ուսուցանէ առ յԵփեսոսէ երիցունսն  
ասելով. «Հայեցարուք ձեզ ինքեանց և ամենայնի հաւտիդ,
- 30 յորում զձեղ Հոգին Սուրբ եղ վերադիաւզս \*\*, հովուել  
զեկեզնցին Աստուծոյ, զոր ստացաւ արեամբ իւրովք<sup>3</sup>:  
Քանզի մի է Որդի Աստուծոյ Մէնածին, իր Աստուած  
յԱստուծոյ և նախտածին ներբազմաց եղբարց, ի ձեռն յա-  
ղազս մեր կամաւոր իւրոյ թափմանն. ըստ որում եղի  
35 մարդ տնաւրինաբար վասն մերոյն փրկութեան զոլով իսկ  
55r. և այսպէս ըստ բնութեան Աստուած և մարմնովն. «Քանզի

\* Լուսանցքում՝ «տարագ(ր)աւղի».      \*\*) Անդ՝ «եպիսկապոս».

<sup>1)</sup> Հմմա. Յովհ. Հ. 58.  
<sup>2)</sup> Սաղմ. ԽԳ. 7., նբբ Ա. 8.  
<sup>3)</sup> Դործք Ի. 28.

գէակն ի սկզբանէ Աստուածն Բան կենդանութեան տեսաք, ասէ Փրկչին աշակերտն, և ձեռք մեր որոնեցին»<sup>1)</sup>. «Քանզի եղեն ինքնատեսք և սպասաւորք Բանին», որպէս ասէ Ղուկաս<sup>2)</sup>. քանզի անտեսանելին եղեւ տեսանելի մնացեալ նանյեզզի բնութեանն. քանզի ինքն է Աստուած մեր 5 և «Ի վերայ երկրի երեսեցաւ և ընդ մարդկան չրջեցաւ»<sup>3)</sup>, և յայտնեցաւ մեզ Աստուած ելով Տէր, մարդ եղեալ անխառնաբար, և ոչ անմարմնապէս երեսելի վերայ երկրի: Քանզի ուսուցանէր մի զինքն եալ իւրով մարմնովն ասելով. «Ես եմ հացն կենդանի յիրկնուասն իջեալ. եթե ոք 10 ուտիցէ յայսմանէ հացէ, կեցցէ յաւիտեան. և հացն իսկ, զոր ևս տաց, մարմինս իմ է՝ յաղագս աշխարհի կենդանութեան»<sup>4)</sup>. և դարձեալ՝ «Եթ՛ ոչ ուտիցէք զմարմին Որդույ Մարդոյ և ըմպիցէք զնորա արիւնն, ոչ ունիք կենդանութիւն ի ձեզ. ուտաւոն զիմ մարմին և ըմպաւոն զիմ արիւն, 15 ունի կենդանութիւն յաւիտենական, և ես յարուցից զնա ի վերջնում աւուր<sup>5)</sup>: Եւ սոցուն ի վերայ բերէ. «Ուտաւոն 55v. զիս ևնա կեցցէ վասն իմ, քանզի ևս եմ, ասէ, հացն յիրկնուատ իջեալ և կենդանութեան ատուիչ աշխարհի»<sup>6)</sup>, Տեսանես զի ամենուրեք մի զինքն քարողէ հանդերձ իւրով մարմնովն՝ ինքն գորով և յիրկնուատ իրբ Աստուած և ի կուէն իբր Որդի մարդոյ: Ասէ իսկ Յովաննէս աշակերտն յաղագս տեսեցելոյն և որոնացելոյն ի նմանէ Որդւոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի. «Սա է ճշմարիւն Աստուած և կենդանութիւն յաւիտենական»<sup>7)</sup>: Եւ Պաւլոս 25 նմանապէս զՔրիստոս ուներով նինքեան խաւառող, խոստովանեաց զՔրիստոս ի հրեից ըստ մարմնոյ, զ' ի վերայն ամեննեցուն Աստուածն բարեբանեալ յաւիտեանս զնա խոստովանեաց<sup>8)</sup>: Եւ յայզում դարձեալ թղթի ասէ. «Հատյայտնութեան փառաց մեծին Աստուծոյ և Փրկչին մերոյ 30 Յիսուսի Քրիստոսի»<sup>9)</sup>. և այզուր դարձեալ բացերնոց է: յաղագս ամենայնի կատարաւողի զցանկութիւնս մարմնոյ, և ոչ ոգեւով զնա զնացելոցն<sup>10)</sup>, իբր ոչ ընկալցի ժառանգութիւն յարգայութեանն Քրիստոսի և Աստուծոյ: Իմաստութիւն այսուհետև Աստուծոյ այս է. Քրիստոս ճշմարիտչինեաց ին- 35 56r. քեան տուն հոգեկան զ' ի նայն հաւատացեալս. վասն այ-

<sup>1)</sup> Ա. Յովհ. Ա. 1.<sup>2)</sup> Ղուկ. Ա. 2.<sup>3)</sup> Բարուք Գ. 38.<sup>4)</sup> Յովհ. Զ. 51—52.<sup>5)</sup> Յովհ. Զ. 54—55.<sup>6)</sup> Յովհ. Զ.<sup>58—59.</sup><sup>7)</sup> Ա. Յովհ. Ե. 20.<sup>8)</sup> Հմմա. Հոռվմ. Բ. 5.<sup>9)</sup> Տիտոս Բ. 13.<sup>10)</sup> Հմմա. Ա. Պետր. Բ. 11.

սորիկ և զկամաւորն ե....\* կացեաց թափումն անթափ....\*\* զբնութիւնն իրը Աստուած, և զաղ(ք)ատութեանս մերոյ զամենայն իւր արարեալ, զի մեք փարթամացուք ի ձեռն ի նայն հաւատոյ և բնակութիւն նորա ճ եղիցուք սրբով մկրտութեամբն յաւէտ փարթամացեալք առ ի նմանէ տուեցելոյ չնորհի Սրբով Հոգուվե, սակս որոյ ընդ մեղ է մինչ ի սպառումն յաւիտենիս: Աստուած ուրեմն էր Քրիստոսն ներքնակեալն և ներձեմեալն նըմնզ, և յերկրի երեսալ և ընդ մարդկան շրջեցեալն, ի ձեռն 10 փշմանն չնորհաւդն առաքելոցն զՀոգին Սուրբ, իրը Աստուած, որոյ և ժողովուրդ յատուկ եմք ըստ հրեշտակապետի ձայնին, «Զի կոչեսցես, ասէ, զանուն նորա Յիսուս, զի ինքն ապրեցուացէ զվողովուրդ իւր ի մեղաց իւրեանց»<sup>1:</sup>

15      **Պիտառութիւնն Երանելեացն մերոց նարանց իւ եպիսկապոսաց,** հաստատիչք առ ի մէնջ ասացելոցն, իսկ ի բաց տապալիչք զամպարիչս նախանառելոց հերձուածողացն աղանդս.

56v.    20 ի թղթոյն թուղիալ եպիսկապոսապետի Հռովմա|

իսկ քարոզի առ լրումն հաւատոյ և (մարմնանալ?) \*\*\* ի կուսէ Աստուծոյն Բան և տաղաւարել ի մարդկան, նչ մարդով ներգործեալ, քանզի այս ի վերայ մարդարէիցն է և առաքելոցն:

25      **Երանելոյ Գրիգորի Միանչելագործի.**

Եթ' ոք ասէ այդ զնախ քան զյաւիտեանս Որդի Աստուծոյ, և այդ ի վերջինսս, և նչ խոստովանի զնոյն նախայաւիտեանական, զնոյն առ վերջնովք, որպէս զրեալ է, նզովեսցի:

30      **Երանելոյ Գրիգորի Նազանզացւոյ.**

Եթ' ոք ստեղծեալ ասէ զմարդն, ապա ընդ մտեալ զկատուած, դատապարաեալ, քանզի նչ ծնելութիւն Աստուծոյ այս, այդ փախուստ ծնելութեան:

\* ) Մի քանի տառ չկայ. շափականց հնութիւնից մագաղաթը ծակծկուել է.        \*\*) նոյնպէս.        \*\*\*) նոյնպէս.

1) Մատթ. Ա. 21.

Երանելւոյ Կիւրդի եպիսկապոսապետի Աղեքսանդրեայ  
նզովումն ն.

Որ ոք համարձակի ասել աստուածազգեստ մարդ  
դՔիւրիստոսն, և ոչ առաւել Աստուած զոլ ըստ ճշմարտու-  
թեան, իբր որդի մի և բնութեամբ, ըստ որում եղել մար- 5  
մին Բանն, և հաւասարեաց նմանապէս մեզ արեան և  
մարմնոյ, նզով եղիցի:

Նորին՝ ի շրջանական քղբոցն որ զնեստորէ.

.... \* աղէ, ով լաւադոյնք, բնակելն միայն ի մար- 57r.  
դում զԱստուածն \*\* Բան բաւականեսցէ արդ(նւք) առ ի 10  
թափիլ զնա, և զգոյշ . . . \*\*\* եթ' այսպէս զգեցաւ զծառա-  
յին կերպ և այսպէս նմա լինիցի արդեւք թափմանն յե-  
ղանակ, և զի ասաւզին լսեմ սրբոց առաքելոցն. «Եթ'  
ոք սիրէ զիս, զբանն իմ պահեսցէ և Հայր իմ սիրեսցէ  
զնա, և առ նա եկեցուք և վանս առ նմա արացուք»<sup>1:</sup> 15  
Լսմս իբր ի սիրելիսն զնա բնակեցն իւր եասաց և  
զինքն զԱստուածն և զՀայր. արդեւք և զինքն թափեցնալ  
կարծեցուք, և զնմանն համբերել նուաստութիւն զՈրդւոյ  
և զծառայի կերպն առնուլ, զի զսիրչացն զնա զանձինս  
իւր առնէ վանս: Զինչ իսկ ոգին բնակեալն ի մեզ. ար- 20  
զեւք և նա զներմարդութեան ի բաց լնու տնաւրէնութիւն,  
զոր ի ձեռն միայնւոյ Որդւոյ գործեցնալ ասեւիք, ամենե-  
ցումն փրկութեանն սակս և կինդանութեան. տար ի բայ  
յայսպիսոյ աւելորդէ և անխմաստէ ամնանկին ունայնաբա-  
նութենէ. նուաստացոյց այսուհետեւ զինքն ի կերպի և 25  
հանգիտութիւնն Աստուծոյ և Հաւր Բանն, յ(որժ)ամ \*\*\* 57v.  
եղեալ մարմին. ըստ որում ասէ Յովաննէս, ծնանի ի  
կնոջէ, «որ ծնելութիւնն ունէր զ'ի յԱստուծոյ»<sup>2</sup> և ի Հաւ-  
րէ, և զըստ մեզն համբերեաց կրել վասն մեր:

Եւ յետ այդոց.

30

Այսպէս իմասցիս զ' ի յԱստուծոյ բուսեալն Բան, զկա-  
մաւորն համբերել թափումն, այսպէս նուաստացոյց զինքն

\* ) Մի անվերծանելի բառ.      \*\*) մազաղաթը ծակծկուած է  
և փշացած.      \*\*\*) մի բառ ծակծկուած տեղում.      \*\*\*\*) փակազծի  
մէջ դրուածը լրացրել ենք մենք. այստեղ էլ մազաղաթը ծակծկուած է.

1) Յավհ. ԺԴ. 23.

2) Ա. Յավհ. Ե. 1.

կերպ ծառայի առեալ ըստ բնութեան իւրում ազատն, այս-  
պէս զսերմանէ Աքրահամու բռնահարեաց և հաւասարեաց  
արեան և մարմնոյ: Զի թե մարդ իմանի սոսկ ըստ  
մեզ, իբր միւսոյ քան զինքն բնակապէս բռնահարեաց  
5 զսերմանէ Աքրահամու, և իբր իւրում մարմնոյ հաւա-  
սարել ասի, զի ըստ ամնայնի եղբարց նմանեսցէ. քանզի  
ոմանց նմանիլ ասացեալն, յաննմանէ ուստեմս առ պարտն  
նմանիլ ընթանայ: Բռնահարեաց այսուհետեւ զսերմանէ  
10 Աքրահամու, և հաւասարեաց արեան և մարմնոյ Աստու-  
58r. 10 ծոյն Բան, իւր արարեալ մարմին զ' ի կնոջէն, զի մի միայն  
դոյիցէ Աստուած, այդ ահա և | մարդ եղեալ ըստ մեզ  
իմանայցի միաւորութեամբն:

Նորին՝ յերկրօրդ թղթոյն որ առ Նեսորիոս, որոյ  
սկիզբնն ունայնաբանեն է.

15 Քանզի ոչ ասեմք եթե բանին բնութիւն յայդ փոխ-  
արարեալ, եղի մարմին այդ և ոչ եթե ի բոլոր մարդն փո-  
խարկեցաւ, որ յանձնէ և ի մարմնոյն էր, այդ զայն առա-  
ւել, եթե մարմին ներանձնական անձամբ բանականաւ,  
միաւորեաց Բանն իւր ըստ ենթակացութեան՝ անձառա-  
20 բար և անպարիմացապէս եղի մարդ և հմայեցաւ որդի  
մարդոյ. ոչ ըստ կամելութեան միայն կամ հաճելութեան,  
այդ և ոչ իբր առընդունելութեան զիմաց միայնոյ:

Եւ յետ այդոց.

Այսպէս զՔրիստոս մի և Տէր խոստովանեմք. ոչ իւր  
25 մարդ երկրպագակցենք Բանին, զի մի հատման երեսոթիւն  
առ ի ներքս գատեսցի սակա ասելոյ զիիցն, այդ իրը մը  
և գնոյն երկրպագելով. զի ոչ աւտար բանին մարմինն իւր,  
ընդ որում և ինքեան\* դահակցէ Հաւր, ոչ իրը եր-  
կուց գարձեալ գանակշաւզաց որդւոց, այդ իւր միոյ ըստ  
58v. 30 միաւորութեանիւրով մարմնով, իսկ եթե ըստ ենթակա-  
ցութեան միաւորութեանն, կամ իրը անմերձանալի \*\*,  
կամ անպեղաղէշ խորեմք, անկանիմք յերկուս ասել  
որդիս, քանզի հարկ է զամենայն որդւու և ասել զիմն  
մարդ առանձինն որդւոյն կոչութեամբ պատուեալ, իսկ  
35 զմիւսն առանձինն դարձեալ զիստուծոյն Բան որդւութեան  
անուն իսկ և ինչ ունելով բնականապէս:

\* Կուսանցքում՝ «իւրոյ».

\*\*) Անդ՝ «անհասանելի».

Եւ դարձեալ.

Քանզի ոչ եսասաց զրիցեալն, եթե Բանն մարդոյ դէմն  
միաւորեաց ինքեան, այդ եթ' եղեւ մարմին<sup>1</sup>. իսկ մարմին  
եղանիլ զիանն ոչինչ այլ է, եթ' ոչ զի նմանապէս մեզ  
հաւասարեաց արեան և մարմոյ և իւր մարմին զմերն եա- 5  
րար, և յառաջ եկն մարդ ի կնոջէ, ոչ ի բաց արկեալ զգոլն  
Աստուած, և յԱստուծոյ ծնանիլ, այդ և առնով մարմին  
մնալ որպէս էրն:

Նորին՝ յերրորդ բղրոյն որ առ Նեսորիոս, որոյ սկիզբն  
Փրկչին մերոյ. 10

Այդ և ոչ զայն ասեւկը եթե բնակեաց Աստուծոյն Բան  
իրը ի մարդում հասարակականի զ' ի սրբոյ կուսէ ծնից-  
եալն, զի մի աստուածազգեստ|մարդ իմանայցի Քրիս-  
տոս:

Նորին՝ ի պարապմանցն. 15

Եթ' աստուածազգեստ էր մարդ Քրիստոսն, բազին  
ապա և ինքն եղեւ Աստուծոյ. իրը արդեւք ի մեզ է Քրիս-  
տոսն, արդեւք իրը բազին ի բազինս. եթե մանաւանդ իրը  
Աստուած ի բազինս հոգւովն, իրը արդեւք է կենդանարար  
մարմին իւր և միայնոյ. քանզի պարա գոլ այսպիսի և 20  
զայլոցն, յորս բնակեաց բոլորեցունն Աստուած:

Նորին՝ ի պարապմանցն եւ ունի զմակագրութիւնն  
պարապումն, ի՞բ պարտ իմանալ զիանն մարմին եղեւ եւ  
տաղաւարեաց ի մեզ<sup>2</sup>, եւ զի՞նց յեղանակ առաքի Աստուած  
ելով Բանն եւ ի՞բ յատուկ ինքնան մարմին ասի. 25

Նկատեա ինձ զինուածազան աւետարանիչն զբուրն  
քաջարուեստարար պսակել կամեցեալ մարդոյն բնութիւն,  
ասաց իսկ ի մեզ տաղաւարել զիանն, ոչ այլոյ իրեւք սակա,  
որպէս ինչ թուի գործեցեալ Բանին զներմարդութիւնն,  
եթ' ոչ զի և մեք զնա իրը ընդունելութեամբ վարթամաս- 30  
շուք Սրբով Հոգւովն, զորդեղութեանն ինչն չահիւք:

Նորին՝ դարձեալ ի պարապմանց, իսկ ունի զմակա-  
ղրութիւն պարապումն, զի ոչ աստուածազգեստ մարդ  
զՔրիստոսն, այդ եւ ոչ վայրապար իմարդ բնակեաց Աս- 59v.

1) Հմմտ. Յովհ. Ա. 14.

2) Հմմտ. Յովհ. Ա. 14.

ուղարձուն Բան, այդ եղեւ առաւել մարմին, կամ եթե կատարելապէս մարդ, ըստ գրիցելումն.

Մարդ այսուհետեւ եղեւ ճշմարտապէս, այն որով եարար զյաւիտեանս Աստուածն և Հայր և ոչ որպէս կարծեն 5 ումանք ի մարդում եղեւ, զի և իբր մարդ իմանացի առ ի մէնջ, զԱստուած ունելով դարանացեալ. զի եթե ասեն զայս այսպէս ունել, և հաւատացին ճշմարտապէս, աւելորդ յայտնեցի ասելով երանելի աւետարանիչն Յովաննէս. «Եւ Բանն մարմին եղեւ. զի զի՞նչ ևս պէտք ներմարդութեանն 10 և մարմնանալն ասել զիստուծոյն Բան, եթ՝ ոչ եղեն մարմին՝ զըստ մեղն եղանել զեկուցանէ. և ներմարդութեանն զաւգութիւն մարդ ըստ մեզ եղեալ ցուցանէ զնա հանգերձ մնալով և գեր զմնզ մանաւանդ և գեր քան զամնայն արարած: Արժանաւոր հա հարիմ զի մտածութեանցն 15 քաջաց դիւտս ի վերայ բերել որոց ասացին, և հաւատացուցանել, եթ՝ եղեւ մարդ Մէնածինն և է Աստուած և ընդ մարմնոյն, և ոչ ևս առաւել բնակեաց ի մարդ, աստուածազգեստ զնա կատարելով. որպէս ներքեմն և յայդս, որ և եղեն ընդունիչք Աստուածութեանն նորա:

60r. 20 Բ. Երկրորդ զլուխ նայնոյութեանց ի քղոյն Ղեովնայ.

Ապրեցելոյ այսուհետեւ յատկութեանն երկաքանչիւրոյ բնութեանն, և առ մի դէմս եկակցելոյ ամբարձաւ յԱստուածութեանէն նուաստութիւն, իսկ ի կարութեանէն 25 անկարութիւնն և յանմանէն մահկանացուն:

Պիտառութիւնք հերձուածողացն, որոց բաղաձայննեն նախասացեալին ի Ղեովնայ.

Պաւղոսի Սամօստացւոյ հերձուածողի նայնոյութիւնք.

Բանն ի Հոգւոյն Արբոյ ոչ ծնաւ. Բանն մարդ ոչ էր, 30 ի մարդ բնակեաց Ապրահամ, Դափիթ. Բան ոչ ծնաւ, այդ նոքա ամենեքեան, ածին ի փոխունակութենէ, զ' ի ծնելութեանէն առ յոյս կազմեալ փրկութիւն ի կոյսն Մարիամ:

Նեստորի հերձուածողի նայնոյութիւնք եւ կան յերկ- 85 բարդ զիւսն երանելիոյն Կիւրիղի որ զնեստորե.

Երկոցուն ճոխութիւնն հաւասար, երկոցուն նոյն արժանաւորութիւն բնութեանցն մնացելոց, խոստովանեազարժանաւորութեանն միաւորութիւն։

Նորին՝ յերկրորդ գրոցն զիստ Զ.

Եւ ոչ դարձեալ այդ որդի և այդմիւս, այդ ինք 5 60v. որդի է կրկնակ. ոչ արժանաւորութեամբ, այդ բնութեամբ։

Նորին՝ յերրորդ գրոցն զիստ Զ.

Զկրկնակս առ Քրիստոսն որոշեմ բնութիւնս. քանզի կրկնակը ահա բնութեամբ, իսկ արժանաւորութեամբ միականք. քանզի բնութեանցն ճոխութիւնն սակս շա-10 րայարութեանն մու բնութեանցն նընտանի կարգաւորութեան յամննայն ժամ մնացելոց, իսկ արժանաւորութեանն շարայարեցելոյ առ ճոխութիւն որպէս նախասացաք միական։

Թեւողորիթայ հերձուածողի նայիսյօւքիւնք ի հա-15 կանառութենեն որ առ երրորդ նզովումնն.

Ի՞ր արդեւք ամպարշտութեանն գրէ զյատկութիւն բնութեանցն բաժմնաւզս զնախայաւիտենին Աստուծոյ և զիերջնովք աւուրբք առեցելոյ մարդոյն։

Նորին՝ ի հականառութենեն հինգերրորդի նզովին. 20

Ապ' ուրեմն հասարակութեան անուամբն վարեցեալք իր մի որդի երկրպագեմք զառաւղն և զառեալն, իսկ դնութեանցն զանազանութիւնն ձանաշեմք։

Նորին՝ ի հականառութենեն ուրերրորդ նզովին.

Ապ' ուրեմն երկաքանչիւրոյ բնութեանն յատուկն 25 61r. ասելով . . . \* խոստովանեմք Քրիստոս։

Նորին՝ ի հականառութենեն տասներրորդ նզովին.

Ոչ ի մարմնոյ բնութիւն ան(յ)եղին յեղաւ բնութիւնն, այդ մարդկային եւառ բնութիւն, և զայս դեր զհասարակական զքահանայապես կացոյց։

30

\* ) Մի բառ անվերծանելի.

**Հականառութիւն առ ասացեալսն ի Ղեղվնա  
եւ նախ բան զնա ներձուածողացն.**

Եթե մարդ բացակատարեցաւ հասարակական նար-  
դանդի կուսին և յետ այտորիկ յարակցեաց Աստուածումն,  
5 Բանի ունակութեան շարայարութեամբ, քանդի զայս ահա  
եղիր քեզ հիմն ամպարչութեան, որպէս և Նեստորի թուի  
և այլոց քոց վարդապետաց, յէ (?) մարդ, կարէ ապրիւ  
յատկութիւն, երկա(քա)նչիւրոյ բնութեանն, որպէս գուց  
աղանդես. զի և մի Աստուածն Բան մարդ եղեալ անյե-  
10 ղարար և ըստ ճշմարտութեան հաւատացի, և մի յարակ-  
ցեալն մարդ Աստուած գոլ հաւատացի ըստ ճշմարտու-  
թեանն. ապ' ուրեմն և ոչ ի կուսէ Աստուած ծնիցաւ ըստ  
քեզ, այդ մարդ սոսկ. քանդի յատուկ մարդոյ զ' ի կնոջէն  
61v. ծնանիլ. և իբր|Աստուածածին Կոյսն քարոզի ընդ երկնաւու,  
15 ևթ' ոչ Աստուած է ծնիցեալն ի սրբոյն կուսէ մարմնացեալ,  
որոյ և նուաստքն և կարեորք, ախտակրութիւնք և առնե-  
լութիւնք յատուկ իւր ըստ ճշմարտութեան է. և իբր  
երկաքանչիւրն բնութիւն, որպէս դու ասացեր, ի մի դէմ  
կարէ էակցիւ ըստ մարդկայինս իմացմունս. ուր մտանելոյ  
20 դիմին միոյ բնութեան, ասան ինձ: Քանդի ոչ է բնութիւն  
անդէմ, այդ է յայտ իբր ըստ ընտանութեան ի մեն (?) որ-  
պէս և ի վերայ մեր. այսպէս համարիս զԱստուածն Բան  
բնտանացեալ ունակարար նուաստին և անկարի և մահ-  
կանացու մարդոյն, զաստուածային բնակութիւն փարթա-  
25 մացելոյն, որպէս և Նեստորի թուի, իբր յորժամ ասէ  
յաղադս Սամուէզի Աստուած. «Ոչ զքեզ անարգեցին, այդ  
զիս, առ յոչ թագաւորել ի նոսա».<sup>1)</sup> և «Լսաւզն ձեզ ինձ  
լսէ. և արհամարհիչն զձեզ զիս արհամարհէ»<sup>2)</sup>, և «Զորչափ  
արարէք միում այսոցիկ տրափոց, ինձ արարէք»<sup>3)</sup>, ի նոյն  
30 իսկ Փրկչէն ասացեալ: Այդ ոչ այսպէս ի վերայ Քրիստոսի  
62r. խորհիմք, մի լիցի. |Կ ոչ մարդկայնովք մտածութեամբք  
զըստ նմայն խորհուրդ արտախուզել ձեռնարկեմք մեք  
այդ հաւատամք որպէս առընկալաք ի սրբոյ և Աստուածա-  
շունչ գրիցելոյն\*, զի վասն մեր աղքատացա(ւ) կամաւո-  
35 բապէս, բառացի ելով Աստուածոյն Բան և եղն մարդ ըստ  
ճշմարտութեան մնալով անյեղի իբր Աստուած, և զամե-  
նայն կարացեալ, և յատուկ իւր մարմնացելոյն Աստուածոյն

\* ) Լուսանցքում՝ «գրութենէն».

1) Ա. Քակ. Հ. 7. 2) Ղուկ. Ժ. 16.

3) Մատթ. Խ. 40.

Բանի հաւատամք դող և զաստուածավայելուչան և զմարդկայինս սակս ըստ մեզն տնաւրէնութեան. քանզի ըստ բնութեան եալ Աստուած և մնացեալ միշտ Աստուած, եղև ըստ տնաւրէնութեան մարդ սակս մերոյն փրկութեան:

Քանզի ոչ բնութեան ունի Բան Աստուծոյ մարմնաւորութիւնն, այդ տնաւրէնութեան, գեր զբնութիւնն գործեցելոյ յԱստուծոյ ի հասարակական և մարդկային մերմէ բնութեանէս, կամ գոյացութենես, սակս որոյ և հոմաբուն, և հոմագոյ և հոմասեռ մեզ ասի ըստ տնաւրէնութեանն Բանի կամ

զ' ի կնոջէն ծնելութենէ. այդ և ոչ բնութիւն և ոչ գոյ- 5

յացութիւն հասարակականի ուրումն|մարդոյ ասացեալ է

62v.

երբեք անկրականն և հոմասեռն մեզ մարմին Աստուծոյն

Բանի. զի և ոչ ենթակացեաց ըստ (ը)նքեան, քանզի ի

պարաւութեան \* Բանին զենթակացութիւնն ընկալաւ.

այդ մարմին Քրիստոսի ասի և մարմին Աստուծոյն Բանի 15

և մարմին կենդանագործիչ յամննեցունց ուղիղս խորհել

սովորելոցն, ասի և հաւատանայ: Քանզի և Քրիստոսի քա-

հանայագործք ի ձեռն փոխատուութեան աստուածայնոց

խորհրդոցն այսպէս զնա քարոզել սովորեցաք ժողովրդոց,

նոցա առ լսելով մեզ զամէնն, և ոչ ոք երեխ ասացեալ 20

զնա ի ժամանակի բաշխմանն այնորիկ, մարմին հասարա-

կական մարդոյ կամ բնութիւն մարդոյ կամ գոյացութիւն

մարդոյ, այդ մարմին Աստուծոյն Բանի կենադործիչ զնա

քարոզեմք, ըստ նորին Տեառն վարդապետութեան և առ-

տուութեան: Դադարեսցեն այսուենետն զերկուան բնութիւնն 25

մեզ ի սահման հաւատոյ քարոզիչքն, իբր աւտարացեալք

յուղիղ խորհել սովորելոցն, որպէս ուսուցին զմեզ խա-

կըզբանէ ինքնատեռք և սպասաւորք եղեալք|Բանին<sup>1</sup> և յետ 63r.

նոցայն ուղղափառք վարդապետք եկեղեցեաց եղեալք:

Պիտառութիւնք երանելեացն մերոց հարանց ՅՈՒ ԵՎ Եպիսկապոսաց ճամատիչք առ ի մէնջ ասացելոցն, իսկ ի բաց տապալիչք զամպարտաց նախասացելոց ներձուածողացն աղանդս.

Երանելւոյ Յուլիայ Եպիսկապոսապետի Հռովմայ՝ ի թղթոյն որ առ Պրոգրոկիոն. 35

Կատարեալ Աստուած նըմարմին, կատարեալ մարդ նոզիոջ. ոչ երկու որդիք, իբր մին հարազատ որդի վերառ-

\* Եռաւանցըում՝ «յղենալ».

<sup>1</sup>) Ղուկ. Ա. 2.

նլով զմարդ, իսկ միւսն մահկանացու մարդ վերառեալն յԱստուծոյ, այդ մի Մէնածին նորինի մէնածին ի վերայ երկրի.

Երանելոյ Փիդիկայ եպիսկապոսապետի Հռովմայ եւ վկայի.

5      Իսկ յաղադս մարմնաւորութեան Բանին և հաւատոյ, հաւատաւոք ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, զ' ի սրբոյ Կուսէ Մարեմայ ծնիցեալն. զի ինքն է Աստուծոյն մշտնջենաւոր Որդի և Բան, և ոչ մարդ յԱստուծոյ առեալ, զի այդ իցէ քան զնա. քանզի և ոչ մարդ եառ Աստուծոյն Որդի, 10 զի այդ իցէ քան զինքն, այդ Աստուած ելով կատարեալ, եղեւ համանգամայն և մարդ կատարեալ, մարմնացեալ ի Կուսէ:

63v.      Երանելոյ Կիւրիդի եպիսկապոսապետի Աղեքսանդրեայ, Դ. Եղովմանէ.

15      Զամննայն այսուհետե զյաւետարանսն ձայնա, և զմարդկայինս և զաստուածավայելուչս միում դիմի առյարեսցուք. վասն զի մի որդի հաւատաւոք գոլ զՔրիստոս Յիսուսն, այս է ներմարդացեալ և մարմնացեալ զԱստուծոյն Բան:

Եւ յետ սակաւուց.

20      Իսկ տարակացուցիչքն և ի բաց բաժանիչք ի մարդ յատկապէս իբր այդ ելով քան զ' ի յԱստուծոյն Բան և յԱստուած յատկապէս, իբր այդ գոլով որդի, երկուս ասելով որդիս, ստորաբերին յիրաւի զաւրութեամբ առաջակացելոյ նզովմանս:

25      Նորին' ի բդրոյն որ առ Նեստորիոս.

Իսկ զնաւետարանս Փրկչին մերոյ ձայնս, ոչ ենթակացութեամբք երկուք, այդ և ոչ զիմաւոք երկուք բաժանեմք. զի ոչ է կրկնապատիկ մուն և միայն Քրիստոս, թեպէտ և յերկուց իմանայցի. և զանազան իրաց իմաստութիւն զանբաժանելին հաւաքեալ, որպէս ահա և մարդ յանձնէ իմանի և ի մարմնոյ, և ոչ կրկնապատիկ առաւել, այդ մու յերկակացն:

Նորին' յորոց զնեսորէ.

64r.      Արդ՝ ոչ վասն զի մարմին առեալ յԱստուծոյ|Հաւրէ

Բանն յառաջ եկն մարդ ըստ մեզ, այսը սակա պատճառի  
անուանիցի և կրկնապատիկ :

Նորին՝ յառաջնական բանեն.

Որպէս այսուհետեւ եղև յատուկ \* մարդկութեանն  
Մէնածինն, սակա միաւորելով Բանին ըստ պատահմանն 5  
տնաւրէնականին, այսպէս յատուկ \*\* Բանին և ի բազում  
եղբարս, և նախծին սակա միաւորելոյն մարմնի:

Նորին՝ ի թղթոյն որ առ Վաղերիանոս.

Ազէ, ուր ուրեք ապա մին դէմ, ասա ինձ. քանզի մի  
դէմ Քրիստոսի պատճառեն ասել, իսկ երկուս ենթակացու- 10  
թիւնս առանձինն և ըստ մասին կացելոց. եղիցին ուրեմն  
ամենայնիւ և դէմք երկու. այդ մտանեն աւրինադիղք իւ-  
րեանց թուեցեալքն, իբր ուզգապէս ունելով ամենայն ու-  
րեք և ամենայնի հարստացուցանել. քանզի բաժանելով,  
սաէ, զենթակացութիւնսն, միացուցանեմք զդէմն, և իբր ոչ 15  
անհաւան և անուսումն և անհնարական:

Նորին՝ ի նոյն թղթոյ.

Քանզի մի Քրիստոս և որդի խոստովանել ստեղծանեն,  
և մի նորադէմ ասեն. իսկ բաժանելով յենթակացութիւնս 64v.  
երկուս զատուցեալս և տարազնացեալս իրերաց, յամենայն 20  
զիսորհրդոյն թիւրեն բան:

Երանելոյն Թեւոդոսեայ եպիսկապոսի Անկիւրայ.

Քանզի անկարելի համանգամայն և պահել զմիաւո-  
րութիւնն, և զիւրաքանչիւր ըստ յատկութեան դիտել:

Գ. Երրորդ գլուխ նայիոյութեանց ի թղթոյն 25  
Ղեւովնայ.

Քանզի պահէ երկաքանչիւր բնութիւն անհնատա-  
րար \*\*\* զինքեանն յատկութիւն. և որպէս ոչ ի բաց բառ-  
նայ զժառային կերպ Աստուծոյ կերպն, այսպէս զԱստու-  
ծոյ կերպն ծառային կերպաւորութիւն ոչ պակասեցուցանէ: 30

\* ) Լուսանցքաւմ՝ «իւր»      \*\*) Անդ՝ «իւր».      \*\*\* ) Անդ՝  
«անհուաղաբար».

**Պիտառութիւնք հերձուածողացն, որոց ձայնակիցք նախասացեալքն ի Ղեղվնայ.**

**Նեսուրի հերձուածողի հայնոյութիւնք.**

**Ասա զառաւղն ԿԲՇ՝ Աստուած, յաւել զառեալն եթե  
5 ծառայի կերպ, ի վերայ ած յետ այսոցիկ զշարայարութեանն  
արժանաւորութիւն, եթե երկոցուն ճիխութիւնն հասարակ,  
զի երկոցուն նոյն արժանաւորութիւն բնութեանցն մնացե-  
լոց, խոստովանեա զարժանաւորութեանն միաւորութիւն:**

**65r. Թեւողորեայ հերձուածողի հայնոյութիւնք.**

**10 Մի նորապէս(?) բազում անգամ ասացի զիառարա-  
նութիւնն առաջարերեմք Տեառն Քրիստոսի, և զնոյն ի մի-  
ալին Աստուած և մարդ խոստովանեմք. զի զայս զմնզ միա-  
ւորութեանն ուսոյց Բան, իսկ զբնութեանցն յատկութիւնս  
ոչ խորեմք ասել:**

**15 Նորին՝ կամ եթ՝ անդրեայ.**

**Քանզի որդութեանն յետ միաւորութեանն ներկա-  
քանչիւրում բնութեանն մի, ոչ անջատելոց յիրերաց. զի  
ոչ յետ միաւորութեան անջատումն ի վերայ եղե, քանզի  
մնայ յաւիտենական միաւորութիւնն:**

**20 Նորին զնզովմանն կամ եթ՝ անդրեայ.**

**Եւ ովլ առընկալցի բնական զաստուածային միա-  
ւորութիւնն խորհրդոց տնաւրէնութեանն. քանզի եթե  
բնական միաւորութիւն, ուր չնորհն, ուր աստուածային  
խորհուրդն. քանզի բնութիւնք, որպէս ուսաք, մի հաղ առ-  
25 կարգաւղին Աստուծոյ կարգեալք, հարկաւորաց հետեւու-  
թեանց ծառայեն:**

**Հականառութիւն առ ասացեալսն ի Ղեղվնայ  
եւ նախ բան զնա հերձուածողաց.**

**Դարձեալ նայսոսիկ գմնէարար և անծածկելի դի-  
65v. 30 մաւ բաժանելձեռնարկէ զՔրիստոսի խորհուրդն. քանզի  
զերկաքանչիւր բնութիւնն և նյառաջ ասացեալսն եղ ի վե-  
րայ Քրիստոսի, երկուս բնութիւնս սահմանելով ի նմա,  
որպէս և յայսոսիկ, և ամբողջ պահիլ երկաքանչիւրում բնու-  
թեանն զյատուկս նորա և զվայելուչս, որպէս նմա թուի.**

իսկ աստանաւր յաւել և զաննուաղաբարն. իսկ եթե  
աննուաղաբար զառանձինսն մարդկային բնութիւնս և ի  
վերայ Քրիստոսի պահեաց, որպէս այս նորս քարոզ հնոյ  
հերձուածոյս աղանդէ, իսկ յատուկ մարդոյ բնութիւնս  
մնղանալն եղեւ ի ձեռն Աղամայ պատուիրանաղանցու- 5  
թեանն, փախիցնեք զհայհոյութեանցն նորա զանտեղին,  
քանզի ոչ եւրար մեղս, ըստ էսայեայ ձայնին, բարձիչն  
զմեղս աշխարհի<sup>1</sup>. քանզի զմեղս մեր ինքն վերատա-  
րեաց մարմնով իւրով ի վերայ փայտին, որպէս ասէ ա-  
ռաքեալ<sup>2</sup>: Ո՞վ այս արդեւք, մարդ սոնկ. քաւ լիցի, այդ<sup>10</sup>  
մարմնացեալ Աստուածն, Բան. զի մեղաւքն մնոեալք,  
արդարութեամբն կէցէմք. քանզի հաւատարիմ է և ար-  
դար միայն Յիսուս Քրիստոսն իբր Աստուած, | զի\* 66r.  
թողդէ մեզ զմեղս և մաքրեացէ զմեղ յամենայն անաւրէ-  
նութենէ, ըստ Յովհաննու ձայնին<sup>3</sup>: Եւ աւտար բնութեան 15  
մարդոյ իւրով իշխանութեամբ թողուկ զմեղս, իսկ յա-  
տուկ Աստուածոյ: Եւ թողուկ զմեղս Քրիստոս իբր Աստուած.  
քանզի զայս ուղղագործութիւն միայնում Աստուածոյ վա-  
յելել և հրեայքն առվկայեցին ասելով, ոյ կարէ զմեղս  
թողուկ, բայց միայն Աստուած<sup>4</sup>. ուրեմն ցուցաւ Քրիստոս 20  
յայսմանէ ուղղագործութենէ, քանզի էր այս և է և նղիցի  
յաւիտեանս: Եւ իբր երկրպագեն երևեցելում համբակին  
ի Բեթղէեմ մոգքն, քանզի ոչ վայելուչ է երկրպագել եթև  
ոչ միայնում Աստուածոյ. և իբր Փրկիչ ծնիցեալ հովուացն  
աւետարանեին հրեշտակըն փառաբանելով, եթ' ոչ Առ- 25  
տուած էր մարմնացեալ անյեղապէս ծնիցեալն ի սրբոյ  
կուտէն, քանզի Աստուածոյ յատուկ մէնւոյ ապրեցուցանել  
զիւր ժողովուրդ ի մեղաց իւրեանց ըստ հրեշտակապետին  
Գարրիէղի աւետարանութեանն<sup>5</sup>, և ոչ մարդկայնոյ բնու-  
թեան. իսկ իբր սաղմնազգեցեալն յարգանդի կուսին| 30  
թարձրեալն ասէր մարդարէն Զաքարիաս յետ Յովաննու  
ծնընդեանն հոգւով աստուածայնուով շարժեցեալ, քանզի և  
դու ասէ, մանհւկ, մարդարէ թարձրելոյ կոչեցիս<sup>6</sup>, և ըստ

\* ) 66. և 67.-րդ թերթերի վերին կէսերը կարկատած են  
թղթագ և այդ կարկատանի վրայ է զբուած այն, ինչ որ մի ժամանակ  
մազաղթէ վրայ է եղել:

<sup>1)</sup> Հմմտ. Եսայի Եֆ. 4—5., Ա. Պետր. Բ. 22.      <sup>2)</sup> Ա. Պետր.  
Բ. 24.      <sup>3)</sup> Ա. Յովհ. Ա. 9.      <sup>4)</sup> Մարկ. Բ. 7., Ղուկ. Ե. 21.  
<sup>5)</sup> Մատթ. Ա. 21.      <sup>6)</sup> Ղուկ. Ա. 76.

միոցեքն։ Բարձրեալ ասելով և Տէր զիմմանուելն, որում  
բնութեան յարմարական այսպիսին աննուազապէս ասասցէ  
հնոյ հայնոյութեան թարգմանիչն։ Ապա ի վերա բերէ  
պատճառաբար և ունակատէս աննուանելով ի յառաջասա-  
ն ցեալոն զմին դէմ։ Իսկ յայսոսիկ և ոչ զայս պատճառեաց,  
այլ երկուս եղ կերպս Քրիստոսի, զմին ծառայ քարոզելով.  
իսկ զմիւսն Աստուած և զմին ի կերպի մնացեալ ծառայա-  
կանի, իսկ զմիւսն յԱստուծոյ կերպի. զի մի զկամաւոր  
զթափումն և զաղքատութիւն իւր ասիցէ Աստուծոյն Բանի,  
10 և մի կենագործիչ զսուրը մարմինն Քրիստոսի հաւատացեալ  
ցուցցի. քանզի աւտար է կենագործել զմեռեալս ծառա-  
յական կերպին, իսկ յատուկ առաւել Աստուծոյ, զամննայն  
կենդանածնել հարստին. և իր որդին մարդոյ հանդերձեալ  
է դատել զաշխարհ արդարութեամբ, ըստ իւրում Փրկչին  
67r. 15 ձայնի, եթե մնայ ծառայ անընդհատաբար որպէս ամենայն  
մարդ։ Քանզի Աստուծոյ դարձեալ յատուկ է դատելն  
զաշխարհ արդարութեամբ. ասէ իսկ սաղմոսերգակն, «Զի  
Աստուած դատաւոր է, արդար և հարուստ և երկայնա-  
միտ»<sup>1</sup>. և զարձեալ «Աստուած դատաւոր»<sup>2</sup>։ Ապա ուրեմն  
20 ոչ երկու բնութիւնք Քրիստոս, այդ մի բնութիւն Աստու-  
ծոյն Բանի մարմնացելոյ վասն մեր. «Զի զմնզ ազա-  
տեացէ ի ծառայութենէս ապականութեանն յազատութիւն  
փառաց ծննդոցն Աստուծոյ»<sup>3</sup>, որպէս ասէ Պաւղոս. Եւ  
դարձեալ՝ «Ոչ ևս ևս ծառայ, այդ որդի և ժառանգ Աստու-  
25 ծոյ»<sup>4</sup>։ Իսկ եթե մեք արժանաւորեցաք Քրիստոսիւ իր  
ազատութեան շնորհիչն զ' ինա հաւատացելոցն, ոչ իցէ  
ազբեւր և տուիչ ամենայն բարեաց։

Պիտառութիւնն երանելեացն մերոց հարանց  
եւ եպիսկապոսաց հաստատիչ զառ ի մէնջ ասացե-  
30 լոցն, իսկ տապալիչ զամպարիւսն նախասացելոց  
ի ներձուածողացն աղանդս.

Երանելոյ Պիտառութիւնն եպիսկապոսապետի Աղեքսանդ-  
րեայ եւ վկայի.

Ուստի և աւետարանիչն ճշմարտէ ասելով. «Բանն  
67v. 35 մարմին եղև և տաղաւարեաց ի մեզ»<sup>5</sup>, Յայտ է զի յայնժամ,  
յորմէ հետէ հրեշտակն ողջագուրեաց գկոյսն ասելով, «Խըն-

<sup>1)</sup> Սաղմ. է. 12.

<sup>2)</sup> Սաղմ. Խթ. 6. չդ. 7.

<sup>3)</sup> Հռովմ. Բ. 21.

<sup>4)</sup> Հմմա. Դադաս. Դ. 7.

<sup>5)</sup> Յովհ. Ա. 14.

դմ շնորհաւորեալդ, Տէր ընդ քեզ<sup>1</sup>, քանզի Տէրն ընդ  
քեղ այժմ է լսել Գաբրիելի, փոխանակ Աստուածն Բան  
ընդ քեզ: Քանզի նշանակեաց զծնիցեալն արգանդի և  
մարմնացեալ, որպէս և զրեալ է. «Հոգի սուրբ եկեսցէ առ  
քեզ և զաւրութիւն Բարձրելոյ հովանասցի քեզ. աակս որոյ 5  
և ծնիցեալն սուրբ, կարդասցի Որդի Աստուծոյ»<sup>2</sup>:

Երանելւոյ Ատեիկեայ եպիսկապոսի Կոստանդնու-  
պալսի.

Այսաւր Քրիստոս Տէրն զմարդասիրութեանն (ծ)նունդն  
ընկալաւ, քանզի աստուածական արժանաւորութեանն 10  
նախ քան գիմնարկութիւն աշխարհի նախագայր. ապա  
սոցին ի վերայ բերէ դարձեալ. մարդասիրութեան Բանն  
թափի, անթափելի զբնութիւնն ելով, քանզի զինքն թափեաց  
կերպ ծառայի առեալ. անմարմինն վասն քո մարմնանայ,  
քանզի Բանն մարմին եղեւ. որոնման ոչ ենթանկեալն 15  
սակս անմարմին բնութեանն շաւշափի, անսկիզբնն ընդ  
սկզբամբ եղանի մարմնականաւ. կատարեալ . . . \* ան-  
յեղին նախահատէ, փարազրաւողն զերկինն ամպս և փար-  
թամն նիջավանի ծնանի և խանձարրապատի, Թագա-  
ւորս ի մաուր դնանի:

68r.

Երանելւոյ Կիւրիղդի, եթե մի է Քրիստոսն.

Ոչ բաժանելի ուրեմն, որպէս ասացի, ի յատկական  
միւսութիւն զըստ ի բաց յիրերացն զոլ և բատ մասին,  
այդ շարաբերել առաւել ի միւսուրութիւն անհատանելի:

Նորին՝ ի լուծմանն Պ. նզովմանն.

25

Այդ և ոչ կամեն յետ միաւորութեանն բաժանիլ յեր-  
կուս զմիացեալսն և յիրերաց բացագնալ, իցիւ արդեւք որ-  
պէս ինձ երեխ, ամենեին անբամբաս և արատոյ մեկուսի:

Նորին՝ որ զթեսդրեայ.

Ի՞ր արդեւք աղքատացաւ. զի Աստուած ելով բնու- 30  
թեամբ և Որդի Աստուծոյն և Հաւը, եղե մարդ և ի զաւակէ  
Դաւթի. ծնանի ըստ մարմնոյ, և ծառայավայելուչ ստորա-

\* ) Մի բառ անկերծանելի.

1) Ղուկ. Ա. 28. 2) Ղուկ. Ա. 35.

մտեաց \* չափ, այս է զմարդկայինն, ի կերպում Աստուծոյ  
և Հաւը, որով ամենայնքն և նորուն ամենայնքն և  
68v. բոլորեցունն յարդարիչ, մարդ լինելով զըստ մեզամարդ-  
կոթեանն չափ ոչ ամաչէ:

5      **Դ. Գլուխ հայնոյութեանց ի թղթոյն Ղեովնայ.**

Մինչդեռ երկախումբն(?) լնդ միմեանս է, և մարդոյն  
նուաստն և մեծութիւն Աստուածութեանն. քանզի որպէս  
յողորմնեն Աստուած յեղունն ոչ ընդունի, այսպէս մարդն  
մեծութեամբ աստուածային արժանաւորութեանն ոչ ծախի:

10     **Պիտառութիւնք ներձուածողացն, որոց բաղա-  
ձայնք նախասացեալին ի Ղեովնայ.**

Նեսորի ներձուածողի Ժ. տետրատեն հայնոյութիւնք.

Եւ զըստ մարմնոյ Քրիստոսն յառ Աստուածն Բան  
շարայարութենէ Աստուած անուանեմք, զերսելին գիտե-  
15 լով իրը մարդ. լներ զերկուսեան Պաւղոսի Քարոզչի. ի  
հրեից ասէ Քրիստոսն ըստ մարմնոյ, էակն ի վերայ ամե-  
նայնի Աստուած <sup>1)</sup>. խոստովանեա զմարդն նախկին, և յայն-  
ժամ շարայարութեամբ Աստուծոյն Բանի աստուածաբա-  
նեա զերսելին:

20     **Թեօդորէայ ներձուածողի ի հականառութենն Ա.  
Եղովմանն.**

Ոչ եղեւ մարմին Բանն, այդ մարմին կենդանի և բա-  
նական եառ, ոչ ինքն բնութեամբ ի կուսէ ծնանի յղա-  
ցեալ, այդ իրը բազին ի կուսական որովայնի ստեղծեալ էր  
25 ընդ ստեղծեցելումն:

69r.    **Հականառութիւն առ ասացեալսն ի Ղեովնայ|  
Եւ նախ ժան զնա ներձուածողացն.**

Որչափ յառաջ մատչի բանիւ նեստորի դհայհոյու-  
թիւնս նորոգել կամնցաւզն, առաւել յայտնէ գիւր ամ-  
80 պարշտութեանն մեծութիւն. քանզի այսպէս կամի աղան-  
դել, որպէս ահա յառաջ ասսացաք, ունակական գոլ  
շարայարութիւնն ի վերայ Քրիստոսի. ոչ ճշմարիտ զան-

\* ) Լուսանցքում՝ «ընկալաւ(ւ)».

<sup>1)</sup> Հռովմ. Թ. 5.

հատանելի միաւորութիւնն կամ եթե մարմնաւորութիւնն  
Աստուծոյն Բանի զ' ի սրբոյ կուսէն աղանդելով. իսկ ու-  
նակական շարայարութիւնն որպէս զեկուցանէ և նոր  
վարդապետս ասելով՝ մինչ տակաւին երկախումբն ընդ  
իրեարս է. քանզի եղիցի, ասէ, ժամանակ, յորժամ արտա- 5  
քոյ իւրեանց եղիցին: Փախիցնւք զնորա հայհոյութեան  
զանտեղին, քանզի զերկախումբն ի վերայ Քրիստոսի զինչ  
իմասցուք, ասա ինձ. զեկուցանես իսկ ամենայն իրաւոք  
քոյին բանիւդ խոստովանելով և զնուաստն մարդ և զբը-  
նակեալն ի մարդում գեր զամենայն Աստուածն, իսկ 10  
զինչն ենթադրեցեր վարդապետութեանն, զլեզուդ սրեալ  
իր աւձի<sup>1</sup> զամենեցունն Փրկչէ Քրիստոսէ. քանզի ի  
վերայ բերելով ասես, |զի որպէս Աստուած ողորմել(?) 69r.  
կամեցեալ, անյեղեղուկ մնայ և անայզայզակ, այս-  
պէս մարդն զերազանցապէս փառաւորել ի բնակեցելոյն 15  
ի նմա Աստուծոյն Բանէ. կամ եթե շարայարեցելոյ  
ունակական հաւասարութեամբ, մնայ դարձեալ ինուաս-  
տութեան մարդկայնոյ բնութեան, մարդ որոշաբար ասելով  
և Աստուած զիանն որոշաբար. քանզի նոքիմբք իմացուա-  
ծովք վարեցեալ, և զնոյնս այսր անդր շրջելով բայս, որ- 20  
պէս դուռն զի շրջի \* ի ծխնւոջ, պճնողութեամբ բանիցն  
յափշտակել կամեցեալ զպարզագոյննան: Այդ ուսաք մկը  
յաստուածայնոց զրիցելոցն, եթե մարդ է Քրիստոսն և ո  
ծանիցէ զնա, որպէս ասէ Երեմիաս մարգարէն<sup>2</sup>, սա իսկ է  
Աստուածն մեր, և ոչ համարեսցի իրը միւս ելով, քան զԱս- 25  
տուծոյ Հաւրէ Բանն, ի վերայ երկրի երեսեալն, և մարդ-  
կան դարձակցեալն<sup>3</sup>. և Պաւղոս իսկ ասէ մարդ Քրիստոս  
Յիսուս և «Յորոց Քրիստոսն ըսա մարմնոյ, էակն ի վերայ  
ամեննեցուն Աստուած բարեբանեալ յաւիտեանս ամէն»<sup>4</sup>:  
Ապ' ուրեմն ի կերպին ելով Հաւրն, և մարմնացելոյ Աս- 30  
տուծոյն Բանի, առանձինն եասաց|առաքեա . . . \*\* զկա-  
մաւոր թափումնն զյաղագս մերն, և զնուաստութիւնն. և  
Տէր փառաց զեղեալն մարդ տնաւրինաբար և խաչե-  
ցեալ յաղագս մեր անուանէ. զի մի երկուս բնութիւնս, և  
մի երկուս որդիս քարոզելով ոք հաւատայցի. այդ եթե և 35  
հրեշտակ յերկնից համարձակեսցի տարագծել զուղղափառ

\* ) Լուսանցքում՝ «շրջապատում».

\*\*) Մի քանի անվեր-

ծանելի տաեր.

<sup>1)</sup> Հմմա. Սպա. ձլթ. 4.      <sup>2)</sup> Հմմա. երեմ. Փէ. 9.      <sup>3)</sup> Հմմա.  
Բարբաք թ. 38.      <sup>4)</sup> Հմմա. թ. 5.

հաւատն, նզով իցիւ եղեալ այսպիսին և եղիցի<sup>1</sup>: Դադարեացեն այսուհետև աղանդիչքն զերկուս բնութիւնսն անպատկառաբար, զի մի երկուս Քրիստոս քարոզիցեն աշխարհի: Քանզի և երկախումբ ասել ի վերայ միոյ Քրիստոսի, երկակաց ունի զակնարկութիւն. և զընդ իրեարսն ասել, նորին ըմբռնի մտածութեան. և ոչ ուրկը Աստուածաշունչ գրիցեալն այսպիսիս յաղաղս Քրիստոսի առտուեաց\*, այդ ամենայն ուրկը մի դէմ մարմնացելոյ Աստուծոյն Բանի ուայց. զայս Քրիստոս և Որդի և Տէր և 10 մարդ և Որդի մարդոյ և Աստուած քարոզեաց, և նմա առբաշխելով և զաստուածավայելուչս և զմարդկայինս, քանզի ոչ ոք իւր ասի առգոլ և ոչ ընդ իրեարս կարէ ասիլ ի վերայ միոյ և անբաժանելի Քրիստոսի, քանզի առէ այդ այդում ամենայն իրաւք և ամենայնիւ. և ընդ միմեանս 15 են երկակըն ոչ մին. իսկ զոր ասէ նուաստութիւն պարծանք Քրիստոնեից է, անյեղի յղութիւն նորա և ծնունդն իւր ի արբոյն կուսէ և ամենայնք մարդկայինք, և ինքն խաչն Քրիստոսի, և թաղումն և յարութիւնն, քանզի երանելին առաքեալ գոչէր ասելով. «Իսկ ինձ մի լիցի պար- 20 ծել, եթ՛ ոչ իաշիւն Քրիստոսի<sup>2</sup>:

**Պիտառութիւնի Երանելեացն մերոց հարանց եալիսկապոսաց հաստատիչ առ ի մէնց ասացելոցս, իսկ տապալիչ զամապարիւս նախասացելոցն ներձուածողացն աղանդս.**

25 Երանելոյ Արանասեայ եպիսկապոսապեսի Աղեք-սանդրեայ.

Ուստի և ծնիցելոյ մարմնոյն յԱստուածածնէն Մարեմայ ինքն ասի ծնանիլ այդոցն ծնելութեան առ ի զոլ տուին, զի զմերն յինքն փոխեսցէ ծնելութիւն:

30 Նորին՝ ի բրոյն որ առ Եպիկտետոնս.

Ի՞րը իսկ և յերկրայանալ համարձակեցան ասացեալքն Քրիստիանուք, եթ՛ ի Մարեմայ յառաջ հկեալ Տէրն, Որդի ահա զոյացութեամբ և բնութեամբ Աստուծոյ է, իսկ ըստ

\* ) Լուսանցքում՝ «աւանդեաց».

1) Հմմա. Գաղատ. Ա. 8. 9.

2) Գաղ. Զ. 14.

մարմնոյ ի զաւակէ Դաւթի, և մարմնով ի սրբոյ Մարեմայ. և ոյք արդեւք այսպէս յանդգունք եղեն, իբր զի ասել ըզ-Քրիստոսն մարմնով ախտակրեալն և խաչեցեալն ոչ գոլ Տէր և Փրկիչ և Աստուած և Որդի Հաւրն. կամ իբր քրիստիանուք կամիցին անուանիլ ասացաւզքն ի մարդ սուրբ, 5 իբր ի մի մարդարեկիցն եկեալ զԲանն, և ոչ զնոյն մարդ եղեալ առնլով ի Մարեմայ զմարմինն, այդ միւս դոլ ըզ-Քրիստոսն, և միւս զԱստուծոյն Բան, զյառաջ քան զյաւիտեանս Որդի ելով Հաւրն:

Երանելոյ Եօվաննու եպիսկապոսի Կոստանտինոպոլսի. 10

Սերկ էակն ծնանի և եակն եղանի, որպէս ոչ էր. քանզի ելով Աստուած, եղանի մարդ, ոչ արտակացեալ ի գոլոյն Աստուած:

Երանելոյն Կիւրիղոյի եպիսկապոսապետի Աղեքսանդրեայ, յորոց զՔեօդորեթայն. 15

Ի՞ր ասես միացեալ արդեւք ի սերմանէն Դաւթի զԱստուծոյն Բան. զի թե մէնում զ' ի սերմանէն Դաւթի բաշխեցիր զքահանայութիւնն, քանզի եթե ճշմարիտ միաւորութիւնն, ոչ ուրեք երկու ամեննեին են, այդ մի և միայն. յերկալկաց իմանի Քրիստոն. վաղայայտ ուրեմն 20 71v. եթե ստեղծանեն է խոստովանել զմիաւորութիւն, զպարզագունացն զանիլանալով խորհուրդս, բայց չարայարութիւն խոստովանեն զարտաքրուստն և զունակականն, զոր և մեք ունակեցաք, հաւասարորդք աստուածային բնութեանն ցուցեալք Հոգւովին Սրբով: 25

Նորին ի լուծմանէ Աժ. նզովմանն.

Եւ որպէս յատուկ մեր իւրաքանչիւրոյ ասի մարմին, յատկապէս իւրն այսպէս և ի վերայ միոյ Քրիստոսի իմանի. զի թեպէտ և գոյ մերոց մարմնոյ հոմասեռ, կամ եթե հոմադոյ, քանզի ծնեալ է ի կնոջէ յատուկ որպէս ասացի 30 ինքեան իմանի և ասի. և վասն, զի կենդանութիւն ըստ ընութեան է յԱստուծոյն Հաւրէ Բանն, կենարար բացայայտեաց զիւր մարմինն, զի այսուիլ եզի մեղ բարեբանութիւն կենարար, քանզի և ասէր Քրիստոս. «Ամէն ամէն ասեմ ձեզ, ես եմ հացն յերկնուստ իջեալ. և կենդանութեան տուիչ աշխարհի». և դարձեալ. «Եւ հացն իսկ զոր ես

տաց, մարմինն իմ է, վասն կենդանութեան աշխարհի<sup>1</sup>։ և  
դարձեալ՝ «Կերաւղն զիմ մարմին և արրաւղն զիմ արիւն.»  
72r. յիս մնայ և ես ի նոմա<sup>2</sup>.

Նորին՝ ի պարապմանցն.

5 Խուզելով իսկ և ուսանել կամնցեալք, եթե զինչ  
արդեւք է մարմնանալն, և ներմարդանալն զԱստուծոյն  
Բան, նկատեսցուք, զի ոչ զմարդ ոք առ ինքն եառ, իբր  
ի շարայրութեան հաւասարութեամբ արժանաւորութեանն  
կամ եթե ճախութեան, կամ և ըստ միայնում որդութեան  
10 զհոմանունութիւնն, և յաւէտ եղանել ըստ մեզ մարդ. յետ  
այսորիկ անյեղապէս և անայդայզակաբար ունել, ամբողջ  
պահիլ իւրում բնութեանն զառընկալեալն մարմնով և  
արեամբ տնաւրէնարաբ եղեալ Մի ուրեմն է նախ քան  
զներմարդութիւնն անուանեալն ի ձեռն Աստուծաշունչ  
15 գրոց Մէնածին և Բան և Աստուած, պատկեր և բացա-  
վայլութիւն և գծաւորութիւնն ենթակացութեանն Հաւը,  
կենդանութիւնն, փառք, լոյս, իմաստութիւնն, կարութիւնն,  
բագուկ, աջ, բարձրեալ, մնծավայելչութիւնն, Տէր Սարա-  
72v. ւովթ, և այլովք ոմամրք այսպիսեաւք անուամբք. | Ճըշ-  
20 մարտապէս ասաւուածավայելչիւք իսկ յետ ներմարդու-  
թեանն մարդ Քրիստոս Յիսուս, քաւարան, միջնորդ,  
խայրի ննջեցելոցն, նախծին ի մնանուց, երկրորդ Ադամ,  
գլուխ մարմնոյ եկեղեցւոյ, հետեացելոց նմա և իսկաբանն  
անուանց. քանզի ամենայն ինքեան՝ և նախքն և նըլիր-  
25 ջինս յաւիտենի ժամանակացս. ապ' ուրեմն միւ նախ  
քան զներմարդութիւնն Աստուածն ճշմարիտ և ներմար-  
դութեամբն մնացեալ, որպէս էր և է և իցէ:

**Ե. Գլուխ նայիոյութեանց ի թղթոյն Ղեռվնայ.**

Ե. Քանզի ներդործէ երկաքանչիւր կերպ ընդ միու-  
30 սումն հաւասարութեամբ, որպէս յատուկ ընկալաւ. զի  
Բանին գործաւղի զայս, որպէս է Բանին. իսկ մարմնոյ կա-  
տարչի, որպէս մարմնոյն. քանզի ոմն նոցա բացաիայլէ  
սքանչելագործութեամբք, իսկ ոմն ըն(դ) թշնամանաւք  
ստորանկեաց:

<sup>1)</sup> Հմմ. Յովի. Զ. 50—52.

<sup>2)</sup> Յովի. Զ. 57.

Պիտառութիւնք ներձուածողաց, որոց բաղա-  
ձայնք նախասացեալքն ի Ղեղվնայ.

**Պաւղոսի Սամոսացւոյ ներձուածողի հայնոյութիւնք.**

Ասացաւ կոյս ծնանել. ծնաւ կոյսն, ծնունդն կուսի  
Յիսուս Քրիստոսն, իսկ Յիսուս Քրիստոս կրեաց, և կրեալ 5 73r.  
կեցոյց զմեղ. ջնեցաւ գիտակն բերել զմեղութիւն, և մար-  
դոյ թաղումն բարձաւ ի միջոյ, և ախտակրեաց նա, իբր  
դոչիսար ի զենումն ածեալն, իբր դառն առաջի հատչի  
իւրոյ անձայն<sup>1</sup>. զրիցեալքն ի բաց դառնալ ոչ կարեն մեր  
հաւատոյս:

10

**Նեսօրի ներձուածողի Զ. գլուխ հայնոյութեանց.**

Զայս զՅիսուս, ասէ, յարոյց Աստուած<sup>2</sup>, զերելիս,  
զայս զտեսանելիս աշաց, զիայտին առենեւեալ, զ' ի Թով-  
մայ շաւշափեալ ձեռացն, զառնայն աղաղակիչն. «Որոնեցէք  
զիս. զի ողի մարմին և ուկերս ոչ ունի, որպէս զիս տե- 15  
սանէք ուներ»<sup>3</sup>: Եւ այսոցիկ աշակերտն հաւանեալ ձայնից  
և որոնմամբ խաչեցելոյն մարմնոյ հաւանեալ յաղագս յա-  
րութեանն, զիրաշարարն<sup>4</sup> \* փառաւորէ Աստուած՝ «Ճէր իմ և  
Աստուած իմ»<sup>5</sup>. ոչ զշաւշափեալն առասելով Աստուած,  
քանզի ոչ շաւշափմամբ Աստուած գտանի:

20

**Նորին՝ յերրօրդ մատենեն Ժ. զլիսոյ.**

Արդ՝ եթե միայն գոյր Աստուած, ըմբռն<sup>\*\*</sup> էր ասել,  
Ապողինարիէ, «Ճէր զիս ինդրէք սպանանել զԱստուած, որ  
գճչմարտութիւնն ձեզ խաւսեցայ»<sup>6</sup>. |սա որ զ' ի վշոցն ըն- 73v.  
կալաւ պսակ, սա ասաւզն՝ «Աստուած Աստուած իմ, ըն- 25  
դէր զիս ի բաց թողեր»<sup>6</sup>, սա զեռաւրեայ կատարումն  
համբերեաց:

Թեւոդորեայ ներձուածողի ի հականառութենէ եր-  
կոտասաներորդ նզովմամն հայնոյութիւնք.

\* ) Լուսանցքում՝ «հրաշափ(ա)ռագործ(ն)».      \*\* ) Անդ՝ «պարտ».

<sup>1)</sup> Հմմտ. Եսայի. Եֆ. 7.                  <sup>2)</sup> Գործք Բ. 32 և այլուր.  
<sup>3)</sup> Դուկ. Խր. 39.                  <sup>4)</sup> Հմմտ. Եսվհ. Ի. 28.                  <sup>5)</sup> Եսվհ. Է. 20  
և Հ. 40.                  <sup>6)</sup> Մատթ. Ի. 46., Մարկ. Ժ. 34., Հմմտ. Մողմ. ԻԱ. 2.

Կիրք կրելոյն յատուկ. քանզի անկրելին կրիցն է վերագոյն. կրեաց այսուհետեւ, ծառային կերպ ընդ նմա ելով, յայտ է զի Աստուծոյ կերպին:

### Եւ դարձեալ.

5 Ուրեմն ոչ Աստուած ախտակրեալն, այդ ի մէնջն յԱստուծոյ առեալ մարդ. վասն որոյ և երանելին կասցիաս գոչէ. «Մարդ ի հարուածս ելով»<sup>1)</sup>. և ինքն իսկ Տէրն Քրիստոսն առ հրեայսն ասէր. «Զի զիս խնդրէք սպանանել՝ զմարդ, որ զծմարտութիւնն ընդ ձեզ խաւսեցայ»<sup>2)</sup>.

10 Արդ սպանանի ոչ ինքն կենդանութիւնն, այդ զմանկանցուն ունաւղ բնութիւն. և զայս ուսուցանելով այզուր Տէրն, առ հրեայս ասէ. «Քակեցէք զբագինս զայս, և յերիս աւուրս յարուցանեմ զդա»<sup>3)</sup>; Ուրեմն քակեցաւ որ ի Դաւթայն, իսկ յարոյց զսա զքակեալս ի Հաւրէ անախ-  
15 տարար ծնիցեալն նախ քան զյաւիտեանս Մէնածին Աս- տուածն Բան:

### Նորին. |

74r. Այս զքահանայափետութեանն առասութիւն եառ ըստ կարդին Մեղքիսեղեկի. քանզի այս առընթեր կայր 20 բնութեան նուաստութեանն և ոչ ամենայն ուրեմն կարողն Աստուծոյն Բան. սակա որոյ և նախ քան զսուղ ինչ երանելին զրէ Պաւլոս. «Քանզի ոչ ունիմք քահանայա- պետ ոչն կարող ախտակցել տկարութեանս մերում, այդ փորձեցեալ ամենայնիւ ըստ նմանութեան, առանց մե-  
25 զաց»<sup>4)</sup>. իսկ ի փորձութեան եղի մերոցն ախտից, առանց մեղաց, ի մէնջն վասն մեր առեալ բնութիւն, ոչ զայս առաւղն մերոյ սակա փրկութեանն:

Հականառութիւն առ ասացեալսն ի Ղեղի- նայ եւ նախ բան զնա հերձուածողացն.

30 Արդ՝ եթե յայտնապէս ուրանայք զհանողերձ մարմ- նով տնաւրէնութեանն Քրիստոսի խորհուրդն, պարտ էր

<sup>1)</sup> Հմմտ. եսայի ԵԴ. 3.

<sup>2)</sup> Յովհ. Է. 20 և Հ. 40.

<sup>3)</sup> Յովհ. Բ. 19., Մարկ. Ժ. 58. հմմա. ԺԵ. 29., Մատթ. ԽԶ. 61.

հմմա. ԽԵ. 40. <sup>4)</sup> Եքք. Գ. 15.

յայտնագոյն ձայնիւ անպատկառաբար աղաղակել Քրիստոսի ըստ հնոց հրեիցն և ասել. «Ենդէր դու մարդ ելով առնես զքեզ ինքն Աստուած»<sup>1</sup>. իսկ եթ' եղև մարդ Մէնածին Աստուածոյն Բան, և զկամաւոր թափումնոչ խտրեաց 74v.

.....\* սակա մերոյ փրկութեանն, մի ուրեմն իւր է դէմ. 5  
Էրում և առաջինք մնք զաստուածավայելուչս և զմարդկայինս, քանզի «Մի Տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն և մնք նովաւ»<sup>2</sup>. մի Տէր, մի հաւատ, մի մկրտութիւն, ըստ երանելոյն Պաւղոսի ձայնին. հչ որպէս նորում վարդապետին թուի, երկակերպ է Տէրն մեր Յիսուս Քրիստոս, 10  
զի և յատկացեալս ունիցին զներգործութիւնս կերպն,  
կամ եթ' որոշել երկուս դէմս Քրիստոսի. քանզի երկաքանչիւրն կերպ երկակս նշանակէ դէմս ի վերայ միոյն Քրիստոսի, որ է ամպարիշտ. սապէս իսկ և զրնդ միւսումն և դարձեալ հաւասարութիւնն երկուս Քրիստոսս անամաւ- 15  
թարար մեզ առնշանակեն. քանզի և ոչ միւս ասի ի վերայ միոյ և ոչ հաւասարել իւր ոք ասի երբեք, այդ այզում ամենայն իրաւուք. և ոչ ոք ուղիղ խոհել սովորեցելոցն զտանի այսպիսիս ուսուցանելով ի վերայ միոյ դիմի մարմնացելոյ անյեղաբար Աստուածոյն Բանի. Ք. | 20

Քանզի «Որ էրն ի սկսբանէ, ասէ երանելին Յովաննէս աւետարանիչ, զոր լուաքն, նշանակելով զնախ քան զյաւիտեանսն Բանն Հաւր, զսա ասէ և տեսաք աշաւք մերովք և ձեռք մեր շաւչափեցին». և զի մի ոք հերձուածողացն զբարտեսցէ զառ ի նմանէ աստուածաշնչաբար 25  
ասացեալսն, ցուցանէ հաւաստապէս միպէս մարմնացելոյ Աստուածոյն Բանի և ասէ յաղագս Բանին կենաց և երկրորդէ զձայնան ասելով. «Եւ տեսաք և վկայեմք, և պատմեմք ձեզ զկենդանութիւն յաւիտենական». զոր, ասա յայտնապէս, ով աւետարանիչ. «Որ էրն, ասէ, առ Հաւրն 30  
և յայտնեցաւ մեզ»<sup>3</sup>. և եռապատկէ զբանն յաղագս տեսանելոյ զմարմնացեալս անյեղապէս մի բնութիւն Աստուածոյն Բանի ոչ ուրեք երկուս կերպս ուսուցանելով ի վերայ Քրիստոսի, և ոչ երկուս դէմս, այդ մի և զնոյն. և նմա առաջինք, միումն Քրիստոսի, զաստուածավայելուչս և զմարդկայինս, քանզի և ի վերջի թղթին ուսուց դարձեալ յաղագս Քրիստոսի ասելով. «Եւ զիտեմք եթե

<sup>1)</sup> Մի անվերժանելի բառ.

<sup>2)</sup> Յովհ. Ժ. 33. <sup>3)</sup> Ա. Կորնթ. Ը. 6.

Ցայտական հայոց առաջարկութեանն

- 75v. Որդին Աստուծոյ եկն, և ետ մեզ միտս, զի ծանիցուք զշմարիտն Աստուած, և եմք ի ծշմարտի Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի. սա է ծշմարիտն Աստուած և կենդանութիւն յաւիտենական»<sup>1)</sup>, իսկ եթե բանն գործէ որ 5 է իւր, որպէս նորում Նեստորի թուի, աւտար աստուածութեանն և անարատ բնութեանն տեսանիլ և շաւշափիլ, և յատուկ առաւել մարդկայնւոյն է բնութեան այսպիսիս. նմանապէս աւտար է մարդոյ ասին Աստուած ծշմարիտ, իսկ յատուկ միայնւոյ Աստուծոյ, իսկ արդեւք ստեաց 10 աստուածազան աւետարանիչն Յովիաննէս. քամ լիցի. այդ առաւել հերձուածողացն ժողով զպրշաբար ընդդիմանան Աստուածաշունչ գրիցելոցն. ոչ հաւատան եթե «Յերկրի Աստուած երևեցաւ, ընդ մարդկան շրջեցաւ»<sup>2)</sup>, ըստ մարդարէին ձայնի. ոչ հաւատան եթե «Բանն մարդին եղեւ»<sup>3)</sup>, մնացեալ նանյեղիլ բնութեանն. ոչ առընդունին զկամաւոր թափումն և աղքատութիւնն Աստուծոյն Բանի տնաւրինաբար գործեցեալն յաղագս մերոյ վըրկութեանն. ոչ ընդունին Աստուածածին խոստովանել 76r. զսուրբն կոյս. բացափայլել կամին/զմին դէմ Քրիստոսի, 20 այս է զԱստուածն Բան. հչ ներեն կենագործ զոլ զպատուական մարմինն Դրիստոսի. ոչ ընդունին զ' ի սերմանչն Դաւթի թագաւորել ի տուն Յակովբայ յաւիտեանս և թագաւորութեան իւրոյ ոչ զոլ վախճան, լըպրշաբար ընդդիմացեալք հրեշտակապստին Գարբիէղի. քանզի աիր 25 տակրութեանն միայնում ստորանկել զնա աղանդեն, և թեպէտ մարդոյ բնութեան աւտար է ամեննեին թագաւորել ընդ ձեռամբքն յաւիտեանս\*, իսկ միայնւոյ Աստուծոյ յատուկ այս և յարմարականն:
- Ապ' ուրեմն և ոչ երկուս կերպս ի վերայ միոյ Քրիստոսի 30 առափ ի սրբոցն ուսաք ի ձեռն Աստուածաշունչ զրիցելոյն. և ոչ ներկործութեամբ առանձնացեալս երկակաւք կերպիւքն, և ոչ ունակական հաւասարութիւն և կամ եթե շարայարութիւն, զոր իւրաքանչիւր ոք մեր ունել ասի առ մերձաւորն, և ոչ իւրաքանչիւր դէմ յատուկ և 35 առանձինն, ոմն բացափայլ սքանչելեաւքն, իսկ ոմն ախտակրութեանն ստորանկեալ. այդ մի բնութիւնն Աստուծոյն Բանի մարմնացեալ անյեղապէսի ուսաք և հաւատամբ:
- 76v.

\* ) Հուսանցքում՝ «յանվախճանոն».

<sup>1)</sup> Ա. Յոհ. ե. 20.  
Ա. 14.

<sup>2)</sup> Բարուք. գ. 38.

<sup>3)</sup> Յոհ.

Պիտառութիւնք երանելեացն մերոց հարանց եւ եպիսկապոսաց հաստատիչք առ ի մէնց ասացեալսն, իսկ ի բաց տապալիչք զամպարիչս նախասացելոցն հերձուածողաց աղանդս.

Երանելւոյ Արանասեայ եպիսկապոսապետի Աղեք-5  
սանդրեայ.

Արդ եթ' այզոյ մարմինն, նորա արդեւք ասիցի կիրքն.  
իսկ եթե Բան ի մարմինն, քանզի Ժանն մարմին եղեւ<sup>1</sup>,  
Հարկ է և զմարմնոյն կիրս ասել նորին. իսկ որոյ ասին  
կիրքն, նորին և ուղղագործութիւնն և շնորհն է: 10

Երանելւոյ Գրիգորի եպիսկապոսի նիւսայ.

Այս խորհեսցի ասէ ի ձեզ, որ և ի Քրիստոսի Յի-  
սուսի, որ նըկերպի Աստուծոյ գոյր, ոչ յափշտակութիւն  
համարեցաւ զգոյն հանգէտ Աստուծոյ, այդ զինքն թա-  
փեաց կերպ ծառայի առեալ. Զինչ աղքատագոյն ի վերայ 15  
Աստուծոյ ծառային կերպի. զինչ նուաստագոյն ի վերայ  
թագաւորին բոլորեցուն, եթ' ոչ ի հաւասարութիւն աղ-  
քատութեան մերոյս բնութեան կամաւորապէս գալ. թա-  
գաւորն թագաւորեցելոց և տէր տիրացելոցն զծառայու-  
թեանն կերպ յանձն առնու. դատաւորն ամենայնի հար- 20  
կապարտ հարստացելոցն ե(ղ)անի. արարածոյս Տէրն յայ-  
րի իջավանէ. զամենայն պարունակաւզս ոչ գտանէ տեղի  
յաւթեվանին, այդ ի մսուր անբանից ընկեցիկ լինի. մա-  
քուրն և անարատն զմարդկային բնութեանս յանձն առ-  
նու աղտ և ընդ ամենայն աղքատութիւնս մեր անցեալ, 25  
մինչեւ մահու հասանէ փորձութիւն(ն): Տեսանէք զկամաւոր  
աղքատութեանն չափ. կենդանութիւնն մահու ճաշակէ.  
դատաւորն ի դատաստան ածի. կենդանութեան էակացս  
տէրն ի համարի դատապարտնեցելոց եղանի. ամենայնի գե-  
րաշահական զաւրութեանն թագաւորն զդահճացն ոչ փախ- 30  
նու \* ձեռս:

Երանելւոյ Կիւրիղի եպիսկապոսապետի Աղեքսանդ-  
րեայ Դ. նզովմանեն.

Որ ոք դիմաւք երկուք կամ եթե ենթակացութեամբք  
զյաւետարանականս և առաքելականս շարագրութիւնս 35

\* ) Լուսանցքում՝ «ի բաց մղէ».

<sup>1)</sup> Տավ. Ա.՝ 14.

բաշխէ ձայնս կամ ի վերայ Քրիստոսի ի սրբոցն ասացեալս կամ յիւրմէ յազագս իւր, զոմանս իրը մարդոյ, քանզի յԱստուծոյն Բան յատկապէս իմացելոյ առյարէ, 77v. իսկ զատուածավայելուն միայնում յԱստուծոյ Հաւրէ ն Բանին, նզով եղիցի:

Նորին որ զթեռդրեայ.

Արդ՝ յորժամ մարդկայնոյն ի բաց զատուացուք զնա իրաց և բանից, յայտէ զի զՄէնածին Աստուծոյ Բան և ոչ մի ինչ զանազանեացուք յեղանակ այնոցիկ, զի եթ' ինչ 10 հնարաւորացն էր, միայն ոչ զի մերկանաւզաց զնա ի մարմնոյն և անհաւատից Աստուածաշունչ գրիցելոցն, և ի բաց դարձուցաւզաց\* ամենայնիւ գներմարդութեանն իսորհուրդ, զաշխարհի փրկութիւն, զյոյսն, զհաւատն, զյարութիւնն:

Զ. Գլուխ նայնոյութեանց ի թղթոյն Ղեղվ-  
15 նայ.

Եւ Աստուած ահա ըստ այսմ, ըստ որում «Խակրգ-  
բանն էր Բանն. և Բանն էր առ Աստուածն և Աստուած  
էր Բանն»<sup>1</sup>. իսկ մարդ ըստ այսմ, ըստ որում «Բանն մար-  
մին եղեւ և տաղաւարեաց ի մեղք»<sup>2</sup>. և Աստուած ըստ  
20 այսմ՝ ըստ որում «Նովաւ ամենայն եղեւ. և թանց նորա  
եղեւ և ոչ մի, որ եղեւ»<sup>3</sup>. իսկ մարդ ըստ այսմ՝ ըստ  
որում «Եղեւ ի կնոջէ, եղեւ ընդ աւրինաւ»<sup>4</sup>. և մարմնոյն  
ծնելութիւն մարդկայնոյ է զիկուցիչ բնութեան, իսկ  
78r. ծնունդն կուսին|աստուածայնոյ է զաւրութեան յանդի-  
25 մանութիւն. և տղայութիւնն համբակին ի խանձարդացն  
նուաստութենէն ճանաչիւր, իսկ քանիւնութիւն հւրոյ  
մնձութեանն, հրեշտակացն ձայնիւք ապացուցանի. և նման  
և առ ժամայնց ծնիցելոց մարդկանս ազգ, որ Հերովդէս  
ամպարշտաբար սպանանել կամէր, այդ է տէր բոլորեցուն,  
80 զոր մողքն ինդան, ազաւթաբար երկրպագելով:

Նեսօրի հերձուածօի հայնոյութիւնք, որոց բաղա-  
ձայնք նախասացեալքն ի Ղեղվնայ.

Զմերն զգեցաւ բնութիւն, քանզի տաղաւար ընկա-  
լաւ Բանն զմարդկութիւնն:

\* ) Լուսանցքում՝ «լուծակաց».

<sup>1)</sup> Յովհ. Ա. 1.

<sup>2)</sup> Յովհ. Ա. 14.

<sup>3)</sup> Յովհ. Ա. 3.

<sup>4)</sup> Ֆազառ. Դ. 4.

Եւ դարձեալ.

Առաքեաց զՈրդին եղեալ ի կնոջէ, ասէ, եղեալ ընդ  
աւրինաւք<sup>1)</sup>. աստանաւը ակնարկէ զերկուս բնութիւնս,  
և զպատահեալն առ մարդկութիւնն ասէ:

Եւ դարձեալ.

5

Զի ցուցցի այսուհետե ի մոգացն ով է սա ի նոցանէ  
երկրպագեալս, և առ ո եած զնոսա Ոգւոյն Սրբոյ շնորհ.  
Քանզի ոչ ասոկ պարզաբար աստուածազգեատ համբակ, այդ  
առ ոմն մարմին յարակցեալ|անձառապէս Աստուծոյ. 78v.

Եւ դարձեալ.

10

Քանզի այս երեսեալս համբակս, այս տեսեալս առ ժա-  
մայն, այս խանձարը ոց մարմնականաց կարաւացեալս, այս  
ըստ տեսանելի գոյացութեանս այժմածինս, որդի ըստ  
քարոզելումն յաւիտենական, որդի բոլորեցուն ճարտարա-  
պետ։ 15

Հակաճառութիւն առ նախասացեալսն ի Ղե-  
ռվեայ եւ նախ բան զնա հերձուածողացն.

Ի նոյն դարձեալ ընթացաւ սկիզբնն իւրոյն հայհոյու-  
թեանց, զտաղաւարեացն ի մնզ մնենելով իրը Աստուծոյն  
Բանի յառ Մարեմայն մարդ տաղաւարեցելոյ, ոչ իրը Աս- 20  
տուծոյն Բանի մարդոյ և զելոյ ըստ ճշմարտութեանն. այդ  
ըստ այզում և այզում աղանդելով զմին Քրիստոս, և զի ու-  
սուցուք զառ ի նմանէ ասացեալսն, ի վերայ եած, իրը իսոր-  
հի յազագս ծնիցելոյն ի կուսէն զեկուցանելով. քանզի մար-  
մոյ ծնելութիւն և մարդկային բնութիւն կամ եթե մարդ 25  
սոսկ զ' ի նէմայ ծնիցեալն աղանդէ, իսկ զմնալն կոյս,  
զկոյսն յանդիմանութիւն ասէ և յայտնութիւն զ' ի նմա  
թաքուցելոյ կարութեանն Աստուծոյ, |որպէս իւր թուի, 79r.  
ապացուցանել կամնցեալ, իրը այդ է և այդ. զնուասառու-  
թիւննն առրաջնէ խանձարքապատելում համբակին, իսկ 30  
զքանիւնութիւնն և զմեծութիւնն տաղաւարացելումն  
ի ծնիցեալն համբակ կամ բնակնեցելումն բացառուեաց.  
առ' և երկուք յաւդիկան քանզի ասէ երովդէս սպանանել  
յոզնիւր և զոր մոգքն երկրպագեցին. քանզի յայտնագոյն  
զերկակն զեկուցանել ոչ կարէր. քանզի ոչ ոք մի կամե- 35

<sup>1)</sup> Հմմա. Դադաս. Դ. 4.

ցեալ ցուցանել, ասէ, սա որ զայս ինչ պարտ էր կրել և  
նա զոր վայել էր փառաւորիլ և երկրպագիլ. քանզի ի  
ձեռն սա և զոր և զոր զայս անուն, և զայս անուն մնզ  
նշանակեաց, ըստ սովորութեան իւրոյն հայհոյութեանն։

5 Այդ ընդդէմ կարզի նմա քաջապէս Աստուածաշունչ  
գրիցեալն. քանզի ի սկսանն զոլ զԲանն և Աստուած,  
մարմին եղեալ անյեղաբար, քարոզեաց մեզ երանելին  
Յովաննէս<sup>1</sup>, այս է մարդ ըստ ճշմարտութեան մընալով  
որ էրն, և ի մեզ տաղաւարեալ մարդկան կամ բնակեալ|

79v. 10 Սրբով Հոգւովն, որպէս ահա նախասացաք ի ակամանն  
դորա հայհոյութեանցն, քանզի արարիչն բոլորեցուն եղե  
ի կնոջէ մարդ մարմնացեալ և ծնիցեալ ի նէմայ, որպէս  
միայն գիտէ ինքն զիսրհրդոյս այսորիկ զպանչ. ինքն  
Աստուած ելով բնութեամբ, ինքն մարդ ըստ տնաւրէնու-

15 թեան եղեալ, սակա մերոյ փրկութեան, և եղե ընդ աւրի-  
նաւ. ոչ իբր աւրինին ենթանկեալ, աւրինադիր ելով իբր  
Աստուած և մարմնով. քանզի զեկուցանէր վասն իւր իսա-  
յեաւ ասելով. «Ես խաւողս առընթեր եմ, իբր ժամ ի վե-  
րայ լիրաց, որպէս աւետարանիչ խաւորութիւն խաղաղու-

20 թեամբ»<sup>2</sup>. քանզի Շէնքն էր Տէրն ի նոսա ի Սինայ ի սրբումն,  
աւրինադրիչն որդոցն իսրայէղի, վերանցեալն ի բարձունս,  
և գերիչն ըզգերութիւն, և տուիչն տուրս մարդկան»<sup>3</sup>, ըստ  
երանելիոյ Պաւոսի ձայնին, ասաւզն իբր Աստուած յաւե-  
տարանն ճառեցաւ այս և այս յաւրինին. իսկ ես ասեմ ձեզ

25 հրամանաբար իբր Աստուած աւրինադրելով, ոչ իբր են-  
թանկեալ այսունետեալարինին եղե ընդ աւրինաւն, այդ զա-  
ղատութիւնն մեզ չնորհցէ զորդեզրութեանն ի ձեռն ձրի  
Հոգւոյն Սրբոյ, քանզի «Քրիստոս զմեզ զնեաց յանիծէ  
աւրինին իւրով արեամբն»<sup>4</sup>, և «Ազատութեամբ զմեզ

30 Քրիստոս ազատեցոյց»<sup>5</sup>. Ապ' ուրեմն Աստուած է ծնի-  
ցեալն ի Կուաէն. քանզի Եմմանուէզ է, որ մեկնի\* ընդ մեզ  
Աստուած. ծնիցեալն Եմմանուէզ խանձարրապատեցաւ. ոչ  
արհամարհել սակա խանձարրոցն, ոչ իսկ և այսոցիկ կա-  
րաւտեալ, այդ զի ցուցէ ըստ ճշմարտութեանն գործիցեալ

35 գտնաւրէնութիւն, զի մի ըստ երևոյթութեան կարծիցի  
եղեալ մարդ: ինքն փառարանեցաւ ի հրեշտակաց իբր

Լուսանցքում՝ «Թար(դ)ման(ի)».

<sup>1)</sup> Հմմա. 8ովհ. Ա. 1—14. <sup>2)</sup> Եսայի ԵԲ. 6—7. <sup>3)</sup> Եփես.

Գ. 8. Հմմա. Սաղմ. Կէ. 18—19. <sup>4)</sup> Դադատ. Գ. 13. <sup>5)</sup> Դա-

դատ. Գ. 31.

Քրիստոս Տէր և Փրկիչ, և երկրապատեցաւ ի մոգացն իրը  
Աստուած ձշմարիտ, ըստ Յովաննու ձայնին. ինքն խնդրիւր  
ի Հերովդայ և ի հրեիցն հալածիւր և յաղթեաց աշխարհի  
իրը Աստուած. և քաջալերիլ հրամայէ աշակերտացն ասե-  
լով. «Քաջալերեցարհնք, ես յաղթեցի աշխարհ»<sup>1</sup>, Ո՞վ է 5  
ի մարդկանէ յաղթողն զաշխարհ, որպէս ասէ երանելին  
Յովհաննէս, ևթ' ոչ որ հաւատայն| «Եթե Յիսուս է Քրիս- 80v.  
տոսն, ճշմարիտ Աստուած և կենդանութիւն յաւիտենա-  
կան<sup>2</sup>: Ապ' ուրեմն ոչ երկու բնութիւնք Քրիստոսն, որ-  
պէս թռւեցաւ նորում վարդապետիս, այդ մի բնութիւն 10  
Աստուծոյն Բանի մարմնացեալ, ըստ սրբոցն հարանց վար-  
դապետութեան:

Պիտառութիւնն երանելեաց հարանց մերոց  
եւ եպիսկապոսացն հաստատիչք զառ ի մէնջն ասա-  
ցելոցն, իսկ տապալիչք զամպարիչս նախասացե- 15  
լոցն ներձուածողացն աղանդու.

Երանելոյ Արանասայ եպիսկապոսապետի Աղեքսան-  
դրեայ Դ. բանեն, որ զարիանոսացն.

Որ ոք այսուհետեւ պատահէ ասաուածային գրիցելումն,  
ի հնոցն զբայսն զննեացէ. իսկ յաւետարանացն տեղոցէ 20  
զՏէրն եղեալ մարդ. քանզի «Բանն, ասէ, մարմինն եղն և  
տաղաւարեաց ի մեզ»<sup>3</sup>. արդ մարդ եղն և ոչ ի մարդ եկն.  
քանզի և զայս հարկաւոր գիտել:

Նօրին՝ յաղագս խաչին.

Քանզի էսայիհաս մարդարէացաւ յանփորձ ամուս- 25  
նութեան կնոջէ ծնանիլ զիմմանուէդ<sup>4</sup>. և ինքն ի Մարե-  
մայ կուաէ ծնիցեալ և Աստուած երիւալ, լնոյր զմարդա-  
րէին բան:

Երանելոյ Դրիգորի եպիսկապոսի նեոկեսարի՝ ի բա-  
նեն, որ յաղագս մարմնաւորութեան եւ հաւաթոյ. 30

Եւ իրը եթ' ասիցի մարդ կատարեալ առնուլ զՔրիս- 81r.  
տոս, որպէս մի ի մարդարէիցն, իւր Տեառն մարդոյ եղե-  
լոյ զ' ի կուսէն մարմնաւորութեամբ:

<sup>1)</sup> Յովհ. ծԶ. 33.

<sup>2)</sup> Ա. Յովհ. Ե. 1. 20.

<sup>3)</sup> Յովհ. Ա. 14.

<sup>4)</sup> Հմմտ. եսայի Ե. 14.

**ԵՐԱՆԵԼՈՅ ԲԱՍԻ՝ առ զբարեիչս զմեզ երիս ասել  
Աստուածս.**

Որպէս մարդ ընդ ամանակաւ, որպէս Աստուած նախ քան զամանակս. որպէսն ոչ նմանութեամբ, այդ 5 ճշմարտութեամբ ըստ երկոցուն Աստուած և մարդ: Աստուած էր, մարդ եղի տնաւրէնութեամբ. ոչ նախկին եղեն և յայնժամ էրն, այդ նախկին էրն և յայնժամ եղեն. մի ուրեմն զըստ տնաւրէնութեանն ի բաց բարձրէ զՄէ-նածնին աստուածութիւն. քանզի այսք հերձուածողացն 10 կոչմունք և մանիքեցւոցն մոլութիւնք:

**ԵՐԱՆԵԼՈՅՆ ՅՈՎԱՆՆՈՒՇ ի համառաւտագունիցն որ ըստ ՅՈՎԱՆՆՈՒ աւետարանին.**

Քանզի որպէս ոք արուեստաւոր ընտիր ապարանս խարիսալեալս առեալ զհասարակական յայնժամ զմարդ- 15 կան բնութիւն, այսպէս զնորսա զկոճատեալսն ելից մասունս և զտարակացեալսն\* և զլուծեալս պնդեաց և զամենսին անկեալս կանգնեաց:

**ԵՐԱՆԵԼՈՅ ԿԻՒՐԻՊԵՐԻ ԵԱՀԱԿԱՊՈՍԱՎԵՏԻ ԱՊԵԽԱՆԴ- ՐԵԱՅ՝ յայնմանն երե մի ՔՐԻՍՏՈՆ.**

81v. 20 Աղէ, ուր ուրեմք մտաց և խորհրդոց իշեն արդեւք զայս կարծաւղքն. կամ իբր ոչ երկակս ասեն որդւոցն, ի բաց որոշելով ի միմեանց մարդ և Աստուած, եթե է ըստ նոսա ոմն բնութեամբ և ճշմարտապէս որդի, իսկ ոմն չնորհիւ գորդեզրութիւն ունի և յայս եկն արժանաւո- 25 բութիւն, իբր ներբնակաւողի ի նմա Բանին:

**ՆՈՐԻՆ զԹԵԿՈՐԵԵՎԱՅ.**

Մեք այսուհետեւ կենարար գոլ ասեմք զսուրբ մարմին ամենեցուն մեր Փրկչին Քրիստոսի. քանզի և է ոչ միոյ վայրապար ըստ մեզ մարդոյ հասարակականի, այդ յա- 30 տուկ այնպէս Աստուծոյ, որպէս իւրաքանչիւրոյ պատա- հեաց յատուկ ասիլ մարմին իւր:

**ՆՈՐԻՆ Դ. Եզրման լուծմանեն.**

Ապ' ուրեմն ի ծայրն միաւորութեանն ամբողջ պա-

**Լուսանցքում՝ «Էնուցեալսն».**

հեցելոյ՝ որպիսի ներմտութիւն կամ երևութութիւն բաժանման ի ներքս դատիցի. և որ բաժանելն համարձակի՝ բըր ոչ արտաքոյ բերի ուղիղ ճանապարհն, և ի ճշմարտութենէ աղանդոյն ամենենին հեռի բուսանի:

Նորին ի գրոյն որ առ բազուհիսն.

5

Արդ այսուհւ(ստ)ե բաժանել զմին վատապարիշտ.  
քանզի ոչ ևս զիւրն որդի գտանի տուեալ Հայրն, եթե  
ի մարդ բաժանակի:

82r.

Եւթներուդ գլուխ հայիոյութեանց ի թղթոյն  
Ղեովնայ.

10

Իսկ յորժամ առ կարապետին իւրոյ Յովաննու գայ  
մկրտութիւն, որպէս զի մի զանիւլացի, թեպէտ և ծած-  
կութիւ մարմնոյն աստուածութիւնն թաքնոյր, Հաւրն  
ձայն յերկնուստ գոչեցեալ ասէ. «Սա է Որդին իմ սիրե-  
լի, յորում հաճեցայ»:<sup>1)</sup>

15

Պիտառութիւնք հերձուածողացն, որոց բայա-  
ձայնեն նախասացեալին ի Ղեովնայ.

Պաւղոսի Սամոսացւոյ հերձուածողի հայիոյութիւնք.

Երիեան ոչ էր իմաստութիւն, քանզի և ոչ կարէր  
ի ձեռւմ գտանիլ և ոչ ի տեսութեան առն. քանզի մեծա-  
գոյն տեսանելեացն է:

Նեսօրի հերձուածողի հայիոյութիւնք.

Սակս զգեցաւղին զգեցեալն պաշտեմ. սակս թաքու-  
ցելոյն երկրպագեմ զերևելին:

Նորին.

25

Անխառնելի այսուհետև զբնութեանցն պահեմք շա-  
րայարութիւն. խոստովանեմք զի մարդն Աստուած:

Թեոդորէայ հերձուածողի հայիոյութիւնք.

Եւ զի համբակ և խանձարուըք և մահճաց կարաւ-  
տութիւն և բազում նուաստութիւն մարդկութեան առան-  
ձինն. իսկ մոգացն ընթացք և աստեղն առաջնորդութիւն

<sup>1)</sup> Մասթ. Դ. 17., Մարկ. Ա. 11., Ղուկ. Դ. 22.

82v. և մատակարարութիւն, քարոզէ զթաքուցելոյն աստուածոթիւն։

Հականառութիւն առ ասացեալսն ի Ղեղվնայ եւ նախ հան զնա ներձուածողացն։

- 5 Յարմարապէս և ի վերայ այսոցիկ նորոց վարդապետաց ասասցի ի Փրկչէն առ Սագուկեցիսն ասացեալ. «Մուլորկք, ոչ զիտակք զգրիցնալսն և ոչ զկարութիւն Աստուծոյ»<sup>1)</sup>. Քանզի տակաւին յորովայնի Եղիսաբեթի ելով նախընթացն\* Յովաննէս՝ իսայտաց ցնծութեամբ, ծանուցեալ
- 10 յորովայնի Կուսին մարմնացեալ զիւրն Տէր<sup>2)</sup>: Ապա ծնիցնալ, նախընթաց Բարձրելոյ, այս է Քրիստոսի, կոչի առ ի Զաքարիայ իւրմէ Հաւր(է?)ն ի մարգարէութեան բանի<sup>3)</sup>, Դարձեալ նախ քան զգալ Յորդանան զՏէրն, յառաջագոյն ասէր յաղագս նորա ժողովրդեալնն. իսկ նկելոյ
- 15 Տեառնն առ Յովաննէս Յորդանան, զգնալով ոտիւք իւրովք, արգելոյր զնա Յովաննէս՝ ծանուցեալ զիւրն Տէր և զԱստուած, նախ քան զյերկնից Հաւր ձայնին: Ի՞ր արդեւք զրպարտէ զցշմարտութիւնն նոր վարդապետս ստելով. քանզի ոչ զանխլանայր\*\* եթ՝ ինքն է Աստուծոյն
- 83r. 20 Մէնածին Որդի. ծածկոյթ ասէ դարձեալ ի վերայ Քրիստոսի զմարմինն եղեալ առանձինն և ըստ մասին կամ եթե զմարդն. իսկ թաքուցեալ ի ներքոյ ծածկութիւն, ասէ, զԱստուածն Բան, և ոչ կամեցեալ երեսել աշխարհի իւր զի, ըստ նմա, եթ՝ ոչ ձայնեաց յերկնուստ Հայրն, ոչ ևս ինքն զինքն երեսեցոյց աշխարհի. և ո՛ հարկեցուցիչն զնա ի վերայ երկրի երեսել և մարդկան վերադարձել, ըստ մարդարեին ձայնին. և զի այսպիսիս յաղագս իւր մարդարէիւքն յառաջասէր աշխարհի երբեմն ասելով ի ձեռն Սողոմովնի. «Եւ այժմ Տէր Աստուած Խարացլի, հաւատակցի բայ քո Դաւթի Հաւր իմում, եթե ճշմարտապէս բնակեսցէ Աստուած ընդ մարդկան ի վերայ երկրի»<sup>4)</sup>. և դարձեալ Սաղմոսերգաւն ասէ. «Աստուած յայտնապէս եկեսցէ, Աստուածն մեր և ոչ լուսցէ»<sup>5)</sup>. և դարձեալ մարդարէիւքն. «Եւ յանկարծադէպ եկեսցէ ի թագին իւր Տէրն, զոր դուք խնդրէք. և հրեշտակ կտակին, զոր դուքն կամիք»<sup>6)</sup>. և դարձեալ. «Խնդրա յոյժ, դուստր

\* ) Լուսանցքում՝ «կարապետ».

\*\*) Անդ՝ «Քաքնոյլ».

1) Մատթ. Իթ. 29., Մարկ. Ժթ. 24.

2) Հմմա. Ղուկ. Ա.

41. 44.

<sup>3)</sup> Հմմա. Ղուկ. Ա. 76.

4) Ք. Քակ. Ը. 26—27.

5) Մազմ.

Իթ. 3.

<sup>6)</sup>

Մազմաքիտ Պ. 1.

Սիովահի, ահա թագաւոր քո գայ քեզ, արդար և կեցուցիչ, ինքն հեզ և վերելակեալ ի վերայ իշոյ և յովաննակի նորոյ»<sup>1</sup>. և դարձեալ. «Ի մերձենալ ամաց ծանիցիս, յառնթեր գոլ զժամանակն ցուցիս, ի խոռվիլն զանձին բարկութեամբ ողորմութեան յիշեցես. Աստուած ի թեմանայ եկեսցէ»<sup>2</sup>. 5 83v.

և դարձեալ իսայեաւ. «Ահա Աստուած մեր, ահա Տէր գայ հարստութեամբ և բազուկն տերութեամբ»<sup>3</sup>: Եւ իբր զոյն տեսանելի ըստ քեզ, այդ թաքուցնալ յայտնել կարէր Հայրն ձայնիւն. «Եթե սա է Որդի իմ»<sup>4</sup>. քանզի ոչ ոք ի վերայ ոչ երեսցելոյ ասէ սա. այդ եթ' արդեւք ըստ 10 ցուրտ քում առասպելականութեան վայել էր ասել յաղագս թաքուցելոյն՝ նա է որդին իմ սիրելի՝ թաքուցեալն, ոչ սա, տեսեալս: Ով քանիւն ամպարշտութեան մեծութիւն ի վեր և ի վայր, երկուս Քրիստոս խոստովանել. երբեմն տուն զմարմինն և բնակեալ զԱստուածն Բան 15 ասելով, իսկ երբեմն ասելով ներկուս բնութիւնս առանձնացեալս, այդ երբեմն երկուք տեսակաւք և դիմաւք, և ևս դարձեալ ծածկութիւ և թաքստեամբ Աստուծոյն Բանի:

Իսկ մեք հետեացեալք Աստուածաշունչ գրիցելումն՝ 20 84r.

և վարդապետութեանց սրբոցն մերոց հարանցի վարդապե- 25 տաց սրբոյ եկեղեցւոյ, հաւատամբ եթ' եղե շաւշափիելի և տեսանելի անշաւշափն և անտեսանելին Աստուծոյն Բան կամաւորաբար սակա մերոյն փրկութեան. զայս զեղեալս տեսանելի և ի վերայ երկրի երեսեալ և զգնացեալ եցոյց Հայրն ի Յորդանան և ի լերինն առ աշակերտաւքն ասե- 30 լով. «Մա է Որդին իմ սիրելի, յորում հաճեցայ»<sup>5</sup>: Եւ վկայեն յաղագս ինքեան Տեառն մերոյ և Աստուծոյ և նախ քան զմենդ եղեալք(?) սուրբ հարքն և ուղիղ հաւատոյն պահպանք և վարդապեալք, մի բնութիւն խոստովանելով Աստուծոյն Բանի մարմնացեալ զՔրիստոս և մի իւր դէմ, 35 և նմա առբաշխն զաստուածավագյելուչս, ըստ որում Աստուած, և զմարդկայինս սակա մարմնոյն տնաւրէնութեան:

Պիտառութիւնք երանելեացն մերոց նարանց ելիսկապոսաց նաստածիչ զառ ի մէնց ասացեալսն, իսկ տապալիչ զամպարիւս նախասե- 35 ցելոց ներձուածողացն աղանդս.

<sup>1)</sup> Զաքարիա Թ. 9.      <sup>2)</sup> Ամբակում Դ. 2—3.      <sup>3)</sup> Եսայի  
թ. 10.      <sup>4)</sup> Մատթ. Դ. 17., Մարկ. Ա. 11., Ղուկ. Դ. 22.      <sup>5)</sup> Մատթ.  
Դ. 17. և այլուր.

**Երանելւոյ Գրեգորի եպիսկոպոսի Նեռկէսարի՝ որ  
ըստ մասին յաղազս հաւատոյ.**

Եւ է Աստուած ճշմարիտ, անմարմին ի մարմնի երե-  
84v. ւեալ, կատարեալ ճշմարթութեամբ և աստուածային կա-  
5 տարելութեամբ. ոչ երկուս դէմս և ոչ երկուս բնութիւնս,  
քանզի և ոչ քառս երկրպագել ասեմք՝ զԱստուած և զՈր-  
դին Աստուծոյ և զմարդ և զՀողին Սուրբ\*. սակա որոյ և  
նզովեւք զայսպէս ամպարշտեալսն, որք մարդ յաստուա-  
ծային փառաբանութեանն դնեն: Իսկ մեք ասեմք մարդ  
10 եղեալ Աստուծոյն Բան առ փրկութիւն մեր, զի զնմանու-  
թիւն երկնայն առցուք և աստուածագործիացուք, առ  
նմանութիւն ըստ բնութեանն ճշմարտի Որդւոյն Աստու-  
ծոյ, իսկ ըստ մարմնոյ որդւոց մարդոյ՝ Տեառն մերոյ Յի-  
սուսի Քրիստոսի:

15        **Երանելւոյ Կիւրիղոյի եպիսկապոսապետի Աղեխանդ-  
րեայ նզովումն Ե. Երրորդ.**

Որ ոք իշխէ ասել աստուածազգեստ մարդ զՔրիս-  
տոս և ոչ յաւէտ Աստուած զոլ ըստ ճշմարտութեան, իբր  
որդի մի և բնութեամբ, ըստ որում եղե մարմին Բանն  
20 և հաւասարեաց նմանապէս մեզ արեան և մարմնոյ, նզով  
եղիցի:

**Եւ յետ սակաւուց.**

Այդ ոչ իբր ի մեզ բնակէ Աստուած, այսպէս և ի  
Քրիստոսի. քանզի Աստուած էր բնութեամբ, եղեալ ըստ  
85r. 25 մեզ, մին միայն Որդի և յորժամ եղե մարմին:

**Նորին ի պարապմանցն.**

Եթ՛ աստուածազգեստ էր մարդ Քրիստոսն, բագին  
ուրեմն և ինքն եղն Աստուծոյ. իբր արդեւք ի մեզ է  
Քրիստոն. արդեւք իբր բագին ի բագինս, եթե յաւետ իբր  
30 Աստուած ի բագինս ի ձեռն Հոգւոյն. իսկ իբր է կմնա-  
գործակ իւր մարմինն և միայնիոյ, քանզի պարտ էր զոլ  
այսպիսիս, և զայդոցն յորս բնակեաց բոլորեցունն Աս-  
տուած:

**Նորին ի լուծմանն Դ. նզովման.**

85        **Քանզի միում դիմի զ' ի յաւետարանսն վերագրել է**

\*.) Զեւազըսւմ՝ սոսւրդ։

ի ճայնն Ենթակացութեան միում Բանին մարմնացելոյ.  
Քանզի մի Տէր Յիսուս Քրիստոս ըստ գրիցեալմա:

Նորին ի մեկնուրենէ Հմայմանն.

Բայց զայն տես, մարդոյ մարտուցելոյ առ նա տեսաւ-  
նել ասէ զԱստուած դէմ առ դէմ և տեսակ զնա անուանէ 5  
Աստուածոյ քանզի մնաց Աստուածոյն Բան և մարդ եղեալ  
ի կերպի Հաւրն:

Նորին որ զԹեւոդորէայ.

Ընծայս առքերիլ ասէ ի մոգացն ի ճահքն և իմանալ-  
ւոյ և տեսանելուոյ բաժանելով յերկուս. և դարձեալ յետ 10  
Միաւորութեանն զմին զՏէր Յիսուս Քրիստոս: | Քանզի իմա-  
նալին եղեւ տեսանելի, հչ փոխարկութեամբ բնութեան,  
այդ միաւորութեամբ առ երևելին մարմին. վասն զի և  
ինքնատինս և սպասաւորս եղանել Բանին զսուր(բ)ս առա-  
քեալմն, գիրն ասէ քահանայական<sup>1</sup>. և այս իբր ոչ ամեն- 15  
նայն ումնք հաւաստի, որպէս է մամարմին և անշաւշափելի  
յԱստուածոյ Հաւրէ Բանն, այդ գտանեմ զսուրբսն ասելով  
աշակերտուն. «Որ էրն ի սկսանէ, զոր լուաքն, յոր հայե-  
ցաքն աշաւք մերովք, զոր տեսաքն և ձեռք մեր շաշափե-  
ցին յաղագս Բանին կենդանութեանն»:  
20

85v.

Ը. Երրորդ գլուխ հայիոյութեանց ի թղթոյն  
Ղեօվնայ.

Քանզի քաղցնուլն և ծարաւել և վաստակելն և ննջել  
խոստովանաբար է մարդոյ. այդ ե.\* հացիւքն հինգ հա-  
զարս մարդկան յագեցուցանել և շնորհել Սամարուհեայն 25  
կենդանի ջուր, ուստի դուղելով նեմայ գոյր ոչ ևս ծա-  
րաւել, և ի վերայ մկանանց ծովու ճեմեալ՝ ոտիցն ոչ  
գնացելոց, իսկ զկոհակացն այտմունս վերասաստելով մրրկին  
կաղաղանալ, աներկրայապէս է Աստուածոյ: |

Պիտառութիւնն ներձուածողացն, որոց բաղա- 30 86r.  
ձայնն նախասացեալին ի Ղեօվնայ.

Նեսօրի հերձուածողի հայիոյութիւնն.

Եւ զի զայս հաւաստագոյնս և ամենեցուն զիրընկալս  
ասացից՝ զԱրիստի Եւնոմեայ և զամնեցուն պարուցն

Լուսանցքում՝ «հինգ».

<sup>1)</sup> Հմմա. Զուկ. Ա. 2.      <sup>2)</sup> Ա. Ցովհ. Ա. 1.

այսպիսեացս տում<sup>(?)</sup> փականաց փոյթ Աստուածածին ներածել, իբր խառնութեան եղելոյ և երկուց բնութեանց ոչ բաժանելոց, մի ինչ ի նուաստիցն առ մարդկութիւնն առնուլ և հնար այնուհետեւ նոցա զաստուածութենէն ունել, որպէս ամենեցուն ասացելոցն ի միոջէ, ոչ ըստ շարայարութեանն արժանաւորութեան, այդ ըստ լնութեան. քանզի մի Քրիստոս, մի Տէր. այդ ի վերայ Քրիստոսի, ի վերայ Մէնածնին ասեմ Որդւոյ և Քրիստոսն և Որդին երբեմն ի վերայ աստուածութեանն, իսկ երբեմն, ի վերայ 10 մարդկութեանն:

**Թեոդորեայ հերձուածողի զնզովիցն հայինյուրիւնք.**

Ո՞ւմ զքաղցնուլն և զծարաւելն առյարեսցուք. ում զվաստակն և զքունն. ում զանգիտութիւնն և զերկիւղն. ո՞ հրեշտեկականի կարաւտացեալ մարտակցութեան, եթ' 15 Աստուածոյն Բանի այսք, ի՞ր անգիտացաւ իմաստութիւնն. 86v. ի՞ր արդեւք կոչեսցի իմաստութիւն, զանգիտութեանն ունելով ախտ. և ի՞ր արդեւք ճշմարտեսցի ասելով՝ ունել զամենայն զՀաւրն<sup>1</sup>, զՀաւրն ոչ ունելով զդիտութիւն. քանզի միայն Հայր, ասէ, գիտէ զաւրն զայն<sup>2</sup>. ի՞ր արդեւք պատկեր 20 անայդափոխ իցէ ծնաւողին, ոչ զամենայն ունելով զՃնչին:

**Հականառութիւն առ ասացեալսն ի Ղեովնայ և նախ քան զնա հերձուածողացն.**

Զանազանութեամբ ի Տեառնէ գործելոցն՝ աստուածավայելչիցն և մարդկայնից, ի բաց բաժանել զարձեալ 25 կամին զմին զՏէրն մեր Յիսուս Քրիստոս, Աստուածում Բանին առքաշնելով զաստուածավայելուչան, իսկ ի Մարեւայն մարդոյ զմարդկայինան. այդ ոչ ոք ի մէնջ ուղիղ խորհել սովորեցելոցս, ներեսցէ աւտար վարդապետացն, զի երանելի աւետարանիչքն հոմաձայնակի զմեղ 30 ուսուցին և վկայեն յաղագս մարմնացելոյ Աստուածոյն Բանի սրբոյ և Աստուածածին Մարեւայ: Զի ծնաւ ըստ մարմնոյ ի Կուսէն Աստուածն Բան, զի խանձարրապատեղաւ և կաթնարուծեցաւ ի սրբոյ Կուսէն, կաթնարուծեալն երկրպագեցաւ ի մոգացն, և ի հրեշտակացն|փառաբանեցաւ 35 առ հովուաւքն իբր Աստուած. երկրպագեալն և փառաբանեալն յԵգիպտոս բացատարեալ լինի վասն երկիւղին Հերովդայ, մնաց աւրինակ նամենեսին եղեալ: ինքն ի Հաւրէ վկայեցաւ ի Յորդանան, իբր հարազատ գոլ ծնունդ իւրոյն

<sup>1)</sup> Հմմա. Յովհ. ԺԶ. 15. և այլուք. <sup>2)</sup> Մատթ. ԽԴ. 36., և այլուք.

ծնաւղին. յետ արբելոյն զջուրս առ մաքրութիւն մկրտելոցն ի Հաւրէ վկայեալն փորձիւր ի բանսարկուէն և յետ քառասուն աւուրց քաղցեաւ. քաղցեալն յանապատի սպասաւորիւր ի հրեշտակաց՝ իրը Տէր նոցա գոլով. սպասաւորեալն ի հրեշտակաց վաստակեաց յուղեորութենէն ճ և ասէ Սամարուհւոյն՝ նստեալ ի վերայ աղբերն. «Տուր ինձ ըմպել»<sup>1)</sup>. և իրով լեզուով զծածուկս Սամարուհւոյ կնոշն յայտնեաց և չնորհեաց նեմայ զկենդանին ջուր, սակս որոյ և Մեսահաս ի նեմայն խոստովանեցաւ, որ թարգմանի աւծեալ իսկ եթ' ըստ մասին զայս բացատրես 10 Աստուածում Բանին, Քր աղաքաւ մարդկայնւոյ լեզուոյ կարաւանայր. քաղցեալն յանապատի ի հրեշտակացն սպասաւորեալ՝ Խնդն կերակրեաց զամբոխսն յանապատին և երբեմն ասէ Փիղիպպոսի՝ փորձելով զնա. «Ուստի զնեսցուք հացս, զի կերիցնն այսքանքս, ինքն գիտելով զինչ 15 հանդերձեալ էր առնելք»<sup>2)</sup>. իսկ երբեմն դարձեալ հարցանէր «Քանիս հացս ունիք»<sup>3)</sup>, ոչ անդիտանալով, այդ վկայական կամեցեալ առնել զ' ի նոցանէն ասացեալն և ցուցանել զգանչին գերազանցութիւն. Քանզի տնտեսէր բաղում անգամ զանդիտութեանն ձե, գիտելով հաւաստապէս 20 զհանդերձելոցն կատարումն. Որ կերակրեաց ի հինգ հացիցն հինգ հազարս, սա ննջէր ի վերայ մնարնոցի. և ի վերայ մնարնոցի ննջեցեալն, ինքն վերասաստեաց հողմոցն իրը Աստուած և եասաց ծովուն. «Ուեաց, կարկեցիր». և հրամանաւ ասաւղին եղել խաղաղութիւն մեծա՝<sup>4)</sup> Խնդն ճեմեն- 25 շաւ ի վերայ ծովուն իրը ի վերայ յատակի, զի Աստուած էր մարմնացեալ, եդաւղ նմա սահմանս և փականս, քանզի նովաւ արարաւ ամենայն, որ յերկնի և որ յերկրի, որպէս ասէ Պաւղոս<sup>5)</sup>. յասեն զամենայն, ոչինչ եթող| նմա անհնազանդ, քանզի ծառայականքն նմա գոլ ամենայնքն: 30

Ապ' ուղեմն, եթ' Աստուած է Քրիստոս մարմնացեալ անյեղարար և մարդ եղեալ ըստ ճշմարտութեան ի սրբոյն կուսէ ծնիցեալն, անյերկուարար Աստուածածին է սուրբն Կոյս՝ իրը զԱստուածն ծնեալ զԵմմանուէզն: Եւ մարմնացելում Աստուածում Բանին սակս մերոյ փրկութեան առ- 35 բաշխեւիք մեք զԱստուածավայելուչս և զմարդկայինս, ըստ

<sup>1)</sup> Յովհ. Գ. 7.                  <sup>2)</sup> Յովհ. Զ. 5. հմմա. Մատթ. ԺԵ. 33., Մարկ. Ը. 4.                  <sup>3)</sup> Մարկ. Ը. 5. հմմա. Մատթ. ԺԵ. 34.                  <sup>4)</sup> Մարկ. Դ. 39. հմմա. Մատթ. Ը. 26., Ղուկ. Ը. 24.                  <sup>5)</sup> Հմմա. Ա. Կորնթ. Ը. 6. (?).

սրբոցն առաքելոց և ուղղափառացն եպիսկոպոսաց վարդապետութեան:

Պիտառութիւնն երանելեացն մերոց հարանց եւ եպիսկոպոսաց հաստատիչ զառ ի մէջ ասանցեալն, իսկ ի բաց տապալիչ զամպարիւս նախասեցելոց հերձուածողացն աղանդս.

Երանելւոյ Թեւոդոսայ եպիսկոպոսի Անկիւրայ.

Իբր զմի և զնոյն աստուածաբար փառաւորեալ և կրելով զմարդկայինան. և զայս մնագ խոստովանակից եղի-  
10 ցին ամենեցնան, որք միաւորութիւն խոստովանեն և աստուածութեանն և մարդկութեան Քանզի միացեալն ոչ ևս երկու, այդ մի անուանի. իսկ եթե մի որ դարձեալ ներսամտութիւն. և եթ՛ իւրաքանչիւր առանձինն դիտես,  
88v. ուրեմն լուծցես զմիաւորութիւնն. քանզի անկարելի միան-  
15 գամայն և պահել զմիաւորութիւնն և զիւրաքանչիւր ա- ռանձինն դիտել, այդ միաւորեալն անլուծակի մի եզեւ և ոչ ևս լինի երկու. այդ կարծեաւք միայն որոշեմ, ասէ. ապ' ուրեմն նովին իմացութեամբ և զմիաւորութիւնն լու- ծեր. քանզի որով զատուսցես ի միւսոմէն զմիւսն, (ն)ո-  
20 վիմբ և զմիաւորութիւնն հատեր. զի ևս վերլուծանես զանարէնութիւն փրկական, երկուս իմանալով և զմիաւո- րութիւնն անգուսնելով:

Եւ յետ այդոց.

Եթե միաւորեցուցանես բանիւ, մի հատցես իմա-  
25 ցութեամբ. իսկ եթե հատանես իմացութեամբն, զմիաւ- որութիւնն ուրացար. Մի այսուհետեւ ի բնութիւնն որոշեալս ստորածեսցես զմտածութիւնն Աստուծոյ ի ծայրն հրաշագործեալ զմիաւորութիւնն, հաւատաք պանչին և մի քննէր մտածութեամբ զեղեալն, մի քակեսցես զպանչն.  
30 գտանել զԲանն հակառակելով. քանզի ոչ մնայ հրաշափառ բանն, եթե ճանաչի:

Երանելւոյ Կիւրիղի եպիսկոպոսապետի Աղեքսանդ- րեայ՝ ի գանձեն եթե զի տնաւրէնութեան սակս անգիտանալ ձեւանայ. |

89r. 35 Ասէ ուրեմն առ իւրն աշակերտս Փրկիչն՝ «Ղազա-

բոս բարեկամ մեր ննջեաց»<sup>1</sup>. և այն ոչ ուրուք պատմեալ նմա յաղագս նորա, այդ իբր Աստուած զամենայն ճանաչելով։ Ապա երկար վարեալ ճանապարհ հանդերձ աշակերտաւքն, գայ առ յիշեցելոյն քորս և հարցանէ. «Ուր եղիք զնա»<sup>2</sup>. որ գիտէն եթե ննջեաց, իբր ոչ գիտէ զտե- 5 ղին, ուր կայր մարտինն. այդ գիտէ, քանզի անհաւան զայն գիտել, իսկ զայս անգիտանալ. Որպէս ուրեմն տնաւրէնութեան ուրուք սակս զոչն գիտել ուր կայր Դազարոս ասէր, այսպէս և յաղագս աւուրն և ժամու. թեպէտ ասէ ոչ գիտել, պիտանացու իմն և բարի անաւրինելով զայս 10 առնէ, քանզի գիտէ:

Եւ դարձեալ.

«Չո զիս ասեն մարդիկ գոլ զՈրդիս Մարդոյ»<sup>3</sup>. տընտեսէ իմն բազում անդամ զանդիտութեանն ձե. քանզի գիտէր զինչ հանդերձեալ եին ասել աշակերտքն. առածէ 15 զհարցումնն, զի ընդունելով զնոցա պատասխանին, հաստատեանցէ զհաւատու:

Եւ յետ սակաւուց.

զնոյն դիտաւորութիւն ի սկզբանէ իւրոց հայեայտեանցն  
մինչ ի կատարած պահել կամնցեալ. քանզի յետ սակա-  
ւուց ասէ. իբր զի ի նմա մնացեալ ծանիցի յատկութիւն  
25 աստուծածյանոյ և մարդկայնոյ մարմնաւորութեանն ան-  
բաժանելի, զի տացէ իմանալ առանձինն զմարդկութեան  
բնութիւն, զսաշելն և մնուանել և յառնել. իսկ աւտար  
Աստուծոյ առակս առանձնաւորութեանն բնութեան անախ-  
տակրի և անմահի Աստուծոյ: Եւ նմայն այս զ' ի նմքնէ  
30 նախաացելումն այտպէս պահէ իսկ երկաքանչիւր բնու-  
թիւնն անպակասաբար զիւրն յատկութիւն. ոչ իսկ ունիս  
իմանալ իբր և զյատկութիւնն երկաքանչիւրոյ բնութեանն  
115v. մնալ ի վերայ Քրիստոսիկամի, որ զամնայն որպէս պա-  
տահեաց բարբառաւզ. և իբր անբաժանելի աստուծածյան-  
35 ւոյն և մարդկայնոյ բնութեան յատկութիւնն ձանաշիլ կա-  
րիցի. քանզի իւրաքանչիւր առբաշխելով, զառեալս նմա և  
գվայելուչ, որպէս իւր թուի, ամենայն ուրեք և ամենայնիւ-  
երկուս Քրիստոս խոստովանի:  
իսկ մեկ՝ դիտելով մարդ անյեղապէս եղեալ զԱս-

\* Կուտանցքում՝ « . . . սելով».

առածն Բան սակա մերոյ փրկութեան, իբր իւրում մարմ-  
նով Բանին եղելում, բաշխեւք զատուածավայելուչս. իսկ  
եթե իւր եղելոյ Աստուծոյն Բանի մարմինն և ամենայնքն  
կենագործի մարմնոյ նորա, իւրք եղեն Բանին: Քանզի  
եթ՝ Որդի Աստուծոյ և եթե Քրիստոս և եթե Տէր և եթե 5  
Յիսուս և եթ՝ Որդի մարդոյ և եթե մարդ, լուիցուք առ-  
տուածային գրութեանն, յետ աւետառորելոյն դրեշտակն  
Գարբիչզ սրբումն Կուսաին՝ յազագս առնլոյ զնէ յորովայնի  
և ծնանել զեմմանուէզն ի Հոգւոյ Սրբոյ. Աստուած մարմ-  
նացեալ անյեղապէս իմանամք մեք և հաւատամք գոլ զ' ի 10  
նէմայ ծնի ցեան և զսա խաչեցեալ և մահու ճաշտկեալ 116r.  
մարմնով իւրով. և թաղեցեալ և յարուցեալ, ոչ գիտելով և  
ոչ հաւանելով ի բաց հատանել յատկութիւնս բնութեանց՝  
երկուս զմին Տէր մեր Յիսուս Քրիստոս, ըստ սրբոց առա-  
քելոյն և աւետարանչաց և վարդապետաց եկեղեցւոյ աւան- 15  
դութիւնս և խոստովանութիւնս:

Պիտառութիւնն Երանելեացն մերոց հարանց եւ  
եպիսկապոսաց հաստատիչ զառ ի մէնջ ասա-  
ցեալսն, իսկ ի բաց տապալիչ զամպարիւս հա-  
խասացելոց հերձուածողացն սոյանդս. 20

Երանելոյ Աքանասի եպիսկապոսապեսի Աղեքանդրի՝  
ի բղբոյն որ առ Աղեղփիօն.

Եւ ոչ իսկ վասն զի ծառայի կերպ եառ, որ ի կեր-  
պում Աստուծոյ գոյր Որդին, նուազեցաւ յԱստուածութե-  
նէն, այդ յաւէտ ինքն ազատիչ ամենայն մարմնոյ և ամե- 25  
նայն արարածոյ եղեն. և եթ՝ «Աստուած առաքեաց զՈրդին  
իւր՝ եղեալ ի կնոջէ»<sup>1</sup>, ոչ ամաւթ մեզ ի վերայ ածէ իրս,  
այդ մանաւանդ բարեփառութիւն և մեծ չնորհ, քանզի  
եղեն մարդ, զի զմեզ աստուածազորդեսցէ. և եղեն ի կնոջէ  
և ծնիցաւ ի Կուսէ, զի զմեր ծնելութիւնն յինքն փոխա- 30  
բերեսցէ, և լինիցիմք ապա ազգ սուրբ և հաւասարորդք 116v.  
աստուածայնոյ բնութեանն, որպէս զրեաց երանելին Պետ-  
րոս<sup>2</sup>. և անկարելին իսկ աւրինի, յորում տկարանայր  
մարմնով, Աստուած զիւրն Որդի առաքեալ նոմանութեան  
մարմնոյ մեղաց, և վասն մեղաց դատապարտեաց զմեղօն՝ յա-  
ի մարմնի. Զառեալն այսուհետեւ ի Բանէն մարմին՝ յա-

<sup>1)</sup> Դադատ. Դ. 4.

<sup>2)</sup> Հմմա. Ա, Պետր. Բ. 9.

զագս զամենայն մարդիկ աղատեցուցանել, և զամենեսեան  
ի մեսելոց յարուցանել և զամենեսեան ի մեղաց փըրկա-  
նաւորել ի՞բր զայս արհամարհութքն կամ վասն այ-  
սորիկ ամբաստանողք զՈրդւոյ Աստուծոյ, իբր արար-  
5 ման և շինածի, ոչ անշնորչք երևին և ամենայնի են  
արժանաւորք ատելութեան. քանզի միայն ոչ գոչեն Աս-  
տուծոյ ասելով. մի առաքեր զքո Որդիդ զՄէնածին մարմ-  
նով. մի արասցես զնա ի կուտէ մարմին առնուլ, զի մի  
փրկանեսցէ զմեզ ի մահուանէ և ի մեղաց. ոչ կամիւլք  
10 զնա ի մարմին եղեալ, զի մի զվասն մերն համբերեսցէ մահ:  
Ո՛չ խոհիմք զԲանն մարմին եղանել, զի այսուիկ միջնորդ  
117r. մեզ հղիցիզառ քեզ զճանապարհին, և զյերկինս բնակես-  
ցուք աւթս. փակեսցին դրունք երկնից, զի մի ի ձեռն  
վարագուրի մարմնոյ նորա զյերկինսն մեզ ուղի նորոգեսցէ  
15 քո Բանդ. այսորիկ ահա նոցա ձայնք:

ԵՐԱՅՆԵԼԻՈՅ ԹԵՌՈԴՈՍԻ Եպիսկոպոսի ԱՅԵԿԻՒՐԱՅ ՈՐ Ի  
ՃՆՈՒՆԴԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ.

Երեցաւ այսունեաւ Աստուած այսաւը ի կուսէ, և  
Կոյսն մեաց կոյս և մայր եղի. քանզի անաղականութեան  
20 առիթն ապականութիւն ոչ գործէ, արարիչն անմահու-  
թեան ոչինչ ապականեաց Արդ՝ վասն զի և Փոտինոս սոսկ  
մարդ ասէ զծնիցեալն, Աստուծոյ ոչ ասելով գոլ զծնունդն,  
զյարգանդէն յառաջ եկեալ, մարդ ենթադրէ բաժանեալ  
յԱստուծոյ, ասաացէ ինձ այժմ՝ իբր բնութիւն մարդկա-  
25 յին ի ձեռն արգանդի կուսականի ծնիցեալ, զկուսութիւն  
մաւրն պահեաց անապական. քանզի ոչ ուրուք մարդոյ  
մայր կոյս մնաց: Տիսանիս իբր երկակս մատածութիւնս  
յազակս ծնիցելոյն պարունակէ ինձ եղեալն մանզի եթ՛  
ըստ մեզ ծնիցեաւ, մարդ էր. իսկ եթե զմայրն կոյս պա-  
117v. 30 հեաց, Աստուած ծնիցեալն քաջախորհրդոցն ձանաչի:

ԵՐԱՅՆԵԼԻՈՅ Կիւրգի Եպիսկոպոսապետի Աղեխանդրի՝  
յորում երե մի Քրիստոսն. եւ եղեւ իբրեւ ի դիմաց հե-  
ծուածողաց բանս.

Ո՛չ ասենք, ասեն, զմարդն Որդի գոլ բնութեամբ  
35 Աստուծոյ, զի մի երկուս բնութեամբ որդիս ասիցենք.  
քանզի որդէս յերկնուսան վայր եկեալ Բանն ոչ է ըստ  
բնութեան որդի Դաւթի, այսպէս և ոչ ի սերմանէն Դաւ-  
թի Որդի է ըստ բնութեան Աստուծոյ:

Ապա երանելին կիւրիդոս առ այս.

Բաժանեցին ահա յորդիս երկուս և երկոքեան ստանունք տեսցին արդեւք, եթ' ոչ անուանեցաւ Որդի Դաւթի յԱստուծոյ Հաւրէ Բանն:

Եւ դարձեալ.

5

Քանզի որ բնութեամբ յԱստուծոյ և ի Հաւրէ վերափայլեալ Բանն յառութեան\* եղելոյ մարմնոյ և արեան, որպէս ասացի այժմ, մնաց ինքն բնութեամբ և ճշմարտապէս Որդի Հաւր, մի ելով և միայն, և ոչ իրին միւս ընդմիւսում, զի և մի նորա իմանայցի դէմ:

10

Եւ յետ այդոց.

Քանզի մնաց որպէս էր Բանն և եղև մարմին . . . . \*\*  
ամենայնին ևս անդր և յամինայնի եղեալ սակա մարդ- 118r.  
կայնւոյն ապրեալ ունիցի զգոլն գեր զամնայն և թափմանն  
ևս անդր չափոց:

15

**ԺԳ. Գլուխ հայհօյութեանց ի թղթոյն Ղեովնի.**

Որ զբնութիւնն մնր ի Մէնածնին Որդւոց Աստուծոյ,  
ոչ ի ձեռն նուաստութեան մարդկութեան և ոչ ի ձեռն  
փառացն ծանեաւ յարութեանն:

Պիտառութիւնք հերձուածողացն, որոց բաղա- 20  
ձայնք նախասացեալքն ի Ղեովնայ.

Նեսուրի հերձուածողի հայհօյութիւնք ի բառակէ ԺԶ.

Եւ բոլորովին ասէ եթե զամնայն համուռ զնորն ընտրեսցես, ոչ ևս գտցես ոչ ուրեք Աստուծոյ զմանն առյարեալ, այդ կամ Քրիստոսի, կամ Որդւոյ կամ Տեառն. 25  
քանզի Քրիստոսն և Որդին և Տէրն ի վերայ Մէնածնին ի  
զրութենէն առեալ բնութեանցն է երկուց նշանակ. և եր-  
բեմն զեկուցանէ զաստուածութիւն, իսկ երբեմն զերկական:

Նորին.

Ի՞նւր երանելւոյն Պաւղոսի յայտնապէս գոչաւղին. 30

\* ) Հոււանցքում՝ «առընդունելութեան»,      \*\*) Մի անվեր-  
ծանելի բառ.

ով է խաչեցեալն, լնւր այսուհետե յայտնագունի ձայնի. «Քանզի և խաչեցաւ ի տկարութենէ»<sup>1)</sup>. ո տկարացաւ, հերձուածող, Աստուածն Բան.

### Նորին.

118v. 5      Յաղագս շաւշափելոյս այսորիկի Պետրաս գոչէր. «Զայս Քրիստոս յարոյց Աստուած, ածովս Աստուծոյ քարձրացեալ»<sup>2)</sup>. իսկ աչովս աւգնելոյ Աստուածն Բան ոչ պիտայր արիէ(?)»:

Դիոդորայ հերձուածողի հայիոյութիւնն ի բանեն որ  
10 յսղազս Եերմարդութեան.

Սակս որոյ այսուհետե միոյ Հաւր ոչ ասեմք. իսկ մի Աստուծոյ բնութեամբ գոյ Որդի զԱստուածն Բան, իսկ զ' ի Մարեմայն բնութեամբ Դաւթի, իսկ չնորհիւ Աստուծոյ:

### 15      Եւ յետ այդոցն.

Քանզի նախ քան զրուժանիլ սենուագոյն տուկաւին և անսապական յարեաւ, և ոչ երիս բոլորովին աւուրս ի զերեզմանի թողաւ.

Թեզորիայ հերձուածողի հայիոյութիւնն ի հա-  
20 կանառութենէ «Դ. նզովմանն».

Իսկ պիտի հաւանել Ցեսան ցուցաւգին զերկուա բնութիւնս և ասաւզին հրեից. «Լուծէք զբագինս զայս և յիրիս աւուրս կանգնեմ զդա»<sup>3)</sup>. քանզի ցուցանէ լուծեալ զբագինս, և զկանդնիչն Աստուած:

25      Հականառութիւն առ ասացեալսն ի Ղեով- նայ եւ նոյիս բան զնան հերձուածողացն.

Սզգակիցք և այսոքիկ առ ի նմանէ ասացելոցն. քանզի զբնութիւնն ասէ զմեր ոչ զիտացի Միածնին Որդւոյ Աստուծոյ, և ոչ ի ձեռն նուաստութեան մարդկութեաննն| և ոչ 30 ի ձեռն փառաց յարութեանն. նուաստութիւն ասելով

<sup>1)</sup> Հմմա. Բ. Կոբնթ. ԺԴ. 4.

<sup>2)</sup> Գործք Բ. 22—33.

<sup>3)</sup> Յովհ. Բ. 19. Հմմա. Մատթ. ԽԶ. 61., Մաք. ԺԴ. 58. և Մաթ. Խէ. 40., Մաք. ԺԵ. 29.

դկրելն և մեռանելն և թաղիլ զյարտակցեալն ունակաբար մարդոյն բնութիւն Աստուծոյն Բանի, որպէս նմա թուի, զոր և փառաւորիլ ասէ յԱստուծոյն Բանէ, յարուցեալն ի մեռելոց Նմանս դարձեալ բարբառելով, որոց ահա նախեասաց. քանզի եասաց յառաջադոյն այսպէս. «Թե- 5  
պէտ և յաւէտ իսկ ի Տեառն Յիսուսի Քրիստոսի, Աստու-  
ծոյ և մարդոյ, մի է գէմ, սակայն այզ է այն, ուստի եր-  
կաքանչիւրումն հասարակ ասի վասն ընտանութեանն  
թշնամանք, և այդ ուստի հասարակ փառացն պատա-  
հեաց. քանզի զբնութիւնս մեր դարձեալ անուանելով 10  
ի Մարեմայ մարդ, Մէնածին ասաց Որդի Աստուծոյ զԱս-  
տուածն Բան, յատուկ և ըստ մասին եղեալ մարդոյն զա-  
ռանձնացեալաւն և զվայելուչ նմա, որպէս համարի առբաշ-  
խելով նուաստութիւն ախտակրութեան և մահու. իսկ Մէ-  
նածին դարձեալ զվայելուչս և զյատուկս, զփառս յա- 15  
րութեանն, ապրեցանելով\* որպէս կարծէ. և զի այս|  
դիտաւորութիւն նորա, ի վերայ բերէ դարձեալ յետ սա- 119r.  
կաւուց. ասելով՝ զի զորոյ դիտէ զմահ, դիտացէ և զմար-  
մինն և մի զմերոյ իսկ մարդ զնա ուրասցի, զոր ախտա-  
կիրն դիտաց եղեալ. և վասն զի ուրացութիւն ճշմարտի 20  
մարմնոյն, ուրացութիւն է և կրից մարմնոյն. և այսոցիկ ի  
վերայ բերէ վ(?)ետ սակաւուց. մի այսուհետե ուրասցի զնա  
մարդ, զոր կրելին դիտաց եղեալ. այդ ոչ է նուաստու-  
թեան մարդկանուոյ ախտակրութեամբ խաչին քակտումն  
եղանել մարմնոյն կրից և կործանումն, նմին բանսար- 25  
կուին. քանզի որք Քրիստոսի Յիսուսի ի ճահագործու-  
թեան խաչին զմարմինն խաչեցին ախտակրութեամբքն և  
դանկութեամբք<sup>1</sup>, և կեան հոգեորապէս յարուցեալք ընդ  
Քրիստոսի և զվերինն խորհին<sup>2</sup>, ի բաց հրաժարեալք ա-  
մինեին հիւանդանալ զմարմնոցն և երկրային իրս և կիրս. 30  
և եթե Քրիստոսիքն այսպէս, անբազդատաբար ուրիհին զիր  
ունի այսր ճահագործիչն. խաղաղազործեաց ի ձեռն արեան  
խաչի իւրոյ, և եթե զ' ի վերայ|կրկրիս, եթե զ' ի յերկինս, 120r.  
սպանեալ զթշնամութիւն յինքեան. և քաջալերութեամբ  
խայտառակեալ զպետութիւնս և զիշանութիւնս. և մա- 85  
հուամբ փրկականաւ մեսուցեալ զմահ, ոչն սատրակացեալ  
մահու, այդ իշխանութիւն ունելով դնել զանձն, առ որ  
ոչ ունէր ոչինչ իշխան յաւիտենիս այսորիկ. այդ կամա-

\* Լուսանցքսւմ՝ «ամբողջ պահելով».

<sup>1)</sup> Հմմա. Գաղտա. Ե. 24.

<sup>2)</sup> Հմմա. Կողաս. Դ. 1.

ԶԽՄԾԵՍԽ ԶԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

ւորապէս մատնեաց զինքն ի խաչիւն մահ, միայն ի մեռեալս աղատ, իբր միայն Աստուած և ոչ գիտակ մեղաց, որով մահ յաշխարհ եկն:

Զի՞նչ բարձրագոյնս կարծէ նորս Նեստորիոս, զան ուաւելցելոյ այսչափ զաւրութիւն իւաչիս, յորում և միայնում պարծի երանելին Պաւղոս<sup>1</sup>, և աղաւթէ մի յայղում ումեք զպարծանսն ունել. քանզի արիս այս և իմաստուն, որպէս կարծէ վարդապետս, անհաւանեսցի սովորաբար Աստուածաշունչ գրիցելոց և ընդդիմասցի: իսկ մեք առա-  
10 քելական հետոցն հետևացեալք և զուղղափառաց եպիսկա-  
պոսաց վարդապետութեանց, հաւատաւէք զթիսու Քրիս-  
120v. տոսն ճշմարիտ գոլ Աստուած և կենդանութիւն յաւիտենական<sup>2</sup>. և «Աստուած բարերանեալ յաւիտեանս ամէն»<sup>3</sup>: և նզովեմք որք երկուս բնութիւնս կամ երկուս դէմս  
15 խորհին կամ ասեն ի վերայ միոյ Քրիստոսի. քանզի ախ-  
տակրելի մեք ուսաք զԴրիստոս և նախնի յարութենէ մեռելոց եղեալ ախտակրելին. և լոյս քարոզեալ զինքն ընդ երկնաւս, և պատմեալ զնա ի մարդարէիցն և առաքելոց և սրբոցն հարանց. քանզի Էսայիս ասէր. «Լուսաւորեաց,  
20 լուսաւորեաց Երուսալէմ. եկն իսկ քո լոյս և փառք Տեառն  
ի քեզ ծագեցին»<sup>4</sup>: Քանզի լուսաւորեցաւ սուրբ եկեղեցի  
և փառաւորեցաւ, բնակելով զախտակրելին Քրիստոս ի սիրտս մեր սրբով Հոգւով. իսկ այս աւտար է ամենեին մարդկային բնութեան, որում որոշէ ախտակրին վասն  
25 մեր, որ ի հակառակէն իսկ երանելին Յովաննէս «Էր,  
ասէ, լոյսն ճշմարիտ, որ լուսաւորէր զամենայն մարդ,  
եկեալն յաշխարհ»<sup>5</sup>. այսուիկ լուսով ասելով արուեստա-  
գործիլ զերկին և զերկիր և զամենայն զ ի նոսայն: Եւ  
արուեստագործելն իսկ աւտար է ամենեին մարդոյ բնու-  
121r. 30 թեան, քանզի Աստուած զիտէ զմարմնացեալն զԱստու-  
ծոյն Բան երանելին Յովաննէս. իսկ երանելիք հարքն այ-  
սոցիկ հետևացեալք՝ զՏէրն Յիսուս Քրիստոս Աստուած  
յԱստուծոյ, և լոյս ի Լուսոյ, և Աստուած ճշմարիտ յԱս-  
տուծոյ ճշմարտէ քարոզեցին ընդ երկնաւս Զայս ճըշմա-  
35 րիտս Աստուած ստորեկեալ և մարմնացեալ ասելով ի սրբոյ  
կուսէն և երեւեալ աշխարհի, և ասելով «Ես լոյս յաշ-  
խարհս յայս եկի, զի որք ոչ տեսանեն, տեսցեն»<sup>6</sup>. և դար-

<sup>1)</sup> Հմմա. Դաղստ. Զ. 14.

<sup>2)</sup> Հմմա. Ա. Յովհ. Ե. 20

<sup>3)</sup> Հռովմ. Բ. 5.

<sup>4)</sup> Եսայի Կ. 1.

<sup>5)</sup> Յովհ. Ա. 9.

<sup>6)</sup> Յովհ.

ԾԲ. 46. Հմմա. Բ. 39.

ձեալ «Ես եմ լոյս աշխարհի»<sup>1</sup>: Այս ճշմարիտս Աստուած,  
լոյս աշխարհի, կենդանութիւնս, քանզի «Ես եմ, ասէ, յա-  
րութիւն և կենդանութիւն»<sup>2</sup>, «Աստուած բարեբանեալ յա-  
ւիտեանս ամէն»<sup>3</sup>, մեծն Աստուած և Փրկիչ մեր Յիսուս  
Քրիստոս քարողեցաւ ախտակրելի ի սրբոց առաքելոց, 5  
քանզի երանելին Պետրոս ասէ «Քրիստոսի կրաւզի մարմ-  
նով վասն մեր»<sup>4</sup>. իսկ երանելին Պաւոս՝ «Առունելով \*  
զերանելին յոյս և զյայտնութիւն փառաց մեծին Աստու-  
ծոյ և Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ետ զինքն  
վասն մեր, զի փրկեցէ զմեզ յամենայն անաւրէնութենէ»<sup>10</sup>

121v.

և մաքրեացէ իւր ժողովուրդ առանձինն, նախանձաւոր ազ-  
նիւ գործոցն»<sup>5</sup>: Այսորիկ կրաւզին վասն մեր ճահագոր-  
ծութիւնք: Պատկառեացեն հերձուածողք. քանզի եթե մեք  
լաեացուք, քարինքն աղաղակեացեն, եթ՝ այսպիկ բնութեան  
մարդկայնոյ ոչ են կատարելութիւնք, այդ Եմմանուեզի<sup>15</sup>  
մարմնացելոյ Աստուծոյն Բանի, և եղելոյ մարդոյ, ըստ ճշ-  
մարտութեան մնալով որ էրն: Եւ զայս ցուցանէ երանե-  
լին Պաւոս դարձեալ ասելով. մարդ Յիսուս Քրիստոս  
տուիչն զինքն փոխափրկանակ վասն ամենեցուն»<sup>6</sup>. իսկ  
մարդոյ բնութիւն փոխափրկանակ տուանիլ ի վերայ ամե-  
նեցուն ոչ կարէր: Քանզի թեապէտ և մարդ անուանեացէ ի  
վերայ մեր տուիչն զինքն փոխափրկանակ, գիտէ զնոյն  
գոլ մեծ Աստուած և Փրկիչ Յիսուս Քրիստոս, և «Աստուած  
բարեբանեալ յաւիտեանս ամէն»<sup>7</sup>: Թեպէտ և Աստուած  
մեծ զնա անուանեացէ, զիտէ և եղեալ մարդ սակս մերոյ<sup>25</sup>  
փրկութեանն տնաւրէնաբար, քանզի Քրիստոս քարողէ  
զմնուեալն վասն մեր և թաղեան, և զյարուցեալն, որպէս  
երանելիք հարքն, որք ի նիկէա, զմարմնացեալն Աստուած  
ասելով ախտակրեալ, |յաւելին և զյարուցեալն և վերաց-  
եալն յերկինս, և գալոց դատել զկենդանիս և զմեռեալա: 30

122r.

Եւ զոշն այսպէս խորհեցաւզս յաղագս Քրիստոսի, նզով  
արարին սուրբ առաքեալքն և երանելիք հարքն, որք ի նի-  
կեայ, և յետ նոցա եղեալք սուրբ հարք, սրբոյ և ընդ-  
հանրական եկեղեցւոյ վարդապետք:

Պիտառութիւնն երանելեացն մերոց հարանց 35  
եւ եպիսկապոսաց հաստիչչ զառ ի մէնջ ասա-

\* ) Լուսանեցում՝ «մնալով լնկաց . . .».

<sup>1)</sup> Յովհ. Ը. 12.

<sup>2)</sup> Յովհ. ԾԱ. 25.

<sup>3)</sup> Հռովմ. Պ. 5.

<sup>4)</sup> Ա. Պետր. Պ. 1 (?).

<sup>5)</sup> Տիմոթ. Բ. 13—14.

<sup>6)</sup> Ա. Տիմոթ. Բ.

5—6.

<sup>7)</sup> Հռովմ. Պ. 5.

ցեալսն, իսկ տապալիչք գամպարիւս նախասացելոցն հերձուածողացն աղանդս.

Նրանելւոյ թուղիայ եպիսկոպոսաւգեթի Հռովմայ ի քրոջն որ առ ՚ինիսիոն.

- 5 Իսկ որք զյերկնուատն Աստուած խոստովանեն ի Կուսէ մարմնացեալ և մի գոլ ընդ մարմնոյն, զուր ծփեն ի բայսն ի նոցայցն ամպարշտութիւնս արտաբերեալք. քանզի ասեն և նոքա, որպէս լսեմ, երկուս բնութիւնս. և զայս ի Յովաննու հաւաստապէս միացուցաւդի զՏէրն յասելն՝  
 10 «Բանն մարմին եղեա»<sup>1)</sup>. և Պաւլոսի յասելն՝ «Մի Տէր Յիշ-սուս Քրիստոս, որով ամենայնն»<sup>2)</sup>: Քանզի եթե մի ի Կուսէն ծնիցնեալ անուանի և ինքն է, որով ամենայնն եղե, մի բնութիւն է, վասն զի դէմ մի, ոչ ունելով յերկուս  
 122v. բաժանումն, |վասն զի և ոչ առանձինն բնութիւն մարմին  
 15 և առանձինն բնութիւն աստուածութիւնն ըստ մարմնաւորութեան\*, այդ որպէս մարդ մի բնութիւն է, այսպէս և ի նմանութեան մարդոյ եղեալն Քրիստոս ՚իսկ եթ' ոչ ճանաչեն զըստ միաւորութեանն մի, կարեն և ի յոլովս բաժանել զմին, և բազումս ասել բնութիւնս. վասն զի  
 20 յովնատեսակ է մարմինն՝ յոսկերաց և ի զղաց և երակաց և մտոյ և մորթոյ, եղնգանց իսկ և մաղոց, արենէ ՚իսկ և ոգեցոյ, որք ամենայնք զանազանութիւն ունին առ երեարս. ՚իսկ մի բնութիւն է, իբր զի և աստուածութեանն ճշմարտութիւն մարմնովն մի է և յերկուս բնութիւնս ոչ բաժանի: Քանզի ոչ ևս կարէր զբուրոն Որդի մարդոյ կոչիլ, զիցնեալն յերկնուատ, և Որդի Աստուծոյ զծնիցնեալն ի կնոջէ, եթ' երկուց բնութեանցն բաժանումն առընդունէր. այդ իջեալն յերկնուատ կոչիւր արդեւք Որդի Աստուծոյ և ոչ որդի մարդոյ. ՚իսկ ծնիցնեալն ի կնոջէ կոչիւր  
 30 որդի մարդոյ և ոչ որդի Աստուծոյ. և այս հետեւանայ Պաւլոսի զիականիերձուածոյն, ՚իսկ զմեզ աստուածային գրութիւնքն ուսուցանեն իբր յաղագս միոյ Տնառն ՚իսկել ըստ յերկնուատ զայրիջութեան և զ' ի վերայ երկրի ծնելութիւնն. որք այսուհետեւ այսպէսն ՚իսկին, մի ի հոմաձայնութիւնս զամենայն ընդդէմ ՚իսկաւզաց արտաքս ելցեն, զի մի մտածու-
- 123r. 1) Հուսանցըում՝ «....աւոր....թեանն». 2) Ծնդ՝ 11 առող նկատութիւն, որոնցից միայն առաջին կամ առաջին երկու տառելն են մնացել, միւս կէսը կտրուած է.

1) Յովհ. Ա. 14.

2) Ա. Կորնթ. Ը. 6.

թեամբ բարեհամբաւելով, բայիւղն հայհոյեսցեն \*: Քանզի հարկ է զնոսա երկուս ասելով բնութիւնս՝ մին երկրպագել, իսկ զմիւն ոչ երկրպագել. յաստուածականն մկրտիլ, իսկ ի մարդկայինն ոչ մկրտիլ. իսկ եթ՛ ի մահն Տեառն մկըրտիւց <sup>1</sup>, մի խոստովանելք բնութիւն զանախտակիր աս- 5 տուածութեանն և զախտակիր մարմնոյն, զի այսպէս յԱստուած իցէ մկրտութիւնն մեր և ի մահն Տեառն կատա- 10 րեալ:

Եւ յետ այդոց.

Մի այսուհետն բաժանաւղացն պատճառս տացեն 10  
երկուս ասելով բնութիւնս, քանզի ոչ մարմինն ըստ ին-  
քեան բնութիւն, վասն զի և ոչ կենազործակ ըստ ինքեան,  
և ոչ բաժանիլ կարացնալ առանց կենազործին. և ոչ Բանն  
ըստ ինքեան յիւրնիբաժանի բնութիւն, զոր ունի ըստ ան- 123v.  
մարմնոյն. վասն զի և ի մարմնի Տէրն և ոչ անմարմնա- 15  
բար ներդիմեաց աշխարհի:

Երանելոյ Արանասի եպիսկապոսապետի Աղեքսանդ-  
րեայ յաղազս առմարմնաւորութեան Բանին.

Քանզի խոստովանելք ասէ և զոլ զնա Որդի Աստու-  
ծոյ, և Աստուած ըստ հոգոյ և Որդի մարդոյ ըստ մարմ- 20  
նոյ, ոչ երկուս բնութիւնս զմին Որդի, մին երկրպագելի  
և զմին աներկրպագելի, այդ մի բնութիւն Աստուծոյն  
Բանի մարմնացեալ և երկրպագեալ ընդ մարմնոյ իւրում,  
միով երկրպագութեամբ:

Եւ յետ սակաւուց.

25

Իսկ եթ՛ ոք քան զայս յաստուածայնոց գրութեանցն  
ուսուցանէ, միւս ասելով զԱրդին Աստուծոյ և միւս զ' ի Մարեմայն ըստ չնորհի որդեգործնցնալ, որպէս մկը, իբր  
զոլ երկուս որդիս՝ մին ըստ բնութեան Որդի Աստուծոյ  
զԱստուծոյն, և զմին ըստ չնորհին զ' ի Մարեմայն մարդ, 30  
կամ եթ՛ ոք զՏեառն մերոյ զմարմինն ի վերուստ ասէ, և  
մի ի կուսէ Մարեմայ, կամ յեղեալ զաստուածութիւնն ի  
մարմին, կամ խառնակեալ կամ այղայղեալ, կամ ախտա-  
կրելի զՏեառն զԱստուածութիւնն կամ ան|երկրպագելի 124r.  
զՏեառն մերոյ զմարմինն իբր մարդոյ, և ոչ երկրպագելի 35

<sup>1)</sup> ՀԱՅՎԱ. Զ. 3.

իբր Տեառն և Աստուծոյ մարմին, զսա նզովէ սուրբ և բոլորական եկեղեցի, հաւանեալ առաքելոյ ասաւղի՝ «Եթ' ոք ձեզ աւետարանէ քան զոր ընկալարուքն, նզով եղիցի»<sup>1)</sup>.

Նորին՝ ի տաւականեն ժԴ.

5 Քանզի ով մեր խնդութիւն կամ պարծումն, եթ' ոչ ախտակրեալն վասն մեր, և ինքեամբ ծանուցիչ մեր զՀայրն Տէրն մեր Յիսուս Քրիստոս. քանզի ոչ այդ, այդ ինքն է, որ և վաղ խաւսեցաւ ի մարզարէսն, և այժմ ամենեցուն ասելով ինքն՝ «Խաւսողս առընթեր եմ»<sup>2)</sup>:

10 Նորին՝ ի տա(ւ)նականէ ԺԱ. ԵՐԵՎԵԿ. ԾԵ. Դիսկե- տիանոսէ.

Ուստի Փրկիչն, որք լայինն և հետեանային նմա յերթալ նորա ընդդէմ մահու, սաստէր՝ մի լայք ասելով զիս<sup>3)</sup>. զայս ցուցանել կամեցեալ, զի ոչ սգի, այդ խըն- 15 դութեան էր Տեառն մահն. և զի թեպէտ և վասն մեր մոռցի, կեցցէ. քանզի ոչ յոչէիցն, այդ ի Հաւրէ է:

Նորին՝ յաղագս խաչի.

Քանզի և այս ոչ նոցա, այդ կախեցելոյ Փրկչին գործ. և զի կախեցեալ իբր զմարդ, զիշխանութիւնսն հա- 124v. 20 լածէր, իսկ զբանսարկուն ժամանէր և զդահիճան երկե- ցուցանէր, ոչ յելեալ զպատմուճանն. զի այսորիկ մնացե- լոց մնացէ և զիրեիցն յանդիմանութիւն, և յետ ոչ յո- լովից եղեալ, զի վարազոյրն պատառեցաւ, իսկ պատմու- ճանն Փրկչին և ոչ ի դահճացն բաժանեցաւ, այդ մնաց 25 ամբողջ, քանզի մնայ աւետարանն ամբողջ ստուերացն բաժանեցելոց:

Երանելոյ Կիւրդի եպիսկապոսապետի Աղիքսանդրեայ ի մեկնուրենէ Եօանին.

Զի այսուհետև ընդդէմ զարձուցանեն զտնաւրէնու- 80 թեանն բանս, և տարագծեն զիշմարտութիւնն, ամենեցուն ընդդէմ յարուցեալք Աստուածաշունչ զրոց. որք Աստուած ելով ճանաչեն և ներմարդացեալ զիրդին, մի զնա անուա- նեն ամենայն ուրեք. քանզի և յԱշխարհարարութեան

<sup>1)</sup> Գաղաւ. Ա. 8—9.  
Ղուկ. Խ. 28.

<sup>2)</sup> Եսայի ԾԲ. 6.

<sup>3)</sup> Հմմա.

մատենին գրեսաց Մովսէս, որպէս անցոյց աստուածաղանն Յակովը զհեղիղատն Յարովկայ զմանկունս իւր. «Եւ մնաց միայն, մարտնչէր ընդ նմա մարդ մինչ ի վաղորդայն. և կոչեաց Յակովը զանուն տեղույն այնորիկ տեսակ Աստուածոյ, քանզի տեսի, ասէ, զԱստուած դէմ|առ դէմ, և 5 125r.

ապրեցաւ իմ անձն. ծագեաց նմա արեգակն, յորժամ եանց տեսակն Աստուածոյ, իսկ Յակովը կաղայր բարձիւն իւրով<sup>1:</sup> Քանզի յառաջադպոյն ցուցանէր հայրապետին Աստուած, զի և ներմարդատցի ըստ ժամանակս Մէնածինն Աստուածոյ Բան, և հակամարտ կացի զիարայէդ, Եւ զի 10 յաղագս նորա ոչ ուղղուանեացին, կաղան իսկ շաւղաւք, որպէս Յակովը բարձիւ իւրով, ըստ որում ասէ ինքն ի ձեռն երգողին քնարաւ. «Որդիք աւտարք ստեցին ինձ, որդիք աւտարք ննացան և կաղացան ի շաւղաց իւրեանց»<sup>2:</sup> Քանզի զայս կարծեմ զեկուցանել առ ի իոշ-15 տալն Յակովը բարձիւ իւրով: Բայց զայն տես, մարդոյ մարտուցելոյ առ նա, տեսանել ասէ զԱստուած դէմ առ դէմ, և տեսակ զնա անուանէ Աստուածոյ, քանզի մնաց Աստուածոյն Բան, և մարդ եղեալ ի կերպի Հաւր, ըստ իմանալույն ասեմ պատկերի և ըստ ամենայնի, որ ինչ ան-20 տարափոխաբար ունի. Քանզի ասէ առ Փիղիպպոս, դժաւորութիւն ենթակացութեան Հաւր զինքն ցուցանելով և մարմնով «Տեսաւղն|զիս ետես զՀայր»<sup>3:</sup>

125v.

Եւ յետ սակաւուց.

Քանզի երանելին մարդարէն էսայիսա ներմարդա-25 ցեան Աստուած մարմնով ախտակրեալ զիտելով ասէ յաղագս նորա. «Իր ոչխար ի զենումն ածաւ և իրքն գառն առաջի հատաւղին զնա անձայն. այսպէս ոչ բանայ զբերան իւր. ի նուաստութեան իրաւունք իւր բարձան, զաղգաւորութիւն նորա և զրուցեացէ. զի բառնայ յերկրէ կեն-30 դանութիւն իւր»<sup>4:</sup> Եւ եթ՝ ոք էր մարդ և առանձնաւորապէս իմացեալ Որդի, իսկ յարակցեալ Աստուածոյ, ըստ որում ասեն անսրբոց աղանդոց գտակը, իրք տակաւին դժոխագիւտ, որ զաղգաւորութիւն նորա զրուցել կարիցէ. Քանզի եղե ի սերմանէ Յեսսեայ և Դաւթի, իսկ զԱստուածոյ Բա-35 նին ծնելութիւն կամ եթե զծնելութեանն յեղանակ և ասել կարիցէ. Քանզի բառնայ յերկրէ կենդանութիւն

<sup>1)</sup> Ենեկ. լթ. 24. և 30—31.

<sup>2)</sup> Սաղմ. Փէ. 45—46.

<sup>3)</sup> Ցովհ. ԺԳ. 9.

<sup>4)</sup> Եսայի ԵԳ. 7—8.

նորա, այս է գոյութիւնն, քանզի եղ փոխանակ գոյութեանն զկենդանութիւն ի բարձու. իսկ ցոլանայ\* և գերանաւէ \*\* զ' ի վերայս երկրիս. քանզի անպարիմանալի  
126r. և անառհարկանելի ամևնեին|մարդկան մտաց, յաղագս ան-  
ծ ձառի բնութեանն Բան:

Նորին եթե մի և Քրիստոս.

Եւ այս զի կնցոյց զմենզ ոչ բարեխաւս, ոչ հրեշտակ, այդ ինքն Տէրն, ոչ աւտար մահու և մարդոյ հասարակա-  
կանի միջնորդելով, այդ արեամբ իւրով:

10 Երանելոյ Պրոկոփի ի թղթոյն որ առ արեւելեայս.

Եւ մարմնանայ անյեղապէս անտեսակն և ծնանի ըստ մարմնոյ անսկիզբն. նախահատէ իսկ ըստ մարմնոյ հասակաւ բնութեամբն բնաւին կատարեալ, և ախտա-  
կրեալ համբերէ, ախտակրութեանն վերագոյն. ոչ որով  
15 էրն համբերեաց զբշնամանսն, այդ որով եղեն յանձն առեալ զմարմնոյն ախտա:

**ԺԴ. ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ՝ ՀԱՅԻՈՒԹԵԱՆՑ Ի ԹՂԹՈՅՆ ՂԵԿՎԱՅ.՝**

Դիտեացէ որ բնութիւն վարսեալ բնեռաւք կախե-  
20 ցաւ զիայտէ խաչին, և խոցելոյ կողին առմածուցելոյ խաչին ի ձեռն գեղարդան զինաւորին. իմասցի ուստի արիւն և ջուր հոսեցաւ.

Եւ յետ սակաւուց սոցին ի վերայ բերէ.

Զի մի թանց ճշմարտի աստուածութեանն մարդ-  
25 կութիւնն և մի թանց ճշմարտի մարդկութեանն աստուա-  
ծութիւնն հաւատայցի|

126v. Պիտառութիւնք հերձուածողացն, որոց բա-  
ղաձայնք նախասացեալք ի Ղեկվայ.

Նեստօրի հերձուածողի հայիութիւնք.

80 Զայս ասէ զթիսուս յարոյց Աստուած<sup>1</sup> զերևելիս, զայս

\* ) Լուսանցքում՝ «(ցոլ)անալ իբր (փայ)լակն».      \*) Անզ՝ զուգիս.

<sup>1</sup>) Հմատ. Դոբժ. Բ. 32.

զտեսանելիս աչաց, զ' ի փայտին բնեռեալն, զ' ի թով-  
մայն շաւշափեալ ձեռաւք:

Նորին.

Զի մարմնոյն անանգունելին քաջաբանութիւն ազ-  
գին այսորիկ. ոչ աստուածութեանն եռաւրեայն մահ, որոյ 5  
ուղը ըմբռնեցան բնեռաւք, զայս յարգանդի հոգին ստեղ-  
ծանէր, երկրպագեմ ընդ աստուածութեանն զայս:

Նորին.

Տեսցեն յոր իոցեցինն. ով է իոցեցեալն կող. իսկ  
կող մարմնոյ, եթ' աստուածութեան է:  
10

Նորին.

Զայս յամննայն ժամ չուրջ պնդելով և զբնութեանն  
խոստովանեմք զբաժանումն և զճոխութեան ի մի միաւո-  
րեալ արժանաւորութիւն Աստուծոյ:

Թեոդորէօայ հերձուածոյի հայուոյութիւնք.

15

Ուրեմն ոչ Աստուած ախտակրեալն, այդ ի մէնջ յԱս-  
տուծոյ առեալ մարդն:

Նորին.

Ո՞վ այսուհետե երկովք առաքենութեան կատարեալ  
և ոչ բնութեամբ կատարեալ գոլով. ով փորձութեամբ ուսաւ 20 127r.  
զունկնդրութիւն և զայս անզիտանալով նախ քան զիոր-  
ծութիւնն. ոչ Աստուածն Բան, անմահն, անախտակիրն,  
անմարմինն, այզ ի զաւակէն Դաւթի, առեալն ի նմանէ  
մահկանացուն, ախտանալին, երկուցեալն ի մահուանէ,  
թեպէտ և նոյն յետ այսորիկ քակեաց զմահու իշխանու-  
թիւն:

Եւ դարձեալ.

Քանզի նոյն յինքեան ունէր բնութեանն զտկարու-  
թիւն, և ոչ զամենայն կարողն, Աստուածն Բան:

Հականառութիւն առ ասացեալսն ի Ղետ- 30  
նայ եւ նախ քան զնա հերձուածողացն.

Ի կատարումն\* այսուհետե ածել կամեցեալ զամպա-  
րըշտութեանն շարադրութիւն, կնքէ զնա հայհոյութեամբք,

\* Հուստնցքում՝ «ի հուսկ վերջին».

քորս նախասացելոցն զճիտագոյնս աղանդելով. քանզի  
կամի քարոզել և հաւատացուցանել, եթե մարդ սոսկ էր  
խաչեցեալ և բեւեռաւաք ներփարսեալ, յորոյ ի կողէն ար-  
տաքս եկն արիւն մարդկային որպէս համարի և ջուր  
5 պարզաբար դոյզն. քանզի ասացեալ ի յառաջագոյնսն մի  
127v. իսկ զմերոյս մարմնոյ մարդզնա ի բաց ուրացի, զոր  
ախտալին զիտաց եղեալ. յայտ է եթե զմարդն դարձեալ  
իսկ վերստին կրկնաւալ զբանն յետ ասկաւուց և ասաց  
այսպէս. մի այսուհետեւ ուրացի զնա մարդ, զոր ախտա-  
10 նալին զիտաց եղեալ և եղեալ մարդ պարզաբար գոլ  
զիաչեցեալն. և զայս վեր և ի վայր հաստատելով, ի վերայ  
եած սոցին, իբր զի առ մածուցելոյ մարդոյն կողէ և ախ-  
տակրի վեր և ի վայր անուանէ, արտաքս ել արիւն և ջուր  
բաւականապէս. իսկ ի յառաջասացեալսն ցուցեալ է զնո-  
15 բայն բայից ամպարշտութիւն և աւելորդ գոլ համարիմ  
դարձեալ յաղագս նոցուն փորձիլ ցուցանել. Բայց ոչ  
դանդաղեցուք և յաղագս սոցա ըստ կարի ասել. քանզի  
մոլորի այսպիսիս ոչ գիտելով զգրութիւնսն, և ոչ զկա-  
րութիւն Աստուծոյ<sup>1</sup>, քանզի մարդոյ ընութիւն կամ եթե  
20 մարդ կենդանութիւն ոչ ասի, քանզի և ոչ է. քանզի բա-  
նական կոչի կենդանի մահկանացու մարդն. իսկ աստուա-  
128r. ծագանն Մովսէս կենդանութիւն տիրաբար ուսույցիով զ' ի  
վերայ փայտին բնեռուաք բնեռեալն՝ ասելով. «Տեսցէք  
զկենդանութիւնն ձեր կախեալ առաջի աչաց ձերոց և ոչ  
25 հաւատայցէք»<sup>2</sup>. Եւ ինքն իսկ Տէրն հաստատելով զ' ի Մով-  
սեէ ճառեցեալսն, յաղագս նորա մարդարէութիւնն ասէք՝  
«Ես եմ յարութիւն և կենդանութիւն»<sup>3</sup>. և պարտ է զՈր-  
դին մարդոյ խաչիլ<sup>4</sup>. «Եւ որպէս Մովսէս բարձրացոյց  
զաւձն յանապատին, այսպէս բարձրանալ պարտ է զՈրդի  
30 մարդոյ, զի ամենայն հաւատացեալն ի նա ունիցի կեն-  
դանութիւն յաւիտենական»<sup>5</sup>. «Եւ յորժամ բարձրացայց  
յերկրէ, զամենեսեան ձկեցից առ իսա<sup>6</sup>: Զկամեցեալսն  
յայտ է եթե ընդունել առ ի նմանէ յաւիտենական կեն-  
դանութիւն. և ոչ ոք ի մարդկանէ կենդանութեան մա-  
35 տակարարէ, իսկ յատուկ միայնույ Աստուծոյ այսպիսի

<sup>1)</sup> Հմմա. Մատթ. Ի. 29.<sup>2)</sup> Բ. Օքէնք Ի. 66.<sup>3)</sup> Յովհ. ԹԱ. 25.<sup>4)</sup> Հմմա. Մատթ. Փ. 21., Մարկ. Փ. 33—

34., Ղուկ. Փ. 32—33.

<sup>5)</sup> Յովհ. Գ. 14—15.

Փ. 32.

<sup>6)</sup> Յովհ.

ճահագործութիւն. և վկայէ ասելով նրանելին Պաւղոս յաղագս Աստուծոյ, «Եթ' ի նմա կեամք և շարժիմք և եմք»<sup>1)</sup>:

Աստուած ուրեմն մարմնացեալ է կենդանութեան և Հոգւոյն Սրբոյ բաշխիչ. քանզի յետյարութեանն՝ բնե- 128v.  
ռաւքն վարսեալ ի վերայ խաչին և հաւատացուցանելով<sup>5</sup>  
զաշակերտան, յաղագս այսորիկ որոնելովն Թովմայ, եթև  
խաչնցեալն յարեաւ ի մեռելոց, փչեաց յաշակերտան և ձիրէ\*  
նոցա զՀոգին Սուրբ իւրով իշխանութեամբ իրը Աստուած:  
իսկ մէնում Աստուծոյ դարձեալ զայսպիսի ճահագործու-  
թիւնս, վկայեաց գրութիւնն, յորժամ զմարդն կազմեաց 10  
Աստուած, և փշեաց ի դէմ նորա հագագ կենդանութեան<sup>2)</sup>,  
որ այսուհեան էր բացարուսեալ ի մարդկութենէ, աակս  
Աղամայ զանցաւորութեանն. զայս Քրիստոս ձիրեաց յետ  
ի մեռելոց յարութեանն, յետ յաղթութեանն զմահուանէն:  
Այդ և ոչ արիւն մարդոյ սոսկի ի բաց գնէ զաշխարհա, և 15  
ոչ կենդանութիւն յաւիտենական ձիրէ. իսկ ասէր Տէրն  
առ հրեայան. «Ամէն ամէն ասեմ ձեզ, եթ' ոչ ուտիցէք  
զմարմին Որդւոյ մարդոյ և ըմպիցէք զնորա արիւն, ոչ ու-  
նիք կենդանութիւն ի ձեզ»<sup>3)</sup>: Եւ դարձեալ՝ «Եւ ուտաւզն  
զիս և նա կեցցէ վասն իմ»<sup>4)</sup>: Ապացուցեալ ուրեմն ոչ չա- 20  
փաւորապէսիթե կենդանութիւն ըստ բնութեան է ի փայ-  
տի կախիցեալն և կենդանութեան մատակարար իրը Աս-  
տուած մարմնացեալ. ով իսկ լոււաւ երբէք՝ ի կողէ մար-  
դոյ խոցելոյ ընդ արեան ջուր արտաքս գնացեալ: Եւ զայս  
մեռելոյ իսկ ահա վկայէ աւետարանիչն յաղագս Տեառն, 25  
զի և մեռաւ և խոցեցաւ աշտեիւն և արտաքս եկն պա-  
տուականն արիւն և ջուր<sup>5)</sup> Քանզի արտաքս գնեաց զմեզ  
Քրիստոս իւրով արեամբ, փրկանս զայս տուեալ քան զամե-  
նայն պատուականագոյն, ամենայնի մարդկութեան. իսկ  
պատուական ջուր առ ի փրկանաւորութիւն և մաքրումն և 30  
սրբութիւն հաւատացելոցն ի նա: Քանզի էր իսկսրանն  
Բան կենդանութեանն, սրպէս ասէ Յովաննէս, և յայտ-  
նեցաւ մոզ մարմնացեալ ի կուաէ, և տեսաւ և շաւշափե-  
ցաւ Բանն կենդանութեան<sup>6)</sup>, տեսաւ և ախտակրութեանն.  
և յետ յարութեանն իսկ շաւշափեցաւ ի Թովմայ բնեռաւք 35  
վարսեալն և խոցեալ զկողնիւն խոստովանեալ (?) է առ ինմանէ  
գոլ Տէր և Աստուած, յորում խոստովանութեան երանեաց

\*.) Լուսանցքում՝ «պարզէէ».

1) Գոբէք Ժ. 28. 2) Եննդ. Բ. 7. 3) Յովհ. Զ. 54.

4) Յովհ. Զ. 58. 5) Յովհ. ԺԹ. 34. 6) Հմմա. Ա. Յովհ. Ա. 1.

Տէր զհաւատացեալմն, եթ' ինքն է Տէր Աստուած, ասելով. «Զի տեսեր զիս, հաւատացեր. երանեալք՝ որք ոչ տեսեալ հաւատացեն»<sup>1</sup>: Մեք ապա հետեանալով հաւատոյ առաքելոցն, որպէս նախասացաւ, և սրբոցն հարանց վարդապետութիւնաց, Աստուած խոստովանելք զի՞րիստոս, իբր մի բնութիւն Աստուծոյն Բանի մարմնացեալ:

Պիտառութիւնք երանելեացն մերոց հսկանց եւ եպիսկապոսաց նաստաշիչ զառ ի մէնց ասացեալսն, իսկ տապալիչ զամպարիւս նախասաւոցն հերձուածողացն աղանդս.

Երանելոյ Արանասի եպիսկապոսապետի Աղեքսանդրեայ ի տանականի երկրորդում Դիոկետիանոսի. ԽԶ.

«Տեսանիցէք զկենդանութիւն ձեր կախեալ առաջի աշաց ձերոց»<sup>2</sup>. ով արդեւք իցէ այս, եթ' ոչ ասաւզն՝ 15 ևս եմ կենդանութիւն»<sup>3</sup>: Ինքն է որ ի հրեիցն անհաւատացեալ և ի դահճացն մերկացուցեալ և ի զինաւորացն բաժանեալ:

Նորին Դ. տանականեն Դիոկետիանոսի ԽԸ.

Քանզի կենդանութիւն ելով, մեռաւ, զի զմեզ կե-  
130ր. 20 նագործեսցի|. Բան ելով ի մարմնի եղի, զի զմարմինը  
բանիւն աղասիսցէ. աղբեւր ելով ծարաւեաց զմերն ծարաւ, զի այսուիկ և ի տանն(?) զմեզ յառաջ կոչեսցէ  
ասելով. «Եթ' ոք ծարաւի է, եկեսցէ առիս և արրցէ»<sup>4</sup>:

ԽԹ. Նորին հինգերորդ տանականեն Դիոկետիանոսէ.

25 Քանզի ոչ ևս ոչ ժաղովուրդ Աստուծոյ և ոչ ազգ սուրբ, այդ իշխանք Սոդոմացւոց և ժողովուրդ Գոմորացւոց անուանին. յաղթելով յայսոսիկ և զսոդոմականացն չարութիւն, որպէս և մարգարէն ասէ<sup>5</sup>. արդարացաւ. Սոդոմի ի քէն, քանզի Սոդոմականք զիրեշտակացն \* պար-  
30 տաւորեցան, իսկ այսուիկ և զՏէրն և զԱստուած և զՊա-  
դաւորն ամննայնի և զամենեցուն հրեշտակացն Տէրն խող-

\* ) Հուսանցքում՝ «ի հրեշ. . . . ց(?) անկ. . . . ».

<sup>1)</sup> Յովհ. Ի. 29.      <sup>2)</sup> Բ. Օրէնք ԽԸ. 66.      <sup>3)</sup> Հմմա.

Յովհ. ԺԱ. 25.      <sup>4)</sup> Յովհ. Է. 37.      <sup>5)</sup> Հմմա. Եսայի Ա. 10.

խողել ձեռնարկեցին, ոչ գիտելով եթե կենդանութիւն  
խողխողեալն ի նոցանէ Քրիստոս. իսկ մեռան, որք նեն-  
գեցինն հրեայքն զՏէրն:

Նորին ԺԱ. Թաւականեն Դիոկէտիանոսի. ԾԵ.

«Ընդէր պանձացան \* ազգք \*\* և ժողովուրիք պարա- 5  
սկացին ունայնս»<sup>1</sup>. քանզի ունայն խորհուրդ հրեցն մտա-  
ծաւզացն մահ զկենդանութենէն և խորհաւզացն անբանս 130v.  
զԲանէն Հաւր:

Նորին յաղազս խաչին.

Քանզի և այս ոչ նոցա, այդ կախեցելոյ Փրկչին զործ. 10  
քանզի և կախեցեալ որպէս մարդ՝ և զիշխանութիւնս հա-  
լածէր և զբանսարկուն ժամանէր:

Եւ յետ այդոց.

Զենաւ իսկ ոչ յայդ մասն, այդ ի կողն, յորմէ հոսե-  
ցաւ արիւն և ջուր. վասն զի նախկին սակս ի կողէ ստեղ- 15  
ծեցելոյ Կնոջն ի ներքս եմուտ խարէութիւն, այսպէս ի  
ձեռն կողի երկրորդի Աղամայ վրկանակ և ապաւառու-  
թիւն առաջնոյն լինիցի. վրկանակ արեամբն, իսկ ապա-  
ւառութիւն ջրովե, Բայց այս ոչ ըստ կամաց պատահէր  
բանսարկուին, քանզի և զոր երկնչէր եղանելն մահ, մե- 20  
ռուն Տէրն և նա կողոպտեցաւ\*\*\* և կարծեցեալ ունել  
զՔրիստոս ի մահուան, յաւէտ ինքն ցուցաւ մեռեալ, և  
պարծեցեալ մարդ դարանել եարար ճանաչել Աստուած.  
քանզի համանդամայն մեռաւ, արարածս անարեկակն եղե,  
իսկ վարադոյր բազնին պայթեաց, երկիր սասանեցաւ, 25  
վէճք հերձան, |զինաւորքն հանդերձ դուռ(?)նատեսաւք դժո- 131r.  
խոցն զաւզեցին. յորոց էր տեսանել ոչ մարդ, այլ Աս-  
տուած ճշմարտապէս ի մարմնի. սակս որոց և տեսաւզքն  
ասեին. «Ճշմարտապէս սա է Որդի Աստուածոյ»<sup>2</sup>. քանզի  
և բազում չիրիւկ բացան և յարեան ի նոսայն մեռալք, 30

Երանելոյ Գրիգորի եպիսկոպոսի Նեոկեսարեայ.

Եթ' ոք ասէ այդ ախտակրեալն և այդ ոչ ախտա-

\* Հուռանցքում՝ «իմանշացան».

\*\*) Ընդ՝ «ազինք».

\*\*\*) Անդ՝ մի անվերծանելի բառ.

<sup>1)</sup> Մաղմ. Բ. 1.      <sup>2)</sup> Մատթ.հէ. 54., Մարկ. ԺԵ. 39. Հմմտ.

Հուկ. ԻՒ. 47.

կրեայն, և ոչ խոստովանէ զնոյն զանախոտ Աստուածն Բան  
մարմնով իւրով ախտակրեալ, որպէս գրեալ է, նզով եղիցի:

Նորին.

Սա է որ յայնժամ զվաղն \* ժողովուրդ յԵգիպտոսէ  
5 արտաքս ածելով, իսկ յետոյ զամենեսեան զմեզ և մանա-  
ւանդ զամենայն զմարդկանն ազգ ի մահուանէ փրկանա-  
ւորեալ և վերածելով ի դժոխոց. սա է, որ վաղ երբեմն  
իբր ոչխար զոհեալ, և յոշխարի նշանակեալ, իսկ յետոյ  
ապա ինքն զենեալ վասն մեր, քանզի ախտականն \*\* մոր  
10 զենաւ Քրիստոս:

Երանելոյ Գրիգորի Նազարացւոյ.

131v. Որ ոք ոչ երկրպագէ զխաչեցեալն, նզով եղիցի, և  
կարգեցի ընդ աստուածասպաննս

Նորին՝ յաղազս առաջինութեան Բանին.

15 Այդ յորժամ տեսցին զաւրենաղիրն զձեռս կարկա-  
սեալ, յայտ զի խաչեցեալն վասն մեր, ի բաց զնարին  
ի չարէն իւրեանց ընտակցութենէ:

Նորին ի սուրբ ախտականն.

Մի երբեք զխորհուրդն խոշտացուսցես՝ արիւն Աս-  
20 տուծոյ և ախտակրութիւն լսելով և մահ. մի ուրեք վայ-  
րածեսցիս այնպէս իբր Աստուծոյ խաւանակ, այդ ան-  
պատկառապէս և անյերկուարար կեր զհացն, արբ զա-  
րիւնն, եթ՛ առ կենդանութիւն ցանկարար ունիս:

Եւ դարձեալ.

25 Մաղթեցաք Աստուծոյ մարմնացելոյ և մեռելոյ:

Եւ դարձեալ.

Վասն այսորիկ մնրով ախտակրութեամբ ախտակրէ  
Աստուած եղեալ մարդ:

Եւ դարձեալ.

30 Ո՞վ Քրիստե և Բան, և ախտ անախտի:

\* ) Լուսանցքում՝ «դիին».

\*\*) Անդ՝ «չարչ . . . նացն».

Երանելոյ Բասդի որ յաղազս Սրբոյ Հոգւոյն բանի.

Քանզի ոչ այսքան երկին և երկիր և երկարութիւն ծովուց, և ի ջուրսն պարենաբուծեալք, և ցամաքայինք կենդանեացն և քոյզք և աստեղք և աւզ և ժամակք և պճնեալ ամենայնիս զարդարումն զգերունակական զարութեանն 5 132r. բազկացուցանեն, որք անկարելի զԱստուածն զանտեսանելին անախտաբար ի ձեռն մարմնոյ զրկախառնիլ մահուան, զի մեզ իւրովն ախտակրութեամբ զանախտութիւն չնորհիցէ:

Երանելոյ Կիւրդի որ առ Նեսորիսի թղթոյն. 10

Այդ աստուածազանն զրիցեալ մարմին ասէ լինել զԱստուծոյն Բան, այս է միանալ մարմնի, անձն ունաւզին բանական. և հետեւեալ աւետարանականաց քարոզութեանց սուրբ և մեծ ժողովն զնոյն եսաաց ի գոյացութենէն Աստուծոյ և Հաւը ծնիցեալ Մէնածին, զայն՝ որով ամենայն 15 և յորում ամենայն, վասն մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան վայրաբուսեալ յերկնուատ մարմնանալ և ներմարդել, ախտակրել իսկ և յառնել. և զի ըստ Ժա(մա)նակս եկեսցէ դատաւոր, անուանեին իսկ զյԱստուծոյն Բան մի Տէր թիսուս Քրիստոս: 20

Նորին ի խաւսից ասացելոց յնփեսոս.

Քանզի ծնունդք կորստեան ըստ ճշմարտութեան և անաւրէն սկրմն, զգնաւզն զնոսա զՏէրն ուրացողք. քանզի գնիցաք դնոցն և ոչ ապականելեաց արծաթոյ և ոսկւոյ, 132v. այդ պատուական իւր արեամբ, իրը գտաին անարատի 25 Քրիստոսի<sup>1)</sup>, իսկ արիւն մարդոյ հասարակականի և միոյ ըստ մեզ իրը արդեւք եղել փոխանակ աշխարհի արժանաւոր, կամ իրը և մին վասն ամենեցուն մեռաւ, զի զամենեսիան կեցուացէ. իրը նորա եղաք, որք զճմարիտն և բնութեամբն Աստուած վերագրելով. իրը նմա պարշտեմք, որք 30 զերկրպագելն արարածոյ քան զարարիչն խղճելով. Այդ որպէս ասացաք, այժմ ևս անգոհանան ումանք զՓրկչին մերոյ քաղցրութիւն, ուրանան զՏէրն, ի բաց շարժեն զծառայութեանն լուծ, զի և յաղազս նոցա ասիցէ Քրիստոս ձայնիւ մարգարէին. «Վայ նոցա, զի վազեցին յինէն. եղ-

35

1) Հմմա. Ա. Պետք. Ա. 18—19.

կելիք են, զի ամովարշտեցան յիս, իսկ ես փրկանեցի զնոսա,  
իսկ ինքեւանք չարախաւսեցին զինէն սուտ»<sup>1)</sup>:

Նորին՝ յառաջին բանեն որ յէսայի.

Եւ ծագիաց Քրիստոս աղդաց. և կոչին առ պանչե-  
ն լին Նորա լոյս. իսկ հրեացք հիքագոյնք արքեցութեամբ \* առ  
նա վարեցան, և հաւակ զնա ելով, կինդանութեան սպա-  
133r. նին, թեաքտ և յարեաւ \*\* դարձեալ իբր Աստուած:

Նորին՝ յերկրորդ բանե որ զնես(տուի)?.

Արդեւաք ոչ ի սերմանէ Դաւթի ըստ մարմնոյ Քրիս-  
10 տուան և ի հրեիցն զոլ ասի. ոչ զայս մեզ այժմ ես առքե-  
րեիր զձայն, այդ զիտէ զնա, թեաքտ էր ի հրեիցն, և յա-  
րենէ սերման Դաւթի, Աստուած ելով ըստ ոգւոյ, քանզի  
զրէ Պաւղոս առաքեալ. «Ոչ ի մարդկանէ և ոչ մարդով,  
այդ Յիսուսիւ Քրիստոսիւ»<sup>2)</sup>. և իբր արդեւաք ոչ մարդ  
15 Քրիստոս առաքիչն զնա. այդ ոչ բաժանէ զիանն յիւրմէ  
ի նորա մարմնոյն, մի Տէր խոստովանէ զՔրիստոս Յի-  
սուս, զիտէ մահու ճաշակեալ վասն մեր զԱստուձոյն Բան,  
զիտէ և զյարուցեալն ի մոռելոց՝ ևզեալ ընդ մեզ ի չի-  
րիմ ըստ մարդկայնումն Արդ՝ զայսոսիկ երանելիք հարքն  
20 ուսուցին՝ հետեացեալք ուզգաստէս ինքնատեսից և սպա-  
ստորաց եզելոց Բանին և ամենայնի Աստուածաշունչ  
զրութեանն իսկ որ զայս չարագրել համարձակեցաւ  
զՔրիստոսէ, հանդերձ իւրովք վարդապետաւաք և չարա-  
գրութեամբքն նզովեալ ի սրբոցն առաքելոց և երանե-  
25 լիացն և ուզգափառաց հարանց, իբր ընդդէմ ուզգում  
հաւատոյ չարագրելով և հաւակ զՔրիստոսէ աղստամ-  
133v. բութենէն եղեալ:

### Ի ԺՈՂՈՎԸ Քաղկեդովնի.

Քանզի յետ քակելութեան ամպարիշտ վարդապե-  
30 տութեանն Նեստորի, յետ աւանդելոյ մոռացման զնո-  
րայն հայնոյութիւնս և յամենայնում խաղաղութեան և  
անխոռով ծաւալութեան զոլ, զի յամենայն եկեղեցիս  
Քրիստոսի մահանաւաք բանսարկուին տրամարանութիւն

<sup>1)</sup> Լուսանցքում՝ մի անվերծանելի բառ.

<sup>2)</sup> Նոյնպէս.

<sup>1)</sup> Ակսէ է. 13.

<sup>2)</sup> Դաղաս. Ա. 1.

շարժի ի թագաւորականին, Փղարիանոսի եղելոյ եպիստեմիսի կոստանտինուպոլսի առ Եւտիքէս ոմն երէց և վանապետ նորին քաղաքի, և այս եղել պատճառ թղթոյն Ղեռվի, ահա դատապարտեցելոյ. իսկ որպէս ինքն ճշմարտութիւն վկայէ, ոչ մի ի նոցանէ ուղղապէս խոհեցեալ գտանին, որպէս երկոցուն վախճան կենցաղոյս եցոյց: Գանզի Փղարիանոս վիրստին շինել փութայր զնեստորի հայնոյութիւնս, ի նոյն յարմատոյն, կամ եթ' ի հիմանէ հայնոյութեանցն, սկսեալ աղանդել երկուս բնութիւնս ի վերայ միոյ Քրիստոսի, և հարկեցուցանէր զեւտիքէս հաւա- 10 նել աղանդոյ երկուց բնութեանցն, առընթեր ելոց ընդ նմանումանց այլող եպիսկապոսաց ի նորին իշխանութենէ: Իսկ 134r. Եւտիքէս ոչ հաւատայր նոյնագոյ գոլ ըստ մարմնոյ զեմմանուէդի երանելում և Աստուածածնի կուսին, ծնչին զեմմանուէդն, որպէս նոյնախոնք նմա և աշակերտք նորա 15 եղեալք վկայեն յաղագս նորա, որք և բան տացեն դատաւորին և Աստուածոյ յաղագս այսպիսւոյ սոցա վկայութեան: Լուծանի այնուհետև ի Փղարիանոսէ, ոչ յանձն առեալ հաղորդել աղանդոյ երկուց բնութեանցն: Իսկ առաքին առ Պեռն Հոռվմայ եղեալն եպիսկապոս ի Փղարիանոսէ են- 20 թաղրութեանս այսորիկ յիշականութիւնք \*. և անդրէն զրէ Փղարիանոսի զյառաջագոյնն դատապարտեալն զայս թուղթ ամպարշտութիւն:

Ապա ժողով հաւաքեցելոյ յԵփիսացւոցն ըստ հրամանի երանելոյն թեւողոսի ուղղափառի թաղաւորին, 25 յաղագս ունայնաձայնութեանց երկուց բնութեանցն, և ընթերցելոց յԵփիսոս առ յայնժամ ժողովն յիշատականացն նախասացելոցն ինդրոյ, նզովիւր յամեննեցուն համուռ ամպարիշն աղանդ երկուց բնութեանց, իբր հայհոյութեան Նեստորի հիմն գոլով և արմատ չարի վարդապետութեան. 30 վտանգին իսկ անկանիլ յեպիսկապոսութենէ գահակցեալքն Փղարիանոսի ի կոստանտինուպոլսի. և զայնապիսիս հանգերձ նովաւ արտադրելով ամպարշտութիւնս, իբրև յոլովք ձայնք զնողանէ ի ժողովոյն լինեին. և նզովմունք կեղծաւորիալք առաջի անկան ժողովոյն և նզովեցին զասաւզն 35 կամ զիսոհաւազս երկուս բնութիւնս ի վիրայ միոյ Քրիստոսի Եւ հաւանեցան հետեւել վարդապետութեան սրբոցն հարանց, և խոստովանեցին մի գոլ բնութիւն Աստուածոյն Բանի մարմնացելոյն. և ընկալեալ եղեն ապաշխարելով ի

\* Հուստանցքում՝ «յիշա(առ)կարան».

ՁՄՊԵՅՄԻ ԱԿԱՏԱՋԱԽԹԵՐԻՆ

ժողովոյն որ յԵփեսոս Եւտիքէս իսկ ի ձեռն տալով զբւ-  
բեղոն \* յողովոյն, երդնլով ի ձեռն զիրեզզանն զարբոյ  
Երրորդութենէն հաւանել վարդապետութեանց սրբոցն  
հարանց, ընկալեալ եզի և սա: Եւ ոչ ոք, որպէս կարծեմ,  
5 ի քաջախորհրդաց անգունեացէ զնդունիչսն զնոսայ ի ժո-  
ղովին յայնժամ. թեպէտ և երկրքեան յետոյ ի նոսին չա-  
րիս դարձեալ ըմբռնեցան, և զիրեեանցն չարութիւն ոչ  
ի բաց լուացին. «Ի՞նզի սրտի հաւատայ յարդարութիւն,  
իսկ բերանով խոստովանի ի փրկութիւն» <sup>1</sup>, որպէտ և գրեալ  
10 է. և մարդ ի դէմս հայի, իսկ Աստուած ի սիրտ: Քաջա-  
լերեալ իսկ Փղարիանոս, որպէտ մտածեմ, ի Դեռվայ  
գրեցելոյ ամպարշտի թղթոյն, յորում հաստատէ զամ-  
պարիշտն աղանդ երկուց բնութեանց, մնաց յամառեալ և  
ոչ զմի զղջալից պատասխանի արարեալ յայնժամ ժողովոյն  
15 և ոչ նզովելով որք իշխն ասել երկուս բնութիւնս ի վե-  
րայ միոյ Քրիստոսի, և լուծեալ լինի հանդերձ ամպարշ-  
տաւ. Թեոդորէտաւ և այղովք ոմամբք, որք զայսպիսիսն  
աղանդեին զՔրիստոսէ, դատապարտեցելոյ ամպարշտի  
աղանդոյս և լուծելոց նախասացելոցն. բարեհամբաւու-  
135v. 20 թիւնք բագումք և զովութիւնք ասացեալ լինեին հրա-  
պարակաւ, հանդերձ աղա(զա)կաւ յամենեցուն համանգա-  
մայն յայնժամ եպիսկապոսացն որք ի ժողովին, երանե-  
լում Հաւը մերում Դիոսկորի եպիսկապոսապետի Աղեք-  
սանդրացեացն եկեղեցւոյ, պահապան հաւատոյ զնա քա-  
25 րողելով և հոգեւոյ Սրբոյ ասել գոյ զնորայն պատասխանիւ  
իսկ յետ մահուանն երանելոյն թեւողոսի, Մարկիա-  
նոսի թագաւրեցելոյ, ժողով դարձեալ եզի ի Քաղկեդովի,  
ուր ամեններեան միանգամայն հաւաքեալքն եպիսկապոսք  
զՃէրն ձեռնարկութեամբ զրով ուրացան, և զոր քակեցին  
30 ամպարշտութիւնն յԵփեսոս երկուց բնութեանցն, զնոյն  
դարձեալ վերստին շինեցին զՔրիստոսէ, հայհոյելով և իսե-  
ղակատակելով իրը ի թեատրոնի ի հաւատոյն աղանդու-  
թիւնս. քանզի հասաւատեցին զրելով և ի սահման հաւա-  
տոյ ընկալան զյառաջասացեալն զայն զապստամբութեան  
35 թուղթ. քանզի ունեին զահակից և կամ նախագահ իւ-  
136r. րեանց զ' ի նոցանէն յԵփեսոս լուծեալ զհայհոյիշն թեո-  
դորիտոս, և զնդ նմայսն լուծեալս, հանդերձ բազում հա-  
մարձակութեամբ հրամայեալ գդատապարտեալն, ոչ խոս-

\*) Լուսանցքում՝ «ձեռնարկ».

1) Հռավմ. Ժ. 10.

տովանեալ ոչ փոքր և ոչ մնծ բան յաղագս յանցանայն, որ զի թե էր դատիչ ոք ըստ եկեղեցական կանոնաց ի յաւիտենիս յայսմիկ, բաւական էր և միայն զնոսին զնդունիչն, զնոսա դատապարտել և հանել յեկեղեցական շարայարութենէ \*: Ընկալան իսկ և զՓղաբիանոս, իբր ուղ-  
ղապէս ասացաւը զերկուս ընութիւնս ի վերայ միոյ Քրիս-  
տոսի, և զինքեանս լուծին և նզովեցին ըստ արդարում  
բանի. և լուծին որպէս կարծեցին զերանելին մնր հայր և  
եպիսկապոսապետ Դիոսկորոս, զի ոչ հաւասարորդ լինել  
նոցա ամպարշտութեան և ստորագրել ի նախասացելում 10  
թղթին ապստամբութեան, որ և հատումն անուանեցաւ, զի  
զեկեղեցւոյ անդամն կոտորեաց, և լուծանելով և արտա-  
սահմանելով զծշմարտապէս պահապանն հաւատոյ ի կիւ-  
զիկոն նախկին, ապա յԵրակղիա. | յետ այսորիկ ի Գանգ- 136v.  
րացւոցն քաղաք, ի Պատղագոնիա, աստ ուր զարշաւանն 15  
կատարեաց և զհաւատն պահելով կատարեցաւ, ընդունե-  
լով զարդարութեանն պսակ առ ի նահատակադրէն Քրիս-  
տոսէ, յարդար դասաւորէ, ընդ ամենայն սուրբս: Իսկ զ' ի  
Քրիստոսէ հաւաքեալքն ի Քաղկեդոնի պահանջիսցին  
զպարտիս մեղացն իւրեանց, և որոց համարձակեցան 20  
զՔրիստոսէ յահաւոր ատենին: Քանզի կամ յԵփեսոս բար-  
ւոք գործեցին, նզովելով զամպարիչտան աղանդս, և չա-  
րապէս ի Քաղկեդոնի, որ է ճշմարիտ. կամ բարւոք ի  
Քաղկեդոնի գործեցեալ, որպէս ընքեանք ասեն, յԵփե-  
սոս զանցաւորք ցուցանին. իբր զի ամենայն աւրինակաւ 25  
ընդ իւրեանցն կալ նզովիկ՝ կամ այնմ որ յԵփեսոս և  
կամ այնմ որ ի Քաղկեդոնի ի նոցանէ եղելոց, զիւրեանցն  
զլիսոց:

Ո՞գ տացէ լսաւդ ինձ, ասէ Յովիք, այդ ահա յԵրկինս  
վկայն զնմանէ գործաւղացն, և դիտակակիցն այսոցիկ ի 30  
բարձունս<sup>1</sup>, առ որ մեքն ամբաստանեմք, առաջի նորա  
կաթեցուցանելով՝ ի սրտէն արտասուս, մինչ զի գթասցի  
Տէր Աստուած և հայեսցի յԵրկնուստ և արասցէ վրէժինդ-  
րութիւն արագապէս, զարբոյ իւրոյ և զընդհանրականի  
եկեղեցւոյ, և զթշնամիս նորա նուաստացուսցէ, իբր այ- 35  
սոցիկ քաւութիւն եղիցի Աստուած ժողովոյն արհամար-  
հողաց ի Քաղկեդոնի եղելոց. զհայրենի հաւատն իւրեանց  
ուրացան զրով, դատաստան արդար ոչ դատեցան, քանզի

\* ) Լուսանցքում՝ «մերձաւ(սրու)թենէ».

<sup>1)</sup> Հմմա. Յովիք. ԺԶ. 19—20.

զանպարտն և զուղղափառ պահապան հաւատոյն զերանելին Դիոսկորոս լուծին, իսկ զամպարիշտս և գհերձուածողը ընկալան, և զոցայսն հայհոյութիւնս ի սահման հաւատոյ ընկալան, հանդերձ Ղեռվիթ թղթովն. և զհաւտս Քրիստոսի խողխողեցին, ոչ լուան Աստուծոյ ասաւղի՝ «Ո՛չ առընկալցիս լտաւորութիւն անոտի. այս է բան սուտ և զրպարտիչ, և ոչ յաւելցիս ընդ բազումս ի չարութիւնն. իրր զի խոտորել զիրաւունս, և դարձեալ յիտ սակաւուց. «Ո՛չ ապականեացես զդատ աղքատին յիւրաւունս իւրում

137v. 10 յամեննայն բայէ|անիրաւութեան նորա և աղքատին ոչ ոզորմեացիս ի դատաստանի»<sup>1)</sup>, զի դատաստան Աստուծոյ է. քանզի պարտ է զշրթունս քահանափցն պահել զԱստուծոյ իրաւունս անաչառաբար ըստ նմանութեան Քրիստոսի մնջին քահանայափետին. և զաւրէնս Տեառն ի շըր-  
15 թանց արտաքս բերել, զի հրեշտակը Տեառն ամենակալի են, ըստ մարգարեին ձայնի<sup>2)</sup>:

Այդ յաղագս այսոցիկ մարգարէացան սուրբքն, Երեմիաս զդողով խոտողացն կոչելով զնոսա, որք ոլորեցին, զլեզուս իւրեանց իրր աղեղն<sup>3)</sup> զՔրիստոսէ, և իրր զալաք 20 խոցիչ, և երկուս և չարիս եարարին, զԾէրն և զԱստուծ իւրեանց ուրացան, և զինքեանս իւրեանց նզովիւքն նզովիցին. նախ նզովեալք ահա յերանելւոյն Պաւղոսէ. և ի սրբոցն հարանց. յաղագս այսոցիկ զրէր երանելին առաքեալ՝ «Զի ի զերջին ժամանակս ի բաց կացցեն ոմանք ի հա-  
25 ւատոյ»<sup>4)</sup>. և «Եթ՛ ի վերջինս աւուրս կացցեն ժամանակք չարք. քանզի եղիցին մարգիկ ինքնասէրք, արծաթասէրք.

138r. հապարտք, ամբարտաւանք, անժուժկալք, անընտանիք, ան-  
բարեսէրք, հայհոյիչք ծնաւղաց, անհաւանք, անխնամք,  
յանդգունք, անսուրք, անգութք, աննուէրք. բանսարկուք,  
30 յափշտակողք, մատնիչք, յանդգունք, ամպարհաւաճք, հեշտասէրք առաւել քան աստուծաճաէրք, ունելով կերպութիւն բարեպաշտութեան, իսկ զզաւորութիւն նորա ուրացողք. և յայսցանէ ի բաց դարձիր»<sup>5)</sup>. Որք այսուհետեւ երանելւոյն Պաւղոսի հաւատամք, իրր ինքներեսք տեսանելով ի նոսա  
35 լցեալս, զյաղագս նոցա գրիցեալն, իփախիցներք ի սոցայն հաւատաբութենէ, քանզի յաղագս սոցա ի Գործան ասէր երիցանց Եփեսոսի. «Եւ զիտեմ, զի յիտ ի բաց երթութեան իմոյ, ի ներքս եկեսցեն զայդք ծանունք ի ձեզ, ոչ

<sup>1)</sup> Ելք Իֆ. 1—3.

<sup>2)</sup> Հմմտ. Մաղաք. Բ. 7.

<sup>3)</sup> Հմմա.

Երեմ. Բ. 2—3.

<sup>4)</sup> Ա. Ցիմեթ. Գ. 1.

<sup>5)</sup> Բ. Ցիմեթ. Գ. 1—5.

ինայելով հաւտիք. և ի ձէնջ այդուսա յարիցեն արք խաւսելով  
թերս, կորզել զաշակերտսն ի հետ իւրեանց, սակա որոյ  
հսկեցէք<sup>1)</sup>. և առ Կորնթացիսն նախ ասէ և զգուշացուցա-  
նէ. «Քանզի պարտ ասէ, և հերձուածս ի ձեզ գոլ, զի փորձ-  
քըն՝յայտնեսցին ի ձեզ»<sup>2)</sup>: Քանզի և ինքն իսկ Տէրն ասէր 5 138v.  
իւրոցն՝ «Զգուշացարնեք ի սուտ մարզարէիցն, որք գան  
առ ձեզ զգեստուք ոչխարաց, և ի ներքուստ են գայդք  
յափշտակողք»<sup>3)</sup>: Եւ զի անպատճախանելի իցիւ ամենայն  
մարդոյ և մի պատճառ իցէ ասելով՝ «ոչ զիտեմ վերադա-  
տել յաղագս աղանդոց հաւտառոյ ևս ժողովրդականս նախ 10  
զգուշացոյց և զպարզամիտս Տէրն ասելով. «Ու պաղոց նոցա  
ծանիջիք զնոսա»<sup>4)</sup> և «Գող ոչ գայ, եթ՛ ոչ զի գողասցի, և  
զենցէ և կորուցէ. քանզի քաջ հովիւ զանձն իւր դնէ ի  
վերայ ոչխարաց, իսկ վարձաւորն փախնու»<sup>5)</sup>. զաղագս  
Քրիստոսի մրցանս և մատնիչ ճշմարտութեանն լինի, և 15  
թողու զՔրիստոսի ոչխարս ի չար վարդապետութենէ խող-  
խողիւ եթե տեսանես զնախասացեալմն մինչ նորին մա-  
հուանն մարտուցեալս վասն ճշմարտութեան, և զանձն պատ-  
րաստապէս վասն հաւտիցն Քրիստոսի եղեալս, հետեւցիք  
նոցայն վարդապետութեանց և հաւասարորդ նոցա լեր յա-  
մենայնի. իսկ եթե տեսանես զնոսա զո՞նելով և կորուսա-  
նելով և հալածելով զանդամն Քրիստոսի, փախիք զոցայն  
եղբայրասպանութիւն և զվարդապետութիւն. նախավկա-  
յեաց քեզ Տէրն հանդերձեալն դատել զախարհ արդարու-  
թեամբ, և ինքեամբ և երանելեաւ Պաւղոսիւ անպատաս-  
խանելիք քեզ անզիտութեանն պատճառական առարկու-  
թիւնք յահաւոր ատենին, եասաց Տէրն՝ թէ «Հարկ է գալ  
գայթագղութեանն, իսկ վայ մարդոյն, որով գայթագղու-  
թիւնն եկեսցէ»<sup>6)</sup>: Եւ գայթագղեաց ի ժողովոյն Քաղկեդովիք  
ամենայն համարեա աշխարհ. քանզի յամենայն երկիր ար-  
տաքս եկն չարահաւատութիւնն նոցա և յեզերս աշխարհի  
բայք ամպարշտութեանն նոցա<sup>7)</sup>: Քանզիք հազարք սակս այ-  
սորիկ խողխողեցան վասն Քրիստոսի, և յԱղեքսանդրիա և  
յԵղիպտոսի և յԵրուսաղէմ. զի ոչ երկրպագեցին պատ-  
կերին ոսկոյ և ոչ հաւանեցան հաւասարել ժողովոյն Քաղ-  
կեդովիքի, այդ զա նզովեին համարձակութեամբ. | և առաջի 139v.  
իշխանացն և առաջի պետացն, մատնեալք լինեին ի թուե-

1) Գործք. ի. 29—30. 2) Ա. Կորնթ. ԺԱ. 19. 3) Մատթ.  
է. 15. 4) Մատթ. է. 16. և այլուր. 5) Յովհ. Ժ. 10—12.  
6) Մատթ. Ժ. 7., Ղուկ. Ժ. 1. 7) Հմմտ. Ստղմ. Ժ. 5.

- ցելոցն դու հովուաց և խողխողեալք լինեին յազագս Քրիստոսի. Այսոքիկ ահա երանելիք, քանզի զյաղագս բարեպաշտութեանն համբերեցին մահ, վկայութեանն պսակ առցեն ի Քրիստոսէ. իսկ զպատճառս գայթագութեանն և 5 այսքանեաց արեանց և հալածանաց եղեալսն ոչ ամպարտեացէ Տէր, ոչ ի յակիտենիս յայսմիկ և ոչ ի հանդերձելումն. Առգրեցից իսկ այսոցիկ և զյասացելումն սահմանի ի Քաղկեդոնին ժողովոյն զյանդնեալսն, ուր և գնախասասցեալն թուղթ զամպարչտութեանն հաստատեցին, և զզոյզս 10 ի նմա զընցելոցն ազանդել համարձակեցան, սրբութիւն իմն իւրեանց առվլիայեցին և խաղաղարարս զինքեանս վերաբարողեցին, որք զխաղաղութիւն հեռի ի բաց հալածեցին և երկպառակութիւնս և գայթագութիւնս և հալածանս անդամոցն Քրիստոսի արարաւզք, առիթք իսկ եղեալք և պատերազմացն ի վերայ յարութեանն իսպի յետ ոչ յոլովի|
- 140r. ժողովոյն արհամարհողաց անապատութիւն Հռոմա եղեւ, և մինչ յաւուրս յայսոսիկ տարածայնութիւն և բաժանումն և երկպառակութիւնք և յեկեղեցեականս գոն աւրէնս և ի հաւտս Քրիստոսի քարոզեցին ահա ասելով խաղաղութիւն, 20 խաղաղութիւն, իբր սուտ մարգարէքն Խարայեղի. և ուր է խաղաղութիւն:
- Հաւատարիմ իսկ և բարեպաշտ և նախանձ բարեպաշտութեան ունելով զՄարկիանոս, զեզեալն թագաւոր, վերաբարողեն. յամր\* և հազիւ յԱստուծոյն զթագաւորութիւնն վիճակեալ, դումաւելն զբարեպաշտութեան նախանձն ասեն, ակնարկելով կողմանակի իբր ոչ ուղիղ խորհեցաւ զերանելին թեւորդոսիոս և զնախս քան զնա եղեալս ուղղափառս թագաւորս. մինչ զի երեկոյ և հազիւ Մարկիանոս թագաւորեաց և ամենեցում ահա բարեպաշտացն 30 փակեալ են բերանք, իսկ բացան և համարձակին ամենայն հայինիչք, և յանդուգն լեզու զՔրիստոսէ բարբառելով և 140v. ստութիւն, այդ ոչ հաւատ. հարստահարեաց ի վերայ երկրի և սով եղեւ լսել զԲանն Տևառն<sup>1</sup>. քանզի որ եկեղեցի ոչ սպայ յԵղիապոս և ի Դիբիէ և յարելս, հալածանաց նոցա 35 և ամպարիշտ ճահագործութեանն. քանզի որ գաւառ կամ քաղաք անդիտացաւ, զի յայնմհետէ մինչեւ յայժմ եղեալս զենմունս զոչխարացն Քրիստոսի և զարտասահմանութիւնս

\* ) Լուսանցքում՝ «Երեկ(այ)».

<sup>1</sup>) Հմմա. Ամսվս Ը. 11.

և զյափշտակութիւնս. զի թեպէտ և մեք լոկցեմք, քարինք աղաղակիցեն:

Այս նոցա ճշմարտապէս իւաղաղութիւն՝ խողխողելն զբրիստոսի հաւտս, և զկարողն յանդիմանել ի բաց հաւլածեն, զի իշխանութեամբ գործիցեն զոր կամին, ոչ ու- 5  
րուք ընդդէմ ասաւզի Յաղագս այսպիսեացս ասէր Սաղ-  
մոսերգակն. «Նախանձեցայ յանաւրէնս, իւաղաղութիւն  
մեղաւորաց տեսանելով»<sup>1)</sup>, և «Ճատաւզս զքեղ Տէր ատեցի,  
և ի թշնամիս քո ի բաց հալիկ. կատարեալ ատելութիւն  
ատեի զնոսա. ի թշնամիս եղեն ինձ»<sup>2)</sup>: Իսկ խոստանան և 10  
վերստին նորոգել զանտեղի հաւատն, իբր հնացելոյ նորա  
և ծերացելոյ և մաւտյապականութիւն եղելոյ ըստ ամպա-  
րըշտութեան իւրեանցն բանի ամենայն աւրինակաւ նորո-  
գեալն փոխադործի յեղանակ իմն յայլ, քան որ էրն, ըստ  
որում լաւագոյն երեսցի, որք զայն նորոգեն. և զի այս է 15  
նոցա փութացեալն ի նոցունց, յորոց արտադրեցինն բայից,  
հաւատացուցից զկամեցողան լսել և դատել զճշմարիտն և  
զարդարն յաղագս վարժեցելոցն բանից, քանզի ասացին  
այսպէս, յետ ասելոյ յաղագս որոց նախասացաք. «Բաւական  
անա էր առ ի կատարելութիւն բարեպաշտութեան զի- 20  
տութիւն իսկ և հաստատութիւն, իմաստութիւն և փրկա-  
կան այս աստուածային չնորհին հմայումն, քանզի յաղագս  
Հաւը և Որդւոյ և Սրբոյ Հոգւոյ ի բաց ուսուցանէ զկատա-  
րեալն, և զՃեառնն զներմարդութիւնն, որք հաւատովք  
ընդունին առկացցո է». և յետ սակաւուց «Ոմանք զվասն 25  
մեր Տեսառն տնաւրէնութիւնն ապականել իշխեցեալք և  
զԱստուածածինն զճայնն ի վերայ կուսին խտրելով, իսկ  
ոմանք խառնութիւն և զանգումն ի ներքս ածելով, և մի 141v.  
գոլ բնութիւն մարմնոյն և աստուածութեանն վկրաստեղ-  
ծելով անդատարար և ախտակրելի զաստուածայինն բնու- 30  
թիւն խառնութեամբն հրաշաբանեն»:

Պիտառութիւնն նեսօրի բալսամայնեալք նախասա-  
ցելոցն ի սահմանէ Քաղկեդումի ժողովոյն ի բառակէ էֆ.

Այդ ելով նախ այսորիկ Որդի և կոչեցեալ յետ վե-  
րընկալութեան մարմնոյն, ոչ կարի կոչիլ որոշաբար որդի 35  
որդին, զի մի երկուս որդիս աղանդեցուք. այդ վասն զի

1) Սաղմ. ՀԲ. 3.

2) Սաղմ. ՃԱԸ. 21—22.

այնմիկ շարայարեալ է իսկսբանն ելում որդւոջ առ նոյն յարակցելում, ոչ կարէ ըստ արժանաւորութեանն որդիութեանն բաժանումն ընդունել. ըստ արժանաւորութեան ասեմ որդիութեան, ոչ ըստ բնութիւնն. վասն այսորիկ 5 և Քրիստոս Աստուածն Բան անուանի, վասն զի ունի զշարայարութիւն առ Քրիստոսն հանապազորդականն:

Նորին յերկրորդ մատենեն գլխոյ Ը.

Պարտ իսկ է մեզ, քանզի այժմ եկի ի մտածութիւն, և զըստ նիկեա յողովն ուսանել, ոչ ուրեք իշխե-  
142r. 10 ցեալ ասել, եթ՛ Աստուածն Բան ծնաւ ի Մարիամայ. ասէ իսկ, եթե «Հաւատամբ ի մին Աստուածն Հայր ամենակալ, և ի մի Տէր Յիսուս Քրիստոս». ուշ դիք, զի նախկին եղ զՔրիստոսն, որ է ակնարկութիւն երկուցն բնութեանց: 15 Ասացին ի մի Աստուած Բան, այդ առին զանուն զնշանակիչն երկուցն. զի յորժամ ի վայր իջանելով լուիցես մահ, մի զարմանայցես, զի վիճակնեալն և թաղեալն մի ջնիցէ զլարանն, իբր աստուածութեանն զայս ախտակրեցելոյ:

Նորին.

20 Այդ վասն զի Որդին Աստուծոյ կրկնապատիկ է ըստ բնութիւնն, ոչ ծնաւ ահա զՈրդին Աստուծոյ, այդ ծնաւ զմարդկութիւնն, որ է որդի, սակա յարակցելոյն Որդւոյն:

Նորին.

Լնու և զՏէրն երբեմն ի վերայ մարդկութեանն 25 Քրիստոսի, իսկ երբեմն ի վերայ աստուածութեանն Նորա, և երբեմն ի վերայ երկակացն կացեալ:

Նորին.

Զի ևս հակամեկնես Պաւղոսի, զանախտ Աստուծոյն Բան երկրայնումն խառնես մարմնոյ, և ախտակրելի քա-  
30 հանայապետ գործելով:

Հականառութիւն առ սահմանեալսն ի Քաղ-  
կեդովնի ժողովոյն եւ նախ քան զնոսա հեր-  
ձուածոց. |

142v. Բաւականացելոց սրբոց հմայութեանն երեքարիւրոցն  
35 և Ժ. և ութից, կարդալ առ ի զիտութիւն և հաստաել ու-

դիզ և փրկականաւ հաւատով, գլամեցեալսն հետեանալ Քրիստոսի և զկատաբեալն սրբոյ Երրորդութեանն արտաքս ուսուցաւզի, որպէս և ինքեանք հարսաարաննն, որով բանիւ զսա նորոգիչս զինքեանս քարոզեն, յայտ է, թե մականունութեամբ քառորդի Տեառնն և ներմարդութեամբն 5 զոր առմականուանեցին, զայս վերստին նորոգելով, զանպայթելի և անտղելի հաւատն, որպէս ինքեանք ասեն. քանզի յետ ի բաց թուելոյ սրբոյ և նոյնագոյ Երրորդութեանն, զՏէրն դարձեալ մեզ յաւելլով անուանեցին, և սորին զներմարդութիւնն, զի ամեննին զեկուացնն զՏէրն 10 անուն, որպէս Նեստորի թուի, ի վերայ երկուց բնութեանցն Քրիստոսի առեալ, զի մարդածին Կոյսն հաւատայցի և մի Աստուածածին, իրը զմարդութեանն ծնաւղ. և երկուս որդիս աղանդեսցեն, բնութեամբքն զատուցեալս, իսկ արժանաւորութեամբ որդիութեանն մէնակաբար ասել, 15 143ր. որպէս Նեստորի թուի:

Այդ աստուածային զրիցեալքն երկուս բնութիւնս ոչ աւանդեցին և ոչ Քրիստոս և Որդի և Տէր անուն ի վերայ նշաննելոյ երկուց բնութեանցն մեզ ուսուցին: Քանզի զայս Նեստորի ամպարիշտք աղանդութիւնք, հչ աստուածային 20 զրիցելոյն և ոչ սրբոցն հարանց վարդապետմունք: Քանզի աւանդեցին մեզ զրիցեալքն զմին Տէր Յիսուս Քրիստոս, որով ամեննայն եղին՝ յերկնիքն և ի վերայք երկրի<sup>1</sup>, Քանզի և Տէրն յետ յաննելոյ ի մեռելոցն, ասէր աշակերտացն. «Գնացեալք աշակերտեցէք զամենայն ազգս, մկրտելով գնո- 25 սա յանուն Հաւը և Որդւոյ և Հոգւոյ Սրբոյ»<sup>2</sup>. և ոչ յաւել և ի Տեառն ներմարդութիւնն յետ անուանելոյ զսուրբ և նոյնագոյ Երրորդութիւնն, որպէս այսոքիկ յանդդնեցան:

Իսկ սուրբքն դարձեալ հարք, որք ի նիկէա, հաւատալ ուսուցանելով ի մին Աստուած Հայր ամենակալ արա- 30 րիչն ամենայնի, տեսաննելեաց և անտեսաննելեաց, զինքն զՀայրն մեզ աւանդեցին, ապա առանուանեցին և իմին Տէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուածոյ, զի յԱստուածոյ Աստուած ծնիցեալն և հոմադոյական Հաւը զնոյն վարդապետելով, ապա աւանդեցին ճժգրտապէս զ' ի յաղագս ի Հաւը է նորա 35 նախ յաւիտենիցն ճնելութեան և զի նովաւ միով Յիսուսիւ Քրիստոսիւ ամենայն եղին, որպէս և յաղագս Հաւը վարդապետեցին, զրուցատրեն ճշմարտապէս և յաղագս մարմնոյ նորա ճնելութեան ի սրբոյն Կուսէ, նախ քան զանուա-

1) Հմմտ. Կողոս. Ա. 16. և Ա. Կողնթ. Ը. 6.

2) Մասթ. Իջ. 19.

նել Սրբոյ Հոգւոյն զնա ասելով հոմագոյ Հաւր, զԱստուածն Բան, վայր եկեալ անմարմին և մարմնացեալ ի սրբոյ և յԱստուածածին Կուսէ, յայտ եթե ապա զնոյն ասելով ախտակրեալ և թաղեցեալ և յարուցեալ և վերեր-  
5 թեալ յերկինս և գալոց դատել զկենդանիս և զմեռեալս,  
ըստ աստուածային գրութեանն: Յայնժամ ապա առանուանեցին և զնդին Սուրբ և ոչ արարին յաւելուած և  
գՏեան ներմարդութիւն ի վերջէ անուանելով, որպէս այ-  
սոքիկ աղանդեցին, զայս նորոգել և փոխագործել խնդ-  
144r. 10 րելն: Քանզի կնիք սրբոյ և հոմագոյ|Սրբորդութեանն մինչ  
անուանն Սրբոյ Հոգւոյն կայ. իսկ ձայնիւ . . . \* և Աս-  
տուածածին առասութեամբ ի յառաջոյն անուանելով, ոչ  
պատկառեն ի Նեստորի զայսոսիկ ոչ խորաւղի զառասու-  
թիւնն ասել ի վերայ Կուսին: Քանզի ասէ այսպէս Նես-  
15 տորիսս. «Ասացի իսկ ահա յոլովիցս \*\*, եթ' որ ոք ի ձևող  
պարզամտագոյն և եթե յայլսն խնդայ Աստուածածին  
ձայնիւս, ինձ առ ձայնդ նախանձ \*\*\* ոչ է. միայն մի  
արասցես զկոյսն Աստուածուհի. քանզի ամենիին և սոքա  
մի աստուածագործեացեն զկոյսն»: Աստուածածին զնէ  
20 ոչ քարոզեցին և ոչ հաւատացին գոլ ըստ ճշմարտութեան,  
այդ առ յանկարծագէպ յափշտակութիւն պարզագունացն  
որպէս լընդիմացեալք, իբր աւերէն Նեստորի ամբաստա-  
նեն ի վերայ Կուսին զԱստուածածինն ձայն. զիմարողն,  
և զի փութացեալն իւրեանց այս է՝ երկուս բնութիւնս  
25 որչել ի վերայ միոյ Քրիստոսի, և ոչ բնաւին Աստուա-  
ծածին հաւատալ գոլ ըստ ճշմարտութեան զսուրբն Կոյս,  
144v. յորոց ի վերայն բերեն է տեսանել. քանզի զրպարտես  
զսուրբ հարսն, զմին ասաւզս և խոհաւզս Աստուածոյն Բանի  
բնութիւն մարմնացեալն զմին Քրիստոս, իբր խառնու-  
30 թիւն և զանգումն ասելով և իբր աստուածութեամբն  
ասելով զնոսա զմին Քրիստոս ախտակրեալ, և ոչ մարմ-  
նով իւրօվ, որպէս և գրեալ է. քանզի մի է նոցա ամեռ-  
նուստ փութալին, ըստ մասին դնել զ' ի Մարեմայն որ-  
պէս ինքեանք ասեն մարդ, և ըստ մասին զբնակեալն ի  
35 նմա Աստուածն Բան ունակական շարայարութեամբ: Զի  
երկուս խոհելով որդիս կամ երկուս բնութիւնս, զԱս-  
տուածածինն գոլ զսուրբն Կոյս ի բաց հանցեն ամենիին,

\* ) Մի անկերծանելի բառ.  
անդամ».

\*\*) Լուսանցքաւմ՝ «բազում  
\*\*\* ) Անդ՝ «իսան . . . անք . . . ».

իսկ զառ ի նէմայ ծնիցելոյ կամ առընկալիցելոյ բնութեան մարդոյն, որպէս ինքեանք ասեն, զվասն մերն փըրկականն մահ և զթաղումն և զյարութիւնն միաբանեսցեն, պատճառաւ վարեցեալք զանգուածի և խառնութեան, զորչարապէս իմացան նախ քան զնոսա հերձուածողք առյե- 5  
զակարծ յափշտակութիւն պարզագունացն: Քանզի ոչ համարձակնալք անծածկեցելի դիմաւամբաստանել զ' ի Նիկեա 145r.  
սրբոցն հարանց, զի զմարմնացեալ Աստուածն Բան պիտակրեալ և թաղեալ և յարուցեալ ասացին, մեկնելով իսկ-  
զբանն որպէս կարծեին ձևացեալք զ' ի նոցանէ ասացեալսն, 10  
զի յաւելուածոյ զծնառն ներմարդութիւնն հիմն իւրեանց  
ամպարչտութեանն եղին ապաղնելով սակաւ փաղառութիւնս և ձայնիւ Աստուածածին առասեն զկոյսն. և զի  
ցուցցեն զինչ կարութիւնն, զորոյ նախասացին ներմարդութեանն, ի վերայ բերենն այսոցիկ. զի ոչ պարտ ասել 15  
Աստուած զ' ի նեմայ ծնիցեալն և ախտակրեալ և թաղեալ  
և յարուցեալ, երկնցուցանելով և յանկարծապէս յափշտակելով զպարզագոյնսն, իբր զի ամնայնիւ իսկ և ամենին ըստ իւրեանց հաճութեան զանգուածախառնութիւն իմանալ հարկ է վխոհեցողն կար ասաւզն Աստուած գոլ 20  
զախտակրեալն իւրով մարմնով: Այդ նզովեցին սուրբ հարքն հետեացեալք աւանդութեան առաքելոյն . . . \* իսառնութիւն:  
և յեղումն իշխեցին խոհել ի վերայ Մէնածին Որդւոյ Աս- 145v.  
տուծոյ, և զերկուս բնութիւնս ասաւզքն և խոհաւզք ի վե-  
րայ միոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. և յիմա- 25  
քութիւն սոցա յայտնի եղիցի ամենեցուն, որպէս և նոցայն  
եղն նախ քան զնոսա հերձուածողացն:

Պիտառութիւնն երանելեացն մերոց հարանց եւ  
եպիսկապոսաց հաստափչէ զառ ի մէնջ ասացեալսն, իսկ տապալիչէ զամպարիչէս նախասա- 30  
ցելոցն հերձուածողացն աղանդու.

Երանելոյ Յուղիայ եպիսկապոսապետի Հռովմայ ի  
քղոյն որ առ Պրոգրոկիոն.

Քարոզի իսկ առ լրակցութիւն հաւատոյ, և մարմնացեալ ի Կուսէ Մարեմայ Աստուծոյն Բան, և տաղաւարեալ 35  
ի մարդկան, ոչ ի մարդում ներգործեալ. քանզի այս ի

\* ) Մի անկերծանելի բառ.

վերայ մարդարէիցն է և առաքելոցն, կատարեալ Աստուած  
ի մարմնի, կատարեալ մարդ ի հոգւոջ. հչ երկու որդիք,  
մի հարազատ որդի առեալ(?) զմարդն, իսկ միւս մահկա-  
նացու մարդ առեալն յԱստուծոյ, այդ մի Մէնածին յերկնի  
5 Մէնածին յերկրի Աստուած ճշմարտութեամբ, մարդ մարմ-  
նական կերպութեամբ ըստ նմանութեան իւրում փրկե-  
146r. ցուցանելով(?) զաշխարհ | ըստ առընդունելութեան իւրոյ  
հոգւոյն, որ տուեալ լինի ի ձեռն փշման:

## Եւ յետ սակաւուց.

10 Իսկ եթ' ոք մարդ յԱստուծոյ առընկալեալ ասէ  
զ' ի Մարեմայն Յիսուս, և երկուս դէմս կատարեալս միա-  
ւորեալս ծանիցէ աստուածային յուսոյն աւտարելով. քանզի  
Աստուածն Բան, որով ամենայն եղե, ինքն է Յիսուս,  
որով ամենայն, որպէս Յովաննէս և Պաւլոս ուսուցին<sup>1)</sup>:

## 15 Եւ յետ սակաւուց.

Իրր զի և նզով եղիցի ամեն, որ զ' ի Մարեմայն  
մարդ ոչ խոստովանէ գոլ ներմարմին Աստուած նոյնագոյ  
Հաւր, իսկըրանէ ելով Աստուած, անյեղի ի մարմնի, և  
անախտ յախտակրութեանու Նմանապէս նզով եղիցի(ի) և որ  
20 զմարմին Փրկչին ոչ ասէ ի Մարեմայ, այդ յերկնուստ,  
կամ անարար բնութեամբ զառնելին և յոչ էիցն, իսկ  
առ անառնելին՝ Աստուած միաւորութեամբ. որ ասէ աս-  
տուածական զմարմինն երկրպագելի, և զերկախումբն իրր  
մի անարարեալ Աստուած, երանեալ եղիցի, ոչ գայթագղել  
25 ի վերայ մարմնոյ և ախտակրութեան նորա, այդ զան-  
մարմնապէս երկրպագելին և մարմնականարար երկրպա-  
146v. գելովիրր մի և միայն Որդի Աստուծոյ յաւիտմնիցն և  
յաւիտեանս:

## Նորին ի թղթոյն, որ առ Դիտնիսիոս.

30 Քանզի հարկ է զնոսա ներկուս ասելով բնութիւնս,  
զմինն երկրպագել, իսկ զմիւսն ոչ երկրպագել. յաստուա-  
ծականն մկրտիլ, իսկ ի մարդկայինն ոչ մկրտիլ. իսկ եթ'  
ի մահն Ծեառն մկրտիլը<sup>2)</sup>, մի իսոստովանելք բնութիւն  
անախտակիր աստուածութեանն և ախտակրելի մարմնոյն,

<sup>1)</sup> Յով. Ա. 3., Կողո. Ա. 16., Հմմա. Ա. Կորնթ. Բ. 6.

<sup>2)</sup> Հմմա. Հովհ. Զ. 3—4.

զի այսպէս յՍատուած իցէ մկրտութիւնն մեր, և ի մահն Տեառն կատարեալ: Քանզի և ոչ երկնշխէք զրպարտողան, որք բաժանեն յերկուս դէմս զՃէրն, եթե մեր զմիաւորութիւն խոստովանելով, զաւետարանական և զառաքելական, հայնոյն զմելով իբր զմարմինն ասելով յերկնուատ, 5 յորժամ ընթեռնումք զաստուածային գրութիւնան, Որդի Մարդոյ ասելով յերկնուատ. քանզի և ոչ յորժամ ասեմք զՈրդին Աստուծոյ եղեալ ի կնոշէ, կարեւէք հայնոյիլ, իբր զԲանն յերկրէ ասելով և ոչ յերկնուատ. ասեմք իսկ զերկոսեան, և յերկնուատ զբոլորն սակա աստուածութեանն, և 10 ի կնոշէ զբոլորն սակա մարմինոյ, ոչ զիտելով բաժանութիւն միոյ դիմի և ոչ ի բաց հատանելով յերկնայինւոյն զերկրայինն, և ոչ յերկրականէն զերկնականն, քանզի ամպարիշտ է տարա(մ)տութիւն:

Երանելւոյ Աքանասի Դ. բանեն զԱրիանոսաց. 15

Արդ եթ' այդոյ մարմինս այնորիկ թերևս ասիցի ուրեք և ախտակրութիւնն. իսկ եթե Բանի մարմինս, քանզի Բանն մարմին եղն, հարկ է և զմարմնոյն ախտակրութիւնս ասել նորա, որոյ և մարմինն է: Իսկ որոյ ասի ախտակրութիւնն, որպիսի է դատապարտիլն և խարագանիլ և ծարա- 20 ւել և խաչն և մահն և այդք մարմնոյն նուաստութիւնք, սորին և ճահագործութիւն և չնորէն է. սակա այսորիկ և այժմ ըստ կարգի և վայելչաբար ոչ այզոց, այդ Տեառնն ասի այսպիսի ախտակրութիւն, զի և չնորհն առ ի նմանէ իցէ. և մի այդոց պաշտաւնեայք լինիցիմք, այդ ճշմարտա- 25 պէս աստուածապաշտք, զի մի զոք յեղելոց, և մի զնասարակոմն մարդ, այդ զյԱստուծոյն բնութեամբ և ճշմարիտ Որդին, զսա և եղեալ մարդ|ոչինչ . . . \* Տէր զնա և Աստուած 147v. և Փրկիչ և ճշմարիտ Որդի:

Նորին՝ յաղագս մարմնականի յայտնութեանն Գրիսոսի. 30

Եւ հրաշափառագոյն այս էր, որպէս նախասացի. զի իբր մարդ քաղաքաւորէր, և ինքն զամենայն կենագործէր և լնդ Հաւր էր:

Նորին ի բանեն, որ յաղագս հաւատոյ.

Եւ դիմեղին եթ' իբր և որպիսի յեղանակաւ և որով 35

\* ) Մի անվերծանելի բառ.

հետևութեամբ յանհաւատութիւն և այսոքիկ և ներքնաւ-  
կութիւն, փոխանակ մարմնաւորութեանն կազմացին և  
փոխանակ միաւորութեան և բարդութեան ներգործու-  
թիւն մարդկային և ընդ միոյ ենթակացութեան Տեառն  
5 մերոյ երկուս ենթակացութիւնն և դէմս և ընդ սրբոյ Երրոր-  
դութեանն քառորդութիւն անվայելչաբար և տարաւրինակի  
խոհելով անվայեյչաբար. զի Աստուծոյ շարայարեն զմարդ  
և ծառայ թուեն \* ընդ Տեառնն և արարածական դէմ անա-  
րարածոց դիմաց շարակարգեն. իսկ տարաւրինակի, զի  
10 զմի ենթակացութիւնն վերստին ի ներքս ածելով Երրոր-  
դութեան՝ քառորդ ենթակացութիւն աւտար ամենեին և  
148r. այզատոհմ և ամենայն բանականաց հոգւոց զհուսկն և  
զկերջին:

### Եւ դարձեալ.

15 Իսկ եթե և ճշմարտապէս դարձեալ նկատեսցես և  
իրիդ ուշ դնել կամեսցիս, դտցես զնոսա արտաքոյ սրբոյ  
Երրորդութեանն, արտաքս հանելով զՃերն մեր Յիսուս  
Քրիստոս իրը ծառայ, իբր մարդ աներկրպագելի. իսկ եր-  
կրպագաւաղ յաւէտ և պարշտիչ ընդ ամենայնի և հնազան-  
20 դեալ սրբում Երրորդութեանն, որպէս Մարկեղղոս և Սա-  
մաստացին Պաւղոս տարամենեն զաստուածական և առա-  
քելական գիրն, առ յատուկ իւրեանցն ձգելով մտածու-  
թիւնու Շիանդի յորժամ ասէ՝ հնազանդիսցի նմա ամենայն,  
յայնժամ և ինքն որդի հնազանդեսցի հնազանդաւղին նմա  
25 զամենայն, զի իցէ Աստուծած ամենայն յամենայնին<sup>1</sup>, որ-  
պէս և նախմարմնաւորութեանն յամենեսին անմարմին  
ելով և մարմին ոչ ունելով, և վերառեալն մարդ ընդ ամե-  
նեսին և ամենեցուն շարաթուեալ, յառաջ դայ հնազան-  
դիեալ և պաշտիչ զԱստուծած:

30 Դիտեցէ, յորքան ի վայր անկան անխուսութիւն,  
148v. կարծեաւքն իմաստունք ի քանիւն անհաւատութիւն և  
մոլորութիւն համարձակեցան և իմանալ զոչ նալան և  
ստեղծանել և առասպելաբանել: Ո՞չ միայն իսկ հաւասոյ  
յառաջ գալ ոչ կամեցան, այդ և պատրութիւնս գտին և  
35 չարագործութիւնս մանկաւորեցին և ստեղծին յիմարս և  
անուսմունս ինդիրս առ ի մոլորութիւնս բազմաց և

\* ) Լուսանցքում՝ «ի թիւ արկանեն».

<sup>1)</sup> Ա. Կոքնթ. Ժե. 27—28.

ապստամբութիւն անաւրէն դիտելով, իսկ զհանդերձեալն անյուսացեալք. քանզի եթե կարծեին զհանդերձեալս, եթ՝ Աստուծոյ ներդիմութիւն, և գդատաստանն հաւատային և առաքելոց հետեանային յաւէտ, քան մտածութեան մարդկայնուոյ, զիրիստոս իսկ արագապէս քարոզեցին արտաքս 5 ելեալք առաքեալքն բաղաձայնաբար և հետեապէս իւրեանց զՈրդին Աստուծոյ. զայս զ' ի Բեթղեհէմ ծնիցեալս, ի սերմանէն Դաւթի ըստ մարմնոյ, զնմանեալն մարդկան և խաչեցեալն առ Պոնտացւով Պիղատոսիւ, զնա ասացին Աստուծոյ, զնա 10 Որդի Մարդոյ. զնա յերկնուստ, զնա յերկրէ, զնա |անախտ 149r. զնա ախտանալի. ոչ այդ և այդ, ոչ դէմս երկուս, ոչ ենթակացութիւնս երկուս:

Զինչ պարտ ինդրել և բանակուուել. հաւատալ աւգտէ և պաշտել և երկրպագել լուութեամբ, Գիտեմ զնա Աս- 15 տուած ճշմարտապէս յերկնուստ անախտ, գիտեմ զնա ի սերմանէ Դաւթի ըստ մարմնոյ մարդ յերկրէ ախտանալի: Ո՛չ ինդրեմ իբր ախտանալի և իբր անախտանալի նոյն, իբր Աստուծուած և իբր մարդ. մի զիբրն լոելագործելով և զյեղանակն աւելագործելով անկայց յառաջիկայէն ինձ 20 բարեաց: Քանզի հաւատալ նախ պարտ և փառաւորել. և երկրորդ՝ ի վերուստ զբաղկացութիւն սոցա հայցել և մի ի ստորուստ զայս հաւաքել յարենէ և մարմնոյ, այդ ի յայտնութենէ աստուծային և երկնայնուոյ. «Երանեալ իսկ ես Սիմոնի Բարիոնկա, զի մարմին և արիւն ոչ յայտնեաց 25 քեզ, այդ Հայրն իմ որ յերկինս. և ի վերայ այսր վիմի շինեցից զիմ եկեղեցի և գրունք դժոխոց ոչ հարստահարսցին զնա»:

Երանելոյն Բասդի ի զենովմեայ.

149v.

Եթե զիտութիւն Հաւը և Որդւոյ կենդանութիւն 30 յաւիտենական, հարկ է և միոյ գոյացութեան զոլ. քանզի միւսագոյն, ոչ միով զիտութեամբ հասանի և ոչ նմանապէս կենազործել կարէ:

Եւ յետ այդոց.

Բնութեամբ մէջն ումանց երկապանչիւրոցն ծայրիցն 35 յարակցի: իսկ եթե բնութեամի միջնորդ է Քրիստոս Աս-

1) Մատթ. ՃԶ. 17—18.

տուծոյ և մեր, և ոչ ըստ տնաւրէնութեան, բնութեամբ շարայարեալ է Աստուած և արարած:

Երանելոյ Գրեգորի Նազարացոյ՝ ի բանեն որ առ երախայից վարդապետութիւն.

5 Խակ ճշմարտապէս ազնիւն անխառն է ներհակին. կամ այսուհետեւ ցուցցեն չարութիւն գոլ զծնելութիւնն, զմնունդն, զանելութիւնն, զառկատարելութիւնն բնութեան, յառաջողութիւնն և զմահուն փորձ, զ' ի մահուանէն ի վեր ճանապարհ: Կամ եթ' արտաքոյ չարութեան գոլ զասա-  
10 ցեալն հաւանին, ոչինչ իւնել գոլ զչարութեանն աւտար խոստովանեսցեն, իսկ ազնիւ ամենեին ցուցելոյ զյոռու-  
թեանն և չարութեան ազատեալն: Իբր ոչ ողորմելիք յիմա-  
րութեամբ, եթե զաջնիւն վայելել ի վերայ Աստուծոյ ոչ  
աղանդեն:

15 Երանելոյ Թեովիիղայ եպիսկապոսապետի Աղեք- սանդրեայ եւ նաւր մերօյ՝ ԻԱ. տանական թրոյն.

Այդ ահա զայդախոհն իբր աւտարս տաւնիս բաւա- կանարար յանդիմանեալ. երգաբանեսցնուք զվասն մեր խաչեցեալն և թաղեալն և յարուցեալն, ըստ զրիցելոցն,  
20 յերրորդի աւուր, զՏէրն փառաց զՔրիստոս և զ' ի վեր ճանապարհն նորա յերկինս արհաւերեալք փութագոյնս և այժմ ի վերին Սիովլ մտաւուք տաւնեսցուք աստուածայն- ւովք մնա ավայելչութեանն նորա բանիւք ուրախացեալք:

Նորին՝ ի Ի. երորդէ Բ. բարդէ տանական թրոյն.

25 Այդ ահա յետ պարկետաբանելոյ զաստուածային զՔրիստոսի աղանդս աւրինարար տաւնեսցուք. մաքրով աստուածախմբեալ կենցաղով. և զհրեիցն զոչաւղաց «Բարձ, բարձ, խաչեա»<sup>1</sup>, զայսպիսին զվասն մեր մարդասիրու- թեանն նորա կենարարն պքանչացուք մահ. և զՊաւղոսի յաղագս հրեիցն գոչաւղի՝ «Զի եթն զիտացին, ոչ ևս զՏէրն փառաց խաչեցին»<sup>2</sup> |ասասցուք նմա և . . . \* խաչին զՔրիստոս Աստուծոյ կարութիւնն և Աստուծոյ իմաստու- թիւնն<sup>3</sup>: Քանզի որպէս ի կուսական ապաւարտակացն յառաջ եկեալ մարդ ոչինչ նհատ Աստուած ի ձեռն ճահա-

\* ) Մի անվերծանելի բառ.

<sup>1)</sup> Յովհ. ԺԹ. 15., հմմտ. Ղուկ. ԻԹ. 18. 21., Մարկ. ԺԵ. 13—14.      <sup>2)</sup> Ա. Կոբենթ. Բ. 8.      <sup>3)</sup> Ա. Կոբենթ. Ա. 24.

գործութեանն ճանաչիւք, այսպէս և մարմնով մեռեալ յարոյց զսա՝ գործով կատարեալ զխոստումնն. և թաքուցեալ զնա ընդ երկրաւ, որպէս հատ ցորենոյ, անմահ և այսմիկ և մեղ զվերակենցաղութիւն երկրագործեաց, զի և ասելով՝ «Ուր քո, մահ, յաղթութիւն. ուր քն, դժնիս, խայթոց»<sup>1</sup>, 5 զյերկինս տաւնաւղացն ժամանել կարիցեմք ի մայրաքաղաքն:

Նորին ի Գ. ի օւանականէ թղթոց.

Արդ՝ զսա հրեաք հասարակական կարծելով մարդ, գոչեին, որպէս սակաւու յառաջ յիշեց(ի). «Ո՞րր դու մարդ 10 ելով՝ Աստուած զքեզ ինքն առնեսա<sup>2</sup>, և այն նշանական գործոցն Աստուած զնա խոստովանելով։ Իսկ Արիանոսք, Եւնոմիանացիք՝ զոցայն վատապարշտութիւն նախանձաւ յեղեալք, Աստուած ահա կոչեն բայիւ, բայց մարդ խոհին, շինած և արարումն Աստուծոյ զսա գոլ ասեն. քանզի եր- 15 կոքեան|զնոյն Աստուածն Բան անկար գոլ և Աստուած և շինած։

Երանելոյ Կիւրդի եպիսկապոսապետի Աղեքանդրեայ՝ յերրորդ բանեն, որ ի Հռովմայեցւոցն քուղը.

Քանզի ի նմանէ ըստ բնութեան Որդի, որ յաստուա- 20 ծութեանն գահս ընդ նմա վայելելով, ի վերնոցն զաւրութեանց երկրագեալ, աղքատացաւ վասն մեր, և եղել լու Հաւը մինչ մահու և մահու խաշին<sup>3</sup>: Եւ զինչ աստուստ կամ զինչ աշխարհի շահ հնարեաց ինչ հաւաստացուցանէ ասելով երանելին Պաւղոս. «Ճի որպէս անլութեամբ միոյն մար- 25 դոյ մեղաւորք կացին բազումք, այսպէս և լսաւորութեամբ միոյն արդարք կացցեն բազումք»<sup>4</sup>:

Նորին՝ յառ Սուկեսովն թղթոյն Բ.

Աւելաբանեն այսուհետեւ ասաւղքն, իբր զի թե էր մի բնութիւն Բանին մարմնացեալ, ամենեին իսկ և 30 ամենայնիւ հետևանայր զանգումն լինել և խառնութիւն, իբր պակասելոյ և գողացիլոյ մարդոյն. քանզի ոչ պակասեաց և ոչ ըստ որում ասեն գողանի. քանզի բաւական առազդեցութիւն կատարելութեան, եթ՛ եղև մարդ, ասեն|եթե 151v.

<sup>1)</sup> Ա. Կոքնթ. Ժե. 55.    <sup>2)</sup> Յովհ. Ժ. 33.    <sup>3)</sup> Փիլիպ. Բ. 8.

<sup>4)</sup> Հռովմ. Ե. 19.

մարմնացաւ. քանզի եթ' այս լոիւր առ ի մէնջ, ունէք արդեւք տեղի նոցայն զրպարտութիւն. այդ վասն զի հարկաւորապէս յառաջ արտաքերեալ է, ուր պակասութեան կամ եթե գողութեան յեղանակ:

### 5 Ի ՍԱԲԻՄԱՆԻ ՔԱՂԿԵԴՈՎՅԻ ԺՈՂՈՎՈՅԻ ճայինութիւնն.

Սահմանեաց նահապետաբար ՅԺ. և ութից սրբոցն հարանց գհաւատոն մնալ անձեռնարկելի. և վասն Սրբոյ Հոգւոյն մարտուցեալս յամանակս յետոյ ի թագաւորեցելում քաղաքին ձ. և Ծ. ժողովեցելոցն հարանց՝ յաղագս Հոգւոյն Սրբոյ գոյացութեան զաւանդեալ վարդապետութիւնն հաստատէ, զոր նոքայն ամենեցուն ծանուցին, ոչ իրր իմն պակաս յառաջագունիցն ի վերայ ածելով, այդ զյաղագս Սրբոյն Հոգւոյ իմացումն զայնցանէ, որք զնուրայն տերութիւն ի բաց բառնալ փորձային՝ գրականաւք վկայութեամբ հաւաստացուցեալ: Եւ վասն այնոցիկ, որք գտնուեսութեանն ապականել ձեռնարկեն խորհուրդ և սոսկ մարդ գոլ զ' ի սրբոյ կուսէն Մարեմայ զծնիցեալն անպատկառապէս աղճատաբանել, սրբոյն կիւրիդզի Աղեկը-

152r. 20 սանդրացեացն եղելոյ հովուի ժողովականս թուղթս առ Նեստորիոս և առ Արենելեայս յարմարականս եալս, ընկալան առյանդիմանութիւնն Նեստորի վնասամտութեանն: Իսկ մեկնութիւն բարեպաշտ նախանձոյ փրկական հմայութեան փափառաւղացն զմտածութիւն, որոց և զթուղթն 25 գմնծի և ծերագունի Հռովմայ նախագահին, զսրոյ և երանելուոյ եպիսկոպոսապետի Ղեովսի, գրիցեալն առ ի սուրբս եպիսկոպոս Փղարիանոս, սակս լուծութեան Եւտիքեայ չարամտութեան, յորում զմեծին Պետրոսի խոստովանութիւն նշանակելով՝ հասարակական իմն արձան գոլով,

30 զչարահաւատացն յիրաւի յարմարեաց յառ ուզոցն աղանդոց հաստատութիւն:

Պիտառութիւն Նեստորի հերձուածողի՝ բաղաձայնեալ նախասացելոցն ի սահմանն Քաղկեդովյի ժողովոյն, զի եւ ոչ ինքն սոսկ մարդ եասաց, եւ մեկնելով նոցա զրախութիւն ցեալ ամպարեսութիւն.

մարդ, համանգամայն և Աստուած. իսկ եթե միայն գոյր Աստուած, պարտ էր ասել, Ապողինարիէ, «Զի՞ զիս խնդրէք սպանանել, զԱստուած, որ զծմարտութիւն ձեղ խաւսեցայ». իսկ այժմ ասէ՝ «Զի՞ զիս խնդրէք սպանանել, մարդ, որ զծմարտութիւն ձեղ խաւսեցայ»<sup>1</sup>. սա, որ զիշեղէնն ճ պարագրեցնեալ պասկ. սա, որ ասէ՝ «Աստուած իմ, Աստուած իմ, ընդէր զիս ի բաց թողեր»<sup>2</sup>. սա է, որ զեռաւրեայ վախճանն համբերեաց. և երկրպագեմ ընդ աստուածութեանն զսա, իբր աստուածայնւոյ խաւսնակ ճոխութեան:

Հականառութիւն առ ասացեալսն ի սահ-<sup>10</sup> մանի Քաղկեդովնի ժողովոյն եւ նախ քան զնոսա(?) ներձուածողին.

Սահմանեալ ահա, թե իբր պարտ իմանալ ի սրբոցն արանց ի նիկեա ասացելոցն, յայնժամ ապա նախահաւել զսահմանեն(?) . . . \* ձեռնարկելի ահա զայս, որպէս կար- 15 ծեցին նորաձայնութեամբք իւրեանց նորոգել. Ապա յետ այսորիկ զսուրբ ժողովն կարգեալ և զհարիւր և զյիսնիցն զոգեմարտացն լոեալ. իսկ զյեփեսոս սուրբ ժողովն՝ զքակտիչն զնեստորիսուն որպէս ոչ հաւանելով զամնայն զ' ի 153ր. նմա գործեցեալսն և աւրինակեալս, թերես կամ վասն լուծ- 20 մանն նեստորի, կամ վասն սահմանելոյ զնոսա յԵփեսոս՝ մի իշխել խնդրել կամ աղանդել աւելի ինչ ի սահման հաւատոց, բայց սրբոց հմայութեանն երեք հարիւր և ութեատանից սրբոցն հարանց. զայս ոչ անուանելով, վասն զի հմայութիւնն կամ զարբոց հաւատ նորոգեցին, և թուղթս 25 ժողովականս երանելոյ կիւրդի անուանեն, իբր զրպարտաւղաց նոցա յարմարականս ելով. զի տեղի կալցեն յարակարգել այսոցիկ և զավստամբութեանն շարագրութիւն զնախաղասեալն թուղթ ամպարշտին Ղեռվի, պատճառեալք իբր աւրէն զայսոսիկ, որք սոսկ մարդ ասեն զՔրիս- 30 տոս, յիշեցնեալ իսկ դարձեալ զսրբոյ կուսին՝ Աստուածածին զնա ոչ ասացին: Ահա իսկ ապացուցաւ, զի և ոչ նեստորիսոս սոսկ մարդ ասէ զՔրիստոս, յորոց ինկն աղանդեաց և զեկոյց ամենեցուն սոցայն վարդապետ, զսոցա ծած-

\* ) Մի անվերծանելի բառ.

<sup>1)</sup> Յովհ. Ը. 40.      <sup>2)</sup> Մատթ. Ի. 46., Մարկ. Ժ. 34. (Հմմա. Մազմ. ԽԱ. 2).

153v. կեալ կեղծաւորութիւնն ուսուցանելով. իբր խորհիս յաղագս Քրիստոսի, որք սոսկ զնա մարդ ոչ խոստովանեն, այդ մարդ համանգամայն և Աստուած զնա ասելով. և մարդոյն առբաշխեն զախտակրութիւն և զեռաւրեայ վախ-  
5 5 ճան, երկրպագեն զայս զմարդս ընդ աստուածութեանն, իբր աստուածայնոյ խաւանակ ճոխութեան. իսկ վնասամիտ ասեն զնեստորիոս, իբր ոչ կարացեալ թաքուցանել զիւրեւ զնոցայն ամպարշտութիւն, այդ համարձակութեամբ զնա քարոզել. Քանզի ոչ իբր հերձուածող զիւրեանցն վարդա-  
10 10 պետ այսպէս անուանեցին, այդ իբր ոչ զաւրեալ նաւազել զըստինքեանն կեղծաւորութեամբ, որպէս և ինքեանք ա- րարին:

Զրպարտեն իսկ զերանելին մեր հայր և զեպիսկապո-  
սապետն կիւրիզզոս, իբր հաւասար նոցա աղանդելի ի Ղեռվնի  
15 թղթոյն ամպարշտութեան՝ յառ Նեստորիոս ժողովականս  
նորա թուղթս, առ յեղակարծ յափշտակութիւն պարզա-  
գունաց ցուցեալ այսուհետեւ, ոչ չափաւորապէս, որպէս  
154r. մտածեմ, եթե զոյցս խորհի Նեստորի, քանզի զայս շարա-  
գրելով կամ եթե սահմանելով և Ղեռվն ծախիչն Քրիստոսի  
20 հաւտիս ի ձեռն իւրոյ շարազրութեան, կամ եթե թղթոյ:  
իսկ եթե զոյցս այսոցիկ խորհէր Նեստորիոս, յարմարին  
իսկ նոցայն ամպարշտութեան, որպէս ինքեանք ասեն առ  
պատրումն պարզագունիցն երանելոյն կիւրիզզի ժողո-  
վական թուղթք, իբր զայսոսիկ ոչ ընկալաւ ամպարիչտն  
25 Նեստորիոս և ոչ հաւանի նոցա: «Այդ ոչ է հաւասարու-  
թիւն լուսոյ առ խաւար և ոչ մի»<sup>1)</sup>. քանզի այսոցիկ վկա-  
յեաց թղթոց սուրբ ժողովն յԵփեսոս ուղղապէս ունել և  
հաստատուն զհաւատոյն, իսկ դատապարտեցին և նղովե-  
ցին զնեստորի աղանդմն: Եւ իբր բաղաձայն երանելոյն  
30 կիւրիզզի առ Նեստորիոս գրեալքն, զորս թղթաւորեաց  
ամնզարշտաբար Ղեռվն առ Փղաբիանոս. քանզի ոմն, որ-  
պէս նախ ապացուցաւ, ի վեր և ի վայր բաժանումն և  
154v. երկուս բնութիւնս՝ ներգործիչս զառանձինս, և երկուս որ-  
դիս և դէմս երկուս աղանդէ ի վերայ միոյ Քրիստոսի  
85 Տեառն մերոյ և Աստուածոյ և Աստուածածին ոչ խոստովանէ  
զսուրբն կոյս. իսկ երանելին կիւրիզզոս ամննայն ուրեկք  
մի Որդի, մի Տէր աղանդէ\*. զ' ի Սրբոյ և Աստուածածնէ

<sup>\*)</sup> Լուսանցքում՝ «պատմէ».

<sup>1)</sup> Բ. Կորնթ. Զ. 14.

Մարեմայ ծնիցեալն Եմմանուէղ, նմա առքայխելով միշտ զաստուածավայելուչս և զմարգկայինս, և Աստուած զնա խոստովանէ ըստ ծշմարտութեան. և վասն այսորիկ Աստուածածին առւրբն կոյս զա ասելով. խաչեցեալ և թաղեալ և յարուցեալ և գալոց դատել զեենգանիս և զմնուեալս, և ըստ առաքելոցն և երանելեացն հարանցն ի նիկեայ վարդապետութեան, և զայս խոստովանել զխոստովանութիւն։ Քանզի որ եթև գրելով նեստորի, մինչև ի վերջինն նորա առ նա գրիցեալն թուղթ, նզովելով իսկ զամպարիշտս և պիզծո նորա ազանդս. քանզի եաաաց այտպէս ի կատա- 10 րածի թղթոյն, գրելով առ նեստորիոս. և ակ որ է հարկաւոր նզովել զձերդ բարընկալութիւն\*, ի ներքոյ կարգեցի յայսմիկ թղթում։

Ա. Որ \*\*\* ոք ոչ խոստովանէ \*\*\* Աստուած գոլ ըստ 155ր. ծշմարտութեան զԵմմանուէղ, և վասն այսորիկ 15 Աստուածածին զսուրբն կոյս, քանզի ծնաւ մարմ- նապէս մարմին եղեալ զ' ի յԱստուծոյ Հաւրէն ։ Բան, նզով եղիցի։

Բ. Որ \*\*\*\* ոք ոչ խոստովանէ մարմնի<sup>0</sup> ըստ ենթակա- կացութեան միաւորեալ զ' ի յԱստուծոյ Հաւրէ 20 Բանն և մի գոլ զՔրիստոս հանգերձ իւրով մարմ- նովն, զնոյն<sup>00</sup> յայտ եթ' և Աստուած, համանգա- մայն և մարգ. նզով եղիցի։

Գ. Որ ոք ի վերայ միոյ Քրիստոսի բաժանէ զենթա- կացութիւնս յետ միաւորութեանն միայն շարա- 25 յարելով զնոսա՝ շարայարութեամբ ըստ իշխանու- նութեան կամ եթե ճռիսութեան, և ոչ առաւել ուղեկցութեամբ ըստ միաւորութեան բնականի, նզով եղիցի<sup>000</sup>։

Դ. Որ ոք դիմաց երկուց կամ եթե ենթակացու- 30 թեանց զյաւետարարանականս և առաքելականս

\* ) Հուստնցըւմ՝ «հեղութիւն».

\*\*) Անդ՝ «եթե».

\*\*\* ) Անդ՝ «իխոսովանելոցեցի Աստուած մ(շմար)տու(թեամբ) (զիմա)նու(էլ)».

\*\*\*\*) Անդ՝ «եթե».

) Անդ՝ «ի մար- (մնի) բնութ(եամբ) (մի)անալ (թանին) Աստուծոյ Հաւրէ(բ).

00) Անդ՝ «զեսյ(ն) համ(անդ)ամա(յն) և մոր(գ)».

000) Անդ՝ «եթ(ե) (ոք զի) Քրիստոս (բաժան)եցէ (յերկուս) գէմ(ո)

(յետ) մի(անալ)ոյն և մի(այն) (մնըձ)աւըր(ութիւն) յա-

բե(յութ)եա(ն) (առից)ցէ ի(բրկ) զատ(ուով) և կ(ոմ) (մօխ)-

ութ(ին) կ(աւր(ութիւն)) դա(եալ) և ոչ (միու)թիւն (բնու)-

թիւ(մը).

- շարագրութիւնս բաշխէ ձայնս, կամ ի վերայ Քրիստոսի քան զարդոցն ասացեալս, կամ առ ի նմանէ յաղագս իւր, և զոմանս իբր մարդոյ, քանզի յԱստուծոյն Բան յատկապէս իմացելում առյարէ, իսկ
- 155v. 5 զոմանսիաստուածազայելուչս միայնում յԱստուծոյ Հաւրէ Բանին, նզով եղիցի \*:
- b. Որ ոք իշխէ ասել աստուածազգեստ մարդ զՔրիստոս, և ոչ յաւէտ Աստուծած գոլ ըստ ճշմարտութեան, իբր որդի մի բնութեամբ, ըստ որում եղան
- 10 մարմին Բանն և հաւասարեաց նմանապէս մեզ արեան և մարմնոյ, նզով եղիցի:
- Զ. Որ ոք ասէ Աստուծած կամ Տէր գոլ Քրիստոսի զյԱստուծոյ Հաւրէ Բանն, և ոչ յաւէտ նոյն խոստովանէ Աստուծած համանգամայն և մարդ, իբր 15 եղելոյ մարմին Բանին՝ ըստ գրութեանց, նզով եղիցի:
- Ե. Որ ոք ասէ իբր մարդ ներգործեցեալ առ ի յԱստուծոյ Բանէ զՅիսուս և զՄէնածնին քաջափառութիւն պարայարեալ, իբր այդում քան զնա 20 ելում, նզով եղիցի:
- Ը. Որ ոք համարձակի ասել զգերառեալն մարդ երկրպագակցել պարտ Աստուծածումն Բանի և փառակցել և անռւանակցիլ Աստուծած, որպէս միւս

\* Լուսանցքում՝ «Եթե ո(ք) (յերկ)ուս եր(եսս) կամ յդ- (ըկուս) զաւը(ութիւն)ու զ(աւեա)տրա(նեցն) և զա(ռաք)- ելոցն (զդր)եալս(ն) (և զ)բարբա(ռն) բաժա(նեցէ) և կամ զՔրիստոսի ասաց(եալն) սրբաւ(քն) իւր(ովք) (և կամ) զսը (իւ(ք) (իսկ) վան (իւր) իցէ ա(սաց)եալ, (և զս)մանս է(բբ) մարդ(ոյ) ուրայ(ն) (ի) Բանէն (Աստուծոյ) իբրի յ(արել)ութեամբ (իման)այցէ (և զոմ)անս դ(արձ)եալ . . . և աստուծա(բա)ը միայն (թա)նին որ յԱստուծայ (չաւ)րէ նզով»:

Այս 155-րդ թերթի լուսանցքը կիսով շափ կարուած է, երկի գիրը զերակազմելու ժամանակ՝ Փակագծերի մէջ գրածը լրացրել ենք Նիւրդի առ նեռառ գրած թղթի թարգմանութիւնից. տես օրինակ՝ Նիւրդ Թղթաց, 8 փոկի 1901. էջ 396—406. Նիւրդ Պարագմանց Դիրք, էջ 460—474, ապաւած Հայոց 1166(—1717) թուին, Կ. Պոլոսւմ:

Երկառառան նոսկքները կազմում են թղթի, զերջաբանը, (Դիրք թղթաց) էջ 404—406., Պարագմանց Դիրք, էջ 472—474:

միւսում \*, ոչ իսկ առաւել միով երկրպագութեամբ  
պատուէ զԵմմանուէդ, և մի նմա փառաբանութիւն  
առյարէ, ըստ որում եղեւ մարմին Բանն, նզով  
եղիցի:

- Թ.** Որ ոք ասէ զմին Տէր Յիսուս փառաւրեալ ի Հոգ-<sup>6</sup>  
ոյ, իբր աւտար զօրութեամբ նովաւ վարեցեալ, 156r.  
և ի նմանէ առեալ զներգործեն կարել զհոգւոց  
անմաքրոց, և լնուլ ի մարդիկ զաստուածանշա-  
նութիւնս, և ոչ իսկ յաւէտ յատուկ նորա զհոգին  
ասեն, որով և ներգործեաց զաստուածանշանու-<sup>10</sup>  
թիւնսն, նզով եղիցի:
- Ժ.** Քահանայապետ և առաքեալ խոստովանութեանս  
մերոյ լինել զՔրիստոս աստուածայինն ասէ զրու-  
թիւն<sup>1</sup>. մատոյց \*\* իսկ զինքն վասն մեր ի հոտ  
անուշութեան Աստուծոյ և Հաւրու Որ ոք այսուհետև<sup>15</sup>  
քահանայապետ և առաքեալ մեր եղանել ասէ ոչ  
զնոյն զԱստուծոյն Բան, յորժամ եղեւ մարմին և  
ըստ մեղ մարդ, այդ իբր միւս քան զնա յատկա-  
պէս մարդ ի կնոջէ, կամ եթ' ոք ասէ և վասն իւր  
մատուցանել զնա զնուէրն, և հչ առաւել վասն<sup>20</sup>  
միայնոյ մեր, քանզի ոչ կարաւտացաւ նուիրի ոչն  
գիտակ մնղաց, նզով եղիցի:
- ԺԱ.** Որ ոք ոչ խոստովանի զՃեառն մարմինն կենագոր-  
ծիչ գոլ և յատուկ իւր յԱստուծոյ Հաւրէ Բանին,  
այդ իբր միւսոյ ուրումն քան զնա շարայարելում<sup>25</sup>  
նմա ըստ արժանաւորութեան, կամ եթ' իբր միայն 156v.  
աստուածային բնակութիւն ունելով, և ոչ իսկ  
յաւէտ կենագործիչ, որպէս ասացին, եթ' եղեւ յա-  
տուկ Բանին, որ զամենայն կենագործել կարէ,  
նզով եղիցի:<sup>30</sup>
- ԺԲ.** Որ ոք ոչ խոստովանէ զԱստուծոյն Բան ախտա-  
կրեալ մարմնով և իւաչեալ մարմնով և մահու ճա-  
շակեալ մարմնով, և եղեալ նախծին ի մեռելոց,  
ըստ որում կենդանութիւն է և կենարար, իբր Աս-  
տուած, նզով եղիցի:<sup>85</sup>

\* Միւս թարգմանութեան հետեւալ նախագառութիւնը՝  
«Զի յորժամ ընդ ուժեց առիցէ ի հարկէ երկու իմացու-  
ցանէ», ընկած է երկում մեր ձեռագրի մէջ.

\*\*) Լուսանցքում՝ «առաջ(ագ)լեաց (պա)տարա(չէ)».

1) Հմմա, եբբ. Պ. 1.

Նորին՝ ի մեկնութենէ որբոյ հմայութեանն.

Քանզի պարադրելով զորդիութեանն փառս ի միայն յԱստուծոյ Հաւրէն բուսեալն Բան, իբր որդի միւս ի սերմանէն Յեսսեայ և Դաւթի շարայաբեալ ասեն նմա և 5 ընդունել զորդիութեանն և պատուոյ աստուածավայելչի և քնակութեան նորին Բանին և զամենայն յաւէտ ունակել առ ի նմանէ. իսկ յատուկ ամեննեին ոչինչ յաղազս այսպիսեաց, որպէս կարծեմ, գրեցին Փրկչին աշակերտք: Քանզի մտին ոմանք մարդիկ, ի վաղուց նախագրեալք,

10 յայս դատաստան՝ ամպարիշտք, զԱստուծոյ մերոյ չնորհն 157r. փոխելով յանառակութիւն և զմիայն իշխանականն և Տէր Յիսուս Քրիստոս ուրացեալք. իսկ Յիսուս Քրիստոս անուան իշիւ(?) յիրաւի ի մարդութեան կերպի երևեալ Բանն:

### 15 Եւ յիւ սակաւուց.

Տէր, աղե, ճառեսցեն ասացելոց ընդդիմացեալքն, որք զնեստորի և Թեոդորայ խորհել և ասել ի բազում յոյժ անմտութենէ ոչ խղճելով, ի բաց հանէք զգոլն Աստուած և Որդի ճշմարիտ Աստուծոյ և Հաւր, զ' ի սրբոյ 20 կուսէն զախտակրելն նմա առբաշխելով, նմա միայնում, և ի բաց մերժելով զնոյն Աստուծոյ Բանն, զի մի Աստուած ասիցի ախտակրեալն. քանզի այսք նոցայոցն հեշտալի ճշգրտութեանն գիւտք և իմացմանց գեղջուկ մտածութիւնք: Ապ' ուրեմն մի անուաննեցի Քրիստոս՝ յատկա- 25 պէս և ըստ միայնուջ յԱստուծոյ Հաւրէ Բանն. քանզի որպէս է անվայելուչ նմա ախտակրելն, յորժամ արտաքոյ իմանայցի մարմոյ, սապէս և պիտառութիւն անյարմար իմն ինչ և աւտարոտի նմա. քանզի զՅիսուս ի Նաղարեթայ, զոր եաւծն Աստուած Հոգւով Սրբով<sup>1)</sup>, իսկ 157v. 30 ինքնակատար ամենայնիւ յԱստուծոյն Բանին ոչ ևս կարաւտացաւ աւծութեան ի Սրբոյն Հոգւոյ, ուրեմն ուրացայք զտնաւրէնութիւնն, ի բաց զատուցէք զՄիածինն զառ ի յաշխարհ սիրոյն. մի անուաննեցի Քրիստոս առ ձեզ, կամ ոչ փոքր նմա զըստ մեզա լինել չափում. ու- 35 րեմն զան զի և այս է անվայելուչ նմա, խոստովանեսցէ և ոչ ոք, եթ՛ եղն մարդ. զի և նոցա ասիցէ Քրիստոս. «Մո- լորիք, ոչ գիտելով զգրութիւնն և ոչ զկարութիւն Աս- տուծոյ»<sup>2)</sup>:

1) Հմմա. Դործք. Ժ. 48.

2) Մատթ. ԴԲ. 29.

Ապացուցեալ ուրեմն հաւաստապէս ի ձեռն նախասացելոցն, եթ' ոչ մի ունին բաղաձայնութիւն ի Ղեռվայ ամպարշտէն դրեալքն առ Փղաբիանոս և ի ժողովոյ խոտաւզացն սահմանեալքն, առ զորս գրեացն Նետորի երանելին կիւրիղզոս, կամ առ այդս նորա յիշտատկականն 5  
և շարակարգականս. զորս այսոքիկ թուելով տարաքարողեցին իբր անյարմարք եալք առ ուղղոց ազանդոց հաստատութիւն. քանզի ոչ մի հաւասարութիւն լուաոյ առ խաւար և ոչ մասն հաւատացելոյ ընդ անհաւատի<sup>1)</sup>. Մի այսուհետև պատճառս իմեզս գտանելով և զիւրն թոյնս<sup>10</sup> 158r.  
սերմանել յանձինս պարզագունացն կամեցեալ, և թագուցանել զիւրն մանկաւորութիւնն նոցայն ամպարշտութեամբ՝ խառնեցն փոխանակ մեղու զուղղափառն անուն երանելույն կիւրզի. քանզի այսպիսեացս ճառեսցի յիրաւի ի Սաղմոսսն, ասացեալ ի գիմէ Աստուծոյ՝ «Անկ մեղաւորաց եասաց<sup>15</sup>  
Աստուած. ընգիր դուք զրուցատրէք զարդարութիւնս իմ և առնուք զկտակ իմ ի բերան ձեր. իսկ դուք ատեցէք զիրատ և արտաքս հանէք զրանս իմ առ ի յետոյսն»<sup>2</sup>, և ըստ միոջէքն: Քանզի եթ' ոչ ատեցին և ոչ արտաքս հանին, այդ մնացին ի վարդապետութեան սրբոցն հարանց, 20  
պարտ էր զնոսա սահմանել զայս, եթև հաւանիմք աշխա(r)-հականի ժողովոյ երեք հարիւրոցն տասն և ութից. հաւատատամք իսկ և զշոգին Սուրբ նոյնագոյ Հաւր և Աստուծոյ և Որդուոյ Հաւր, և բաղաձայնաբար յԵփեսոս սրբում ժողովոյն՝ լուծաւզին զամպարիշտն Նետորիոս, սահմանելով<sup>25</sup>  
մի ինչ աւելի գործիլ, մի իսկ յաւելուլ և միթպակասեցուցանելի ի սրբոցս յայսցանէ ժաղովոց:

Այդ զայս ոչ սահմանեցին և ոչ զթագաւորականն գնացին ուղի, իսկ ի բաց խոտորեալք ի ճանապարհէն արդարութեան, գնացին ընդ փուշս և զամենայն աշխարհ<sup>30</sup> գայթագղեցուցին և գայթագղեցուցանեն, սպանանելով անձնական մահու և իւրեանց ամպարշտութեամբ և ի ձեռն Եւտուքիականացն անդոնաբերանութեան և հայելութեան անթիւս հաւատս Քրիստոսի:

Այսք ժողովոյն Քաղկեդովնի ճահագործութիւնք, յորս 35  
եկեղեցի Քրիստոսի հալածի, զհարածս Քրիստոսի և զախտակրութիւն ի մարմնի շուրջ բերելով. քանզի ոչ հաւանին երկրպագել կամ հաւասարել զոր չարապէս ճաւճեցին իւրեանց արձանի ամպարշտութեան զուղղափառացն և ոչ

1) Հմմտ. Բ. Կոբենթ. Զ. 14—16.

2) Սաղմ. Կթ. 16—17.

- զչարահաւատիցն, մանաւանդ իսկ, որպէս նախասացաւ, պատճառաւ ամպարշտութեան երկարնակացն ի Քաղկեդովի հաւաքեցելոցն՝ տեղի գտին և պատճառ Եւտիւքայ 159r. աշակերաք եղեալքն սերմանել զիւլիեանց ամպարշտութիւնն ի բացումս և սպանանել զանձինս, զորս ոչ պարտ մեռանել: Նախացուցեալ իսկ և զայս ի հակածառականին թղթոյն Ղեռվսի, զի ամենեին աւտարացեալք են այսուիկ աղանդքն սրբոյ Պետրոսի խոստովանութեանն. քանզի զՔրիստոսն անուն անաւգուտ գոլ առ փրկութիւն 10 թանց միւսոյն առեալ, այս է Որդին. ի վերեն իսկ նախասացելոց, չինելով զիւրեանց ամպարշտութիւնն, և ասեն. «Քանզի և որք յՈրդւոցն երկակոն զանաւրէնութեանն կորզել ձեռնարկեն խորհուրդ մարտնչի, և որք արտանալին զՄէնածնին խասել յանդգնին աստուածութիւն, 15 զայսոսիկ ի քահանայականէն մարժէ միաբանութենէ, և զ' ի վերայան երկուց բնութեանցն Քրիստոսի զանդութիւն կամ խառնութիւն տնաւրինաւղացն ընդդիմանայ, և որք երկնային կամ հրշոտակական գոլ գոյացութիւն զ' ի մէնջ առեալն նորա ծառայի կերպ շամբշացեալմ՝ արտապս վարէ»: |
- 159v. 20 Պիթառութիւնն Նեստօրի, բաղածայնեալք նախասացելոցն ի սահմանէ Քաղկեդովնի ժաղովայն, յորց ցուցանի, եր' իբր ոչ Նեստօրիս ասէր երկուս օրդիս. եւ այն զի երկուս որդիս խոռհիկ ըստ իւրում եւ երկուս բնօւրիւնս աղանդեր. ի բառակէ Ժէ.
- 25 Այդ ելով նախ այսորիկ Որդի և կոչնցեալ յետ առութեան մարմնոյն, ոչ կարի կոչիլ որոշաբար որդի որդին, զի մի երկուս որդիս աղանդիցեմք. այդ վասն զի այնմիկ շարայարեալ է ի սկզբանէն երում Որդւոյն, զառ ի նայն շարակցելում ոչ կարէ ըստ արժանաւորութեան որդիութեան բաժանումն ընդունել. ըստ արժանաւորութեան ասեմ որդիութեան, ոչ ըստ բնութիւնն: Սակս այսորիկ և Քրիստոս Աստուածն Բան անուանի, վասն զի ունի շարայարութիւն զառ Քրիստոսն հանապազորդական:
- Եւ դարձեալ.
- 35 Անանշատելի յերևելոյն Աստուած, սակս այսորիկ յոչն անջատելոյ զպատիւն ոչ անջատեմ. անջատեմ զբնութիւնս, այդ միաւորեմ զերկրպագութիւնն:
- Եւ դարձեալ յետ այսորիկ.

Լուր երանելոյն Պաւղոսի յայտնապէս աղաղակաւ-  
ղի. ո՞վ է Խաչեցեալն, լուր յայտնագունի ձայնի. ՀՔանզի 160ր.  
և խաչեցաւ ի տկարութենէ»<sup>1)</sup>. Ո՞ տկարացաւ, ո՞ հերձուա-  
ծող, Աստուածն Բան:

Եւ դարձեալ յետ այսորիկ.

5

Զի ես հակամեկնես Պաւղոսի՝ գանախտանալի Աս-  
տուածն Բան երկրականին խառնես մարմնոյ և ախտանալի  
քահանայապետ առնելով:

Հականառութիւն առ ասացեալսն ի Քաղ-  
կեդովնի ժողովոյն եւ նախ Տան զնոսա հերձուա- 10  
ծողացն.

Յատուկ իւրեանց վարդապետին սովորապէս ի բաց  
բացաւզի համարձակապէս զնոցայն կեղծաւորութիւն և  
զնոյնս որպէս մեկնելով զ'ի նոցանէ ասացեալսն, ոչ պէտք  
մեզ բազմաց բանից, առ ի դատապարտութիւն ի նոցանէ 15  
սահմանելոցն, քանզի հասարակական արձան իւրեանց  
անուանելով դթուղթն Ղեռվմի, և արբոյ Պետրոսի ասելով  
զնա պարունակել խոստովանութիւն, ցուցանեն դարձեալ  
զ'ի նմա գրեցելոցն ամպարշտութիւն, որով զնայն գովեն.  
քանզի մի, ասեն, Որդի քարոզէ, վասն զի շարայարեալ է 20  
ի Մարեմայն մարդ, կամ եթե ծառային կերպ զիսկզբանէ  
ելումն Որդուոյ. միուրեմն ըստ արժանաւորութեան որդիու- 160v.  
թեան հոմանունութեամբ առ ի նոցանէ հաւատանայ, ոչ ըստ  
բնութիւնս: Պատճառեն իսկ դարձեալ զախտանալին զՈր-  
դւոյն Աստուածութիւնն ասաւզս, զի զյատուկն որդի յա- 25  
ռաջ բերցեն զերկուս բնութիւնսն. և զ'ի Մարեմայն մար-  
դոյ բաշմեն զախտս, ըստ որում և զծնունդն զ'ի կու-  
սէն. աւտարացուցանեն իսկ ամեննեին զՄէնածին մարմնա-  
ցեալ Աստուածն Բան ի ծնելութենէ երանելոյ և Աստուա-  
ծածին կուսին. և ի ձեռն մարմնոյ գրկախառնիլ մահու 30  
զԱստուած, զվասն մեր եղեալն մարդ մնալով Աստուած,  
զախտակրեալն և թաղեալն և յարուցեալն ի մեռելոց:

Ի՞ր իսկ հնար է մարտնչել, որք բաժանեն յՈրդւոյ  
երկակութիւն զՔրիստոսի խորհուրդոն, զերկուս բնութիւնս  
ամպարշտաբար աղանդելով, և իւրաքանչյուրում բնու-

1) Բ. Կոբենթ. ՃԶ. 4.

թեան կամ եթե դիմի զյատուկս և գվայելուչա ամբողջ  
պահելով. քանզի արմատ և հիմն ամպարշտութեան եդաւ  
161r. ի Նեստորէ վարդապետէ նոցա, որպէս բազում անգամ ա-  
սացաք, խոհել երկուս որգիս կամ բնութեանցն երկատու-  
5 թիւն(?)։ Եւ զայսոսիկ սահմանեաց ըստ նորոյն թիւելու-  
թեան և ըստ իւրոց աշակերտացն ի վերայ ամենայն անուան,  
զՔրիստոսն և զՈրդին և զՏէրն յամենայնի նորում կտա-  
կի, նշանակելով զի ըստ մասին երեալ զյառաջ քան զյա-  
փտեանս Աստուածն Բան՝ սակս (ան)ախտանալի և իշխա-  
10 նական նորա և անտեսանելի, և ըստ մասին զ' ի սերմա-  
նէն Դաւթի ախտանալի մարդ և ծառայ և տեսանելի, զոր-  
դիութեան և տերութեանն առատութեամբ պատուելով. եչ  
ելով այսորիկ ըստ ծշմարտութեան, այդ հաւասարելով ու-  
նական միաւորութեամբ Աստուածումն Բանի ըստ ար-  
15 ժանաւորութեան, իբր միւս միւսում յարակցեալ, զի զա-  
տուցեն ամեննեին զԱստուածոյն Բան, որք երկուս բնու-  
թիւնս աղանդեն ի կնոջէն ծնելութենէ. իբր արդեւք թա-  
փեաց զինքն, եթ' ոչ եղե մարդ տնաւրինաբար. և աւտա-  
րացուցանեն զնոյն զԱստուածն Բան, զայս սակելով գործե-  
161v. 20 ցելոցն ճահագործութեանց ի գալատեան զյերկրի երենեցե-  
լոյն Աստուածոյ և ընդ մարդկան շրջեցելոյ<sup>1</sup>, յորժամ զի-  
տեաց զմենզ յարենկից ի բարձանց ինքն Քրիստոս և Աս-  
տուած ելով Տէր յայտնեցաւ մեզ, որք ի խաւարի և ի  
ստուերս մահու նստեաք<sup>2</sup>, լուսաւորելով և կենածնելով մեզ  
25 զլոյն ծշմարիտ. քանզի ինքն ասէր Տէրն՝ «Ես ևս ևս լոյս  
աշխարհի»<sup>3</sup>, և «Ես եմ յարութիւն և կենդանութիւն»<sup>4</sup>.  
Շնորհաւորին իսկ առաւել կամաւորութեամբ զյասոսիկ ըստ  
իւրեանցն Բանի զմիայնումն զվայելչականս Աստուածոյ, զ' ի  
Մարեմայն ծնիցելում մարդոյ Որդոյոյ Դաւթի, ախտակրի  
30 և ծառայի, որպէս ինքնեանք ասեն, որք զերկուս բնութիւնս  
աղանդեն: Բանզի ծնիցելոյ ի կնոջէ մարդոյ կամ եթե մար-  
դոյ բնութեան, զծառայի կամ եթե զծառայի կերպի երե-  
ւեցելոյն ի վերայ երկրի մարդկան նորա գտանի ամենայն,  
որ ի վերայ տնաւրէնութեանն զործեցաւ. և պանչելիք և  
162r. 35 ճահագործութիւնք և նախ քան զամենայն ծնունդ. և զի  
կարէր պահել կոյս զծնիչն, ըստ երկարնակացն բանի:  
Քանզի թե ոչ եղե անյնդաբար մարդ Աստուածոյն Բան՝  
մնալովն Աստուած, ըստ անձառելի և անպարիմանալի միա-

<sup>1)</sup> Հմմա. Բարուք. Դ. 38.<sup>2)</sup> Հմմա. Եռայի Թ. 2. հմմա.

Ղուկ. Ա. 79.

<sup>3)</sup> Յովհ. Ը. 12.<sup>4)</sup> Յովհ. ԺԱ. 25.

ւորութեան կամ մարմնաւորութեան Աստուծոյ Քանի յԱստուածածնէն Մարեմայ, և ծնանի ի նէմայ մարդոյ բնութեան ամենայնիւ իսկ, և ամենսին պարագրեն զայլքանիւնութեան ճահագործութիւն, որ միայնում վայել է Աստուծոյ: Այդ ոչ հնարիւր այսպիսի մարդով լինել, կամ 5 եթե ի ձեռն բնութեան մարդկայնոյ. քանզի կամ ամենայն ուրեք և ամենապէս ելոյժ զկուսութիւն մարդոյն բնութիւն, կամ մարդ որ ըստ բնութեան և աւրինի մարդկայնւոյ ծնիցեալն. այդ և ոչ սաղմն առեալ լինէր իսկըզբանն ըստ բնութեանն, հանդերձեալ բացակատարիլ մարդ 10 յարգանդին Կուսին և ծնանիլ ի նէմայ, եթ' ոչ նախ կուսութեանն լուծեցելոյ, ըստ որում սահմանեաց մարդկան բնութեանն աւրէն Աստուած:

Տեսէք, յորպիսի անտեղութիւն հայհոյութեանցնան- 162v.  
կանին(?), որք երկուս բնութիւնս աղանդեն և ըստ մասին 15  
դնեն մարդ և Աստուած, և ոչ խոստովանեն Աստուած  
մարմնացեալ զ' ի Կուսէ ծնիցեալն Եմմանուէլ, այդ մար-  
դոյ ձրեն զԱստուծոյ ճահագործութիւնս, ոչ իմանալով և  
ոչ զոր ասեն և ոչ յաղագս որոց հաստատեն: Քանզի որ-  
դին Դաւթի աւանգեցաք մեք ի սուրբ աւետարանսն թաղա- 20  
ւորել ի տուն Յակովբայ յաւիտեանս և թագաւորութեան  
նորա ոչ գոլ վախճան<sup>1)</sup>, որպէս ասէ երանելին Գաբրիէլ՝  
զառ ի Հոգւոյն Սրբոյ սաղմն առեալ. ոչ ըստ աւրինի  
մարդոյ բնութեան զսա ծնիցեալ երգաբանէ բազմութիւն  
երկնայնւոյ զաւրութեան<sup>\*</sup> առ հովուաւքն և նշանակեն 25  
այս զ' ի մսուրն եղեալ համբակ ի Բնթղենմ . . . . . \*\*  
և Փրկիչ և Տէր. և ոչ ևս զրիցէ ոք մարդապարշտութեան  
ի սրբոցն հրեշտակաց, և ոչ եթե զայս զհովիւսն ուսուցա-  
նեին: Իսկ եթե մարդկութիւն ծնիցեալն, կամ եթե մար- 163r.  
դոյ բնութիւն և ոչ Աստուած մարմնացեալ, յայս ամենայն 30  
իրաւք ամբաստանութիւնն յեղեալ անկաւ ըստ նոսա  
սրբոցն հրեշտակաց դաս: Իսկ եթ' և ընակեալ զնա ասա-  
ցեն ի խանձարրապատելումն համբակի, զտունն փառա-  
բանեցին և տեսանելոյ երկրպագեցին, ոչ թաքուցելոյն՝  
ըստ երկարնակացն բանի. քանզի ծածկութիւն մարմնոյ 35  
ասէ ի Ղեւովնի թղթին՝ աստուածութիւնն թաքնիւր,  
զանիւլանալ կամնցեալ, և դարձեալ պարշտաւղք գտանին

<sup>1)</sup> Լուսանցքում՝ «բանակի».

<sup>\*\*</sup>) Երեք առդ անվերծանելի.

<sup>1)</sup> Հմմա. Ղուկ. Ա. 32—33.

զարարածն քան զարարաւդն: Եւ եթ' ասասցեն գերկակա  
Քրիստոսի բնութիւնս երկրպագեալ նոցա, ի նոյն դար-  
ձեալ զառածանին, երկրպագակցելով զարարածն, կամ եթե  
զմարդն ընդ Աբարչին և զաղախին բնութիւնն ընդ Տեսառնն:

5 Աստուած այսուհետև մարմնացեալ հաւատալով՝ զիամ-  
բակն սուրբ հրեշտակըն, որում և միայնում վայել է ապ-  
րեցուցանել զմարդիկ ի մեղաց և տիրել նոցա յանվախճան|

163v. յափառեանո, զսա փառաբանեին երգովք և ծառայակցաց  
աւետաւորեին զմեծ խնդութիւն՝ զամենեցունն Տէրն և Աս-  
10 տուած ի Բեթղեէմ ծնիցեալ: Ուրեմն ոչ երկու բնու-  
թիւնք Քրիստոսն, զի մի մարդապարշտութեան ամբաս-  
տանութիւն գրեցուք զնդ երկնաւս և նոցուն սրբոցն  
հրեշտակաց, այդ մի բնութիւն զԱստուծոյն Բանի մարմ-  
նացեալ: Քանզի ոչ ասացաւ մեզ յաստուածային գրութե-  
15 նէն և ոչ ի սրբոցն հարանց այսր բնութեան այս ինչ և  
այսր բնութեան այս ինչ, այզ միոյ Քրիստոսի ճշմարտի  
Աստուծոյ զամենայն համանգամայն զԱստուծոյ վայելուչսն  
և զտնաւրէնութեանն Բանի առքաշխնեցին. քանզի իւր  
եարար զմարդկայինն և զամենայն զմարդկան վայելուչսն,  
20 բայս իսկ և արարմունս, որիշ միայն մեղացն. «Մեղս իսկ  
ոչ եարար և ոչ գտաւ նենգութիւն ի բերան իւրում»<sup>1</sup>,  
որպէս ասէ գրութիւնն: Ուղղածեցան\* իսկ և մոգքն յԱս-  
տուծոյ և եկեալք ի Բեթղեէմ երկրպագեցին ծնիցելոյ Որ-  
դւոյ Դաւթի:

164r. 25 Ուրեմն ապա աւրինադրիչն ի Սինայ լերինն, զՏէր  
զԱստուած երկրպագել և նմա միայն պարշտել, ինքն իւ-  
րովի լուծանթլ զիւր աւրէնադրութիւն հրամայէր կամն-  
ցաւզացն ի զիտութիւն ճշմարտութեան դալ և ի մարդա-  
պարշտութիւն ուղղապետեաց \*\* զմոգսն. քաւ լիցի. քանզի  
30 ինքն եասաց անսուտն Աստուած՝ եթե «Զփառս իմ այ-  
դում ոչ տաց»<sup>2</sup>. ինքն իսկ խաւսողն ի մարգարէս առըն-  
թեր էր, Բանն մարմին եղեալ, որպէս ասէ աւետարանիչն. «Քանզի  
35 Տէրն զ' ի նոսայն ի Սինայ ի սրբում, սա վերե-  
լսալ ի բարձունս գերեաց զգերութիւն և ետ տուրս մարդ-

\* ) Լաւառնցըում՝ «առաջնորդեցան».

\*\*) Անդ՝ «առաջնոր-

դեցա».

<sup>1)</sup> Եսայի Եֆ. 9. հմմա. Ա. Պետր. Բ. 22.

<sup>2)</sup> Եսայի ԽԲ. 8.

<sup>3)</sup> Սաղմ. ԿԵ. 18—19.

դու. «Եւ եթ' ի նմա շինեցաւ ամենայն, զ' ի յերկնիսն և զ' ի վերայ երկրի, տեսանելիք իսկ և անտեսանելիք»<sup>1)</sup>, և զի «Քրիստոսի կորացի ամենայն ծունր՝ երկնայնւոց և երկրայնւոց և զայրատանդարամետից. և ամենայն լեզու խոստովանեսցի, եթե Տէր Յիառու Քրիստոս՝ ի փառս Աստու- 5  
ծոյ»<sup>2)</sup>. Քրիստոսի իսկ զայս վկայէ և Էսայիաս մարգարէ, ասելով. «Այսպէս ասէ Տէր, արարիչն զերկին և մածուցիչն զնա. այս Աստուած, ցուցաւզն զերկիր|ս արարիչն 164v.  
զնա»<sup>3)</sup>. և դարձեալ. «Ես եմ և ոչ է ես. հչ ի թագստի խաւաեցայ և ոչ ի տեղւոջ երկրի խաւարնում»<sup>4)</sup>. քանզի 10  
ինքն էր և յետ մարմնոյ պատասխանելով քահանայապետին և ասելով. «Ես համարձակութեամբ խաւաեցայ աշխարհի. ես յամենայն ժամ ուսուցի ի ժողովարանին և ի մեհենի, ուր ամենայն հրեայք ժողովին, և ի ծածուի ոչ խաւաեցայ և հչ միյ»<sup>5)</sup>. Եւ ի վերայ ածէ դարձեալ մար- 15  
գարէին ցուցանելով. «Ես Աստուած և հչ է այդ բայց իմ, արդար և փրկիչ, ոչ է արտաքո քան զիս. դարձարուք առ իս և կեցցէք, որք ի սպառածէ երկրի. ես եմ Աստուած, և ոչ է այդ զինէն, երդնում. այո, ահա արտաքս եկեսցէ ի բերանոյ իմոյ արդարութիւն. բանք իմ ոչ բա- 20  
ցադարձեսցեն, զի ինձ կորացի ամեն ծունր և խոստովանեսցի ամենայն լեզու Աստուծոյ ասելով արդարութիւն և փառք առ նա եկեսցեն»<sup>6)</sup>. Ինքն իսկ էր ասաւզն յաւետարանն որպէս Աստուած և ընդ մարմնոյ. «Եկայք առ իս ամենեքեան վաստակեալք և բեռնաւորեալք, և ես 25  
հանգուցից զձեզ»<sup>7)</sup>. և եթ', «Երկին և երկիր անցցեն, 165r.  
իսկ բանք իմ ոչ անցցեն»<sup>8)</sup>. Բանս իւր կոչելով զյաւրինին և ի մարգարէսն զրեալս Տէրն, որում կորացի ամենայն ծունր և խոստովանեսցի ամենայն լեզու, որպէս նախասացաւ ի ձեռն մարգարեին, և երանելւոյն Պաւղոսի. 30  
Զայս զնրդի զԴաւթի ընկալաւ Սեմեոնի ի գիրկս, ի Սրբոյն Հոգւոյ ածեալ ի միհենին, զի տեսոյէ զաւծեալն Տեառն. և ի ձեռն Սրբոյ Հոգւոյ բարեբանէր զԱստուած, զի արժանաւորեցաւ տեսանել զԱստուծոյ փրկանակն՝ ամենայն ազդաց փրկանակ, համբակ և լոյս, և զիփառ ժո- 35

<sup>1)</sup> Կողմ. Ա. 16.<sup>2)</sup> Փիկպ. Բ. 10—11.<sup>3)</sup> Եսայի

Խ. 18.

<sup>4)</sup> Եսայի Խ. 19. <sup>5)</sup> Ցովհ. Ժ. 20. հմմ. Մատթ.

Խ. 55., Մարկ. Ժ. 49., Ղուկ. Խ. 53.

<sup>6)</sup> Եսայի Խ. 21—24.

7) Մատթ. Ժ. 28.

<sup>8)</sup> Մատթ. Խ. 35.. Մարկ. Ժ. 31., Ղուկ.

Խ. 33.

դովրդեան Խարայեղի, <sup>1</sup> այս է զԱստուած Խարայեղի. քանզի յանապատի ժողովուրգն փոխեաց զփառա նոցա ի նմանութիւն գուարակի <sup>\*</sup>, ասէ կերաւզի իսոտ. և մոռացան զԱստուած զկեցուցիչն իւրեանց. և օրպէս ասէ էսայիաս. 5 և զամն զի փառք իմ և գոհութիւն իմ Տէր և եղե ինձ ի փրկութիւն։ <sup>2</sup>

Մու այսուհետև Քրիստոս խոստովանեմք մեք, զնոյն գիտելավ Աստուած, զնոյն մարդ, հաւանելով Աստուածա-  
165v. շունչ գրութեանն և վարդապետութեանց սրբացն հարանց, և  
10 մի զնորա միայնոյ զընութիւն ասեմք մարմնացեալ. քանզի ամենայնի միոյ մի բնութիւն ասի և ոչ ոք երբեք եասաց ի վերայ երկուց բնութեանց այսր մարդոյ կամ հրեշտակի, որպէս այսոքիկ ասել յաղագս Քրիստոսի յանդնեցան անպատկառաբար, բայիւքն և պատճառաւք նախ քան զիւ-  
15 բեանս կուրացն հերձաւածովաց վարեցեալք, և վայրանկեալք ի խորխորատ իւրեանցն առաջնորդաւք: Քանզի հչ նախ մարմնաւորութեանն բնութիւն էր Աստուծոյն Բանի մարդութիւնն և ոչ յետ մարմնաւորութեանն բնութիւն նորա ասի ներանձն մարմինն: Խակ եթե յատուկ և որիշ բնութիւն  
20 Քրիստոսի ասեն այսոքիկ զմարմինն նորա և բնութիւն միւս զԱստուածն Բան, զի երկուս բնութիւնս ասիցեն Քրիստոսի և մի ախտակրելիք զաստուածութիւնն ասիցեն, ոչ իմանան իրը յնքեանց զլորին <sup>\*\*</sup>. քանզի զրեալ է եթե՝ «Քրիստոս ախտակրեաց վասն մեր իւրովն մարմնով» <sup>3</sup>, զոր նորայն  
25 ասեն մին բնութեանցն Քրիստոսի. յիւրն ուրեմն բնութիւն  
166r. ախտակրեաց Քրիստոս, ըստ նոցայն անմտութեան: Խակ երանելին Պաւլոս մի Քրիստոս քարոզեաց մնուեալ վասն մեր և թաղեցեալ ըստ գրութեանցն. զի վայրանցեալն ի ստորագոյն մասունս երկրի ինքն է և վերանցեալն դեր  
30 զամենայն երկինս, զի լցցէ զամենայնն:

Զայս և երանելի հարքն, որք ի նիկէա ուսուցին և որք յետ նոցա սուրբ հարքն, որպէս ի միոջէ Սրբոյ Հոգւոյ վարդապետեալք: Նզովեն իսկ զհամարձակեալսն խորհել կամ ասել երկուս բնութիւնս ի վերայ միոյ Քրիստոսի, մի իւստովանելով զԱստուծոյն Բանի բնութիւն մարմնացեալ անյեղապէս և երկրպագեն ընդ մեզ և սրբոց

<sup>\*)</sup> Լուսանցքում՝ «ԱՐՁ(ԱՇ?)».

<sup>\*\*) Անգ՝ «(Պ)ԱՐԿԱՎ... ԱՆԻՆ».</sup>

<sup>1)</sup> Հմմա. Ղուկ. Բ. 25—35.

<sup>2)</sup> Եսայի Ժ. 2.

<sup>3)</sup> Հմմա. Պետք. Դ. 1.

հրիշտակաց զնաչիցեալն Տէրն փառաց, իբր ճշմարիտ Աստուած և Փրկիչ ընդ երկնաւ և Արարիչ ամենայնի՝ համանգամայն արարածոյ: Քանզի երկարնակացն հերձուած և ամպարչտութիւն հնագոյն պատահեաց և տարագարողական՝ յամանակաց երանելւոյն Յուղիայ և Աթանալիայ, 5 166v.

կամ և նախ նոցա յոմանց ամպարչտաց գտեալ և տարագարողեալ՝ յայնմետէ մինչ վախճանի երանելւոյն թէոգոսի ուղղափառի թագաւորի. իսկ յետ այսորիկ անամաւթապէս քարոզեցեալ ի Քաղկեդովնի ժողովոյն, որով ժողովով լցաւ ապստամբութիւնն, զոր եասաց առագեալ՝ 10 նախ դերագրիստոսին եկեալն<sup>1)</sup>.

Պիտառութիւնն սրբոցն մերոց հարանց եւ եպիսկապոսաց՝ հաստատիչ զառ ի մէնցն ասացեալս, իսկ տապալիչ զամպարիւս նախասացելոցն ներձուածողացն աղանդս. 15

Երանելւոյ Յուղիայ եպիսկապոսապետի Հոռվմայ առ Դիսնիսիոս քրոյն.

Իսկ եթ'. ոչ ճանաչեն զըստ միաւորութեանն մին, կարեն և ի բազումս բաժանել զմին և բազումս ասել բնութիւնս. և վասն զի յոքնատեսակ մարմինն՝ յոսկերաց 20 և ի ջղաց և երակաց և մսոյ և մորթոյ, եղնգանց իսկ և մազոց, արենէ իսկ և հագագէ, որք ամենայնքն զանազանութիւն ունին առ իրեարս, իսկ մի բնութիւն է, իբր զի և աստուածութեանն ճշմարտութիւն ընդ մարմնոյն մի է 167r.

և յերկուս բնութիւնս ոչ բաժմանի, Քանզի ոչ իսկ էր հնար 25 գրողորն Որդի Մարդոյ կոչիլ ստորանցեալն յերկնուատ, և Որդի Աստուծոյ՝ ծնիցեալն ի կնոջէ, եթ' երկուց բնութեանց բաժանումն առընդունէր. այդ ստորանցեալն յերկնուատ կոչիւր արդեւք Որդի Աստուծոյ և ոչ Որդի Մարդոյ, իսկ ծնիցեալն ի կնոջէ կոչիւր արդեւք Որդի Մարդոյ 30 և ոչ Որդի Աստուծոյ. և այս հետեանայ Պաւղիական հերձուածին, իսկ զմեղ աստուածային գրիցեալքն ուսուցանեն՝ իբր յաղագս միոյ Տեառն խորհել ըստ յերկնուատ վայրանցութեանն և զ' ի կնոջէ ծնելութեանն:

1) Հմմա. Ա. Յովհ. Բ. 18. Դ. 3.

## ԵԼ յետ սակաւուց.

Մի այսուհետեւ բաժանաւղացն պատճառս տացեն՝  
երկուս ասելով բնութիւնս. քանզի ոչ մարմինն ըստ (ի)ն-  
քեան բնութիւն, վասն զի և ոչ կենագործիչ ըստ (ինքեան,  
ն ոչ բաժանիլ կարացեալ թանց կենագործին. և ոչ Բանն  
ըստ (ի)նքեան յիւրն բաժանի բնութիւն, զոր ունի ըստ  
167v. անմարմինութեան. | վասն զի ի մարմնի Տէրն և ոչ անմարմ-  
նաբար ներդիմնաց աշխարհի, և ոչ արարածական մարմինն  
զատանի յանարարակ աստուածութենէն, զի որոշիցէ ոք  
10 զբնութիւնն արարածական. այդ և ոչ անարարած Բանն  
ներդիմնաց որիչ մարմնոյ, զի բաժանիցէ ոք զանարարա-  
ծին բնութ. իսկ եթե մի երկաքանչյուր է ըստ միաւորու-  
թեան, և զուղեկցութիւնն և շարադրութիւն մարդատեսակ,  
մի և անուն բարդացելումն յարմարի յաստուածութենէն  
15 զանարարածն, իսկ ի մարմնոյն զարարածականն, և յաս-  
տուածութենէն զանախտանալին, իսկ 'ի մարմնոյն զախ-  
տանալին:

## ԵԼ յետ սակաւուց.

Իսկ եթե գրութեան սովորութիւն և զբոլորն աս-  
20 տուածաբանել, հետեանամք և մեք բայիցն աստուածայ-  
նոց և ոչ բաժանելք զանբաժանելինո:

## ԵԼ յետ սակաւուց.

Երկրպագել խոստովանէ Քրիստոս ըստ մարմնոյ զայրն  
ասելով՝ մեք երկրպագեմք զոր գիտեմք, և ոչ որոշի աս-  
25 տուածութիւնն. Երկրպագի ըստ աստուածութեանն, և ոչ  
168r. բաժանի մարմինն աստուածութեանն | Երկրպագութեամբ,  
և ոչ որիշ կացուցանեմք զմարմինն, յորմամ երկրպագեմք.  
քանզի և ոչ կարելի մարմնոյ ոչ ախտակրելն. և ոչ զատանի  
աստուածութիւնն, քանզի միացա.. քանզի պարտ էր  
30 յաղթիլ զման յԱստուծոյ, և յաղթեցաւ:

Երանելոյ Կիւրիղոյ եպիսկապոսապետի Աղեքսան-  
դրեայ յառ Սուկեսոն բղբոյն Բ.

Ո՞ր այսուհետեւ հարկաւորութիւն կրել զնա յիւրն  
բնութիւն, եթ' ասիցի յետ միաւորութեանն մի բնութիւն  
85 Որդւոյ մարմնացեալ:

## ԵԼ յետ սակաւուց.

Ունայն աւելաբանեցին ասաւղքն՝ հետեանալ պարտ

գոլ ամենապէս զնա յիւր համբերել բնութիւն ստորակացելոյ մարմնոյն, յոր արդեւք յիրաւի պատահել ախտանալին իմանայցի անախտակրի ելոյ Բանին, այդ ոչ արտաքոյ. վասն այսորիկ զնելով զնա ախտակրութեան, քանզի որպէս յատուկ իւր եղի մարմինն, այսպէս և ամենայ(ն)քն 5 մարմնոյքն, առանց միայն մհղաց, ասիցի արդեւք ոչինչ նհաա ըստ նտանութեան տնաւրինութեանն:

### Եւ յետ սակաւուց.

Անդիտացան դարձեալ որք զուզիդան խոտորեն, եթ' 168v.  
ըստ ճշմարտութեան է մի բնութիւն մարմնացեալ: Քանզի 10  
եթե մի է Որդի բնութիւամբ և ճշմարտապէս յԱստուծոյ  
Հաւրէ Բանն անձառարար ծնիցեալ, ապա ըստ նդունե-  
ութեան մարմնոյն ոչ անանձնի առաւել, այդ ներանձնա-  
ցելոյ իմաստաբար յառաջ եկն մարդ ի կնոջէ. ոչ յերկուս  
բաժանեսցի սակս այսորիկ դէմս և որդիս, այդ մնաց մի, 15  
բայց ոչ անմարմին և ոչ արտաքոյ մարմնոյ, այդ յատուկ  
ունելով զնա ըստ միաւորութեանն անտարահատ: Իսկ  
զայսն ասաւող ոչ զանգումն, ոչ խառնութիւն, ոչ այդ ինչ  
այսպիսեացն ամենայն ուրեկ և ամենենին զեկուցանէ. այդ  
և ոչ ի հարկաւորութեան բանէ այս հետեացի ուստեք: 20  
Զի թեպէտ և մի ասիցի առ ի մէնջ Մէնածին Որդին Աս-  
տուծոյ՝ մարմնացեալ և ներմարդացեալ, ոչ զանգեալ սակս  
այսորիկ ըստ նոցայն թուելոյ, այդ և ոչ ի մարմնոյ բնու-  
թիւն փոխարուսեալ Բանին. այդ և ոչ մարմնոյն ի նո-  
րայն. այդ ի յատկութեանը ըստ բնութեան երկաքանչիւրոյ 25 169r.  
մնացելոյ և իմացելոյ, ըստ այժմուս մեզ աւանդեցելոյ  
Բանին, անձառելի և անասելի միաւորութիւն մի մեզ եցոյց  
Որդւոյ բնութիւն. բայց որպէս ասացի՝ մարմնացեալ:

### Նորին յառ. Նեսօրիս քղբոյն.

Իսկ զյաւետարանսն. Փրկչին մերոյ գձայնսն ոչ են- 30  
թակացութեամբք երկուք, այդ և ոչ զիմաւք երկուք բա-  
ժանեմք. քանզի ոչ է կրկնապատիկ մին և միայնն Քրիս-  
տոս, թեպէտ յերկուց իմանայցի և զանազանից յիրաց ի  
միաւորութիւն զանբաժանելին շարածեալ. ըստ որում յի-  
րաւի և մարդ յանձնէ իմանի և մարմնոյ, և ոչ կրկնապա- 85  
տիկ յաւէտ, այդ մի յերկակացն:

Նորին յա(ռ) (Վաղ)դերիանոս քրրայն.

Աղէ, ուր երբէք մին գէմ, ասա ինձ. քանզի մին տէմ Քրիստոսի պատճառել ասեն երկուց իսկ ենթակացութեանց առանձինն, իսկ և ըստ մասին կացելոյ եղիցին 5 ուրեմն ամենապէս և դէմք երկու. այդ ներսամտեն՝ աւրինագիրք զիւրեանցն թուեցեալ իրը ուղղապէս ունել. ասեն 169v. ուրեք և ամենապէս | արաստացուցանել. քանզի բաժանելով, ասեն, զենթակացութիւնսն, միաւորեմք զդէմն, և իրը ոչ անհաւան և անուսումն և անհնարագործ,

10 Նորին ի լուծմանէ Դ. նզովի.

Որք բաժանեն այսուհետեւ զենթակացութիւնսն յետ միաւորութեանն և ըստ մասին դնեն զերկաքանչիւրն, այս է զմարդ և զԱստուած, իսկ մտածեն շարայարութիւն նոցա զրատ միայնում արժանաւորութեանն, երկուս ամենայն 15 իրաւք կացուցանեն Արդիս:

Թ սահմանէ Քաղիեղովնի ժողովոյն նայենոյութիւնն.

Եւ գերկուսն ահա նախ միաւորութեանն բնութիւնս առասպելաւզս, իսկ մի յետ միաւորութեանն ստեղծիչս՝ 20 նզովէ:

Հականառութիւն առ ասացեալսն ի Քաղիեղովնի ժողովին.

Թ. Արդ եթ' ոք իշխեաց ասել երբէք ի հարանցն, եթև նախմարմնաւորութեան Աստուծոյն Բանի բնութիւն 25 էր յատուկ\*, նախայաւիտենին Աստուծոյն Բանի ի նմանէն շինեցնեալ մարգութիւն հասարակական մարգկան ազգ, ուստի մարմնացաւն, խոնեցան թերենս ուրեք ողմանք եր- 170r. կուս բնութիւնս Քրիստոսի նախմիաւորութեաննի իսկ եթե դարձնեալ էր նախակազմուալ համբակ յԱստուծոյ յարգանդի 30 կուսին և յայնժամ շարայարեցաւ այսմիկ զառ ի Մարեմայն Աստուածն Բան, կարէր ոք ասել երկուս բնութիւնս զմին Քրիստոս յետ միաւորութեանն. ղի ևս զիւրեանց ամզարշտութիւն սերմաննել կամեցեալք, զոր ոչ ոք խո- հեցաւ ի հարանցն՝ ի մէջ առածեն առյեղակարծ յափրշ- 35 տակութիւնն պարզագունացն, քանզի ոչ ոք նոցա այս-

\* ) Լուսանցքում՝ «առանձինն».

պիսի խոհեցաւ։ Առաջին իսկ բազում անգամ սուբբ  
հարքն յերկուց բնութեանց զմին Թրիտոս, նշանակելով  
եթ' ի հառարակականէ մարդութենէս մարմնացեալ Աս-  
տուածն Բան։ Կամ եթ' ի մարդկան բնութենէ կամ գո-  
յացութենէ՝ միենոյն է հանճերձ իւրով մարմնով։ և ասն 5  
և խոհին ընդ մեզ՝ մի բնութիւն Աստուածոյն Բանի մար-  
մնացեալ։

Արդ՝ եթե կալաւ ենթակացութիւն, որպէս նախա-  
սացաւ, համբակն յարգանդի կուսին, թանց Աստուածոյն  
Բանի փազառութեան\*, ասասցի և բնաւթիւն մարդոյ 10  
յատկապէս ըստ մասին կացեալ, որպէս յացակառեալ 170v.  
ահա մարդ. իսկ եթ' այս անտեղի՝ ամպարչագոյն ասել  
երկուս բնութիւնն ի վերայ միոյ Թրիտոսի. քանզի ոչ  
ասացին սուրբ հարքն՝ յերկուց բնութեանցն Թրիտոսի  
հաւատաւէք զմին Թրիտոս, զի գրիցին առ ի ձէնջ իրք 15  
երկուս բնութիւնն ասացաւդք Թրիտոսի. նախ միաւս-  
քութեանն, իսկ մի յևտ միաւսորութեանն վերասոեղեն-  
լով. այդ նշանակեցին յամենայն ժամ. եթե յորմէ բնու-  
թենէ իւր եարար մարմին՝ անձն ուներզի բանական, և  
եղե մարդ անյեղապէտ, մնալով Աստուած։ Մի զրպար- 20  
տեսցեն ուրեմն զոյ ասացեալսն յումնքէ ի սրբացն հա-  
րանց, կամնցեալք զիւրեանցն ամպարչառութիւն քարո-  
զութեան երկուց բնութեանցն քաջընկազ առնել. իսկ եթ'  
ոչ յաղագս սրբովն հարանց դայտովիսաւ տահմանել ասեն,  
այդ յաղագս այլոց նոցա Բանն, պատճառաւ զայնորիկ 25  
ամպարչառութեանն զերկուց բնութեանց ամպարչառութիւն  
ի ներքս սերմանել կամնցեալք. և այսպէս ծիծաղելիք, զի  
ի ձեռն ամպարչառութեան զամպարչառութիւնն (գ?)ովել 171r.  
խնդրեցին. Եւ քանզի ամպարչառելսզ ոմանք, որպէս և այ-  
սոքիկ, պատճառաւ առ ի նորովն զերկարնական. իշխացին 30  
զրպարտել և ասել ներզրաքար դարբոցն հարանց, իրք զի  
երկուս որդիս խորհնցան հարք՝ ասելով զնամագոյն Հաւը  
զԱստուածն Բան եղեալ ատկս մարդկան փրկութեան ըստ  
մարմնոյ մարդկան հոմագոյ, մնալով Աստուած, ասերով  
ընքեանք ծնանել զտուրբն Կոյս՝ զմիայնն Հաւը և Արբոյն 35  
Հոգւոյ հոմագոյ, իսկ աւաարացեալ ամենսին ընել տնաւ-  
րինաբար զնա հոմագոյ ըստ մարմնոյ ծնչին Կուսի. նմա-  
նացեալ ահա ըստ ճշմարտութեան մարդկան կերպիւ ըստ

\* ) Լուսանցքաւ՝ «աղմնաւութեան».

մարմնոյ ասեն, իսկ աւտարացուցանեն ի մարդկանէ։ Եւ  
իբր եղբայր մեր ըստ մարմնոյ Քրիստոս և նախածին յաշ-  
խարհի (ի) բաղում եղբարս<sup>1</sup> երկրպագեալն ի հրեշտակաց  
Աստուծոյ, որ «Նաւուրա մարմնոյ իւրոյ, որպէս առէ Պաւ-  
5 դոս, մաղթանս և պազատանս առնէր»<sup>2</sup>, և ըստ միոջէքն։|

171v. Իսկ եթե զմիայնն Հաւր և Սրբոյն Հոգւոյ հոմագոյ ծնաւ-  
կոյսն, իբր երեսնցաւ որք յերկրի. Աստուծած ելով Բան  
անտեսանելի, անորոնելի, իբր կարաւտանայր տնաւրէնա-  
րար գաղափար մեր եղեալ. իսկ որոյ աւուր կալաւ մար-  
10 մին, եթ՛ ոչ եղև մարդ ըստ ճշմարտութեանն մնալովն  
Աստուծած. և իբր աղաղակաւ հղակրագունիւ և արտա-  
սուաւք մաղթէր և լսիւր ի հեզութենէն<sup>3</sup> ի բաց բարձիցն  
զամեն արտաւսր յամեն դիմէ<sup>4</sup>, խափանիչն զմահ, որում  
վայել է երգ՝ իբր Աստուծոյն իմանալ ի Սրովնի և նմա-  
15 հատուացի աղաւթ<sup>5</sup>, և լսէ աղաւթի ամենայն մարմնոյ՝  
վերակարդաւլցաց առ նաւ Քանզի զամպարըշտութիւնսն  
մեր ինքն քաւեաց իբր Աստուծած մարմնացեալ և եղեալ-  
մարդ, և «Երկնչի ի դիմէ Նորա ամենայն երկիր»<sup>6</sup>, որ-  
պէս ասէ Ամբակում մարդարէն։ Եւ իբր յայտնեցաւ ի  
20 մարմնի անտեսանելին Աստուծոյն Բան, եթ՛ ոչ եղև  
տնաւրինաբար մարդկան հոմագոյ, մնալով Աստուծած. և  
իբր ախտակրեաց իւրով մարմնովն ըստ գոյութեանն  
անախտակիր Աստուծոյն Բան, եթ՛ ոչ եղև մարդ ախտա-  
նալի տնաւրէնաբար ըստ մարմնոյ, մնալով անախտ իբր

172r. 25 Աստուծած։

Ասեն իսկ և զայս այնպքիկ, յաղագս որոց բանս, եթե  
միայնք ըստ բնութեան ծնիցեալքն ըստ բնութեան են հո-  
մագուք<sup>\*</sup>, իսկ Կոյսն գեր զբնութիւնն ծնաւ։ Այդ մեք ու-  
սաք ի սրբոցն հարանց, եթեն նախաստեղծն Ադամ գեր  
80 զբնութիւնն ստեղծիցեալ և ոչ ծնիցեալ ըստ բնութեան  
յառնէ և ի կնոջէ, հրաշագործաւզի Աստուծոյ, մարդկան  
ամենայնի հոմագոյ էր։ Նմանապէս իսկ և ի նմանէ  
եղեալն կին, և ոչ յերկրէ ստեղծիցեալ և ոչ ըստ բնու-  
թեան մարդկան ծնիցեալ, հոմագոյ էր Աղամայ և ամենե-  
35 ցուն որք ի նմանէ. նմանապէս և յերկակցութենէ ծնիցեալն  
ի նոցանէ Աբէղ հոմագոյ էր Աղամայ և Եւայի. և ոչ ևս

\* Կուսանեցում՝ «հառ . . . տկա . . . ».

<sup>1)</sup> Հմմա. Հոսպմ. Ը. 29.      <sup>2)</sup> Եբբ. Ե. 7.      <sup>3)</sup> Հմմա.  
Եբբ. Ե. 7.      <sup>4)</sup> Եսայի Խ. 8.      <sup>5)</sup> Հմմա. Սաղմ. ԿԴ. 2.  
<sup>6)</sup> Ամբակում Բ. 20.

ուրեմն միայնք ըստ բնութեան ծնիցեալքն հոմագոյք, այդ և գեր զբնութիւնն՝ հրաշագործնելով Աստուծոյ:

Ապա և զայս ասեն. ի գոյացութենէ և ի բնութենէ մարդկան մարմնացաւ, ասեն, Բանն, |անձնանայր իսկ և 172v. անձամբ իմացականաւ, այդ ոչ ևս և հոմագոյ մարդկան Ե եղև տնաւրինաբար ըստ մարմնոյ: Եւ իրը հնար զայս այսպէս գոլ. քանզի որպէս հոմագոյ խոստովանի Աստուծոյ և Հաւր Որդին՝ ըստ մշտնջենաւրական Հաւրն ծնելութեան, զի ի գոյացութենէ ծնանի Աստուծոյ և Հաւր, սապէս և մաւրն հոմագոյ ըստ մարմնոյ խոստովանեացի. 10 վասն զի ի գոյացութենէ Կոււի մարմնացաւ, առընդունելով ի նէմայ մարմին և արիւն և ծնիցեալն ի նեմա Եմանուէզ անյեղլի մնացեալ և անայդայդակ իրը Աստուծ ի մարմնաւորութեան և ծնելութեան ի Սրբոյ Կոււէն: Ասեն իսկ զ՞րիստոս անբարդ գոլ՝ զմիսն և զանձն և զուկերս 15 ունաւղն: Եւ իրը եղև մարդ ի մարդկան գոյացութենէն, որպէս և ինքեանք ասեն, մնալովն Աստուծած: Քանզի էր ահա Բանն ի սկսրանն անմարմին և անբարդելի: իսկ յետ ի Կոււէն ծնելութեան նոյն ներմարմին և մարդ եղև ըստ ծշմարտութեան, որպէս միայն գիտէ|ինքն, հչ Աստուծոյն 20 173r. Բանի յեղափոխեցելոյ(?) յոսկերս և ի . . . \* և յանձն, և հչ որպէս սրբայս խոհին, որպէս մտածեմ, մարմնոյն փոխեցելոյ յԱստուծոյն Բանի բնութիւն:

Անգունեն իսկ զպիտառութիւնս սրբոցն հարանց, զնզովիչս զնոսա, զի ոչ խոստովանեն հոմագոյ ըստ մարմնոյ 25 սրբում Կոււին զԵմմանուէզ, հանդերձ գոլովն Հաւրն հոմագոյ. ոչ պարտ ասեն ընդունել զայսպիտիս աղանդաբար: Այդ եթի՝ ոչ աղանդաբար ասացան ի սրբոցն հարանց, հչ ևս հանդերձ նզովիւք սահմանեցին. քանզի զայս ուսան սուրբ հարքն յերանելոյն Պաւղոսէ առնել ներսոյց յա- 30 զագս հաւատոյն բանից և ի սրբոցն հարանց, որք ի Նիկեա: Իսկ եթե յաղանդ հաւատոյ ոչ պարտ ընդունել զ՝ ի սրբոցն հարանց խաւանցեալս, որք և հանդերձ նզովիւքն նոցա գրեցան, ուստի առընկալան նորա զնզովելն զոչ խոստովանողան Աստուծածին զուրբն Կոյս և զյան- 35 զիմանաւղմն երկուս բնութիւնս ի վերայ Քրիստոսի, |նմա- նապէս իսկ և զծնելակիցս սոցա զհայհոյիչս կարծաւղս, ասասցեն մեղ այսպիսիքս. քանզի հչ սուրբ գրութիւնն

\* Մի անկերծանելի բառ.

ճառապէս և ինքնաբառութեամբ նգովեաց զնտիսասացեալան,  
և հչ սրբոցն հարանց հմայութիւն, այդ ի պիտառութեանց  
սրբոցն հարանց հաստատեցաւ յԵփեսոս խոստովանել Աս-  
տուածածին կոյս և նզովել զոչան խոստովանողա  
5 Աստուած գոլ ըստ ճշմարտութեան զԵմմանուէջն և սակա  
այնորիկ Աստուածածին զառւրբն կոյս, արտաքս եղցէ յայտ-  
պիտեացս, և ըստ Եփեսոսի սուրբ ժողովն, զի ի ձեռն  
պիտառութեանց սրբոցն հարանց արտաքսեալ և նզովեալ է  
Նետորիոս, և զի կայ յայտոփիկ, որ ըստ Եփեսոսի վկայու-  
10 թիւնք հարանցն՝ հոմագոյ մեղ ըստ մարմնոյ եղեալ տնաւ-  
րինաբար և անյեղապէս Հաւրն հոմագոյ իբր Աստուած:  
իսկ եթ' որ ասէ հոմագոյ մարդկան ըստ մարմնոյ Քրիս-  
տոս, արարածոյ պարշաէ, որպէս ասել իշխեցին ներգրա-  
բար. յոլով առաւել ըստ նոսա որ խոստովանեացէ զնա

174r. 15 եղեալ մարդկանաւրինաբար:

Ամբաստանեացն ուրեմն և զնոյն ինքն զՑէրն,  
Որդի մարդոյ զինքն քարոզեաց աշխարհի, և սրբոց աւե-  
տարանչաց և երանելում Պաւղոսի, զի մարդ զնա բա-  
զում ուրեք խոստովանեցին՝ գոլովն Աստուած, և ազգա-  
20 կից Խորայէզացնաց և Շն հրեից ըստ մարմնոյ, զէտկն Աս-  
տուած բարերանեալ յաւիտեանս ամէնց<sup>1</sup>, Քանզի կռա-  
պաշտութիւն պարտաւորեն առաքելոց և սրբոցն հարանցն  
որք աղանդիչք հնոյ հերձուածոյն, Արդ՝ կամ ցուցցեն մեղ  
նզովեալս ի սրբոցն հարանց, զինոստովանիչս հոմագոյ սըբ-  
25 բոյ կուսին ըստ մարմնոյ զԵմմանուէջն, որպէս և զատաւղն  
երկում գոյացութիւնս. կամ եթե բնութիւնս ի վերայ միոյ  
Քրիստոսի նզովեն. կամ ցաւցանելով մեր նզովեալս, զոչ  
խոստովանողս հոմագոյ ըստ մարմնոյ կուսին զԵմմանուէջն,  
մնալովն Աստուած, ի բաց դարձցին ի ճանապարհէ չարէ  
30 առ հարանցն խոստովանութիւն ուղղոյն հաւատոյ և փա-  
խցեն զնզովումն սրբոց և հոգեգգեցիկ և ուղղափառացն  
հարանց<sup>2</sup> Քանզի նմանապէս երկարնակաց և այլոց հեր-  
ձութեանց նզովեցան և սոքա ի սրբոցն հարանց, զի ոչ  
խոստովանեն տնաւրինաբար եղեալ մարդ զԱստուածն Բան՝  
35 մնալովն Աստուած. ասեն իսկ մարմնացեալ զԱստուածն  
Բան ի մարդկան գոյացութենէ և նմանեալ զնա մարդկան  
ըստ ճշմարտութեան կերպի. Ոչ ևս զի և մարդ եղե ըստ  
ճշմարտութեան և հոմագոյ մարդկան. քանզի եթե ըստ  
ճշմարտութեան եղն մարդ ըստ մարմնոյ տնաւրինաբար,

<sup>2)</sup> Հասվէ. Թ. 5.

ամենապէս և հոմագոյ եղն ըստ մարմնոյ ծնչի որբում  
կուսին, մնացեալ Հաւր հոմագոյ՝ իբր անյեղի Աստուածն  
թան:

Ասեն իսկ այսոքիկ, եթե ծնաւ սռւրբն Կոյս զմիայ-  
նումն Հաւր և Սրբում Հոգւոյ հոմագոյ և իբր ի մարդկան 5  
գոյացութենէ կամ եթե բնութենէ մարմնացաւ և նմա-  
նեաց ըստ ճշմարտութեան մարդկան, որպէս և ընքեանք  
խոստովանակցեն: Քանզի այսոքիկ կամաւոր թափմանն  
նորա են ցոյցք յայտնագոյնք, ոչ աստուածութեամն և  
անյեղի գոյացութեան մարմնացելոյն| տնաւրինաբար Առ- 10 175r.  
տուծոյն Բանի. զի զոր էրու մնաց, իսկ զոր ոչն էր եղի  
սակա մերոյ փրկութեան, մնացեալ անյեղի՝ իբր հոմագոյ  
երով Աստուծոյ Հաւր: Սակա այսոքիկ նզովին և այսոքիկ  
ի սրբոցն հարանց, իբր ի բաց յեղով ամենին զմարդկան  
փրկութիւն և զպարձանս քրիստիանոսաց յուսոյն. իսկ 15  
նզովեալք զրպարտեն զնզովիչսն զնոսա՝ զսուրբս զհարսն  
մանկաւորապէս, զի հաւաննցուացեն զպարզագոյնան ոչ  
հայել ամենսին առ վարդապետութիւն սրբոցն հարանց,  
այդ զառ ի նոցանէ ամպարշտաբար ասացեալն. իբր զի  
հարանցն զ' ի Քաղեղովնի ժողովն հաստատաւղաց և զա- 20  
զանդ երկուց բնութեանց՝ ի ձեռն պիտառութեանցն, յորս  
ինքեանք ընդ երկարնակսն նզովին: Այդ ոչ ընդունիւք,  
ասեն, զայսոսիկ յաղանդ հաւատոյ, զի մի դատապար-  
տութեան պարտաւորեացի ուղղափառութեանն հաւատ:

Վարկապարապի յիշեցաք զայսոսիկ, զյոլովս առաս- 25  
պելացն նոցա լռեալք. իսկ առզրեցից և վկայութիւնո|  
զսրբոցն հարանց՝ զնոյնս, զորս անգունեցինն զնզովիչսն 175v.  
այսպիսիս, յորոց ասեն դատապարտութեան պարտաւորիլ  
զուղղափառն հաւատ, եթե զայս ասեն ընկալցի ոք ա-  
ղանդաբար, զի ամենեցուն յայտնեցի անմտութիւն նզո- 30  
վելոցն հանդերձ երկարնակաւքն, ի սրբոցն հարանց: Եւ մի  
նախատեսցեն առաւելացոյն, քանզի ոչ գոյացութիւն  
Տեառն և ոչ բնութիւն մարմնաւորութեանն նորա, այդ  
անաւրէնութեան աւրէն գործեցեալ ուղղափէս յԱստուծոյ,  
սակա մերոյ փրկութեան՝ էր իսկզբանն Աստուած Բանն<sup>1</sup>, 35  
և այս գոյացութեան նորա գերունականն քան զամնայն  
միտս և զբան արժանաւորութիւն՝ իբր Մէնածնի Աստու-  
ծոյ: Այդ և յետոյ զի՞նքն կամաւորապէս թափեաց, սակա

1) Հմմա. Յավի. Ա. 1.

մերոյ փրկութեան մնացեալ՝ ղեղուն ելով աստուածաբար,  
որպէս անթափելի և անյեղի Աստուած ելով Բան և հո-  
մագոյ Հաւը, և լինի տնաւրինաբար մարդ, երկարոյս ոչ  
եղեալ, այդ իւր արարեալ մարմին զմահուն ընդունական,|

176r. 5 դանձնացեալն անձամբ իմացականաւ:

Այդ ուրեմն բնութեան, կամ Կթե գոյացութեան Բան  
մարմնացելոյն Աստուածոյն Բանի, և միւս աւրէն վասն մեր  
գործեցելոյ փրկականի տնաւրինութեան. զի զոր էրն մնաց,  
իսկ զոր ոչն էր առջնկալաւ և եզե մարդ՝ անփոխարկելի  
10 մնացելոյ նորայն աստուածութեան:

Պիտառութիւնն երանելեացն մերոց հարանց  
եւ եպիսկապոսաց, նաստափիչ զառ ի մէնց ասա-  
ցեալսն, իսկ տապալիչ զամպարիչսն նախասա-  
ցելոց հերձուածողացն աղանդս.

15 Երանելոյ Յուղիայ եպիսկապոսապետի Հոռվիմայ յառ  
Դիոնիսիովն բդրոյն.

Զարմանամ յաղագն ումանց լսելով խոստովանողաց  
ահա Աստուած ներմարմին զԾէրն, իսկ զառածելոց ի հեր-  
ձուած չարապէս ի Պաւղիանոսացն ի ներքս ածեցելոյ.

20 Քանզի նոքա Պաւղոսի Սամոստացւոյ ծառայեալք՝ այդ  
ոմն զյերկնուստն ասեն, Աստուած խոստովանելով զնա,  
իսկ այդ զյերկրէ մարդն ասելով. զոմն անառնելի, իսկ  
զոմն առնելի. զոմն յաւիտենական, իսկ զոմն երիկեան.

176v. 176v. զոմն Տէր, իսկ զոմն ծառայ. ամպարշտելով եթ՛ երկրպա-  
25 գեն զոր ասեն ծառայ և առնելի, եթ՛ ոչ երկրպագեն  
զգնաւղն զմենգ իւրով արեամբ. իսկ որք զյերկնուստն Աս-  
տուած խոստովանեն ի Կոււսէ մարմնացեալ և մի գոլ հան-  
դերձ մարմնովն, ի զուր ծփեն ի բայսն նոցայն ամպարշ-  
տութեան արտաքերեալք: Ասեն իսկ և ինքեանք, որպէս

30 լսեմ, երկուս բնութիւնս. և զայս Յովաննու հաւաստա-  
պէս մի ապացուցեալ զԾէրն յասելն. «Ի՞ Տէր Յիսուս Քրիստոս, որով ա-  
մենայնքն»<sup>2)</sup>: Զի եթե մի ի սրբոյ Կոււսէ ծնիցեալն անուա-  
նի, և ինքն է որով ամենայն եղե, մի բնութիւն է, վասն

35 զի դէմ մի, հչ ունելով յերկուս բաժանումն. վասն զի ոչ  
առանձինն բնութիւնն մարմինն և առանձինն բնութիւն աս-

1) Յովին. Ա. 14.

2) Ա. Կորնթ. Ը. 6.

տուածութիւնն ըստ մարմնաւորութեանն, այդ որպէս մարդ մի բնութիւն, այսպէս և ի նմանութեան մարդկան եղեալն Քրիստոս:

Եւ յետ այդոց.

Խոկ եթե մի երկաքանչիւրն է ըստ միաւորութեան օ և զուզեկցութիւնն և շարադրութիւնն |մարդատեսակ մի և 177r. անուն բարդացելումն առ յար . . . \* յաստուածութենէն զանարարած . . . իսկ ի մարմնոյն զարարածականա, յաստուածութենէն զանախտակրելին, իսկ ի մարմնոյն ափակրելին:

10

Նօրին՝ յաղագս մարմնաւորութեան Բանին.

Այսպէս և Աստուծոյ հոմագոյ ըստ Հոգւոյ անտեսանելին պարառեցելոյ ընդ անուանն և մարմնոյն. զի առ Աստուծոյն հոմագոյ միաւորեաց և դարձեալ մարդկան հոմագոյ պատառեցելոյ և աստուածութեանն ընդ մարմնոյն, զի առ մեզն հոմագոյ միաւորեաց, ոչ փոխեցելոյ մարմնոյն բնութեան առ յԱստուծոյն հոմագոյ միաւորութեամբ և հաւասարութեամբ հոմագոյին անուան, որպէս և ոչ աստուածութեանն փոխեցաւ բնութիւն և հաւասարութեան մարդկային մարմնոյ և անունութեամբ մեզ հո- 20 մագոյ ի մարմնոյ:

Երանելոյ Աքանասեայ եպիսկապոսապետի Աղեքսանդրեայ յաղագս մարմնաւորութեան.

Խստովանեմք իսկ և զնա գոլ Որդի Աստուծոյ և Աստուած ըստ ողւոյ, Որդի մարդոյ ըստ մարմնոյ. հչ|(ե)րկուս 25 177v. բնութիւնս զմին որ(դի), զմին երկրպագելի և զմի(ւ)ն աներկրպագելի, այդ մի բնութիւն Աստուծոյն Բանի մարմնացեալ, և երկրպագեալ ընդ մարմնոյ իւրում՝ միով երկրպագութեամբ:

Նոյն իսկ ի վախճանաբանին ասէ Երանելին Աքանելոս.

Խոկ եթ' ոք քան զայս, յաստուածային գրիցելոցն ուսուցանէ.

\* ) Թերթի վերին ծայրը կարուած է մի կամ երկու շաբք առ ուեցի հետ միտօքն:

Ապա ի վերայ բերելով երկոցուն այսոցիկ հերձուածոց զիսիմտենս.

Զսա, ասէ, նզովէ բոլորական և առաքելական եկեղեցի:

5 Նորին՝ յաղագի նաւառոյն Բանե.

Եւ զիմնցին յիրրէն և որով յեղանակաւ և որով հետեւութեամբ յանհաւատութիւն և այսոքիկ և ի բնակութիւն փոխանակ մարմնաւորութեան կազմեցին և փոխանակ միաւորութեան և շարադրութեան \* ներգործութիւն 10 մարդկային, և փոխանակ միոյ ենթակացութեան Տեառն մերոյ երկուս ենթակացութիւնս և գէմս, և փոխանակ Սրբոյ Երրորդութեանն քառորդութիւն անվայելչարար և տարաւրէնաբար խորհեցեալ, Անվայելչարար ահա, զի Աստուծոյշարայարեն մարդ և ծառայ համարին ընդ Տեառն 15 և արարածական դէմ անարարած դիմաց դասակցեն. իսկ տարաւրէնաբար, զի զմի ենթակացութիւն ի ներքս ածելով յերրորդութիւնն՝ քառորդ ենթակացութիւն աւտար ամննեին և այդազգի և ամննեցուն բանականաց հոգւոց կատարածական և վերջին:

20 Նորին յառ Արքանոս բանեն.

Բան ահա, ըստ որսւմ Բան է, ոչ ունի այսպիսիս, քանզի Մէնածին է. իսկ մարդ եղեալ ունի զնայնագոյնս զմնզ, որոց և զնմանն զգեցաւ մարմին:

Նորին յառ Եպիկտետոն բղբոյն.

25 Շառագունեացեն իսկ մեծապէս, որք և բոլորովին մտածելով կարիցեն փոխանակ Երրորդութեանն առել քառորդութիւն, եթ' ասիցի ի Մարեմայ գոլ զմարմինն. քանզի նոյնագոյ ասեն. եթ' ասեմք զմարմինն Բանին. Թայ Երրորդութիւնն Երրորդութիւն, ոչինչ աւտար առ նա վերաբերեցելոյ Բանին. իսկ եթե մարդկային ասասցուք մարմին, հարկ է աւտարի ելոյ ըստ գոյացութեան մարմնոյն 30 178v. և ելոյ ի նմաթանին, քառորդութիւն ընդ Երրորդութեանն լին՝ սակա մարմնոյն յաւելուածի. զայս այսպէս ասելով ոչ իմանան, իբր յինքեանս զառածանին, զի թեալէտ և ոչի

\* Լուսանցքսւմ՝ «բարդութեան».

Մարեմայ ասեն զմարմինն, այդ հոմագոյ նմին Բանին,  
ոչինչ նհատ որպէս ձեանանն գուցէ արդեւք իբրև խոհե-  
ցողք կարծեցին զայս ըստ նոցա մտածութեանն, ցուցին(?)  
ասացեալք զքառորդութիւն։ Քանզի որպէս Որդի՝ ըստ  
հարանցն հոմագոյ ելով Հաւր, ոչ է ինքն Հայր, այդ Որդի 5  
առ Հայրն ասի հոմագոյ, սապէս և հոմագոյ մարմինն Բանի  
ոչ է ինքն Բանն, այզ միւա քան զԲանն. միւսոյ ելոյ  
եղիցի ըստ նոսա նոցայն Երրորդութիւն քառորդութիւն.  
քանզի ոչ ճշմարտականն և իսկապէս կատարեալ և ան-  
բաժանելի Երրորդութիւնն ընդունի յաւելուած, այդ առ 10  
ի սոցանէ իմացեաման Եւ իբր տակաւին քրիստիանուաք՝  
միւս քան գէակն Աստուած ի վերայ իմանալով։

## Եւ յիտ սակաւուց.

Մարդկային ուրեմն բնութեամբի Մարեմայն և ճըշ- 179r.  
մարիտ . . . . \* . . կչին իսկ ճշմարիտ էր . . . . \*\* նոյն էր(?) 15  
մերումս քոյր իսկ . . . . \*\*\* Մարիամ. զի և ամենեցեան  
յԱղամայ եմք։

Երանելոյ Գրիգորի Սբանչելազօրծի ի մասինն հա-  
ւատոյ.

Եւ է Աստուած ճշմարիտ, անմարմին ի մարմնի ե- 20  
րեեալ՝ կատարեալ ճշմարտութեամբ և աստուածային կատա-  
րելութեամբ. ոչ երկու դէմք և ոչ երկու բնութիւնք, քանզի  
և ոչ քառա երկրպագել ասեմք՝ զԱստուած և զՈրդին Աս-  
տուեոյ և զմարդ և զՀոգին Սուրբ. սակս որոյ և նզովեմք  
զայսպէս ամպարշտաւզմն, որք մարդ յաստուածային փա- 25  
ռաբանութեանն դնեն. զի մեր մենմք մարդ եղեալ զԱս-  
տուեոյն Բան առ փրկութիւն մեր, զի զնմանութիւն զեր-  
կնայնոցն առցուք և աստուածագործիցուք առ նմանու-  
թիւն ըստ նմանութեան ճշմարտի Որդւոյն Աստուեոյ, իսկ  
ըստ մարմնոյ Որդւոյ մարդոյ՝ Տեառն մերոյ Յիսուսի 30  
Քրիստոսի։

Նորին յաղազս մարմնաւորութեան եւ հաւատոյ բանին.

Որ ոք ասէ թուելութեամբ յայտնիլ զՔրիստոս աշ-  
խարին և ոչ խոստովանի զնա ի մարմնի եղեալ, որպէս  
գրեալն է, նզովեսցի։

85

\* ) Անվերծանելի բառեր կամ առաեր. թերթի վերին ծայրը  
ժակելսւած է և փշացած.      \*\*) նպնպէս.      \*\*\*) նոյնպէս.

- 179v.      Որ ոք ասէ անանձն կամ անիմ|անալի(?) զմարմինն  
Քրիստոսի և ոչ խոս(տով)անէ զնա կատարեալ ըստ ամե-  
(նա)յնի՝ զմի և զնոյն, որպէս գրեալ է, նզովեացի:  
Որ ոք ասէ մասն մարդոյ առնուլ զՔրիստոս և ոչ  
5 խոստովանէ զնա ըստ նմանութեան ամենայնիւ, թանց  
մեղաց, որպէս գրեալ է, նզովեացի:  
Որ ոք ասէ յեղյեղուկ կամ այզայդակ զՔրիստոս և  
ոչ խոստովանէ զնա անյեղլի հոգւով, անապականելի մարմ-  
նով, որպէս գրեալ է, նզովեացի:  
10      Որ ոք ասէ մարդ կատարեալ զՔրիստոս բաժանա-  
պէս և զԱստուածն Բան բաժանապէս և ոչ խոստովանէ մի  
Տէր զՅիսուս Քրիստոս, որպէս գրեալ է, նզովեացի:

### Եւ յետ սոսկաւուց.

- Որ ոք ասէ այդ ախտակրեալն և այդ ոչ ախտակրեալն  
15 և ոչ խոստովանէ զնոյն զանախտակիրն զԱստուածն Բան  
մարմով իւրով ախտակրեալ, որպէս գրեալն է, նզովեացի:  
Որ ոք ասէ այդ նախայաւիտեան Որդին Աստուծոյ  
և այդ առ վերջնովքս, որպէս գրեալ է, նզովեացի:  
180r.      Որ ոք ասէ ի սերմանէ առն ծնեալ զՔրիստոս, որ-  
20 պէս ամենայն մարդիկ և ոչ խոստովանէ զնա ի Հոգւոյն  
Արրոյ ի Արրոյ Կուսէն մարմնացեալ և ներմարդացեալ, ի  
սերմանէ Դաւթի, որպէս և գրեալ է, նզովեացի:  
Որ ոք ասէ զմարմինն Քրիստոսի նոյնագոյ աստուա-  
ծութեանն և ոչ խոստովանէ զնա ի կերպի Աստ ւ.ծոյ՝ դո-  
25 լով Աստուած նախայաւիտեան, և զինքն թափեալ և առեալ  
զծառայի կերպ, որպէս գրեալ է, նզովեացի:  
Որ ոք ասէ անարարած զմարմինն Քրիստոսի և ոչ  
խոստովանէ զնա յարարածական մարդութենէ զմարմնա-  
ւորութիւնն և զներմարդութիւնն ընկալեալ, որպէս գրեալ  
30 է, նզովեացի:  
Քանդի իբր արդեւք անարարած ասիցի մարմինն.  
քանդի անարարած, անախտանալի, անփոցելի, անորոնելի  
իսկ Քրիստոս ի մեռելոց յարուցեալ՝ գաղափար բնեռացն  
և խոյած աշտեին և որոնումն մարմնոյ դուցանէր աշակեր-  
35 տացն. թեպէտ և դրացն փակեցնելոց ներքս եկեալ, այդ զի  
180v.      յուցցէ և զաստուածութեանն ներգործութիւն. . . . . \*մարմնոյն ճշմարտութիւն. իբր իսկ յետ ամանակին մար-

\* Մի անվերծունելի բառ.

մին հոմագոյ (ան)ամանակ աստուածութեանն. քանզի հոմագոյ ասի նոյն բնութեամբ և յաւետախաղցութեամբ անտարափոխարար \*:

Երանելոյ Ուիթապեայ եպիսկոպոսապետի Հռովմայ յաղագոյ հաւատոյ Բանի. Եւ կայ վկայութիւնն յառ բա- 5 զունիսն մատենի երանելոյ Կիւրդի, եթե մի Քրիստոս.

Տակաւին իսկ և յաղագս ըստ մարմնոյ տնաւրէնու-  
թեանն Փրկչին հաւատամբ, զի անայդայդելոյ և անյեղոյ  
մնացելոյ Աստուծոյն Բանի զմարմնաւորութիւնն եղանիլ  
առ նորոգութիւն մարդութեան. քանզի Որդի ելոլ ճշ- 10  
մարտապէս Աստուծոյ ըստ մշտնջենաւորականի յԱստու-  
ծոյ ծնելութենէն, եզկ Որդի մարդոյ ըստ ի Կուսէն ծնե-  
լութենէ և է մի և նոյն, կատարեալ Աստուած ըստ աս-  
տուածութեանն և հոմագոյ Հաւր, և կատարեալ մարդ նոյն  
ըստ ի Կուսէն ծնելութեան և հոմագոյ մարդկան է ըստ 15  
մարմնոյ:

Եւ որ ոք յերկնուստ ասէ մարմին ունել զՃէրն կամ  
հոմագոյ Աստուծոյ զմարմինն, եղիցի նզովեալ:

Որ ոք ոչ խոստովանէ զՃեառնն մարմինն ի Կուսէն 181. 20  
և մեզ հոմագոյ, եղիցի նզովեալ:

Որ ոք զՃէրն մեր և զՓրկիչն զ' ի Հոգւոյն Սրբոյ և  
ի Մարեմայ Կուսէ ծնիցեալ ըստ մարմնոյ անանձն ասէ կամ  
անդգալի կամ անբան կամ անիմաստ, եղիցի նզովեալ:

Որ ոք իշխէ ասել զՔրիստոս աստուածութեամբն  
ախտակրեալ և ոչ մարմնով, որպէս և զրեալ է, եղիցի 25  
նզովեալ:

Որ ոք բաժանէ և զատուցանէ զՃէրն մեր և զՓրկիչ  
և ասէ՝ միւս գոլ Որդի զԱստուածն Բան և միւս զառեալն  
մարդ, և ոչ խոստովանէ զմի և զնոյն, եղիցի նզովեալ:

Երանելոյ Բանի ի բանեն, որոյ սկիզբն, եթե բնու- 30  
թեամբ Աստուած է Որդին.

Արարեալն ոչ ի գոյացութենէ արարաւդին է, իսկ  
ծնիցեալն ի նոյն գոյացութենէ ծնաւդին է. ոչ նոյն ու-  
րեմն է առնելն և ծնանելն:

Եւ յետ սակաւուց.

35

Ծնանելեացն նոյն բնութիւն առ ծնաւդն, թեպէտ

\* ) Լուսանցքում՝ «անփափսիապէս».

և այդապէս ծնիցեալն զգոլն ունիցի. քանզի և ոչ Արէզ,  
181v. որ յերկաշարութենէն ծնիցաւ, այդ քանզԱղամ, Աղա-  
մայ ոչ ծնիցելոյ, այդ ստեղծեցելոյ:

Եւ յետ այդոց.

5 Եթե զանազան զգոյակթիւնն գոլ ունաւզք զանա-  
զան ունին և զգոյացութիւնն, և ոչ մարդիկ հոմագոյք. քան-  
զի այդ գոյութիւն Աղամայ՝ յերկրէ ստեղծեցելոյ, իսկ  
այդ Եւայի ի կողէ եղելոյ, և այդ Հարեզի՝ զի զյերկաշա-  
րութենէ, իսկ այդ ի Մարեմայ կուսէ միայնւոյ. նմանա-  
10 պէս իսկ և ի վիրայ թռչնոց և քառոտանց:

Նորին՝ յաղազս Արբոյ Հօգույն բանի.

Այդ սակայն համանգամայն իսկ զանազանութիւն  
պիտառութեանն ցուցանելով, համանգամայն և զվրիպանս  
ումանց վարկապարազի ուղղելով՝ կարծաւղացն հողեկան  
15 գոլ զԾեառնն մարմինն, զի ցուցցէ եթ՛ ի մարդկայնւոյ  
զանգուածէ մարմինն այն մածաւ, զյայտնազայն ձայնն  
նախապատուեաց. քանզի ի ձեռն կնոջ ուղանցական հան-  
դերձեալ, զմտածութիւն ծնելութեանն երևեցուցանել. իսկ  
ի կնոջէն բաւականապէս զիկուցանել զհաւասարութիւն  
182r. 20 բնութեանն|ծնիցելոյն առ ծնաւզն:

Եւ յետ այդոց.

Քանզի ոչ այսքան երկիր և երկիր, և մեծութիւն ծո-  
վու, և ի ջուրս պարենաբուծեալքն, և ցամաքայինք կինդա-  
նեացն, և բոյսք և աստեղք և աւղք և ժամակք, և պճնեալ  
25 ամենիս զարդարումն զղերունական հարստութիւնն բար-  
կացուսցէ, որ քանզի կարեն զԱստուած զանտանելինն ա-  
նախատարար ի ձեռն մարմնոյ գրկախառնել մահու, զի մեզ  
իւրով ախտակրութեամբ զանախտութիւն չնորհիցէ:

Նորին՝ առ զրպարթիչսն երիս զմեզ (ա)սել Աս-  
30 տուսծ(ս).

Իբր մարդ ընդ ամանակաւ, իբր Աստուած նախ քան  
զամանակս. իբրն ոչ նոմանութեամբ, այդ ճշմարտութեամբ՝  
ըստ երկոցուն Աստուած և մարդք: Աստուած էք, մարդ եղեն  
տնաւրինութեամբն. ոչ նախկին եղենն և յայնժամ էքն,  
35 այդ նախկին էքն և յայնժամ եղենն Մի՛ այտուհետն սակա

անաւրէնութեանն ի բաց բարձցէ զՄէնածնին աստուածութիւն. քանզի այսք հերձուածողացն կոչութիւնք և Մանկքեցւոցն կատաղութիւնք:

Երանելոյն Գրիգորի Նազանզացւոյ|(|ի բան)կն որ առ. 182v.  
Երախայից վարդապետութիւնն. 5

Քանզի ծնաւղաց բնութեանն ի հարկէ հոմասեռ է  
ծնիցեալն:

Նորին՝ յաղագս Որդւոյ, բանեն առաջնում.

Իսկ միով զլիով զբարձրագոյնան առաջածեաց աստուածութեանն և լաւագունի բնութեան ախտիցն և մար- 10 մնոյ, իսկ զնուաստագոյնան բարդեցելումն և վասն քո թափեցնելումն և խաչեցելումն, ոչինչ իսկ նհատ ասել և մարդացելումն և բարձրացելումն, զի դու զաղանդոցն քոց զմարմնականն և զյատակավիժեալն ի բաց քակելով՝ ուացիս բարձրագոյն գոլ և վերալակցել աստուածութեանն, 15 և մի յերեւելիսս (?) մնացես, այդ վերամբարձեսցիս ընդ իմանալիսն և դիտիցես զինչ ահա բնութեան Բան, զինչ իսկ աւրէն տնաւրէնութեան. քանզի ինքն, որ այժմ քեզ արհամարհեալս էր երբեմն և գեր զքեզ էր, այժմս մարդ և անբարդելի էր. որ էրն մնաց, իսկ որ ոչն էր 20 առընկալաւ:

Նորին՝ յաղագս Որդւոյ ի բանեն Երկրօրդէ.

Այսք ահա տակաւին հասարակականք, այն որ գեր զմեզն ելայնք որ ըստ մեզ, իսկ . . . \* պէս մերքն և . . . \*\* 183r. առընդունելութեան, մարդ (ա)հա ոչ(?), զի ներամտիցէ 25 միայն մարմնով ի մարմինս, այդ իրը ոչ ևս ներամտեալ սակա բնութեանն անըմբռնելոյ, այդ զի սրբեացէ ընքեամբ զմարդն, իրը խմոր եղեալ ամենայնի զանգուածն և առ ինքն միաւորեալ, և զդատապարտեալն բոլոր լուծցէ ի դատապարտութենէն առէն(?), վասն ամեննեցուն եղեալ<sup>30</sup> որքան մեք, բայց ի մնղաց՝ մարմինս, անձն, միաք. ի ձեռն որքանից մահ հասարակական, յայսցանէ մարդ, Աստուած տեսանելի վասն իմանալոյն, իսկ Որդի մարդոյ վասն

\* ) Մի անվերժանելի բառ. թերթի վերին ծայրը ծակծկուած է և փշացած.      \*\*) Մի անվերժանելի բառ.

Աղամայ և վասն ամինին(?)։ յորոց եղն։ ուրումն իբր նախահաւը, իսկ սէրայ իբր մաւր աւրինիւ, և ոչ աւրինիւ ծնելութեան։

Նօրին՝ յաղազս Սրբոյ Հօգւոյն բան։

5      Ահա իսկ և նորին ոմն ոչ ծնունդ, իսկ ոմն ծնունդ։  
սակայն հոմագոյք, որ և առընթերակայիս իմ յաւէտ  
նմանեաց. մի իսկ իմն(?) ի մերոցն ասացեալ, որ և ամե-  
183v. նեցուն ծանաւթ։ Առ միւսն|փորձեցայց(?) բան. Աղամն  
զինչ ոք էր՝ ստեղծուած Աստուծոյ. զինչ իսկ Եւայ՝ հաս-  
10 տումն ստեղծուածին. զինչ իսկ Սէթ՝ երկակացն ծնունդ.  
արդեւք նոյն քեզ երեխիցի ստեղծուածն և հաստումն և  
ծնունդն. իբր հոմագոյք իսկ այսոքիկ կամ զինչ. իբր իսկ  
ոչ խոստովանի ուրեմն և զանազանարար ենթակացեալմն  
նորին գոլ գոյացութեան հնարաւոր։

15      Երանելոյ Յովաննու յաղազս աստուածային մար-  
մնաւորութեան։

Սերկ էակն ծնանի և էակն եղանի, որպէս ոչ էր.  
քանզի երով Աստուած՝ եղանի մարդ, ոչ արտակացեալ ի  
դոլոյն Աստուած. քանզի ոչ ըստ արտակացութեան աս-  
20 տուածութեանն եղեւ մարդ և ոչ ըստ յառաջատութեանն  
ի մարդոյ եղեւ Աստուած, այդ Բան ելով սակա անախտա-  
կրին մարմին եղեւ, անփոխարկելոյ մնացեալ բնութեանն։

Եւ ի վերայ բերէ այսոցիկ։

Յաթոռն բարձու և վերացելում<sup>1</sup> նստեալն ի մսուր  
25 դնանի. անյայտն և պարզ և անմարմինն ձեռաւք մարդ-  
184r. կայնովք փարի \*. զմեղացն ի բաց կորզիչ|կապանս՝ ի  
խանձարու(րս) հիւսանի(?)։

Երանելոյ Թեօվփիղայ ի (վեցերորդ տաւնականեն։

Կենդանին և ներգործիչ Աստուծոյն Բան կարգաւո-  
30 րութեան յարմարութեամբ զարդարեալ զամնայն, ոչ  
իբր ուրումն պատուականի նիւթոյ երկնայնոյ առեալ՝ առ

\* ) Լուսանցքում՝ «շաղի».

<sup>1</sup>) Հմմա. Խայի Զ. 1.

մեզ ժամանեաց, այդ ի կաւում զմնծութիւն իւրոյն ցուցանէ արուեստի՝ զ' ի կաւոյ ստեղծեալն անդրէն ուղղելով մարդ:

**Նորին՝ ի խաներորդի Ա. երօրդի տաւականէն.**

Մնանի մարդ ի կուսէն գմերն առանց մնջաց, յորք քան իցելը ստորև ընթացեալք ազդակցութիւնք. իսկ աւտարիւ մակերեսութեամբ \* եկեալ յեղանակաւ՝ զմարդկայինն բարերանէ բնութիւն:

**Նորին՝ ի խաներորդ երրորդ տաւականէն.**

Եթ' ոչ առաջինն մարդ այզով քան զմեզ եզե յե- 10  
զանակաւ, ոչ միոյ իսկ խառնութեան և գոյակցութեան  
առն և կնոջ սպասաւորեցելոյ նմա զգուութիւնն \*\*. քանդի  
ևթե նմա թողացուցեն յերկրէ կամաւք Աստուծոյ եղանել,  
ոչ ծնաւղաց ենթակացելոց և ոչ բեղման արականի ի  
բնութենէ անգործարանի, յայնժամ առ խաւաեցելոյ \*\*\*<sup>15</sup>  
ո| . . . . . \*\*\*\* իսկ . . . մարմնականի . . . . . զի և ընդդիմա- 184v.  
բանից նոյն ըստ ընդդիմականութեան տէրունական բային  
ասասցուք. զինչ դիւրախոնչագոյն՝ յերկրէ զմարդն զա-  
ռաջին եղանել, հաւր և մաւր ոչ ի միջի ելոց, եթ' ի կուսէ  
զՓրկիչն ըստ մարմնոյ ծնանիլ, տեսակագործեցելոյ ի նե- 20  
մա անձնաւորի և զգայականի մարմնոյ մարդկային կերպի:

**Երանելոյ կիւրիդի յորս (?) զնեսորէ.**

Եւ իրր ոչ լաւագոյն ասել և ահա և առնուլ խոհել,  
որպէս առաքեցաւ իսկ և եզե մեզ հոմագոյ, այս է մարդ  
հոմագոյին մնացեալ և նմին Աստուծոյ Հաւ.ր. ըստ որում 25  
իմանի և էր և է, Աստուած է իսկ, է որ էրն և առընկալաւ  
զմարդկութիւն:

**Եւ յետ այդոցն.**

Որ այսուհետեւ մեզ հոմագոյ՝ ըստ որում եզե մարդ,  
և նմին իսկ Հաւր, ըստ որում մնաց և ի ներմարդու- 30

\* ) Լուսանցքում՝ « յայտնութեամբ ».                \*\*) Այդպէս ձեռագրում. լուսանցքում՝ « զեռութիւնն ».                \*\*\*) Լուսանցքում՝ « հաւասարեցելոյ ».                \*\*\*\*) Հորս տող եղծուած է. ինչ որ հնարաւոր էր կարգաւ գըլիք.

թեանն Աստուած, ասաքեցաւ քարողել զերեաց թողութիւն և կուրաց վերատեսութիւն<sup>1:</sup>

Նորին ի բանեն որ զգոյակցականացն.

185r. Քանզի հպիցաւ առ ձեռն Յայիրայ դստերն՝ հանդերձ  
5 իշխանութեամբ աստուածավայելչիւ ձայնելով իսկ և ասելով. «Համրակ<sup>2:</sup>, կազնեցիր»<sup>3:</sup> և թեպէտ և միայնիւ հրամայեաց բայիւ եղանել ինչ և ևս անդր բանի, ամենայնիւ իսկ և ամենապէս ընթանայր առ կատարումն թուեցեալն: Այդ զի հաւատասցուք, զի թեպէտ և մերոցս մարմնոց հոմա-  
10 րոյս էր սուրբն նորա և ամենավիճիտ մարմինն, այդ սակայն է պաշտելի և աստուածային և յոյժ ըստ մերոց անդր չափոց, որպէսի և յատուկ իւր եղեալ ներգործեաց նովաւ. սակս այսորիկ և հաց անուաննեցաւ կննդանութեան:

Նորին՝ յերկրօրդ զիխոյն, որ զթեսդորեայ.

15 Քանզի այսպէս մի երկրպագեացես զՈրդին՝ հոմագոյ հաւր աստուածաբար, իսկ հոմագոյ և մեզ զնոյն մարդկաւրէն. իսկ այսպէսն խոնել յաւժարելոց փայլատակեացէ Քրիստոս զըստ ինքեան խորհրդոյն գիտութիւն զստոյդն մախարակեալ:

20 Նորին՝ առ Ակակիոս բղբայն.

25 Զայնից իսկ զանազանութիւն ըստ ոչ միում յեղանակի ի բաց բարձաք, թեպէտ և արաշնկեցիկս արարաք բաժանել զնոսա, իբր Որդւոյ առանձինն զառ ի Հաւրէ Բանին և իբր մարդոյ դարձեալ առանձինն. Որդւոյ իմացելոյ զ' ի կնոջէն, քանզի մի խոստովանաբար Որդւոյն ընութիւն, գիտեմք իսկ, զի մարմնացաւ և ներմարգեաց:

Նորին յաղազս ներմարդուրեան բանեն.

Եւ այսպէս եղիցի ապա ճշմարիտ եթ՛ Աստուածածին եղև Սուրբն Կոյս՝ ի բաց ծնեալ հրաշաբար զմինն Քրիստոս, նմանապէս մեզ հաւասարելով մարմնոյ և արեան, և հոմագոյ իսկ նէմայ և մեզ ըստ մարդկութեան՝ իբր գոլ

<sup>1:</sup>) Հուսանցրաւմ՝ «Պղ(Պիկ)».

<sup>2:</sup>) Հմմա. Եսայի ԿԱ. 1.      <sup>3:</sup>) Մորկ. Ե. 41 և այլն.

գմարմինն յԱստուածածնէն Մարեմայ. քանզի ոչ նմառնագոյ, որպէս թուեցաւ սմանց հերձուածողաց, այդ նոյնագոյ այս ի մերմէ գոյացութենէս. ասէ իսկ՝ զսերմանէ Աբրահամու բռնահարէ<sup>1</sup>: Իսկ նմանագոյ նշանալէս ոչ ճշշմարիտ մարդ, այդ նմանութիւն Որդւոյ մարդոյ, որպէս նԴանիէզն ասէ<sup>2</sup>:

Նորին՝ յօրս զՆեսօրէ.

Իբր ի միոջէ այսուհետև դիմէ ամննայն ասիցի. մի իսկ ահա իմանի բնութիւն նորին Բանին մարմնացեալ:

Նորին՝ ի լուծմանէ ԺԲ. Եզրվմանն.

10

Ուրեմն ասսացին ամենայնքն նորա և խոստովանեսցի  
Փրկիչ Աստուծոյն Բան, մնացեալ ահա անխմտակիր աստուածային բնութեամբ, իսկ մարմնով ախտակրեալ, որպէս ասաց Պետրոս<sup>3</sup>: Քանզի իւր էր յատուկ ըստ միտւուրութեան ճշմարտիւ մահու ճաշակեալ մարմինն, եթ' ոչ 15 ըստ ինչ յեղանակի՝ «Ի հրեից ըստ մարմնոյ Քրիստոս և Աստուած ի վերայ ամենեցուն և բարեբանեալ յաւիտեանս ամէն»<sup>4</sup>: Յոյր իսկ մահն մկրտիցաք<sup>5</sup>, զոյր յարութիւն խոստովանելով արդարանամք. և այն, զի ըստ բնութեան իւրում մահու լաւագոյն է՝ Աստուծոյն Բան, առաւել իսկ 20 նոյն ինչ կենդանութեան: Արդեւք ապա ի մահ մարդոյ հասարակականի մկրտիմք և ի նա հաւատալով արդարանամք, եթ', որ է ճշմարիտ, ներմարդացելոյ Աստուծոյ և ախտակրեցնելոյ վասն մեր մարմնով զմահն պատմեմք և խոստովանեմք զնորա յարութիւնն, զմեղացն բեռն ի բաց 25 ընկենլով. «Քանզի զնոց զնիցաք, ոչ ապականելեաւք արծաթով կամ ոսկով, այդ պատուականիւ արեամբ՝ իբր Գառին անարատի և անպարտի Քրիստոսի»<sup>6</sup>.

186v.

Նորին՝ ի պարապմանց յաղագս կայծին(?) \*.

Ասեմք իսկ զկայծէ(?) գաղափար մեզ և պատկեր 30 լնուկ ներմարդկութեան Բանին, որ իբր եթև յարեալ մեր-

\* ) Ամբողջ զերնագիրը խիռա եղծուած և հաղիւ զերծանելի.

1) Հմմա. Ելլ. թ. 16. 2) Գան. է. 13. 3) Հմմա. Ա.

Պետր. Պ. 1. 4) Հռովմ. Թ. 5. 5) Հմմա. Հռովմ. Զ. 3.

6) Ա. Պետր. Ա. 18—19.

ձեսցի առ շրթունս մեր. այս է՝ յորժամ զ' ի նայն խռատովանեսցուք հաւատ, յայնժամ և ամենայն մեղաց ի բաց ցուցանէ մաքուրս և սկզբնական պարտաւորութեանց աղատաւ թայց է տեսանել, իբր ի պատկերի կայծի միանորեաց ահա մարդկութեան զԱստուծոյն Բան, ոչ ես ի բաց արկեալ գոյն որ էրն, փոխատառեալ առաւել զառնան կամ եթե զմիաւորեան յիւրն փառս և ներգործութիւն, Քանզի զոր աւրինակ հուր մերձեցեալ առ փայտ և ներսամտեալ ի նմա՝ բռնահարէ ահա զնա և ոչ արտա-  
10 կացոցէ զգոյն փայտ, իսկ փոխակացոցէ զնա, առաւել ի հրոյ երեսս իսկ և կարութիւն և զամնն ի նմա զյատուկնն ներգործէ և իբր մի ահա համարեալ ընդ նմա. այսպէս իմասցիս և ի վերայ Քրիստոսի. քանզի միաւորեալ անճառաբար մարդութեան Աստուած, պահեաց զնա այսպէս,  
187r. 15 որպէս գոլ ասացաք: Քանզի մնաց ինքն, որպէս և էրն, ի միաւորեալ մի հազ՝ իբր մի համարի ընդ նմա. իսկ ընտանեցուցեալ նորայն, արարեալ իսկ և իւր ի նմա զիւրոյն բնութեան ներգործութիւն:

Նորին ի պարապմանցն՝ եր՝ Աստուած ելով եղեւ  
20 մարդ, եւ ըստ միոջեմն.

Ապ' ուրեմն վայելչականագոյն է և յոյժ նմանապէս մատածել(?), զի ապրեցուցանել կամնցեալ զկորուսեալն զըստ զիջելութեան առ մեզ, որով ամենայնքն Աստուածն Բան ստորարկեաց զինքն յոր ոչն էր. զի և յոր ոչն էր՝  
25 մարդոյն եղիցի բնութիւն աստուածային գերունակութեանն արժանաւորութեամբ և զառ նայն միաւորութեամբ վայելչաւորեալ, և վերաբերեցաւ առաւել ի վեր քան զբնութիւնն, կամ եթե վայրարերեաց քան զբնութիւնն զանյեղլին իբր զԱստուած: Վայել էր զաննապական նելին բռնահարել զբնութենէ զընդ ապականութեամբ, զի զնա բացափոխեացէ յապականէն. պարտ էր զմեղանչելն ոչ զիտակ՝ կերպակից եղանել զընդ մողաւքն, զի դադարեցուացէ զմեղսն: Քանզի որպէսուր իցէ լոյս՝ անգործեացի իսկ անդ ամեննեխն խաւար, սապէս առընթերեցելոյ անա-  
187v. 35 պականութեանն՝ ամենայն իբր ի հարկէ փախնուլ զապականութիւնն, և ոչն զիտաւղի զմեղս, իբր ցուցանելով զընդ մողաւքն խափանիլ զմեղս:

Եւ յետ այդոց.

Զն իսկ արդեւք ասեմք ի կերպի գոլ և ի հանգի-  
տութեան Հաւր, զայս ոչ համարեալ յափշտակութիւն, վայ-  
րադրելով իսկ առաւել ի թափումն և ի ծառային կերպի,  
և զինքն նուաստացուցեալ և ի նմանութիւն եղեալ ըստ  
մեզ: Արդ եթե մարդ, զ' ի կնոջն սոսկ և մի նայն, իբր 5  
էր այսպիսիս ի կերպի և ի հանգիտութեան Հաւր. կամ  
իբր արդեւք ունէր զլին, զի իմանայցի թափեալ. յորպի-  
սիս իսկ ելով բարձրութիւնս՝ զինքն նուաստացուցեալ ասի.  
իբր իսկ և եղս ի նմանութիւն մարդկութեան՝ զայս ունե-  
լով ըստ բնութեան: Եւ եթե ոչ եզանել ասիցի դոյզն յա-<sup>10</sup>  
ւէտ, իսկ ուր թափեցաւ զաստուածութեան լրութիւն  
առնլով, կամ իբր ոչ եղն բարձրացեալ ի փառագերագոյնս 188r.  
վերընթացեալն:

Նարին՝ ի հինգերրորդ բանեն, որ առ Կորնքացիս  
բռւդր առաջին. <sup>15</sup>

Հարկաւորապէս իսկ որ առընթերակայս ոչ մեռանել  
միայն, այդ և թաղիլ զնա ասեն. քանզի հաւատացուցա-  
նելով զմեռանելն զըստ ծշմարտութիւնն Եմմանուէզ, զնա-  
նի և ի շիրմի, սակայն վերակենցաղեաց. որպէս ա(սա)ցի  
այժմ ևս ի ձեռն ահա մեռանելոյն մարմնով հաւատացու-<sup>20</sup>  
ցանել եթ' եղն մարմին, և այն զի Աստուած ելով Բան, իսկ  
ի ձեռն կոխելոյ զմահ' եթ' Աստուած ըստ բնութեան է  
լրջաբար բացայատէր. քանզի որպէս մարդկային ախտա-  
կրելն, այսպէս աստուածական յաղթելն զմահ:

Ի սահմանէ Քաղկեդովնի ծողովոյն նայնո-  
յութիւնն. <sup>25</sup>

Զմի և զնոյն Քրիստոսն, Որդին, Տէրն, Մէնածինն  
ներկուս բնութիւնս անիւառնաբար, անյեղապէս, անբաժա-  
նաւրէն, անանջատակի ծանուցեալ:



Հականառութիւն առ ասացեալսն հայիոյու-  
թիւնսն ի Քաղկեդովնի ծողովին. <sup>30</sup>

Նմանս այսոցիկ ահա բազում անդամ ցուցաք խոհե-  
ցեալ զնսստորիոս, որպէս յորժամ ասէր անորիշ յերնելւոյն  
Աստուած. սակս|այսորիկ ոչ որոշեցելոյն զպատիւն ոչ որոշեմ. <sup>188v.</sup>  
զատուցանեմ զբնութիւնսն, այդ միաւորեմ զերկրպագու-  
թիւնն. քանզի մի և զնոյն Քրիստոս և Որդի և Տէր խոս-<sup>35</sup>

- տովանել պատճառին և բաժանեն դարձեալ անպատկառար զնա քարոզութեամբ երկուց բնութեանցն՝ մարդ ասելով շարայարեալ Աստուծոյն Բանի և Որդի կոչեցալ հոմանունութեամբ և արժանաւորութեամբ, զունակական միաւո-  
 5 բութիւնն ստացեալ իսկ ուրոյնացեալ բնութեամբք, զի ոչ ըստ ճշմարտութեան մարդ հաւատայցի եղեալ Աստուծոյ Որդին՝ մնալովն Աստուծած: Քանզի եթե ներկուս բնութիւնս մին Տէր Քրիստոս՝ իբր երկարոյս մի կարի ասիլ կամ գոլ. քանզի միոյ այս ուրուք իսկ մի բնութիւն  
 10 ասի երկուսն և այդագոյիցն երկու ամնապէս բնութիւնք և դէմք երկու. ասեն այս ուրեք չինեն զ' ի Նեստորէ շարապէս ասացեալսն՝ զՔրիստոս և զՈրդի և զՏէրն անուն ի վերայ երկուց բնութեանցն ասհմանելով Քրիստոսի և ոչ  
 189r. ուրեք Աստուծած խոստովանելով զխաչեցեալն: Պարտաւո-  
 15 բեսցի յիրաւի եղելոց զնմանէ նզովմանցն ի սրբոցն հարանց և զի ամպարշտութեան աւրինացն Նեստորի հետեանալ փութացան անընդհատաբար, զնորին դարձեալ հայհոյութիւնս ի մէջ առեղեալ և զ' ի վերայ ածեալսն նախասացելոց ի սահմանէ ապստամբութեանն: Եւս իսկ և ինա-  
 20 խասացելոց հայհոյութեանցն թղթոյն Ղեւովնի և յամպարշտի Թեւողորիտայ՝ դահակցի և առաջնորդի ժողովոյն Քաղկեդովնի, ամննեցուն յայտակ կացուցից կամեցաւղաց զմողովոյն Քաղկեդովնի դամպարիշտ աղանդու: Քանզի ամնայնք նոցայցն են քսամնելիք հայհոյութիւնք՝ նախա-  
 25 սացեալք ի սահմանէ և ի Ղեւովնի թղթոյն, և ամենայն Թեւողորէտայ հայհոյութիւնք առաջակաց նոցայն հերձուածոյ. «Քանզի մի Տէր պատճառեն ասել ի սահմանին՝ ներկուս բնութիւնս մնխառնաբար, անյեղապէս, անբաժանաւրէն, անանջատակի ծանուցեալ», ըստ որում և աւ-  
 189v. 30 բինազրեաց| նոցա Նեստորիոս: Ասաց իսկ այսպէս նոցայն վարդապետ. «Ասամ զվերառաւղն եթ՝ Աստուծած, յաւել զվերառեալն, եթե ծառայի կերպ, ի վերայ ած յետ այսոցիկ զշարայարութեանն արժանաւորութիւն, եթ՝ երկուցն ճոխութիւնն հասարակական, երկուցն նոյն արժանաւո-  
 35 բութիւն բնութեանցն մնացելոց. խոստովանեալ զարժանաւորութեանն միաւորութիւն: Ե- դարձէալ նորին. Ո՛չ իսկ դարձեալ այդ Որդի և դարձեալ միւս, այդ ինքն Որդի է կրկնապատիկ. հչ արժանաւորութեամբ, այդ բնութեամբ: Ե- դարձէալ նորին. Զկրկնապատիկան առ Քրիստոս զա-  
 40 տուցանեմ բնութիւնս, քանզի կրկնապատիկը ահա բնու-

թեամբ, իսկ արժանաւորութեամբ մէնականք. քանզի լնութեանցն ճոխութիւն, սակա շարայարութեանն մու բնութեանցն ահա ընտանի կարգաւորութեանն՝ յամենայն ժամմացելոց, իսկ արժանաւորութեան յարակցելոց առ ճոխութիւնն, որպէս նախասացի, մէնականնա: |

5

Զայսոցիկ զոյգսն անընդհատաբար աղանդելով նիւթեանցն սահմանի՝ ի նոսին դարձեալ վերակնքեն զիւրեանցն ամպարչութիւն, շարայարելով նախասացելոցն՝ հանդերձ ամենայն իւրեանց ճժդութեամբ և ինամածութեամբ գաղափարեալ, որպէս ինքեանք ասեն. ասացին իսկ այսպէս. 10 չՈչ ուրեք երկոցն բնութեանց զանազանութեան ի բաց բարձելոց սակս միաւորութեանն ապրեցելոց, իսկ մանաւանդ յատկութեանն երկաքանչիւրոյ բնութեան և ի մի դէմ և ի մի ենթակացութիւն շարընթացելոց: Երգակիցս իսկ այսոցիկ և ամպարիշտն Ղեռվն աղանդեաց յառ Փզա- 15 բիանոս թղթին ասելով. «Ապրեցնոյ այսուհետեւ յատկութեան երկաքանչիւրոյ բնութեանն և ի մի դէմ շարեկելոց վերառեցաւ յատուածութիւնէն նուաստութիւնն, իսկ ի կարութենէն անկարելին և յանմահէն մահկանացուն:»

Զայնս իսկ և առաջնորդ ժողովոյն Քաղկեդովմի վայ. 20 բաքակեալն/թեոդորիտոս յիւրում հայհոյութիւնսն արտադրեաց իմացմունս և բայս, որք և սահմանք ապստամբութեանն նոցա շարադրին, զորս ցուցանել փորձեցայց իմացաւղաց և կամնցաւղաց, առեղեալ ի նորայն հայհոյութեանց. քանզի ամենայնք նորա քստմելի հայհոյութիւնք, 25 որովք յեփեսոս ի բաց լուծաւ, այսպիսիքս ժողովոյն Քաղկեդովմի ի համար անկան, որպէս և թուղթն Ղեռվի: Թէոդորէայ հերձուածունք հայհոյութիւն: Եթ' այսուհետեւ ոչ եղն մարմին Բանն, այդ մարմին կենդանի և բանական եառ, ոչ ինքն բնութեամբ ի կուսէ ծնանի, սաղ- 30 մնացեալ և ստեղծեցեալ և կերպացեալ և սկիզբն անտուստ գոլոյն առեալ, որ նախ քան զյաւիտեանս էակն և Աստուած գոլով և ընդ Հաւր ելով և ընդ Հաւր ծանուցեալ և երկրպագեալ. այդ իւր բագին ի կուսական որովայնի ստեղծով. էր լնդ ստեղծեցելումն և սաղմնացելում և կեր- 35 պացելում և ծնեցելում, որոյ սակաւ զսուրբն զայն կոյս 191ր. Աստուածածին առասելք, ոչ իրը Աստուած բնութեամբ ծնաւղն, այդ իբր զմարդ՝ ստեղծաւդին զնա միաւորեալ Աստուածոյ, Ե- յետ այդոց: ՇՈՇ մարդածին, այդ Աստուածածին զնոյսն առասելք, զոմն ստեղծութեամբ և կերպու- 40

**թեամբ և միաւորութեամբ, իսկ զոմն միաւորութեան եղեալ առասութիւնն:**

- Առ այսոսիկ ասացաւ ի սահմանէն՝ յետ ի բաց թուելոյ զսուրբ Երրորդութիւնն և Տեառն զներմարդութիւնն, նոր հաւատովք ընդունին, առընթերակաց են ոչ զԱստուծոյն Բանի մարմնաւորութիւնն, որպէս ի Նիկեա սուրբ հարգն ասացին, այդ իրը մարդոյ ստեղծաւողին զնայարեցելոյ Աստուծոյ ունակարար: Այսպէս անգոտնեն և որք զԱստուածածին զձայնն խորեն, հչ իրը զԱստուած ծնիչ
- 10 զԿոյան, այդ իրը զմարդ՝ ընակիչ ունելով և ընդ նմա ելով զԱստուածն Բանց: Քանզի մարդ զախտակրեան քարոզեն, որպէս թուեցաւ թեոդորիտայ և Նեստորի. հչ զմարմացեալ Աստուածն Բան, որպէս քարոզեցին ի Նիկիա
- 191v. սուրբ հարգն, այդ զմարդն: Նորին Թէոդորիտայ: | Ախտա-  
15 կրութիւն ախտակրելոյն յատուկ, քանզի անախտակրիբն ախտիցն է վերագոյն. ախտակրեաց այսուհետեւ՝ ծառային կերպ ընդ նմա ելով. յայտ եթ՛ Աստուծոյն կերպի: Ե- դարձեւալ: Ուրեմն ոչ Աստուած ախտակրեալն, այդ  
առ ի մէնջն յԱստուծոյ առեալն մարդն: Ե- յէտ սահմանց:  
20 Սպանանի իսկ ոչ ինք կենդանութիւնն, այդ զմահկանացուն ունաւել բնութիւնն: Նորին: Ո՞վ այսուհետեւ երկովք առաքինութեան կատարեալն և ոչ բնութեամբ կատարեալ ելով. ով փորձութեամբ ուսաւ զլսաւորութիւնն և զայս անգիտանալով նախ փորձութեանն. հչ Աստուածն Բան,  
25 անմահն, անախտակրիբն, անմարմինն, այդ ի սերմանէն Դաւթի առեալն ի նմանէ մահկանացուն, ախտակրելին, սարսափեալն ի մահուանէ: Ե- դարձեւալ: Իսկ ի փորձութեան եղեւ մերոցն ախտակրութեանց, առանց մեզաց, ի մէնջն սակս մեր առեալ բնութիւնն, ոչ այսորիկ առաւդն  
30 մերոցն սակս փրկութեան:
- Ա-ւ այսոսիկ ասացին ի սահմանէն: |

- 192r. Իսկ ոմանք խառնութիւն\* ի ներքս ածեն և մի գոյ բնութիւն մարմնոյն և աստուածութեանն վերաստեղծեն, և ախտակրելի զՄէնածնին զաստուածային բնութիւնն խառնութեամբն ճոռոմարանեն\*\*: Քանզի ոչ մարմնացեալ Աստուած ծնաւ, ասէ, Կոյսն և ոչ Աստուած ախտակրեալն

\* ) Լուսանցքում՝ «զանգութիւն».  
\*\*) Անդ՝ ուրիշ զբով «Ցիկլոպ».

վասն մեր մարմնով քարոզիլ պարտ, որպէս այսպիսեացս  
ամպարիշտ բան, այդ մարդ ախտակրեալն՝ ըստ վարդապե-  
տութեան ամպարշտին Թեոդորէտայ: Քանզի նորայքն բաք  
և իմացմունք մերկը և խայտառակեալք կան ի սահմանի  
ամպարշտութեանն, որպէս և յաղագս յատկութեան երկուց 5  
բնութեանց ցուցցի: Քանզի ասաց այսպէս Թեոդորիտոս.  
«Ի՞՞ր արդեւք ամպարշտութեան կրիցէ, որք զյատկու-  
թիւնս բնութեանցն բաժանեն զնախայաւխտենին Աստու-  
ծոյ և առ վերջնովք աւուրբսս վերառեցելոյ մարդոյն»: Նորին:  
Ապ' ուրեմն, հաւասարութեամբ անուանն վարեցեալք՝ |իր 192v  
զմի Ուրդի երկրալագենիք զառաւզն և զառեալն, իսկ զբնու-  
թեանցն զանազանութիւն ճանաչեւմք: Նորին: Ուրեմն եր-  
կագանչիւրոյ բնութեանն զյատուկս ասելով, դՏէրն խոս-  
տովանեմք Քրիստոս: Նորին: Ոչ ի մարմնոյ բնութիւն ան-  
յեղին յեղաւ բնութիւն, այդ մարդկային վերառեաց բնու- 15  
թիւն և զայս գեր զնասարակականս քահանայապետս կա-  
ցոյց: Նորին: Մի ահա, որպէս բազում անգամ ասացի,  
զփառաբանութիւնն մատուցանեւք Տեառն Քրիստոսի և  
զնոյն համանգամայն Աստուած և մարդ խոստովանեւք,  
քանզի զայս մեզ միաւորութեանն ուսոյց բան, իսկ զբնու- 20  
թեանցն յատկութիւնն ոչ խտրեւիք ասեկ:

Այսպիսիք ահա հայոյութիւնք ժողովոյն Քաղկե-  
դովնի, որոց սակաւս առդրեցաք: Այժմ, յոլովոց այլոց  
կացելոց հայոյութեանց Թեոդորէտայ ի հակաճառականի՝  
ի տոմսէն Ղեռվնի, մի իսկ և համառաւտ և առ այսոսիկ 25  
ասեւիք. կամ ցուցեն ի հարանցն սրբոց նղովեալս զոչ խոս-  
տովանաւզն զայսպիսիս նոցա հայոյութիւնն և երկա-  
բոյս և ներկուս բնութիւնս դՏէրն մեր և զԱստուած Յի-  
սուս Քրիստոս յետ միաւորութեանն. քանզի զայս ներ-  
գրաբար, որպէս կարծեն, արարին ի Քաղկեդովնի հաւա- 30  
գեալքն և նղովեցին ամպարշտաբար շարժեցեալք զոչ խո-  
հաւղմն այսպէս յաղագս Քրիստոսի. կամ ցուցաւզաց մեր  
նղովեալս ի սրբոցն հարանց զասաւզմն երկուս բնութիւնս  
զմին Քրիստոս և զամենայն յանդուզն նոցա հայոյութիւնն՝  
տարաքարողեալս եղեալս: Պատկառեացեն զարբոցն վար- 35  
դապետութիւնս և կոծեսցեն զդէմս իւրեանց յաղագս նո-  
ցայն ուրացութեան, և ապաշաւեսցեն Աստուծոյ ի բոլոր  
սրաէ կամեցեալքն. քանզի եթ՛ ըստ բանին նոցայն ամ-  
պարշտութեան ապրի երկագանչիւրում բնութեան իւրն  
յատկութիւն և արշաւանակցեն իրերաց բնութիւնքն մինչ 40

- տայժմ, կամ եթե գնացակիցք ունակաբար առ իրեարս  
**193v.** շարայարեալք Աստուածն Բան, յայտ եթ՛ և ի Մարեմայն  
 մարդ, որպէս նոքայն ասեն, ոչ առաքեաց Աստուած զիւրն  
 Որդի յաշխարհ, եղեալ ի կնոջէ<sup>1</sup>. ոչ թափեաց զինքն  
 ն էակն՝ հանգէտ Աստուածոյ Աստուածն Բան, և ոչ աղքա-  
 տացաւ<sup>2</sup> բառացին և ազատ ըստ բնութեան, ոչ իսկ եղե  
 մարմին Բանն<sup>3</sup>, զոր և յայտնապէս իսկ ասել ոչ խղճէ  
 Թեոդովրէտոս: Քանզի ոչ բնութեան Աստուածոյն Բանի  
 յատուկ առաքելութեան անուն և ոչ ի կնոջէն եղանել և  
 10 ընդ աւրինիւ, և ոչ աղքատաձեն և ոչ եղանեն մարմին:  
 Իսկ սուտս պատմնն երկարնակքն զարբցն առաքե-  
 լոց վկայութիւնս և զինքեանն Տեառն և զշաւրն զ' ի յեր-  
 կինս. մանաւանդ իսկ յայտակս զնոսա առնէ Հոգին Սուրբ,  
 զի են սուտք և գերաքրիստոպօք<sup>4</sup>, իբր ոչ խոստովանաւզաց  
 15 զԱստուածն Բան, զերիեալն ի վերայ երկրի և ի մար-  
 մի եկեալն և շրջակցեալն մեզ<sup>5</sup>: Քանզի գտանի ըստ ամ-  
 պարշտաց բանին, եթ՛ ոչ եղե մարմին Բանն՝ մնացեալ  
 Աստուած, զփառս իւր միւտում տուեալ<sup>6</sup>, ի սերմանէն  
 Դաւթի, և ամենեցուն աստուածավայեղջից արժանաւորու-
- 194r.** 20 թեանցարտաքսացեալ, և ոչ ևս ասացիալն(?) սա ըստ յա-  
 տուկ բնութեանն յատուկ արժանաւորութիւնն: Գտանի  
 իսկ և մարդկային բնութիւն, կամ եթե ի Մարեմայն մարդ  
 զԱստուածոյն Բանի զըստ բնութեան եալսն փարթամա-  
 ցեալ, և ոչ ևս ապրին նմա իւրոյն բնութեան չափու: Յա-  
 25 տուկ իսկ նորա վկայեն գրութիւնք՝ հանդերձ և մարդ-  
 կայնուով միայնում վայելուչս Աստուածոյն Բանի, իսկ ի  
 մարդութենէն աւտարս. նմանապէս Աստուածոյն Բանի  
 վկայեն զմիայնումն վայելուչս Որդւոյն Դաւթի, կամ եթե  
 մարդութեանն: Քանզի նստեալն ի վերայ քերովրէիցն  
 30 երեիլ ասի և տեսանիլ՝ որք ի վերայ երկրի, և շրջիլ ընդ  
 մեզ՝ մարմնոյ հաստացելոյ նմա հաճութեամբ Աստուածոյ և  
 Հաւր և եղելոյ մարմնոյ Բանին և եկելոյ նորա առնել  
 զկամս Հաւր: Եւ յիսրայէդէ ըստ մարմնոյ Քրիստոսն, վկա-  
 յեալն ի վերայ ամենայնի Աստուած բարեբանեալ յաւի-  
 35 տեանս<sup>7</sup>. և թագաւորելով ի տունն Յակովրայ, և իւրոյ թա-  
 194v. գաւորութեանն ոչ ունել վախճան. և Որդի Բարձրելոյիկոչե-

<sup>1)</sup> Հմմա. Գաղաա. Դ. 4.<sup>2)</sup> Հմմա. Բ. Կորնթ. Ը. 9.<sup>3)</sup> Յովհ. Ա. 14.      <sup>4)</sup> Ա. Յովհ. Բ. 22. Հմմա. Դ. 3.      <sup>5)</sup> Բարսուք<sup>Դ. 38.      ւ) Հմմա. Եսայի Խ. 8.      7) Հմմա. Հռովմ. Բ. 5.</sup>

ցաւ<sup>1</sup> և Բարձրեալ և Փրկիչ և Քրիստոս Տէր, ծնիցեալն  
ի քաղաքի Դաւթի<sup>2</sup>. արտաքս \* ճանապարհը նորա վկա-  
յեն ի սկզբանէ յաւուրցն յաւիտենից, զազգաւորութիւն  
նորա ոչ ոք կարէ զրուցել, այդ բառնի յերկրէ կենդանու-  
թիւն նորա<sup>3</sup>:

5

Ի՞ր ապա ապրի երկաքանչիւրոյ բնութեանն յատ-  
կութիւն. իբր Որդի է Դաւթի և Տէր Դաւթի<sup>4</sup> և աթոռ  
ունի յաւիտեան, յաւիտեան յաւիտենի<sup>5</sup>, Աստուած վկա-  
յեալ՝ աւծեալն տնաւրինաբար յԱստուածոյ Հաւրէ. իբր Որ-  
դին Դաւթի վկայի մնալ ընդ արեգական և նախ լուսնի, 10  
ազգաւորութիւնս ազգաւորութեանց ելով ըստ բնութեան,  
ծագիչն յաւուրս իւր արդարութիւն յաւիտենական և տի-  
րացեալ երկնի իսկ և երկրի և ամենայնց զ' ի նոսայսն, և  
երկրպագեն նմա ամենայն թագաւորք երկրի և ամենայն  
հրեշտակը Աստուածոյ, և ամենայն ազգը ծառայեցեն նմա 15  
յաւիտեանս. և ինքն քարոզի բարեբանեալն Տէր Աստուած  
Խարայեղի, արարիչն սքանչելիս միայնին բարեբանեալ ա-  
նուն փառաց նորա յաւիտեանս<sup>6</sup>: Ի՞ր իսկ տիրանալ հա-  
րըստութեան ծովու քարոզեցաւ և զշարժութիւնն կոհակաց  
նորա հանդարտեցուցանել<sup>7</sup>: Ի՞ր եղեալն տնաւրինաբարն 20  
յԱստուածոյ Հաւրէ ժառանգաւոր ամենայնի և աւծեալ յԱս-  
տուածոյ ազգաւորութեան ազգաց զամա ունել վկայի, և ի  
սկզբանէ Տէր ելով և հիմնեալ զերկիր, և գործք ձեռաց  
իւրոց են երկինք<sup>8</sup>, և երկրպագեն նմա ամենայն հրեշտակը  
Աստուածոյ<sup>9</sup>: Ի՞ր ապա ապրի երկաքանչիւրոյ բնութեանն 25  
յատկութիւն, ասասցեն, եթե կարեն, երկարնակքն: Ահա  
իսկ երեսեալն ի վերայ երկրի՝ ինքն էակն վկայի նստեալն  
վերայ քերովքէից, և այն զի՝ աներենոյթ ելով զբնութիւնն,  
մարմնացեալ ասի և մարմին նղեալ և երեսեալն տնաւրի-  
նաբար՝ աներենոյթն և անմարմինն և եակն Աստուած բա- 30  
րեբանեալ յաւիտեանս<sup>10</sup>: Յիարայեղէ ասի ըստ մարմնոյ, և  
ունաւղն զարտաքս ուղղութիւնս ի սկզբանէ աւուրցն յա-  
ւիտենից, և զազգաւորութիւնս անգրուցելիի:

195r.

Սա ծնիցեալ ի Բեթղեհմ վկայի ըստ մարմնոյ, և զիւրն

195v.

\* Հուռանցքում՝ «Հեռի».

- |                                      |  |
|--------------------------------------|--|
| <sup>1)</sup> Հմմա. Ղուկ. Ա. 33. 35. | <sup>2)</sup> Հմմա. Ղուկ. Բ. 11.             |
| <sup>3)</sup> Հմմա. Խոյիք ԵՊ. 8.     | <sup>4)</sup> Հմմա. Սաղմ. ՃԹ. 1., ԵԲ. Ա. 13. |
| <sup>5)</sup> Հմմա. Սաղմ. ԽՊ. 7.     | <sup>6)</sup> Հմմա. Սաղմ. ՀԱ. 5—11. և 18.    |
| <sup>7)</sup> Հմմա. Սաղմ. 2Ը. 10.    | <sup>8)</sup> Հմմա. Սաղմ. ՃԱ. 26.            |
| <sup>9)</sup> Հմմա. Սաղմ. ՂԶ. 7.     | <sup>10)</sup> Հմմա. Հռովմ. Բ. 5.            |

- թիկունս ետ ի խարազանս և գծնաւտս յապտակս<sup>1</sup>. և ղաթոռն ունաւղ յաւիտեանս յաւիտենի<sup>2</sup> աւծեալ տնաւրինաբար ասացաւ. և ըստ ի սկզբանէ հիմնիչն զերկիր, եղբայր մեր եղն ըստ մարմնոյ, վասն մերոյն փրկութեան, 5 ըստ որում գրեալ է: Ո՞չ իսկ և աստուածային բնութեանն յատուկ աւծանիլն, և ոչ մարդկային բնութեան աթոռն ունել յաւիտեանս յաւիտենի. և ոչ աստուածութեանն յատուկ ըստ բնութեանն յիսրայեղէ, յորժամ արտաքոյ մարմնոյ, և ոչ մարդկային բնութեանն յատուկ 10 զգովն Աստուած ի վերայ ամենեցուն բարերանեալ յաւիտեանս. ոչ իսկ աստուածային բնութեան յատուկ Յիսուսն անուն և Քրիստոսն, եթ' ոչ եղն մարմին թանն և ոչ մարդկային բնութեանն թագաւորեալ ի վերայ տան Յակովայ յաւիտեանս և Որդին գոլ Բարձրելոյ. այդ 15 զրութիւնն վկայէ նմին Տեառն մերում և Աստուծոյ զա-  
196r. մենայն զաստուածավայիելուչս և մարդկայինս Զի զոր և դն ժառանգաւոր Հայրն՝ սակս կամաւոր թափմանն, և նախածին ի ներքս եած յաշխարհ ի բազում եղբարս<sup>3</sup>, սա վկայի զյաւիտեանս արարաւղ և երով բացափայլումն  
20 իմառաց և գծաւորութիւն ևնթակացութեանն Հաւր. և երկրպագեն նմա, իբր Աստուծոյ, ամենայն հրեշտակը Աստուծոյ: Եւ նախածին ի մեռելոց<sup>4</sup> վկայեան՝ արարիչ զամնայն վկայի, զ' ի յերկնին և զ' ի վերայ երկրի, երեւոյթս իսկ և աներենոյթս<sup>5</sup>: Եւ զմեծին և զՓրկչին մերոյ  
25 Յիսուսի Քրիստոսի քարոզէ զյայտնութիւն ինքն երանելին Պաւղոս, որպէս և սուրբն Յովաննէս վկայէ ասելով. «Եթ' Որդին Աստուծոյ եկն և ետ մուզ իմացութիւն, զի գիտիցնելք գծմարիտն Աստուած, և եւճ ի ճշմարտում Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի. սա է ճշմարիտն Աստուած  
30 և կենդանութիւն յաւիտենականս<sup>6</sup>, որ յայտնեցաւ ի մարմնի և ունի ըստ մարմնոյ մայր զԱստուածածինն Կոյան: Եւ մարդ կամնցեալ ցուցանել, ասէ՝ երեւցաւ ի մարմնի<sup>7</sup>,  
196v. կամ ծնիցաւ ըստ մարմնոյն ի կնոջէ<sup>8</sup>, կամ հոմագոյ մնդէր ըստ մարմնոյ, կամ կրեաց մարմնով. այդ միայնում 35 Եմմանուէդի՝ նախ մարմնաւորութեանն արտաքոյ մարմնոյ իմացելում մշտնցենաւորապէս ըստ բնութեան, անաւ-

<sup>1)</sup> Հմմտ. Եսայի Ե. 6.    <sup>2)</sup> Հմմտ. Սաղմ. ԽՊ. 7.    <sup>3)</sup> Հմմտ.

Հովով. Է. 29.    <sup>4)</sup> Հմմտ. Կողոս. Ա. 18.    <sup>5)</sup> Հմմտ. Կողոս. Ա. 16.

<sup>6)</sup> Ա. Յովհ. Ե. 20.    <sup>7)</sup> Հմմտ. Ա. Ցիմոֆ. Գ. 16.    <sup>8)</sup> Հմմտ.

Դադատ. Գ. 4.

թիսարար իսկ երևեցոյց ի մարմնի յարմարականք այսպիսիք, և ասելու, եթե ախտակրեաց վասն մեր մարմնով, և զթիսուս Քրիստոս անունն և դժառայ նորա գոլ զամենայնն<sup>1</sup>, Քանզի և Պաւղոս ծառայ և կոչեցեալ առաքեալ Յիսուսի Քրիստոսի<sup>2</sup> յամենայն ազգս Աստուած քարոզելով զնա խաղաղութեան, ընդ Աստուծոյ և Հաւր, և կոչեցեալս Յիսուսի Քրիստոսի գիտէ զյազդացն հաւատացեալս և պարշտէ Քրիստոսի իբր Աստուծոյ, ընդ Հաւր և Սրբոյ Հոգւոյն<sup>3</sup>, և արարիչ և դատաւոր ամենեցուն զթիսուս Քրիստոս քարոզէ, և հատուցանելով իւրաքանչիւրում ըստ 10 դործոց իւրոց<sup>4</sup>, և զարդարութիւնն Աստուծոյ յայտնեալ զՔրիստոս՝<sup>5</sup> զվկայեալն Աստուած յաւիտենի և ի մարգարէիցն:

Քանզի հաւատացեալն նմա իբրև Աստուծոյ և ոչ ամաշեսցէ<sup>6</sup>. | «Զի զնա նախաղրեաց Աստուած քաւարան 197. ի ձեռն հաւատոյ՝ իւրով արեամբն»<sup>7</sup>. որոյ բնութեան յատուկս զայսպիսիս ասեն երկարնակըն, ասացեն. քանզի աւտարական է աստուածային բնութեանն արիւնն, յորժամ արտաքոյ իմանայցի մարմնոյ, և միայն զառանձինսն և զվայելուչս նմա ապրեցուցանից՝ ըստ երկարնակացն 20 բանի: Եւ զՔրիստոս Յիսուս անուն ոչ յարմարական նմա, նմանապէս ոչ յատուկ մարդկային բնութեանն քաւարանն եղանել իւրով արեամբն ամենայնի մարդկութեան, և ոչ ծառայն ունել զամենայնսն և քարոզիլ Աստուած յամենայն ազգս: Եւ վասն զի նմին վկայեն զերկոսեան առա- 25 քեալքն և պարշտեն նմա, Աստուած զնա գիտելով ըստ բնութեան, և մի բնութիւն է Աստուծոյն Բանի մարմնացեալ: Իսկ մեռուցեալք եղեաք և աւրինին և եղեաք Քրիստոսի, զի պտղաբերեցուք Աստուծոյ հաւատով ի Քրիստոս՝, իբր յԱստուած զ' յմարմնի ախտակրեալն և իւաչե- 30 ցեալն և յարուցեալն ի մնուելոց, որոյ և յատուկիցոյ ըստ բնութեան Ոգին Աստուծոյն. «Զի եթե ոք զոգի Քրիստոսի ոչ ունի, սա, ասէ, ոչ է նորա»<sup>8</sup>:

Քանզի և ի Գործան փորձեին եղբարքն ի Բիւթանիա գնալ, և ոչ եթող զնոսա, ասէ, Հոգին Յիսուսի<sup>10</sup>, Որդւոյ 35

<sup>1)</sup> Հմմտ. Փիլիպպ. Բ. 7—10.

<sup>2)</sup> Հմմտ. Հռովմ. Ա. 1.

<sup>3)</sup> Հմմտ. Բ. Կորնթ. ԺԴ. 11—13.

<sup>4)</sup> Հմմտ. Հռովմ. Բ. 5—6.

<sup>5)</sup> Հմմտ. Հռովմ. Ա. Պետր. Բ. 6.

<sup>7)</sup> Հռովմ.

Դ. 25.

<sup>9)</sup> Հմմտ. Հռովմ. Է. 9.

Ժ. 7.

<sup>10)</sup> Գործք

Աստուածածնի կուսին: «Ոչ իսկ ինչ դատապարտութիւն Յիսուսիւ Քրիստոսիւ, զի աւրէն հոգւոյն կենդանութեան ի Քրիստոսի Յիսուսի ազատեաց զմեզ յաւրինէ մեղաց և մահու. զի անկարելի աւրինին, յորում տկարանայր ի 5 ձեռն մարմնոյ, Աստուած զՈրդին իւր առաքեաց ի նմանութեան մարմնոյ մեղաց և յաղագս մեղաց, դատապարտեաց զմեզս ի մարմնի անդ, զի արդարութիւն աւրինին լցջի ի մեզ, ոչ ըստ մարմնոյ գնացելցա, այդ ըստ հոգւոյ<sup>1</sup>: Որպիսում բնութեան յարմարին այսպիսիքս մե-  
10 ծամնծք և աստուածավայելուչք ճահագործութիւնք: Քանզի՝ ԿԲՇ՝ ոչ եզի մարմին Բանն, ոչ ևս դատապարտեալ են մեղքն և ոչ առաքեաց Աստուած զիւրն Որդի յաշխա(ր)հ, ըստ երկարնականացն բանի: «Ճի որք հոգւով Քրիստոսի ածին, ասէ, այսոքիկ որդիք Աստուածոյն, առեալք զոր-  
15 դեղբութեան ոգի, յորում աղաղակեմք՝ Աբրա, Հայր»<sup>2</sup>: «Քանզի Հայր յիւր Որդին ոչ ինայեաց, այդ վասն մեր ամննեցուն մատնեաց զնա»<sup>3</sup>:  
Իսկ եթե Հայրն մատնեաց զիւրն Որդի վասն մեր,  
իր ապրեցուցանեն երկարնականքն զերկաքանչիւրոյ  
20 բնութեանն յատուկա: Քանզի ոչ յարմարական մատնութիւն աստուածային բնութեանն, որպէս և ոչ մարդկային բնութեանն յարմարական զվասն մերն մեռանել: Ուրեմն մի բնութիւն է Աստուածոյն Բանի մարմնացեալ: Քանզի այսպէս ախտակրեաց մարմնով իւրով վասն մեր, ըստ  
25 զրութեանց, Աստուածոյն Բան: Քանզի «Քրիստոս Յիսուս է մեռեալն վասն մեր, մանաւանդ իսկ յարուցեալ ի մեռելոց: Այդ յարուցեալն ի մեռելոց յաջմէն նատի Աստուածոյն և հանդիպասաց վասն մեր»<sup>4</sup>: Եւ առաջի ածեմք սմա զԱստուածոյն վայելուչ սէրն, սիրելով զնա իբր Տէր մեր եալ  
30 և Աստուած, ի բոլորոյ մերոյ սրտէ և յանձնէ և մեծութեան: Ոչինչ իսկ զմեզ բոլորովին կարասցեն անջատել ի  
198v. սիրոյն Աստուածոյ՝ ի Քրիստոսի Յիսուսի Տեառնմիրոյ»:  
Ի՞ր արդեւք կարեն երկարնականքն զարձեալ յայսորիկ զյատուկս զբնութեանցն ապրեցուցանել երկաքան-  
35 չիւրում բնութեանն, որպէս ինքեանք ասեն: Քանզի ամենեքեան կացցուք առ բնոմին Քրիստոսի<sup>5</sup>, յորժամ նստցի Որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոց՝ դատել զաշխարհ

<sup>1)</sup> Հռովմ. Լ. 1—4. <sup>2)</sup> Հռովմ. Լ. 14—15. <sup>3)</sup> Հռովմ. Լ. 32.

<sup>4)</sup> Հռովմ. Լ. 34. <sup>5)</sup> Հմմա. Հռովմ. Լ. 38—39. <sup>6)</sup> Հմմա. Հռովմ.

Ճ. 10.

արդարութեամբ<sup>1</sup>. քանզի խոստովանիչն բերանով Տէր Յի-  
տուս և հաւատալով սրտիւ, Եթ' Աստուած յարոյց զնա ի  
մեռելոց, ապրի՝ ըստ Պաւղոսի ձայնին<sup>2</sup>: Զի հաւատացեալն  
ի Քրիստոս իրը յԱստուած, ոչ ևս ամաչեացէ. զի Եթե  
կեամբ և Եթե մեռանիմք, Տեառն եմք<sup>3</sup>, ասաւզին՝ «Ճուաւ 5  
ինձ ամենայն իշխանութիւն՝ յերկինս և յերկրի»<sup>4</sup>: Տիրեաց  
իսկ կենդանեաց և մեռելոց<sup>5</sup>, իրը Աստուած, Քրիստոս, և  
մարմնով քահանայագործէ. իսկ Պաւղոս զաւետարան  
փառացն Քրիստոսի՝ զ' ի վերայ ամեննեցունն Աստուածոյ,  
յազգս զնա քարոզելով, իրը պաշտանեայ ելով նորա և 10  
ծառայ Քրիստոսի Յիսուսի<sup>6</sup>, զի ընկալեալք եղիցին սըր-  
բեալքն հոգւով առ ի նայն հաւատովի իսկ պարծի ի Քրիս-  
տոս Յիսուս<sup>7</sup>, Աստուած քարոզելով զնա աշխարհի, և զաւ-  
րութեամբ Քրիստոսի նշանս և հրաշագործութիւնս արա-  
րեալ յամենայն ազգս՝ հոգւով Քրիստոսի:  
15

Ուզջունէ իսկ զՀոռվմայեցիսն ասելով. «Ոզջուննն  
զմեզ ամենայն եկեղեցիք Քրիստոսի և Աստուածոյ»<sup>8</sup>. յայտ  
է, Եթե և բարեբաննեցելոյ յաւիտեանս ամէն, Աստուածոյն  
խաղաղութեան, խորտակչին զատանայ ընդ ոտիւք մե-  
րովք վաղապէս. զի զխաղաղութիւնն իւր ձիրեաց մեզ 20  
Քրիստոս յետ ի մեռելոց յարութեան իւրոյ: Եւ Աստուածոյ  
տուն է եկեղեցի Քրիստոսի, զի եկեղեցւոյն Աստուածոյ՝ ելոյ  
ի Կորինթոս, անդէն թղթաւորէ քարոզն ճշմարտութեան.  
քանզի Քրիստոս խաչեցաւ զան ամեննեցուն մեր և ամե-  
նեկեան եմք Քրիստոսի, և ինքն ամեննեցուն է Տէր. քանզի 25  
Գնոց զնիցաք<sup>9</sup>, և ոչ եմք ինքեանց: Պատմեաց իսկ Կորըն-  
թացւոց Պաւղոս զկայութիւնն Աստուածոյ՝ զխաչն Քրիս-  
տոսի, և զայս միայն որոշեաց դիտել ի նոսա՝ զՅիսուս Քրիս-  
տոս, և զա խաչեցեալ. և Տէր գիտէ փառաց զխաչեցեալն  
մարմնով՝ իրը Աստուած<sup>10</sup>. և Հիմն այլ ոչ ոք կարէ քան 30  
զկացեալն զնել, որ է Յիսուս Քրիստոս<sup>11</sup>, ճշմարիտն Աս-  
տուած և կենդանութիւն յաւիտենական<sup>12</sup>. քանզի նովաւ  
մեք բագին Աստուածոյ կոչեցաք՝ հոգւով նորա<sup>13</sup>, գալոց  
ըստ ժամանակա՝ փառաւք իւրոյն Հաւը և լուսաւորչի զի՞ա-

199r.

199v.

<sup>1)</sup> Մատթ. Խ. 31, հմմ. Փ. 27.    <sup>2)</sup> Հոռվմ. Փ. 9.    <sup>3)</sup> Հմմ. Հոռվմ Փ. 8.    <sup>4)</sup> Մատթ. Խ. 18.    <sup>5)</sup> Հմմ. Հոռվմ. Փ. 9.  
<sup>6)</sup> Հմմ. Բ. Կորնթ. Գ. 4—5.    <sup>7)</sup> Հմմ. Փիլիպ. Գ. 3.    <sup>8)</sup> Հոռվմ.  
Ճ. 16.    <sup>9)</sup> Հմմ. Ա. Կորնթ. Զ. 20.    <sup>10)</sup> Հմմ. Ա. Կորնթ.  
Բ. 2. 8.    <sup>11)</sup> Հմմ. Ա. Կորնթ. Գ. 11.    <sup>12)</sup> Հմմ. Ա. Ցովհ. Ե.  
20.    <sup>13)</sup> Հմմ. Ա. Կորնթ. Գ. 17.

քըստինս խաւարի և յայտնչի զխորհուրդս սրտից<sup>1</sup>, և զգովութիւն և զանգուանումն ըստ արժանաւորութեան իւրաքանչիւրում արդարապէս հատուցաւղի. զի Աստուած է դատաւոր արդար և հարուստ և երկարովի<sup>2</sup>. քանզի մնոյ 5 մի Տէր Յիսուս Քրիստոս<sup>3</sup>, որով ամենայն եղե, և առանց նորա եղե և ոչ մի<sup>4</sup>, եւ Տէր է բոլորնեցուն և ընդ մարմոյ Աստուածոյն Բան, յորժամ կոչի և Յիսուս

Զի՞նչ առ այսոսիկ ասեն երկարնականքն, ո՞րք ապրիլ երկաքանչիւրում բնութեանն Քրիստոսի և զյատուկան և 10 զյարմարականսն ազանդեն. որք և շարընթանալ զբնութիւնսն ասեն մինչ ց'այս վայր, իբր ոչ եղելոյ մարմնոյ Բանին, և ոչ ելոյ Տեառն վառաց ըստ բնութեանն խաչեցելոյն վասն մեր իւրով մարմնովն Քանզի նոր աւրէն է Քրիստոսի երանելին Պաւլոս, և աւրէն ունի Աստուածոյ զՔրիստօր. 15 ատոսին աւրէնն, և ոչ է ախաւրէն Աստուածոյ. եկեղեցի քարոզէ Աստուածոյ զՔրիստոսի եկեղեցին. և ոչ ոք կարէ ասել Տէր զՅիսուս, եթե ոչ ի Հոգին Սուրբ<sup>5</sup>, Հոգւով Աստուածոյ և Հոգւով Տեառն Յիսուսի Քրիստոսի. ինքն իսկ է իմաստութիւն և արդարութիւն՝ սրբութիւնն մեր, և ի բաց 20 փրկանաւորութիւն՝ իւրով արեամբ փրկանաւորեալ զնու երկնաւս, իբր Աստուած և ընդ մարմնոյ, Վկայէ իսկ, զի ինքն է հոգեկան վէմ<sup>6</sup> արբուցքին զիսրայէզ Քրիստոս. արդարացաք իսկ անուամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և Հոգւով Աստուածոյ մերոյ<sup>7</sup>. քանզի երկնային բայ 25 յայսոմ տեղւոջ վկայի: Եւ յորժամ եղե ըստ մեզ, և վասն զի մնաց անյեղի ըստ բնութեան իբր Աստուած և ընդունիչ զնուրա պատկերն, այս է զՈգին նորա, ունի և զՈրդին յինդեան և նովաւ զՀայրն, Վասն այսորիկ ասէ Վարդապեսն եկեղեցւոյ. «Զի սէրն Քրիստոսի շարունակէ զմենդ. եթե մին վասն ամենեցուն մեռաւ, արդեւք ամենեքեան մեռան, և ի վերայ ամենեցուն մեռաւ, զի կենդանիքն ոչ ևս ինքեան կէցեն, այդ ի վերայ ամենենեցուն մեռուցելոյն և յարուցելոյ»<sup>8</sup>: Վկասն որոյ և յառ Հոովմայեցիս թղթին ասէր. «Ո՞ զմենդ որոշեաց ի սիրոյն 30 Քրիստոսին<sup>9</sup>, և ըստ միոջէքն: «Բանզի վասն մեր աղքատացաւ՝ փարթամ ելով, զի մեկ նորա աղքատութեամբն

<sup>1)</sup> Հմմտ. Ա. Կորնթ. Դ. 5.      <sup>2)</sup> Հմմտ. Սաղմ. Է. 12.

<sup>3)</sup> Հմմտ. Ա. Կորնթ. Ը. 6.      <sup>4)</sup> Հմմտ. Յովհ. Ա. 3.      <sup>5)</sup> Հմմտ.

Ա. Կորնթ. Ժ. 3.      <sup>6)</sup> Հմմտ. Ա. Կորնթ. Ժ. 4.      <sup>7)</sup> Հմմտ. Ա.

Կորնթ. Զ. 11.      <sup>8)</sup> Հմմտ. Բ. Կորնթ. Ե. 14—15.      <sup>9)</sup> Հոռոմ. Ը. 35.

փարթամասցուքը<sup>1</sup>. և մի ևս համարձակեալք իցեւէք յինքեանս, այդ ի նա, իբր յԱստուած՝ յարուցիչն ըզմեռեալս, որ յայգանից մահուանց փրկեաց զմեզ և փրկեացէ. յոր յուսացաքն, և եթէ տակաւին փրկեացէ, որպէս եատայն Պաւղոս<sup>2</sup>, բարեխաւսեն իսկ և յաղագս Քրիստոսի, իբր 5 Աստուծոյ մաղթաւղի ի ձեւն նոցա՝ նորին Քրիստոսի, յայտ եթ՛ ասաւղի՝ «Լսաւղն ձեզ ինձ լսէ և արհամարհաւղն զձեղ զիս արհամարհէ»<sup>3</sup>. որպէս և առաքեալ վկայէ առելով. «Եթէ փորձութիւն խնդրէք զյինն խաւսողի Քրիստոսի՝ 4: Սպասաւորք իսկ ևին Քրիստոսի և պատմիչք նորա 10 յամենայնի՝ առաջակայս դործելով զինքեանս, իբր Աստուծոյ պաշտաւնեայք, ի համբերութեան յոլովի վասն Քրիստոսի, գերելով զամենն իմացմունս առ լսաւորութիւնն Քրիստոսի: «Պաւղոս իսկ, ասէ, առաքեալ հչ ի մարդկանէ և հչ մարդով, այդ Յիսուսիւ Քրիստոսիւն Աստուծով Հարամի՝ 15 201r. յարուցաւղի զնա ի մեռելոց»<sup>5</sup>: Իսկ յատուկ աստուածայնուոյ բնութեանն՝ առաքեալս ընտրել և զոյգս ներգործել Աստուծոյ և Հաւր, և ոչ երկնի կարգաւորութեան առընդունել. այդ ոչ զՅիսուս Քրիստոս անունն և ոչ յառնելն ի մեռելոց, յորժամ արտաքոյ իմանայցի թափման չափոյն: 20 Ի՞բր արդեւք կար դոլ, ասեն ամպարշտաբար երկաբնականքն՝ ապրիլ երկաբանչիւրում բնութեանցն զյատուկան. քանզի ոչ վայել է ծառայել զառաքեալսն, եթ՛ ոչ ըստ բնութեանն Աստուծոյ. ծառայեն իսկ Քրիստոսի. յայտ եթե մի բնութիւն է Աստուծոյն Տանի մարմնացեալ:

Իսկ եթե աւրինիւ մեռաւ ի ձեւն աւրինիւ, զի Աստուծով կէցէ, և Քրիստոսի խաչակցեաց առաքեալն<sup>6</sup>, և շարունակիլ<sup>\*</sup> զմեզ ուստուցանէ ի սիրոյն Քրիստոսի<sup>7</sup>, վայելուչ գոլ ասէ զամենեսեան մի ևս յինքեանց կեալ, այդ վասն մեր մեռուցելումն և յարուցելումն Քրիստոսի: Ասէ 30 իսկ՝ «Քրիստոսի խաչակցեցայ, զի Աստուծոյ կեցից»<sup>8</sup>. Աստուած յայտնապէս քարոզէ զԽաչեցեալն վասն մեր իւրով 201v. մարմնով և զայդազգապէս զնա քարոզաւղսն նզովէ, և եթե հրեշտակ յիրկնուստ համարձակեացի զայս առնել<sup>9</sup>: Ի՞բր արդեւք զյատուկս բնութեանց ի բաց ապրեցուցանել 35

\* ) Լուսանցքում՝ «սովի(պիլ)»

<sup>1)</sup> Բ. Կորնթ. Ը. 9.      <sup>2)</sup> Հմմտ. Բ. Կորնթ. Ա. 10—11.

<sup>3)</sup> Ղուկ. Ժ. 16.      <sup>4)</sup> Բ. Կորնթ. ԺԴ. 3.      <sup>5)</sup> Գաղ. Ա. 1.

<sup>6)</sup> Հմմտ. Գաղատ. Բ. 19—20.      <sup>7)</sup> Հմմտ. Բ. Կորնթ. Ե. 14.

<sup>8)</sup> Հմմտ. Գաղատ. Բ. 19—20.      <sup>9)</sup> Հմմտ. Գաղատ. Ա. 8—9.

կարեն երկարնականքն, յորժամ Աստուած քարոզի խաչեցեալ, և գվասն մեր մեռուցելումն և յարուցելումն կեամբ, իբր Աստուծոյ հլոյ ըստ բնութեան և մարմնովն. քանզի մանկածու մեր եղի աւրէնն, առ ի ճանաչել և հաւատալ 5 Քրիստոսի<sup>1</sup>. և ծանեաք ածելով զնա, մանաւանդ իսկ ծանուցաք ի ն(մ)անէ, և պարծիմք ոչ այդապէս, եթ՛ ոչ ի խաչին Քրիստոսի<sup>2</sup>: Զի եթե ըստ յաւծարութեան զամենայն ներգործաւղի Աստուծոյ յառաջագոյն սահմանեցաք նախայուսակք Քրիստոսիւ, առ ի զոլ զմեզ ի գովութիւն 10 փառացն Հաւր, իսկ յատուկ անուն Որդւոյն Աբրահամու և Դաւթի Քրիստոսն Յիսուս, և նախ յուսացա Քրիստոսիւ. «Յուսացաք իսկ, ասէ, Աստուծով կենդանեաւ և ճշմարտիւ, որ է Փրկիչ ամենայն մարդկան, մանաւանդ հաւատացելոց»<sup>3</sup>: Քանզի յատուկ է այս աստուածային բնու-

## 202r. 15 թեան:

Ի՞ր ոչ ամպարշտն, որք զյատուկս բնութեանց բաժանել կարծեցեալք զնախայաւիտենին Աստուծոյն Բանի և զՈրդւոյ Կուսին յետ միաւորութեանն, որպէս ինքեանք ասեն, իմաստնագոյն կարծելով խոհեկ և քան զնոյն Աստուած՝ վկայիչն իւրում Որդւոյն: Քանդ' եթ՛ ըստ ներդործութեան բնութեան հարստութեան իւրոյ Հայրն «յարոյց զ' նՔրիստոսի մեռելոց և նստոյց զնա յաջմէ իւրմ՛ յերկնայինս, գեր ի վերայ ամենայն պետութեան, և իշխանութեան և կարութեան և տերութեան և ամենի անուան 25 անուանելոյ, ոչ միայն ի յաւիտենիս յայսմ, այդ և ի հանդերձելումն. և զամենայնն հնազանդ արար ընդ ոտիւք նորա, և զնա եղ գլուխ գեր զամենայն եկեղեցւոյ, որ է մարմին նորա, լրումն՝ զամենայն յամենայնի լնաւզ»<sup>4</sup>, որում բնութեան յարմարեն երկարնակքն զ' ի մեռելոց 30 յառնել և որում բնութեան զաթոռակիցն զոլ Հաւր, և 202v. զգեր ի վերոյ ամենայնց համանգամայնց արարելոց, և զամենայն հնազանդեկ նմա զՀայրն ընդ ոտիւք. ասացեն, եթե կարեն Արդ՝ եթ՛ ասեն Աստուծոյն, իբր մեռաւ և յարեաւ. ի մեռելոց և զըստ բնութեանցն յատուկ քարոզի. 35 իսկ եթե մարդոյն ասեն, իբր հանգիտապատիւ իւր կացուցանէ Հայրն զայսապիսին, ասաւղն եթե՝ «Զիմաս իմ այդում ոչ տաց»<sup>5</sup>: ի՞ր իսկ զվայելուչ արժանաւորութիւնն ըստ բնութեան Որդւոյ թողացուացէ և չորհիցէ

<sup>1)</sup> Հմմտ. Գաղատ. Պ. 24.    <sup>2)</sup> Հմմտ Գաղատ. Պ. 14.    <sup>3)</sup> Ա. Ցիմոֆ. Պ. 10.    <sup>4)</sup> Եփես. Ա. 20—23.    <sup>5)</sup> Եսայի ԽԲ. 8.

Հայրն մարդոյն բնութեան, արտաքսացուցեալ թերես ուրեմն զըստ բնութեանն Որդի յիւրմէ աթոռոյն և տերութեան։ Այդ այսոքիկ ամպարշտացն մտածութիւնք։ Մի ուրեմն բնութիւն Աստուծոյ Բանի մարմնացեալ. և յամննայնում իսկ յաստուածավայելուչ և ի մարդկայինս բանս 5 իսկ և ախտակրութիւնս զնոյն յաւդաւորելով ի դիտաւորութիւն՝ զերկաբնականացն անմտութիւն յայտակս ամենեցուն կացուացուք, ի ձեռն կարութեան աստուածային 203r. գրոյ։ Քանզի եալքն երբեմն առանց Քրիստոսի անաստուածք եին յաշխարհ։ իսկ եղեալք հուապ արեամբն Քրիս- 10 տոսի, ոչ ես աւտաքը ելով և պանդուխաք, այդ քաղաքակիցք սրբոցն և ընտանիք Աստուծոյ<sup>1)</sup>։ Աղաւթէ իսկ յարածդապէս առաքեալն՝ կարութեամբ հարստանալ զմենզ հոգւով նորա և զ' ի ներքս մեր մարդն բնակել զՔրիստոս ի սիրտս մեր՝ զաս ի նայն հաւատով<sup>2)</sup>։ Քանզի «Եղ Տէր, 15 մու հաւատ և մի մկրտութիւն»<sup>3)</sup>։ Ոչ երկու բնութիւնք Տէրն և ոչ երկու դէմք, այդ եղ Տէր. քանզի վայր եկեան յերկնուատ Աստուածն Բան ինքն է և վերանցեալն մարմնանալով՝ գեր ի վերայ ամենայն երկնից, զի լնուցու զամենայն։ Քանզի լինել զմենզ հրամայէ քատակիչս Աստու- 20 ծոյ, իբր համբակս սիրելիս, և զնալ սիրով՝ նմանեալ զՔրիստոս, զբարեբաննալն Աստուած, որպէս Քրիստոս սիրեաց զմենզ և զինքն աստուեաց վասն մեր ընծայ և զոհաւորութիւն Աստուծոյ՝ ի հոտ անուշութեան»<sup>4)</sup>.

Եւ եթե սոսկ մարդ մատնիչն զինքն վասն մեր, իբր 25 քատակէ Աստուծոյքատակիչն զնա. այդ և ոչ ոք ի 203v. մարդկանէ առատալ զինքն կարէ և ընծայ և զոհաւորութիւն լինել Աստուծոյ՝ ի հոտ անուշութեան, գեր ամենայն մարդկութեան։ Իսկ եթե մերկ Աստուած, իբր մեռանի, այդ իւրով մարմնով կրեաց վասն մեր Եմմանուէզն, և մի բնու- 30 թիւն է Աստուծոյն Բանի մարմնացեալ Քրիստոսն։ Քանզի «Ամեն, ասէ, գէջ և անմաքուր և աւելաստացու ոչ ունի ժառանգութիւն յարքայութեանն Քրիստոսի և Աստուծոյ»<sup>5)</sup>։ Վասն այսորիկ խնդայ առաքեալն Քրիստոսի աւետարանեցելոյ յազգս, եթե պատճառանաք և եթե ճշմարտու- 35 թեամբ, և զայս զիտել պատահել նմա առ վիրկութիւն ի ձեռն յաջողութեան Հոգւոյն Յիսուսի Քրիստոսի, «Որ ի

<sup>1)</sup> Հմմա. Եփես. Բ. 11—19.

<sup>2)</sup> Հմմա. Եփես. Դ. 17.

<sup>3)</sup> Եփես. Դ. 5.

<sup>4)</sup> Հմմա. Եփես. Ե. 1—2.

<sup>5)</sup> Եփես. Ե. 5.

կերպի Աստուծոյ ելով, ոչ յափշտակութիւն համարեցաւ  
զդոլն հանգէտ Աստուծոյ, այդ զինքն թափեաց՝ կերպ  
ծառայի առեալ, ի նմանութիւն մարդկան եղեալ և ձեռվ  
դտեալ իբր մարդ. նուաստացոյ<sup>(g)</sup> զինքն՝ եղեալ հաւան  
5 Հաւը մինչ մահու, մահու իսկ խաչի, Սակս որոյ և Աս-  
204r. տուած զնա գերաբրածրեաց և չնորհեաց նմա անուն,  
զգեր ամեն անուն. զի և անուամբ Քրիստոսի Յիսուսի  
ամենայն ծունր կորասցի՝ երկնայնոց, երկրայինց և սան-  
դարամնտականաց\*, և ամեն լեզու արտաքս խոստո-  
10 վանեսցէ Քրիստոսի<sup>1</sup>: Քանզի ինքն էր էսայեաւ ասաւզն  
նախ իւրոյ մարմնաւորութեանն. «Կեամ ես, ասէ Տէր,  
զի ինձ կորասցի ամեն ծունր և ամենայն լեզու խոստո-  
վանեսցի Աստուծոյ ասելով. արդարութիւնք և փառք առ  
նա եկեսցեն»<sup>2</sup>:

15 Իսկ եթ' երկու բնութիւնք Քրիստոսի և իւրաքան-  
չիւր ապրի իւր յատկութիւնն, յատուկ Աստուծոյ երեխ  
քարոզիլն յազգս և Սուրբ Հոգին և ի կերպին Աստուծոյ  
գոյ, և զանձեն և զանմարմինն. այդ սա ինքն հանգէտ  
ելով ըստ ամենայնի Աստուծոյ և Հաւը, թափեաց զինք՝  
20 տնաւրինաբար եղեալ մարդ, ի ձեր և ի բարդութեան ան-  
դամոց մարդկայնոց՝ զինքն ունելով ըստ բնութեան, իբր  
Աստուած անթափելի, Եւ յորժամ եղեն մարմին և նուաս-  
տացոյց զինքն, մինչ մահու եղեալ հաւանական Հաւը, քանզի  
204v. ոչմարդ ելով Քրիստոս՝ յափշտակեաց զդոլն հանգէտ Աստու-  
25 ծոյ, այդ Աստուած ասելով ըստ բնութեան և հանգէտ ծնաւ-  
զին Հաւը, թափեաց զինքն և եղեն մարմին Բանն, մնալով  
որպէս էրն, և նուաստացոյց զինքն, եղեալ հաւանական Հաւը  
մինչ մահու: Եւ վասն զի զինքն թափեալ և նուաստա-  
ցուցեալ ասի, ոչ ուրուք յայս բռնադատաւզի զնա՝ իբր ի  
30 ծառայականս եղեալ չափս տնաւրինաբար, սակս այսորիկ  
ասէ՝ «Աստուած գերբարձրեաց», և ըստ միոջէքն: Նման իսկ  
այս յաւետարանս ասացիլում ի նոյն ինքն ի Տեսառնէն.  
ասէ իսկ առ ըստ բնութեան իւրն Հայր. «Ես զքեզ փա-  
ռաւորեցի ի վերայ երկրի, զդործն կատարեալ, զոր ետուր  
35 ինձ՝ զի արարից. և այժմ փառաւորեա զիս, դու Հայր,  
առ քեզ ինքին փառաւքն, զոր ունեի՝ նախ քան զաշ-  
խարհ գոյ առ քեզ»<sup>3</sup>:

\*.) Հուսանցրում՝ «վայլը սանդուածականից».

<sup>1)</sup> Փիլիպ. Բ. 6—11.      <sup>2)</sup> Խոսյի Խե. 23—24.

<sup>3)</sup> Ցուցի.

Արդ՝ վասն զի մարտին հաստատեցաւ նմա հաճութեամբ Հաւը, և եկն առնել գկամս Հաւըն և զդործն կատարեաց, եղեալ հաւանական իւրումն Հաւը մինչ մահու, 205r. և փառաւորեաց ի վերայ երկրի երեսալ զիւրն Հայր, սակա այսորիկ և Հայր զնա փառաւորեաց, զոր ունէր փառաւքն 5 նախ հիմնանալոյ աշխարհիս, ելով ի կերպի և ի հանգիտութեան Հաւըն, և գերբարձրեաց զնա՝ փառաւորեալ զիւրն Որդի և ընդ մարմնոյ, և յայտնեաց զնորա անուն մարդկան և ի Յորդանան և ի լերինն՝ զՈրդին. յայտէ(?)

թե սակա որոյ և ասէր Հայրն առ իւրն Որդի. «Եւ փա- 10 սաւորեցի, և դարձեալ փառաւորեցից<sup>1)</sup>. այս է՝ երևեցուցից, կամ եթե բացածածկեցից, եթ՝ Աստուած գոս և ընդ մարմնոյ, Քանզի և Որդին այսպէս փառաւորեաց զիւրն Հայր, քարոզեալ և երեսուցեալ զնորա անուն մարդկան՝ հաւատացելոցն ի նա: Քանզի որպէս Հայրն եասաց. «Եւ 15 փառաւորեցի և դարձեալ փառաւորեցից», այսպէս և Որդին ասէր յաղագս աշակերտացն՝ «Եւ ծանուցի նոցա զանուն քոն ծանուցից<sup>2)</sup>. քանզի ում կամի Որդին բացա- 205v. յայտէ զիւրն Հայր, ըստ որում և Հայրն զՈրդին:

Իսկ եթե զկամաւոր զթափումնն և զնուաստութիւնն 20 և զրարձրութիւնն մարդոյ բնութեան յատուկ դոլ ասեն երկարնականքն, իրը սա ի կերպի Աստուծոյ գոյր, յորմէ բարձրութենէ թափեաց զինքն աստուածավայելուչ փառաւաքն յամննեցունց պատուեալն: Ի՞ր իսկ առնուլ ասի ծառայի կերպ, եթ՝ այս զոյր, և ի՞ր ի նմանութեան մարդ- 25 կան եղե և ի ձեռւմ իրը զմարդ, այսպիսի զոլով բնութեամբ մարդ, ըստ երկարնականացն բանի: Յափշտակեաց իսկ մանաւանդ զգոյն հանգէտ Աստուծոյ. քանզի եթե նուաստացոյց զինքն, իրը իսկ յատուկ իւրոյ բնութեանն ապրին այսքանւոյս գերբարձրացելոյ, որում չնորհեաց Աս- 30 տուած զմիայնումն վայելչականս Աստուծոյն Բանի և Որդւոյ Հաւըն Մէնածնի. զի եթե այսպէս պարտ հաւատալ, մանաւանդ իսկ ամպարչուել, զիւրն Որդի ուրեմն պակա- 206r. սեցոյց Հայրն յաստուածավայելչից արժանաւորութեանց և անուանէ, զնորայն փառս ետ միւսում, չնորհելով նուա 35 անուն՝ զգեր ամեն անուն և զերկրպագութիւնն:

Յայսքանս այսուհ(ետ)ի հայնոյութիւնս զառածանին որք երկուս բնութիւնս ասեն զմին Քրիստոս. իսկ մեք, որպէս ուսաք, մի խոհիւմք Աստուծոյն Բանի բնութիւն

1) Յովհ. ԺԲ. 28.

2) Յովհ. ԺԷ. 26.

մարմնացեալն զմին Տէր Յիսուս Քրիստոս. քանզի «Հայր առաքեաց զիւրն Որդի յաշխարհ, ոչ զի դատիցի զաշխարհ»<sup>1</sup>, այդ զի ապրեսցի աշխահ նովաւ»<sup>2</sup>. քանզի առաքեցեալն յաշխահ արտաքոյ աշխարհ ամենայնիւ պատահեաց գոլ՝ նախ հիմնարկութեան աշխահի, և փառ ունէր առ Հաւր զատուած ավայնլուցն. իսկ եղև և ի կնոջէ և ընդ աւրինիւ<sup>3</sup> աւրինադիրն, իբր Աստուած, զի ըստ ամենայնի եղբարց նման իցէ<sup>4</sup>, թանց մեղաց, ի կերպի Աստուածոյ եալն և գծաւորութիւն ենթակացութեանն Հաւր<sup>4</sup> 10 և Մէնածին Կատուած վկայեալ և յորժամ եղև մարմին Բանն, ըստ աստուածայինս գրութիւնս|

206v. Արդ՝ վասն զի բնութիւն ասացաւ կամ եթե գոյացութիւն մի ամենայնի համանգամայն մարդկութեանն, որպէս մալին և մալեցաւն՝ բնութեան մարդկայնւոյ, այս է 15 սեռի մարդկան, հնաղանդեցաւ ամեն սեռ գաղանաց և թռչնոց և սողնոց և ծովայնոց<sup>5</sup>: Ասի իսկ և ըստ միում մարդ բնութիւն գարձեալ մարդոյ, կամ եթե գոյացութիւն հասարակական մարդոյ, զի կատարեալ յանձնէ բանականէ և ի մարմնոյ աւարտեցաւ ամենայն մարդ՝ շի-20 նեալ յԱստուածոյ, ի հոմանունութենէ ըստ բնութեան բուլորին և իւրաքանչիւրոյ մարդոյ բնութեանն: Յանկարծակի յափշտակել թուին երկարնականքն զպարզագոյնս՝ երկուս բնութիւնս ասաւղքն զմին Տէր և Աստուած զՅիսուս Քրիստոս:

25 Այդ վասն զի ոչ ունէր ենթակացութիւն կամ շարժութիւն իմն մարմին Աստուածոյն Բանի. որ կամաւորապէս ի մարդասիրութենէ զինքն թափեալ և հաւասարաւզին նմանապէս մեզ արեան և մարմնոյ՝ ոչ իսկ մարդ բացակատարեցաւ հասարակական ըստ ինքեան առան-30 ձինն և ըստ մասին, որպէս ըստ միում մեր մարդ կենդանի բացակատարի բանական յանձնէ և ի մարմնոյ: Այդ Աստուածն Բան մարմին եղեւ, կամ եթե մարդ ճշմարտապէս, տնաւրինաբար, մնալովն Աստուած անյեղի ըստ բնութեան. սակա այսորիկ և ոչ բնութիւն մարդոյ 35 հասարակականի և ոչ գոյացութիւն ասացաւ ներանձնաւորն և անկիրարկեալ մարմինն Եմմանուէզի, այդ մարմին Աստուածոյն Բանի ասացաւ. զի ոչ ենթակացեաց ըստ ինքեան, որպէս նախասացաւ, և ոչ եղեւ բնութեամբ մարդ,

<sup>1)</sup> Ցով. Պ. 17.      <sup>2)</sup> Հմմա. Դադատ. Պ. 4.      <sup>3)</sup> Հմմա. Երբ. Բ. 17.      <sup>4)</sup> Հմմա. Երբ. Ա. 3.      <sup>5)</sup> Հմմա. Եննդ. Ա. 28.

որպէս ամենայն մարդիկ հասարակականք արուեստագործիմք յԱստուծոյ, և յայնժամ յարակցեաց ունակապէս Աստուծոյն Բանի: Քանզի հասարակականէ մարդկութենէ, կամ եթ' ի բնութենէ և գոյացութենէ մարդկան՝ մարմնացաւ անյեղապէս և անխառնաբար Աստուծոյն Բան, և եղի 5 մարդ տնաւրինաբար. սակա որոյ և նոյնաբանութիւն հո-  
մասէր և հոմագոյ մարդկան և եղրայր ասի ըստ մարմնոյ,  
որպէս ելով ինքն հոմագոյ Հաւր և մշտնջենաւրակից ըստ  
բնութեան, իբր Աստուած ելով ի վերայ ամենեցուն և բա-  
րերանեալ յաւիտեանս<sup>1)</sup>:

207v.

10

Քանզի այս մեզ ամենայն ուրեմք զեկուցանի ի ձեսն  
առաջածութեան ըստ մարմնոյն, որ նշանակէ զտնաւրէ-  
նութեանն նորա Բան՝ ըստ բնութեան գոլոյ Աստուած. ոչ  
իսկ բնութիւն և ոչ գոյացութիւն հասարակական ուրումն  
մարդոյ և միոյ ըստ մեզ ասի պատուական նորա մարմինն, 15  
որպէս նախասացաւն: Զի և ոչ ենթակացեաց զըստ ին-  
քեան կացին, և յետ այտորիկ յարակցեաց ունակապէս Աս-  
տուծոյն Բանի: Քանզի զայս իոնհելով Նեստորիոս և երկա-  
բնականքն՝ երկուս բնութիւնս անուանեն զմի Տէր մեր  
Յիսուս Քրիստոս, իբր աստուածայնոյ բնութեանն յա-  
րակցելոյ կատարեցելում բնութեանն մարդոյ, որպէսին-  
քեանք ասեն: Խակ մեզ հետեանալով դիտաւորութեան աս-  
տուածայնոյ գրութեանն և սրբոցն վարդապետաց եկե-  
ղեցւոյ, նզովեմք զասաւզոն երկուս բնութիւնս կամ եր-  
կուս գոյացութիւնս Քրիստոսի: Քանզի ոչ բնութիւն Քրիս-  
տոսի ասի ըստ անաւրէնութեան անճառապէս միաւորեալ  
նմա մարմին իւր ի սրբոյն կուսէ օակա մերոյն փրկու-  
թեան, այդ պատուական մարմին Աստուծոյն Բանի ասի  
և հաւատանայ և է ըստ ծշմարտութեան. քանզի յատուկ  
իւր եղի մարդկայինն տնաւրինաբար, առանց մեղաց: Խակ 30  
բնութիւն երկրորդ Աստուծոյն Բանի կամ գոյացութիւն  
նորա ոչ կարի կոչիլ կենարար ինքեան Տեառնն մարմին:  
Քանզի ախտակրեալ գրեցաւ իւրով մարմնով խաչե-  
ցեալ Տէրն փառաց, և ոչ ոք կարէ ասել, եթ՛ ախտա-  
կրեաց իւրով բնութեամբն կամ գոյացութեամբ Տէրն 35  
փառաց: Խակ եթ՛ բնութիւն միւս իւր եարար Աստուծոյն  
Բան, կամ եթէ զմարդ կատարեալ շարայարեաց ինքեան  
և երկու բնութիւնք է Քրիստոս, որպէս երկաբնականացն  
208v.

<sup>1)</sup> Հմմա. Հռովմ. թ. 5.

թուի, գտանին ասելով ընկեանվ յիւրն բնութիւն զնա  
ախտակրեալ, որ է ասել ամպարիշտ, և ախտակրելի ըն-  
քեանվ զաստուածային բնութիւնն գտանին ասաւզք:  
Քանզի բնութիւն Գրիստոսի միայն աստուածութիւնն  
5 կաւ.\* Կթի մարմնացաւ անյեղապէս սակս մերոյն փըր-  
կութեան, զի և երեսացի ի մարմնի և կրեսցէ մարմնով.  
ըստ աստուածայինս զրութիւնս: Քանզի ոչ հասարակա-  
կան մարդ ի մարմնի ասի երեսալ, կամ կրեալ մարմնով.  
քանզի բոլորն, կենդանին, բանաւոր մարդն մարմին ասի՝  
10 յաստուածայնում զրութեան. և իբր ածելով ըստ բնու-  
թեանն Գրիստոս՝ մարմնով կրեալ ասացաւ: Քանզի էր  
ինքն անախտակիր ահա իբր Աստուած ըստ բնութեանն,  
իսկ ախտակրելի տնաւրինաբար. ըստ որում ևղե մար-  
մին բանն և միաց Աստուած:

15 Քանզի երանելիք հարքն մնր զմին Տէր Յիսուս  
Գրիստոս Աստուած խոստովանեցին ճշմարիտ և կենդա-  
209r. նութիւն յաւիտենական<sup>1</sup>, և միում մարմնացելում անյե-  
ղապէս Աստուածոյն: Բանի և եղելոյ ըստ ճշմարտութեանն  
մարդոյ, հանդերձ մնալով որ էրն, առբաշխեն յամենայն  
20 ժամ զաստուածայինս և զմարդկայինս: հչ ուրեք բաժա-  
նելով զնա յերկուս բնութիւնս և հչ զյատուկս և զվայել-  
չականս երկաքանչիւրում բնութեանն առբաշխեն յետ  
ըստ ևնթակացութեանն անճառ միաւորութեանն Եմմա-  
նուէդի: Քանզի որպէս խոնկցաւզի Աստուածոյ առաւ ի կո-  
25 զէն Աղամայ և եղե կինն, այսպէս և երկրորդ Աղամ, այս  
է Գրիստոս<sup>3</sup>, յանապականէ և յանազտէ մարմնոյն կուսի  
մարդ եղե՝ մնալով Աստուած: Քանզի սաղմնառեցաւ ի  
կուսական արդանդին անճառաբար և անպարիմացապէս,  
որպէս միայն գիտէ ինքն, և մարմնանայր ի նէմա, Աս-  
30 տուած ելով Բան, և հաւատացուցանէր զկամաւոր ի թափ-  
մանն և տնաւրէնութեանն, եթե մարդ եղե՝ մնալով Աս-  
տուած: Խննամսեայ ամանակաւ սաղմնազգեցութեանն  
209v. ծնանիւրի սրբոյն կուսէ, և զկուսութիւնն հչ ապականեաց,  
զի Աստուած էր՝ անապականելի մարմնով ծնիցեալ. որ և  
35 զրացն փակեցելոց ի ներքս եկեալ և ճեմեալ իբր ի յա-  
տակի ի վերայ ծովու, իբր Աստուած, և երեսցաւ զ' ի վե-  
րայց երկրիս, եթե եղե մարդ ըստ ճշմարտութեանն:  
և յանձարրապատիւր և ի մսուր կողմանիւր, զի մարդ

\*) Կամ (?).

1) Հմմա. Ա. Ցովհ. Ե. 20. 2) Հմմա. Ա. Կորնթ. Ժե. 45. 47.

եղանիւր. երկրպագիւր իսկ ի հովուացն և ի մոգաց, և փառաբանիւր յերկնայինց զաւրութեանց հրեշտակացն, զի Աստուած էր»:

«Մկրտիւր ի Յովաննէ, զի մարդ եղե. սրբէր իսկ զջուրս և ճանաշիւր ի Յովաննէ, զի Աստուած էր»: 5

«Աւեծանիւր զառ ի նայն վայրեկութեամբ Հոգւոյն Սրբոյ, զի մարդ եղե. իսկ վկայիւր յԱստուծոյն և ի Հաւրէ, զի Աստուած էր, հոմազոյ Աստուծոյ և Հաւր»:

«Փորձիւր ի բանսարկուէն, զի մարդ եղե. իսկ յաղթէր զնա և սպասաւորիւր ի սրբոցն հրեշտակաց, զի Աստուած էր»:

«Ճեմէր առ ծովուն Գաղիղէայ՝ մարդ եղեալ. իսկ ընտրէր զՃինորսնն, հետեացեալս ինքեան, և եարար զնու սա որարդա մարդկան, քանզի Աստուած էր»: 210r.

«Նստի ի լերինն, մարդ եղեալ. իսկ երանէ և աւրի- 15 նազրէ զյցաւզս զառ ի նմանէ տուեալն աւրէն, քանզի Աստուած էր»:

«Պատախանէր բորստին լեզուով մարդկայնւով մարդ եղեալ. իսկ բացերեակի կամելովն միայն բժշկէ զաա՝ մաքրեալ զբորստութիւնն, քանզի Աստուած էր»: 20

«Խոստանայր հարիւրապետին հետեանալ նմա իբր մարդ և բժշկել նորա զմանուկն. իսկ բժշկէ սա և ի հեռուստ, և բայիւ մարդկայնով զկենդանութիւն նմա չնորհեաց, քանզի Աստուած էր»:

«Յարեալ մերձեցաւ զբանչին Պետրոսի ձեռամբ 25 մարդկայնւով՝ մարդ եղեալ. և բուժեաց զնէ, քանզի Աստուած էր»:

«Առաջարերեն նմա՝ մարդոյ եղելոյ, զամենայն չարապէս ունաղս, այդ բժշկէ զնոսսա ամենեսեան, քանզի Աստուած էր»: 30

«Առաջի գայ զրաւորականն հետեանալ խոստացեալ՝ իբր մարդոյ, այդ ճանաչէր զծածիոյթն նորա սրտին, քանզի Աստուած էր»:

«Ննջէր ի նաւին Որդին Դաւթի, այդ նախատէր զաշակերտսն ասաւզո՝ կորնչիմք<sup>1)</sup>, իբր դոյզնահաւատս, և 35 վերասաստէր ծովուն և հողմոցն, տիրելով հարստութեան ծովու և զտղութիւն կոհակաց նորա հանդարտեցուցանելով<sup>2)</sup>, և արտաքս ածելով հողմս ի գանձուց իւրոց<sup>3)</sup>, և

<sup>1)</sup> Մարկ Գ. 38., Մատթ. Հ. 25., Ղոկ. Հ. 24.      <sup>2)</sup> Հմմտ.  
Մաղմ. 22. 10.      <sup>3)</sup> Հմմտ. Մաղմ. ձկ. 7.

հաւաքելով զնոսա ի զողի<sup>1)</sup>, քանզի Աստուած էր և մարմուկնեա:

«Հարցանէր զդիւացն անուն Որդին Դաւթի, այդ ճանաչիւր և ի զիւացն Աստուածոյ Որդի և արտաքս հանէր 5 զայսոսիկ, քանզի Աստուած էր»:

«Առաջաբերեն Որդւոյն Դաւթի զանդամալոյծն՝ իր մարդոյ, այդ թողունմա զմեզմ՝ ի բաց բարձիչն անաւրէնութեան և մեղաց, մեղացս մերոց քաւելին, և հրամանաբար մարդկային լեզուաւ յարուցանէ զաա, քանզի Աս- 10 տուած էր»:

«Գնայր ընդ իշխանին, զի յարուացէ զնորա մանուկն՝ ի Դաւթայն ըստ մարմնոյ, որպէս մարդ. այդ յարումն 211r. քղանցի իւրոյ բժշկեաց|զարիւմանոսեալն և յարոյց մերձաւորութեամբ ձեռին մարդկայնոյ իշխանին զդուսար, զի 15 Աստուած էր»:

«Առաջաբերեցին դիւամետեալ և խուլ տեսանելում Որդւոյ Կուսին, այդ բժշկեաց զնա, զի Աստուած էր»:

«Գթայ յամբոխան իրր մարդ, այդ առաքեալս ընտրէ երկոտասաանս, և ձիրէ նոցա չնորհս բժշկութեանց և առաքէ 20 առ գիւտ կորուսելոցն ոչխարաց տան Խարայեղի, և նախաս զիանդերձեալսն գիտակն զամննայն նախ լինելութեան նոցա, քանզի Աստուած էր»:

«Հրամայելով սիրել զնա ի բոլոր սրտէ և անձնէ, գեր զնայր և զմայր և զամննայն ազգակցութիւն՝ նկեալն 25 ոչ քակել զաւրէնն, այդ լնուլա»:

«Առաքէ հարցանելով Ցոհաննէս առ մտահաճութիւն իւրոց աշակերտացն, քանզի ինքն ճանաչէր զնա՝ տակաւին ելով յորովայնի, և հարցանի իրր մարդ, և զմարդքն առածէ վկայ իւրոցն զործոց՝ երանեալ ասելով զոչն 211v. 30 դայթադիմակեալ ի նա<sup>2)</sup>, քանզի Աստուած էր»:

«Ասէր ունաւզին չոր զձեռնն՝ այս(?) ի մէջս<sup>2)</sup>, և հարցանէր զհրեայս բերանով մարդկայնով և լեզուով, և ձգել զգաւսն ձեռն հրամայէր մարդոյ լեզուով մարդկայնով, և արտաքս ձգեաց հաւանեալ արագապէս, քանզի Աստուած 35 էր հրամանատուն»:

«Եւ գիտէր զմտածութիւնս փարիսացւոց, զի Աստուածոյ այս յատուկ»:

«Հեռանայ յետ մահուանն Մկրտչին իրր մարդ, այդ բժշկէ բազմութիւն չարապէս ունաւզացն՝ բուժիչն զման-

<sup>1)</sup> Հմմտ. Առակ. 1. 4.

<sup>2)</sup> Հմմտ. Մոտթ. ԺԱ. 6.

բեալս արտիւ և կապիչն զբեկմունս նոցա, քանզի Աստուած էր»։

«Հարցանէր՝ քանիս ունիք հացս<sup>1</sup>, իբր մարդ, և բարեանեալ իրեկ ձեռովք մարդկայնովք, այդ փորձէր դՓիղիալպոս տնաւրինաբար, զի նէրա վլայ եզիցի պանչն. 5 քանզի գիտէր ինքն, զինչ հանդիրձեալն պատասխանել և զինչ հանդերձեալ առնելն. և երոյծ զբաղում ամբոխն զայն, և մացուցին, և զնոյն նշան երկրորդեաց, քանզի Աստուած էր և մարմնով՝ տուիչն ամենայն մարմնոյց։»

«Աղաւթէր ի լիրինն և ոտիւք մարդկայնով ճեմէր 10 212r. ի վերայ ջրոց. ի ձեռն աղաւթին և ոտիցն և ճեմնլոյն եցոյց, եթե մարդ եղի. այդ ինքն ցուցանիւր Աստուած՝ ճեմեալն իբր ի յատակի ի վերայ ծովու, եղիչն նմա սահման և փակու<sup>2</sup> և եղուով մարդկայնով հրամայէր Պետրոսի գալ առ նա զնացիւ ի ջուրան, այդ ապրեցուցանէ զսա ընկղմեալ, 15 քանզի Աստուած էր»։

«Առաքեալ զինքն ասէր քանանուհւոյն առ ոչխարս կորուսեալս տանն Խարայեղի<sup>3</sup>, իբր մարդ լսաւզն եղեալ իւրումն Հաւրն մինչ մահու<sup>4</sup>. այդ բայիւ մարդկայնով հրամայէր, և բուժեցաւնէրա դուսարն, քանզի Աստուած էր»։ 20

«Հարցանէ զաշակերտան՝ զ՞ զնա ասեն ամբոխն<sup>5</sup>, իբր մարդ, իսկ գիտէր զինչ հանդերձեալ իինք պատասխանել ինքեանք յազագս ի նայն հաւատոյ, զի հաստատիցէ զյերանելոյ Պետրոսէ ասացեալն, քանզի Աստուած էր»։

«Վերերթայ ընդ աշակերտան՝ լեառն՝ ոտիւք մարդ- 25 212v. կայնովք ուղևորելով, այդ վկայիւր յԱստուածոյ և ի Հաւրէ. զի Որդի էր սիրելի և նոյնագոյ Հաւր, քանզի Աստուած էր»։

«Դարձեալ զայ առ ամբոխն իբր մարդ և բայիւ հրամայէ, և արտաքս ել ոդին անխօս և խուլ ի լուսնաժետէն, 30 քանզի Աստուած էր»։

«Հարկս հատոց իբր մարդ, այդ աղատ վինք բացայտեաց՝ ի ձկանէ զայս հրամայէր տալ, քանզի Աստուած էր»։

«Ասէր Պետրոս թողեալ զամենայն և հետեւեալ Որ- 35 դւոյ մարդոյ մետասանիւքն<sup>6</sup>, և հարցանէր՝ զինչ վասն այ-

<sup>1)</sup> Հմմա. Մարկ. Զ. 38.    <sup>2)</sup> Հմմա. Յավբ. ԼԼ. 10.    <sup>3)</sup> Հմմա. Մատթ. ՓԵ. 24.    <sup>4)</sup> Հմմա. Փիլիպ. Բ. 8.    <sup>5)</sup> Հմմա. Մատթ. ԺԶ. 13., Մարկ. Հ. 27., Ղոկ. Բ. 18.    <sup>6)</sup> Մատթ. ՓԲ. 27. 28. Մարկ. Փ. 28.

սորիկ ձիրէ նոցա. իսկ Որդի Մարդոյ խոստացաւ նոցա զնախական և զգերափառան ձիրել ի հանդերձելում յաւիտենին, քանզի Աստուած էր»:

«Հավեցաւ ձեռամբ մարդկայն ւով առ չեղջ Որդւոյ 5 այրւոյն ի քաղաքի կոչեցելում նային, և հրամայէ երիտասարդին մարդկայն ւով ձայնիւ և լեզուով, և յարոյց 213r. զմեռուցեալն մէնածին զորդի այրւոյն և հատոյց զնամաւր իւրում, քանզի Աստուած էր»:

«Համբուրէր զոտս Որդւոյն Դաւթի մեղաւորն կին 10 ի ճաշումն և թանայր զնոսա արտասուաւքն, և մազովք նէրա մաքրէր. այդ թողոյր նեմա զմեղս՝ միայն ունելով զայսորիկ իշխանութիւն, քանզի Աստուած էր»:

«Հարցանէր զաւրինականան և զփարիսացիսն՝ ընդ նոսա ճաշելով, սակա կամել բուժել զջրգողեալն՝ Տէր, իր 15 մարդ, այդ զիսէր զնոցա մտածութիւնս. և բուն հարնալ բուժեաց զնա, քանզի Աստուած էր»:

«Պատահեցին Տևառն տասն րորոտք՝ գնացելոց իւր դարձեալ ոտիւք մարդկայն ւովք յոմն գեաւդ, այդ հրամայէր զոսա երթալ առ քահանայսն, և յերթալն զսա մաք- 20 րեաց զնոսա, քանզի Աստուած էր. որում և զփառն ետ մին ի տասանց ստորագարձեալ, այլածին ելով Սամարացին. Ոչ գտան իսկ՝ ասէ, ստորագարձեալք տալ փառս Աստուծոյ, եթ՛ ոչ այլածինս այս<sup>1)</sup>. իսկ Յիսուսի երկրպա- գեաց, քանզի Աստուած էր»:

25 «Եղել մարմին Բանն և տեսաւ. ի մարդկանէ՝ երեակ 213. եղեալ մարդ.՝ այդ տաղաւարեաց ի մեզ՝ նչ իրը բագին ի բաղինս, այդ իրը Աստուած ի բագինս. քանզի ունէր և մարդ եղեալ զփառս Միածնին, իրը նոյնագոյ դոլով Աստուծոյ և Հաւոր. քանզի ի լրութիւնէ նորա մեք ամենակեան 30 եառաք<sup>2)</sup>:

«Ետես զՅիսուս ի Յովաննէս, և զսա յուցանէր իւրոց աշակերտացն՝ մարդ եալ տեսանելի. այդ վկայէր զնա դոլ զփառնն Աստուծոյ, զբարձաւդն զմեղս և զանաւրէնութիւնս աշխարհի, քանզի Աստուած էր»:

35 «Հարցանէր զՅիսուս, մարդ տեսանելով զնա, Նաթանայէլ՝ զուստին զնա զիտէ. այդ խոստովանեաց զնա յետոյ և վարդապետ և արքայ Խարայեղի և Որդի Աստուծոյ. առ որ ասէր Տէր՝ զմեծագոյնն ուսուցանելով զնա, եթ՛ և

<sup>1)</sup> Հմմա. Ղուկ. Փէ. 18.

<sup>2)</sup> Հմմա. Յովհ. Ա. 14. 16.

հրեշտակաց տիրէ Որդին Մարդոյ և ի նոցանէ սպասաւորի,  
մարդ եղեալ՝ մնացեալ Աստուած<sup>1)</sup>:

«Ոչ ուրեկը եկն ժամ իմ<sup>2)</sup>, ասէր իւրումն մաւր, իրը  
մարդ. այդ գջուրն ի գինի փոխարկեաց՝ Աստուած ևլով  
Բան. քանզի արուեստագործէր ընդ մարմնոյ՝ որ զանձրեն 5  
ի գինի և ի ձէթ և ի մնացեալս պտղոյն փոխագործելով  
իւրով կարութեամբն»:

«Ասէր առ Նիկոդեմոս՝ իբր ոչ ոք վերանցեաց յերկին,  
եթ՛ ոչ յերկնուստ վայրացեալն Որդին Մարդոյ<sup>3)</sup>. քանզի 214r.  
ի սկըսրանն ելով Բանն առ Աստուած և Աստուած ելով<sup>10</sup>  
Բանն՝ մարմին եղե<sup>4)</sup> ի մարդկան դոյացութենէ, և եղ է և  
նոյն և յերկնուստ իբր ի Հաւրէ. և ի մէնջ իբր մարդ եղեալ՝  
մնալով Աստուած»:

«Նախասելով եթ՛ բարձրանալ պարտ զՈրդին մար-  
դոյ, որպէս աւձն բարձրացաւ ի Մովսէս յանապատին<sup>5)</sup>, 15  
Որդի զինքն վերաքարողէ Աստուածոյ Մէնածին, տուեալ  
սակս բազմութեան սիրոյն Աստուածոյ զառ ի մեղն վասն  
միր, և խոստանայ ոչ դատապարտիլ զ՝ ի նայն հաւատա-  
ցեալ, այդ ունել կինդանութիւն յաւիտենական<sup>6)</sup>, քանզի  
Աստուած էր»: 20

«Վկայէ Տեառն Յովաննէս, եթե յերկնուստ եկն<sup>7)</sup>,  
և(ւ) թեպէտ մարմնով զնա ետես և զիտելով զնա հոմա-  
մադոյ եալ ծնչին կուսի, այլ զիտէր ծզրտապէս մարմին  
եղեալ զիանն և մնացեալ Աստուած և Հաւր հոմազոյ, և  
յերկրի երեւեալ և ընդ մարդկան վերադարձեալ<sup>8)</sup>: Վաստա- 25  
կեաց յուղեգնացութենէն և նստաւ ի վերայ աղքերն և ծա-  
րաւեաց, զի հաւատացուք, եթ՛ ըստ ճշմարտութեան եղե  
մարդ, այդ ունէր իշխանութիւն հայցաւղին տալ իբր Աս- 214v.  
տուած զջուրն կենդանի՝ աղքերացեալն ի կենդանութիւն  
յաւիտենական, և զծածուկս սրտին յայտնել<sup>9)</sup>, որ միայ- 30  
նում վայել է Աստուածոյ Երկրպագել ասէ ընդ կրեայս՝  
իբր աղգակից նոյա ըստ մարմնոյ Քրիստոս. զի հաւա-  
տացուք՝ եթի մարդ եղե տնաւրինարար. այդ է Աստուած  
բարեփանեալ յաւիտեանս<sup>10)</sup>, և ՇՅանուն Յիսուսի Քրիս-  
տոսի ամեն ծունր կորացի՝ երկնայնեացն և երկրայնեաց 35  
և սանդարամնտականաց, և ամենայն լեզու արտաքս խոս-

1) Հմմտ. Յովհ. Ա. 48—51. 2) Հմմտ. Յովհ. Բ. 4. 3) Հմմտ.  
Յովհ. Դ. 13. 4) Յովհ. Ա. 1. 14. 5) Հմմտ. Յովհ. Գ. 14.  
6) Հմմտ. Յովհ. Դ. 15—16. 7) Հմմտ. Յովհ. Գ. 32. 8) Հմմտ.  
Բարուք Գ. 38. 9) Հմմտ. Յովհ. Գ. 14. 19. 29. 10) Հմմտ.  
Հառվմ. Բ. 5.

տովանեսցէ նմա՝ Աստուծոյ ելում ճշմարտիւ և կենդանութեանց յաւիտենականի<sup>1)</sup>:

«Հարցանէ զյերեսուն և ութ ամսն զանդամալոյծն Տէք՝ եթե կամի բժշկիլ, իբր մարդ, դարձեալ լեզուով 5 մարդկայնով. այդ բուժեաց զնա իբր Աստուած և հրամայէ զնալ զնա՝ բարձել զպատգարակն, և թելաղրէր բուժելումն մի ևս մեղանչել, զի մի յոռեգոյնսն զառածեսցի<sup>2)</sup>, քանզի Աստուած էր վերուղղիչն զչարապէս վնասեալսն և բժշկիչ զբեկումնն նոցա»:

- 10      «Զարմանային հրեայքն՝ իբր գիր գիտէ, ոչ ուսեալ<sup>3)</sup>.
- 215r. ի կուսէ ծնիցեալն՝ եղեալ մարդ. այդ ցուցանէր, եթ՛ Աստուած էր, ի հայրենի վարդապետութենէն և ի նախասելոյն՝ զոր մտածէին զնմանէ հրեայքն և հանդերձեալ եին կատարելց:
- 15      «Ասաւզի Տեառն՝ եթ՛ «Ի վերուստ եմ»,<sup>4)</sup> հարցանէին հրեայքն, տեսանելով զնա մարդ, և ասէին՝ «Դու ով ես». այդ ցուցանէ զինքն Աստուած՝ բազումս ասել և դատել հանդերձեալ յաղագս ազգի մարդկան, քանզի Աստուած դատաւոր է Յիսուա»:
- 20      «Ասեին հրեայքն առ Տէքն՝ եթ՛ ոչ ունէր յիսուն ամս<sup>5)</sup>, մարդ տեսանելով. այդ վկայէր ինքեան Տէքն զնախայաւետեանն ի Հաւըէ ծնելութիւն՝ իբր Աստուած, և առէր. «Նախ քան զիկրահամ լինել ևս եմ»:
- «Թաքնոյր իբր զմարդ զքարարկին զնա ձեռնարկաւուզ,
- 25 այդ անոցանէր ընդ մէջ նոցա, իբր Աստուած ելով Բան և Որդի Աստուծոյ և Հաւը»:
- «Առանցանէր և ետես դ'ի ծննդենէն կոյր մարդ՝ մարդկայնովք աշաւք. այդ Աստուած զինքն վերաքարոզէր ասելով. «Ճի գործ Աստուծոյ ցուցցի ի նմա». զործ<sup>6)</sup> Աստուծոյ ասելով զոր ինքն դործեաց ի նա: Թքեալ իսկ ի վայր թուք մարդկային և հաւատադործեալ, եթե մարդ էր
- 215v. եղեալ բատ ճշմարտութեան, երաց ի ձեռն ծեփոյ կաւոյն և հրամանին՝ լուանալ ի Անդովամ, զաշմն ի ծննդենէ կուրին, ցուցանելով զի ինքն էր, որ և զԱղամն ի կաւոյ յարմարեաց ի սկզբանն և զպատուիրանն նմա տուեալ և

<sup>1)</sup> Փելիպ. թ. 10—11.

<sup>2)</sup> Հմմա. Յովհ. ե. 6 և 14.

<sup>3)</sup> Հմմա. Յովհ. է. 15.

<sup>4)</sup> Հմմա. Յովհ. լ. 23.

<sup>5)</sup> Հմմա. Յովհ. լ. 21.

<sup>6)</sup> Յովհ. լ. 17.

<sup>7)</sup> Յովհ. լ. 18.

<sup>8)</sup> Յովհ. թ. 3.

հաւատագործելով առակաւ վերատեսաւղին՝ եթե կարէ վերատեղծել զմեղ հոգեպէս ի ձեռն վերածնութեան լուացարանին միւսանգամ ծնելութեան, լուսաւորելով զմեղ՝ իբր Աստուած ելով և լոյս ճշմարիտա:

«Ենթըեին հրեայքն քարկոծել զջէրն՝ որպէս յաղագս 5  
հայհոյութեան, զի ասեն՝ մարդ ելով առնես զքեզ ինքն Աստուած<sup>1</sup>. և հաստատեաց և զգոյն մարդ ըստ ճշմարտութեան և զգոյն Աստուած ըստ ճշմարտութեան, ի ձեռն ապարանութեան՝ ասելով, եթե զնոսա եասաց Աստուածս, առ որս թանն Աստուծոյ եղե, և ոչ կարէ լուծանել գրու- 10  
թիւնն, զոր Հայրն սրբեաց և առաքեաց յաշխարհ, դուք ասէք՝ եթե հայհոյեա, զի ասացի՝ Որդի Աստուծոյ եմ<sup>2</sup>, իսկ Աստուծոյ Որդի զոլով այսուիկ և հոմազոյ եղիցի և մարդ եղեալ:

«Պատմեցաւ ծնեցելումն ի Կումէյազագս հիւանդու- 15 216r.  
թեան Ղազարու. այդ ցուցանէր զինքն Որդի Աստուծոյ և  
Աստուած՝ նախասելով սակս հանդերձելոյն լինել նմա փառաց ի Ղազարուն յարութենէ»:

«Արգելոյին աշակերտքն զջէրն դառնալ ի Հրէաստան դարձեալ, զի մի քարարկեսցի իբր մարդ. այդ ցուցանէր 20  
զինքն Աստուած՝ նախասելով յաղագս մահուն Ղազարու և զի հանդերձեալ էր զսա յարուցանել իբր Աստուած»:

«Եկն ի Բեթանիա ոտիւք իւրովք Յիսուս, քանզի մարդ էր եղեալ՝ Աստուած ելով, և կտանէր զՂազար քառական ահա ի շիրմի. առ որ եկն Մարթա լալով և ի բաց 25  
արտասուելով զնորայն բացաւորութիւն. այդ ցուցանէր զինքն Աստուած՝ նախասելով յաղագս Ղազարու յարութեանն և զինքն ասելով յարութիւն և կենդանութիւն, և զի եթե հաւատասացէ Մարթա՝ տեսցէ զփառս Աստուծոյ<sup>3</sup>, յարուցալզին զՂազարոս, յաղագս իւր զայս ասելով. քան- 30  
զի Աստուած էր»:

«Հարցանէ՝ ուր Ղազարոս կայ<sup>4</sup>, տնաւրինարար, հչանգիտանալով, այդ զի ամենեցուն առընթերակայից յայտակ լինիցի շիրիմնել վկայէք եղիցին, Ղազարու յարութեանն. 216v.  
քանզի և ոչ նախմարմնաւորութեանն անգիտանայր՝ ուր 35  
էր Ադամ<sup>5</sup>, այդ պատճառս ապարանութեան տայր իւրում ստեղծուածին՝ սակս անհամարձակելի զանցաւորութեանն,

<sup>1)</sup> Հմմտ. Յովհ. Փ. 33.

<sup>2)</sup> Հմմտ. Յովհ. Փ. 35—36.

<sup>3)</sup> Հմմտ. Յովհ. Փ. 25. 40.      <sup>4)</sup> Յովհ. Փ. 34.      <sup>5)</sup> Հմմտ. Ենիկ. Գ. 9.

ՑԻՍՊԵԼԾԻ ՀԱՎԱԱՊՈՒԹԻՒՆ

որպէս և առ Կային ասէր. «Ո՞ւր է Արէզ, եղբայրն քո»,<sup>1)</sup> տալով նմա պատճառս ապարանութեան, իբր Աստուածու:

«Արտասուեաց Յիսուս<sup>2)</sup>, զվայելուչն մարդոյ ցուցեալ ի ձեռն ախտակցութեանն, և աղաւթէր առ Հայրն ճ յաղագս առընթերակայիցն, զի հաւատացեն. այդ յարուց դարձեալ մարդկայնով լեզուով հրամայեալ զՂազարոս, քանզի Աստուած էր մարմնացեալ»:

«Զայնէր զկոյրսն յԵրիքով, լսելով և հաւանելով գոլ Դաւթի Որդի, և հարցանէ զնոսս, իբր մարդ դարձեալ, 10 զի ցուցցէ ամեննեցուն նոցա գհաւատն. այդ բժշկեաց զնոցա աշո՝ ըստ կոսյեայ մարգարէութեանն<sup>3)</sup>, քանզի Աստուած էր»:

«Նստէր ի վերայ յաւանակի Տէրն, Որդի Դաւթի եղեալ. այդ երգիւր յամեննեցունց, քանզի Աստուած էր և 15 մարմնով»:

217r. «Տեսեալ զքաղաքն՝ ելաց ի վերայ նէրայ իբր մարդ. այդ նախասէր գհանդերձեալս նէմա պատահիլ, քանզի Աստուած էր»:

«Հարցանեին Փարիսացիքն զՏէրն՝ իբր զմարդ. Որով 20 իշխանութեամբ զայս առնես<sup>4)</sup>. և ունայնս զնոցայն ցուցանէր մտածութիւնս, քանզի Աստուած էր»:

«Հարցանեին զնա վարանելով իբր զմարդ, եթ՛ արժան է կեսարի հարկն հատուցանել<sup>5)</sup>. և յաղթահարէր զնոցս պատասխանատութեամբ մարդկայնով, քանզի Աստուած էր և ընդ մարմնոյ»:

«Հարցանէր զքահանայապետսն յաղագս իւր՝ իբր և Որդի Դաւթի և Տէր նորա է<sup>6)</sup>. և ոչ պատասխանեին, քանզի Որդի էր Դաւթի, ըստ որում եղի մարմին թանն, այս է մարդ, իսկ Տէր Դաւթի, ըստ որում ամենայն նոր վաւ եղն և թանց նորա եղն և ոչ մի<sup>7)</sup>. քանզի արարիչ էր Դաւթի՝ Աստուած ելով թանն»:

«Հարցանիւր յաղագս հանդերձելոյն լինել՝ իբր մարդ երեեալ, և նախասէր զամենայն հանդերձեալս եղանել, 217v. քանզի Աստուած էր՝ զիտակ զամենայն լինելութեան 85 նոցա»:

<sup>1)</sup> Ենեկ Դ. 9.

<sup>2)</sup> Յովհ. ԺՈ. 35.

<sup>3)</sup> Հմմա. Եսոյի

ՊԱ. 1.

<sup>4)</sup> Մարդ. ԺՈ. 28., Մարդ. ԻԱ. 23., Ղուկ. Ի. 2.

<sup>5)</sup> Մարդ. ԻԲ. 17 և այլուր.

<sup>6)</sup> Հմմա. Մարդ. ԻԲ. 42—44.

<sup>7)</sup> Հմմա. Յովհ. Ա. 3.

«Առ իւրն Հայր և Աստուած ասէր հոմագոյն նմա  
Որդի. «Ամենայնք իւմքս քո են և քոյք իւմք»<sup>1</sup>. և դարձեալ՝  
ուսուցանելով զմեզ ասէր. «Ամենայն՝ զոր ունի Հայր, իմ  
է»<sup>2</sup>: Ունի իսկ զգիտութիւն աւուրն և ժամուն Հայր<sup>3</sup>.  
ունի զայս, յայտ եթ՛ և Որդին, թեպէտ և տնաւրինաբար ի 5  
բաց պատասխանէ իրը մարդ, սակա աշակերտացն պիտա-  
նացու իմն իրաւորեալ. քանզի գիտէ անաւգուտ եղանել  
վարդապետեցելոցն զգիտութիւնն վախճանի աւուրն և  
ժամու իսկ եթ՛ անգիտանալ զորա գիտութիւն զՈրդին  
հակառակին ոմանք, անդիտանալ տացեն և զՀայրն. եասաց 10  
իսկ Որդին՝ եթ՛ ամենայնք իւմքս քոյք են. այդ գիտէ զայս  
Հայրն, գիտէ ամենապէս և Որդին, իրը նոյնագոյ ելով  
Հաւը և Աստուած»:

«Եաւծ կինն զոտսն Տեառն ինկի իւզովն՝ իբր  
մարդոյ. այդ նախասէր յաղագս իւրոյն պատանի և քա- 15  
բոզութեան աւետարանին յամենայնում ընդ երկնաւս,  
քանզի Աստուած էր»:

«Բարձրանալ նախասէր զինքն ի վերայ խաչին, այդ  
խոստացաւ զամեննեսեան ձգել առ ինքնն՝ զ՝ ի նայն հաւա- 218r.  
տացեալս, զի Աստուած էր և եղեալ մարդ. «Քանզի հա- 20  
ւատացեալն, ասէ, յիս՝ հչ հաւատայ յիս, այդ յառաքիչն  
զիս Աստուած»<sup>5</sup>:

«Ասէր պատրաստել զախտականն՝ իբր զմարդ. այդ .  
նախասէր իրը Աստուած, եթե պատահեսցէ ձեզ մարդ՝  
սափոր ջրոյ բարձեալ, ի ներքս եկելոյ ի քաղաքին»<sup>6</sup>: 25

«Սփածանի զդենտին և լուանայ զոտս իւրոցն ծառա-  
յից իւրովք և մարդկայնուովք ձեռաւք, ստորագծութիւն  
նուաստութեան նոցա եղեալ. այդ կողմանեալ առընդունի  
զաշակերտսն՝ զծայնողսն զնա Տէր. Բարիոք իսկ, ասէ,  
ասէք, քանզի եմ Տէր<sup>7</sup>. իսկ գիտացաք, եթե Տէր ինքն է 30  
Աստուած բարեբանեալ յաւիտեանս ամէն»<sup>8</sup>:

«Եւ նախասէ յաղագս անմաքրութեանն Յուդայ մա-  
տընչին: Առեալ հաց՝ երեկ իւրովք ձեռաւքն և գոհացեալ  
տայր աշակերտացն ասելով. Այս է իմ մարմին, վասն ձեր  
բեկեալս՝ ի թողութիւն մեղաց. և զմապարանն նմանապէս՝ 35  
ասելով. Այս է ըմպարանն, որ կտակ է յարեան իմում.

<sup>1)</sup> Ցովհ. Ժէ. 10.      <sup>2)</sup> Ցովհ. ԺԶ. 15.      <sup>3)</sup> Հմմ. Մատթ.  
ԻԴ. 36. և այլուր.      <sup>4)</sup> Հմմ. Ցովհ. ԺԲ. 32.      <sup>5)</sup> Ցովհ.  
ԺԲ. 44.      <sup>6)</sup> Հմմ. Մարկ. ԺԴ. 13.      <sup>7)</sup> Հմմ. Ցովհ. ԺԴ. 13.  
<sup>8)</sup> Հմմ. Հովհմ. Թ. 5.

218v. վերայիշութիւն իւր հրամայէր լինել<sup>1</sup>, իբր |Աստուծոյ՝ վասն  
մեր մեռանելով իւրով մարմնովն. քանզի ինքն էր ասաւզն  
Երեմիայիւ եթե՝ կատարեցից ի տունն իսրայեղի և ի  
տունն Յուդա կտակ նոր<sup>2</sup>: Եւ հաստատէ զայս կտակ  
5 ճառագեալ ասելով. Յասելն նոր հնացոյց գառաջինն<sup>3</sup>.  
քանզի անյայտեաց՝ զստուերն եկեալ ճշմարտութիւնն.  
քանզի հչ ևս ի ձեռն արեան ոյխարի ախտականն կա-  
տարի ճշմարիտն յայնմանէ երեկոյէ. քանզի ախտական  
մեր զենաւ Քրիստոս<sup>4</sup> ճշմարիտն Աստուած և կենդանու-  
10 թիւն յափտենական<sup>5</sup>:

«Ռւտէր ընդ աշակերտան իբր մարդ, այդ յայտէր  
զծածուկս արտի իբր Աստուած»:

«ԱՄԱՆԿՈՒՆԱ կոչէր զաշակերտան<sup>6</sup> իբր մարդ և նախա-  
սէ նոցա, եթե յետ ոչ յոլովից մատնեցի. և նոր պա-  
15 տուփրան տայ նոցա իբր Աստուած<sup>7</sup> և նախասէ Պետրոսի,  
զի յայնմ գիշերի կատարիլ ի նմանէ զեռահիւսակ ուրա-  
ցութիւնն: Եւ իջավանս բազում գոլ ասէ յապարանս  
ծնաւզին զնա Աստուծոյ<sup>8</sup>, քանզի Աստուած էր և բացա-  
փայլումն և գծաւորութիւնն մանածն ծնաւզին զնա. սակա  
20 որոյ և հաւատալ ի նա հրամայէ զաշակերտան և խաղա-  
219r. զութիւն նոցա թողու<sup>9</sup>, զայս ինքն տալով՝ իբր Աստուած  
խաղաղութեան»:

«Աղաւթէ առ անցանել ի նմանէ զբաժակն և տըխ-  
րեալ էր մինչ մահու՝ իբր մարդ. քանզի ունի զոչ նկա-  
25 տել անձն բռնութեամբ ի բաց հերձանիլ յիւրմէ մար-  
մնոյն, հաւատացուցանելով և յայսմիկ զաշակերտան, զի  
էր նոցա նոյնագոյ ըստ մարմնոյ, և սւաուցանելով ի  
փորձութիւնն զմարդկութիւնն ամենայն՝ մի առկօզմանել  
և մի կամաւք բնութեան ածիլ, այդ աղաւթել առ Աս-  
30 տուած և զկամն Աստուծոյ լինել աղաչել. այդ ի վերայ  
վազէ մահու առ խողխողումն զսա հալածելով և զէնքն  
մատնէր խնդրաւզացն զնա ծախիլ, քանզի Աստուած էր»:

«Էմբռնեցաւ ի ինդրաւզացն իբր մարդ. այդ հատե-  
ցելոյ և ի բաց բարձեցելոյ ունկան ծառայի քահանայա-  
35 պետին՝ յարելութեամք ճեռինն բժշկեաց զնա. արուեստա-  
գործելով նմա ունկն, քանզի Աստուած էր մարմնացեալ»:

<sup>1)</sup> Ղուկ. Խթ. 17—20., Մատթ. ԽԶ. 26—28., Մարկ. ԺԴ. 22—24.

<sup>2)</sup> Երեմիա. ԱԱ. 31. <sup>3)</sup> Հմմ. Երբ. Ը. 13. <sup>4)</sup> Ա. Կոբկիթ. Ե. 7.

<sup>5)</sup> Ա. Յովհ. Ե. 20. <sup>6)</sup> Հմմ. Յովհ. ԺԴ. 33. ԻԱ. 5. <sup>7)</sup> Հմմ. Յովհ. ԺԴ. 33.

<sup>8)</sup> Յովհ. ԺԴ. 2. <sup>9)</sup> Հմմ. Յովհ. ԺԴ. 27.

«Ապասկիւր ի սպասաւորէն ի ծնաւան՝ իբր մարդ. այլ երկարամտէր իրը Աստուած, առընթեր կացուցանելով իրը բարուզ պատասխանեալ, և զչար կարծութիւնն ի բաց մղելով»:

«Մատնի Պիղատոսի իրը մարդ. այդ հմայանայ սորա 5 կնոջն, քանզի Աստուած էր»:

«Խաչի ի վերայ փայտի և բնեոփ իրը մարդ, և քացախ և ղեղի արբուցանի և այպանի իրը մարդ՝ յառ գնացելոցն մարդ եղեալ. այդ վկայիւր յարարածոյս և յեղելոցն և ի դահճացն, եթե Աստուած է և Աստուծոյ Որդի»: 10

«Ձայնեին հրեայքն իրը զմարդոյ մեղաւորէ և չարագործէ՝ Խաչեա, խաչեամ<sup>1</sup>. զի եղև վասն մեր մարդ. այդ վկայէր Դատիչն՝ եթե մեղս ոչ հարար և ոչ գտաւ նենգութիւն ի բերան իւրում<sup>2</sup> և եթե թագաւոր նոցագոյր և ոչ կամնցաւղաց. զի Աստուած էր, անյեղապէս 15 եղեալ մարդ»:

«Խարազանիւր և բառնայր իւրովի դիսաչն, ցուցանելով և մտահաճելով, եթ՝ եղև մարդ. այդ հալածէր զբանաւոք հակատակորդն առ խոզխոզումն, որ իւրով մահաւն խափանեաց և մեռոյց զմանն, և իշխանութիւն ունաւզն դնել 20 զիւրն անձն և դարձեալ առնուլ զնա<sup>3</sup>, կամաւոր յայս եկեալ՝ միայն անմեջն և Աստուած»:

«Մերկանայ զիւրն հանդերձ և այպանի և խաչի՝ բեւուեալ զձեռսն և զոտա ի վերայ փայտի, և քացախ և ղեղի արբուցանիւր, և ծաղրալի յառ գնացաւղացն և հայնոյիւր, 25 զի մտահաճեսցէ, եթե զինքն կամաւրապէս թափեաց և եղև մարդ, և նուաստացոյց զինքն մինչ խաչին մահու<sup>4</sup>. այդ վկայիւր հաւատոյ աւազակին, եթե թագաւորութիւն ունէր հանգերձեալ ընդ նմա խաչեցեալն և ամենայն իրաւոք թագաւորեսցէ, և հաւատագործեալն ի նա խոստմամբն Տէրն, 30 եթե ինքն էր, որ զԱղամն արտաքս եհան ընդ նւայի ի դրաբստէն փափկութեան. որ ի ձեռն իւր զաւազակն ի դրաստն ներսածէր, պատուիրեալ քերովբեիցն և բոցեղէն սրոյն՝ մի ևս արգելուլ զի ներքս ուղղութիւնն դրաստին, անարգելաբար տուեալ զի ներքս ուղղութիւնն ամենայնի 35 կամնցաւղի նմա հետեւել արքունեկան ճանապարհաւն, և տրարածս վկայէ առ ի նմանէ ասացելոցն՝ ճանաչելով ըղ-Տէրն և զԱստուածն խաչեցեալ»:

<sup>1)</sup> Ղուկ. Խ. 21. և այլն.

Պետք. Բ. 22. <sup>2)</sup> Խոսյի Ե. 9. հմմա. Ա.

<sup>3)</sup> Հմմա. Յովհ. Ճ. 18. <sup>4)</sup> Հմմա. Փիլիպ. Բ. 7—8.

- «Ետ զոգին՝ ի ձեռն Հաւը զնա աւանդեալ, այս է  
 220v. զիւրն անձն, ևզայս աղաղակեալ<sup>1</sup>, զի հաւատագործեսցէ, եթ՛ անձն իմանալի էր ներանձնացեալ պատուական մարմինն Քրիստոսի, և մարդ ըստ ճշմարտութեան եղեւ և ըստ ճշմարտութեան մեռաւ, բաժանմամբ և ի բաց կացութեամբ անձին ի մարմնայ. քանզի այս, որ վասն մեր համբերեաց մահ՝ անմահն և ի մեռեալս ազատն<sup>2</sup>, այդ անբաժանելի էր տնաւրէնութեան \* բանիւն յիւրմէ անձնէ և ի մարմնոյ՝ ըստ անձառելի և անպարիմանալի բանի և յեղանակի 10 աստուածայնոյ մարմնաւորութեանն, Քանզի ոչ մասին միաւորեաց, իսկ մասին ոչ միաւորեաց, այդ և ոչ ասացաւ յումեքէ սրբոցն, եթ՛ անձնացաւ է, այդ ոչ մարմնացաւ, և եթե մարմնացաւ է, այդ անձնացաւ ոչ. այդ միաւորեաց մարմնի՝ անձն ունաւղին բանական և մարմնայ 15 միաւորեալ, անձառաբար թազիւր և ի բաց քակէր դապականութիւնն՝ իրը անապական և մարմնացեալ Աստուծոյն Բան, և կոխէր զմահուն խայթոցս, իրը ազատ ի մեռեալս. յառնէր իսկ ոչ իրը մարդ սոսկ, այլ իրը մահու 221r. լաւագոյն և Աստուած: իսկ անձամբ գնացեալ քարոզեաց 20 որք ի դժոխս, իրը անձամբ ընդ անձինս ներերնեալ. զոր և զուռնատեսակիքն դժոխսց տեսեալ՝ զաւղեցին և զրունք պղնձեայք մանրեցան և նիզք երկաթեայք խորտակեցան և Մէնածինն ձայնէր իշխանութեամբ հոմակրից անձանց ըստ տնաւրէնութեանն Բանի ասելով՝ որք ի կապանս, 25 արտաքս եկայք, և որք ի խաւարի՝ յայտնեցարհէք. զի գիտացեն ամենեքեան յուղարկեալքն մահու, եթե կոխեցաւ մահ և քակեցաւ ի ձեռն նորա թաղմանն հանդերձ մարմնով. և ոչ ևս յաւիտենանայ սորա հարստութիւն՝ յաղթեցելոյ գոռոզին: Հանդերձնեալ իսկ է յառնել ապա 30 ամենայն մարդկան ազգ՝ ոմանք ի յարութիւն կենդանութեան յաւիտենականի, ոմանք ի յարութիւն դատապարտութեան յաւիտենականի: Իսկ քանզի փրկանաւորեցաւ ամենայն մարդկան ազգ ի գոռոզութիւնէ մահու կապանաց, և տիրեաց ինքն կենդանեաց և մեռելոց:
- 35 «Քանզի առ նորա ակնարկութիւնն ածին ապա և բացածին յարուցեալքն»:
- 221v. Ալաէ իսկ արդարապէս զյաջմէցնիւրմէ սրբոցն՝

\* ) Հուսունցը ում՝ «աեռչութեան».

<sup>1)</sup> Դակ. Խ. 46.

<sup>2)</sup> Հմմա. Սակմ. 2կ. 6.

յաւուր յայնմիկ. Եկայք բարեբանեալք Հաւը իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալն ձեզ արքայութիւն ի հիմնարկութենէ աշխարհիս, և ըստ միոջէք. իսկ զահեկէսն մեղաւորս ի բաց առաքէ ընդ հակառակորդին և ընդ հրեշտակս նորա ի խաւարն արտաքսագոյն, ուր լալն և կրծել ատամանց<sup>1:</sup> բ

«Զայսոսիկ ահա, որպէս կարծեմ, մտածութիւնս աւետարանեաց ի պահպանութեան ոգուոցն, որ զայս և նախ մահուն ուսոյց Մէնածին և անսօւտ Աստուծոյն Բան, ճշշմարիտն և յարութիւնն և կենդանութիւնն Վերակենցաղեաց իսկ եռաւրեայ ի մեռելոց՝ լցեալ զամենայն համան- 10 գամայն զնդ մարմնոյն տնաւրէնութիւնն. և նի շիրմի թաղեցեալ, որ իշխանութեամբ իւրով եղեալ յիւրմէ մարմնոյ զանձնն և խափանեաց ինքն խայրին սուրբ յիւրում մարմնին զապականութիւն՝ իրբ կենդանութիւն գոլով և կենագործիչ Աստուծոյն Բան. իսկ լցեալ ի ձեռն անձինն 15 զ'ի դժոխս էջն, Յայսմանէ անորիշ Աստուածն Բան և իւրոյ մարմնոյն, ըստ որում զիտէ ինքն յեղանակի յառնէր 222r. ի մեռելոց, մեռուցանելով զմահն՝ անբաժանելի Աստուծոյ Որդին Յիսուս Քրիստոսա:

«Բանզի Քրիստոս մեռաւ յաղագս մերոց, ըստ 20 զրութիւնան, համարձակելով ասէ Երանելին Պաւղոս, և զի թաղեցաւ և զի յարեաւ ի մեռելոց<sup>2:</sup>, և զի ոչ բաժանի Քրիստոսա:

«Զայս իսկ և Երանելիք հարբն, որք ի Նիկեա՝ աւանդեցին յաղագս մարմնացելոյ Աստուծոյն Բանի: Իսկ եթ՛ 25 ոչ մեռաւ մարմնացեալն Աստուածն Բան իւրով մարմնով, հչ իսկ թաղեցաւ. զի թե մարդոյ մահն՝ և թաղումնն, և եթե մարդոյ թաղումն՝ մարդոյ և յարութիւնն: Եւ Քրիստոս ոչ յարեաւ՝ ըստ հերձուածողացն բանի, այդ մարդ. և ունայնացաւ հաւատն, որպէս ասէ Պաւղոս<sup>3:</sup> քանզի մարդ- 80 դապարշտութիւն գտանի խորհուրդն և արարածին պարշտեն երկնայինք և ի վերայ երկրի բանական կարգաւորութիւնք, երկնայինք իսկ և երկրայինք. աեռանելիք և անտեռանելիք, և մարդոյ խոստովանեն».

«Իսկ, այժմ, ասէ յարեաւ Քրիստոս, խայրին ննջեցե- 85 լոցն<sup>4:</sup>, Աստուած բարեբանեալ յաւիտեանտ ամէն<sup>5:</sup>: 222v.

«Բանզի սա է նշարիտն Աստուած և կենդանութիւն

<sup>1)</sup> Հմմտ. Մատթ. Խ. 34—41.      <sup>2)</sup> Հմմտ. Ա. Կոքնթ. Ճե. 3—4.      <sup>3)</sup> Հմմտ. Ա. Կոքնթ. Ճե. 17.      <sup>4)</sup> Ա. Կոքնթ. Ճե. 20.      <sup>5)</sup> Հառիմ. Բ. 5.

յասկտենական<sup>1</sup>, որպէս ասեն առաքեալքն։ Խոստովանիւր ի հարիւրապետէն և ի զինաւորացն, եթե ճշմարտապէս Աստուծոյ Որդի էր արդարեն<sup>2</sup>, հչ գրութեամբ և ոչ չնորհիւ փարթամացեալ զորդեզութեանն ինչ, այդ հայցեաց 5 գմարմին նորա Յովսէփի և պատեալ եղ ի նորում իւրում շիրմի զՏէքն, զի ցուցի որ ըստ բնութեանն Աստուծոյ Որդի և Աստուած։ Եղն ըստ տնաւրէնութեան մարդ՝ մը-նալովն Աստուած ճշմարտութեամբ, և հչ թուելութեամբ, և զայս եղեալ և զայն մնացեալ, քանզի էր Աստուած և 10 նախ մարմնաւորութեանն և ընդ մարմնոյն։

«Երթայր Մարիամ Մագդաղէնացի խնկել գմարմինն, զի մեռեալս ազատին և զիսկապէս կենդանութեանն՝ ահա խնկեցելոյ ի Նիկոդէմայ և թաղեցելոյ նորա ի շիրմի-քանզի տնաւրէնութիւնք \* եին ամենայնք յայնժամ գոր-

15 ծեցեալք, զի մի ըստ երեսյթութեան ոք կարծեսցէ 223r. եղեալ զնա մարդ, այդ զի հաւատայցի ճշմարտապէս թա- փեալ զինքն, որ զլին ունելով աստուածաբար, և եղեալ մարդ՝ մնալովն Աստուած։ Այդ վկայէր հրեշտակին առըն- թերակացութիւնն և երկիւղ պահապանացն և մնաելու-

20 թիւնն և աւետարանումն հրեշտակին առ կանայն՝ յա- զագս յարութեան թաղեցելոյ Տեառնն, և պատուէր պատ- մել զ'ի հրեշտակէ ասացեալսն աշակերտացն ի ձեռն ա- հաըն ասացի ձեզ<sup>3</sup>. զի Աստուած էր և Տէր հրեշտակացն՝ թաղեալն և կանգնեալն ի մեռելոց և յառաջացեալն ա-

25 շակերտաց ի Գաղղիզեա»։

«Իսկ ժամանեալ աշակերտքն ի լեառն, ուր հրա- մայեաց նոցա Յիսուս<sup>4</sup>, տեսին զնոյն զխաչեցեալն և զթաղեցեալ և զյարուցեալն ի մեռելոց, և երկրպագեցին Աստուած մարմնացեալ և ախտակրեալ զվասն մերն մահ,

80 հաւատացեալն զնա գոյ ըստ ճշմարտութեան. ապա երկ- րայեցելոցն նոցա յաղագս յարութեան թաղեցելոյն, և այ- իսկ տնաւրէնութեամբ \*\* ելանէր Տեառնն. հաստատէ զյա- 223v. զագս իւրոյ յարութեանն փրկիչն ասելով եթե՝ | Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկնի և ի վերայ երկրի. և հրա- 35 մայէ քարոզել յամենայն ազգս, որպէս հաւատացին ի նա իբր յԱստուած և մկրտիցին յանուն Հաւը և Որդւոյ և

\* ) Լուսանցքում՝ «տեռչութիւնք». \*\*) Անդ՝ «տեռչութեամբ».

<sup>1)</sup> Ա. Յագհ. Ե. 20. <sup>2)</sup> Հմմա. Մարկ. ԺԵ. 39 և այլն.  
<sup>3)</sup> Մատթ. ԻԼ. 7. <sup>4)</sup> Մատթ. ԻԼ. 16.

Հոգւոյ սրբոյ, ընդ վարդապետոս այսր հաւատո խոստացեալ գոլ զամենայն աւուրս և մինչ ի վախճան յաւիտենիս այսորիկ<sup>1)</sup>: Եւ գործ է միայնոյ Աստուծոյ, քանզ' եթ' ոչ Աստուած էր ախտակրեալն մարմնով իւրով և թաղեցեալ և յարուցեալ ի մեռելոց, այդ մարդ պարզաբար՝<sup>5</sup> յարակցեալ Աստուծոյ, ըստ հերձուածողացն բանի, կամ եթե մարդոյ բնութիւն, մարդապարիշտքուրեմն երանելիք աշակերտան ըստ նոսա. իբր արդեւք ոչ սաստեցան, երկրպագելով զնա՝ առ ի նոյ(ն) Տե(ա)ռնէն \*<sup>2)</sup>:

«Քանզի ոչ եկն Տէրն քակել զաւրէնն, այդ լուլ<sup>2)</sup>. 10  
որ ի ձեռն բանիցն և գործոց գոչէր ինքն՝ Խաւառզա առ  
ընթեր եմ<sup>3)</sup>. խաւանցաւ իսկ յաւրինին՝ զՏէր Աստուած  
քո երկրպագեցցես և նմա միայնում պաշտեցես<sup>4)</sup>. և ոչ  
ևս երբեք ստեաց՝ իսկապէմն ճշմարտութիւն և կենդանու-  
թիւն եալ, իբր Աստուած: Ի՞ր իսկ հնար զմարդն, կամ 15  
եթե մարդոյն բնութիւն, զնմանեալն ունայնութեան ըստ 224r.  
ինքեան և իբր սասուեր ունելով զաւուքս՝ ունել իշխանու-  
թիւն ամենայնի՝ զ' ի յերկնիցն և զ' ի վերայ երկրիս:  
Ի՞ր իսկ մարդ կարէ միջակ Հաւր և Հոգւոյ սրբոյ աւան-  
դութեան հաւատոյն և սրբոյ մկրտութեանն, եթ' ոչ Աս- 20  
տուած գոյր եղեալ մարդ տնաւրինարար՝ մնալով Աս-  
տուած. քանզի մի ոք կարծեացէ, եթե յաղազս միւսոյ  
Որդւոյ եասաց առաքելոցն՝ աշակերտել զազգս և մկրտել  
զնոսա: Ի վերայ եած՝ զ' և ահա եսն ընդ ձեղ եմ. ես, ա-  
սէ, մեռուցեալս և թաղեցեալս և յարուցեալս և գալ գա- 25  
տել զկենդանիս և զմեռեալս. քանզի հչ է թագաւորու-  
թեան իւրոյ վախճան՝ Որդւոյն Դաւթի, ըստ երանելոյ  
Գարդիշզի բանին<sup>5)</sup>: Իսկ զմարդ ոչ հնար գոլ յայղում  
մարդկան, որք ուսուցանեն զ' ի նայն հաւատ. և այս ինչ  
ի վախճան յաւիտենիս. քանզի Աստուծոյ միայնոյ է գոյն, 30  
կամ եթե բնակել ի սիրաւզն իւրօ:

«Ուրեմն հչ երկու բնութիւնք Քրիստոս, զի մի մար-  
դապարշտութիւն կարծեացի խորհուրդն, այդ մի | բնու- 224v.  
թիւն Աստուծոյն Բանի մարմնացեալ. զի յԱստուած իցէ  
մկրտութիւնն մեր՝ զ' ի մահ Տեառնն կատարեալն»<sup>6)</sup>: 35

«Մերձեցեալ ուղեկցեր առ Կղեռվազս՝ երթաւղացն

\*<sup>1)</sup> Զեւազում՝ «Ի նոյ տեռնէն».

<sup>1)</sup> Մատթ. Ի. 18—20.      <sup>2)</sup> Մատթ. ե. 17.      <sup>3)</sup> Եսոյի  
Եթ. 6.      <sup>4)</sup> Բ. Օրէնք. Զ. 13. հմմա. Մատթ. Պ. 10., Ղուկ.  
Պ. 8.      <sup>5)</sup> Ղուկ. Ա. 33.      <sup>6)</sup> Հմմա. Հասկմ. Զ. 3—4.

յեմմաւումն դեաւզ. ապա հարցանէր զնոսա իրը մարդ  
յաղագս հակառարկելոցն ի նոցանէ բանիցն ի միմնանս.  
իսկ պատասխանաւղացն նոցա յաղագս Նաղարացւոյ Յի-  
սուսի զոլ գրանսն՝ առն կարաւորի բանիք և գործովք,  
ծ և եթե մատնեցաւ պետից հրեիցն դատապարտութիւն մա-  
հու և խաչնեցաւ, և եթ' ունեին ինքեանք զյոյս ի խաչե-  
ցեալն, եթ' ինքն էր հանդերձեալն փրկանաւորելն զիսրա-  
յէջ, և առ այսորիք զկանանցն զրուցատրութիւն և զառ  
նեմա զհրեշտակացն տեսութիւն և զյաղագս յարութեան  
10 նորա զրանս, և զի ոմանք ի նոցանէ երթեալ ի շրիմն՝  
բաղաձայնս ասոցելոց ի կանանցն գտին, նախատիմն ի  
նմանէ յաղագս երկրայութեան և յամրութեան եղելոցն  
առ նա հաւատոյ: իսկ հաստատէր յաղագս իւրոյ մահուանն  
վասն մեր և փառաւորի իւրոյ յարութեանն ի մեռելոց:  
**225r.** 15 յաւրինէն Մովսէսի և ի մարգարեից շարադրելով, հաւա-  
տագործելով, եթ' և Նազարացի էր եղեալ և այր ըստ ճշշ-  
մարտութեան կարաւոր և փրկանիչ գոյր Խորայեղի<sup>1</sup>, իրը  
Աստուած է ճշմարիտ Փրկիչն՝ յապականութենէ զկենդա-  
նութիւն սեռի մարդկան, և զի մատնեցաւ ինքն վասն մե-  
20 րոցն մեղաց ի մահ, և խաչնեցաւ և մեռաւ և թաղեցաւ և  
յարեաւ՝ առ ի փառաւորիլ այնուենտե առ յամննայնէ մի-  
անգամայն ըստ արարածոյս, իրը յաղթեալ և մեռուցեալ  
ի ձեռն վասն մերոյ մահու զգոռոզացեալն մահ՝ ի ձեռն  
մեղաց, այս է զբանսարկուն<sup>2</sup>: Քանզի չարակնութեամբ<sup>\*</sup>  
25 նորա մահ առ ամեննեսին եանց զանցաւորութեամբ նոր  
յԱղամա: Ք.

«Քանզի կենդանութիւն կոչի Քրիստոս և լոյս և կենա-  
գործ զ' ի նայն հաւատացեալս և լուսաւորէ զնդունիչս  
նորա ի ձեռն Սրբոյ Հովուոյն. իսկ մահ կոչի և խաւար հա-  
30 կառակորդն և մեռուցանէ և խաւարագործէ զհաւանեալս  
նմա. քանզի և ի սկսբանէ զնաւանեալս նորայն խորհըր-  
**225v.** դակցութեան առժամանակեանն այսուրիկ մահուամբ դա-  
տաւարտեաց յիրաւի Աստուած և զ' ի նմանէսն. զի մի  
յաւիտենանայցէ մարդն մեղանչելով և ստունկաննելով Աս-  
35 տոււծոյ: իսկ յաղթեաց զգոռոզն Տէր իրը միայն անմեղ,  
զոր ընկալան ահա վասն մեր մահ՝ մեռաւ, և ի մեռեալս  
էր աղատ և կենդանութիւն, զի Աստուած էր, զյանցնուլն

<sup>\*)</sup> Լուսանցքում՝ «իւսնատեսաւք».

<sup>1)</sup> Հմմ. Ղուկ. Խ. 18—27.

<sup>2)</sup> Հմմ. Երք. Բ. 14.

ոչ գիտակ և միայն անմեղուցեալ. սակս որոյ ոչ էր կարել ըմբռնիլ զնա ի մահուանէ<sup>1</sup>, այդ յարեաւ եռաւրեայ՝ խայրին ննջեց(ել)ոցն»:

«Ապա բռնադատեալ ի սոցանէ՝ ի ներքս եկն, մնալով առ նոսա, և կողմանեցաւ և առ հաց՝ ձեռաւք դարձեալ 5 մարդկայնւովք, և եթեկ, զի հաւատագործեսցէ զնոսա և ի սովորութենէ նախ մահուն տուեալ նոցա, ըստ ընտելութեանն առաջնոյ ի բեկանելոյ և զ' ի ձեռն տալոյ հացին յիշեցուցանելով, եթ' ինքն խաչեցեալն յարեաւ ի մեռելոց. 6 բացեալ զնոցա աչս, զ' ի նմանէ կալեալսն, իբր զի<sup>10</sup> ապա ծանիցեն զնա՝ աներելոյթ եղեւ ի նոցանէն, հաւատագործելով, եթե վասն մեր մեռեալն և յարուցեալ զնոյն ունի կարութիւն իբր Աստուած, և ոչ|այդայզեցաւ. 226r. ցուցանէր իսկ դարձեալ զինքն աեսանելի և շաւշափելի եալ իբր զմարդ, իսկ ոչ ևս կարող մեռանել, քանզի մահ 15 նմա ոչ ևս տիրեացէ, ասէ երանելին Պաւղոս<sup>2</sup>: Ցուցանէր իսկ և աներենոյթ և անըմբռնելի, քանզի Աստուած էր ճշմարիտ և եղեալ տնաւրինաբար մարդ, մնաց և ի ներմարդութեանն Աստուած և փառացն Տէր: Իսկ ժողովեցելոցն և աշակերտացն յԵրուազէմ և ասաւզաց՝ եթ' իս- 20 կապէս յարեաւ Տէր և երեսցաւ Սիմովլի<sup>3</sup> և նախասացելոցն պատմաւզաց զ' ի ճանապարհիսն, և որպէս ծանուցաւ նոցա ի բեկութեան հացին, եկաց ի միջի նոցա Տէր, ձիրելով նոցա զխաղաղութիւն, և եցոյց նոցա զբնեռեալսն իւր ձեռս և զոտս, և որոնել զինքն յորդորէր զնոսա՝ ու- 25 սուցանելով և հաւատագործելով զնոսա դարձեալ, եթ' և մարդ եղեւ ըստ ճշմարտութեան՝ մնալովն Աստուած, և մարմին և ոսկերս ունէր, և հչ անմարմնաւորապէս ներդիմեաց աշխարհի, և զի ինքն յարեաւ մեռուցեալն և թաղեալ, հչ այդ ունելով մարմին, այդ զոր միաւորեացնինքեան ի 30 226v. Սրբոյն և յԱստուածածնէ կուաէն Մարեմայ: Իսկ առ մեծագոյն մտահաճութիւն և կերակուր առ ի նոցանէ ընկալեալ՝ առաջի նոցա եկեր, զի զայս վկայեսցեն յաղագս նորա աստուածազան աշակերտքն աշխարհի, և մի թուիցի ըստ յեղման կամ ըստ իմեք երևութի մարդ յերկրի երե- 35 ւեալ և ընդ մարդկան վերադարձեալ<sup>4</sup> յիսրայէղնն ըստ մարմնոյ Քրիստոս, եակն ի վերայ ամենեցուն Աստուած և բարեբանեալ յաւիտեանս ամէն»<sup>5</sup>:

1) Պործք Բ. 24. 2) Հմմա. Հռավմ. Զ. 9. 3) Հմմա. Հռւկ. Ին. 34. 4) Հմմա. Բարսէք. Գ. 38. 5) Հռավմ. Բ. 5.

«Ուսուցանէր իսկ տուիչն նոցա զիսաղաղութիւն իբր Աստուած, զի այս էր ի վերայ նորա գրեալ ի գրութիւնսն. իսկ մտահաճէր զնոսա՝ ձիրեալ նոցա զիսաղաղութիւն և խոստացեալ ընձեռել դարձեալ զսէ նոջա»:

5 «Քանազի՝ զիսաղաղութիւն, ասէ, թողում ձեզ, զիսաղաղութիւն իմ տամ ձեզ<sup>1</sup>. յայտ եթե զ' ի յետ ի մեռելոց յարութեանն իւրոյ ձիրեալն նոջա՝ իբր յԱստուծոյ, տուաւէ խաղաղութեան. քանզի որպէս յատուկ բարի զսէ ձիրէ աշակերտացն, զի Աստուած էր և եղեւ տնաւրինարար մարդ

10 վասն մերոյ փրկութեան»:»

227r. «Իսկ դրացն փակեցելոց ի ներքս գայր և արտաքս գայր, զի հաւատացուացէ զառաքեալսն, եթև և մարդ եղանիւր ըստ ճշմարտութեան, որպէս նախասացաւն, և ինքն մնաց Աստուած և զնոյն ունի կարութիւն, զոր ունէր և 15 նախ մարմնաւորութեան. քանզի որպէս սաղմնառեցաւ անճառաբար նարգանդի Կուսին՝ Աստուած ելով Բան, կուսութեանն ոչ ապականեցելոյ, և ծնանի ի նեմայ, և կոյան մնաց կոյս, այսպէս և առ աշակերտան գայր և բացակացէր, և դուրքն փակեալք մնային: Դարձեալ առ Թովմաւ 20 եկեալ, փակեցելոց դրացն, առ ի մտահաճել զնա, զիսաղաղութիւն նախ ընձեռէ նոցա իբր Աստուած և զմտածութիւնս և զբանս յայտնէր զթովմայ, յորդորելով զաշակերտին զորոնումն ձեռացն և կողից իւրոց և խրատելով զնա՝ ոչ լինել անհաւատ, այդ հաւատացեալ: Քանզի կամէր 25 հաւատացուցանել առաւելագայն զաշակերտսն և՛ բայիւքն որ առ Թովմաս և՛ ի ձեռն յայտնութեան իւրոցն անդամոց, զի մարդ եղեալ ըստ ճշմարտութեան՝ մնալով Աստուած: Քանզի խաչեցեալն և խոցեալ զկողն, յոր երեսացին<sup>\*</sup> խոցաւզքն<sup>2</sup>, դատաւոր զնա տեսանելով յահան 30 գին ատենին՝ զմեռեալն վասն մեր և թաղեալ և յարուցեալ ի մեռելոց, խոստովանիւր առ ի Թովմայ և ընդ նմա աշակերտացն, եթե Տէր նոցա է և Աստուած<sup>3</sup> և բարեբանեալ յաւիտեանս ամէն<sup>4</sup>:

35 Ալպա ընկալիալ զթովմայ հաւատարիմ խոստովացնութիւնն, երանէր զոչն տեսաւզսն զնա և հաւատացեալս<sup>5</sup>, եթե Տէր ինքն է Աստուած բարեբանեալ. քանզի Տէր Աստուած բարեբանեալ է և Աստուած ապրեցուցիչ

\* Հաւատացըում՝ «հայեցցին».

<sup>1)</sup> Յովհ. ՓԴ. 27.      <sup>2)</sup> Հմմա. Յովհ. ՓԹ. 37.      <sup>3)</sup> Հմմա. Յովհ. Ի. 28.      <sup>4)</sup> Հովհմ. Բ. 5.      <sup>5)</sup> Յովհ. Ի. 29.

և ի ձեռանէ դժոխոց փրկեաց զմեղ և ի մահուանէ զմեղ փրկանաւորեաց<sup>1)</sup>, որ զ' ի ձեռն մարգարեիցն խոստութիւնս նորա լցեալ ուզենորութեամբք ներմարմնական իւրոյ դալստեաննա:

«Քանզի փէէր յաշակերտսն՝ փչմամբ դարձեալ մարդ- 5  
կայնւով, և չնորհէր իշխանութեամբ աստուածավայելչիւ  
առաքելոցն իբր զիւր բարի զՍուրբ Հոգին, քանզի Աս-  
տուած էր՝ եղեալ մարդ անաւրինաբար վասն մեր. որ և  
ի ակարանցն զայս ընձեռեաց դարձեալ ի ձեռնիփչմանն 228r.  
Աղամայ, և կենագործեաց զնորա բանական անձն՝ ընդու- 10  
նելութեամբ Սրբոյ Հոգւոյն, չնորհեաց իսկ նոցա և զիշ-  
խանութիւն թողուլ զմեղս<sup>2)</sup> և կապել և լուծանել զսոսա  
ի վերայ երկրի, որպէս և յերկնի, հաստատելով ինքն  
զ' ի նոցանէ սահմանեալսն և եզ հազ պարզաբար: Բա-  
զում եարար նշանս Յիսուս, որք ոչ իսկ գրիցան, իսկ 15  
առ մեր մտահաճութիւն այսոքիկ գրիցան, որպէս ասէ  
աւեաարանիչն, զի հաւատասցուք, եթե Յիսուս է Որդի  
Աստուծոյ և կենդանութիւն ունիմք յաւիտենական հա-  
ւատացեալքս յանուն նորա<sup>3)</sup>, Ո՛չ զի երկուս բնութիւնս  
հաւատայցեմք զՅիսուս և ոչ յերկուս ընութիւնս, որպէս 20  
բազում անգամ ասացաք, այդ Որդի նշմարիտ Աստուած,  
և Աստուած հոմագոյ ելով Աստուծոյ և Հաւր և Սրբոյ  
Հոգւոյն»:

«Ուսուցանէր իսկ զաշակերտսն, որպէս ասէ Ղու-  
կաս, եթե զայսոսիկ պարա էր կրել զՔրիստոս և յառ. 25  
նել ի մեռելոց յերրորդի աւուր, և քարոզիլ անուամբ  
թաղեցելոյն և ի մեռելոց յարուցելոյն՝ իսկիապէս կեն-  
դանութեանն և ի մեռեալս ազատին, ապաշխարութիւն և  
թողութիւն մնղաց<sup>4)</sup>: Ասէ իսկ հրեշտակն առ կանայսն.  
Զի խնդրէք զկենդանին ընդ մեռեալս. հչ է աստ, յա- 30  
րեաւ, որպէս ասացն ձեզ<sup>5)</sup>: Եւ յիշեցին ի բայիցն նորա՝  
յիշեցուցեալք առ ի հրեշտակէն: Քարոզս իսկ և վկայս իւ-  
րոյ ախտակրութեան հրամայէ լինել խաչեցեալն Քրիս-  
տոս և յարուցեալ զյատուկս իւր աշակերտս՝ խոստացեալ  
նոցա իբր Աստուած, ինքն առաքել ի նոսա զիսոտումն 35  
իւրոյն Հաւր և զգենուլ զնոսա զ' ի բարձանց կարութիւն  
Սրբոյ Հոգւոյն<sup>6)</sup>: Քանզի խոստացաւ Աստուած Յովէզաւ

<sup>1)</sup> Գան. Գ. 87..      <sup>2)</sup> Հմմա. Յովհ. Ի. 22—23.      <sup>3)</sup> Յովհ.

Ի. 31.      <sup>4)</sup> Ղուկ. ԻԴ. 26. 46—47. Հմմա. Գործք. Ժէ. 3.

<sup>5)</sup> Ղուկ. ԻԴ. 5—6. և այլն.      <sup>6)</sup> Հմմա. Ղուկ. ԻԴ. 49.

մարգարէիւ, որպէս առէ Պետրոս, հեղուլ յիւրմէ Հոգւոյն յամենայն մարմին՝ յառ ինայն հաւատացեալս<sup>1)</sup> Յայտ եթե իսկ զայս երեխ առաքելով և զգեցուցանելով զաշակերտսն մոռեալն վասն մեր Քրիստոս ըստ գրութիւնս և թաղեն ցեալ և յարուցեալ ի մեռելոց ըստ գրութիւնսն, Աստուածն ճշմարիտ և կենդանութիւն յաւիտենական<sup>2)</sup> և բարեբանեալ Աստուած յաւիտեանս ամէն<sup>3)</sup>, իսկ արտաքս ածեն լով զնոսա և առ Բեթանիայն ամբարձեալ զմարդկայինս իւր ձեռու մինչ այնորիկ ժամանակի մտահաճէր զքարոզն

229r. 10 աշխարհի, եթ՛ ոչ երեսյթութիւն իմն էր, որ տեսանիւրն, այդ հոմասեռ որք տեսանեն եղեւ և հոմագոյ. հչ յեղութիւն համբերեաց յայն, որ ոչն էր. և ոչ այզայդութիւն, այդ մնացեալ Աստուած, հոմագոյ ծնաւղին Հաւր՝ եղեւ տնաւրինաբար, և ոչ բնութեամբ բանիւ, մարդ վասն մեր 15 և սակա մերոյն փրկութեան, զի կարիցէ մեզ զ' ի վերայց երկրիս երեխի՝ Աստուած ելով Բանն. իսկ ախտակրել մարմնով իւրով, ըստ որում երևեցաւ զ' ի վերայց երկրիս. բարեբանեաց իսկ զաշակերտսն իրը Աստուած՝ իւրով իշխանութեամբ տալով նոցա զբարեբանութիւն իւր: իսկ

20 երանելիք աշակերտքն անուամբ Յիսուսի բարեբանեին և բժշկեին և զամենայն նշանս կատարեին, զի մարդիկ սուրբ գոյին՝ ճանաչելով զիւրեանց Տէրն Քրիստոս, իրը ընդունիչք զառ ի նմանէ տուեցելոյ նոցա շնորհին»:

229v. 15 իսկ զատուցեալ դարձեալ ոթիւքն մարդկայնսովք 25 ի նոցանէ՝ վերաբերիւր յերկին, տեսանելով աշակերտացն, և հրեշտակը առ առաքեալսն ասեին, եթ՛ այսուզ և կեսցէ Յիսուս, յայտ եթե ներկրորդում իւրոյ զալստեանն, զոր աւրինակ վերացաւ յերկին. և աշակերտքն երկրպագեալ զիւամբարձեալն, դարձան յերուսաղէն<sup>4)</sup>, Արդ՝ 30 եթե մարդ զնա պարզաբար ախտակրելի երկրպագեցին, կամ եթե մարդոյ բնութիւն, ըստ որում երկարնականքն ասել իշխեցին, մարդապարիչագ երանելիքն աշակերտք ըստ նոսա, որպէս բազում անգամ առացաք. այդ հչ է այս, քան լիցի. քանզի զՏէր Աստուած իւրեանց 35 երկրպագեցին և զմեղ երկրպագել ուսուցին զիսաչեցեալն՝ Աստուած զնա ճշմարիտ և Տէր փառաց քարոզելով զնդ երկնաւաւ»:

<sup>1)</sup> Գործք Բ. 16—17. հմմտ. Յովէլ Բ. 28—32. <sup>2)</sup> Ա. Յովհ. Ե. 20. <sup>3)</sup> Հռովմ. Բ. 5. <sup>4)</sup> Հմմտ. Ղուկ. Իդ. 50—53., Գործք Ա. 9—12.

«Ամաջեացեն երկաբնականքն և Եւտիքեայ աշակերտքն, և տարաբեղունք \* Մանխքեցւոցն պատկառեացեն՝ հանդերձ Նեստորիւ և ամենայնիւք հերձուածողաւք, քանզի Բանն մարմին եղեւ<sup>1</sup>, այս է մարդ՝ ընդ մնալոյն Աստուած»:

5

«Սա Յիսուս Քրիստոս Աստուածն մեր, և հչ համարես-  
ցի իբր միւս առ նա՝ Աստուածն Բան գոլով, քանզի յերկրի  
երեւեցաւ<sup>2</sup>, Աստուած ելով Բան՝ մարմնացեալ ի սրբոյն  
կուսէ սակա անաւրէնութեան, մնացեալ իսկ և այսպէս Աս-  
տուած բարեբանեալ Քանզի Աստուած Տէր ելով՝ յայտ-10  
նեցաւ մեզ. սակա այսորիկ տաւնել պարտիմք և խնդալ՝  
վասն անուան նորա կրելով: Տեսաք իսկ զուղնորութիւն  
ինքեան մարմնացելոյ Աստուծոյ, ի ձեռն սրբոց աւետա-  
րանչացն՝ զգնացութիւնս Աստուծոյ արքայի, խաւսողին ի  
Սինայ ի սրբում և աւրինադրաւլին զաւրէնն: Այս թա-15  
գաւորս Յիսուս Թագաւորելով ի տունն Յակովբայ յաւի-  
տեանս և արքայութեան իւրոյ ոչ ունելով վախճան<sup>3</sup>, վե-  
րանցեալ ի բարձունս, գերեաց գերութիւն և ետ տուրս  
մարդկան, որ զաւրէնն ի Սինայ ի սրբում խաւսեցաւ՝  
ըստ առաքելոյ և սաղմոսերգին ձայնի<sup>4</sup>: Սա արդարու-20  
թեամբ զատեցաւ զանկեալս ժողովրդեանն և կեցոյց զոր-  
դիս աղքատաց, գնեաց զնոսա իւրով արեամբ, նուաստա-  
ցուցեալ և եղեալ զգոռոզն ընդ ոտիւք հաւատացելոցն 230v.  
առ կոփիեր»:

«Սորա անունս նախ արեգական գայր և նախ լուս-25  
նի<sup>5</sup>, յ(ա)ւէտախաղացարար ի Հաւրէ նախ վաղորդայ-  
նազգեցկին<sup>6</sup> ծնիցեալ»<sup>6</sup>:

«Սա ժառանգս ամենայնի տնաւրինարար եղեալ,  
որով եարար զյաւիտեանս Հայրն»<sup>7</sup>:

«Սա ի սկսրանէս երկրի հիմնարկիչ, և գործք ձեռաց 30  
աւծելոյն առ ի յԱստուծոյ են երկինք»<sup>8</sup>:

«Ամա ասի յամենայն արարածոյս. Աթոռ քո Աս-  
տուած յաւիտեան յաւիտենի, գաւազան ուղղութեան  
գաւազան արքայութեան քո. սիրեցեր զարդարութիւն և  
ատեցեր զանաւրէնութիւն. վասն այսորիկ եաւծ զքեզ 35

\* ) Լուսանցքում՝ «Խորթք».      \*\*) Մնդ՝ «արաւուեկին».

<sup>1)</sup> Ցովհ. Ա. 14.      <sup>2)</sup> Բարուք Գ. 38.      <sup>3)</sup> Հմմտ. Ղուկ. Ա. 32-33.      <sup>4)</sup> Սաղմ. Կէ. 18-19. հմմտ. Եփես Դ. 8.      <sup>5)</sup> Սաղմ. ՀԱ. 17. 5.      <sup>6)</sup> Հմմտ. Սաղմ. ՃՊ. 3.      <sup>7)</sup> Հմմտ. Եբբ. Ա. 2.      <sup>8)</sup> Սաղմ. ՃԱ. 26.

Աստուած, Աստուած քո, եւդ ուրախութեան քան զնդունիչա քո»<sup>1</sup>:

«Սա ծնիցեալս ի Բեթղեհէղ \*<sup>2</sup>, ծնիցեալ յաստուածային կուսէ Մարեմայ, որ ի սկսրանէ աւուրց յաւիտենիս 5 ծնիցեալն յԱստուծոյ և ի Հաւրէ»:

«Սմա Եթիովպիս ժամանեաց գձեռն նէրա \*\*, ի ձեռն ներքինայն ասելով՝ Ահա ջուր, զի՞նչ արգելու զիս մկրտիլ»<sup>3</sup>:

«Սմա թագաւորութիւնք երկրի նուագեն և երգեն, և 231v. 10 ամենայն ազգք ծառայեն»<sup>4</sup>, Աստուծոյ ելում ճշմարտի|և վերելակելում յերկինն երկնի ընդ արևելու»<sup>5</sup>:

«Սա վայրանցեալս իբրև անձրև ի գեղմն»<sup>6</sup> և մարմացեալ ի Կուսէ և ծնիցեալ ի նէմայ՝ ծագիչն յաւուրս իւր զարդարութիւն<sup>6</sup> և վերանցեալ գեր ի վերոյ ամենայնց 15 երկնից, զի լցցէ զամենայն զառ ի նմանէ տուելով խազագութեամբն. քանզի խաղաղագործեաց արեամբ խաչի իւրոյ զ' ի վերայս երկրի և զյերկինսն, և ընդ մեզ երգեն նմա սուրբ հրեշտակք, ասելով՝ Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկրի խաղաղութիւն»<sup>7</sup>:

20 «Սա տիրեաց ի ծովէ մինչ ի ծով և ի գետոց մինչ ի յեզերս աշխարհիս»<sup>8</sup>. յարեաւ իսկ ի մեռելոց թաղեցեալն Աստուած մարմնացեալ և ցրուեցան թշնամիք իւր և փախեան ի դիմէ նորա»<sup>9</sup>:

«Սա էր ասաւզն ի ձեռն Ովսէյ մարգարէի. ի ձեռնէ ուսնէ դժոխոց փրկեցից զնոսա, ի մահուանէ փրկանաւորեցից զնոսա»<sup>10</sup>, ինքն ասէր. Ես իսկ Տէր Աստուած քո ի վեր ածի զքեղ յԵղիպտոսէ»<sup>11</sup>, Եւ դարձեալ՝ Ես Տէր Աստուած քո, հաստատելով զերկին և չիննելով զերկիր.|որոյ ձեռք չինեցին զամենայն զաւրութիւն երկնի»<sup>12</sup>; ի Քրիստոսի իսկ չինեցաւ զ'յերկինսն և զ' ի յերկրիքս»<sup>13</sup> ի նմա, և թանց նորա եղեւ և հչ մի»<sup>14</sup>, որպէս ասեն առաքեալքն»:

«Սա Տէր Աստուած, որ յափշտակեաց զմեզ՝ վանեալ և վիրապատեալ և զողջութիւն մեզ ընձեռեալ, յետ երկուց աւուրց՝ յաւուրն երրորդի յարուցեալ ի մեռելոց իբր 35 Աստուած»:

\* Անշուշա պիտի լինէր «Բեթղեհէմ». \*\*) Լուսանցքում՝ «Փւր».

<sup>1)</sup> Սաղմ. ԽԴ. 7—8. <sup>2)</sup> Գործք. Ը. 36. <sup>3)</sup> Հմմա. Սաղմ. ՀԱ. 11.

<sup>4)</sup> Հմմա. Սաղմ. Կ. 34. <sup>5)</sup> Հմմա. Սաղմ. ՀԱ. 6. <sup>6)</sup> Հմմա. Սաղմ. ՀԱ. 7.

<sup>7)</sup> Հմմա. Սաղմ. Բ. 14. <sup>8)</sup> Հմմա. Սաղմ. ՀԱ. 8.

<sup>9)</sup> Հմմա. Սաղմ. Կ. 2. <sup>10)</sup> Ովսէ Ժ. 14. <sup>11)</sup> Ովսէ Ժ. 9.

<sup>12)</sup> Ովսէ Ժ. 4. <sup>13)</sup> Հմմա. Կազա. Ա. 16. <sup>14)</sup> Յագի. Ա. 3.

«Եւ Ամովսաւ նոյն պատրաստէ, յորդորէ զիսրայէղ՝ վերածայնել զՏէր Աստուած իւր. Զի ես, ասէ, հարստելով որոտումն և շինելով ոգի և պատմելով մարդկան զաւծեալ նորա»<sup>1</sup>.

«Վերծանէր իսկ ի ժողովաբանին ասելով. Ոգի 5 Տեսոն առ իս, որոյ սակա եւած զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս, քարոզել գերեաց թողութիւն և կուրաց վերատեսութիւն. առաքել զմանրեալս թողութեամբ, քարոզել տարի Տեսան ընդունակ<sup>2</sup>: Ինքն ոչ ինքեամբ պատմեաց զինքն մարդկան. և Տէր Աստուած ա-10 մենակալ անուն նորա»<sup>3</sup>:

«Զսա տեսանելով արեգական խաչեցեալ, եմուտ միշաւրեի և խաւարագործեցաւ \* յաւուր լոյսն ի վերայ երկրի, և սակա այսորիկ յանցումն հրեիցն դարձան տաւնը»<sup>4</sup> 232r. նոցա ի սուգ և ամենայն երգը նոցա յողբա. կոծեին իսկ 15 և զնա, ողբային զ' ի նայն հաւատացեալք դստերք Երուսաղէմի՝ իրը սուգ սիրելոյ, և որք ընդ նմա եին՝ իրը աւրցաւոյ \*\*, թաքուցանելով վասն երկիւղին հրեից»:

«Սա է, որ կանգնեաց զտաղաւարն Դաւթի զանկեալն<sup>5</sup>, որ թագաւորեացն յաթոռն Դաւթի յաւիտեանս<sup>6</sup>, 20 զոր արտաքս խնդրեցին մնացորդք մարդկան և ամենայն ազգք<sup>6</sup>, իրը արարիչ զառ ի նմանէ ասացելոցն»:

«Եւ ի Միքէս ինքն ի Բնեթղենմ իշխան հսրայեզի՝<sup>7</sup> ի կուսէ ծնիցեալ, և նախ յաւիտենիս գոյր ի Հաւրէ ծնիցեալ իրը Աստուած. քանզի ո՛ Աստուած, բայց նորա, որ 25 ի բաց բառնայ անաւրէնութիւնս և գերազանցէ անիրաւութիւնս հաւատացելոց ի նա. զի կամեցաւղ ողորմութեան է»<sup>8</sup>:

«Եւ ի Յովէղ նոյն հեղուկ կամ առաքել խոստանայ յիւրմէ Հոգւոյն յամենայն մարմին զ' ի նայն հաւատացելոց<sup>9</sup>, 30 որպէս ահա նախասացաւ. քանզի Հաւր խոստումն Որդույն է, սակա որոյ ասէ. Սա առաքեմ, որպէս իշխանութիւն ունելով՝ զիստումն Հաւր առ ձեզ»<sup>10</sup>:

«Եւ յԱրդիքա ինքն երկի Տէր բոլորեցուն. քանզի՝ Եղիցի, ասէ, Տեսան թագաւորութիւն<sup>11</sup>, ի սորդի(?) Դաւթի՝<sup>12</sup> 35

\* ) Լուսանցքում՝ «խաւրեցաւ».      \*\*) Ընդ՝ «զարա(ծոյ)».

<sup>1)</sup> Ամովս Թ. 13.      <sup>2)</sup> Ղուկ. Թ. 18—19. հմմա. եռայի ԿԱ. 1—2.  
<sup>3)</sup> Հմմա. Ամովս. Թ. 13.      <sup>4)</sup> Ամովս Թ. 11.      <sup>5)</sup> Ղուկ. Ա. 32.  
<sup>6)</sup> Ամովս Թ. 12.      <sup>7)</sup> Միք. Ե. 2.      <sup>8)</sup> Միք. Ե. 18.      <sup>9)</sup> Յավէւ Ք. 28.      <sup>10)</sup> Հմմա. Ղուկ. Ի. 49.      <sup>11)</sup> Արդիու 21.

**Թագաւորէ** ի տուն Յակովայ յաւիտեանս, և **Թագաւորութեան** իւրոյ հչ է վախճան»<sup>1)</sup>

«Եւ ի Յովիս ինքն վերագաղափարի թաղեալ յերկրի և յաւուրն երրորդում յարուցեալ՝ փրկանաւորիչն յապահ կանութենէ զկենդանութիւն մեր, Տէր Աստուած մեր»:

«Եւ ի Նաւում ինքն խոստանայ մանրել ի մէնջ զգաւազանն, կամ եթե զմէնջ զիշխանութիւն գոռողին սատանայի, և զկապանս մեր ի բաց հատանել, զոր և ճահճործեաց իրը Աստուած, և ի տանէ Աստուծոյ ի բաց ջըն-  
10 ջեաց զդրաւչեալս և զհալածոյսն. մահ եցոյց երկրպա-  
գաւազացն զնոսա՝ եկեալ և աւետարանեալ աղքատաց զառ  
ի նայն խաղաղութիւն<sup>2)</sup>, և խաղաղութիւն ընձեռէր մարդ-  
կան զիւրն. Տանել իսկ հրամայէ որք ի նայն հաւատան  
233r. և հաւուցանել նմա զաղաւթմն՝<sup>3)</sup> խոստացեալ ի միջոյ առ-  
15 նել ի նոցանէ զհնութիւնն<sup>4)</sup>. քանզի ամենայն Քրիստոսիւ-  
նոր. վասն զի կատարեցաւ և ի բաց բարձաւթչնամին ի ձեռն  
մահուն Տեառն, և ել ի դժոխոց Տէր՝ յարուցեալ եռաւրեայ  
ի մեռելոց, որ փչեաց ի դէմո առաքելոցն և ի բաց կորզիչ  
զմեզ ի նեղութենէ՝ ասելով. Առէք զՀոգի Սուրբք»<sup>5)</sup>:

20 «Իսկ Ամբակում լուեալ զլուր նորա երկեաւ և ար-  
տակացեաց<sup>\*</sup> ի գործս նորա ճանաչել զնա. ի վերջնում  
ամացն մարդարէանայ, զի որ եարարն յոչ գոլոյ ի գոլ զա-  
մենայն՝ Աստուածն Բան, յերկրի երեսցի՝ եղեալ մարդ,  
մնալով Աստուած, և ընդ մարդկան շրջեսցի. արտակացեաց  
25 իսկ և յորս կատարել հանդերձեալ էր ի վերայ մարմնաւորի  
իւրոյ<sup>\*\*</sup> գալստեանն. մարդ ի կուսէ ծնի և քաւարան մեր  
եղեալ՝ մնալովն Աստուած, և ծանուցեալ ի հաւատացելոց  
ի նա, եթ՝ երգաբանեալն ի քերովքեից ի վերջնում ա-  
ւուրց յայտնեցաւ մեզ, Աստուած ելով Տէր, որոյ առաքի-  
30 նութիւն զերկինս ծածկեաց, և նորա գովութեամբն լցաւ

233v. ամենայ(ն) երկրը և լուսով | նորա լուսաւորեաց: <sup>6)</sup> Քանզի  
խոռվեցելոյ մերօյս անձին բարկութեամբ սակս նԱդամ  
զանցաւորութեանն՝ երեսցաւ մեզ, Աստուած ելով Տէր, և  
ըստ բազում ինքնան ողորմութեան կեցոյց զմեզ՝ ի ձեռն  
35 լուացարանի դարձեալ ծնելութեան և նորոգութեան Հոգ-  
ւոյն Սրբոյ. ուր արտաքս եհեղ ի մեզ փարթամաքար Յի-  
սուս Քրիստոս և ի ձեռն իւրոյ փչմանն, ասելով՝ Առէք

<sup>1)</sup> Լուսանցքում՝ «հիւացաւ».

<sup>4)</sup> Անգ՝ «նորա».

<sup>2)</sup> Նաւում. Ա. 13—15. <sup>3)</sup> Ետ-  
աւմ Ա. 15.

<sup>1)</sup> Հմմա. Ղուկ. Ա. 32. <sup>2)</sup> Նաւում. Ա. 9—10., Եփեռ. Գ. 22—24.

<sup>3)</sup> Ցմմ. Պ. 22. <sup>6)</sup> Ամբ. Գ. 2—4.

զՀոգի Սուրբ, և առաքեալ յերկնուաստ զխոստումն Հաւը  
և զգեցոյց զմեզ ի բարձանց կարութիւն»<sup>1:</sup>

«Եւ Սովոնիաս իսկ մարդարէանայ յաղագս նորա.  
Փոխանակ որոց, ասէ, նախատեին և մեծաբանեին առ  
Տէրն ամենակալ ի խաչին առդնացեալքն, յայտ եթե և 5  
ասաւզքն՝ եթ՛ Որդի ևս Աստուծոյ, էջ ի խաչէդ<sup>2:</sup> սակս  
այսորիկ երեսացի Տէր ի նոսա, յայտ եթե յարուցեալ ի  
մեռելոց և ի բաց կորուսեալ զամենայն աստուածս աղքաց  
երկրի, որում երկրպաղեն յիւրաքանչիւր ի տեղւոյ իւր-  
եանց ամենայն կզզիք և ամենայն ազգք երկրի, Աստուած»<sup>10</sup>  
գիտելով զնա ճշմարիտ<sup>3:</sup> Սակս այսորիկ խնդակը յոյժ և 234r.  
քարոզեմք՝ ուրախացեալք և բերկրեալք ի բոլոր սրտէ  
մերմէ, զի շուրջ քակեաց Տէր զանիրաւութիւնս մեր և  
փրկանաւորեաց զմեզ ի ձեռանէ իմանալեաց թշնամենացն,  
և թագաւորեաց Տէր ի միջի մերում և ետ զմեզ անուա- 15  
նիս և ի պարձանս յամենայն ժողովուրդս երկրի, դարձու-  
ցեալ զգերութիւն մեր՝ իրը Աստուած»<sup>4:</sup>

«Եւ Անգեա ցուցանէ զարձեալ Աստուած, որոյ ձայնն  
երկրի շարժեաց՝ ի խաչին աղաղակելով նորա յայնժամ,  
որպէս ասէ առաքեալ, ինքն խոստանայ ասելով՝ Տակա- 20  
լին եղ հազ ես սասանեցից զերկին և զերկիր և զծով և  
զցամաք»<sup>5:</sup>

«Եւ ի Զաքարիա ինքն խոստանայ գալ և տաղաւարիլ  
ի մեզ. և փախնուլ ի նա զազդս բացումս, և զի եղիցին  
նմա ի ժողովուրդ<sup>6:</sup> և տաղաւարեացեն ի սրբում ն(ո)րա 25  
կոչարանին\*»:

«Եւ դարձեալ խնդալ հրամայէ Սիովնի և քարոզել  
երուսաղէմի, զի ահա թագաւոր քեզ, ասէ, դայ, քեզ ար- 234v.  
դար և ապրեցուցիչ, ինքն հեզ և վերելարկեալ յէշ\*\* և  
յաւանակ նոր՝ Վկայեաց իսկ յաղագս Քրիստոսի զամեն- 30  
այն զայս աւետարանիչն, եթ՛ և թագաւոր և հեզ և վրկիչ  
դոյր վերելակեալն ի վերայ յովանակի և գովեալ յամենայն  
ժողովրդենէ՝ իրը Աստուած գոլով ճշմարիտ և բարեբան-  
եալ յաւիտեանս և արքայ իսրայեղի<sup>8:</sup>»:

«Եւ Մաղաքիաս մարդարեանայ յաղագս նորա՝ իրը 35  
յաղագս Ղեեայ զբան առնելով. քանզի Քրիստոս եկեալ  
քահանայապետ հանդերձելոցն բարեաց, միով պատարա-

\* Լուսանցքում՝ «եկեղեցւոյ».

\*\*) Անգ՝ «ընդլծակ».

<sup>1)</sup> Հմմ. Ղակ. Խ. 49. <sup>2)</sup> Մատթ. Խ. 40. <sup>3)</sup> Սովոնիս  
Բ. 10—11. <sup>4)</sup> Սովոն. Դ. 15 և 20. <sup>5)</sup> Անդ. Բ. 6. <sup>6)</sup> Զոք.  
Բ. 10—11. <sup>7)</sup> Զոք. Բ. 9. <sup>8)</sup> Հմմ. Մատթ. Խ. 4—5.

գաւ կատարեաց ի հանապազիորդն զսրբեալան, որպէս  
առէ Պաւղոս<sup>1</sup>. և վասն մնալոյն զնա յաւիտեան՝ անհեր-  
քելի ունի զքահանայութիւնն, ուստի և ապրեցուցանելն  
յամենավախճանն կարէ զառաջի եկեալսն նովաւ Աստուծոյ.  
ԵԿատկ իմ էր ընդ նմա, ասէ, կենդանութեան և խաղաղու-  
թեան, և ետու նմա երկիւղիւ երկնչել զիս և ի դիմէտ ա-  
նուան իմոյ խորշիլ զնա. աւրէն ճշմարտութեան էր ի բե-  
րան նորա և անիրաւութիւն ոչ գտաւ ի շրթունս իւր. ի  
խաղաղութեան ուղղելով զնաց ընդ իս և բազումս ի բաց  
10 դարձոյց յանիրաւութենէ<sup>2</sup>:

«Միայնում իսկ Քրիստոսի վկայեաց գրութիւնն՝ եթե  
մեղս ոչ եարար և ոչ գտաւ նենդ ի բերան իւրում<sup>3</sup>. զի՝  
Հանգեաւ ի նմա Հոգի Աստուծոյ, հոգի իմաստութեան և  
զգաստութեան, հոգի խորհրդոյ և հարստութեան, հոգի  
15 գիտութեան և բարեպաշտութեան. և ելից զնա հոգի եր-  
կիւղի Աստուծոյ, որպէս ասէ Էտայիաս<sup>4</sup>: Զի այսպէս վա-  
յել է մեզ քահանայապետ սուրբ, անչար, անսաղտ, որո-  
շեալ ի մեղաւորաց և բարձրագոյն երկնից եղեալ,<sup>5</sup> իբր  
Աստուած ելով<sup>6</sup> ճշմարիտ Առափել իսկ նախընթաց մար-  
20 մնաւորի իւրոյ գալատեանն հրեշտակ կտակին զՄԿրտիչն  
ի Յովաննէս իբր իւր հրեշտակ խոստանայ՝<sup>7</sup> ինքն հանդեր-  
ձեալ մարմնանալ Տէրն փառաց: Իսկ նախ երկրորդի իւրոյ  
գալատեանն ինքն դատաւորն գալոցն Տէր Յիսուս՝ մի ելով  
և մարմնով, առափել զԵղիսա Թեսրացի խոստանայր, յիշե-  
25 25 ցուցանելով համանգամայն, նեթ՛ ինքն է աւրինադրիչն Մով-  
սէսի, Ասէ իսկ նովին մարգարէիւ. Եւ ահա ես առաքեմ  
զԵղիսա Թեսրացի նախ քան զգալ զաւրն Տեառն զմեծ և  
զյայտնին, որ հաւանեցուցէ զսիրտ Հաւր առ Որդի և  
զսիրտ մարդոյ առ Ընկեր իւր. գուցէ եկից և ստակեցից  
30 զերկիր իսպառ<sup>8</sup>. յիշեցէք զաւրէնն Մովսէսի ծառայի իմոյ,  
ըստ որում պատուիրեցի նմա ի Քորէք՝ առ ամենայն իս-  
րայէզ հրամանս և իրաւունս<sup>9</sup>:

«Եւ Էտայիաս իսկ մարդարէանայ ծնանիլ զԵմմա-  
նուէզ ի սրբոյն կուսէ<sup>9</sup> և ծաղիկ զնա անուանէ յարժա-  
35 տոյն Յեսսեայ<sup>10</sup>, և Տէր զնա սրբել, և ի նմանէ երկնչել իբր  
Աստուած, և նմա հաւանել և սրբիլ ի նմանէ, և իշխան զնա

<sup>\*</sup>) Զեռագրում՝ «Եկեկ».

<sup>1)</sup> Հմմա. Երբ. թ. 11—14. <sup>2)</sup> Մազաքիս թ. 5—6.  
<sup>2)</sup> Եսայի Եթ. 9. <sup>4)</sup> Եսայի ԺԱ. 2—3. <sup>5)</sup> Հմմա. Երբ. կ. 26.  
<sup>6)</sup> Հմմա. Մաղ. թ. 1. <sup>7)</sup> Մազաք. թ. 5—6. <sup>8)</sup> Մազաք. թ. 4.  
<sup>9)</sup> Հմմա. Եսայի կ. 14. <sup>10)</sup> Հմմա. Եսայի ԺԱ. 1.

ազգաց<sup>1</sup>, և եթ' ինա ազգքը յուսան<sup>2</sup>. և բազումս այլս յազագս նորա մարդարէանայ. և զթիկումս տուեալ նորա ի խարազանս և զծնաւտս յապտակս և զդէմս յամաւթ թըք-մանց<sup>3</sup>, և վասն մեղաց ժողովրդեան աճեալ զնա՝ զանմեղն ի մահ և յանաւրէնս համարեալ, և զմեղս մեր բերաւզն<sup>4</sup> և 5 վասն մեր ցաւեցեալ ի խաչին և Աստուած զնա անուանէ . և Տէր և լոյս<sup>5</sup>:

Ամաչեսցեն երկարնականքն, քանզի ինքն է Աբա-  
րիչ զերկին և մածուցիչն զնա, հաստացուցիչ զերկիր  
և զ' ի նմայսն<sup>6</sup>. քանզի ի նմա շննեցաւ ամենայն, որ 10  
յերկինս և որ ի վերայ երկրի ի նմա՝ ըստ երանելիոյն  
Պաւղոսի ձայնին<sup>7</sup>. Ամաչեսցեն նոյնպէս Եւտիքիանա-  
կանքն, թոռունք Մանիքացւոցն. քանզի ահա մարդարէս  
գոչէ, և (թ') թիկումս ունէր և ծնաւտս և դէմ, և վասն մեր  
ցաւոյն զգայր, ըստ ամենայնի նման մեզ՝ առանց միայ-  
նւոյ մեղաց: Քանզի պարտ էր զնա՝ հոմազոյ մեզ եղեալ  
տնաւրինաբար, հանդերձ մնալովն Աստուած, կրել յա-  
զագս մեր զնախասացեալսն, և զկողն խոցիլ և քացախ և  
զեղի արբուցանիլ. և որքան կրեաց մարմնով իւրով ի  
վերայ մեր և վասն մեր:

«Եւ Երեմիաս յաղացս նորա մարդարէանայ ասե-  
լով՝ Եւ մարդ է և ով ծանիցէ զնա<sup>7</sup>. և դարձեալ՝ Սա  
Աստուած մեր և հչ համարեսցի միւս առ նա. արտաքս  
եգիտ զամենայն ճանապարհ հանճարոյ և ետ զնա Յա-  
կովբայ պատանւոյնիւրում և Խսրայեղի սիրեցելոյն ի 25 236v.  
նմանէ<sup>8</sup>, զի ցուցցէ, թե ինքն էր աւրինադրիչն ի Սինայ,  
և ի ձեռն մարդարէից Որդւոց Խսրայեղի. յետ այսորիկ և  
յերկրի երենեցաւ և ընդ մարդկան վերադարձեաց<sup>9</sup>: Եւ  
դարձեալ՝ Ոզի դիմի մերոյ Քրիստոս Տէր, ըմբռնեցաւ  
յապականութեան մերում, որում ասացաք՝ ի ստուերի 30  
նորա կեցուոք յազգաւ<sup>10</sup>.

«Եւ Եղեկիէդ իսկ մարդարէանայ յաղացս բարի հո-  
վուին՝ ի սերմանէ Դաւթի յարուցելոյն, որոյ և ոչխարք  
յատուկը՝ բանական ոչխարք<sup>11</sup>: Որպէս և Պետրոսի ասէ՝

<sup>1)</sup> Լուսանցքում՝ «Ոչ հաճելի է արուեստաբանութիւն անարտես-  
ակդ այդուրիկ թարգմանչի, ոք զգեղեցիկոդ արար ան(դ)եղադ(է)շ  
և զ(ք)աջաշն(ոք)հէ՝ բան(ի)ցն անյարմարութեամբ (ա)րար աաղակալի»:

<sup>2)</sup> Հմմա. Եռայի Եթ. 4.      <sup>3)</sup> Եռայի Եթ. 4.      <sup>4)</sup> Եռայի Եթ. 6.

<sup>4)</sup> Հմմա. Եռայի Եթ. 4.      <sup>5)</sup> Հմմա. Եռայի Եթ. 5.      <sup>6)</sup> Կողոս.

Ա. 16.      <sup>7)</sup> Եղեմ. Ժէ. 9.      <sup>8)</sup> Բարուց Դ. 36—37.      <sup>9)</sup> Բարուց

Դ. 38.      <sup>10)</sup> Թղթ. Դ. 20.      <sup>11)</sup> Հմմա. Եղեմ. Լդ. 28 և 31.

Հովուեամ զոշխարս իմ<sup>1</sup>: Զայս, ասէ, ասէ Տէր Տէր. զկորուսեալն ինդրեցից և զմոլորեալն գարձուցից<sup>2</sup>, Եւ ի վերայ երկրի երեսեալ և ընդ մարդկան վերադարձեալ՝ ասէր.

Ոչ առաքեցայ, եթ՛ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն իսենքայեղի<sup>3</sup>. և Եկն Որդի Մարդոյ ինդրել և կեցուցանել զկորուսեալն<sup>4</sup>: Սա մանրեաց զլուծ հարկին\* մերոյ և արտաքս եհան զմեղ ի ծառայեցուցչն՝ զնորատունկս խաղաղութեան<sup>5</sup>, ասաւզն. Եկայք|առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորեալք, և ևս հանգուցից զձեղ. բարձէք 10 զլուծ իմ ի ձեղ և ուսարհւք յինչն, զի հեղ եմ և նուաստ սրաիւ, և գտանիցէք հանգիստ անձանց ձերոց, զի լուծ իմ քաղցր և բեռն իմ թեթև է<sup>6</sup>: Ուրեմն Աստուած Քրիստոս և զիւրն լուծ ի մեզ գոյ խորհեցնեալք:

«Եւ հրեշտակն ի ձեռն Դանիէղի մարդարէանայ, եթ՛ 15 եւթանասուն եւթներեակք հատցին ի ժողովուրդն և ի քաղաքն սուրբ, մինչ սպառել մնջացն և ջնջիլ անաւրէնութեան և քաւիլ անիրաւութեան, և ածել զարդարութիւն յաւիտենական և կնքել տեսութիւն և զմարդարէն, և աւծանել զուրբը սրբոցն: Եւ խոհականաւոնայ Դանիէղի ի հրեշտակէն յարտաքս ուղութենէ բանին, առ ի պատասխանել նորա և ի շինել զերուսաղէմ. մինչ աւծելոյ առաջնորդին՝ եւթներեակք եւթն և եւթներեակք վաթսուն և երկու<sup>7</sup>: Խակ ի վերայ ոչ միոյ ծնիցելոյ ի կանանցն այսպիսի ճահագործեցաւ, եթ՛ ոչ ի վերայ 20 հմմանուեղի, իւր ելոյ Աստուծոյ և մարդոյ. հչ այդոյ ելոյ Աստուծոյ և այդոյ մարդոյ. քանզի Բանն մարմին եղե<sup>8</sup>, մնալովն Աստուած: Քանզի յորժամ եկն յերկիր երեսեալ աւծեալն տնաւրինաբար, սուրբ սրբոցն, համարեալ կատարումն աւրինի և մարդարէիցն Քրիստոս<sup>9</sup>, ծագեաց ահա 25 յաւուրս իւր զարդարութիւն<sup>10</sup>. իսկ՝ Աւուրս բազումս, որպէս զրեցաւ յՈւսեէ մարդարի՝ նստան որդիքն իսրայեղի, հչ ելոյ արքայի և հչ իշխանի, հչ ելոյ զոհի և հչ զոհարանի և հչ քահանայութեան, և հչ որ զեկուցանէր<sup>11</sup>. իսկ եկն սուրբ սրբոցն Քրիստոս, յորժամ եկն լրումն ամանակին<sup>12</sup>, և թագաւորեաց ի տունն Յակովբայ յաւիտեանո<sup>13</sup>:

\* ) Լուսանցքում՝ «իբր անուր երկաթի».

<sup>1)</sup> Յովհ. Խ. 16, 17. <sup>2)</sup> Եղեկ. Լ. 16. <sup>3)</sup> Մատթ. Ժ. 24.

<sup>4)</sup> Ղուկ. Ժ. 10. <sup>5)</sup> Եղեկ. Լ. 27 և 29.

<sup>6)</sup> Մատթ. Ժ. 28—30. <sup>7)</sup> Դան. Թ. 24—25. <sup>8)</sup> Յովհ. Ա. 14.

<sup>9)</sup> Հմմա. Մատթ. Ե. 17. <sup>10)</sup> Հմմա. Մատթ. Հ. 7. <sup>11)</sup> Ուկտ. Պ. 4.

<sup>12)</sup> Հմմա. Դաղաս. Պ. 4. <sup>13)</sup> Հմմա. Ղուկ. Ա. 32.

Եւ զայս զեկուցանելով յառաջադոյնսն՝ մարդարէանայր, եթե յաւուրս թագաւորացն այնոցիկ յարուսցէ Աստուած երկնի թագաւորութիւն ի վերայ երկրի, որ յաւիտեանս ոչ ապականեսցի և թագաւորութիւն նորա ժողովրդեան միւսում ոչ մնասցէ, անաւաբեսցէ և մալեսցէ զամենայն, և 5 ինքն վերակացեսցէ յաւիտեանս. քանզի ի լերանէ հատեալքար առանց ձեռաց, որ քար է ծայր անկիւնական, 238r. ընտրեալն և պատուական<sup>1</sup>. որ թանց մերձաւորութեան առն՝ ի կուսէ ծնիցեալ, մնալով իսկ և այսպէս Աստուած և հոմագոյ ծնաւղին Հաւը, եղի իսկ ի լեառն մեծ և ելից 10 զամենայն երկր, անախտաբարն ի Հաւըէ և անճառաբար նախ յաւիտենիցն ծնիցեալ. Սա խորտակեաց զպատկերն, այս է՝ զդոռոզն բանսարկու, և զաստուածս աղզացն՝ զոսկեզինսն և զարծաթեղինս և զպղնձիս և զերկաթեայս և զիսեցեղինս, և մանրեաց զնոսա, և եղեն իրբն փոշի,<sup>2</sup> և զա- 15 մենայն փառս թագաւորացն իրբն ծազիկ խոտոց եցոյց<sup>3</sup>, և թագաւորեաց ի տունն Յակովրայ յաւիտեանս, և թագաւորութեան իւրոյ ոչ եղիցի վախճան<sup>4</sup>, իսկ մարդոյ բնութիւն թագաւորել ոչ կարէ յաւիտեանս:

Ահա ամենեքեան աւետարանիչքն զ' ի մարդարեիցն 20 քարոզեցեալ, ինքներեսութեամբ տեսանելով ի Քրիստոս՝ լրցեալ ուսուցին, և ոչ ուրեք երկու բնութիւնս մեզ կամ եթե ներկուս բնութիւնս աւանդեցին խոհել զմին Քրիստոս. այդ զնոյն քարոզեցին Աստուած նախայաւիտեան և զնոյն տնաւրէնաբար նզեալ մարդ, մնալով Աստուած, 25 զնոյն անախտ և ախտակրելի, զնոյն Աստուած, զնոյն մարդ:

Սոցին բաղաձայնս և սուրբ հարքն, որք ի Նիկեա՝ ուսուցին, և յետ նոցա եղեալք սուրբքն և կեղեցեացն վարդապետք, որպէս ի յառաջադոյնս բանս \* նոցա ապացուցաւ. քանզի նզովեն զյանդգնեալսն ասել երկուս բնու- 80 թիւնս, կամ եթե երկաբնութիւն՝ զմին Քրիստոս, և զոչսն խոստովանաւզս զնա եղեալ ըստ ճշմարտութեան մարդ՝ յանձնէ նմանակրէ մեզ և մարմնոյ, և զ' ի սրբոցն հարանց նզովեալս անա հաստատապէս նզովեցան և ի նոցանէ աղանդեալքն և աւրինադրեալքն մեզ հաստատապէս աւրի- 85 նադրեցան. քանզի զորս եթե կապեսցեն յերկրի, եղիցին այսոքիկ կապեալք յերկնի, և զորս եթե լուծցեն յերկրի.

\* Հուանըքում՝ «յառաջասացեալս».

1) Հմմա. Խոյի ԽԸ. 16. հմմա. Խիես. Բ. 20. 2) Հմմա.  
Դան. Բ. 44—45. 3) Հմմա. Խոյի Խ. 6—7. 4) Հմմա. Ղուկ Ա. 32.

եղեցին այսոքիկ լուծեալք յերկնի<sup>1:</sup> Քանզի զոմանս, ասէ.  
 239r. եղ Աստուած յեկեղեցւո՞ն նախ առաքեալս, երկրորդ մար-  
 գարէս, երրորդ վարդապետս<sup>2:</sup> և որ զաղայն վարդապե-  
 տութիւն ոչ բնդումի, իբր յնքենէ յԱստուծոյ խաւսեցեալ,  
 5 զԱստուած արհամ (արհէ)է՝ զտուիչն զՀոգին իւր Սուրբ ի  
 նոսա և եղեալ զնոսա յեկեղեցւոյ վարդապետս. սակա այ-  
 սորիկ ասէր Տէր առաքելոցն՝ վեսաւդն ձեզ ինձ լսէ և ար-  
 համարհիչն զձեզ զիս արհամարհէ»<sup>3:</sup>

Խակ փոխանակք սրբոց առաքելոցն երանելիք և ուղ-  
 10 ղափառք մնր հարքն. և զայս զեկուցանելով Տէր՝ ասէր առ  
 աշակերտսն յետ յարութեանն իւրոյ. «Եւ ահա ես ընդ  
 ձեզ եմ, ասէ, զամենայն աւուրս, մինչ ի վախճան յաւի-  
 տենիա»<sup>4:</sup> Յայտ իսկ է յաղագս սրբոցն առաքելոց, եթ՛ ոչ  
 զամենայն աւուրս մինչ ի վախճան ի մարմնի մնալով  
 15 գնալ հանդերձեալ եին զ' ի Քրիստոս հաւատացեալոն. ոչ  
 յաղագս նոցա ուրիմն եասաց միայնից, այդ և յաղագս  
 փոխանորդաց նոցա եղելոցն ուղղոյ հաւատոյ և վարդա-  
 պետութեան, և հետեւացելոց հետոցն՝ ըստ Աստուծոյ քա-  
 զաքավարութեան նոցա, և զմնացորդս նեղութեանցն Քրիս-  
 239v. 20 տօսի յիւրում մարմնի բարձաւղացն և վասն Քրիստոսի  
 ոչխարացն և վասն Քրիստոսի մինչ մահու ժամանելոց<sup>5:</sup>  
 զի հետեւացին հետոցն Քրիստոսի: Քանզի արտաքս հայ-  
 ցեաց, որպէս զուուրք առաքեալսն սատանայ, այսպէս և  
 զուուրքս հարսն մնր և զվարդապետս սրբոյ եկեղեցւոյ բա-  
 25 զում անդամ՝ առ ի տաստել զնոսա իբր ցորեան, այդ ոչ  
 պակասեաց նոցա հաւատոն<sup>6:</sup> ի նախարկութեան փորձու-  
 թեանցն: Քաջարտեին իսկ և զվասն նոցա անակնառա-  
 բար մաղթաւղին, զի ոչ նուազեսցէ հաւատ նոցա, և շի-  
 նեին ի ձեռն վասն Քրիստոսի ախտակրութեանն՝ ի վերայ  
 30 հիման առաքելոցն և մարգարենից, ելոյ ծայր անկիւնոյ ին-  
 քեան զվասն մնր ախտակրաւղին Քրիստոսի՝<sup>7:</sup> զաւրացուց-  
 չին զնոսա համբերել զառ ի թշնամեացն Աստուծոյ վերա-  
 ծեալս: Քանզի ուսան ի Քրիստոսէ՝ ոչ մեղկանալ ի փոր-  
 ձութիւնս, այդ հսկել և աղաւթել, առ ի զկամս Աստուծոյ  
 35 կատարեկլ ի նոսա. քանզի ունեին զՔրիստոս բնակեալ  
 յինքեանս, զնոգեկան վէմն և զանխղելի հիմն, յորում և

1) Մատթ. ԺԷ. 18. հմա. ԺԶ. 19. 2) Ա. Կոբիլ. ԺԲ. 28.

3) Հուկ. Ժ. 16. 4) Մատթ. ԻԷ. 20. 5) Դադատ. Զ. 17.

հմա. Բ. Կոբիլ. Դ. 10—11. 6) Հմա. Հուկ. ԻԲ. 31—32.

7) Հմա. Եփե. Բ. 20.

շինքն, իրը քարինք կենդանիք՝ | տուն հոգեկանի, քահա- 240r.  
նայարան սուրբ Աստուծոյ, զանձն յաւժարութեամբ վասն  
Քրիստոսի եղեալ հանապազաւր, և խնդալ վասն Քրիստոսի  
ախտակրութեանն միշտ և ասել. Ո՞ զմեզ որոշեցէ ի սիրոյն  
Քրիստոսի. այդ ոչ ոք. հչ նեղութիւն, հչ ճգնութիւն, հչ 5  
սով, հչ մերկութիւն, հչ հալածումն, հչ վտանգ, հչ սուր.  
քանզի վասն Քրիստոսի յաւժարապէս ունիմք ըստ միոջէ \*  
աւուրն մեռանելք <sup>1</sup>.

Քանզի ուսան սուրբ հարքն մեր ի հոգուապետէն  
Քրիստոսէ, եթե նուրբ էր դուռնն և նեղ ճանապարհն, 10  
տարաւղն ի կենդանութիւն <sup>2</sup>, և մրցութեան էր պէտ  
բազմի, որ ըստ Աստուծոյ՝ առ ի մտանել ընդ նուրբ դուռնն  
հալածանացն յերկնիցն արքայութիւն. ուսեալք եին յերա-  
նելոյն Պատրուէ, եթե բազում ճգնութեամբք պարտ ի  
ներքս երթալ յարքայութիւնն երկնից <sup>3</sup>: Լուան Տեառնն 15  
առաւղի. «Հովիւ քաջ զանձն իւր դնէ վասն ոյխարաց» <sup>4</sup>,  
և՝ «Եթե զիս հալածնեցին, և զձեզ հալածնեցին. եթե զրանն  
իմ պահեցին, և զձերն պահեցին» <sup>5</sup>, և՝ «Երանելիք հա-  
լածեալքն | վասն արդարութեան, զի նոցա է արքայու- 240v  
թիւն երկնից» <sup>6</sup>, և՝ «Երանեալք եղիցիք, յորժամ հալածես- 20  
ցեն զձեզ և նախափացեն և ասիցեն զամննայն չար զձէնջ՝  
ստելով վասն իմ. խնդացէք յաւուրն յայնմիկ և խայտա-  
ցէք, զի վարձ ձեր բազում յերկինս. քանզի այսպէս հալա-  
ծնեցին զմարգարէնն՝ զնախ ձեր», և «Դայ ժամ, զի ամենայն  
սպանիչն զձեզ թուիցի պարշտութիւն հատուցանել Աս- 25  
տուծոյ» <sup>8</sup>, և «Որ ոք խոստովանեսցէ զիս առաջի մարդկան,  
խոստովանեցից և ես զնա առաջի Հաւր իմոյ յերկինս» <sup>9</sup>:

Սակա այսորիկ առաքեալքն զպատուիրանս ճահա-  
գործելով զՏեառնն՝ ի ճգնութիւնս, ի հարկաւորութիւնս,  
ի հալածանս, ի նեղութիւնս համբերեցին վասն Քրիստոսի, 30  
և ուսուցանեին, եթե կամեցեալքն կեալ բարեպաշտու-  
թեամբ ի Քրիստոս Յիսուս հալածնեցին վասն Քրիստոսի<sup>1</sup>:

Յայտ եթե և զինչ կարեմ ասել ըստ արժանաւո-  
րութեան յաղագս սրբոցն հարանց, եղելոց վարդապետաց  
սրբոյ եկեղեցւոյ, ոք մինչ մահու նահատակեցան | վասն 35 241r.

\* ) Լուսանցքաւմ՝ «հանապազ».

1) Հասվմ. Բ. 35—36. 2) Հմմա. Մասթ. է. 14. 3) Հմմա.  
Բ. Քեռազ. Ա. 5. 4) Ցովհ. Ժ. 11. 5) Ցովհ. Ժ. 20. 6) Մասթ.  
Ե. 10. 7) Մասթ. Ե. 11—12. 8) Ցովհ. Ժ. 2. 9) Մասթ.  
Ժ. 32. և Ղուկ Ժ. 8.

ուղղափակին հաւատոյ։ Տէր պատերազմէր ի վերայ նոցա,  
որք ի ձեռն սրբոյ Հոգւոյն յաղթահարեցին զթագաւորս՝  
պատերազմիչս Աստուծոյ եկեղեցին, խաւելով ընդդէմ  
թագաւորաց զԱստուծոյ պատուիրանս, և ոչ ամաշելով ա-  
5 ռաջի իշխանաց և թագաւորաց՝ վասն Քրիստոսի ածեալք  
և բարձեալք. գիտեին իսկ, եթ՛ այն պատահեացէ նոցա  
ի փրկութիւն։ Ի ձեռն հաւատոյ գործեցին զարդարու-  
թիւն և պատահեցին խոստացելոցն բարեաց. իցին զբե-  
րանս առիւծուց. շիջուցին զկարութիւն հրոյ, փախեան  
10 զբերանս սրոյ, կարաւորնցան ի տկարութենէ. զի յորժամ  
տկարանային ի հալածմունս, յայնժամ կարաւորագոյն  
զանձնն գտանեին և քաջազգագոյնք առ վասն Քրիստոսի  
պատերազմն և ուժեղագոյնք, և զթչնամեացն հնարաւո-  
րութիւնս դիւրապէս ձեռնարկեին՝ \* ի ձեռն ուղիղ բանին  
15 և հաւատոյն, որ առ Աստուած։ Քանիք զվասն բարեպաշ-  
տութեանն մահ համբերեալք, պսակաւորք ի նահատակա-  
դրէն Քրիստոսէ վերաքարողիցան առաջի երկնայնոյ |

241v. Հաւրն և սրբոցն հրեշտակաց, զի լաւագունից յարութեանն  
պատահեացեն։ Քանիք սրբոցն հարանց այպանութեան և  
20 խարազանաց փորձ առին, յարտասահմանութեան շրջե-  
ցեալք և ի քաղաքէ ի քաղաք, և կապանաց և բանդի փորձ  
առին, քարարկեցան, փորձեցան որպէս զքեալ, մահու-  
սրոյ մեռան, շրջեցան փախուցեալք, յետոյացեալք, ձըգ-  
նեալք, չարընկալեալք, յանապատի մոլորեալք, և ի լերինս  
25 և անձաւս և ծակս երկրի։ Այդ այսոքիկ ամենեքեան վկա-  
յեցան յուղղափառէ հաւատոյն։ Քանիք կրեցին վասն  
Քրիստոսի եկեղեցեացն հովիւք առ Դեկեաւ թագաւորաւ  
և յետ նորայոցն հալածչաց զԱստուծոյ եկեղեցիս. Քանիս  
կրեցին յԱրիանոսաց՝ մեռուցեալք, արտասահմանեալք,  
30 հալածեալք և բանդարգեալք ընդ ուղղափառ հովիւն  
Քրիստոսի։ Այդ յայսոքիկ ամենեսին գերայալթեցին ի  
ձեռն սիրաւողին զնոսա Քրիստոսի. քանդի զհարուածս թի-  
սուսի ի մարմինս իւրեանց պարարերեին<sup>2)</sup> ի պարծանս  
իւրեանց՝ յաւրն Քրիստոսի։ Քանդի ոչ ունայն ընթանա-  
242r. 35 յին | և ոչ յունայն վաստակեցան. այսպէս իսկ ընթանա-  
յին, իբր ոչ անյայտապէս. այսպէս մրցեին, իբր ոչ զաւդ  
ծեծելով՝ յետոյցն մոռացումն առնելով և զյառաջագոյնս

Լուսանցքում՝ «Ընդձեռնեին».

1) Հմմա. Բ. Կողնթ. ԺԲ. 10. և Բ. Ցկմթ. Գ. 12. 2) Հմմա.  
Գաղատ. Զ. 17. և Բ. Կողնթ. Գ. 10.

ձգտիլով<sup>1)</sup>, Ըստ դիտաւորութեան հալածեցին՝ առ յաղթա-  
նշանութիւն վերնոյ կոչելութեանն Աստուծոյ, Քրիստոսիւ  
Յիսուսիւ Տէրամբ մերով. զարշաւանն կատարեցին, զհա-  
ւատն պահեցին. այսուհետեւ պահպանի նոցա պատկն ար-  
դարութեան, զոր հատուցէ Տէր նոցա յայնմ աւուր՝ ար- 5  
դարն դատաւոր, ընդ ամենեսեան սիրաւզա զյայտնու-  
թիւն նորա և զարքայութիւն<sup>2)</sup>: Ի պաղոց նոցա ուղղա-  
փառի հաւատոյ և պարկեշտի նոցա կենցաղոյ ծանեալք  
զնոսա, եթե ծառայք բարիք են, տնկեալք ի տան Տեան,  
և ի գաւիթս Աստուծոյ մերոյ ծաղկեցան<sup>3)</sup>. քանզի ազնիւս 10  
եկեղեցոյ Աստուծոյ ի բաց ծնան և փրկականս վարդա-  
պետութիւնս՝ երանելիք ամենեքեան հետեացեալքն վարդա-  
պետութեան սրբոցն և ուղղափառաց հարանցն, ոչ խո-  
տորեալք յաջ | և ոչ յահեակ յարքունական ճանապար- 242v.  
հէն<sup>4)</sup> ուղղափառի իւրեանց հաւատոյն, Քանզի զորս բա- 15  
րերանեցին առաջակայքս յայսմ մատենի սուրբք և ուղ-  
ղափառք հարքն, այսոքիկ յԱստուծոյ բարերանեալք են, և  
զորս հաստատեցին բանս ուղղափառի հաւատոյն, այսոքիկ  
յԱստուծոյ հաստատեցան: Նմանապէս՝ զոր եթ՝ անիծին և  
նզովեցին, այսոքիկ յԱստուծոյ անիծան և նզովեցան, և 20  
զորս տարաքարողեցին բանս, սոքս յԱստուծոյ տարաքա-  
րողեցան: Երանեալք ամենեքեան՝ հաւանեալքն ամենայնի  
աստուածաշունչ գրաւորութեանն և զ' ի նմա գրիցելոցն  
յաղագս միոյ Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի. քանզի  
աւգտակար է առ վարդապետութիւն ուղիղ և վերստին 25  
ուղղէ զահարմբռնեալսն և հետեացեալսն վարդապետու-  
թեանց մարդկան՝ հչ ուղղոց:

Երանեալ հաւանեալքն վարդապետութեան սրբոցն  
և ուղղափառաց հարանցն, զի ժառանգակիցք գտցին սրբ-  
ոցն. իսկ ոչ հաւանեալք վարդապետութեան և աւրինա- 80  
դրութեան Աստուծոյ | խա(ւ)սեցելոյն ի ձեռն նոցա՝ յղան 243r.  
ի զանազան հերձուածան, մոլորեալք յարքունական ճա-  
նապարհէն ուղղափառի հաւատոյն, և զնացին ուղիս խո-  
շորս և փշալիցս, զածաւզս զնոսա ի հանապազորդ տան-  
ջանս. զի հչ միայն անհաւանեցան սրբոցն հարանց, ու- 35  
րացեալք զգնաւզն զնոսա զՏէրն Քրիստոս իւրով արեամբ,  
ի վերայ ածելով իւրեանց զարագն կորուստ, այդ իրք ոչ

1) Հմմ. Փիլիպ. Գ. 13.

2) Հմմ. Բ. Ցիմոֆ. Գ. 7—8.

3) Հմմ. Սաղմ. ՂԸ. 14.

4) Հմմ. Բ. Օբէնք Ե. 32., Գ. 2., Խ. 14.,

Առակ. Գ. 27.

բաւական եալք իւրեանցն կործանմամբ, կորզեցին բագումս յանարատագունիցն, առ ի հետեանալ չարահաւատառթեան նոցա: Եւ խնդրեսցէ առ ի մոլորեցուցչացն զայտիսիս զարիւն մոլորեցելոցն Աստուած յաւուքն յայնմիկ. 5 պահանջնեսցին իսկ և զդատաստանս սպանելոցն և հալածելոցն և յափշտակելոցն և արտասահմանելոցն առ ի նոցանէ, առ ի յոչ կամել հաւասարել նոցա ամպարշտութեանն: Այդ զի մինչ մահու տանջանս վասն բարեպաշտութեան առ ի նոցանէ համբերելով եկեսցէ իսկ ի վե-

**243v. 10** բայ նոցա ամեն արիւն արդար ըստ բանին Տեառն<sup>1</sup>, |զի լոցին զչափ հարցն իւրեանց հրեից և որդիք ցուցան սպանազացն զառւրբս մարդարէս և զառաքեալս:

Մեք այսուհետև, սիրելիք, որպէս առէ Յուղաս առաքեալ, շինելով զինքեանս սրբագունիւ մերով հաւատովս, զոր ընկալաք յԱստուծոյ ի ձեռն սրբոց առաքելոցն և ի սրբոց հարանց և եպիսկապոսապետաց ամենայն աշխարհի՝ պահաւղացն զհաւատան Աստուծոյ անխարդախս մինչ վկրցնոյ հագագին, Հոգւով սրբով ազաւթեալք՝ զինքեանս ի սէրն Աստուծոյ պահեսցուք, մնալով ողորմութեան 20 Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ ի կենդանութիւն յաւիտենական: Եւ զոմանս յանդիմանեցէք որոշելով, իսկ զոմանս ապրեցուցէք՝ ի հրոյ յափշտակելով, իսկ զոմանս ողորմեցարհոք դատել երկիրտիւ, դատելով զ' ի մարմնոյն պալարացեալ պատմուճան<sup>2</sup>: Ամենեկեան իսկ հարքն մնր 25 և եպիսկապոսքն զՆեստորէ ժողովեալքն յԵփեսոս՝ հետեւանալով հետոց երանելեաց հարանցն, որք ի Նիկեա, և **244r.** եղբայրականս | այնոցիկ հաստատելով զաղանդս ճշմարտութեանն, սահմանեցին ոչ ումեք արժան զոլ յաւելով ինչ սրբում հմայութեանն և հչ նորոգել՝ զմիշտն նոյնպէս 30 կալեալ և յեղութեան ստուերագրութիւն կրել ոչ հաւանեալ, ըստ բանին Յակովայ առաքելոյ<sup>3</sup>: Իսկ ի Քաղկեդովնի հաւաքեալքն զսա, որպէս ասեն, նորոգելով, և զթուղթ ամպարշտին Ղեւովնի կարգեալ ընդ սրբում այսմրկ հմայութեան՝ զսրբոցն սահմանս և աւրէնս կոխելով: 35 եղիցին նզովեալք:



<sup>1)</sup> Հմմա. Մատթ. Ի. 35., Ղաւկ. ԺԱ. 51.      <sup>2)</sup> Հմմա. Ցուդ. 20—23.      <sup>3)</sup> Հմմա. Յակովայ Ա. 17.

Պիտառութիւնք երանելեացն մերոց հարանց՝ ցուցանելով զամպարետութիւն եւ զյանդգնութիւն նորոգչացն, որպէս ասեն, զիարանցն հաւատ, եւ զի ոչ պարտ սահման միւս հաւատոյ ընդունել, բան յերենարիւր տասն եւ ութիցն սուրբ հմայութեանն, որում եւ հետեւացան սուրբ հարքն, որք յԵփիսոս՝ լուծանելով զՆեսորիոս իբր ամպարլըսեալ.

Երանելոյ Արանասեայ եպիսկապոսապետի Աղեք. սանդրեայ՝ առ այնոսիկ, որք յԱփրիկէ. 10

Քանզի վասն այսորիկ և համաշխահական եղն ի Նիկիա ժողովն յերեքարիւր տասն և ութից ժողովեցելոց եպիսկապոսացն յաղագակաւատոյ, սակա արիանական ամպարշտութեանն, զի մի ևս ըստ նոսին պատճառիւր հաւատոյ լինիցին, այդ թեպէտ լինիցին, մի կալցին. զինչ իսկ 15 այն պակասէ, զի նորագոյնս խնդրիցէ ոք. լի է բարեպաշտութեամբ, սիրելիք. սա զամենայն աշխարհ լցոյց. զսա ծանեան և հնդիկք և քանիք առ այդս բարբարոս են քրիստիանուք. Ուրեմն ունայն է վաստակն, որք բազում անգամ զնմանէ ձեռնարկեցին. քանզի ահա այսպիսիքս 20 տասն և մի ուրեմն ժողովս արարին, աւր ըստ աւրէ փոխարկեալք՝ առ ի յառաջնոցն ի բաց հանելով, իսկ յետ այսոցիցն փոխելով և յաւելլով. աւգտեցան ոչինչ, մինչ ցայծմ գրելով, ի բաց ջնջելով, բռնադատելով:

Եւ յետ այդոց.

25

Զի թեպէտ ոմանք զԱրիսինոնն անուանեն, ցուցեն առաջին զլուծումն նախասացելոցն, և որպէս զրեցին եպիսկոպուք, ասելով՝ մի ինչ առաւել ինդրել, քան որք ի Նիկիա ի հարանցն իսոստովանեալս, և հչ անուանել այդ ժողով, քան զնա:

30

Եւ յետ այդոց.

Այսորիկ իսկ այսպէս ցուցելոց|աւելորդնոց(?) Արիմինոնն, աւելորդ և այդ ի նոցանէ անուանեան յաղագս

246r.

հաւատոյ ժողով։ Քանզի բաւական որ ի Նիկեա՝ ձայնակցելով և սկզբնագումից եպիսկապոսաց, յորում և հարք նոցա ստորագրեցին, զոր պատկառել զայսոսիկ յորդորէր, զի մի զամնայն առաւել քան եթե քրիստիանուք ճթուեցին։

### Եւ յետ այդոց.

Աղաչեմք ոչ հաւանել, ըստ որում նախասացաք, առաջարկելոցն ամբոխ ժողովոց պատճառաւ հաւատոյ՝ զ' յԱրիմանին, զ' իսաւրիսն, զ' ի Թրակէ, զայզս որ ի Կոստանտինուլապողսի, զրագում անգամն յԱնտիոքիա։ Այզ քան զամնեսեան միայն կալցի առ ձեզ որ ի Նիկիա ի հարանցն խոստովանեալ հաւատ, յորում ամենեքեան և այժմու մարտուցելոց առ նա հարքն, որպէս յառաջասացաք, ստորագրեցին։ Զի և յաղագս մեր առաքեալ ասէ։

15 «Գովեմ իսկ զձեզ, զի զամնայն իմ յիշէք, և որպէս աւանդեցի ձեզ՝ զաւանդութիւնն ունիք»<sup>1)</sup>, Այս իսկ ի Նիկէա ժողովս ճշմարտապէս արծանագրութիւն զամնայնէ 245v. հերձուածոյ է. սա և զիայնոյիշնանզոգին Սուրբ և ասսւղաց զնա արարած ի բաց տապալէ. ասելով իսկ հարքն՝

20 յաղագս առ Որդին հաւատոյ ի վերայ ածին արագ. «Հաւատամք և ի Հոգին Սուրբ, զ' ի կատարեալ և լի», զառ ի սուրբ Երրորդութիւնն հաւատ խոստովանելով. զգծաւորութիւնն Քրիստոյի հաւատոյն և զվարդապետութիւնն բոլորական եկեղեցւոյ այսուիկ ծանիցեն։

25 Երանելւյն Բասիլի առ ի Անտիոքիս թղթոյն.

Իսկ հաւատ մեք ոչ յայդոցն կրիցեալ մեզ մանկագոյնս առընդունիմք և ոչ ինքեանք զմերոյս մտածութեանն ծնունդս աւանդել իշխեմք. զի մի մարդկայինս արասցուք զրարեպաշտութեանն բայս, այդ որպէս ի սրբոցն հարանց ուսապ, զայսուիկ հարցաւղացն զմեզ պատմեմք։ Է այսուհետեւ ի հարանցն քաղաքաւորեալ եկեղեցւոյ մերոյ զրիցեան առ ի սրբոցն հարանց հաւատ՝ ի Նիկիա ժողովեցելոցն, զոր կարծեմ ահա և առքերան գոլ և առ ձեզ. սակայն հչ դանդաղիմք, զի մի վեհերման ամբաստանութիւնն տարցուք։

1) Ա. Կաքնթ. ԺԱ. 2.

Նորին՝ բղբոյն առ այնոսիկ, որ յարեւմուս։|

Արհամարհեցան հարանցն աղանդք, առաքելական 246r.  
աւանդութիւնք անարգեցան, մանկագունացն մարդոց  
դիւտք յեկեղեցւոջ քաղաքաւորեն. արուծոտարանեն այ-  
սուհետեւ, ոչ աստուծաբանեն մարդիկ. աշխահի իմաս- 5  
տութիւն զնախական բերէ, մերժելով զպարձանա խաչին.  
հովիւք ի բաց վարին, փոխանակ ի ներքս ածին գա(j)ղք ծա-  
նունք՝ հերձանելով զհաւտու։

Եւ յետ այդոց.

Խաւսեսցի և առ մեղ համարձակապէս բարին այն 10  
քարոզումն հարանց՝ աւերիչն զվատանուն հերձուածան  
Արիոսի, իսկ շինիչն զեկեղեցիս յառողջականի վարդա-  
պետութեան, յորում Որդի հոմագոյ Հաւը խոստովանի և  
Հողին Սուրբ նմանապատիւ թուակցի և պարշտակցի։

Նորին առ Եգիպտացիս բղբոյն. 15

Եւ աակայն գիտել պարտ էր, եթ' Աստուծոյ չնոր-  
հիւն ոչ առ արևելիայն միայնք էք, այդ և բազումս ու-  
նիք զձերոյդ մասին, որք զնարանցն վրիժախնդրեն ուղ-  
դափառութիւն՝ զըստ Նիկեա բարեպաշտն ազանդ արտա-  
դրաւզց, և որք յարևմուտս՝ ամննելքեան ձայնակիցք 20 246v.  
ձեզ են։

Նորին՝ որք ընդ նօվաւ ստորօփիանացիսն մենացեալս.

Այսոքիկ այժմ և զ' ի Նիկէա բանսարկեն հաւատն  
և հոմագոյականս զմնզ կոչեն, սակս յայնմիկ հաւատի  
զՄէնածինն Որդի Աստուծոյ և Հաւը հոմագոյ խոստովա- 25  
նիլ. ոչ որպէս ի միոջէ գոյացութենէ բաժանեցելոյ եր-  
կուս եղբարս, մի լիցի. քանզի հչ զայս իմացաւ Սուրբն  
Աստուծոյն և աստուծասէր ժողովն. այդ ըստ որում որ-  
պէս է ըստ գոյացութեան Հայր, նոյնպէս պարտեցելոյ  
իմանիլ և Որդոյոյ Քանզի զայս մեզ ինքեանք նոքա մեկ- 30  
նեցին ասելով. և ոյս ի լուսոյց Եւ է ի Նիկէա հաւատն  
առ ի նոցանէ յարևմտից բերեալն, զոր ի ձեռն ետուն  
ժողովոյն, որ ի Տուենացիսն, յորմէ և հաճութեամբ ընկա-  
լեալ եղեն. այդ ունին մի իմն իմաստուն աղանդ յայսպի-  
սիս նոցա փոխարկութիւնս. զի բայիսք հաւատոյն բժիշկք 35  
վարին ըստ ժամանակին, այդ երբեմն այղպէս՝ առ ենթա-  
կայ ախտա փոխայարդարելով։ Իսկ զայտորիկ իմաստակու-

247r. թեան զանհաստատն հչ ինձ յանդիմանել յարմարեաց, | այդ  
ձեզ իմանալ. տացէ իսկ ձեզ Տէր իմաստութիւն առ ի  
ճանաչել՝ ովք արդեւք ուղիղ բանն կամ ու թեւրն և տա-  
րադարձեալն: Քանզ' եթ' այդ երբեմն այդս պարտ հաւատա  
5 շարագրել և ըստ ժամանակացն այլայդի՝ սուտապատու-  
թիւն ասաւղին. «Եզ Տէր, մու հաւատ, մի մկրտութիւն»<sup>1</sup>.  
իսկ եթ' այնք ճշմարիտք, մի ոք զձեզ պատրեսցէ նորովք  
այսուիկ բանիւք:

Երանելոյ Կիւրիլի եպիսկապոսապետի Աղեքսան-  
10 դրեայ յառ Ակակիոս քրօյն.

Քանզի սուրբ և համաշահական ժողովն՝ ըստ Եփե-  
սացւոցն քաղաքի ժողովեալն, յառաջազոյն իմացաւ հար-  
կաւորապէս զոչն պարտ եկեղեցեաց Աստուծոյ հաւատոյ  
արտադրութիւն միւս ի ներքոս դատել, քան զեալն\*, զոր  
15 երիթա(!) երանելիք հարքն Սրբով Հոգւով խաւսեցեալք  
սահմանեցին:



Ահա այսուհետեւ ապացուցաւ, յորոց ծաղկաբանեցաք  
պիտառութեանց յաւմնապտղոյ զրաստէ սրբոցն հարանց՝  
երկարնականացն և երեւթականացն ամսղարշտութիւն:  
20 Վայելուչ իսկ համարեցայ և բոլորավիճակս նոյսա արտադ-  
247v. րութիւնս, | կամ եթե խոստովանութիւնս հաւատոյ և  
թուղթս՝ առջրել, յորոց առաւել տեսցի նախաստացելոց հեր-  
ձուածողացն ամպարշտութիւն, իսկ ճառադայթեսցէ ուղ-  
դափառութեանն գեղ:

25 Երանելոյ Երենեսոսի՝ հետեւողի առաքելոցն եւ եպիս-  
կապոսի եղելոյ Ղուկասունի, որ փիղիսօփայից ուսմամբ  
պայծառացեալ նանաչեր.

Աւրէնն և մարգարեք և աւետարանք քարոզեցին  
գմբիսառոս ծնիցեալ ի Կուսէ և ախտակրելի ի փայտին և  
30 տեսանելի մեռելոց և յերկինս վերերթեալ և ի Հաւրէ փա-  
ռաւորեալ և թագաւոր յաւիտեանս: Եւ զի սա է կատա-  
րեալ միտք Աստուծոյն Բան, որ նախ վաղորդայնաղգեց-  
կին ծնիցեալ<sup>2</sup>, շինակից ամենայնի, ստեղծիչն մարդոյ,

<sup>1)</sup> Լուսանցքում՝ «քան որ էրն».

<sup>2)</sup> Եփես. Դ. 5.                  <sup>3)</sup> Հմատ. Մազմ. ՃԹ, 3.

յամենայնի ամենայն եղեալն՝ ի հայրապետան հայրապետ,  
յաւրէնսն աւրէն, ի քահանայս քահանայապիտ, ի թագա-  
ւորս իշխան առաջնորդական, ի մարդարէս մարդարէ, ի  
հրեշտակս հրեշտակ, ի մարդկան մարդ, ի Հաւր Որդի,  
յԱստուածում Աստուած, յաւիտեանս արքայ, Սա իսկ է 5  
սա, որ զնոյ նաւուղղեաց \* և զԱբրահամ առաջնորդեաց, 248r.  
ընդ Սահակայ կապեցաւ և ընդ Յակովբայ յաւտարակեն-  
ցաղեաց, ընդ Յովսէփիայ վաճառեցաւ և ընդ Մովսէսի  
զաւրապարքեաց, ժողովրդեանն աւրինաղըբ(ա)ց և ը(?) Յե-  
սովայ Նաւեայ վիճակատուեաց. ի Դաւթի երգիչն և ի 10  
մարդարէմն զիւր կիրտն քարողեաց. ի Կուսի մարմնա-  
ցեալն և ի Բեթղեեմ ծնիցեալն, ի մսուր խանձարրապա-  
տեալն և ի հովուացն տեսեալ, ի հրեշտակաց փառաւո-  
րեալն և ի մողացն երկրպագեալն, ի Յովաննէ ընկալեալն  
և ի Յորդանանէ մկրտեալն, յանապատի փորձեցեալն և 15  
Տէր գտեալ. զառաքեալս հաւաքելով և զարքայութիւն  
քարողելով, զկաղս բժշկելով և զբորոտս մաքրելով, զկոյրս  
լուսածելով և զմեռեալս յարուցանելավ. ի բազնի երկեալն  
և ի ժողովրդեանէ անհաւատացեալն, ի հրեից մատնեալն և  
ի քահանայապետաց ըմբռնեալն, առաջի Հերովդի յառա- 20  
ջածեալն և առաջի Պիղատոսի դատիցեալն \*\*, ի մարմնի  
քենուեալն և ի փայտի կախեցեալն, յերկիր թաղիցեալն 248v.  
և ի մնոելոց յարուցեալն, և առաքելոց երեսեալն և յերկինս  
բարձրացեալն, յաջմէն Հաւր նստեալն և ի նմաննէ փա-  
ռաւորեալն. որպէս է յարութիւն թաղեցելոցն և փրկու- 25  
թիւն կորուսելոցն, լուսարան իւաւարելոցն և փրկանակ  
բացածելոցն, առաջնորդ մոլորելոցն և ապաւէն վշտացե-  
լոցն, հովիւ ապրեցելոցն և փեսայ եկեղեցւոյ, երասխա-  
նակընկալ \*\*\* քերովքեիցն և զաւրապար հրեշտակաց, Աս-  
տուած Աստուծոյ, Որդի ի Հաւրէ՝ Յիսուս Քրիստոս, ար- 30  
քայ յաւիտեանս, ամէն:

### Նորին Խրէնիսի:

Սուրբ գրութիւնք գիտեն զՔրիստոս որպէս մարդ  
զոլով, այսպէս և ոչ զոլով մարդ և որպէս մարմին, այս-  
պէս և հոգի, և Բան Աստուծոյ և Աստուած. և որպէս ի 35  
Մարիմայ ի վերջինս ամանակս ծնիցեալ, այսպէս և նա-  
խածին ամենայն արարածոց, արտաքս եկեալ յԱստուծոյ.

\* Լուսունցըւմ՝ «նաւաղեաց».      \*\*) Անդ՝ «զատապարտեալն».

\*\*\* Անդ՝ «կառավար».

և որպէս քաղցնլով, այսպէս և յագեցուցանելով. և որպէս և ծարաւենալ, այսպէս և արբուցանել. և վաղ հրեից, յորժամ էր վէմ Քրիստոս, և այժմ հաւատացելոց՝ Յիսուս տայ հոգեկան ըմպել ջուր, վիժակացեալ ի կենդանութիւն յա-  
 249r. 5 ւիտենական<sup>1</sup>. և որպէս վաստակեալ, այսպէս և զվաստա-  
 կեալն և զբեսնաւորեալսն հանգուցանել<sup>2</sup>. և որպէս Որդի Դաւթի, այսպէս և Տէր Դաւթի<sup>3</sup>. և որպէս յԱրքահամէ, այսպէս և նախ Արքահամու<sup>4</sup>. և որպէս ծառայ Աստուծոյ, այսպէս և Որդի Աստուծոյ և Տէր բոլորեցուն. և որպէս  
 10 թուքընկալ առ, նախատանս, այսպէս և փշաւող Հոգեւոյ իւ-  
 րոց աշակերտացն. և որպէս տրտմեալ, այսպէս և ուրա-  
 խութեան տուող իւրում ժողովրդեան. և որպէս ըմբռնե-  
 լի և շաւշափելի, այսպէս ահա դարձեալ ընդ մէջ չարա-  
 խոհացն եկեալ և ոչ զրաւեալ, և դրացն փակեցելոց ի ներքս  
 15 գնացեալ և ոչ արգելեալ. և որպէս քունելով, սոյնպէս և հրամայել ծովու և հողմոց և ոգեոց. և որպէս ախտակրեալ,  
 այսպէս և կենդանի և ապրեցուցիչ և բժշկելով յամննայն հիւանդութենէ. և որպէս մնուանելով, այսպէս և յարու-  
 249v. թիւն մնուելոց գոլով. յերկրի անպատիւ և յերկնիամե-  
 20 նայնի պատուոյ և փառաց մնծագոյն. խաչեցեալ ահա ի տկարութենէ, իսկ կեցեալ ի կարութենէ աստուածայ-  
 նուոյ<sup>5</sup>. վայրանցեալ ի ստորագոյնս երկրի և վերանցեալ գեր ի վիրոյ երկնից. բաւականացեալն ի մուռը և լցեալ զամե-  
 նայն. եղեայն մնուալ և կենդանացեալ յաւիտեանս յա-  
 25 ւիտենից, ամէն:

### Նորին Երենեոսի.

Սուրբ Ակեղեցի և թեավէտ ըստ բոլոր է աշխարհ, մինչ յեղերս երկրի սերմանացեալ յառաքելոցն և ի նոցուն աշա-  
 կերտացն, ընկալաւ զմին՝ Աստուծած, Հայր ամենակալ, զա-  
 30 րարաւղն զերկին և զերկիր, զծով և զամնայն զ' ի նո-  
 սայն, հաւատ, և ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ Որդին Աս-  
 տուծոյ, զմարմնացեալն վասն մնուոյ փրկութեան. և ի Հո-  
 գին Առորբ, զ' ի ձեռն մարգարեից քարոզիչն զտնաւրէ-  
 նութիւնս Աստուծոյ, և զզալուսան և զ' ի Կուսէ ծնելու-  
 35 թիւն, և զախտակրութիւնն և զյարութիւնն ի մնուելոց և զմարմնաւոր յերկինս համրածումն սիրեցելոյն Որդւոյ

<sup>1)</sup> Հմմտ. Ա. Պարմթ. Ժ. 4. և Ցովհ. Դ. 14. <sup>2)</sup> Հմմտ. Մատթ. Ժ. 28. <sup>3)</sup> Հմմտ. Մատթ. Ի. 42—45., Սաղմ. Ժ. 1.  
<sup>4)</sup> Հմմտ. Ցովհ. Հ. 58. <sup>5)</sup> Հմմտ. Բ. Պարմթ. Ժ. 4.

Քրիստոսի Յիսուսի, Տեառն մերոյ, և դ' յերկնիցն փառաւք| Հաւը գալուստ նորա՝ առ ի վերագլխել զամենայնան 250r. և յարուցանել զամենայն մարմին ամենայնի մարդկութեան.  
զի Յիսուսի Քրիստոսի, Տեառն մերում և Աստուծոյ և Փրկչի և թագաւորի՝ ըստ հաճելութեանն Հաւը աներեւ 5 ւութի. «ամենն ծունը կորասցի՝ երիխայնեաց և երկրայնւոց և սանդարամետականաց, և ամենն լեզու արտաքս խոստովանեսցէ նմա»<sup>1</sup>. և դատուստան արդարութեան յամենեսեան արացէ, զի զնոգեկանս չարութեան և զհրեշտակս զանցաւորս և ի բաց կացութեան եղեալս, և զամպարիշտաս 10 և զանիրաւս և զանաւրէնս և զհայհոյիչս մարդկան ի յաւիտենականն հուր առաքեսցէ. իսկ սրբոց և արդարոց և զպատուիրանս նորա պահաւազաց և ի սէր նորա միւացելոց՝ ոմանց ի սկզբանէ, իսկ ումանց յապաշխարութենէ, կենդանութիւն շնորհեալ, անապականութիւն և փառս պատ- 15 րաստեսցէ: Զայս քարոզութիւն պարառեալ և զայս հաւատ, որպէս նախասացաք, եկեղեցի, և թեպէտ յամենայն աշխարհի սերմանացեալ՝ ինամածութեամբ պահէ, իրր զմի 250v. տուն բնակեալ, և նմանապէս հաւատայնոց իրը զմի անձն և զնոյն ունելով սիրտ, և բաղաձայնաբար զայսոսիկ քա- 20 րոզէ և ուսուցանէ և աւանդէ, իրը ի բերան ստացեալ հաւատ առաքելական՝ ձայնակից ելով նշանաւորութեան\* ի նիկիա ժողովոյն:

Երանելիոյ Յուղիայ եպիսկոպոսապետի Հռովմայ յառ Դիօնիսիոս թղթոյն. 25

Զարմանամ լսելով յաղագս ոմանց՝ խոստովանելով  
զԱստուած ներմարմին զՏէրն, բայց գեղեկելով ի ներձուած  
չարապէս՝ ի Պա(ւ)ղիանոսացն ներծանիցելոյ, Քանզի նրգա  
Պաւղոսի Սամոստացիոյ ծառայեալք՝ այդ զյերկնուստն  
ասին, Աստուած խոստովանելով զնա, իսկ այդ զյերկրէ 30  
մարդն ասեն. զո՞ն անարարելի, իսկ զո՞ն արարելի. զո՞ն  
յաւիտենական, իսկ զո՞ն երիկեան. զո՞ն Տէր, իսկ զո՞ն  
ծառայ. ամպարչտեալք՝ եթ՛ երկրագեն զոր ասենն ծա-  
ռայ և արարած, և եթ՛ ոչ երկրպագեն զգնաւղն դմեղ իւ-  
րով արեամբն իսկ որք զյերկնուստն | Աստուած խոստ- 35 251r.  
վանեն ի Կուսէ մարմնացեալ, ևս ի գոլ մարմնով տարա-  
պարտ ծփեն. ի բայսն նոցայն ամպարշտեան արտա-

<sup>1)</sup> Լուսանցքում՝ «հմայութեանն».

<sup>2)</sup> Հմայ. Փիլիպ. Բ. 10—11.

բերեալք։ Քանզի ասեն և այսոքիկ, որպէս լսեմ, երկու բնութիւնս, և դայս Յովաննու հաւատագիտու մի ապացուցեալ զՏէրն՝ ասելով։ «Բանն մարմին եղեւ<sup>1</sup>, և Պաւղոսի յասելն՝ «Մի Տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայնք<sup>2</sup>, ճ Արդ՝ եթե մի ի սրբոյն կուսէ ծնիցեալն անուանեցաւ և ինքն է, որով ամենայն եղեւ, մի բնութիւն է, վասն զի դէմ մի, ոչ ունելով երկուս բաժանումն. վասն զի և ոչ առանձին բնութիւն մարմինն և առանձինն ընութիւնն աստուածութիւնն ըստ մարմնանալոյ. այդ որպէս և մարդ մի 10 բնութիւն, այսպէս և ի նմանութեան մարդկան եղեալն Քրիստոս։

Իսկ եթ՝ ոչ ճանաչեն զըստ միաւորութեան մին, կարեն և ի բազումս բաժանել զմին և յոլովս ասել բնութիւնս. վասն զի յոքնատեսակ մարմինն՝ յոսկերաց և ի 15 ջղաց և երակաց և մսոյ և մորթոյ, եղնգանց իսկ և մա-  
251v. զոյ. յալինէ և հագագէ, որք ամենայնքն զանազանութիւնն ունին առ իրեարս Բայց մի բնութիւն է, որպէս զի և աստուածութեանն ճշմարտութիւն հանդերձ մարմնովն մի է և յերկուս բնութիւնն ոչ բաժանի. քանզի և ոչ հնար-  
20 իսկ էր զբոլորն որդի մարդոյ կոչիլ՝ զիջեալն յերկնուատ, և Որդի Աստուածոյ զծնիցեալն ի կնոջէ, եթ՝ երկուց բնութեանց բաժանումն առընդունէր. այդ ստորիջեալն յերկ-  
նուատ կոչիւր արդեւք Որդի Աստուածոյ, և ոչ որդի մար-  
դոյ, իսկ ծնիցեալն ի կնոջէ կոչիւր արդեւք որդի մար-  
25 դոյ, և ոչ Որդի Աստուածոյ. և այս հետեանայ Պողիական հերձուածին։

Իսկ զմեզ աստուածային գրիցեալքն ուսուցանեն իրր յաղազս միոյ Տեառն խոհել՝ ըստ յերկնուատն իջա-  
նելոյն և ի կնոջէ ծնելութենէ։

30 Որք այսուհետեւ այսպէս խոհին՝ մի ի համաձայնութիւն զամենայն ընդդէմ խոհաւզացն արտաքս ելցեն, զի մի մտաւք գովելով՝ բայիւղն հայնոյիցեն. քանզի հարկ է պնոսա, երկուս | ասելով բնութիւնն՝ զմին երկրպագել, իսկ զմիւնն ոչ երկրպագել. յաստուածականն մկրտիլ, իսկ ի 35 մարդկայինն ոչ մկրտիլ իսկ եթ՝ ի մահն Տեառն մկրտարիմեք, մու խոստովանեւիք բնութիւն անախտակիր աստուածութեանն և ախտակիր մարմնոյն. զի այսպէս յԱստուած իցէ մկրտութիւնն մեր և ի մահն Տեառն կատարեալ Քանզի և ոչ երկնչիմք զզրպարտողսն՝ զբաժանիչսն

1) Յով. Ա. 14.

2) Ա. Կաքնթ. Ը. 6.

յերկուս գէմս զՏէրն, ևթե մեր զմիաւորութիւն խստովա-  
նելով զհրեշտակական և առաքելական՝ հայհոյեն զմնզ, իբր  
զմարմնոյն ասաւզս յերկնուստ, յորժամ վերծանեմք զաս-  
տուածային զրիցեալմն՝ Որդի Մարդոյ ասելով յերկնուստն.  
քանզի և ոչ յորժամ ասեմք զՈրդին Աստուծոյ եղեալ ի 5  
կնոջէ, կարեմք հայհոյել, իբր զԲանն յերկրէ ասելով և ոչ  
յերկնուստ:

Իսկ ասեմք զերկախումբն, և յերկնուստ զբալորն վասն  
աստուածութեանն, և ի կնոջէ զբոլորն սակս մարմնոյն.  
ոչ գիտելով բաժանումն միոյն դիմի և ոչ ի բաց հատա- 10  
նելով յերկնայնւոյն զերկրային, և ոչ յերկրայնւոյն | զեր- 262v.  
կնոյինն. քանզի ամպարչտէ տարատութիւնն:

Մի այսուհետև տարատողացն պատճառս տացեն ա-  
սաւզքն երկուս բնութիւնս: Քանզի և ոչ մարմինն ըստ  
ինքեան բնութիւն. վասն զի և ոչ կենազործակ ըստ ին- 15  
քեան և ոչ բաժանիլ կարել թանց կենազործակին, և ոչ  
Բանն ըստ ինքեան յիւրն բաժանի բնութիւն, զոր ունի  
ըստ անմարմնութեան: Եւ վասն զի ի մարմնի Տէրն, և ոչ  
անմարմնաբար ներդիմնաց աշխարհի, ոչ զառնել ի մար-  
մինն զատուցանեմ յանարարած աստուածութենէն, զի 20  
որոշեսցէ ոք բնութիւն արարական. այդ և ոչ անարարակ  
Բանն ներադիմնաց որիշ մարմնոյ, զի բաժանիցէ ոք ան-  
առնելոյ բնութիւն: Իսկ ևթե մի երկաքանչիւր է ըստ  
միաւորութեան և՝ ժողովն և՝ զշարադրութիւնն \*, զմար-  
դատեսակն, մի և զանուն բարդեցելումն յարմարի՝ յաս- 25  
տուածութենէն զանառնելին, իսկ ի մարմնոյն զառնելին,  
և յաստուածութենէն զանախտն, իսկ ի մարմնիոյն զախ-  
տակրելին: | Եւ որպէս լուաք Պաւոսի զՔրիստոս ախ- 253r.  
տակիր, ոչ մարմնաբար լուաք և ոչ զաստուածութիւնն  
ախտակրական կարծեցաք, այսպէս և արարեալն և ծա- 30  
ռայն. ոչ մասնաբար ասի և ոչ զաստուածութիւնն առնէ  
եղանելի և ծառայական, և դարձեալ անարարածն ոչ զմար-  
մինն անեղ առնէ, և ոչ մարմնաբար ի վերայ աստուա-  
ծութեանն միայնիոյ ասի:

Իսկ զայս այսպէս խոհեցողքն մնացեն լուութեամբ՝ 35  
զաւելորդս ինդիրս ի բաց խոտորեալք \*\* զաղանդս. ձայ-  
նակցեալ է և ձայնակցարար խոստովանեալ մարմինն ի  
կուսէն, աստուածութիւնն յերկնուստ, մարմինն ստեղ-  
ծեալ յորովայնի, աստուածութիւնն անարարուած յաւի-

\* ) Լուսանցքում՝ «բարդութիւնն». \*\*) Զեռպաւմ՝ «խորսրեալք».

տենական. զի միաւորեցելոյ Բանին մարմնոյ՝ անբաժանելի մնայցէ աստուածութիւնն.

Իսկ եթե գրիցելումն առվորական և զրոյորն աստուածարանել և զբոլորն մարդաբանել, հետեւացնեք և մեք 5 բայից աստուածայնոց և մի բաժանեսցուք զանբաժանելին

253v. և մի զաստուածութիւնն որոշեցուք ի մարմնոյն՝ իբր | առ բարեհամբաւութիւն, յորժամ մարմին ստեղծնեալ յորովայնի ասիցի, և մի զմարմինն բաժանել յԱստուածութենէն, իբր սակա խոսսովանութեան գալստեանն, յոր

10 ժամ Աստուածութիւնն անարարած փառաւորիցի:

Ի՞րը արդեւք ոչ արտմական զայսոսիկ այսպէս բարւոք խոստովանաւղոն կամ խոհաւղոն, որպէս և ընկալաք՝ հակառակել առ միմնան բայիւքն. եթ՛ ոմանք մարմնւոյն անուամբ վարին ի վերայ Բանին, որպէս Յովաննէս մար-

15 մինն ասաց եղանել զԲանն, իսկ ոմանք զաստուածութեանն անուն առնուն, ի վերայ բոլորի ծառայի, որպէս Պաւղոս եասաց՝ ՅԱկարջինն Աղամ ի հոգի կենարաբռ<sup>1)</sup>:

Երկրպաղել խոստովանի Քրիստոս ըստ մարմնւոյ զՀայր ասելով՝ ԱՄեք երկրպաղեմք. դոր դիտեմք<sup>2)</sup>, և հչ բաժանի

20 աստուածութիւնն. Երկրպազի ըստ աստուածութեանն և հչ բաժանի մարմինն աստուածութեանն երկրպագութեամբ, և հչ որոշնեք զմարմինն, յորժամ երկրպագեմք.

Քանզի և ոչ կարելի մարմնւոյն ախտակրելն և ոչ որոշի աստուածութիւնն, քանզի միացեալ է: Քանզի պարտ էր

25 յաղթիլ զմահ յԱստուեոյ, և յաղթեալ է:

Խրատեցէք այսուհետեւ զունայնս յաղագս այսոցիկ թշնամեցեալս, և սյահեսցի ըստ աղանդոյն խոստովանութիւն, հչ բաժանելով բայիւքն. Քանզի աղանդովքն տարածայնեալք, իսկ բայիւքն պատճառել բաղաձայնութիւն՝

30 ամպարիշտ. իսկ ըստ աղանդոյն բազածայնաւղս և բայիւքն տարբերեալս՝ ունայն և յիմար: Եւ զայ(ս) բաղաձայնեալ ունելով, եթ՛ է Աստուած ներմարմին Քրիստոսն և յերկնուստ և յերկրէ ինքն՝ կերպիւ ծառայ և կարութեամբ Աստուած, միասցեն ի միաբանութեան և մի ունայնս տա-

35 բարերեսցին և մի ի հերձուածողացն բանակռուութիւն զլորեսցին, այդ զեկեղեցւոյ զպարզութիւնն մանաւանդ նախանձեցուցեալ՝ ողջութեամբ վարիցիս (?) Տէր:

Նորին ի բդրոյն որ առ Պրոզրակիոն.

1) Ա. Կոլնթ. Ժե. 45.

2) Ցով. Դ. 22.

Տեսառն իմում տենչալոյ Պրոգրոկայ՝ Յուղիոս, Տերամբ խնդալ։ Մտաւրութիւնս մեր ըստ առաքելական աւանդութեանն | Հաւր և Որդւոյ և Հոգւոյ Սրբոյ՝ մի աստուածութիւն, ճշմարիտ, մի երկրպագութիւն և փառաբանութիւն Որդւոյ առ Հայր՝ յերկրպագութեան Սրբոյ 254v. Հոգւոյն։ Խոկ որ ոք միւս աստուածութիւն ի ներքս ածէ. նզով. և որ յաւելու միւս փառաբանութիւն, քան զձայնս սրովքեիցն՝ զսնւրբ սուրբ սուրբ, Տէր Սարաւովի, լի ամենայն երկիր փառաւք իւրովք\*<sup>1</sup>, աւրհնելով յաստուածական Երրորդութիւնն, որպէս Յովաննէս և Պաւղոս 10 վկայեն, Յովաննէս՝ Որդւոյ փառս ասելով, տեսանէր ըգմարգարէն երգեցեալ<sup>2</sup>, իսկ Պաւղոս Հոգւոյ Սրբոյ զնոյն փառս զեկոյց, յասելն՝ Սրբոյ Հոգւոյ գոլ զձայնս խաւանցեալս ի տեսիցելոյն և փառաւրեցելոյ<sup>3</sup>, զի Հոգւոյն փառք՝ Որդւոյ փառք և Որդւոյ փառք՝ Հաւր փառք. սակա որոյ 15 մի գոյացութիւն Երրորդութեանն յեկեղեցական մողովոցն յաշխարհի կոչի։

Արդ՝ ամենայն, որ ոք դատանէ ի միայնուոյ Աստուծոյ գոյացութենէն զՈրդին և զՀոգին, իբր ի խորհրդւոյ ելոց, որպէս | և մնք, այդ ոչ ի նոյն գոյացութենէ, իբր 20 265r. նմանութեամբ ըստ նմին, եղիցի նզով, Քարոզի իսկ առ միւսութիւն հաւատոյ և մարմնանալ ի կուսէ Մարեմայ Աստուծոյն Որդի և տաղաւարեալ ի մարդկան, ոչ ի մարդում ներգործեալ. քանզի այս ի վերայ մարգարեիցն է և առաքելոց՝ կատարեալ Աստուած ի մարմնի, կատարեալ 25 մարդ նոգւոջ. ոչ երկու որդիք, իբր մին հարազատ որդի առնլով\*\* զմարդ, իսկ միւսն մահկանացու մարդ՝ առեալ յԱստուծոյ, այդ մի Մէնածին ներկնի, Մէնածին ի վերայ երկրի, Աստուած ճշմարտութեամբ, մարդ մարմնական կերպիւ, ըստ նմանութեան իւրում կեցուցիչ զաշխարհ՝ 30 ըստ նդունելութեան իւրոյ ոդւոյն, որ ընծայեն \*\*\* ի ձեռն փշմանն, իբր մարդ երկի ի ձեռւմ մարդկայնում, թագաւոր երկնայնոց և երկրայնոց և սանդարամետականաց, յամենեցունց իբր մի և միայն Տէր փառաւրեալ, ի փառս Աստուծոյ՝ Հաւր միրոյ, 85

իսկ եթե ոք մարդ Աստուծոյ առեալ ասէ զ' ի Մա-

\* ) Լուսանցքում՝ «նորա» \* \*) Անդ՝ «առաւղ», \*\*\* ) Անդ՝ «շնորհ».

<sup>1)</sup> Եռայի Զ. 3.      <sup>2)</sup> Հմմա. Յովհ. ԺԲ. 41.      <sup>3)</sup> Հմմա, Բ. Կոբնթ. Գ. 17—18.

255v. բեմայ Յիսուսն և երկուս դէմս կատարեալս | միացեալս,  
դիտացէ յաստուածային յուսոյն աւտար ելով. քանզի Աս-  
տուածն Բան, որով ամենայն եղե՛ Յիսուս է, որով ամե-  
նայն, որպէս Յովաննէս և Պաւլոս ուսուցին<sup>1)</sup>, Ո՞չ զիանն  
5 ասացեալ առնուլ Յիսուս զ' ի Մարեմայ ծնիցեալն, այդ  
ինքն գալ յաշխարհ, եղեալ ի կնոջէ<sup>2)</sup>, և ոչ բնակել զ' ի  
յերկնուսան ի մարդում, յերկրէ հողեղինում, այդ զնոյն  
գերկրորդն Աղամ երկնային գոլ<sup>3)</sup>. զի երկնային է Բանն  
որ զմարտին ունի զ' ի Մարեմայն և զմնզ իսկ ի ձեռն  
10 երկնայնւոյն երկնայինս ըստ նմանութեան առնէ՝ եալս  
հողականս<sup>4)</sup>. քանզի կոչիցաք ի հաւասարութիւն Որդույ  
Աստուծոյ<sup>5)</sup>, որ հաւասարեաց մեզ և մահու և պարտեցելոյ  
մարդում խաչին<sup>6)</sup>, Տէր ելով փառացն<sup>7)</sup>, հչ կարեալ ի  
մահուանէ<sup>8)</sup> իբր ամենայն մարդ, այդ խափանելով զմահ<sup>9)</sup>  
15 և լուսաւորելով՝ կենդանութիւն և անապականութիւն և  
զիւր յաղթութիւն մեզ տուեալ<sup>10)</sup>:

### Նորին.

Իբր զի և նզով եղիցի ամեն, որ զ' ի Մարեմայն մարդ  
256r. ոչ խոստովիանէ զոլ ներմարմին Աստուած՝ հոմազոյ  
20 Հաւր, ի սկսրանէ ելով Աստուած, անյեղի ի մարմնաւո-  
րութեան և անախտակիր նախտակրութիւնա. նմանապէս  
նզով եղիցի և որ զմարմինն՝ Փրկչին ոչ ասէ ի Մարեմայ,  
այդ յերկնուսատ, կամ անարար զբնութիւնն՝ զառնելին, և  
յոշնչէ, իսկ առ անեղն Աստուած միաւորութեամբ: Որ  
25 ասէ ասուուածային զմարմինն և երկրպագեալ, և զերկա-  
խումբն իբր մի անառնելի Աստուած, երանեալ եղիցի, հչ  
գայթագեղելով ի վերայ մարմնոյ և ախտից նորա, այդ  
զանմարմնապէսն երկրպագելին և մարմնապէս երկրպա-  
գելով, իբր մի և միայն Որդի Աստուծոյ՝ յաւիտենուստ և  
30 յաւիտենանս: Խոստովանելի իսկ ուսաք և զերկրորդ նորա  
գալուստն ի վարդապետութեան սրբոյ մկրտութեանն:

### Նորին Եերցըական քուեր.

Ամենայն ուրեմք եպիսկոպոսաց, բոլորական և կեղե-

<sup>1)</sup> Հմմտ. Յովհ. Ա. 3. և Ա. Կոբնթ. Ը. 6.      <sup>2)</sup> Հմմտ. Դալմա.

Դ. 4.      <sup>3)</sup> Հմմտ. Ա. Կոբնթ. ԺԵ. 47.      <sup>4)</sup> Հմմտ. Ա. Կոբնթ. ԺԵ. 49.

<sup>5)</sup> Հմմտ. Ա. Կոբնթ. Ա. 9.      <sup>6)</sup> Հմմտ. Ա. Պետր. Թ. 13.      <sup>7)</sup> Հմմտ.

Ա. Կոբնթ. Բ. 8.      <sup>8)</sup> Հմմտ. Գործք Բ. 24.      <sup>9)</sup> Հմմտ. եբր. Բ. 14.

<sup>10)</sup> Հմմտ. Ա. Կոբնթ. ԺԵ. 57.

ցւոյ սիրելիաց եղբարց, Յուլիոս՝ Տերամբ ինդալ, Սատու-  
գացեալ եմ, սիրելիք եղբարք, զհաւատն ձեր յաշագս 256r.  
Տեառն և Աստուծոյ և թագաւորի, յեկեղեցական պատ-  
մութենէ՝ Յովսեա մարգարեէ, յաղագս Աստուծոյն Բանի  
և Հաւը, որպէս յաղագս Տեառն. «Ո՛չ ես ի բաց թողից առ 5  
ի ջնջել զՅակովը, զի Աստուած ես եմ և ոչ մարդ՝ ի քեզ  
սուրբ, և ոչ մարդ ի քաղաք. և զհետ Տեառն գնացից»<sup>1)</sup>.  
Զայս և ի ձեռն սոցուն քանիւնս Աստուածն Բան ներ-  
մարդացեալ, առ որս մարդն, զնա վայրապար սուրբ, այդ  
ոչ Աստուած գոլ խոստովանեն. Աստուած ես եմ և ոչ<sup>10</sup>  
մարդ».

Հաւատամ ի միում Աստուածութեանն և գոյացու-  
թեան, փառաւորեցելում և երկրպագեցելում Երրորդու-  
թեանն, այս է Հաւը և Որդոյ և Հոգոյ Մրբոյ, և յերկ-  
նուստն ստորութեամբ, և յայտնութեամբ Աստուծոյն Բանի և 15  
մնաւորութեամբ, և յայտնութեամբ Աստուծոյն Բանի և  
Փրկչին մերոյ Յիառասի Քրիստոսի, և մարդկան երեսու-  
թեամբ, իւր ելոյ Աստուծոյ և մարդոյ, ոչ այդ ուրումն  
Աստուծոյ, իսկ այդ ուրումն մարդոյ, այդ մի ենթակա-  
ցութիւն և մի դէմ Աստուծոյն Բանի և զ' ի Մարեմայն 20  
մարմնոյ, յԱստուծոյ և ի կնոջէ, նորին ախտակրի և ան-  
ախտի. | մարմնով կրելով և զմեր կիրան համբերելով, 257r.  
իսկ աստուածութեամբն զկիրմն լուծանելով և մահուամբ  
փրկականա զմերն մահ ի բաց քակնով և լուսաւորելով,  
կենդանութիւն և անապականութիւն հաւատացելոց պար- 25  
գնելով՝ հանդերձելոցն բարեաց զմայդութիւն և թագա-  
ւորութեան երկնայնւոյ և աստուածականի հանդերձ փա-  
ռաւը ժառանգութիւն:

### Նորին.

ԶԱստուծոյ գալուստն հաւատացեալք, հարազատա- 30  
բար զսա ունել պարտիմք, և մի հերձուածովքն այսր անզր  
բերիլ. քանզի որ զԱստուծոյ ներդիմութիւնն բերանով  
ասէ, իսկ մարդ մատաք խոհի, հանգէտ մեզ ի կնոջէ ե-  
ղեալ, իսկ Աստուծոյ մանուկ ասելով ի կնոջէ ոչ ծնանի՝  
զհաւատացելոցն է և ընդ անհաւատն կարգեցաւ: 35

Իսկ մեզ վայել է պահել զաստուածային աւանդու-  
թիւնն, և մի զմարդկային հակարանութիւն. քանզի ոչ ի

1) Ոկտ. ԺԱ. 9—10.

հակաբանութեանցն հաւատացաք, այդ յաստուածայնւոց  
բանիցն առ մեզ բերեցելոց՝ վկայութեամբ երանելեաց  
257v. առաքելոցն. | որք տեսեալ զգերաբնական զիառու Տեառն  
մերոյ և զերկինային վկայութիւնն լուեալ՝ արտաքս պատ-  
5 մեցին աշխարհի զԱստուածն մարմնացեալ, զիանն մար-  
մին եղեալ, հոգի կենազործակ, զՏէրն մեր Յիսուս Քրիս-  
տոս, անհայր բատ յերկրէ ծնելութեան. վասն զի Աստուած  
յերկնուստ իջեալ էր, ոչ մարդ ի մարդկայնւոց սերմանց  
բուսեալ. և Որդի Մարդուոյ կոչեցեալ, իսկ Աստուածոյ իշ-  
10 խանութիւն ցուցանելով, անուամբ իւրով զաշխարհ կե-  
ցուցանելով, երկնայնւոցն հարստելով, աթոռ երկնային  
ունելով. ի հրեշտակաց երկրագեեալ, նախ Սրբոյ Հոգւոյն  
փառաւորեալ, որոց մոռանալ զվազն ուսուցեալ մեծ վը-  
տանգ, երանեալ է, ասէ, որ ոչ զայթագլեսցի յիս<sup>1</sup>. և գայ-  
15 թագղի, որ վասն մարմնոյ և սորա կրիցն վոխէ զՓրկիչն.  
և զմարդն ի թերէ Աստուածոյ ախորժէ, Քանզի մարդն ա-  
սելով զծնիցեալն, մարդ զիսաչեցեալն՝ մարդ ի թերէ Աս-  
տուածոյ փոփոխեցաւ, ոչ կարացեալ գտանել յերկնուստ  
առ ի յԱստուածոյ փրկութիւն. քանզի կեցուցանէ՝ որ կը-  
20 բեացն կեցուցանէ, | որ ի կնոջէն ծնաւ. ի ձեռն ծննդեանն  
արագ զիինն, զի կենդանութիւն պտղաբերեաց աշխարհի,  
իսկ ի ձեռն, զի այր յարս եղե՛ զայրն ի հաւասարութիւն  
իւրոյն եած կենդանութեան, և մահուամբ զմահն քակեալ  
և փոխաբերեալ առ յարութեան կենդանութիւն: Ապ' ու-  
25 բեմն եթ՝ ապրեցուցանեն Աստուածոյ, և նորոգելն զաշխահ  
ոչ միւսոյ ուրումն. իսկ ապրեցուցանէ ծնիցեալն և խա-  
չեցեալն. ոչ մարդ էր, զոր ծնաւն Մարիամ, և ոչ մարդ,  
զոր խաչեցինն հրեայք, այդ Աստուած ծնիցեալն ի կնոջէ,  
Աստուած խաչեցիալն ի հրեիցն:

30 Նորին՝ յաղագս աստուածային մարմնաւորութեանն.

Զիրկութիւն մեզ առթէ աւետարանն, եղբարք, յոր-  
մէ ուսանիմք զԱստուածն եկեալ յաշխահ և զմարդկային  
իրս փոխարկեալ ի փառս աստուածականս՝ յերկնային  
բարձրութիւն, յերկնային թագաւորութիւն, յերանութեան  
35 կենդանութիւն և արարած կազմեալով նոր. քանզի որ ոք  
ի Քրիստոսի՝ նոր արարած<sup>2</sup>, և ամենիքեան հաւատացեալք  
268v. ի Քրիստոս | նմանին Քրիստոսի, և տեսանելով զնորա փառ-

<sup>1)</sup> Հմմա. Մատթ. ԺԱ. 6.      <sup>2)</sup> Հմմա. Պ. Կոքնթ. Ե. 17., Գա-  
ղատ. Զ. 15.

արն՝ ձեռակցեմք նմա։ Քանզի փոխաձեացուացէ, ասէ, զմարմին նուաստութեանս մերոյ կերպակից մարմնոյ փառաց իւրոց<sup>1</sup>, ըստ ներգործութեան, առ ի կարել զնա և հնազանդեցուցանել նմա զամնայն։

Մի ոք այսուհետե ի մարմնականի ձեռւմ և մարմնա-

կանի ախտակրութեան զայթազդեսցի և մի մարդ սակս այսոցիլ զիրիստոս կարծեսցէ, զի մի զիրկութիւնս կորուցէ. քանզի մարդ ոչ ապրեցուցանէ զաշխարհ, մարդուոյ ախտակրութիւն ոչ սրբէ զ' ի նայնսն մկրտեալս. ամենաքեան իսկ ի Քրիստոսի մահն մկրտիմք<sup>2</sup>, հաւատալով<sup>3</sup> եթե Քրիստոսի մահն կենդանութեան հաւակ է, զմեր մահն փոխարկելով առ յարութիւն. քանզի խափանէ ըզմահ Քրիստոս, իսկ լուսաւորէ զկենդանութիւն և զանապականութիւն, որպէս զրեալ է<sup>4</sup>. և ոչ ոք ի մարդկանէ խափանել կարէ զմահ և ոչ լուսաւորել կենդանութիւն, 15 որպէս և Դաւիթ ասէ. «Ո՞վ է մարդ, որ կեցցէ եիչ տեստէ զմահ, և փրկեսցէ զանձն իւր ի ձեռաց դժոխոց»<sup>5</sup>; իսկ որ զինքն փրկել ոչ կարէ, իր զայդն ապրեցուացէ, և որ զմի ոք ապրեցուցանել ոչ զաւրէ, իր զաշխարհ կարէ ապրեցուցանել։ Եւ վասն զի բնակեն ի մարդ մեղք, հե- 20 տեանայ և մահ. թագաւորեաց իսկ, ասէ, մահ յԱղամայ մինչև ի Մովսէս և առ ոչ մեղուցեալսն՝ նմանութեամբ զանցաւորութեանն Աղամայ<sup>6</sup>. քանզի յորմէ, ասէ, մեղաւ Աղամ և մեղուցեալ ծնաւ զմեզ ըստ նմանութեան իւրում, յայնմանէ մու սահման Աստուծոյ զամնեցուն ա- 25 սելով. «Երկիր եիր և յերկիր տարագնասցեսա»<sup>7</sup>; Մովսէս զմահն լրումանել ոչ կարէր, այդ և ինքն մահուամբ զրաւեցաւ և ամենաքեան, որք ընդ թագաւորաւ և ընդ աւրինաւ թագաւորեցան մահուամբ. իսկ Քրիստոս և Քրիստոսի չնորհն սկիզբն ետ կենդանութեան<sup>8</sup>; Քանզի հոգի կենածական տայ Քրիստոսի հաւատն, զոր յետ յարութեանն փշեալ էր Հոգի Սուրբ. իսկ Հոգի Սուրբ Աստուծոյ պատկեր է, և ոչ մարդոյ։

Հաւատասցեմք այսուհետե արժանապէս ի Քրիստոս, 259v. որպէս յիրդի Աստուծոյ մարմնով երեսալ, Տէր մարգա- 85 րնիցն, Տէր հրեշտակաց, վասն որոյ հնազանդի նմա եր-

<sup>1)</sup> Հմմա. Փելիպ. Պ. 21.      <sup>2)</sup> Հմմա. Հռովմ. Զ. 3.      <sup>3)</sup> Բ.  
Ցիմիթ. Ա. 10.      <sup>4)</sup> Սաղմ. 2Ը. 49.      <sup>5)</sup> Հմմա. Հռովմ. Պ. 14.  
Ծնունդք Պ. 19.      <sup>7)</sup> Հմմա. Հռովմ. Է. 25.

կնայինքն և երկրայինք և ստորերկրիք \*: Քանզի ոչ մարդոյ հնագանդին երկնային պետութիւնք և իշխանութիւնք և կարութիւնք, այդ Աստուծոյ, և ամեն ծունը խոնարհ երկնայնց և երկրայնց և սանդարամետականաց, և ամեն 5 լեզու խոստովանեցէ, եթե Տէր Յիսուս Քրիստոս, ի փառա Աստուծոյ Հաւր <sup>1</sup>: Քանզի Քրիստոս Աստուած ելով ի մարմնի, երեսցաւ և խաւսեցաւ իր Աստուած, և գործեաց զամննայն իր Աստուած՝ Որդի ելով Աստուծոյ ճշմարիտ, ինքն աւրինադրեաց և ասաց. «Ես ասեմ ձեզ»<sup>2</sup>. և հրա-  
10 ման տալով հողմոց և ծովու և հոգւոց անմաքրոց. Խակ մարդիկ Աստուած ասընդունելով և Աստուծոյ զաւրութիւն՝ ոչ աւրինադրեցեն յնքեանց և ոչ հրամայեցնեն: Վասն այսորիկ Պաւղոս ասէ. «Ասեմ ոչ ես, այդ Տէրն»<sup>3</sup>. ի Քրիստոսէ բերելով զիրամանն, ոչ յիւրմէ. և ուր խոր-  
15 հըրդակցէ զյիւրմէան, ոչ իր զիւր ինչ խորհրդակցէ. այդ զՀոգին տուեալ նմա ի Քրիստոսէ. ասելով. «Բայց  
260r. թուիմ ևս հոգի Աստուծոյ ունել»<sup>4</sup>. | և դարձեալ. «Եթե փորձ խնդրէք զյիս խաւսովին Քրիստոսի»<sup>5</sup>:

### Նօրին.

20 Որ ոք ասէ, եթե Քրիստոս մարդ էր՝ Աստուած ունելով յինքեան, ամպարիշտ է, մի ի ծառայիցն առնելով զՏէրն և գծմարտութիւն անտուածութեանն նորա փոխարկելով՝ իր աստուածագործեցելոյ, ոչ իր Աստուծոյ ելոյ ճշմարտի, և զվրկականն մեր երկրագագութիւն ան-  
25 գոսնէ՝ երկրագաւզաց զՔրիստոս, վասն զի Աստուած է. և վասն զի ոչ Աստուած բնակէ ի նմա և ոչ զգայ՝ զինչ արդեւք Տէր կամ զինչ ծառայ, զինչ Փրկիչ, զինչ ապրեցուցիչ, զինչ ոգի կենարար, որպէս է Քրիստոս ըստ առաքելոյ և անձն կենդանի, որպէս է Աղամ, զինչ հողա-  
30 կանն և յերկնուստն, գտեալն ձեռվ իր զմարդ՝ սակս մարմնոյն որ ի Կուսաէ, իսկ զաւրութեամբ ելով Աստուած՝ սակս Հոգւոյն որ յերկնուստ, որ էր ի վերայ իւր, որում փառք յաւիտեանս, ամէն:

Արտադրութիւն երանելոյ Արանասի եպիսկապոսա-  
35 պետ Աղեքսանդրեալ եւ հաւ մերոյ՝ յաղազս աստուածա- յին մարմնաւորութեան, ի բանեն ձայնակցելով սրբոյ ժո- ղովոյն, որ ի Նիկէա.

Լուսանցրում՝ «սանդարամետականք».

<sup>1)</sup> Փիլիպ. Բ. 10—11. <sup>2)</sup> Մատթ. Ե. 22 և այլն. <sup>3)</sup> ՀՃՃ. Ա. Կոբենթ. Ե. 10. <sup>4)</sup> Ա. Կոբենթ. Ե. 40. <sup>5)</sup> Բ. Կոբենթ. ԺԴ. 3.

Խոստովանեմք զՈրդին Աստուծոյ՝ զնախ քան զյառահեանս մշտնջենալբար ծնիցեալ ի Հաւրէ, իսկ առ վերջ- 260v.  
նովք յաւիտենիցն վասն մերոյ փրկութեան ի Մարեմայ  
ծնիցեալ ըստ մարմնւոյ, որպէս աստուածազան առաքեալն  
աւտուցանէ՝ ասելով. «Իսկ յորժամ եկն լրումն ամանակին, 5  
արտաքս առաքեաց Աստուած զՈրդին իւր՝ եղեալ ի կնոջ»<sup>1</sup>, և գոյ զնոյն Աստուած և Որդի Աստուծոյ ըստ Հոգ-  
ւոյ, իսկ Որդի Մարդոյ ըստ մարմնոյ. հչ երկուս բնութեան գմին Որդի, գմին երկրպագեալն և զմին աներկրր-  
պագական, այդ մի բնութիւն Աստուծոյն Բանի՝ մարմնա- 10  
ցեալն և երկրպագեալն հանդերձ մարմնով իւրով, միով  
երկրպագութեամբ. Այդ և ոչ երկուս որդիս՝ զայդ ոմն  
Որդի Աստուծոյ ճշմարիտ և երկրպագեալ, իսկ զայդ ի  
Մարիամայ մարդ՝ ոչ երկրպագեալ, որպէս ըստ չնորհին  
Որդի Աստուծոյ եղեալ, որպէս և մարդիկ. այդ զի յԱս- 15  
տուծոյն և Աստուած, որպէս ասացի, մի Որդի Աստուծոյ.  
և Աստուած զնոյն և հչ զայդ, և Մարեմայ ծնիցեալ ըստ  
մարմնոյ առ վերջնովք աւուրց, որպէս հրեշտակն Աստուա-  
ծածնի Մարեմայ յասելն՝ «Ի՞ր եղիցի այս, զի զայր ոչ  
զիտեմ»<sup>2</sup>, | ասէր. «Հոգին Սուրբ վերեկեսցէ առ քեզ և 20 261r.  
կարութիւն բարձրելոյն հովանասցի քեզ. վասն զի ծնի-  
ցեալն առուրբ կոչեսցի Որդի Աստուծոյ»<sup>3</sup>: Ծնիցեալն այ-  
սուհետև ի կուսէն Մարեմայ Որդի Աստուծոյ բնութեամբ  
և Աստուած ճշմարիտ, և հչ չնորհիւ և կցորդութեամբ ըստ  
մարմնոյ միայն ի Մարեմայ մարդ, իսկ ըստ հոգւոյ ինչն 25  
Որդի Աստուծոյ և Աստուած՝ կրեալ զմեր կիրս, որպէս  
գրեալ է. «Քրիստոսի կրիցելոյ վասն մեր մարմնով»<sup>4</sup>. և  
դարձեալ. «Որ իւրօյ Որդւոյն ոչ խնայեաց, այդ վասն մեր  
ամեննեցուն առտուեաց զնա»<sup>5</sup>. իսկ անկիր մնացեալ և  
անայդայզակ ըստ աստուածութեանն՝ ըստ ասացելումն ի 30  
մարդարեէն. «Ես Աստուած և հչ այդայդիմ»<sup>6</sup>, մեռանե-  
լով զմերն մահ ըստ մարմնոյ վասն մեղաց մերոց, զի զմահն  
խողխողեսցէ ի ձեռն վասն միր մահուանն, ըստ ասաւդին  
առաքելոյ. «Ընկղզմնցաւ մահ ի յաղթութիւն. ուր քո, մահ,  
յաղթութիւն. ուր քո, մահ, խայթոց»<sup>7</sup>. և դարձեալ. «Քը- 35  
րիստոս մեռաւ վասն մեղաց մերոց ըստ գրիցելոցն»<sup>8</sup>.  
անըմբունելի իսկ և անմահ մահուամբ մնացեալ յաղագս

<sup>1)</sup> Գաղատ. Դ. 4.<sup>2)</sup> Ղուկ. Ա. 34.<sup>3)</sup> Ղուկ. Ա. 35.<sup>4)</sup> Ա. Պետր. Դ. 1.<sup>5)</sup> Հազմ. Ը. 32.<sup>6)</sup> Մաղաք. Դ. 6.<sup>7)</sup> Ա. Պողիմ. Ժե. 55.<sup>8)</sup> Ա. Պողիմ. Ժե. 3.

261v. աստուածութեանն, | իբր անախտ Հաւր ղաւրութիւն, ըստ  
ասաւզին Պետրոսի. «Ո՞չ էք, ասէ, կար ըմբռնիլ զնա ի  
մահուանէ»<sup>1)</sup>. վերագնացեալ յերկինս և նստեալ յաջմէ  
Հաւր ըստ յերկրէ՝ և բարձրացեալ մարմին Բանին, ըստ  
5 ասելումն ի Դաւթայ. «Ասաց Տէք Տեառն իմում. նիստ  
ի յաջմէ իմմէ»<sup>2)</sup>, և ի նմանէ ի Տեառնէ հաստատեալ և  
յառաքելոցն իսկ ըստ աստուածութեանն անպարտնակ.  
զամենայն վայր պարունակելով, ընդ Հաւր ի յաւթեանէ  
յաւէտակից, որպէս հայրական և անճառ զաւրութիւն,  
10 ըստ վարդապետին Պաւղոսի՝ «Քրիստոս Աստուծոյ զաւ-  
րութիւն և Աստուծոյ իմաստութիւն»<sup>3)</sup>. գալով ինքն Որ-  
դին Աստուծոյ և Աստուած, որպէս և խոստացաւ, դատել  
զկենդանիս և զմնոեալս, որպէս ասէ առաքեալն. «Դատ-  
չին զծածկոյթս խաւարի և յայտնաւողի զխորհուրդս որր-  
15 տից, և զգովութիւն և զանդունումն ըստ արժանաւորու-  
թեան ի վերայ բերաւզի իրաքանչիւրում»<sup>4)</sup>:

Իսկ եթ՛ ոք քան զայս յաստուածայնոց զրիցելոցն  
ուսուցանէ, միւս ասելով զիրդին Աստուծոյ և միւս ի Մա-  
262r. րենմայն մարդ՝ ըստ չնորհի որդիքործեալ իբր մեք, իբր  
20 գոլ երկուս որդիս, մի ըստ բնութեան Որդի Աստուծոյ  
զյԱստուծոյն և մի ըստ չնորհի զ' ի Մարեմայն մարդ.  
կամ եթ՛ ոք զՏեառն մերոյ մարմինն ի վերուստ ասէ, և  
ոչ ի կուաէ Մարեմայ, կամ յեղեալ զաստուածութիւնն ի  
մարմին, կամ խառնեցեալ կամ այզայզացեալ կամ ախ-  
25 տակիր զՈրդւոյն աստուածութիւն, կամ աներկրապա-  
գելի զՏեառն մերոյ մարմինն, որպէս մարդոյ, և ոչ երկըր-  
պաղելի իբր Տեառն և Աստուծոյ մարմին, զսա նզովէ  
սուրբ և ընդհանրական եկեղեցի, հաւանհալ աստուածա-  
զան առաքելոյ՝ ասաւզին. «Եթ՛ ոք ձեզ աւետարանեսցէ  
30 քան զոր առէքն, նզով եղիցի»<sup>5)</sup>.

Երանելոյ Թեօգորայ եպիսկապոսի Անկիւրայ՝ ի խաւ-  
սից, որ ի ծնունդն Քրիստոսի.

Որով արդեւք պատճառաւ իւր զախտակրութիւնս  
մարդկան արարեալ. վասն զի կամէր ախախւ զախտ ի  
35 բաց բառնալ և մահուամբ խափանել զմահ, և ձեռն հո-  
մատեսակացն դհոմատեսական յաշթահարել կամնցաւ. ըն-

<sup>1)</sup> Գործք. Բ. 24.      <sup>2)</sup> Սազմ. մթ. 1.      <sup>3)</sup> Ա. Կոբել. Ա. 24.      <sup>4)</sup> Հմմա. Ա. Կոբել. Դ. 5.      <sup>5)</sup> Գաղատ. Ա. 8—9.

տանեցուցաներ դիմաչն, իւր առնէ զապտակն, գիշապանսն |  
ինքեան գործէ, զի Աստուծոյ եղեալ ախտակրութիւնքն՝ 262v.  
զախտակրութեանցն իշխանութիւն առցէ: Քանզի և ոչ  
բնութիւն Աստուծոյ վեսաի և ոչ փոխանակութեամբ իւ-  
րով զախտան ընկալաւ և զզաւրութիւնն առ ի յԱստու- 5  
ծոյ, ախտն զնոմատեսակացն առնուն, յետ այսորիկ և մահն՝  
իրը Աստուծոյ եղեալ, խափանէ զմահն, և մնուալ լուծանէ  
զգոռողութիւն մահուն<sup>1</sup>:

Երանելւոյ Կիւրդի եպիսկապոսապետի Աղեքսանդրեայ  
եւ հաւը մերոյ՝ ի բանեն, որ յաղազս ներմարդութեանն. 10

Խոր ահա և մեծ և արժանապանչ ճշմարտապէս բա-  
րեպաշտութեանն խորհուրդ, և ուստի ափափագ իսկ և նոցին  
սրբոցն և հրեշտակաց. քանզի ասաց ուրեմն Փրկչին ա-  
շակերտ յաղազս ասացելոցն ի սրբոց մարգարեիցն՝ յա-  
զագս ամենեցուն մեր Փրկչին Քրիստոսի, որ այժմ յայտ- 15  
նեցաւ ձեզ ի ձեւն աւետարաննեցն առ ձեզ Հոգուով Սըր-  
բով, առաքելոյ յերկնուատ, յոր ցանկան հրեշտակը յա-  
ռիլ<sup>2</sup>: Քանզի և որք յառեցան՝ զմնծն բարեպաշտութեան  
խորհուրդ իմացեալք, յորդամ ծնաւ ըստ մարմնոյ Քրիս-  
տոս, զփոխանակ մերսն\* գովութիւնս առբերելով՝ ա- 20 263r.  
սեին. «Փատոք ի բարձունս Աստուծոյ, և յերկրի խաղաղու-  
թիւն, և ի մարդկան հաշտութիւն»<sup>3</sup>: Ի՞՞ր արդեւք ոչ հան-  
դերձեալ եին զեղանիլ խնկաւորութեամբ՝ \*\* զաշխարհի  
Փրկչին և փրկանաւոր աւեսանելով ծնիցեալ ի սրբոյ Կուսէն,  
որք և միոյ մնջաւորի ապաշխարեցելոյ տաւնեն, որպէս և 25  
ասէ Փրկիչն<sup>4</sup>: Պարէ այսուհետեւ վասն մեր սրբոց հոգուոց  
բազմութիւն, և զի՞նչ ոք այսորիկ պատճառն. ներմարդու-  
թիւնն Մէնածնին՝ ըստ մարմնոյն ծնեցելում ծնելութիւն  
առ ի մեզն հաճութեան լայնութիւն՝ անբաղդատեի մարդա-  
սէրութեանն մեծութիւն: Քանզի երանելին մարգարէն է.՝ 30  
սայիհաս ասէ. «Եկուլ մահ զաւրացեալը<sup>5</sup>, և դարձեալ. «Ի բաց  
եհան Աստուծած զամենայն արտաւար յամենայն դիմէ»<sup>6</sup>,  
իսկ ի բաց եհան զայն յեղանսակ յամենայն դիմէ զար-  
տաւար, կամ իրը զսկղբնականն զայն անէծ անգործական

\* ) Լուսանցքում՝ «զվառն մերսն».      \*\* ) Անդ՝ «հրճու(ա)նաւը».

1) Հմմտ. Գործք. Բ. 24.      2) Ա. Պետր. Ա. 12.      3) Ղուկ.  
Բ. 14.      4) Հմմտ. Ղուկ. ԺԵ. 7.      5) Եսայի ԻԵ. 8.      6) Եսայի  
ԻԵ. 8. հմմտ. Յայտն. Է. 17.

ապ' ուսեաց \*, զվատապատահն մահու քակեաց հարստութիւն, ուսուացէ դարձեալ իմաստնագոյն Պաւոս. արդ  
263v. վասն զի պարմանիք հաւասարեցին արեան և մարմնւոյ.  
և ինքն նմանապէս կըորդութիւն կալաւ նոցուն, զի մա-  
5 հուամբն իւափանեսցէ զունաւղն հարստութեան մահու,  
այս է զբանսարկուն, և վճարեացէ \*\* զայնոսիկ, ոյք եր-  
կիւղիւ մահու յամենայն ժամ կելով՝ պարտաւորք և նծա-  
ռայութեան <sup>1)</sup>. Զինչ այսուհետեւ է՝ նմանապէսն հաւասա-  
րեաց նոցուն, եթ' ոչ այն ուրեմն ամենայն իրաւոք, զի  
10 եղե ըստ մեզ ի Արքոյ և Աստուածածին Մարեմայ արեամբ  
և մարմնուվ:

Աստուած իսկ ելով բնութեամբ և ճշմարիտ յԱս-  
տուծոյ և ի Հաւրէ Բանն, նոյնագոյական և մշտնշենակից  
Հաւրն, և իւրով գերունակականն նազեցեալ բարձրու-  
15 թեամբ, և ի կերպի և հանգիտութեան Ծնաւղին, ոչ յա-  
փշտակութիւն համարեցաւ զգոյն հանգէտ Աստուծոյ, այզ  
զինքն թափեաց, կերպ ծառայի առեալ ի սրբոյն Մարե-  
մայ, ի նմանութիւն մարդկան կեալ և ձեռվ գտեալ իրը  
մարդ, նուաստացոյց զինքն՝ եղեալ ունկանող մինչ մա-  
20 հու, և մահու խաչի <sup>2)</sup>. Ուրեմն զինքն ի վայր եթող կա-  
264r. մատորապէս առ նուաստութիւնն | տուիչն յիւրմէ լրմանէն  
ամենեցուն. իսկ ի վայր եթող վասն մեր, ոչ բռնադատ-  
եալ յումեքէ, այզ կամելապէս վասն մեր կերպ ծառայի  
առեալ՝ ըստ բնութեանն իւրում ազատն, յայնոսիկ որ  
25 ըստ մեզ, որ գեր զամենայն արարածն, ընդ այսոսիկ, որ  
ընդ մահուամբքն, որ զամենայն կենածնէ. քանզի ինքն է  
հացն կենդանի՝ յերկնուստ իջնալն և կենդանութեան  
առուիչն աշխարհի <sup>3)</sup>: Եղե ընդ մեզ ընդ աւրինաւ <sup>4)</sup>, որ գեր  
զաւրէնն և աւրինադիր՝ իրը Աստուած, ընդ այսոսիկ. որք  
30 ընդ ծննդեամբ և սկիզբն զոլոյն վիճակեալք, որ նախ քան  
զամենայն յաւիտեանս և ամանակս, և մանաւանդ յաւի-  
տենիցն շինիչ և արարիչ: Խըր արդեւք եղե ըստ մեզ.  
մարմին առեալ ի սրբոյն կուսէ, և մարմին ոչ անանձն,  
որպէս թուեցաւ ոմանց հերձուածողաց, այզ անձնացեալ  
35 յաւէտ անձամբ բանականաւ. այսպէս յառաջ եկն կա-  
տարեալ մարդ ի կնոջէ՝ որիչ մնջացն, ճշմարտապէս և ոչ  
264v. թուերութեամբ կամ երևոյթութեամբ. | ոչ տաղտկացեալ

\* ) Լուսանցքում՝ «բաղաձայնեաց».      \*\*) Անդ՝ «ազատեցէ».

<sup>1)</sup> Երբ. Բ. 14—15.      <sup>2)</sup> Փելիպ. Բ. 7—8.      <sup>3)</sup> Յավհ. Զ.  
51—52.      <sup>4)</sup> Գաղատ. Դ. 4.

զգողն Աստուած, այդ և ոչ ի բաց ընկեցեալ, որպէս էրն միշտ և է և իցէ, Աստուած: Այսպէս Աստուածածին ասեմք զառւրբ կոյան. քանզի որպէս Կրանելին Պաւղոս ասէ՝ «Մի Աստուած և Հայր, յորմէ ամենայնքն, և մի Տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայնքն»<sup>1</sup>. քանզի ոչ բաժանեմք զմին 5 Տէր և զԱստուած և զՊրկիչն մեր յերկուս որդիս՝ զներ- մարդացեալ և մարմնացեալ Աստուծոյն Բան, և ոչ որպէս կարծեն ոմանք ի հերձուածողացն և անիմաստից եղելոցն որ- պէս ի միմեանան աստուածութեանն և մարդկութեան, կամ եթե Աստուծոյն Բանի փոխաբնակեցելոյ ի բնութիւն մար- 10 մեռյ, և կամ մարմնոյն փոխեցելոյ ի բնութիւն աստուածու- թեանն: Քանզի անյնզի և անայդայղելի ամեննեին է Աս- տուծոյն Բան. այդ զի մարմին ներանձնացեալ անձամբ բանականաւ միացոյց իւր ի սրբոյն Կուռէ զճշմարտութեան Աստուծոյն Բան, անճառապէս մարմնացեալ և մարդացեալ 15 ասի:

Քանզի բաւական այսուհետեւ առ ուղիզ և անհեր- քելի հաւատոյս մերոյ խոստովանութիւն Աստուածածինն ասել և խոստովաննել | զառւրբն Կոյս. այդ ի վերայ բերել 265r. եթե և մարդածին՝ ոչ հարկաւոր և ոչ աւգտակար: Քանզի 20 մի Աստուած ուսաք խոստովաննել և հաւատուալ զնա և յետ ներմարդութեանն, որպէս Պաւղոս՝ Մի Աստուած, մի և միջնորդ Աստուծոյ և մարդկան<sup>2</sup>. քանզի մարդ եղանել ասեմք անյեղապէս զԱստուծոյն Բան, և որչափ վայել էր առ մարմնույ բնութիւն, ծնաւ սուրբն Կոյս զիւր և մեզ 25 հոմագոյ մարմինն. այդ ի ձեռն Աստուածածին ասելոյն ներածակցի բնաւին և սորին զեկուցումն: Քանզի ոչ զաստուածութիւնն ծնաւ միրկ սուրբն Կոյս, այդ միացեալ ի մարմնի զԱստուծոյն Բան. և ոչ այդազգապէս իմանի Աստուածածինն, եթ՝ ոչ ըստ ոմին այսմիկ յեղանակի. իրը 30 զի նախ ի ներքս ընթանայ ամեննեին ներմարդութեանն խոստովանութիւն, և այսպէս եղիցի ապա ճշմարիտ, եթ՝ Աստուածածին եղի սուրբն Կոյս՝ ի բաց ծնեալ հրաշավիա- ռաբար զմին Քրիստոս. նմանապէս մեզ հաւասարեալ արեան և մարմնոյ, և հոմագոյ նէմայ իսկ և մեզ՝ ըստ մարդ- 35 կականին իւր դոլ զմարմին յԱստուածածնէն Մարեմայ| Քանզի ոչ նմանագոյ, որպէս թուեցաւ ումանց հերձուա- ծողաց, այդ նոյնաղոյ, այս է ի մերմէ գոյացութենէն. ա-

1) Ա. Կոբնթ. Բ. 6.

2) Ա. Ցիմեթ. Բ. 5.

սէ իսկ. «Զսերմանէ Աբրահամու բռնահարէ»<sup>1</sup>. Իսկ նմանագոյն նշանակէ ոչ ճշմարիտ մարդ, այդ նման որդւոյ մարդոյ, որպէս Դանիէլն ասէ. իսկ առաքեալ հչ նմանական զմեղ ուսոյց, այդ ասէ. «Մարդ Քրիստոս Յիսուս, տուիչն 5 զինքն փրկանակ վասն մեր»<sup>2</sup>: Իսկ նոյնագոյ՝ զնոյն Աստուծոյ և Հաւը աստուածաբարար, որպէս և հարքն մեր խոստովանեցին՝ հոմագոյ Հաւը և ոչ նմանագոյ ասացեալ:

Աւելորդապէս ուրեմն և ոչ հարկաւորապէս Աստուածածին ասելով ի վերայ ածեմք և մարդածին. քանզի բար 10 ւական, որպէս ասացի, առաջինն ձայն՝ զամենայն ի մերոյ խորհրդոյն խոստովանութիւն ունելով և պատճառս բանագտութեան և հչ մի մատուցանելով կամնցաւղացն զրպարտել զնշմարտութիւնն. Քանզի սովորութիւն հերձուածոզաց զուղղապէս ասսացեալոն յեղափոխել ի խոտան 15 միտս. և զարմանամք՝ հչ ըստ միտում յեղանակի՝ իմանաւով, իթե մոլորեալք են և զնոյնս զաստուածայինս չարաչար մեկնեն գրիցեալմն. Ապ՝ ուրեմն մեզ յարմարի վայելչապէս և ուղիղ ունաւղաց դիտաւորութիւն, յառաջ բերել զրառն. իսկ եթ՛ իմանան դարձեալ ոչ ուղղապէս առ 20 մեզ և հչ մի, նոքա լուիցեն ի մարգարեէն զասացեալոն. «Վայ ասաւղացն զշարն բարի և զրարին չար»<sup>3</sup>. «Եյլ հչ մի հաւասարութիւն լուսոյ առ խաւար. այդ և հչ բաղաձայնութիւն Քրիստոսի առ Բեղիար»<sup>4</sup>. քանզի զնամք մեզ կուղիղն և անխոտանապէս ունիչ ճանապարհն, կամ եթե 25 կուռն զթագաւորականն և անդառնալին<sup>5</sup>: Պատահեցուք իսկ այսպէս ի մրցանակ վերնոյ կոչութեան՝ Յիսուսի Քրիստոսիւ, որով և ընդ որում Աստուծոյ և Հաւը փառք, հանդերձ Սուրբ Հոգւովն, յաւիտեանս յաւիտենից ամէն:

Երանելոյ Յօվիաննու եպիսկապոսի Երուսաղեմի ար-  
80 տաղրութիւն յաղազս հաւատոյ.

Սրբոյն և երկրպագելոյ Երրորդութեանն. Հաւը և Որդւոյ և Սրբոյ Հոգւոյ մու գոլ զաստուածութիւնն և եթե գոյացութիւնն, հաւատաւուք. քանզի նոյն յգերկաքանչիւր 266v. իմանամք և խոստովանելու ներիս ենթակացութիւնս կամ 35 եթե յատկութիւնս՝ աստուածութեամի և յաւետափաղացութեամբ և փառաւք և կարութեամբ և անյեղութեամբ

<sup>1)</sup> Լուսանցքում՝ «անաղամօն».

<sup>2)</sup> Երբ. Բ. 16. <sup>3)</sup> Ա. Ցիմոֆ. Բ. 5—6. <sup>4)</sup> Խոյի. Ե. 20.

<sup>5)</sup> Բ. Կոքնթ. Զ. 14—15.

գհանդիտութիւն ունաւղացն, և զոշն այսպէս խոհեցաւղս  
և խոստովանիչ՝ նղովեմք: Եւ յաղագս ներմարդութեան  
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյն, կամ եթե  
մարմնաւորութեան, խոստովանեմք եթ՛ Աստուածն Բան,  
յաւէտախաղացն, Աստուծոյն Որդի, Մէնածին, առ ի փըր- 5  
կութիւն ազգի մարդկան ի Մարեմայ սրբոյ Կուսէն և  
Հոգւոյ Սրբոյ ծնիցեալ՝ ի կնոջէ, որպէս եասաց առաքեալ<sup>1</sup>.  
և մարմին առեալ ի նեմայ նոյնագոյ մերումս մարմնոյ՝ ճշ-  
մարտապէս և հչ թուելութեամբ, ճշմարտապէս ի նմա-  
դյաղագս մերն յանձն եառ կիրս, իբր մեք, և հչ թուե- 10  
լութեամբ. վաստակեաց յուղնորութեան և իբր մեք նըն-  
ջեաց, և իբր մեք ի խարազանիլն\* ի Պիղատոսէ գարածոցն  
որ ի ճնմանցն զգացնեալ, և յապտակիլն ցաւոյն իմացեալ  
և ի հարկանիլն զբնեոսն յոտս իւր և ի ձեռս ցաւոց գա-  
րածոյն զգացնեալ. որպէս Խայիաս յաղագս նորա եասաց. 15 267r.  
«Սա զմեզս մեր բերէ և վասն մեր հեծէ, և մեք համարեցաք  
զոյ զնա ի ցաւ և ի հարուածի և ի հիւանդութեան. իսկ  
ինքն վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց և մեղկեալ է սակս  
ամպարշտութեան մերոյ»<sup>2</sup>. և զարձեալ. «Մարդ ի հարուածս  
ելով և զիտակ բերել մեղկութիւն»<sup>3</sup>: Հաւանեսցուք իսկ և 20  
Պաւզոսի, զայս ասաւղի յաղագս նորա. «Քանզի հչ ունիոկ  
քահանայապետ հչ կարող ախտակիցել տկարութեանս մե-  
րում, իսկ տեղեկացեալ ամենայն իւր ըստ նմանութեան  
մերում, առանց մեղաց»<sup>4</sup>:

Խոստովանեմք իսկ և անձն բանական զնա ունել, 25  
նոյնակիր մերոց անձանց յախտակրութիւնս վասն մեր, և  
ճշմարտապէս յանձն առնուլ զնա զախտակրութիւնս մե-  
րոց անձանց, այս է տրամութիւն և խոռվութիւն և յոյժ  
տիրութիւն. քանզի զայս յաղագս նորա աւետարանք ու-  
սուցանեն, յիշեցուցանելով զասացեալ՝ «Ճրտում է անձն 30  
իմ մինչ ի մահ»<sup>5</sup>, և «Այժմ անձն իմ խոռվիալ է»<sup>6</sup>. և  
դարձեալ յաղագս նորաըստ Մարկոսի աւետարանին զրեալ 267v.  
է. «Սկսաւ զարհուրել և յոյժ տիրիլ»<sup>7</sup>: Եւ որպէս խոստո-  
վանեմք դմարմնոյ նորա կիրս ըստ ճշմարտութեանն եղա-  
նել և հչ ըստ երևոյթութեան, այսպէս և զանձինն ըստ 35  
ճշմարտութեան, և հչ ըստ երևոյթութեան եղանել հաւա-

\* լուսանցքում՝ «ի մարակելն».

<sup>1)</sup> Հմմու. Դաղատ. Դ. 4.    <sup>2)</sup> Խոյի. ԵԳ. 4—5.    <sup>3)</sup> Եսայի  
ԵԳ. 3.    <sup>4)</sup> Երբ. Դ. 15.    <sup>5)</sup> Մատթ. ԻԶ. 38. և այլուր.    <sup>6)</sup> Ցովի.  
ԺԲ. 27.    <sup>7)</sup> Մարկ. Ժ. 33.

տամբ. իսկ զատաւզան զնա խարազանեալ ոչ գարիլ, կամ խաշեցեալ՝ ի բնեռացն ի նմա վարսիլ, իբր զհերձուածողա նզովեմք, և խոստովանեմք, եթե ճշմարտապէս մեռաւ վասն մեղաց մերոց, և զի թաղեցաւ մարմին նորա անանձն եղեալ 5 և զի յարեաւ եռաւրեաւ ի մեռելոց ճշմարտապէս, և զի յետ յարութեանն կերաւ. և արբ ընդ առաքեալոն, ճշմարտապէս և ոչ ըստ երեսյթութեան, և զի վերացաւ յերկինս և եկհոցէ ի կատարածի յաւիտենիս դատել զկենդանիս և զմեռեալս, և զի յարուցէ զամենայն մարդկան ազգի մեռելոց  
10 զ' ի նայն բնութիւն ունելով մարմնոյ, յորում մեռեալ թաղեցան. զի յայտ է, զի անապականութեամբ, որպէս և  
268r. ինքն զնոյն մարմին ունէր յարուցեալ ի մեռելոց, որով մեռեալ թաղեցաւ:

Խոստովանեմք իսկ, եթե և զբնութիւն մարդկային  
15 ճարտարապետեաց՝ զբաղկացեալն յանձնէ աննիւթեականէ և մարմնոյ երկրայնւոյ, անմեղ չինեաց, այդ ոչ անյեղի, որպէս էր Աղամ ի դրաստին, նախ քան զաստուածային պատուիրանն զանցցէ. զոր և ասէ Սոզոմովն նեկեղեցականին, եթե Աստուած եարար զմարդն ուղիղ<sup>1</sup>, այդ ինքն-  
20 իշխան զնա շինեալ, ի կարութեան ունել զնա եարար առաջինութիւն ճահագործ, և փութով և երկով Աստուածոյ աւգուականութեամբ և չնորհիւ, այդ ոչ ևս անընդունակ մեղաց, ոչ բնութեան հարկեցաւղի, այդ ախորժակին պղերգացելոյ:

25 Իսկ եթ' ոչ գտանիցի ոք անմեղ, սակա զբնութիւնն ոչ զոր անյեղի և ոչ անկիր, որպէս նախասացաւ, ոչ բնութեանն վերազրելի, այդ ախորժակին զմեղմն. քանդի անկար է զմարդն ունել ի յորհրդոցն, մանաւանդ զանմեղականն՝ ի ծննդենէ մինչ ի վախճան յեղյեղուկ ևլով: Քանոգի  
30 զայս մէնում Տեհան մերում Յիսուսի Քրիստոսի աստուածային զրիցեալն վկայէ ասկով. «Որ մեզս ոչ եարար և ոչ գտաւ նենզութիւն ի բերան նորա»<sup>2</sup>: Բայց հնար է տեսչութեամբ և ինամածութեամբ և երկովք՝ Աստուածոյ աւգուականութեամբ և չնորհիւ, ճահագործել զառաքինութիւն:

268v. 85 Որ ոք այսուհետեւ նախազրելոց խոստովանութեանցն հաւանի, սա մեր հաւասարորդ. իսկ եթ' ոք զոնէ ի միում նախազրեցելոցն հակաբանէ, աւտար է ի մերմէ հաւասարութենէ:

Խրանելոյ Երեքեայ Եպիսկապոսապետի Անտիոքի Պի-

<sup>1)</sup> Ժաղավ. է. 30.

<sup>2)</sup> Եսայի. ծԳ. 9.

սիդեայ՝ ի խաւսից ասացելոց ի սուրբ աստուածայայթնութիւնս ի մեծի եկեղեցիոց Կոստանդնուպոլիսի, նստելով Երանելւոյ Եպիսկոպոսի Պրոկոպի.

Առ Հսայեայ մեծի մարգարէի Աստուծոյ քարոզեցելոյ մանկան՝ հՔանզի մանուկ, ասէ, ձնաւ մեղ, որդի և 5 տուաւ մեզ, որոյ պետութիւն եղեւ \* ի վերայ ուսոց իւրոց. և կոչի անոն իւր մեծի խորհրդոյ հրեշտակ, սքանչելի խորհրդակից, Աստուած հղաւը, իշխանական պետ խաղաղութեան, հայր հանդերձելոյ յաւիտենիւ<sup>1</sup>, Մի ոք այսուենտն զնեղ հրեական պատրեսցէ ոստ, քանզի այսպէս կո-10 չելզներձուածականսն արժան, իբր այդ ոմն ծնիցեալն, 269r. իսկ այդ ի նայն բնակեալ Աստուած, և իբր երկու ծնիցելոյն բնութիւնք. քանզի եթե ոք զայս ասել համարձակեսցի զԵմմանուէդն, զայս միայն ընդդէմ դիր և սանձ լուութեան զանուանն կալցի յիշողութիւն Քանզի ոչ եր-15 (կ)ու բնութիւնք, այդ զմարննացեալն Աստուած Կոյսն խորհրդարար բացասադմնեաց, ընկալեալ զՀոգւոյն վերեկութիւն. քանզի եթե մարդկայնոյ էր սերման բողբոջ Քրիստոս, հաւանեի արդեւք զպառուղն ըստ բնութեան քատակի արմատոյն. իսկ եթեն Հոգւոյ է Սրբոյ, ըստ հրեշ-20 տակապետին ձայնի՝ Աստուած ծնիցեալն, վասն զի և Աստուած ծնելութեանն առիթ:

Երանելւոյ Հաւը մերոյ Դիոսկորոսի Եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ եւ խոստվանողի՝ ի գրեցելոյ առ Սեկունդինան բրոյ ի Գանգրայ յախօրաց \*\*, ուր զնրացսն 25 կատարեաց ի Քրիստոս: Թուղը եւբներորդ, Սեպտեմբերի երկրորդ, Հոռի վեցերորդ.

Եւ զի մի յոլովարանել զթղթականն թուեսցուք զերազանցել գծաւորութիւն, այդ զայն համառաւտարար ասեմ. հաւատ զերկայնոցն|մեզ կամարաց բանայ զմուտն. 80 269v. հաւատ երենելեացս արհամարհել ուսուցանէ և հանդերձելոց բարեացն ախորժապէս առջնայունել. հաւատ և յոլովից ստորակացեալ և զանազանաց վշտաց դրաստին քաղաքացի գործեաց. քանզի ի ձևոն հաւատոյ զայն ձայն գոչեաց. «Յիսհւա Տէր, յիշեա զիս, յորժամ եկեացիս արքայութեամբ 35 քովշ<sup>2</sup>. յառաջնոցն ազատեցաւ չարեաց, իսկ դրաստին

\* ) Հուռանցքում՝ «Ճնաւ» . \*\* ) Զեւագրում՝ «յեփասրաց».

<sup>1)</sup> Եպայի Բ. 6. <sup>2)</sup> Հաւկ. Խ. 42.

փարթամապէս վայելեաց բարեաց. և ոչինչ անյարմար, քանզի հաւատ, որպէս ասացի, նմա առաջնոցն վնասակարութեանց առթեաց թողութիւն, իսկ սրբոցն հրեշտակաց գործեաց հաւասարորդ. ետես ի խաչին, և Աստուած քանդողեաց. ետես յանարգութեան, և նմա առաջի անկաւ՝ Տէր զնա կոչելով և ասելով. «Յիսուս Տէր, յիշեա զիս, յորժամ գայցես արքայութեամբ քով»<sup>1)</sup>; Զինչ հրաշափառ իրիդ, ով աւազակ. զինչ այսպան կամացդ փոփոխումն. ոչ տեսեր ինքնատես մեռեալ յարուցեալ, ոչ կոյր վերա-  
10 տեսեալ, ոչ կաղ զնացեալ, ոչ բորոտ մաքրեալ, ոչ ծով  
270r. սանձեալ, ոչ դես տարալածեալս, ոչ անդամալոյծ պնդեցեալ. ոչ հացս բազմացեալս, ոչ արեան յարմամբ քղանցից ազա-  
գեալ աղբերս. մարդ տեսեր բնեռուաւք վարսեալ ի փայտի.  
ուստի քեզ այսպիսիոյ գիտութեանն տուաւ մնծութիւն.  
15 զոր մարգարէ վերծանեալ՝ յայս առաջնորդեցար մտածու-  
թիւն. զՄովսէսի աւրէնան ոչ վերծանեցեր՝ աւազակու-  
թեամբ բուծեալ. ով քեզ ի հայրապետացն վարդապետ եղե:  
Գիտեմ և ևս, ասէ, գիտեմ մերոյ մեղանացն զվանդս,  
ոչ անգիտանամ զպատիժս անձն գործեցելոց դճնեից. ոչ  
20 ուսայ աւրինականս, այդ առ Տէրն աւրինաց ապաստանե-  
ցայ. ոչ վերծանեցի մարգարէս, այդ զոր քարոզեցին նոքա  
ախտակրեալ, ժամանեցի. հաւատ անուսումն ինձ զգիտու-  
թեան զդուռն եցոյց. այսուիկ վարեցեալ առաջնորդաւ՝ ժա-  
մանեցի առ կենդանութիւնն:

## 25 Եւ յետ այդոցն.

Եւ զի զյոլովս թողեալ՝ այժմու հարկաւորացս և շար-  
ժեցելոցս բուռն հարից, զայն ասեմ. մի ոք ասասցէ. ար-  
270v. տաքին կամ աւտար մերոյ մարմնոյ, զոր եառն իսրբոյ  
Մարեմա Հոգւով Սրբով Տէրն, ըստ որում գիտէ բանի  
30 ինքն: Իսկ եթե այս է ըստ նոցայն ամպարշտութեանն  
ստատաղ ես(?) ամենայն իրաւք, ով Պաւղոս, գրել. «Ո՞վ  
մեզ այսպէս. քանզի ոչ զհրեշտակաց բռնահարեաց, այդ  
զ(ս)երմանէ Արքահամու բռնահարեաց»<sup>2)</sup>. և ոչ աւտար  
յԱրքահամէ Մարիամ պատահեաց, որպէս է դիւրաւ յոլո-  
35 վից ապացուցել զրիցելոց: Ուստի ասէ. «Պարտ էր ըստ  
ամենայնի եղբարց նմանիլ»<sup>2)</sup>. իսկ ըստ ամենայնի և ոչ դուզ-  
նաբեայ ինչ զմերոյս թողու բնութեան, քանզի և ջիղս և  
մազս և ոսկերս և երակս և որովայն և սիրտ և երիկամունս

1) Ղեկ. Խ. 42.

2) Եբբ. Բ. 16—17.

և լիարդ և թոքս և յամեննեցուն միանգամայն պարզաբար,  
յորոց մեք բաղկացեալ եմք՝ կառուցաւ զ' ի Մարեմայն  
ծնիցեալ Փրկչին մարմին, անձնացեալ անձամբ բանակա-  
նաւ\*, թանց միայնոյ բեղման մարգոյ և քնոյ և հեշտ ցան-  
կութեան։ Վանգ' եթ' ոչ այսպէս ունի՛ ըստ ամպարշտա- 5  
գունաց հերձուածողացն կատաղութեան, իբր եղբայր|մեղ 271ր.  
հմայեցաւ, այդով և աւտարաւ քան զմերս վարեցեալ մար-  
մուզի կամ իբր դարձեալ ճշմարտեացէ, ասելով իւրումն  
Հաւր. «Պատմեցից զանուն քո եղբարց իմոց»<sup>1</sup>, ի բաց լո-  
կեցէք այսուհետեւ և գարշեցարհոք որք զայսպիսիսն ար- 10  
տարերեն բայս. քանզի եղև առ մեզ որպէս մեք, վասն  
մեր. ոչ երեսյթութեամբ և թուելութեամբ, ըստ ամպա-  
րշտացելոցն Մանկքացոց աղանդին, քաւ լիցի. այդ ճշշ-  
մարտութեամբ յաւէտ յԱստուածածինն Մարեմայ յատաջ  
եկեալ, որպէս կամեցաւ, և զջաղջախեալ ամանն ի ձևոն 15  
այսր առ մեզ գալստեանն նորոգեալ՝ յիրաւի Եմմանուէզ  
խոստովանի. Այդ և աղքատացաւ, ըստ Պաւլոսի Ճայնին,  
զի մեք նորա աղքատութեամբն փարթամացուք<sup>2</sup>. եղև  
իբր զմեղ տնաւրինաբար, զի մեք ի ձեռն մարդասիրու-  
թեանն իբր զնա. եղև Որդի Մարդոյ, ոչ կորուսեալն զգոն 20  
Որդի Աստուծոյ, զի մեք եղբցուք ըստ չնորհին որդիք  
Աստուծոյ: Զայս հաւատամք և խորհիմք: Խակ եթ' ոք քան  
զայս խոհել|ձեռնաբարկէ, եղիցի ի հայրենի և առաքելական 271v.  
հաւատոյն աւտարացեալ:

Նորին՝ որ ի Գանգրայ առ միայնակեացսն, որ ի Հե- 25  
նատոն գրեցելոյ քորոյն.

Քանզի գիտեմ ես զնա հաւատով բուժեալ, ծնիցեալ  
ահա զնա ի Հաւրէ իբր Աստուած, իսկ զնոյն ծնիցեալ ի  
Մարեմայ իբր մարդ. Տես զնա ի վերայ երկրի ճեմնով  
իբր զմարդ, և տես զնա երկնայնոց հրեշտակաց արարիչ<sup>30</sup>  
իբր զԱստուած. տես զնա ի նաւի ննջեցեալ իբր զմարդ,  
և տես զնա ի վերայ ջուրց ճեմնալ իբր Աստուած. տես  
զնա քաղցեալ իբր զմարդ, և տես զնա բուժանելով դար-  
ձեալ իբր Աստուած. տես զնա ծարաւեալ իբր զմարդ, և  
տես զնա արբուցանելով իբր Աստուած. տես զնա մերկա- 85  
ցեալ իբր զմարդ, և տես զնա զգեղուցանելով իբր Աս-  
տուած. տես զնա ի վերայ յովանակի նստեալ իբր զմարդ,

\* ) Տեսազրում՝ «բենականաւ».

<sup>1)</sup> Տեղի. Ժէ. 6. 26 (?).

<sup>2)</sup> Բ. Կոքնթ. Հ. 9.

և տես զնա վերելակեալ քերովբեից իբր Աստուած. տես զնա ի հրեից քարկոծեալ իբր զմարդ, և տես զնա ի հրեշտակաց երկրպագեալ իբր զԱստուած. տես զնա փորձեալ իբր զմարդ, և տես զնա դես հալածելով իբր զԱստուած.

- 272r. 5 տես զնա ոչխար իբր զմարդ, և տես զնա դարձեալ հովիւ իբր Աստուած. տես զնա զո՞ն զենեալ և իբր քահանայ ընծայաբերելով, և տես զնա փրկանաւորելով իբր Աստուած. տես զնա Պիղատոսի յատենի կացնալ իբր զմարդ և տես զնա Հաւր գահակցելով իբր Աստուած. տես զնա խաչեցեալ իբր մարդ, և տես զնա աւազակին զդրասան չնորհելով իբր Աստուած. տես զնա քացախ ի խաչին արբուցեալ իբր մարդ, և տես զնա իբր Աստուած անչարակինաբար զաշխահ արբուցանելով. տես զնա մեռեալ իբր զմարդ, և տես զնա մեռեալս յարուցանելով իբր Աստուած. տես 15 զնա աղքատացեալ իբր մարդ, և տես զնա փարթամացուցանելով իբր Աստուած. տես զնա ծառայ իբր մարդ, և տես զնա ազատիչ իբր Աստուած. տես զնա որպէս ցորեան սերմանեալ իբր զմարդ, և տես զնա սերմանաւզ դարձեալ իբր Աստուած. տես զնա այզի իբր մարդ, և տես զնա 20 բուսակիր և երկրագործ իբր Աստուած:

- Այզ զի մի բազում ամբոխ ի շարագրութեանս արարից, թողում այժմ զվկայութիւնս իւրաքանչիւրոյ հաւառել գլխոյ, և հաւաքեսցին՝ չնորհելով Աստուծոյ, դիպողի ժամանակի առ այս կոչաւզի: Խակ մեք զաւտարափառացն \*  
25 անպիտանութիւնս թողեալ՝ մի և զնոյն խոստովանեմք Փրկիչ և Տէր և Աստուած, և եթ' եղե տնաւրինաբար մարդ, Կալարեւք այսուհետեւ զնարցն խոստովանութիւն և մի չոգմոգացն հերձուածողացն հետեանայք բայցից. այզ և մի յերկուս բաժանաւզաց զիին հաւանիք. քանզի մի է մեր Փըր-  
30 կիչն, որպէս ասացի, և եթ' եղե մարդ սակա մարդասիթութեանն:

Բաւականապէս ահա, որպէս ինձ թուի, խոռվեցուցին \*\*, հանդերձ բազում պատկառանափ՝ սրբոց և ուղղափառաց եպիսկապոսաց և եպիսկապոսապետաց վարդապետութիւնս: Քանզի համանգառայն և ասել երկուս բնութիւնս ի վերայ մարմնացելոյն Աստուծոյն Բանի ամպարիշտ ապուսեցին \*\*\* և

\* ) Լուսանցքում՝ «այզաղանդացն».      \*\*) Անդ՝ «գործվեցին».  
\*\*\* ) Անդ՝ «բացաձայնիցին».

պէտևողուն զայս խորհել նզովկցին, և զոչսն խռատովմանողս  
զնոյնագոյ Հաւը Աստուածն Բան եղեալ անյեղապէս առ  
վերջնուիք աւտուրցն վասն մերոյ փրկութեան. մարդկան ըստ 273r.  
մարմնոյ նոյնագոյ, հանդերձ մնալով որպէս էրն, ի քրիս-  
տիանոսաց յուսոյն աւտարասցին, որպէս և զայդա հեր- 5  
ձուածողս. իսկ առ մնծագոյն մտահաճութիւն հիմնացե-  
լոցն ի վերայ անծլելի վիմին ուղղափառի հաւատոյ և առ  
պատկառութիւն նախասացելոց աղանդոցն՝ առզրեցից և  
յաստուածայնոյ և աստուածաշնչէ նորոյ Կտակէ վկայու-  
թիւնո, հանդերձ. մնկնութեամբք սրբոցն մերոց հարանց, 10  
որովք է զգուշապէս ըստգտանել նախասացելոց հերձուա-  
ծոցն, իսկ ունել զանսասանելին և զերանելի զուղղափառ  
հաւատն, զաւանդեալն ի սրբոց առաքելոցն և երանելեացն  
մերոց հարանց և վարդապետաց, եթ' արդեւք լուիցեն, եթ'  
արդեւք թողացուացեն գայթագոյն կայսերական և ուրացողք զՏէրն, 15  
որպէս առէ մարգարէն, և վերադարձեացեն առ Տէր խոս-  
տովանութեամբ և հեղցին զյապաշնարութենէն արտաւոր,  
առ ի բժշկիլ զիւրեանս: Քանզի միշտ հրաւիրէ Աստուած 273v.  
և ձեռն տայ առ ապաշխարութիւն, բարւոյն զարտակա-  
ցեալսն երկարս ի նմանէ. որպէս և իրեմիէիւ մարգարեիւ 20  
առկոչէ զնոսա ասելով. «Վերադարձեցք, որդիք արտակա-  
ցեալք, ասէ Տէր, և բժշկեցից զմաշուածս\* ձեր»<sup>1</sup>. և դար-  
ձեալ. «Վերադարձեցք, զյորին խորհուրդն խոհեցմազք և  
անտրէն, նորոգեցէք ձեզ նորոգ առունս և մի սերմանէք  
ի վերայ փշոց, մի արտաքս ելցէ իբր հուր սրտմտութիւն 25  
իմ և այրեացի և ոչ շիջցի»<sup>2</sup>. «Մի խայտաղան ոչ է ի Գաղաադ  
և կամ բժիշկ ոչ է անդ. ընդէր ոչ վերելեաց բժշկութիւն  
դատեր ժողովրդեան իմոյ»<sup>3</sup>. որպէս Ուսեաւ մարգարեիւ  
առէ. «Վերադարձեա իսրայէլ առ Տէր Աստուած քո»<sup>4</sup>: Եւ  
երանելին իսկ Պետրոս թելադրէ յանցուցելոց և խաչաւ- 30  
զացն զՏէրն ասելով. «Ապաշխարեսցէք և դարձարեւք՝ առ  
ի ջնջիլ ի ձէնջ զմնզս, իբր զի եկեացեն ժամանակք սփո-  
փանաց յերեսաց Տեառն»<sup>5</sup>: Եւ Պաւլոս միջնորդէ ըստ  
նմանութեանն Քրիստոսի և մաղթէ ասելով. «Պաղատիմք  
վասն Քրիստոսի, իսաշանցարհէք Աստուծոյ, զի ոչն գիտակ 35 274r.  
զմեզս, վասն մեր մնզս հարար, զի դուք արդարութիւն  
Աստուծոյ լինիցիք նովաւ»<sup>6</sup>, և գործակցելով աղաչէ՝ իբր

\* Լուսանցքաւմ՝ «զմտերում».

<sup>1)</sup> Երեմ. Պ. 22.      <sup>2)</sup> Երեմ. Պ. 3—4.      <sup>3)</sup> Երեմ. Ը. 22.

<sup>4)</sup> Ովոէ Ժ. 2.      <sup>5)</sup> Դոքէց Պ. 19—20.      <sup>6)</sup> Բ. Կորնթ. Ե. 20—21.

զի մի ունայն գԱստուծոյ չնորհն ընդունել ձեզ<sup>1</sup>, զի ներկայս ժամանակ զիւրընկալ է կամեցաւդին ապաշխարել և խոստովանել արտասուաւք Աստուծոյ, Քանզի ի դժոխա խոստովանեացէ Աստուծոյ յանցաւորացն վասն իւրոյ յան-  
5 ցաւորութեան այզ ոչ ոք. զի յայտնապէս եասաց Աս-  
տուած յաղագս յանցաւորութեան վախճանելոցն. «Որպէս ամենեքեան տեսցեն զվանգս մարդկան՝ յանցաւորացն ի նմա. քանզի որդն նոցա հչ վախճանեցի և հուք նոցա ոչ  
շիջի, և եղլցին ի տեսիլ ամենայն մարմնոյց<sup>2</sup>:

10 Արդ՝ այսորքիկ յաղագս ոչ կամեցաւզացն ապաշխա-  
րել և վերադարձել առ գնաւդն զնոսա Տէրն Աստուած Յի-  
սուս Քրիստոս իւրով արեամբն. քանզի սա է ճշմարիտն  
Աստուած և կենդանութիւն յաւիտենական, որպէս առէ  
Յովաննէս<sup>3</sup>: Արդ՝ բաւական մեզ, որպէս ասացաւ ի նոյն  
274v. 15 ինքն ի Սրբոյ և Աստուածաշունչզրիցեւոյն՝ միսիթարել,  
եթե մի Տէր Յիսուս Քրիստոս է յաւիտենէ և յաւիտեանս  
ամէն, և զի մարդ եղն ըստ ճշմարտութեանն՝ մնալով Աս-  
տուած:

Երանելոյ Յօվաննու եպիսկոպոսի Կոստանտինու-  
20 պողսի ի մեկնուրենեն, որ ըստ Մարքի աւետարանին.

Մատեան ծնելութեան Յիսուսի Քրիստոսի. որդւոյ  
Դաւթի որդւոյ Աբրահամու<sup>4</sup>: Երանելին Մատթեոս, իբր  
զի Երրայեցւոց գրելով՝ նախ քան զամենայն իմադրեաց  
ցուցանել, եթե յԱբրահամէն և ի Դաւթայ էր Քրիստոս. և  
25 վասն զի լուեալ էր Աբրահամու նմանութիւն վասն ամա-  
նակին և փոխանակելով Դաւթի զկենցաղն Աբրահամու՝  
ապա և զիստացեալն արքայութիւն սերման նորա կալաւ  
Դաւթ և յիշողութեան ամենեցուն էր: Քանզի որպէս  
յայնժամ ասէր Խսաակայ Աստուած՝ «Մի երկնչիր, զի  
30 ընդ քեզ եմ և բարեբանեցից զքեզ և բազմացուցից  
զքեզ, սակս Աբրահամու Հաւը քո»<sup>5</sup>, սապէս յետ այսորիկ  
ասէր Աստուած եղեկիրայ. «Գերասպարեցից վասն քաղա-  
քիս այսորիկ, սակս իմ և Դաւթի Հաւը քո»<sup>6</sup>. քանզի ժա-  
275r. 35 ռանդաւոր առ Աստուած սիրելութեանն եղն Դաւթ: Եւ  
զանդաւոր առ Աստուած սիրելութեանն եղն Դաւթ:  
35 վասն զի յետ այսորիկ ի սերմանէ Դաւթի ակնկալութիւն  
զՔրիստոս եզանել, քանզի լուեալ էր որ ինչ ըստ Աբրա-

<sup>1)</sup> Բ. Կորնթ. Զ. 1. <sup>2)</sup> Եսայի. ԿԶ. 24. հմմա. Մարկ. Թ. 47.

<sup>3)</sup> Ա. Յովհ. Ե. 20. <sup>4)</sup> Մատթ. Ա. 1. <sup>5)</sup> Ենիկ. ԻԶ. 24.

<sup>6)</sup> Դ. Բագ. ՃԹ. 34., Ի. 6., Եսայի ԼԵ. 35.

համու վասն ամանակին, այսր ազագաւ նախ ետ որդւոյ Դաւթի, ապա որդւոյ Աբրահամու: Իսկ առէ աւետարանիչն յաղագս Գաբրիէղի, եթե՝ «Եկն առ Կոյսն խաւաեցեալ առն, որում անուն Յովսէփի, ի տանէ և ի տոմիքէ Դաւթայ»<sup>1</sup>. ի Դաւթայ էր Կոյսն, և Յովսէփի, որ արդար 5 ելով և պահապան աւրինի՝ յիւրմէ հայրենոյ և ի տանէ աստէր իւր զկոյսն, քանզի հրամայէր աւրէն ոչ պարտ գոլ առնուլ կին, եթ՛ ոչ ի նոյն ցեղէ: Եւ վասն զի ոչ էր աւրէն առ հրեայսն ազգարանել զկանայս, զի զսովորութիւնն պահեսցէ աւետարանիչն և մի թուեսցի տարագծել 10 ի նախերգանացն և զաղիջն մեզ ծանուացէ, սակա այսորիկ զնախնիս նէրա լոեաց, իսկ զՅոււէփ ազգարանեաց, զի ուացուք նովաւ զՄարիամ, եթ՛ էր ի տանէ Դաւթի, ուստի և ինքն, զի և աւրինացն անտղելի մնայցէ: | Քանզի աստաւ- 275v. զին ի բաց երևեցելոյ ի տանէ Դաւթի և Կոյսն լնդ նմա 15 ցուցեալ է՝ հաւաստապէս ի սերմանէ ելով Դաւթի, յորմէ և ծնիցաւ Յիսուս Քրիստոս. իսկ Յիսուս թարգմանի Փրկիչ, և Փրկիչ՝ ի Փրկելոյ զժողովուրդ իւր:

Հրաշափառ լսել զխորհրդոյս պքանչ, եթ՛ Աստուած անճառելի և անառելի և անպարիմանալի և Հաւը հոմա- 20 գոյ ելով Որդի, արգանդաւ ծնիցաւ կուսականաւ և եղել ի կնոջէ, և կալաւ նախնիս զԴաւթիթ և զԱբրահամ. և զի ասեմ զ' Դաւթիթ և զԱբրահամ. այդ, որ է քստմնելագոյն՝ զկանայնան զայնս, զորս այժմ ևս յիշեցաք. և մի ինչ նուաստ կարծեսցես. քանզի հաւանեցաւ կոչիլ Դաւթի 25 Որդի՝ իւրոյն ծառայի, զի զքեզ արասցէ Աստուծոյ որդի՝ քոյոյ Տեառնն. ծնիցաւ իսկ ըստ մարմնոյ, զի ծնցի ըստ հոգւոյ. քանզի ի կնոջէ ծնանիլ մեզ պատահէր. իսկ ոչ յարենէ և ոչ ի կամաց առն, այդ ի Հոգւոյ Սրբոյ<sup>2</sup>, զգերազանցեալն զմեզ և զհանդերձեալն նախաձայնէ ծնե- 30 276r. լութիմ, զոր հանգերձեալ էր մեզ ի Հոգւոյ Սրբոյ շնորհել, և ամենայն իսկ այլքն այսպիսի էր. քանզի ի մարգարեէն մկրտիլ զհինն ցուցանէր մեզ նմանեալ, իսկ ի Հոգւոյն վերեկութեամբ զնորն ստորագրեաց:

Եւ յետ սակաւուց.

35

Տեսանթա՝ իբր ոչ դուզնաքեայ և սակաւուց սակս յիշեաց ըստ Յուգայի պատմութեանն ամենայնի. սակս

<sup>1)</sup> Ղուկ. Ա. 27.

<sup>2)</sup> Յօվհ. Ա. 13.

այսորիկ և զՀոռւթ և զԹամար յիշ՝ զմին այղազդի և  
զմին բոզ ելով, զի ուացիս, եթե զամենայն եկն չարու-  
թիւն լուծանել զմեր. քանզի որպէս բժիշկ, այդ հչ իրը  
դատաւոր ժամանեաց. Զի որպէս բոզս առին կանայս այ-  
5 սոքիկ, այսպէս և Աստուած զբնութիւնն զրոզացեալ յար-  
մարեաց իւր, զոր մարգարէք ի վիրուստ նախասեն ի վե-  
րայ ժողովարանին եղեալ. այդ անզգամ եղեւ այն առընտա-  
կիցն, իսկ եկեղեցի մի հաղ ի բաց թափեալ ի հայրենի  
չարեացն, մնաց ողջագորելով զիհեսայն. Քանզի որպէս  
10 Հոռւթ, եթ' ոչ նախ եթող զհայր և արհամարհեաց զտուն  
276v. և զազդ և զգաւառ, և վայրածեցաւ | ի վերջին աղքատու-  
թիւն, ոչ պատահեաց մերձաւորութեան Բովոսի, սապէս  
և եկեղեցի զառաջին սովորութիւնն ի բաց թողեալ, յայն-  
ժամ տարփալի եղեւ Քրիստոսի և մեծացն բարեաց ար-  
15 ժանաւորեցաւ. Առ աս ասէր եկեղեցիս Դաւիդ. օՄոաս-  
ցիր ժողովրդեան քոյ և ատան Հաւր քո, զի ցանկացաւ  
թագաւոր գեղոյ քում»<sup>1)</sup>: Զայն և Հոռւթ նարար. վասն  
այսորիկ և մայր եղեւ թագաւորաց, որպէս և եկեղեցի.  
քանզի և ի սէմայ է Դաւիդ թագաւոր մեծ եղեալ, և ոչ  
20 ամաչէ Դաւիդ ի վերայ այսոցիկ.

**Երանելոյ Կիւրիղոյ՝ յառ թագուհիսն, ի մատենե երե  
Աստուած Քրիստոս.**

«Եւ զայս նորա զմտաւ ածելով, ահա հրեշտակ Տեառն  
յանուրջս երենցաւ նմա ասելով. Յուսէփ, Որդի Դաւիթ,  
25 մի երկնչիր առնուլ զՄարիամ կին քո. քանզի ի նեմայ  
ծնիցեան ի Հոգւոյ Սրբոյ. ծնեսցի Որդի, և կոչեսցես զա-  
նուն նորա Յիսուս. ինքն իսկ ապրեցուսցէ զժողովուրդ  
իւր ի մեղաց իւրեանց»<sup>2)</sup>: Երկուս ի միասին դնէ՝ աս-  
տուածավայելուչս և ոչ մարդկայնում վայելուչս բնոււ-  
277r. 30 թեան. քանզի ծնիցելոյն ի Մարեւմայ յատուկ եասաց ժո-  
ղովուրդ դնովաւ ապրիցեալոն, և ես զի ի մեղաց զնոսա ի  
բաց թափեսցէ. Աստուծոյ իսկ ամենայն և վայել, իցիւ իսկ  
նմա և միայնում զ' ի բացն թափել ի մեղաց կարել զմե-  
ղուցեալոն: Աստուած ուրեմն է ի Կուսէ ծնիցեալն, որոյ  
35 և յատուկ եմք ժողովուրդ, և ի մեղաց զմնդ ի բաց փո-  
խեաց, իրը ունելով զայսորիկ իշխանութիւն:

**Եւ դարձեալ.**

1) Սաղմ. ԽԴ. 11—12.

2) Մամբ. Ա. 20.

Իսկ Յիսուսի ծննդելու ի Բեթղեհմ Հրեաստանի<sup>1</sup>,  
ի Բեթղեհմ ծնանի Հրեաստանի, որ յարմատոյն Յեսսեայ,  
և ասէ յաղագս նորա միով ի մարգարէիցն Աստուած և  
Հայր. «Եւ դնւ, Բեթղեհմ, տուն Եփրաթայ, սակաւաւոր  
ևս զոլ ի հազարաւորս Յուդայ. քանզի ի քէն ինձ ար-<sup>5</sup>  
տաքս եկեսցէ առ ի զոլ իշխան յի՞րայէղից<sup>2</sup>, և ելք իւր  
ի սկաբանէ յաւուրցն յաւիտենից<sup>3</sup>: Խօրբ արդեւք ծնի-  
դեալն ի Բեթղեհմ Հրեաստանի ի սկսբանէ յաւիտենի  
զելան ունել ասի, այս է՝ զգոյութեանն սկիսըն, թեպէտ և  
ծնիցեալ ի վերջինս յաւիտենիս ժամանակս: Աստուած 10  
ուրեմն Քրիստոս և վայել էր նմա Աստուծոյն Բանի ծե-  
րագոյնն. քանզի Աստուած էր՝ վասն մեր | մար(մ)նական 277v.  
համբերեալ ծնելութիւն զ՝ ի կնոջէն:

Եւ դարձեալ.

«Ես զնեղ զրով մկրտեմ յապաշխարութիւն, իսկ որ 15  
զնեան իմ գայ, հարստագոյն իմ է, որում չեմ բաւական  
զկաւշիկս բառնալ. ինքն զնեղ մկրտեսցէ Հոգւով սրբով և  
հրով. որոյ հեծանոցն ի ձեռին իւրում և մաքրեսցէ զկալ  
իւրց<sup>4</sup>: Ոչ մարդկութեան զործ զոլ ասեմք մկրտելն Հոգ-<sup>5</sup>  
ւով Սրբով, այդ և ոչ զկալն զիմանալի, այս է՝ զորս ի վե-<sup>20</sup>  
րայ երկրի, յատուկ գոլ ասեմք մարդոյ. քանզի Աստուծոյ  
է ամենայն և նմա միայնում վայել է Սրբով Հոգւով մը-  
կրտել կարել զհաւատացեալս: Ներգործեաց զայս Քրիս-  
տոս՝ յետ Յովաննու եկեալն ըստ մարմնոյ, կամ եթէ  
զմարմնոյն ամանակ ինքն իսկ և զիւրն կալ մաքրէ. Աս-<sup>25</sup>  
տուած ուրեմն է ծշմարտապէս:

Եւ դարձեալ.

«Եւ ահա բորոտ յառաջ եկեալ՝ երկրպագէր զնա ա-  
սելով. Տէր, եթե կամիս, կարես զիս մաքրել. և ձգեալ  
զնեոնն՝ յարեաց առ նա, ասելով. կամիմ, մաքրեցիր. և ա-<sup>30</sup>  
բազապէս մաքրեցաւ ի նման բորոտութիւնն<sup>5</sup>: Ներգոր-  
ծելն | կարել աստուած ավայելչաբար ոչ յատուկ մարդոյ, և 278r.  
այս յաւէտ հետեանայ և միայն որ ևս անդր ամեննեցուն բնու-  
թեան, և ներգործէ այսպէս Քրիստոս. ոչ ուրեմն սոսկ  
մարդ ըստ մեզ, այդ մանաւանդ Աստուած ի մարդկու-<sup>35</sup>

<sup>1)</sup> Մատթ. Բ. 1.      <sup>2)</sup> Մատթ. Բ. 5—6. Միք. Ե. 1.      <sup>3)</sup> Հմմա.  
ծառյի ԵԱ. 9.      <sup>4)</sup> Մատթ. Դ. 11—12. Ղուկ. Գ. 16—17.      <sup>5)</sup> Մատթ.  
Հ. 2—3. և այլուր.

թեան կերպի, Այսպէս իմասցիս և ի վերայ Պետրոսի զոքանչին, թեպէտ և հողմոց վերասաստելով երևիցի ծովու և ջրոց. ուստի և աստուածազան աշակերտքն և զծով և գնողմա ընդ իշխանութեամբ տեսանելով՝ հրաշացան, առենով. «Ո՞րպիսի է սա»<sup>1</sup>. քանզի ոչ մարդոյ սոսկի զայսպիսիս կարել գործել. Աստուած ուրեմն, ըստ նմին և մարդ Քրիստոս. իսկ դեք մաղթեին զնա ասելով. «Եթե հանսս զմեզ, առաքեա զմեզ յերամակն խոզից. և եսաց նոցա՝ երթայք»<sup>2</sup>. Նախախնամելն բոլորեցուն և ապրե-  
 10 ցուցանել զնոսա ոյր ևս իցէ, բայց նորա միայնուոյ՝ ըստ բնութեան Աստուածոյ. Այսպէս և Փրկիչն առէ. «Ո՞չ երկու ձագք ասսարի վաճառին, և մի ի նոցանէ ոչ անկցի 279v. ի վերայ երկրի. թանց Հաւը ձերոյ, որ յերկինս. իսկ | ձեր և մազ զլխոյ ամենայնք համարեալ են»<sup>3</sup>: Քանզի ահա  
 15 այսուհետև այսքանից էակացն նախախնամութիւն եարար Քրիստոս, իբր մի իշխել անմաքրոց դիւացն և ոչ խոզաց արամակին ունել. մաղթեցեալ ապա՝ հրամայեաց հազիւ, և ոչ զնոցայն լնոյր հայշումն, այդ զի զմեզ հաւանեցուացէ. եթե նախախնամէ բոլորեցուն իբր Աստուած: Աղէ, իբր  
 20 ոչ Աստուած, որ աստուածավայելուչ իշխանութիւնն և զամենեցուն հարսառութիւնն յարեալ ունել և ապրեցուացանելով իբր զիւր զնովաւ եղեալսն:

### Եւ դարձեալ.

«Յայնժամ ասէ ցաշակերտսն իւր. հունձք բազումք, 25 իսկ գործաւնեայք սակաւք. աղաչեցէք դՏէր հնձոցն, զի հանցէ հնձաւղս ի գործ. և կոչեցեալ գերկոտասան աշակերտսն իւր, ետ նոցա իշխանութիւն ոգւոց անմաքրոց, իբր զի հանել զնոսա և բժշկել զամենայ(ն) հիւանդութիւն և զամենայն մեղկութիւնն»<sup>4</sup>: Գիւեն եալ հնձոցն Տէր  
 30 զրոյորեցունն Աստուած. Կարն իմանալի՝ այս է մարդկու-  
 280r. թիւնն, նորին և հունձք. այդ ահա աղաչել | հրամայեալ զՏէրն հնձոց, զինքն վաղվաղակի եցոյց գոլ զայս, հանելով զդործաւնեայն, այս է զսուրբս առաքեալմն, որոց և ետ իշխանութիւնն զհողւոցն անմաքրոց՝ իբր Աստուած:  
 35 Քանզի ոչ է մարդկութեանն չափոյ տալ ումեք գհոգւոյն ներգործութիւն, իսկ տայ Քրիստոս. աղե, իբր ոչ բնու-

<sup>1)</sup> Մատթ. Ը. 27. և այլուր.      <sup>2)</sup> Մատթ. Ը. 31—32. և այլուր.  
<sup>3)</sup> Մատթ. Ժ. 29—30. հմմ. Ղուկ. ԺԲ. 6—7.      <sup>4)</sup> Մատթ. Թ. 37—Ժ. 1. հմմ. Ղուկ. Ժ. 2.

թեամբ և ճշմարտութեամբ է Աստուած, և զն մարմին Բանն,

### Եւ դարձեալ.

«Ամենայն որ ոք խոստովանեցէ զիս առաջի մարդկան, խոստովանեցից և ես զնա առաջի Հաւր իմոյ, որ յերկինս. իսկ որ ոք ուրասցի զիս առաջի մարդկան, ու- 5 բացայց և ես զնա առաջի Հաւր իմոյ, որ յերկինս»<sup>1</sup>; Բա- զումք կոչեցեալ են սրբոցն առ վկայութեանն փառս, և կա- տարեալք ախտակրութեամբք և մահու Աստուած խոստո- վանելով՝ արդեւք պսակեցին, հաստատելով և ասելով մարդ գոլ հասարակական զնա, կամ յաւէտ իբր Աստուած խոս- 10 տովանութեամբ. այդ է յայտ, քանզի զայս ուրացեալքն և վկայութեան փառացն կորիցեն, և զնա գտցեն | յաւուր 280v. դատաստանին, ուրանալով զնոսա Քրիստոսի Աղե, իբր ոչ Աստուած, որ վկայութեամբ փառաւք պսակէ զորս, եթ՝ այս է՝ ճշմարտապէս խոստովանելով զնա:

15

### Եւ դարձեալ.

«Եկամյք առ իս, ամենայն վաստակեամլք և ծանրա- բեռնեալք, և ես հանգուցից զձեզ. բարձէք զլուծ իմ ի ձեզ»<sup>2</sup>; Եթ՛ ոչ Աստուած է ճշմարտապէս Եմիմանուէլ, զի՞նչ աւրինակ մեզ զիւրն լուծ ի վերայ դնէ. քանզի Աս- 20 տուծոյ ծառայ ամենայն, և ասացեալ է լուծ և աւրէնն. այդ ի վերայ դնէ մեզ Քրիստոս զիւրն լուծ և իւր հնա- զանդէ. և թեպէտ զամենայն ի ներքոյ բերէ Հաւր, Աս- տուած ուրեմն է, ուստի և ընդ նովաւ կալ զամենայն վա- յել է, ըստ ասացաւզին առ Աստուած, եթ՛ «Ամենայն 25 ծառայ քո»<sup>3</sup>:

### Եւ դարձեալ.

«Կամ եթ՛ ոչ վերծանեցէք յաւրէնս, եթե ի շարաթս քահանայքն ի քահանայարանին,\* զշաբաթն պղծեն և անպատճառելիք \*\* են. իսկ ասեմ ձեզ, եթե քահանայա- 30 րանին մեծադոյն է աստօն<sup>4</sup>, եթե պղծելով զշաբաթն քա-

<sup>1)</sup> Հաւոնքըում՝ «ի բազնին».      <sup>2)</sup>) Անդ՝ «մեղագրելիք».

<sup>3)</sup> Մատթ. Ժ. 32—33. հմմ. Ղուկ. Ժ. 8—9.      <sup>4)</sup> Մատթ. Ժ. 5.  
28—29.      <sup>5)</sup> Սովոր. Ճ. 91.      <sup>6)</sup> Մատթ. Ժ. 5.

**281r.** հանայքն անպատճառելիք են՝ | իբր Աստուծոյ մատուցանելով զբուժականսն, իբր ի քահանայարանի գործեցելոցն իմանի մնջագոյն Քրիստոսի բուժութիւն։ Այդ է յայտ, զի այնք, որք յաւրէնսն՝ ստուեր և աւրինակ երես կնայնոցն պաշտեին։ իսկ աստուածազնքը աշակերտքն առընթերակացեալք և սպասաւորեալք Քրիստոսի, մնջագոյն ևս զփառսն ունեին։ և եթե յաւրէնսն պարշտութեանն լաւագոյն է պարշտելն Քրիստոսի, իբր ոչ իմանայցի Աստուած ձշմարիտ։

## 10 Եւ դարձեալ.

«Իսկ եթ՝ ես ի Բեեղզեբուղ հանեմ զդես, որդիքն ձեր իւ իւկը հանիցեն. վասն այսորիկ նորա դատաւորք ձեզ եղիցին»<sup>1)</sup>, Եթե յանուն Քրիստոսի բժշկեցին զայտոսա աշակերտքն, քանզի ի վերայ ձայնեին՝ «Յանուն Յիսուսի 15 Քրիստոսի Նազովրացւոյ»<sup>2)</sup>, իբր ոչ իմանայցի Աստուած ձշմարտապէս. քանզի ոչ ես բաւականեաց մարդոյ փառք և զաւրութիւն առ ի յաղթահարել զսատանայ։

## Եւ դարձեալ.

**281v.** «Եւ որպէս ժողովի որոմն և հրով այրի, այսպէս 20 Աղիցի և կատարածի յաւիսենին. առաքէ Որդի Մարդոյ գնրեշտակս իւր, | և ժողովեսցեն յարքայութենէ նորա զամնայն գայթագոյութիւն և որք առնեն անաւրէնութիւն, և արկցեն զնոսա ի հնոց հրոյ»<sup>3)</sup>. Յաղագս Աստուծոյ կըրեալ՝ «Բարեբաննեցէք զծէր ամենայն հրեշտակք նորա»<sup>4)</sup>. 25 քանզի ոչ հրեշտակ հրեշտակի է, այդ յաւէտ Աստուծոյ ամենայն. իբր արդեւք և ասէ յաղագս Որդւոյ Մարդոյ. եթ՝ առաքէ զնրեշտակս իւր։ Աստուած ուրեմն է, որպէս և յատուկս առնելով զնրեշտակս և ի ձեւն վերին հողեացն սպասաւորեալ։

## 30 Եւ դարձեալ.

«Եհարց Քրիստոս. զո՞ ասեն մարդիկ զոլ զՈրդի Մարդոյ. և նորքա ասեն. ոմանք զՅովաննէս Մկրտիչ և այդք

<sup>1)</sup> Մատթ. ՓԲ. 27., Ղուկ. ՓԱ. 19.<sup>2)</sup> Գոբձք. Գ. 6.<sup>3)</sup> Մատթ. ՓԳ. 40—42.<sup>4)</sup> Սովոր. ՃՊԸ. 2.

զԵղիսա և միւլք զԵրեմիսա և կամ զմի ի մարդարելցն։ Ասէ նոցա. իսկ դուք զ՞ո զիս ասէք գոլ. և պատաս-իսանեալ Սիմովն Պետրոս եասաց. Դու ևս Քրիստոս, Որդին Աստուծոյ կենդանւոյ. և պատասխանեալ Յիսուս՝ եասաց նմա. Երանեալ ես Սիմովն Բարիյովնա, զի մարմին և 5 արիւն ոչ յայտնեաց քեզ, այդ Հայրն իմ, որ յերկրնա է<sup>1</sup>: Եթե սոսկ մարդ զՈրդին, ընդիր պքանչանայ Պետրոս, | խոռառվանելով զնա. իբր իսկ է և աստուծուումն կամ 281r. որում կարաւացաւ լուսածութեան ի վերուատ, զի ուսցի զ' ի վերայ նորա խորհուրդն. այդ ծանեաւ և Աստուծած 10 ելով և Որդի Աստուծոյ կենդանւոյ խոռառվանեաց զնա, և այսու իսկ պքանչացաւ: Բայց մի որդի, և հչ երկուս որդիս ամէ. վատապարիշտ ուրեմն բաժանելն յերկուս:

Եւ դարձեալ.

«Քանզի պատրաստեալ է Որդին Մարդոյ գալ փա- 15 ռաւք Հաւր իւրոյ, հանդերձ հրեշտակաւք իւրովք»<sup>2</sup>: Ահա դարձեալ հրեշտակս նորա ասէ զվերին հոգիսն, թեպէտ և ասացելոյ Որդւոյ Մարդոյ:

Եւ դարձեալ.

«Իսկ եկելոցն նոցա ի կափառնաւում՝ առաջեկեցին 20 զերկադրագմայոն առաւղքն Պետրոսի և ասացին. վար-դապետն ձեր ոչ հատուցանէ զերկադրագմայան. ասէ՝ այն. և եկեալ յապարանն՝ նախաժամանեաց զնա Յիսուս ասե-լով. զի՞նչ քեզ թուի Սիմովն. թագաւորք երկրիս յումբ առնուն զհարկս կամ զկենասոն՝ յորդւոց իւրեանց, եթե 25 յաւտարաց. իսկ ախացեալ՝ յաւտարացն, ասէ նմա Յի- սուս. ուրեմն ազատք են որդիք»<sup>3</sup>: Ի՞ր ազատ զինքն գոլ ասէ և արտաքոյ աւրինի և անհարկապարտ և Որդի ճշշ-մարտապէս, եթ՛ ոչ Աստուծած է՝ միաւորութեամբ ըստ ենթակացութեան մարմնոյ և արեան հաւասարեալ. հար- 30 կատուեաց իսկ զերկադրագմանանն, իբր եղեալն ընդ աւրի-նիւ՝ գեր զաւրէն Որդին. իսկ մարդ ոչ գեր զաւրէնն ի- մանի, իբր իսկ այդ և ոչ ունի բնութեամբ զազատակն, եթ՛ ոչ իմանի Աստուծած ի ներմարդութեան կերպի:

Եւ յետ սակաւուց.

85

1) Մամբ. ծԶ. 13—17. 2) Մամբ. ծԶ. 27. 3) Մամբ.

Ժէ. 23—25.

ՏԵՇՈՐԵԼՈՒ ՀԱԿԱՎԱՌՈՒԹԻՒՆ

19

«Յորժամ եկեսցէ Որդի Մարդոյ վառաւք իւրովք և  
ամենայն հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի ի վերայ  
աթոռոյ վառաց իւրոց և հաւաք(ե)սցին առաջի նորա ա-  
մենայն ազգք»<sup>1</sup>: Արդեւք իրր մարդ մի ի մէնջ նստիցի  
5 Քրիստոս՝ առընթերակացելոց նմա հրեշտակաց ամեննեցուն,  
և այսպէս դատիցի զաշխարհ: Աղէ, զ՞ո՞ր արդեւք ունիցի  
այս բան, քանզի զրեալ է, եթե մի է աւրէնադիր և դա-  
տաւոր<sup>2</sup>: Աստուած ուրենին Քրիստոս՝ ի վառան Աստուածոյ  
282r. և զաթոռն ունելով և առընթերակաց | զհրեշտակս և դա-  
10 տելով զաշխահ արդարութեամբ<sup>3</sup>: Իսկ յորժամ ի վերայ  
Աստուածոյ ասիցի նստեալն և աթոռ, յայնժամ զիշխանա-  
կանն և տիրական՝ թագաւորականն իսկ միանգամայն և  
զամենայն ունելով արժանաւորութիւնն նշանակէ: Քանզի  
և ոչ աթոռ իմն համարիմք եղեալ և զամենայնի զէրն  
15 նստեալ հաւատամք ի վերայ նորա, այզ և ոչ բոլորովին  
աջ իմն և (ա)հեակ ի վերայ աստուածայնւոյ և անտարի-  
մանալի բնութեանն. քանզի մարմնոյս ընտանի և ձե և  
տեղի, նիստ իսկ և յարումն. իսկ ասելն՝ ընդ աջմէ կա-  
րութեան նստեալ<sup>4</sup>, զինքն երեսեցուացէ և աթոռակից վաղ-  
20 վաղ, և ոչ երկրորդել առ պատիւ, որպէս արդեւք ոք կար-  
ծեսցէ Հաւր: Քանզի այս զյաշմէսն նմանեաց զեկուցանել  
յառ մեզ առվորութենէ, զգեր մեզսն գաղափարելով:

### Եւ դարձեալ.

«Եւ քահանայապետն եասաց նմա. երդմնեցուցանեմ  
25 զքեզ Աստուածոյ կենդանւոյ, զի մեզ ասասցես, եթե դու  
282v. ես Քրիստոսն, Որդին Աստուածոյ, ասէ | նմա Յիսուս. Դեւ  
ասացեր. բայց ասեմ ձեզ՝ արդուստ տեսանիցէք զՈրդին  
Մարդոյ նստեալ յաջմէ կարութեանն և գալով ի վերայ  
ամպոց երկնիք<sup>5</sup>: Ի՞ր Որդին Մարդոյ նստի յաջմէ կա-  
30 րութեանն. այզ է յայտ, զի թեպէտ եղի Որդի Մարդոյ  
Աստուածոյն Բան, ոչ դաշտաբեաց զգոյն Աստուած, այզ է  
որ էրն, այսուիկ և աթոռակցէ բուսաւորին և նստուա-  
ծայինս արժանաւորութիւնս վայելուչ տեսանի, թեզէտ  
եղեւ մարմին:

### Եւ դարձեալ.

<sup>1)</sup> Մատթ. Խ. 31—32.   <sup>2)</sup> Յակով. Գ. 12.   <sup>3)</sup> Սովոր. Թ. 9.  
<sup>4)</sup> Մատթ. Խ. 64., Մարկ. Ժ. 62., Ղուկ. Խ. 69.   <sup>5)</sup> Մատթ.  
Խ. 63—64.

«Իսկ Յիսուս դարձեալ աղաղակեալ ճայնիւ մնծաւ՝  
արձակեաց զոգին. և ահա վարագոյք բագնին հերձաւ յեր-  
կուս՝ վերուստ մինչ ի վայր, և երկիր սասանեցաւ և վէմք  
հերձան, և շիրմէք բացան, և բազումք մարմինք քունեցե-  
լոցն սրբոց յարեան»<sup>1</sup>: Եթե հասարակական մարդ էր Քը- 5  
րիստոս՝ մեռեցելոյ նորա այսօան էր ի տարերան խոռվու-  
թիւն, քանզի արեգակն զճառագայթն ամիսփեաց և նաւուր  
խաւարագործեցաւ, իսկ երկիր զիւր Տէրն տեսանելով ի  
հրեիցն այպանեալ՝ հերձանիւր, արձակեաց իսկ և դժոխ |  
սրբոցն անձինս. ոյր զայս առնելով արդեւք, եթ՝ ոչ Աս- 10 283r.  
տուծոյ. քանզի Աստուած էր ի մարմնի, որում և արա-  
րածս թշնամանեցելոյ յեղանակ իմն միաբանեալ բարկա-  
նայր:

**Ըստ Ղուկայ աւետարաննեն.**

Հրեշտակ Աստուծոյ Զաքարեի ասէ յաղագս սրբոյ 15  
Մկրտչին. «Եւ եղիցի խնդութիւն քեզ և ցնծութիւն, և  
բազումք ի ծնելութեան նորա խնդասցեն. քանզի եղիցի  
մեծ առաջի Տեառն և գինի և աւզի ոչ արբցէ, և Հողւով  
Սրբով լցոցի տակաւին յորովայնէ մաւր իւրոյ, և բազումս  
յորդւոցն Խարայեզի դարձուացէ առ Տէր Աստուած նոցա»<sup>2</sup>: 20  
Երանելի Մկրտիչն Յովանէս հարցաւզացն զնա հրեից՝  
«Դու հզ ես», և ս ձայն կոչման յանապատի, ասէ, պատ-  
րաստեցէք զճանապարհն Տեառն և ուղիղ արարէք զշա-  
ւիզս նորա»<sup>3</sup>: Մարդարէանալով իսկ և ինքն Զաքարիաս  
ի վերայ իւրոյ համրակին՝ ասէ. «Եւ դռւ մանուկ, մար- 25  
դարէ Բարձրելոյ կոչեսցիս. քանզի նախագնասցես առաջի  
Տեառն, պատրաստել զճանապարհս նորա՝ առ ի տալ գի-  
տութիւն փրկութեան ժողովրդեան նորա, ի թողութեան |  
մեղաց նոցա. յտղազս գթութեան ողորմութեան Աստու- 283v.  
ծոյ մերոյ, որովք դիտաւորեաց մեզ արնելից ի բարձանց, 30  
ծագել ի խաւարի և ի ստուերս մահու նստելոց՝ առ յուղ-  
զել զոտս մեր ի ճանապարհ խաղաղութեան»<sup>4</sup>: Քանզի  
նախագնայր Քրիստոսի և նորա եղել կարապետ, և նմա  
զճանապարհս պատրաստել քարոզէր և զ’ ի վերայն նորա  
մարդարէանայր Բան, դարձուցտնելով իրը առ Աստուած, 35  
արդարացուցանել կարելով զայնս, որ ի մեղս Աղե, իբր  
ոչ Աստուած Քրիստոս:

<sup>1)</sup> Մատթ. Աէ. 50—53.      <sup>2)</sup> Ղուկ. Ա. 14—16.

<sup>3)</sup> Յովհ.

Ա. 20 & 23.      <sup>4)</sup> Ղուկ. Ա. 76—79.

## Եւ դարձեալ.

«Սա եղիցի մնծ և Որդի Բարձրելոյ կոչեսցի, և տացէ նմա Տէր Աստուած զթագաւորութիւն Հաւը իւրոյ, և թագաւորեսցէ ի տուն Յակովայ յաւիտեանս, և թագաւորութեան նորա ոչ եղիցի վախճան»<sup>1)</sup>: Արդեւք ընդ միով՝ որ ըստ մեզ կայցեմք թագաւորութեամբ՝ հանապազ և անվախճանապէս, եթե յԱստուծոյ յաւէտ եղիցուք, թագաւորեցելոյ մեզ Քրիստոսիւ. և ոչ որպէս արտաքուստ միջնորդի ուրեմն յայս առեցելոյ, այդ իբր Որդւով յՈրդւոջ հարըս-  
284r. 10 տահարելով բոլորեցունն Աստուծոյ և Հաւրօնի<sup>2)</sup> այս ճշ-  
մարիտ, որպէս է ճշմարիտ, Աստուած ուրեմն Քրիստոս:

## Եւ դարձեալ.

«Եսասաց իսկ Մարիամ առ հրեշտակն. իբր եղիցի  
ինձ այս, զի զայր ոչ ճանաչեմ: Եւ ասէ նէմա հրեշտակն.  
15 Հոգի Սուրբ վերեկնացի առ քեզ և կարութիւն Բարձրելոյ  
հովանացի քեզ. զի և ծնիցեալն սուրբ կոչեսցի Որդի  
Աստուծոյ»<sup>3)</sup>. Արդեւք կոչեցաւ միայն Որդի ի Սրբոյ Կու-  
սէն Հոգւովն\* անճառաբար ծնիցեալ, եթ՛ է բնութեամբ  
և ճշմարտապէս Որդի գոլ հաւատանայ և Աստուած: Այդ է  
20 այս ճշմարիտ. իսկ իմասցի մարմին ըստ ենթակացութեանն  
եղեալ Բանն, այս է իւր արարեալ մարմին զՀոգւովն ի  
սրբոյն կուսէ. քանզի այսպէս եղիցի և Աստուած ճշմար-  
տապէս:

## Եւ դարձեալ.

25 «Եւ եղկ իբրև լուաւ զողջունելն զՄարիամայ Եղի-  
սաբետ, խայտաց ցնծութեամբ համբակն յորովայնի նէրայ.  
և լցաւ հոգւով Սրբով Եղիսաբետ, և մարգարէացաւ և եա-  
սաց. բարեբանեալ դու ի կանայս, և բարեբանեալ է պը-  
տուղ որովայնի քոյ. և ուստի է ինձ այս, զի եկեցէ մայր  
284v. 30 Տեառն իմոյ առիսա<sup>3)</sup>: Ներգործաւովի Աստուծոյ մարգա-  
րէութեան սակս եղիցի ոք մարդարէ. իսկ ըստ միւսում յե-  
ղանակի ոչ ևս Արդ՝ այսուհետեւ ողջունելն սրբոյ Աստուա-  
ծածնի, Մարիամայ սաղմնապգեցելոյ տակաւին զՅիսուս,  
շարժեաց նարգանդի զՅովաննէս ի մարգարէութիւն: Ի՞ր  
35 Աստուած Քրիստոս ի համս կուսին շարժեաց աստուա-  
ծավայելչապէս ի մարգարէութեան կարութիւն զՄկրտիչն:

\* Հուսանցրում՝ «ի ձեռ(ն) հոգւոյ(j)».

<sup>1)</sup> Ղուկ. Ա. 32—33.      <sup>2)</sup> Ղուկ. Ա. 34—35.      <sup>3)</sup> Ղուկ. Ա. 41—43.

## Եւ դարձեալ.

«Այժմ արձակես զծառայ քո Տէր, ըստ բայի քում  
ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր  
պատրաստեցեր առ դէմս ամենայն ժողովրդեանն՝ լոյս առ  
ի յայ(ա)նութիւն ազգաց և փառք ժողովրդեան քում իս- 5  
բայէղի»<sup>1</sup>: Սիմեոնվա ի զիրկս առեալ զայսպիսիս  
յաղագս նորա ասէր: Ի՞բր արդեւք է փրկանակ և իբր լոյս  
յայանութեան ազգաց, եթ' ոչ Աստուած է ճշմարտապէս,  
մի և միայն Որդի, որ բնութեամբ ի Հաւրէ իբր Բան, իսկ  
ի կուտէ նոյն ըստ մարմնոյ: Քանզի որ եղեւ յայտնութիւն 10  
ազգաց, բայց ի վերայն նորա. գիտացին եթ' Աստուած է  
և նոմա պարշտելով փախեան զպարտաւորութիւնսն՝ Աս-  
տուծոյ պարշտելիմիւտում, քան զմին բնութեամբն և ճշ- 285ր.  
մարտապէս:

## Եւ դարձեալ.

15

«Եւ զիտելով Յիսուս զխորհուրդս նոցա, պատաս-  
խանեալ եասաց առ նոսա. զինչ խորհիք ի սիրտս ձեր.  
զինչ է դիւրավաստակադոյն ասել. թողջին քեզ մեղք,  
եթ' ասել՝ մո զպատգարակ քո և գնա ի տուն քո»<sup>2</sup>: Եթե  
միայն զմեզ բոլորեցունն Աստուած ի բաց վճարէ յանցա- 20  
նաց՝ այդում վայելելով զայս ոչ ումեք, և չնորհէ Քրիստոս  
և զայս իշխանութեամբ աստուածավայելչիւ, իբր ոչ իցէ  
Աստուած: Կոչի իսկ Որդի Մարդոյ, ծնիցեալ ի կնոջէ ըստ  
մարմնոյ, թեպէտ Աստուած ելով Բան:

## Եւ դարձեալ.

25

«Յայնմ ժամու բժշկեաց բազումս յախտից և հարուա-  
ծոց և յոգւոց չարաց, և կուրաց բազմաց չնորհեաց տեսա-  
նել. և պատասխանեալ եասաց նոցա. Գնացեալ պատմեցէք  
Յովաննու զոր տեսէք և լուայք. կոյրք վերատեսն, կաղք  
ճեմին, բորբուք մաքրին, խուզք լսեն, մեռեալք յառնեն, 30  
աղքատք աւետարանեն, և երանեալ է, որ ոչ գայթա-  
գենացի յիս»<sup>3</sup>: Գործովք նոջա ցուցեալ զինքն|Քրիստոս աս-  
տուածավայելչիցն մեծագործականաց բացակատարաւղ՝ առ  
ի յիշողութիւն վերաբերէ ասացելոցն ձայնիւ մարգարեիցն:  
Յաղագս իւր եասաց այսուհետեւ երանելին էսայիա. «Հա- 35  
րըստացարնուք ձեռաւք թուղացեալք և ծունգք քակտեալք»<sup>4</sup>.

<sup>1)</sup> Ղուկ. Բ. 29—32.   <sup>2)</sup> Մարկ. Բ. 8—9., Մատթ. Բ. 4—5.  
Ղուկ. Ե. 22—23.   <sup>3)</sup> Ղուկ. Ե. 21—23.   <sup>4)</sup> Եսայի. ԼԵ. 3.

ապա միայն հչ և ձեռն կարկառելով ցուցանէ զնմմանուէդ՝  
այսպէս ասելով. «Ահա Աստուած. մեր, ահա Տէր զաւրու-  
թեամբ գայ, և բազուկն իւր տերութեամբ»<sup>1</sup>. և ասաց իսկ  
յայլան. «Յայնժամ բացցին աչք կուրաց և ականջ խլաց  
5 լրւիցեն. յայնժամ ոստիցէ իրբն զեղճերու կաղն»<sup>2</sup>. և առ-  
այսպիսէ. «Յարիցեն մնուեալք և կանգնեացին որք ի շիրիմ»  
և ուրախասցին որք յերկրին. քանզի ցաւզն առ ի քէն բը-  
ժըշկութիւն նոցա է»<sup>3</sup>: Եսասաց իսկ դարձեալ և ի դիմէ  
Քրիստոսի. «Ուզի Տեառն առ իս, սակա որոյ եաւծ դիս,  
10 աւետարանել աղքատաց առաքեաց զիս, քարոզել գերեաց  
զթողութիւն և կուրաց վերատեսութիւն»<sup>4</sup>: Յորժամ այ-  
սուհետև զ’ ի վերայ իւր հաւատայն զմարդարեիցն ձայնս,  
286r. առնէ նշանակ կամ եթե ապացութիւն, և Աստուած զնա  
մարդարէքն քարոզեն, ո սոցա զբնդդէմսն ասել իշխէ:

## 15         Եւ դարձեալ.

Զմեանանային երբեմն ըստ լճին աշակերտքն. ապա  
մատուցեալք զարթուցին զնա ասելով. «Վերակացնե, ապ-  
րեցն, կորնչիւք. և յարուցեալ սաստեաց հողմոցն և խոռ-  
վութեան ջրոցն, և դադարեցին, և եզեւ խաղաղութիւն մեծ»<sup>5</sup>,  
20 Ասացեալ է յաղագս Քրիստոսի ձայնիւ երանելոյն Դաւթի.  
«Դու տիրես հարստութեան ծովու. զտղելութիւն կոխա-  
կացն նորա դու հեզացուցանեա»<sup>6</sup>. «Քն են երկինք և քն է  
երկիր. զաշխահ և զլրումն նորա դու հիմնացուցեն»<sup>7</sup>: Արդ՝  
այսուհետև հեզացուցաւղին զծով վայել է իսկ և տիրել բո-  
25 լորեցուն և ունել իւրս զերկինս և հիմնել կարել զաշխահ  
և զլրումն նորա: Խոր ոչ արգելով գոլ իմանայցի ճշմար-  
տապէս Աստուած Քրիստոս, ծովու և հոգեաց վերատասե-  
լով, և զայս հանդերձ իշխանութեամբ:

## Եւ դարձեալ.

30         «Մաղթէր զնա այրն, յորմէ արտաքս ելեալ եին դեք,  
գոլ ընդ նմա. իսկ առաքեաց զնա ասելով. դարձիր ի տուն  
286v. քու և զրուցեա որքան քեզ եարար Աստուած. և երթեալ  
ըստ բոլոր քաղաքին՝ քարոզելով, որքան եարար նմա Աս-  
տուած»<sup>8</sup>: Ի Քերգեսացւոցն գաւառի բժշկեաց Քրիստոս  
85 զվայրենապէս դիւաժետեալն, որ և գոլն ընդ նմա աղաչէր.

<sup>1)</sup> Եսայի Խ. 10.   <sup>2)</sup> Եսայի. Լե. 5—6.   <sup>3)</sup> Եսայի ԽԶ. 19.<sup>4)</sup> Եսայի ԿԱ. 1.   <sup>5)</sup> Ղաւկ. Հ. 24., Մարկ. Պ. 38., Մատթ. Հ. 25—26.<sup>6)</sup> Սովո. 2Հ. 10.   <sup>7)</sup> Սովո. 2Հ. 12.   <sup>8)</sup> Մարկ. Ե. 19.

այդ և թեպէտ բժշկեաց զնա և հանելով զոգիսն՝ հրամայեաց երթալ ի տունն և քարողել, որքան եարար նմա Աստուած. ներգործեաց ուրեմն ինքն, իրը Աստուած դոլով ճշմարիտ Քանզի ոչ ես ասեմք՝ իրը արբանեակ եղե աստուածային չնորհին, ըստ միում ի մարգարելցն, կամ եթե Ե սրբոց առաքելոցն, այդ էր ինքն, որ զաւրութեամբ իւրով խորտակէր զատանայ. Քանզի անուամբ նորա և սրբոց աշակերտացն հնազանդին դեք և զԱստուծոյն խոստովանեցին ինքեանք:

## Եւ դարձեալ.

10

«Ե վերայ դատեր ժողովրդապետին ասէ Քրիստոս. մի լայք, քանզի ոչ մեռաւ աղջիկն, այդ ննջէ»<sup>1</sup>: Արդեւք ստեաց, քաւ լիցի. ճշմարտէ իսկ. ըստ իմ յեղանակի՝ աստուածային զրութիւնն մեկնէ ասելով. «Ո՛չ է Աստուած մեռելոց, այզ կենդանեաց»<sup>2</sup>, քանզի կեան Աստուծոյ կեալն 15 հանդերձեալք»<sup>3</sup>. ուրեմն և մեռեալք ըստ մարդկան են մե- 287r. ռեալք, իսկ ըստ կենազործակ բնութեանն, այս է ըստ աստուածայնումն, ոչ մեռանին. ճշմարտէ այսուհետեւ իրը Աստուած, յաղագս աղջկանն ասելով, եթ' Ո՛չ մեռաւ, այդ ննջէ»:<sup>4</sup> 20

## Եւ դարձեալ.

Իւրոց աշակերտացն տրամաբանելով ասէր. «Ո՞վ մեծ է, բազմեալն կամ սպասաւորն. ոչ բազմեալն. իսկ ես ի միջի ձերում եմ իրը սպասաւոր»<sup>5</sup>: Տեսանթա՝ որչափ եհաս յաստուածութեանն վայելուչ և ի տէրունական փառսն 25 միայն ոչ և ի բաց սասանէ զ' ի սպասաւորին իմանիլ կարգի. իսկ պատուէ զայս սակս մարդկայնոյն. քանզի ես ի միջի ձերում եմ սպասաւոր. Ուրեմն թեպէտ և վայրի- ջեաց ընդ սպասաւորսն, այդ սակայն և նոյն բազմեալ իրը զՏէր և յամննայն արարածոյ սպասաւորեալ իրը Աստուած:<sup>6</sup> 80

## Եւ դարձեալ.

Եւ ասաց իսկ նոցա Քրիստոս, յայտ է զի քահանա- յապետից հրեիցն հարցաւզաց թե՝ «Դու ես Քրիստոս. «Եթե ձեզ ասացից, ոչ ես հաւատայցէք. իսկ եթե հարցից, ոչ ես պատասխանիցէք. արդուստիսկ եղիցի Որդի Մարդոյ 35 287v.

<sup>1)</sup> Ղուկ. Ը. 52., Մարկ. Ե. 39., Մատթ. Թ. 24.    <sup>2)</sup> Մատթ. ԻԲ. 32., Մարկ. ԺԲ. 27., Ղուկ. Ի. 38.    <sup>3)</sup> Հմմա. Հառվե. ԺԴ. 8., Ղուկ. Ի. 38.    <sup>4)</sup> Ղուկ. ԻԲ. 27.

նստեալ յաջմէ կարութեան Աստուծոյց<sup>1)</sup> Եթե նստի յաջմէ՛ կարութեանն Աստուծոյ մարդույն Որդի, բըր ոչ Աստուծ Քրիստոս, որ ի վերնագոյնո գահոն վայեյելով և աթոռակից Հաւրն. քանզի հչ գահակցէ ըստ բնութեանն Աստուծոյ ծոյ ծնանելի արարած բոլորավին, իսկ գահակցէ Որդի Մարդոյ. Աստուծ ուրեմն՝ ըստ միաւորութեան տնաւրինակի՛ մարմնոյ եղելոյ Բանին:

Լս Յօվաննու աւետարանին.

«Զայս ոչ գիտացին աշակերտք նորա գառաջինն, այդ 10 յորժամ փառաւորեցաւն Յիսուս, յայնժամ յիշեցին, եթե այս էր ի վերայ նորա գրիցեալն»<sup>2)</sup>.

Եւ դարձեալ.

«Իսկ Յիսուս պատասխանեալ նոցա ասէ. Եկն ժամ, զի փառաւորեցի Որդի Մարդոյ. ամէն ամէն տաեմ ձեզ, 15 եթ՛ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռցի, ինքն միայն մնայ, իսկ եթե մնացի, բազում պտուղ բերէ»<sup>3)</sup>. Արդ՝ հչ է երկբայական, զի ապրեալ ամենայն աշխահ մեռելոյ վասն նորա Եմմանուէղի. բայց զայն ասեմք՝ բըր մեռանելով  
288r. 20 ունի ինչս, ուստի և ամաւթոյ արհամարհել ասի՝ եղեալ ունկնդիր մինչ մահու<sup>4)</sup>. Այդ ասես փառաւորեալ սակս յարութեանն նորին, ուղիղ ունի և ճշմարիտ բանս. այդ կարծեմ աստուծաբար, յորժամ ինքն իսկ յԱստուծոյն Բան մարմնով ասիցի ախտակրել, Մի ամաչեսցուք զկիրսն,  
25 քանզի փառս ունի և զայս աստուծավայելուչո:

Եւ յետ այդոց ըստ Ղուկայ աւետարանին.

«Ամենայն ինձ աւանդեցաւ ի Հաւրէ իմմէ, և ոչ ոք զիտէ զՈրդին, եթ՛ հչ Հայր. և հչ ոք զիտէ զՀայր, եթ՛ ոչ Որդին, և որում կամի Որդին՝ յայտնէ»<sup>5)</sup>. Ոչ ուրուք 30 զիտելով զՈրդին, եթ՛ ոչ միայնոյ Հաւր, բըր անգունեն ոմանք զՀաւրն վկայութիւն. քանզի եցոյց զիւրն Որդի ի Յորժանան՝ ասելով. «Սա է Որդի իմ սիրելի, յորում հաճեցայ»<sup>6)</sup>. Այդ հչ մերկ մեզ զիւրն եցոյց Բան, այդ միա-

<sup>1)</sup> Ղուկ. Թթ. 66—69. <sup>2)</sup> Յովհ. Ժթ. 16. <sup>3)</sup> Յովհ. Ժթ. 23—24. <sup>4)</sup> Փիլիպ. Բ. 8. <sup>5)</sup> Ղուկ. Փ. 22. Կմմա. Մամբ. ԺԱ. 27. <sup>6)</sup> Մամբ. Դ. 17., Մարկ. Ա. 11. և Ղուկ. Դ. 23.

տրեալ մարմնով, և ոչ եասաց էթ' ի սմա է Որդի իմ, այդ  
սմ է, որ մարմնովս. մի՛ուրեմն է Քրիստոս և Որդի և  
Աստուած:

Հստ Յօվաննու աւետարաննեն.

«Եր լոյսն ճշմարիտ, որ լուսաւորէ զամենայն մարդ՝ 5  
եկեալն յաշխահ. | յաշխահի էր և աշխահ նովաւ եղն և 288v.  
աշխահ զնա ոչ գիտաց. առ իւրսն եկն, և իւրքն զնա ոչ  
ընկալան»<sup>1)</sup>. Աստուածաբանեալ բաւականաբար և լուսովն  
ճշմարտիւ լուսաւորիլ զամենայն մարդ՝ գալոցն յաշխահ  
ասելով, և ևս և զնա առնել զաշխահ, յիւրան առէ զնա 10  
գալ. եկն իսկ եղեալ մարդ հոմասեռ իրը առ իւրսն և նախ  
քան զայդան, որք յարենէ Խսրայեղի. յորժամ այսուհետեւ  
ինքն է լոյսն ճշմարիտ, որսկ ամենայնքն, և ինքն է մարմ-  
նով եկեալ առ իւրսն, իրը ոչ հարկաւոր մի Քրիստոս և  
Տէր և Որդի խոստովանել:

15

Եւ դարձեալ.

«Եւ Բանն մարմին եղն և տաղաւարեաց ի մեզ, և  
աեսաք զփառս նորա, փառս Մէնածնի առ ի Հաւրէ, լի  
չնորհիւ և ճշմարտութեամբ»<sup>2)</sup>: Եթ' եղն մարմին Բանն,  
այս է նմանապէս մեզ, ընդունելով արեան և մարմնոյ, և 20  
զսերմանէ Արրահամու բռնահարէ, զի ըստ ամենայնի եղ-  
րարց նմանիցէ<sup>3)</sup>, իրը արդեւք յերկուասցի ռք, եթէ մնաց  
Բանն և մարմին եղեալ. քանզի անյեղի Բանին բնու-  
թիւն. և եթէ հմայեցաւ մեզ եղբայր, իրը Մէնածնի ունի 289r.  
փառս: Ուրեմն, թեպէտ եղն մարմին, ոչինչ նհատ է Աս- 25  
տուած. իսկ նախծին՝ սակա մարդկայնւոյտ:

Եւ դարձեալ.

«Ի Յովաննէս վկայէ յաղագս նորա և աղաղակեաց  
ասելով. Սա է, զոր ասացին ի հետ իմ գալով, որ առաջի  
իմ եղն, զի առաջին իմ էր. զի ի լրմանէ ինքեան մեք 30  
ամեննեքեան առաք»<sup>4)</sup>: Յովաննէս առէ յաղագս Քրիստոսի՝  
զինտ իմ գալոցն է, այս է՝ յետ իմ յայտնելոցն, զոր ինքն  
քարոզեաց. յայտ է՝ առաջի իմ եղն, այս է առաջացեալ  
փառաւքն, քանզի և էր և գոյսւթեամբ նախ իրը Աստուած.  
իրը որ յետ նորա նախ նորա ըստ ամանակին. զի Աս- 85

<sup>1)</sup> Յով. Ա. 9—11.   <sup>2)</sup> Յով. Ա. 14.   <sup>3)</sup> Եր. Բ. 16—17.

<sup>4)</sup> Յով. Ա. 15—16.

տուած էր Բանն և եղե մարմին, ունելով զնախութիւն, ըստ որում Բան է, իսկ երկրորդութիւն ըստ մարմնոյ: Իսկ եթ' և ի լրմանէ նորա ընկալան ամենեքեան սուրբք, և լի միայն է աստուածայինն ըստ իւրում, ասէ Էսայիա ձայ-  
5 նիւն. Վայել է նմա և միայնում՝ յառանձին լրմանէն իւր-  
մէ ընդունիչս բացակատարել այզս. իսկ գործեաց զայս  
Քրիստոս: Մի ուրեմն է Որդի և Տէր յԱստուծոյն Բան՝  
289v. եղեալ | մարմին, ինքն Աստուած համանգամայն և մարդ-  
ունիցի իսկ զնոյն մտածութիւն առաջոյ ճառելին:

## 10 Եւ դարձեալ.

«Զհետ իմ գայ այր, որ առաջի իմ եղե, զի նախ  
իմ էր»<sup>1</sup>: Ահա իսկ այր ասելով, և զնա գալ ի հետ իւր,  
նախկին գոլ ասէ՝ իգր Աստուած. քանզի՝ «Ի սկսրանն էր  
Բանն և Բանն էր առ Աստուած և Աստուած էր Բանն»<sup>2</sup>:

## 15 Եւ դարձեալ.

«Եւ վկայեաց ի Յովաննէս, ասելով եթե՝ Տեսի զՀո-  
ղին իջեալ իգր աղաւնի յերկնուատ, և մնաց ի վերայ նո-  
րա, և ես ոչ գիտեի զնա, այդ առաքիչն զիս մկրտէ ջրով  
ինքն ինձ եասաց՝ ի վերայ որոյ տեսանիցես զՀողին իջա-  
20 նել և մնալ ի վերայ նորա, այս է Մկրտիչն Հոգւով Սըր-  
բով. և ես տեսի և վկայեցի, եթե սա է Որդին Աստու-  
ծոյ»<sup>3</sup>: Տես հաւաստապէս իսկ և յայտնապէս յայտոիկ  
զՏէրն մեր Յիսուս Քրիստոս ընկալեալ մարդկաւրէն զՀո-  
ղին, սակա ներմարմին տնաւրէնութեանն. քանզի փար-  
25 թամ ելով՝ աղքատացաւ վասն մեր<sup>4</sup>, իսկ մկրտելով աս-  
տուածաբար Հոգւով Սըրբով: Քանզի ում վայել է մատա-  
290r. կարարել կարել զՀոգւոյն չնորհ, բայց եթե | մէնում ըը-  
նութեամբ և ճշմարտապէս ելոյ Աստուծոյ: Մի ուրեմն  
ապա Քրիստոս և Որդի, և վկայեցէ ասելով Մկրտիչն՝  
30 Եւ ես տեսի և վկայեցի, եթե սա է Որդին Աստուծոյ. իսկ  
սա ո՞ր զոր տեսանեմք մարդապէս զՀողին ընկալեալ, իսկ  
մկրտելով աստուածապէս Սըրբով Հոգւով:

## Եւ դարձեալ.

«Եթե զերկրայինս ասացի ձեզ և ոչ հաւատայք, իբ

1) Յովհ. Ա. 15. 2) Յովհ. Ա. 1. 3) Յովհ. Ա.  
32—34. 4) Բ. Կոբենթ. Ը. 9.

եթ՝ ասացից ձեզ գերկնայինսն՝ հաւատացէք. և ոչ ոք ել յերկին, եթ՝ ոչ յերկնուասն իջեալ Որդին Մարդոյ»<sup>1)</sup>: Ի՞ր վայրեկեաց յերկնուաս Որդին Մարդոյ. և թեպէտ Սրբոյ մարմնոյն ծնիցելոյ ի կնոջէ, այդ յատուկ էր մարմինն յերկնուաս վայրաբռւելոյ Բանին, և եղեւ Որդի Մարդոյ: Մի ապա ուրեմն Տէր և Որդի. այսպէս առանձինն մարմնոյ Բանիքն եղեն, իսկ առանձինն Բանին մարմնոյքն, թանց միայն մեղաց:

## Եւ դարձեալ.

«Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զաւձն յանապա- 10  
տին, այսպէս բարձրանալ պարտ է զՈրդին Մարդոյ, զի  
ամենայն հաւատացեալն ի նա ունիցի կենդանութիւն  
յաւիտենական»<sup>2)</sup>: Խածանեին | զիսրայէղացին ըստ անա- 290v.  
պատին աւձքն. ապա հրամայեաց բոլորեցունն Աստուած  
երանելոյն Մովսէսի՝ աւձ վերագրել պղնձեղէն, և եղիցի՝ 15  
ասէ, եթե խածանիցէ աւձ զմարդ, և հայեցի յաւձն և  
կեցցէ<sup>3)</sup>: Զինչ այսուհետեւ է առարկումն, վասն Էր իսկ  
հայեցաւզն յաւձն ապրի. կենդանութիւն ըստ բնութեանն  
գոլով Մենածինն Աստուծոյ Բան, և եղեւ ի նմանութեան  
ըստ մեղ, այս է մարդ. իսկ չար մարդ և որպէս եթե աւձ.  
այլ թեպէտ և եղեւ ըստ մեղ, որ ոք ի նա հայի՝ յաղթէ  
զմանս: Զինչ է ի նայն հայել, եթ՝ ոչ ուրեմն ամեննեին  
ճշդրտապէս նկատել զ՝ ի նմայն խորհուրդ. քանզի յայն- 25  
ժամ զնա տեսցէ ի նմանութեան ահա գչարացն, այս է մարդկան,  
և անյայտացուցանելով զչարացն աւձից խած-  
մունս: Մի ուրեմն ապա Տէր և Որդի, ինքն և կենագոր-  
ծիչ իրը Աստուած, և ի տեսակի չարացն՝ սակա տնաւրէ-  
նութեան:

## Եւ դարձեալ.

30

«Պարմանիքն ունելով ոստոս արմաւենեաց, արտաքս  
ելին ի հանդիպութիւն նորա, ասէ, և աղաղակեին՝ Ու-  
սմնա, բարեբանեամլ եկեալ անուամբ Տեառն, թագաւորդ 291r.  
իսրայէղի»<sup>4)</sup>: Ի՞ր արդեւք առէք զնա անուամբ Տեառն  
եկեալ՝ գիրն քահանայական, զի եթ՝ իրը և մարդ յատկա- 35  
պէս ի Սրբոյ կումէն, ոչ միաւորեցելոյ նմա ըստ ենթա-  
կացութեան Աստուծոյն Բանի, հասարակ եղիցի տերու-

<sup>1)</sup> Յովհ. Դ. 12—13.      <sup>2)</sup> Յովհ. Դ. 14—15.      <sup>3)</sup> Հմմ. Քիչ. ԻԱ. 8.      <sup>4)</sup> Յովհ. ՓԲ. 13.

թեանն նմա և ոչինչ ի վերայ Քրիստոսի մնծ. իսկ եթե  
իբր ճշմարտապէտ Տէր գալ խոստացաւ, որպէս և ճշմա-  
րիտ եկն իսկ ոչ առանց մարմնոյ յայս աշխահ Մէնածինն,  
մի ուրեմն է բնութեամբ և ճշմարտապէտ Քրիստոս և Տէր  
և Որդի:

### Եւ դարձեալ.

«Եւ վասն նոցա ես սրբեմ զիս, զի եղիցին և նոքա  
սրբեալք ճշմարտութեամբ»<sup>1)</sup>: Զինքն սրբէ Տէր՝ արդեւք  
իբր մարդ, կամ եթի յաւէտ Աստուած է ըստ բնութեան,  
10 յատուկ ունելով զնոգին Սուրբ, որ է և ճշմարիտ. քանզի  
ոչ ումենք մարդկան զինքն սրբաւզի, եթե զինքն սրբէ  
Քրիստոս: Մի ուրեմն է Որդի և Տէր՝ սրբեցեալ մարդ-  
կաւրէն և սրբելով աստուածապէտ Սրբով Հոգւով զիւրն  
ժողովուրդ:

### 15 Եւ դարձեալ.

«Բազում և այդ նշանս եարար Յիսուս, որ հչ է  
291v. զրեալ ի մատենիս յայսմիկ. իսկ այս զրեցաւ, զի հաւա-|  
տայցէք, եթե Յիսուս է Քրիստոս, Որդին Աստուածոյ, և զի  
հաւատալով՝ կենդանութիւն յաւիտենական ունիցիք ան-  
20 ուամբ նորա»<sup>2)</sup>: Ի Սրբոյ կուսէ ծնիցեալն Եմմանուէլ  
ի ձեռն հրեշտակի ձայնին Յիսուս անուանեցաւ. յորժամ  
այսուհետեւ ինքն է, և ոչ այդ Որդի Աստուածոյ, և որ հաւա-  
տայն՝ ունի կենդանութիւն յաւիտենական անուամբ նո-  
րա, իբր ոչ կատաղեցան որոշաւլքն՝ ասելով այդ Որդի  
25 գոլ զԱստուածոյն Բան և այդ զ՝ ի սրբոյ կուսէն: Քանզի  
երևի յայսոսիկ աւետարանիչս և յաւէտ հաւաստապէս զմի  
և միայն զերկակացն գիտելով և քարողելով զՅիսուս  
Քրիստոս, այս է զ՝ ի Հաւրէն Բան, արեան և մարմնոյ հա-  
ւասարհալ նմանապէս մեղ<sup>3)</sup>, ըստ որում դրեալ է:

### 30 Ի բոլորականացն՝ ի Յակովբայ թորօյն.

«Մի մոլորիք, եղբարք իմ սիրելիք, ամեն տուչու-  
թիւն բարի և ամեն ձիր կատարեալ ի վերուստ է իջեալ.  
առ ի Հաւրէ լուսոյն»<sup>4)</sup>: Եթ՛ առ միայնւոյ Հաւրէն լուսոյն  
ամեն տուչութիւն է բարի, իսկ բարի տուչութիւն Հոգին  
35 Սուրբ և կարելն լուուլ ի նմա զաստուածանշանութիւնս.

<sup>1)</sup> Յովհ. Ժկ. 19.

<sup>2)</sup> Յովհ. Խ. 30—31.

<sup>3)</sup> Յմմա. Երբ.

թ. 14.

<sup>4)</sup> Յակովբ. Ա. 16—17.

ապա սրբ(ո)ց շնորհէ զոգին Քրիստոս և և և կարելն լնուլ  
դհրաշա|փառան, իբր ոչ իցէ Աստուած ճշմարտապէս:

292r.

Եւ դարձեալ.

«Հնազանդեցարեւք ահա Աստուածոյ, իսկ ընդդիմա-  
կացէք բանսարկուին, և փախիցէ ի ձէնջ»<sup>1)</sup>: Ահա հաւաս-  
տապէս յայսոսիկ հնազանդիլ պարտ է մեզ Աստուածոյ.  
ասէ իսկ Քրիստոս. «Բարձէք զլուծ իմ ի ձեզ»<sup>2)</sup>: Յորժամ  
այսուհետեւ զլուծն ունաւղք նորա ոչ այզում ումենք քան  
զԱստուած հնազանդին, իբր ոչ իցէ Աստուած:

Ի Պետրոսի թղթոյն.

10

«Պետրոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի, ընտրելոց  
առդիմացելոց\* ի սփիս Պոնտացւոց, Գաղատացւոց, Կա-  
պոդոկացւոց, Ասիացւոց և Բիթինացւոց՝ ըստ նախազի-  
տութեանն Աստուածոյ Հաւր, սրբութեամբ Հոգւոյն, ի լու-  
սորութիւն և ի սրսկումն արեանն Քրիստոսի Յիսուսի,<sup>15</sup>  
շնորհ ընդ ձեզ և խաղաղութիւն բազմացի»<sup>3)</sup>: Ահա ըստ  
նախազիտութեանն Աստուածոյ Հաւր առաքեալ զինքն ա-  
նուանեաց Քրիստոսի և զառաքելութեանն յեղանակ մեզ  
մեկնելով՝ սրբութեամբ Հոգւոյն ի լսաւրութիւն և ցանումն  
արեանն Յիսուսի Քրիստոսի, գործեցեալ ասէ զնա՝ յոր-<sup>20</sup>  
ժամ այսուհետեւ հաւատացեալք ի նա սրբիցիմք Հոգւովն. 292v.  
իսկ սրսկէ զմեզ և արեամբ իւրով առ բացապաւառու-  
թիւն. իբր արդեւք ոչ իմանայցի Աստուած՝ սրբիչն իւրով  
Հոգւովն, իսկ մաքրիչն և արեամբ զհաւատացեալան. քանզի  
Աստուած էր ի մարմի:

26

Եւ դարձեալ.

«Բարեբանեալ Աստուած և Հայր Տեառն մերոյ Յի-  
սուսի Քրիստոսի, որ ըստ բազում իւրում ողորմութեան  
վերածնեաց զմեզ առ ի յոյսն կենդանի, յարութեամբ Յի-  
սուսի Քրիստոսի ի մեռելոց, ի ժառանգութիւն անապա-<sup>30</sup>  
կան, և անարատ և անթառամ պահեցեալն յերկինա»<sup>4)</sup>:  
Եթ՛ Աստուած զմեզ վերածնեաց ի յոյսն կենդանի և ա-  
նանց, գործեաց իսկ զայս ի ձեռն ի մեռելոց յարութեան  
Քրիստոս, իբր ոչ իցէ Աստուած:

Լուսանցքսւմ՝ «պանդ(ի)տոց».

<sup>1)</sup> Յակով. Դ. 7.      <sup>1)</sup> Մատթ. ԺԱ. 29.      <sup>3)</sup> Ա. Պետր.  
Ա. 1—2.      <sup>4)</sup> Ա. Պետր. Ա. 3—4.

## Եւ դարձեալ.

«Յաղագս որոյ փրկութեան խնդրեցին և որոնեցին մարգարէքն, որ յաղագս առ ձեզ չնորհին մարգարեացան՝ որոնելով առ ինչ կամ որպիսի ժամանակ զեկուցանէր 5 զ' ի նոսայն Հոգին Քրիստոսի<sup>1)</sup>: Ահա իսկ դարձեալ ի սուսա Քրիստոսի սուրբ ասացեալ է Հոգի և այն զի աստուածային ելով. Աստուած ապա ուրեմն Քրիստոս, իբր յատուկ ունելով զՀոգին Սուրբ:

## Եւ դարձեալ. |

293r. 10 «Զի Քրիստոս մի հաղ վասն մեղաւորաց մեռաւ, արդարն վասն անաւրինաց, զի զմեզ առաջի ածցէ Աստուծոյ, մեռեալ մարմնով, իսկ կենազործեալ Հոգւով. յորում և զ' ի պահպանութեան Հոգւոյ գնացեալ, քարոզեաց անհաւանելոցն երբեմն<sup>2)</sup>: Բազումք ի սրբոցն խողխողեցան 15 մարգարեիցն, այդ ոչ ոք ի նոցանէ մեռանել յաղագս մեղաց առացաւ, այդ և ոչ յառաջ ածել զմեզ Աստուծոյ իւրով մահուամբն, այդ և ոչ քարոզեաց ոք որք ի բանդի հոգւոցն. և գործաց զայս Քրիստոս և ընքեամբ իսկ, և ի նմա փրկանաւորեցաք, և զնորա ախտակրութիւն աշխարհի 20 փրկութիւն: Մեռաւ այսուհետեւ վասն մեր՝ ոչ իբր մարդ մի գոլով ըստ մեզ, այդ իբր Աստուած մարմնով, ամենայնին կենդանութեան փոխանակ զիւր արիւնն տուեալ:

## Եւ դարձեալ.

«Քրիստոսի այսուհետեւ կրելով վասն մեր մարմնով<sup>3)</sup>: 25 Քանզի որպէս ելոյ Աստուծոյ Քրիստոսի իմաստնապէս և ներխոնաբար աշակերտն՝ մարմնով ախտակրեալ ասէ զնա, արտաքս ածեալ ի կրելոյ զանճառելի բնութիւնն, որոյ աւասար կրելն. իւրովին այսուհետեւ ախտակրեաց մարմնով, և թեպէս ախտակրութեան անրաժ գոլ սովորեալ յԱստուծոյն Բան, աստուածապէս անախտակիր, իսկ ախտակիր ըստ մարմնոյ:

## Եւ դարձեալ.

Իբր զի, ասէ, զհաւատն ձեր և զյոյս գոլ առ Աստուած<sup>4)</sup>, և այն զի Քրիստոս քարոզի ի ձեռն սրբոց առա-

<sup>1)</sup> Ա. Գետք. Ա. 10—11.

<sup>2)</sup> Ա. Գետք. Դ. 18—20.

<sup>3)</sup> Ա. Գետք. Դ. 1.

<sup>4)</sup> Ա. Գետք. Ա. 21.

քելոցն, և ինքն իսկ ուրեմն ասէ. «Ամէն ամէն առեմ ձեզ,  
որ հաւատայ յիս՝ ունի կենդանութիւն յաւիտենական»<sup>1)</sup>:  
Յորժամ այսուհետեւ առ Աստուած հաւատան Քրիստոսի, ա-  
սելով՝ Տիս հաւատացէք<sup>2)</sup>, իբր ոչ իցէ Աստուած ճշմար-  
տապէս»:

5

### Ի ՊԵՏՐՈՍԻ յԵՐԿՐՈՐԴ ՔՊՐՈՅՆ.

«Եղեն իսկ և սուտ մարգարէք ի ժողովրդեանն, որ-  
պէս եւ ի ձեզ եղիցին սուտ վարդապետք, որք ի ներքս  
ածցեն հերձութիւնս կորստեան և զգնաւղն զնոսա՝ զՏէրն  
ուրացողք»<sup>3)</sup>: «Իանզի գնիցաք գնոց, ոչ ապականելեաւք 10  
արծաթով և ոսկւով, այդ պատուական արեամբն Քրիս-  
տոսի»<sup>4)</sup>: Եմք ուրեմն ապա գնաւղին, թեպէտ և Աստուածոյ  
ծառայեմք՝ կենդանւոյ և ճշմարտի: Աղջ, իբր ոչ Աստուած  
Քրիստոսն, զոր և Տէրն վերագրեցաք կենդանի և ճշմա-  
րիտ Աստուած: 15

### ՑԱՎԱՅԻՆՈՒ յԱՌԱՋԻՆ ՔՊՐՈՅՆ.

«Եւ այս է պատուիրան նորա, զի հաւատայցեմք  
անուան Որդւոյ նորա | Յիսուսի Քրիստոսի»<sup>5)</sup>: Եւ գործի 294r.  
առ ի մէնջ հաւատն ոչ իբր մարդ պարզաբար, այդ իբր Աս-  
տուած կենդանի և ճշմարիտ. Աստուած ուրեմն Քրիստոսն: 20

### ԵՒ ՊԱՐՃԵԱԼ.

«Յայսմիկ դիտէք զՀոգին Աստուածոյ. ամենայն հոգի,  
որ խոսապվանի զՅիսուս Քրիստոս մարմնով եկեալ, յԱս-  
տուածոյ է. և ամենայն հոգի, որ ոչ խոսապվանի զՅիսուս՝  
յԱստուածոյ ոչ է. և այս է դերապըրիստոսին, զոր լուարուքն, 25  
եթե գայ, և այժմ յաշխահի է»<sup>6)</sup>: Ահա խոսապվանեմք զՅի-  
սուսն արդեւք իբր զմարդ և զստ մեզ մի եթե յաւէտ.  
զի Աստուած ելով Բան՝ եղև մարմին, ոչ տաղտկացեալ  
զգոյն Աստուած, մնալով իսկ մանաւանդ որպէս էր, և  
թեպէտ եղև մարմին, այդ այս է ոչ երկրայական. որ ոք 30  
ասէ զոլ Աստուած ճշմարիտ զՔրիստոս, բաժանելով իսկ  
և փոքրացուցանելով զփառս նորա, զդերապըրիստոսին ոզի  
ունելով՝ ըմբռնեացի:

### ԵՒ ՊԱՐՃԵԱԼ.

<sup>1)</sup> Յովհ. Զ. 47., ԺԱ. 26.      <sup>2)</sup> Յովհ. ԺԴ. 1.      <sup>3)</sup> Բ.  
Պետր. Բ. 1.      <sup>4)</sup> Ա. Պետր. Ա. 18—19. հմմ. Ա. Կողնթ. Զ. 20.  
է. 23.      <sup>5)</sup> Ա. Յովհ. Գ. 23.      <sup>6)</sup> Ա. Յովհ. Գ. 2—3.

«Եւ մեք տեսաք և վկայեմք, եթե Հայրն առաքեաց զՈրդին փրկիչ աշխահի: Որ ոք խոստովանէ, թե Յիսուս է Որդի Աստուծոյ, Աստուծ ի նմա մնայն ինքն յԱստուծումն»<sup>1</sup>: Առաքեցեալ տօնմք յԱստուծոյ և Հաւրէ զՈրդին, ճայս է զ' ի նմանէն ըստ բնութեան Մէնածին Բանն, և ա-  
294v. նուանիլ զնա Յիսուս, յորժամ ևզբատ մարմնոյ ծնիլութիւնն ի կնոջէ համբերիաց տնաւրինաբար. ուրեմն յԱս- տուծոյն Բան եզե մարդ, թեպէտ և ոք այսպէս խոստովա- նիցէ զնա, ունի ահա յինքեան զԱստուծ. ևզիցի իսկ և  
10 ինքն յԱստուծումն, քանդի յիշեացէ զնա, համարի իսկ և ընտանի իբր ընդունիչ նորա. իսկ ոչն խոստովանիչ, եթե յԱստուծոյ Հաւրէ Բանն Յիսուս է, վայրատուեալ զինքն ի մարդկութիւն, և ոչ Աստուծ ի նմա փարթամասցի և ոչ ինքն յԱստուծում ևզիցի՝ ըստ հոգեկանին ընտանութեան  
15 յեղանակի:

### Եւ դարձեալ.

«Ամենայն, որ հաւատայ, եթե Յիսուս է Քրիստոս, յԱստուծոյ ծնիցեալ է»<sup>2</sup>: Ուրեմն ոչն հաւատալով և ոչ ի ծնունդս Աստուծոյ համարեսցի. զի եթ' ոք զՈրդին առին,  
20 ետ նոցա իշխանութիւն ծնունդս Աստուծոյ լինել, ոք հաւատան յանուն նորա, որպէս ասէ աւետարանիչն<sup>3</sup>. ոչ առաւղքն զնա և ոչ ի ծնունդս համարեսցին Աստուծոյ՝ զայն, որով այսն գոյ, ոչ գիտելով:

### Եւ դարձեալ.

25 «Իսկ ովկ է յաղթողն զաշխահ, եթ' ոչ հաւատացեալն, եթե Յիսուս է Որդին Աստուծոյ. սա է եկեալն ջրով և հոգւով Յիսուս. ոչ ի ջուր միայն, այդ և ի ջուր ելարեան. և հոգին է վկայիչ, զի հոգին է ծշմարտութիւն: Զի երեք են վկայիչքն. հոգին և ջուրն և արիւն, և երկն մի են»<sup>4</sup>:  
295r. 30 Յաղթէ իսկ զաշխահ, որ հաւատայ, եթե Յիսուս է Որ- դին Աստուծոյ. իսկ ովկ է Յիսուս, ինքն մեղ աշակերտն յայտնէ՝ ասելով. Սա է եկեալն ջրով և արեամբ Յիսուս Քրիստոս. ոչ ջրով միայն, այդ և ջրով, ասէ, եւ արեամբ եւ հոգւով, եւ զերեսեան զմին գոլ ասէ: Ուրեմն եզեալ  
35 մարմին Բանն՝ սրբէ զմեղ հոգւովն եւ մաքրէ արեամբ եւ»

<sup>1)</sup> Ա. Յովհ. Դ. 14—15.

<sup>2)</sup> Ա. Յովհ. Ե. 1.

<sup>3)</sup> Յովհ.

Ա. 12.

<sup>4)</sup> Ա. Յովհ. Ե. 5—8.

ի բաց լուանայ մաքուր ջրով։ Մի իսկ ամենակին Որդի,  
որոյ եւ գոլ ասեմք զՀողին եւ զջուր եւ զարիւն։

### Եւ դարձեալ.

«Եթէ զվայութիւն մարդկան առնումք, վկայութիւն  
Աստուծոյ մնագոյն է. զի այս է վկայութիւն Աստուծոյ, 5  
զի վկայեաց յաղագս Որդւոյ իւրոյ»<sup>1)</sup>։ Վկայեաց Հայրն  
Որդւոյ ի ձեռն Հոգւոյ եւ ի ձեռն ձայնի. եւ զի է Որդի  
նորա ըստ ճշմարտութեան՝ վկայեացէ իսկ կարելն մատա-  
կարարել սրբոց զՀողին իւր եւ նովաւ զաւրութիւնս ներ-  
գործել։ Եւ զի ասէր եթե՝ նա զիս փառաւորեսցէ, վկայեաց 10  
ելքստ այլում յեղանակի. քանզի եցոյց զնա Յորդանան 295v.  
առելավ. «Սա է Որդի իմ սիրելի, յորում հաճեցայ»<sup>2)</sup>։ Որք  
այսուհետեւ բաժանելով ասեն հչ գոյ Աստուած ճշմարիտ  
զ՝ ի կնոջէն, վերաբերեն իսկ զաստուածութեան անուն ի  
մերկ եւ միայն Աստուծոյն Բան, ստող առնեն զՀայրն. 15  
քանզի մարմնացեալ զԲանն եցոյց Յորդանան եւ յայն-  
ժամ վկայեաց ողին նմա, եթ՝ Աստուած է և Որդի ճը-  
մարտապէս։

### Եւ դարձեալ.

«Եւ գիտեմք, եթ՝ Որդին Աստուծոյ եկն եւ ետ մեզ 20  
իմացութիւն, զի ծանիցուք զճմարիտն Աստուած, եւ եմք  
ի ճշմարտում Որդւոջ նորա Յիսուսի Քրիստոսի. սա է  
ճշմարիտն Աստուած եւ կենդանութիւն յաւիտենական»<sup>3)</sup>։  
Յիսուս Քրիստոս հչ մերկ եւ ըստ նկեան եւ արտաքոյ մար-  
մուոյ զ՝ ի յԱստուծոյն իմանի Բան, այդ յորժամ եղե մարդ, 25  
յայնժամ եւ անուանեցաւ Յիսուս Քրիստոս Յորժամ այ-  
սուհետեւ ինքն է ճշմարիտն Աստուած եւ կենդանութիւն  
յաւիտենական, ո այնպէս խոհաւղացն հաւանեսցի։

### Ի Յուղայի բրիրոյն.

«Զամենայն փոյթ արարեալ գրել ձեզ յաղագս հասա- 30  
րակականի մերոյն փրկութեան, հարկաւորութիւն կալայ 296r.  
զրել ձեզ, մաղթելով նահատակիլ մի հաղ աւանդացելով  
սրբոցն հաւատով, Քանզի ի ներքս մտին ոմանք մարդիկ՝  
ի հնուստ նախագրեալքն յայս դատապարտութիւն ամ-  
պարիշտք, զԱստուծոյն մերոյ շնորհ փոխադրելով յանա- 35  
ռակութիւն եւ զմիայն իշխանականն եւ Տէրն մեր Յիսուս

<sup>1)</sup> Ա. Ցովհ. ե. 9.      <sup>2)</sup> Մասթ. Գ. 17.      <sup>3)</sup> Ա. Ցովհ. ե. 20

ՑՈՎՈՅԻ ՀԱՎԱԱՊՈՒԹԻՒՆ

Քրիստոս ուրացեալք<sup>1)</sup>: Հստ որում յեղանակի ուրացի ոք մի հաղ հաւատացելոցն զՏէրն մեր Յիսուս Քրիստոս, եւ թեպէտ առընկալաք զներմարդութեանն Բան, այզ եթ' ասեմք՝ այդ ոմն է Որդին յԱստուծոյն Հաւրէ Բանն, իսկ ճ այդ եւ առանձինն ի կնոջէն, ուրացաք զմին Տէր. քանզի մի Տէր Յիսուս Քրիստոս, ըստ միաւորութեան տնաւրինականի. եւ ասեմ զառ Աստուածն Բան՝ յաստուածութեան փառս մերձեցելոց նորա մարմնոյն: Մի ուրեմն ապա Քրիստոս եւ Որդի. քանզի եղիցի այսպէս բոլորեցուն Տէր:

#### Առաքելոյ առ (հոռվմայեցիս) \*.

«Իսկ ի հաւատոյ արգարութիւնն այսպէս առէ. մի ասիցես ի սրտի քում՝ ով վերեկեսցէ յերկին, այս է զՔրիստոս վայրածել. կամ ով ստորեկեսցէ յանդունդ, այս է զՔրիստոս ի մեռելոց վերածել. այլ զի՞նչ ա|աէ գրութիւնն. Մերձ 15 քո բայն է ի բերան քում եւ ի սրտի քում, այս է բայն հաւատոյ, զոր քարողեմք. զի եթե խոստովանեսցես բերանով քով եթե Տէր Յիսուս, եւ հաւատացես ի սրտի քում, եթե Աստուած յարոյց զնա ի մեռելոց, կեցցես. քանզի սրտի հաւատայ յարդարութիւն, իսկ բերանով խոստովանի ի փրկութիւն»<sup>2)</sup>: Եթե ըստ ոմանց թուեցեալ մարդ աստուածազգեստ իմանի Քրիստոս եւ միայն ունելով ի գէմս միաւորութիւն առ ի յԱստուծոյն Բան, Էր աղադաւ հաւատան ի նա՝ իբր ի Տէր. խոստովանեն իսկ եւ զ' ի մեռելոց յարութիւնն նորա, արդարանամք հաւատով առ ի 25 նայն. գործի իսկ հաւատ իբր առ ի նայն Յայտ եթե հարկաւոր այսուհետև ըստ ենթակացութեանն միաւորութիւն Աստուծոյն Բանի առ մարդկայինն. քանզի մի այսպէս Քրիստոս իբր զՏէր ըստ բնութեան խոստովանեսցուք և զմարմնոյ նորա յարութիւնն ճանաչելով իբր մի Աստուած 80 հաւատալով արդարանամք:

#### Եւ դարձեալ.

«Քանզի ոչ ոք ի մէնջ ընքեան կեայ և ոչ ոք ինքեան մեռանի. արդ՝ եթե կեամք, Տեառն կեամք, եթե մեռանիմք, Տեառն մեռանիմք. եթ' այսուհետև կեամք. 35 եթե մեռանիմք, Տեառն եմք. ի սոյն իսկ Քրիստոս մեռաւ եւ կեաց, զի և մեռելոց եւ կենդանեաց տիրեսցէ»<sup>3)</sup>: Առ-

<sup>1)</sup>) Յուղայի 3—4.    <sup>2)</sup>) Հռեվմ. Ժ. 6—10.    <sup>3)</sup>) Հռեվմ. ԺՊ. 7—9.

ձայնեաց ուրեմն, որք յազգացն երանելին Պաւղոս. «Իսկ  
այժմ ծանուցեալք զԱստուած եւ մանաժանդ ծանիցնալք  
յԱստութոյ, իբր դառնայք դարձեալ ի ներգեւս եւ աղքատ  
տարերս, որոց դարձեալ վերստին ծառայել կամիք»<sup>1</sup>. Փըր-  
կանաւորիցաք ի ձեռն հաւատոց որ ի Քրիստոս ի տառիցն 5  
ծառայութենէ եւ փրկաւորիցաք ի ծառայութիւն Աստու-  
ծոյ կենդանեաց եւ ճշմարտի Խակ եթե մեռաւ Քրիստոս,  
զի և մեռելոց և կենդանեաց տիրհացէ, և նմա ծառայեմք  
իբր Աստութոյ կենդանեաց և ճշմարտի, իբր ոչ հարկաւոր  
Բանի, որ առ մարմին եղել միաւորութիւն ճշմարիտ. քան- 10  
զի ի նմա մեռեալ տիրեաց եւ կենդանեաց եւ մեռելոց:

Յառաջին թղթոյն, որ առ Կորնքացիս.

«Քանզի ըլմակին ի հոգեկանէ հետեւեցելոյ վիմէն,  
իսկ վէմն էր Քրիստոս»<sup>2</sup>: Քրիստոս անուն դնանի Եմմա-  
նուէզի, յորժամ ծնիցաւ ի սրբոյ Կուսէն. իբր արդեւք 15  
ինքն էր վէմնարբուցիչն զիարայէդ. այդ է յայտ, ևթե 297v.  
զՔրիստոս և զՈրդի զիտէ մի՝ գիրն քահանայական: Քանզի  
եղեալ մարմին Բանն, դարձեալ ինքն է հոգեկանն վէմ,  
զնտանեկան բնութեանն զծերունագոյնն հչ ի բաց ընկեն-  
լով սակս նորոյ տնաւրէնութեանն:»<sup>3</sup> 20

Յերկրագդ թղթոյն, որ սու Կորնքացիս.

«Իբր զի մեք այսուհետեւ զոք ոչ զիտեմք ըստ մար-  
մնոյ, թեապէտ եւ զիտացաք ըստ մարմնոյ զՔրիստոս, այդ  
այժմ հչ ևս զիտեմք»<sup>4</sup>: Զինչ արդեւք ասէ Պաւղոս. ար-  
դեւք զՔրիստոս ուրանայ յետ յարութեանն. ոչ զիտէ զնա 25  
յարուցեալ մարմնով ի մեռելոց եւ համբարձեալ նովիմք  
յերկին: Եւ ով ասել զայս իշխէ. քանզի այսպէս զիտէ եւ  
համբարձեալ եւ դալոց ըստ ժամանակս, զոր աւրինակ  
վերելակեացն յերկին: Ի՞բր արդեւք ոչ զիտել ասէ ըստ  
մարմնոյ զՔրիստոս. զի յետ զ' ի մեռելոցն վերակենցա- 30  
զութիւն հչ ի մարմնոցս տակաւին չափելով, այդ իբր յաս-  
տուածայնոյ զերունակութենէն լաւագոյն զնա զիտել և  
խոստովանել: Քանզի չե ևս լցելոց տնաւրէնութեանն| քա-  
րողիւր ըստ մարմնոյ. զի եթ' հաւատայցի եղեալ մարդ  
Մէնածինն և վասն զի կատարեցաւ խորհուրդն, յորոց է 35  
Աստուած, լաւագոյն զնա խոստովանել զանառ(?) ի թափ-  
մանէն վասն մարմնոյն: Մի ուրեմն Քրիստոս և Որդի և Տէր:

<sup>1)</sup> Պաղտա. Դ. 9.

<sup>2)</sup> Ա. Կորնք. Ժ. 4.

<sup>3)</sup> Բ. Կորնք. Ե. 16.

## Եւ դարձեալ.

«Քանզի գիտէք զշնորհն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, թե վասն մնր աղքատացաւ, բառացի ելով, զի դուք նորա աղքատութեամբն փարթամանայցէք»<sup>1)</sup>: Եթե 5 միայն մարդ Քրիստոսն և ոչ ըստ միաւորութեան ճշմարտի զառ ի յԱստուածն Բան՝ փարթամ իրը Աստուած, յըր աղքատացաւ, քանզի ու բոլորովին մարդկութեանս բառացութիւն. ասացաւ իսկ մարդոյ ամենայնի՝ «Եւ զինչ ունիս, զոր ոչ առեր. իսկ եթե առեր, զի՞ պարծիս իրը ոչ ա-10 ռաւդ»<sup>2)</sup>. այդ աղքատացաւ փարթամ ելով իրը Աստուած, քանզի աղքատացաւ զմարդկութեանս. «Հայցեա առ յինէն և տաց քեզ դազգս ի վիճակ աւրէնութիւն քեզ»<sup>3)</sup>. այդ ի ձեռն նորին զրական վիճակ աւրինին սակա մարդկայնոյն և զնոյնս առնիլ զյաւիտեանն ասէ, և բանին ծերագոյնս 289v. 15 իրին ունելովզվերաբերութիւնն. Մի ուրեմն ապա Քրիստոս և Որդի ինքն, Աստուած համանգամայն և մարդ:

## Առ Եբրայեցիս թղթոյն.

«Որ ելով բացափայլումն փառացն և գծաւորութիւն ենթակացութեան նորա, բերելով զամենայն բայիւ կա-20 րութեան իւրոյ, ապաւառութիւն մեղացն արարեալ, նստաւ յաջմէ մեծութեանն ի բարձունս, այսքան լաւագոյն եղեալ հրեշտակաց, որքան զանազանագոյն քան զնոսս ժառանգեաց անուն»<sup>4)</sup>: Բացափայլումն փառաց և գծաւորութիւն ենթակացութեան Աստուածոյ և Հաւր, այս է ի նմանէ ըստ 25 բնութեան Որդի Մէնածին: Զինչ յեղանակ ապաւառութիւն մեղաց մերոց արարեալ. յայտ է՝ զի արեամբ իւրով. նստաւ յաջմէ Հաւր և լաւագոյն եղանիլ ասի հրեշտակաց, և այն զի ըստ բնութեան և աստուածութեանն գերունակութեամբ զամենայն յաղթելով, ապա ուրեմն և մարդ ե-30 ղեալ, աւելաստացեաց իրը Աստուած զանտեսանելի արարածն, ինքն ելով բացափայլումն և գծաւորութիւն Աստուածոյ փառացն, և գործեցեալ զմեղացն մերոց ապաւառութիւն արեամբ իւրով: Մի ուրեմն ապա Քրիստոսի Որդի և Տէր:

## 85 Եւ դարձեալ.

1) Բ. Կոբնթ. Ը. 9.  
Բ. 8. 2) Ա. Կոբնթ Պ. 7.  
4) ԵՐԵ. Ա. 3—4. 3) Սաղմ.

«Քանզի սրբիչն և սրբեալք ի միոցէ ամենեթեան, սակս  
որոյ պատճառի ոչ ամաչէ եղբարս զնոսա կոչել ասելով.  
Պատմեցից զանուն քո եղբարց իմոց»<sup>1)</sup>: Հստ բնութեանն  
սուրբ նչ սրբի, զի ոչ է կարաւտ սրբման. սակայն իբր  
յնդունելութեան առ միւամէ եղեալ սուրբ, սրբել զայդս հչ 5  
կարէ. իբր արդեւք ինքն սրբէ և սրբի, ինդրելի է. սրբէ  
այսուհետեւ իբր Աստուած առանձնաւորութիւն բնութեան  
իւրոյ զսրբեալն կարել վիճակեալ. սրբի իսկ ընդ մեզ ըստ  
մարդկայնումն Մի ապա ուրեմն Քրիստոս և Որդի և Տէր,  
սրբելով աստուածաբար, իսկ սրբեցնալ ընդ մեզ մարգ-10  
կաւրէն:

### Եւ դարձեալ.

«Իսկ գլուխ ի վերայ ասացելոցս այսմիկի, ունիմք  
քահանայապետ, որ նստաւ յաջմէ աթոռոյ մնծութեանն  
յերկինս, սրբոցն պաշտաւնեայ և տաղաւարին ճշմարտա-15  
գունի, զոր կառոյց Տէր, հչ մարդ. եթ՝ ամենայն քահա-  
նայ, ըստ որում ասէ ինքն երանելին Պաւղոս, առ ի յա-  
ռաջ բերել ձիրս և զոհս առընկալեալ լինի»<sup>2)</sup>: Ո'չ ընքեանց 299v.  
կատարեն զոհս կոչեցեալքն ի քահանայութիւն իսկ Աս-  
տուծոյ առաւել, որ քան զամենայն քահանայութիւն պար-20  
տեցեալ պաշտաւն. իսկ Աստուծոյ սպասաւորելով հչ ի հան-  
գէտ չափում եղեալ լինի Աստուծոյ, այդ և ոչ զնմայն և  
միայնում զայելչականն զգեսցի փառաւ Աղէ, իբր քահա-  
նայապետ մեր եղեալ Քրիստոս՝ յաջմէ նստի Աստուծոյ և  
զաթոռն ունի զմենծութեանն յերկինս և սրբոցն է պաշ-25  
տաւնեայ և տաղաւարին վերնւոյ ճշմարտի, իբր Հաւր ա-  
ռաջաբերելով զյամենեցունցն պարշտութիւնս: Մի ուրեմն  
է ապա Քրիստոս և Որդի, նստեալ աստուածաբար յիւ-  
րում աստուածութեանն աթոռ և անուանեալ քահանայա-  
պետ, և պարշտի անաւրինաբար սակս մարդկայնոյն: 30

### Եւ դարձեալ.

«Քանզի ահա և մեք այպքան ունելով շուրջ եղեալ  
մեզ ամպ վկայից, զխանչումն ի բաց դնելով ամենայն և  
զդիւրա(կ)այ մեղմն, համբերութեամբ ընթանամք առ յա-  
ռաջիկայն մեզ նահատակութիւն, հայելով հաւատոյ սկըզ-35  
բնական | և կատարիչն Յիսուս, որ փոխանակ առաջիկայի 300r.  
նմա ինդութիւնն համբերեաց զխաչն, զամաւթով ար-

1) Եբ. Բ. 11—12.

2) Եբ. Ը. 1—3.

համարհեալ, յաջմէ աթոռոյ Աստուծոյ նստաւ։ Եթե հասարակական մարդ Քրիստոս և ոչ Աստուած ճշմարտապէս ի մարմնի և ըստ մեզ, զ՞որ նմա ասին զխնդութիւնն առաջի կալ. կամ իբր նստաւ յաջմէ աթոռոյ Աստուծոյ։ 5 Այդ զի առաջի կայր նմա խնդութիւն\*, քանզի և է յանվախճան խնկաւորութիւնն կամ դուզնավայելուչս ընտանեցուցեալ տնաւրինաբար, փարթամն ճշմարտապէս ի հաւրէ Բան։ Մի ուրեմն Քրիստոս և Որդի և փարթամ իբր Աստուած, իսկ աղքատ, զի եղն մարդ, զի մեք փար- 10 թամբ նովաւ։

### Առ Գաղաւոցիս քղբոյն.

«Պաւզոս առաքեալ հչ ի մարդկանէ և հչ ի ձեռն մարդոյ, այդ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի և Աստուծոյ Հաւր, յարուցաւղին զնա ի մեռելոց»<sup>2)</sup>։ Ապ' ուրեմն ոչ զԱստուած 15 ներմարդացեալ և մի յերկոցունց ցուցանէ վասն այսորիկ մեզ խորհրդակիրս, քանզի եասաց առաքեցեալ հչ ի մարդկանէ և հչ մարդով. իսկ յաւել եթե՝ Յիսուսիւ Քրիստոսիւ. և իբր ոչ գիտէ մարդ ելով զՔրիստոս, այսպէս ընդ 300v. ամենայն ընդ երկնաւ քարոզելով, այդ գիտէ եալ ոչ մարդ 20 պարզաբար, այդ ներմարդացեալ յաւէտ զԱստուծոյն Բան։ և ոչ զԱստուած ի մարդ իմացեալ, այդ որպէս նոյն ինչն իմացեալ մարդ՝ մնալով Աստուած։ Յորժամ ասիցէ ի մարդոյ ոչ առաքեալ, այդ Յիսուսիւ Քրիստոսիւ. իբր ոչ յայտնապէս, զի և Աստուած գիտէ զնա ճշմարիտ, յետ և ի 25 մարմնի լինելով ըստ մեզ. նշանակէ այսուհետև զնա հչ ի թափմանէն չափոյ, այդ յաստուածութեան իւրոյ և ըստ ամենայնի գերունակութեան։

### Եւ դարձեալ.

«Յորժամ եաք տղայք, ընդ տառիւք աշխարհիս եաք 30 ծառայեալք. իսկ յորժամ եկն լրումն ամանակին արտաքս առաքեաց Աստուած զՈրդին իւր՝ եղեալ ի կնոջէ, եղեալ ընդ աւրինաւ, զի զնդ աւրինաւն արտաքս գնեսցէ, զի զորդեզըութիւնն ի բաց առցուք»<sup>3)</sup>. Զոր յղեաց Աստուած և Հայր, և եղն ի կնոջէ, եղն իսկ և ընդ աւրինաւ. 35 արդեւք ոչ ասել վայել է և պարիմանալ արժանաւոր. Եթե

\* ) Լուսանցքում՝ «զուա(թու)թիւն».

<sup>1)</sup>) Եբր. ԺԲ. 1—2.      <sup>2)</sup>) Գաղաւ. Ա. 1.      <sup>3)</sup>) Գաղաւ. Գ. 3—5.

յղեաց զայն, որ եթ' ոչ եղեւ ի կնոջէ, ոչ ևս գործեաց ընդ աւրինաւ, եթե մնաց որպէս էրն արտաքոյ, յայտ է | զի 301r. մարմնւոյ եւ արեան, այդ է հաւաստի թան. քանզի յԱստուծոյ Հաւրէ Բանն եղեւ ի կնոջէ ըստ մարմնւոյ՝ աւրինին Տէր իր Աստուած, եղեւ ընդ աւրինաւ, զի եղիցի եւ ճեղբայր, որք ընդ աւրինաւն. Քանզի այսպէս ի բաց առաք մեք զորդեզրութիւնն. իրը զի թե ոչ եղեւ ընդ աւրինաւ Որդին եւ ի կնոջէ, ոչ ևս եաք եղբարք ըստ բնութեանն Տեսան եւ Աստուծոյ. այդ վասն զի եղեւ, վասն այսորիկ զայս զինչս փարթամացաք. Խսկ ապացութիւն 10 առնէ իրին աստուածազանն Պաւզոս, ի վերայ բերելով վաղապէս. «Եւ զի էք Որդիք, արտաքս առաքեաց Աստուած զորի Որդւոյ իւրոյ ի սիրտս մեր, աղաղակել Արբա Հայր»<sup>1)</sup>; Խըր արդեւք ոդի ի կնոջէ եւ ընդ աւրինաւ Առուրը Հոգին, որով աղաղակել Արբա Հայր, եթ' ոչ Աս- 15 տուած Քրիստոս, մի ելով եւ Տէր:

### Առ Եփեացիս թղթոյն.

«Եզ Տէր, մու հաւատ, մի մկրտութիւն, եզ Աստուած եւ Հայր ամենեցուն ի վերայ ամենեցուն եւ ամենայնիւ յամենեսին. իսկ իւրաքանչիւրում մեզ տուաւ չնորհ ըստ 20 չափոյ ձիրին Քրիստոս. սակա որոյ ասէ՝ վերերթեալ ի բարձունս, | եղերեաց գերութիւն, ետ տուրս մարդկան. 301v. իսկ վերերթեալն զի՞նչ, եթ' ոչ՝ զի եւ վայրերթեաց. ի ստորագոյն մասունս երկրի վայրերթեալն ինքն է վերերթեալն, գեր ի վերոյ ամենայն երկնից, զի լրացուացէ զա- 25 մենայն»<sup>2)</sup>. Տէս ինձ դարձեալ, քանիս յայս բանի հաւաստագոյնս իսկ եւ յայտնապէս բացասել գիտացեալ եւ կարացեալ է. թե Քրիստոս եւ Տէր մի զըստ միաւորութեան տնաւրինականի անեցելոյ Բանին առ մարդկութիւն. Քանզի մի յերկոցունց Որդի ճշմարիտ. ապ' եթ' ոչ, իրը եզ Տէր 30 եւ իրը մու հաւատ կամ իրը մի մկրտութիւն. Քանզ՝ եթ' որդիք երկու, երկու ուրեմն ամեննեւին եւ Տեսարք, երկակ եւ հաւատ, եւ ոչ մի է մկրտութիւն. զի յժ հաւատացաք, կամ եթե յոյր անուն մկրտիմք. Այդ սակայն եզ Տէր, մու հաւատ, մի մկրտութիւն. նախայայտ ու- 85 րեմն, եթ' եւ մի Որդի, եւ թեաքտ իմանայցի եղեալ ըստ մեզ Մէնածինն. Ո՞վ իսկ բոլորովին վերերթեալն ի բար-

1) Գաղտա. Դ. 6.

2) Եփես. Դ. 6—10.

ձունս կամ և վայրերթեալն ի ստորագոյնս մասունս երկրի.  
 302r. ապաքէն ինք վայրերթեաց մարդկարար, քանզի վայրար-  
 կեաց զինքն ի կամաւոր թափումն եւ նուաստացոյց՝ եղեալ  
 ունկնդիր մինչ մահու. իսկ վերերթեաց աստուածապէս  
 5 ընդ մարմնոյն գեր ի վերոյ ամենայն երկնից, զի լրացուացէ  
 զամնայն:

Յառ Փիդիպեցիս թղթոյն.

«Խւրաքանչիւրք զայս խորհեցարուք ի ձեզ, որ եւ  
 Քրիստոսի Յիսուսի, որ ի կերպի Աստուծոյ ելով, հչ յա-  
 10 փշտակումն համարեցաւ զգովն հանգէտ Աստուծոյ, այզ  
 զինքն թափեաց՝ կերպ ծառայի առեալ, ի նմանութեան  
 մարդկան եղեալ եւ ձեւով գտեալ իբր մարդ, նուաստա-  
 ցոյց զինքն՝ եղեալ լուաւ մինչ մահու, իսկ մահու խաչի:  
 Սակա որոյ եւ Աստուած զնա գերբարձրացոյց, եւ չնոր-  
 15 հեաց նմա անուն, գեր ամեն անուն, զի յանուն Յիսուսի  
 ամեն ծունր կորասցի՝ երկնայնոց եւ երկնայնոց եւ  
 ստորեկրականաց). եւ ամենայն լեզու արտաքս խոստո-  
 վանեացի՝ եթե Տէր է Յիսուս Քրիստոս, ի փառ Աստու-  
 ծոյ Հաւր»<sup>1)</sup>, իմացիր, զի կերպին Աստուծոյ եւ Հաւր եալն  
 20 Աստուած Բան հչ յափշտակումն համարել ասէ զգովն հան-  
 302v. գէտ Աստուծոյ: Քանզի ունելով գոյն ըստ բնութեան | ի  
 հանգիտութեան Հաւր, թափեաց զինքն զկերպ ծառայի  
 առեալ, այս է մարդ եղեալ. եւ իբր զի ի տեսակի ըստ  
 մեզ գտեալ, նուաստացոյց զինքն. վասն զի եւ ինքն համ-  
 25 բերեաց զիսաչն. բարձրանալ ասէ զնա, տուեալ իսկ նմա  
 և զանուն, զգեր ամեն անուն. իբր զի և ամեն ծունր կո-  
 րանալ և ամենայն նմա լեզու արտաքս խոստովանել: Ի՞բր  
 արդեւք ի կերպի և հանգիտութեան Աստուծոյ՝ վայրար-  
 կեաց զինքն ի նուաստութիւն. իսկ բարձրանալ յետ այ-  
 30 սորիկ ասի. արդեւք ոչ նախսայայտագոյն զՔրիստոսին խոր-  
 խուրդ. քանզի Աստուած ելով բնութեամբ, եղեւ մարդ ի  
 նուաստութեան և փոքրավայելութեան եղեալն ըստ մեզ,  
 յիւրն փառս վերաբուսանի և ընդ մարմնոյ և վայել իցիւ  
 իսկ բարձրանալ տնաւրէնութեամբ և հչ իսկ ամենեին նո-  
 35 վին բնութեամբ Բանին: Միի ուրեմն ապա Քրիստոս և  
 Աստուած ներմարդութեան և մարդկութեամբն գոլով՝ որ էր:

Առ Կողսացիս թղթոյն.

1) Փիլիպ. Բ. 5—11.

«Գոհանալով ասէ Հաւր՝ բաւականս արարաւզին զմեզ  
ի մասն վիճակի սրբոցն ի լոյս, որ փրկեաց զմեզ յիշա-  
նութիւնէ խաւարի և փոխակացոյց ի թագաւորութիւն  
Որդւոյ սիրոյ իւրոյ. յորում ունիմք զ' ի բաց փրկանաւո-  
րութիւնն զթողութիւն մեղաց մերոց, որ է պատկեր Աս-  
տուծոյ անտեսանելոյ, նախծին ամենայն արարածոյ, զի  
նովաւ շնուցաւ ամենայն զ' ի յերկինս և զ' ի վերայ երկ-  
րիս, տեսանելիք և անտեսանելիք, եթ' աթոռք, եթե տէ-  
րութիւնք, եթե սկզբունք, եթ' իշխանութիւնք, ամենայնք  
նովաւ և ի նմա շինուցաւ, և ինքն է նախս ամենայնի, և ա-  
մենայն նովաւ բազկացաւ. և ինքն է գլուխ մարմնոյ եկե-  
զեցոյ, որ է սկիզբն, նախծին ի մեռելոց, զի եղիցի ամե-  
նայնիւ ինքն նախացեալ, զի ի նմա հաճեցաւ ամենայն  
լրումն բնակել և ինքեամբ ի բաց հաշոեցուցանել զամե-  
նայն յինքն, խաղաղադործեալ ի ձեռն արեանն իւրոյ, 15  
եթե զ' ի վերայս երկրի, եթե զ' ի յերկինսն»<sup>1</sup>. Ահա դար-  
ձեալ պատկեր Աստուծոյ անտեսանելոյ ասէ զնա և շնիլ  
նովաւ զաթոռս և զպետութիւնս և իշխանութիւնս | (և 303v.  
տէր)ութիւնս. հաստատէ հաւաստապէս և ի նա զամե-  
նայնսն և ի նմա բազկանալ ասէ, և զնա գոլ գլուխ մարմ-  
նոյ եկեղեցւոյ և նախծին ի մեռելոց: Ո՞վ արդեւք է պատ-  
կեր Աստուծոյ, շինիչն բոլորեցուն, եթ' ոչ ինքն Մէնածին  
Աստուծոյն Որդի, որ և եղեւ նախածին ի մեռելոց, իբր  
մեռեալ մարմնով իւրով, և հչ ևս առաւել այդոյ ուրուք:  
Մի ապա ուրեմն Քրիստոս և Որդի և Տէր:

25

## Առ Սբրայեցիս քղբօյն.

«Յոքնամասնաբար և յոքնայեղանակապէս վազ Աս-  
տուծ խաւացեալ հարանց մարգարէի(ւ)քն, ի վերջինս  
աւուրցս այսոցիկ խաւացաւ մեզ Որդւով, զոր եղ ժա-  
ռանզիչ ամենայնի, որով եարար զյաւիտեանս»<sup>2</sup>: Բնու-  
թեամբս բոլորեցուն Տէր ընդ Աստուծոյ և Հաւր Մէնա-  
ծին նորա Բան հաւատանայ, քանզի դնի ժառանգ, յոր-  
ժամ եղեւ մարմին. քանզի ասացեալ է առ նա՝ իբր ըստ  
մեզ մարդ եղեալ վասն մեր վերագոյնն բնութիւն. համ-  
բերեաց իսկ և զնաչ, խաչին կարացեալ իւր գործեալ 35  
մարմին, և ինքն խաչեցեալն նստաւ յաջմէ Աստուծոյ և  
Հաւր: Մի ուրեմն ապա Տէր Յիսուս Քրիստոս, | խաչե-  
304r.

1) Պազա. Ա. 12—20.

2) Եղբ. Ա. 1—3.

ցեալ ահա մարդաբար, իսկ գահակցեալ աստուածապէս Հաւը:

Առ Տիմոթեոս Առաջին քրիստոնութեան:

«Հաւատարիմ բանս և յաղագս այսոցիկ կամիմ զքեզ 5 հաստատապէս ասել, զի խնամնացեն բարեաց գործոց առաջակացեալ հաւատացեալքն Աստուածոյ»<sup>1)</sup>: Արդեւքն յԱստուած հաւատացեալքն հչ ի Քրիստոս հաւատացին. և այն զի ասելով գտանի հաւատապէս երանելին Յովաննէս յաղագս նորա. Շիսկ որք ասին զնա, ետ նոցա իշխանութիւնն ընունեած Աստուածոյ լինել, հաւատաւղացն յանուն նորա»<sup>2)</sup>: Եւ սակայն աստուածազանն գրէ Պաւոս՝ զիտելով զի ոչ արդարանայ մարդ ի գործոց աւրինի, եթ՛ ոչ ի ձեռն հաւատոյ Յիսուսի Քրիստոսի. Եւ մեք ի Քրիստոս Յիսուս հաւատացաք, զի արդարանայցենք նովաւ<sup>3)</sup>: 15 Յորժամ այսուհետեւ Աստուածոյ հաւատայցեն, որք զՔրիստոսի հաւատն առաջածեն, իբր ոչ իցէ Աստուած ճշմարտապէս Որդին:

Ահաւասիկ այսքանիցս և այսչափոց սրբոց և իմաստնագունաց հարանցն յոլովս եղաք վկայութիւնս, առ հաւատարմութիւն և հաստատութիւն խոնաւղացն ուղղապէս 304v. յաղագս միոյ | Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, առ պատկառութիւն և յորդորումն ապաշխարութեան ամպարշտաբար բաժանաւղացն զնա, ի ձեռն մնածայնութեան աղանդոյ երկուց բնութեանցն, որպէս նախաժամանեսցեն զդէմս 25 Աստուածոյ արտաքս խոստովանութեամբ և արժանաւորաւք պտղովք ապաշխարութեան, նախ քան զգալ աւուր կորստեան նոցա. զաւք կորստեան\* և հարկաւորութեան, յորժամ ոչ ընչիցն գանձք աւգտել զոք. կարեն, և ոչ անոք պտղոցն, քանզի, անիսհ, ասէ, յայսմ զիշերի զանձն քո 30 հայցեն ի քէն. իսկ զորս պատրաստեցերն ում լինիցի»<sup>4)</sup>:

Լուսանցքում՝ «Եղանակներ».

<sup>1)</sup> Հեղինակը ոկներկ կերպով սխալուել է. այս վկայութիւնը գտնեսմէ Յիսոս Պ. 8.                   <sup>2)</sup> Յովհ. Ա. 12.                   <sup>3)</sup> Գաղտա. Բ. 16.                   <sup>4)</sup> Հաւկ. ԺԲ. 20.

Այսպէս գանձիչն իւր և ոչ յԱստուած փարթամանալով  
ուղղափառ հաւատով և բարեգործութեամբ, «Զինչ իսկ  
տացէ, ասէ, մարդ փոխանակ անձին իւրոյ»<sup>1</sup>. յորժամ  
փակեսցէ փեսայն և պատասխանիցէ առ փակիցեալան.  
«Ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ զիտեմ զձեղ ուստի էք և ոչ 5  
երբէք ծանեայ զձեղ. հեռացարհէք յինէն գործաւնք անաւ-  
րէնութեան յաւիտենական տանջանան, ուր է լալումն և  
կրծումն աշտամանց»<sup>2</sup>: Քանզի այսպէս ուրասցի Տէր 30Եր.  
առաջի իւրոյն Հաւը ի հանդերձելում յաւիտենին և ա-  
ռաջի երկնայնւոյ տեսլարանի հրեշտակացն և հրեշտակա- 10  
պետաց և ամենայն սրբոց՝ զուրացողան զնա ի յաւիտենիս  
յայսմիկ, եթե սակա խոշտանգանաց, եթե սակա առ ժա-  
մայն փառաց մարդկան, որ իրը ծաղիկ խոտոյ ամենայնն  
է և այսպէս անցանէ չորացելոյ խոտոյ և ծաղկին ի վայր  
անկելոյ»<sup>3</sup> և դատաստանին յաւիտենապէս տանջաւղի զայս- 15  
պիսիսն:

(Հ) աւանեսցուք այսուհետև և սրբոց առաքելոցն  
և սոցուն հարազատաց, աշակերտաց և վարդապետաց  
սրբոյ եկեղեցւոյ: Քանզի ոչ ինքեանք եին խաւառղքն, այդ  
Հողին Հաւը մերոյ և Աստուծոյ խաւանցաւ. նովաւք: Իսկ 20  
վարդապետութեան Հոգւոյ Սրբոյ ոչ հաւանողն հայնոյէ  
զՀոգին Սուրբը և անգոսնէ գՔրիստոս, հանդերձեալն դա-  
տել զկենդանիս և զմհուեալս. և զասաւղն՝ «Լսաւղն ձեղ  
ինձ լսէ և անգոսնիչն զձեղ զիս անգոսնէ»<sup>4</sup>, և ոչ ընկալցի  
զթողութիւն այսպիսին՝ | ոչ յաւիտենիս յայսմիկ, և ոչ ի 25 30Եր.  
հանդերձելումն»<sup>5</sup>:

---

Արդ՝ աղաւթեմք առ Աստուած, զի բարեխաւառու-  
թեամբ սրբոց անքոյթացեալք աջովն Աստուծոյ, մինչ ի  
վերջին հագագն զուղղափառն պահնացուք հաւատ և զու-  
րացաւղն զՏէր մեր Յիսուս Քրիստոս զՓրկիչն նէրզրա- 30  
բար, ապաշաւելով Աստուծոյ վայելչապէս ի յաւիտենիս

<sup>1)</sup> Մարկ. Ը. 37.

<sup>2)</sup> Մատթ. է. 23., հմմա. ին. 41. և

Ղակ. ԺԴ. 27—28.

<sup>3)</sup> Խոյիկ. Խ. 6—8.

<sup>4)</sup> Ղակ. Ժ. 16.

<sup>5)</sup> Մարկ. Զ. 29.

յայսմիկ, զի ամեններեան փախուցեալք զյաւիտենականն տանջանս, երկնից թագաւորութեանն արժանաւորիսցուք Քրիստոսիւ Յիսուսիւ Տէրամբ մերով, որով և ընդ որում Առողջոյ և Հաւը փառք, հանդերձ արբոյ և կենարար և Հոգւովե, յաւիտեանս յաւիտենից ամէն:



Յաղազս մին գոլ զՏէրն մեր եւ զԱստուած Յիսուս Քրիստոս իւրով մարմնովն եւ նմա առբաշխել զամենայն զաստուածավայելուչս եւ զմարդկայինս, եւ զի նումագոյ մեզ եղեալ ըստ  
<sup>10</sup> մարմնոյ, մնաց եւ այսպէս Աստուած, եւ յերկուս բնութիւնս բաժանել զնա ամպարիս. յորում եւ հականառական զայնցանէ, որք ի տօմսէն Պեովնի հայինոյութիւնն եւ զամպարցութեանց սահմանին ի Քաղկեդովնի եղելոյ ժողովոյն:



## (Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Ծ Ք)

Ա.

Երանելւոյ Դիոնիսեայ եպիսկապոսապետի Ա-  
ղեսանդրեայ՝ յառ քազուինին թղթոյ, ընտրութիւնն  
յաղազս՝ ապացութեան եռաւրեայ յարութեանն  
Տեսոն, եթե նշմարիս է Տէրն. |

«Եւ եղն երեկոյ և եղն վաղորդայն աւր միշ<sup>1</sup>, Եւ հար- 5 306r.  
ցանեն՝ նախ աւր եղն կամ գիշեթ»:

Արդ՝ արագապէսն առ ոտս անկեալ և նախայայտեալ  
ուղղապէս համարեցար. քանզի նախկին գոլ գիշերիոյ թաւի  
աւրն ի սովորութեան իսկ. լնանիլ ասեմք զաւրն ի յերեկոյն  
և կատարումն գիշերոյ լինել զառաւաւտն. Եւ սակա այսու- 10  
րիկ թերես և Յովի փութալով սակա գարածոցն զանջատ-  
մունս ամանակացն առընթանալ՝ «Եթե ննջեցից, ասէ,  
ասեմ՝ Երբ աւրն. իսկ եթե յարեայց, դարձեալ՝ Երբ երե-  
կոյշ<sup>2</sup>. իբր ուրոտ իմն ելով գերեկոյն աւուրն, և դադարել  
զգիշերն՝ երևելոյ աւուրն, որ է վաղորդայն. Եւ ահա ան- 15  
դուստ իսկ ըստ դրութեանն հետեւթեան նմանն երեի.  
քանզի յնա ասելոյն զԱստուած՝ «Եղիցի լոյս», և լինելն  
և կոչիլ ի նմանէ նախ զլոյսն աւր, իսկ ապա խաւար  
գիշեր, ի վերայ եած՝ իբր կատարեցելոյ աւուրն, զ'ն եղնն  
երեկոյ և եղն վաղորդայն<sup>3</sup>. Եւ ահա և զերկախումբն պա- 20  
րառեալ՝ կատարեաց աւր մի՛: Քանզի և վայելչական գոլ  
ասէ ոք զդործաւորութեանն ժամանակ կոչիլ աւր, իսկ 306v.  
զմնացորդն և զդադարումն գործոյն ասիլ գիշեր. որպէս և  
Տէրն մեր եասաց. «Ճձեզ պարտ է զործել զործս առաքչին  
ձերոյ՝ մինչ աւր է. գայ գիշեր, յորժամ ոչ ոք կարէ զոր- 25  
ձել»<sup>4</sup>:

<sup>1</sup>) Ենեկ. Ա. 5.

<sup>2</sup>) Յովի. Է. 4.

<sup>3</sup>) Ենեկ. Ա. 3—5.

<sup>4</sup>) Յովի. Բ. 4.

## Եւ յետ սակաւուց.

Քանզի միշտ նախ անուանի աւրն, որպէս յառաջ Աստուած եասաց առ նոէ. «Զաւր և զգիշեր հչ դադարեացեն»<sup>1</sup>. կամ զսկիզբնն արեգակն զիւրոյ պարուղութեանն արաբեալ յարեմտից և եզրացեալ յարենելս, ապա դարձ արշաւէ, որպէս սազմուսերգակն նախ եասաց. «Արեգակն զիւրաց զմուտ իւր. եղիր խաւար, և եղն զիշեր. իսկ յետոյ վերածեաց ծագեաց արեգակն»<sup>2</sup>:

Արդ՝ եթ՛ ի նախասացելոցն նախընթաց գոլ զաւրն  
10 զիշերի հաւատասցուք, երկրայութիւն, որպէս զբեցեր.  
կացի ինդրոյդ պատճառ: Քանզի ասեմ հարցանել սակա  
եռաւրեայ զխորհուրդ յարութեան սիրեցելոյն. քանզի ոչ  
իս յերրորդում, այդ յերկրորդում թուեսցի նախայառնել.  
307r. զի թե մեռաւ ի կազմութեանն \*, իսկ ի հետ սորայն յարեաւ  
15 ի սարբատումն՝ յետ նորին զիշերւոյն. ընդ նմա համար  
բեցելոյ:

## Եւ յետ սակաւուց.

Արդ, սկսեալ ոք աստանաւր՝ ամենեցուն նախասացելոցն հակածառէ, և ամենէքեամ մեք, ասեմք, այս է ամեն-  
20 նայն եկեղեցի Աստուծոյ՝ ի սրբոց առաքելոցն սկսեալ  
վկայէ, զի ոչ անցելոյն, այդ ի վերայ եկելոյ աւուրն մասն  
է զիշեր, և բաժանեալ ի նախնէ քան զնայն, իսկ լծակ-  
ցեալ յետ քան զինքն. քանզի Երբ սպասաւորի և ում  
զիւրն գործ, որպէս զժխոյի՝ առբերէ. եթ՛ անցելոյն և նա  
25 զիւրն գործ նախ վերադրէ, պարտ էր մեզ տանել զսաբ-  
րատն, իբր յարուցելոյ ի նմա Տեառն. քանզի յարեաւ  
ի սորա զիշերին. եթ՛ ի նորա՝ յետ նորայն: Իսկ այժմ  
զայս հրեից թողաք, և մեզ աւանդեցին ինքնատեպն և  
ինքնալուզ Տեառն՝ ի միասաբատումն զուարձանալ. քան-  
30 զի ի նա և ի նմա զԾէրն մեր պատմնցին մեղ յարուցեալ.  
և այսպէս ներփառական առասութեամբ պատուեցին՝ կիւ-  
րիակէ անուանելով, որ է տերունական:

## Եւ յետ սակաւուց. |

307v. Այսպէս իսկ և հրեայք՝ մտելոյ արեգական ի կազմու-  
35 թեանն, առընթեր գոլ ասեն զսաբրատն և զիշերային հան-

Լուսանցքում՝ «ի վեցերդին».

<sup>1)</sup> Եննդ. Ը. 22.

<sup>2)</sup> Սոլդ. Ճ. 19—20.

գըստեան նախ ի կիր առնուն զարբատական դատարկութիւն։ քանզի և ոչ հուր նոցա այրել յաւուր սաբատացն հրամայի. իսկ զաւրն զնախագնացելոյ գիշերւոյն արտաքս ունել, զոր ի ներքս ածէ նախ քան զնա երեկոյն. Քանզի նոցայն հանգիստ դադարեաց՝ ամենասպութիւն նոցա ընդ 5 տաւնի եղեալ, զի ծածկեցաւ իսկ ի նմանէն Տէրն՝ մնացեալ բոլորովին ի սրտի երկրի, և ոչ յարուցեալ ի նմա, զի միասարբատուն ի վերայ ծագելով տիրականագոյն զնա և ճշմարտագոյն մեզ տաւն շինիցէ. Եւ ամենայն իսկ մարդիկ զառաջիկայն գիշերս վերաբերեցելոցն շարամանեն, և զգի-10 շերային իրս յարակցելոց աւուրցն սահմանեն. այսպէս ծնելութիւնս, այսպէս մահուանցն տարեորա, այսպէս տաւնական ենթադրութեանցն յիշատակս կատարեն։

Զի՞ ես ի հասարակութենէ ազգի (?) և յաւանդութենէ- 308r.  
նէ հրեիցն յանդրանկան սովորութեան զսա հարստեցուցա- 15  
նեմք. Ո՞չ միայն այս, այդ բաւական սորա վարդապետ մեզ բուժիչն Աստուծոյ Մովսէս՝ որով և զաշնարհի ծնելութիւնն մեզ յայտնեաց. քանզի հաւաստապէս յերեկոյէն մինչև յերեկոյն պարագրեալ զաւրն զեկոյց, յորում յաղագս ախտականին աւրինադրէ. «Բանզի ի սկսանել, ասէ, չո- 20  
րեկտասաներորդի ամսոյն առաջնոյ, յերեկոյէ ուտել ան- խմոր, մինչև յաւր մի և քսաներորդ ամսոյն մին երեկոյ. յեւթն աւուրն խմոր ոչ գտցի ի տունս ձեր»<sup>1</sup>. իսկ եւթն են ի հնգետասաներորդէն մինչ ի քսաներորդն. Յայտ ու- րեմն, զի հնգետասաներորդն զակիզբն առնոյր յետ չորեք- 25  
տասաներորդի երեկոյին. իսկ մի և քսաներորդն յանգիւր յետ քան զինքն՝ նախ քան զգիշերւոյն ի վերայ եկելոյ երե- կոյին. Եւ չորեկտասաներորդն ոչ էր անխմորիցն, այդ զե- նանիւր ի նմա ոչխարն, ոչ երեկոյի. քանզի | ոչ էր ի նմա- 308v.  
նէն երեկոյն, այդ յաւելեցելոյ երեկոյին, որպէս և գրեալ է. 30  
Եւ զենցեն զնա ամենայն բազմութիւն ժողովոյն որդւոցն Իսրայեղի առ երեկոյն»<sup>2</sup>. Ապա ամենեին բաւականի ան- ջատման եղելոյ, յորում յայնժամ զարիւնն դնեին ի վե- րայ բարաւորացն և սեմոցն, մորթեին իսկ և կազմեին զնա. և որպէս ի վերայ եած՝ «Կերիցն զմիսն յայսմ գիշերի խո- 35  
րովեալ հորով, անխմոր ի վերայ դառնձի ուտիցեն»<sup>3</sup>. իսկ առաջին անխմորիցն էր հնգետասաներորդն յերեկորեայ և գիշերւոյն սկսեալ, որպէս և դարձեալ ասէ. «Եւթն աւուրսն

1) Եց ԺԲ. 18—19.

2) Եց ԺԲ. 6.

3) Եց. ԺԲ. 8.

անխմբը ուստիցէք և յաւրէն առաջնմէ անյայտիցէք զիսմբն ի տանց ձերոց՝<sup>1)</sup>

Եւ յետ սակաւուց ի Ղեւականեն.

«Յառաջնուում ամսեանն՝ ի չորեկթասաներորդում ամ-  
5 սոյն, ի մէջ երեկորեացն ախտական Տեառն, և ի հնգետասա-  
ներորդէ ամսոյս այսորիկ տաւն անիմորից Տեառն, եւթն  
աւուրս անխմոր ուստիցէք»<sup>2)</sup>: Եւ որպէս ասաց յԵլսն. «Ձեն-  
ցեն զնա առ երեկո», զայտ յայսմ տեղւոջ սարասեաց ասե-  
309r. լով՝ | ի մէջ երեկորնայ, վասն զի ոչ ի կատարելոյ, և ոչ ի ծայր  
10 երեկորին, այդ ի միջոցի հրամմնին ախտականն զենանիւր,  
զի ի նմանէ տաւն անխմորիցն կոչեսցի հինգետասաներորդն  
և գիշերւոյն անդէն մտելոյ ուստից:

Եւ յետ այդոց.

Իսկ եթե ոք կարծիցէ վախճան և մասն վերջին գոլ  
15 աւուրն զերեկոյն յաղագս ասելոյ ախտականին զեւթնե-  
րորդն մինչ յերեկոյ, մտածեսցէ. զի և զառաջինն եասաց  
յերեկոյէ իբր գոլ նախսկին ծայրական զերեկոյն աւուրն և  
զամմնայն զոյգս, հարկ է և չափաւորս իրերաց գոլ զբար-  
դեալսն յաւուրց և գիշերաց աւուրս եւ սկիզբնակցու-  
20 թիւն նոցա գոլ մի և զնոյն կատարումն աւանդել. իսկ մի-  
մանց անփոխարար (?) զահմանհալս պարաբերեցելոցն ժա-  
մաղրութիւնա. Մի ուրեմն երեկոյ և մի վաղորդայն և մի  
միջաւրեայ և մի միջագիշեր իւրաքանչիւր պարունակէ:

Եւ յետ այդոց.

25 Քանզի այսպէս իսկ և եռաւրեայ խորհուրդն Տեառն  
309v. մերոյ յարութեանն թուելի է. յառաջագոյն | ուսոյց իսկ ա-  
շակերտաց իւրոց, եթե պարտ է զնա յԵրուսաղէմ երթալ  
և բազում ախտանալ յերիցանցն և ի քահանայապետից և  
գրաւորականաց, և մեռուցանիլ և յերրորդ աւուր յառնել՝<sup>3)</sup>  
30 եղեւ իսկ յետ իններորդի ժամուն, յորում մեռաւն՝ մնա-  
ցորդք կազմութեանն աւր մի, իսկ սարբատուն աւրագի-  
շերն բոլորովին երկրորդ. իսկ երեկոյ սարբատուն, որպէս  
Մատթեոս եասաց՝ յառ լուսանալ ի մին սարբատուց՝<sup>4)</sup>, և  
յայսոսիկ զեկոյց յաւրէն վերայիշացելոյ նմա զգիշերն լու-  
35 սաւորիլ, այդ ոչ զաւրն ի գիշերւոյն՝ ժամանեցելոյ նմա

1) Ելք Ժ. 15. 2) Ղեա. Ի՞ն. 5—6.

19., Մարկ. Ժ.33—34. Ղեա. Ժ. 31—33.

3) Մատթ. Ի. 18—

4) Մատթ. Ի. 1.

խաւարանալ. ի գիշերին ծայրէ երրորդն եղև աւր, յորում ըստ յառաջասացութեանն նորա, Տէրն մեր յարեաւ:

իսկ որ ասէ սակս լինելոյ ի վեցերորդ ժամէ մինչ յիններորդ խաւարն ի գիշեր առնեալ երիս աւուրս և երիս 5 գիշերս եղանիլ, մասն իմն և այն աւուրցն ի կատարեալ աւուրս համարէ, քանզի զկազմութիւնն բաժանելով զմինչ ի վեցերորդ ժամն, իբր բոլորովին կատարեալ արտադրէ. | իսկ 310r. զյիններորդէ ժամէն իբր զյերկրորդ և որ սոցայն է կազմութիւն, և է սարբատ. քանզի ոչ երկու ըստ միոջէ աւուրք լի- 10 նին կազմութիւն, կամ երկու սարբատք. և զմին ճշմարիտ գիշեր գիտէ, իսկ զմիւսն ոչ եալ առդնէ. քանզի ախտ իմն նշանական և սուգ իբր աւուր այն եղև խաւար, մրայն ոչ ծածկեցելոյ և սիութեամբ աւթացելոյ ի վերայ եղեկոցն արեգական. իսկ գիշեր ոչ էր ներթուական, իսկ եթ' և 15 աւտար և աւելորդ ասացի գիշեր, անլուսին էր և անաստեղաւոր, և սակս այսոցիկ այլոց գիշերաց ոչ համարակցի: իսկ եթե յետ կազմութեանն է սարբատ և յետ սորամին սարբատաց լցեալ է, յայտ եթե մինչ վեցերորդ ժամու յա(j)նժամ կազմութիւնն, իսկ յետ իններորդին եկն սար- 20 բատն և մի սարբատացն եղև սարբատն, և մին սարբատացն յերկրորդն բռնադպատեցաւ և իբր զնա տակաւին տերունական տաւնեմք, և խառնեցաւ յայտ եթ' աւուրցն և թիւ և կարգաւորութիւն, ներանկեցելոյ աւելորդին աւուր: | Սյդ այսոքիկ անբանագոյնք. ընդէր իսկ ոչ զամենայն 25 310v. զարեգակնային պակասութիւնն գիշերս եասացաք, զի ե(ւ) թեպէտ տարաբանագոյն և զբանչելագոյն միջեցելոյ ամսոյն և ի յամենալուանութեանն պակասեաց յայնժամ, որ է անկարելի, որպէս սոցայն արուեստաւորք ասեն գոլ լինել: Քանզի սովորականին համեմատութեան յուղեկցութեանն 30 միայն զայս երբեմն պատահել. քանզի ստորանկեցելոյ և ստուերացուցչի զճառադայթման իբր առ մեզ լուսնւոյ, և թեպէտ երկարագոյն եղև այն, երից ժամուց ունելով երկարութիւն, և խորագոյն ի նմա եղև խաւար, այդ ունակք այդք լայնագոյնք եղեն պակասութիւնք, յորս և աւզս խըրթ- 35 նացաւ և աստեղք իբր ի գիշերի երևեցան, և ոչ ի միում գիշերացն ներդասեալ Եւ զի մի էր աւըն և խաւարն ի նմա եղեալն և լոյս նորա, մարգարէացաւ Զաքարիաս. «Յայնմ աւուր ոչ եղիցի լոյս և ցուրտ և սառնումն եղիցի, զմին աւր, և աւըն այն ծանաւթական Տեառն, և ոչ աւր (և ոչ) 40 311r.

գիշեր \* և առ երեկոյն եղի(ցի) (լոյս) »<sup>1</sup>: Եւ զի բոլորովին հաւաս(արեցաւ իւաւ?)արն մահուան երից աւուրց, քանզի տակաւին իւր կենդանւոյ ի վերայ փայտին եղեւ խաւար. քանզի սեսուեցաւ ի ժամուն երրորդի, որպէս ճշգրտեաց 5 Մարկոս. «Էր իսկ, ասէ, ժամ երրորդ, և խաչեցին զնա»<sup>2</sup>. Բաղաձայնաբար իսկ և երկեւան եասացին աւետարանիչքն՝ զիսաւարն ի վեցերորդ ժամէն մինչ յիններորդն եղանել<sup>3</sup>, և յայնժամ զԾէրն գոչելով զհոգին աւանդել:

### Եւ յետ սակաւուց.

- 10 Անհաստատի ահա այսորիկ ոյք երեք աւուրք գիտելի զարատն ունիմք յայտնապէս՝ զիշերիւ և աւուրք լրացեալ. զի որպէս նախասացաք առ յանդիմանութիւն և նախատանս հրեիցն, զտաւն նոցա առաջադրեաց զամենայն եղանել մահազգեստ. իսկ երկաքանչիւրոց աւուրցն մահ յա-  
15 բակցեաց և զմին ի մասանէ աւուրն, իսկ զմիւն ի մասանէ գիշերւոյն յամբողջ(ու)թիւն աւուրն ընկալաւ, իբր զի  
311v. և յաւուր զիշերւոյն զաւրութեամբ նախ | .... \*\* և զիշերւո-  
ջըն .... \*\*\* նելի յաւուրն. քանզի յա ..... \*\*\*\* մասնն է և ամենն, բազում անզամ ի մասնէն անուանի. զի և ի ներքս  
20 ոք միայն քաղաքի դրանցն ներսրթեալ՝ ներքս եկն ի քա-  
ղաքն, և նաւի վերելեաց ոմն՝ զնախավլիզն կոխելով, և զմի ոք եգանց պատուէր՝ զանցաւոր եղեւ աւրինին. ի ժամու իսկ ծննեալ միում, զաւրն ածեմք ծննեական, և առ դոյզն ինչ իրակեալ՝ յաւուրն ասեմք արարեալ. իբր զի ասեմք  
25 ի քառի և տասներորդի զենանիլ զախտականն, որ առ ի մուտս զենանի, և լոց ուրեմն յիրարս և ընդ իրարս գիշե-  
րեաց և աւուրց: Այսպէս ասեմք և զՅովնասայ տարացոյց լուուլ զԾէրն՝ երիս աւուրս և երիս զիշերս ի սրտի երկրի սրբարեալ:



\* ) Այս և հետեւալ թերթերի վերին ծայրերը ցեցակեր են, ինչպէս և մի քանի թերթերի մէջերը.      \*\*) Մի եղծուած բռու.      \*\*\* ) Նոյնպէս.      \*\*\*\* ) Նոյնպէս.

<sup>1)</sup> Զաք. ծԴ. 6—7.      <sup>2)</sup> Մարկ. ծԵ. 25.      <sup>3)</sup> Մարկ. ծԵ. 33., Մամթ. հէ. 45., Ղուկ. դՊ. 44.

## Բ.

Երանելոյ Յովաննու ի համառաւտագունիցն  
որ յառաքեալ, յաղազս յարութեան մեռելոց.

«Ճի մեք կենդանիքս մնացեալքս ի գալստեան Տեառն  
ոչ ժամանեսցուք զննցեցեալոն»<sup>1)</sup>. Իբր զի, ասէք, մի կար-  
ծիցես խարէութիւն իմն գոլ, Աստուած է արարաւղ | կեն- 5 312r.  
դանիքս յայնժամ զքակտեալմն՝ զբեւը ամս ունաւղսն ևս  
վաղահասեսցեն. այդ որպէս գեւրադոյն զնոսա զկամս .....\*  
ածել, այսպէս և զքակտեալոն: Այդ են ոմանք որք անհա-  
ւատանան իրիս, իբր զի զԱստուած ոչ զիտացին. զինչ իսկ,  
ասս ինձ (?), դիւրագոյն յոչն էութենէ ի գոլն առածել, 10  
եթե զլուծեալն յարուցանել դարձեալ: Այդ զինչ ասեն. այս  
անուն, ասէ, նաւակոծութիւն համբերեաց և ընկղմեցաւ. և  
անկեալ՝ զնա բնկալան ձկունք բաղումք, և ձկանցն իւրաքան-  
չիւր անդամ կերաւ. ապա սոցուն իսկ այսոցիկ ոմն յայսմ  
գոգի, իսկ ոմն յայսմ ըմբռնեցաւ, և ծախոցաւ ի միւսմէ, և սա 15  
յայզմէ զմարմին ունելով պարենացեալ. և այսոքիկ դարձեալ  
յայդ գաւառս մեռան, և ստքա թերես ի գազանաց, որք զձը-  
կունան կերան՝ զառն ծախաւդ. այսքանւոյ խառնութեանն  
և զելոյ և ցանութեան՝ իբր դարձեալ (յար)իցէ այրն, և հողոյն  
ածաւդ: Ե՞րում իսկ և զայս ասես, հիլ մարդ, և շարս աղճա- 20  
տականս հան ...\*\*| որպէս անկարելի դնես. քանզի թեպէտ 312v.  
ոչ ի ծով անկաւ. և ոչ ձկունք կերան, և մի՛ ծախեսցի դար-  
ձեալ (?) ձուկն ի բիւրուց մարմնոց, այդ պատզբեալ ի զզրոցի  
դիցի այրն և մի՛ որդունք և մի՛ այդ ինչ վտանգեսցեն, իբր  
յարիցէ լուծեալն, իբր փոշի ներմտեալն (?) մածցի առ ի- 25  
բեարս, ուստի ծազիկն եղիցի յետ այսորիկ մարմնոյն, և այս  
ոչ անհնարին: Եթե հեթանոք իցեն, որ զայս տարակու-  
սանան, առ նոսա բեւը ասեմք՝ ընդէր իսկ արդեւք (?), վասն  
զի են առ նոսա, որք զանձինս և ի բոյս և ի թուփս ածեն  
և ի շունս. ասա ինձ, զինչ զիւրագոյն՝ զիւր մարմին առ- 30  
նուլ, եթե զաւտարին: Այդք դարձեալ ասեն ի հրոյ ծախիլ  
և հանդերձիցն յարութիւն եղանել, և ոտիցն զգեստից և  
ոչ .....\*\*\* նին, այդ քան հատս ասեն. այդ առ նոսա և ոչ մի

<sup>\*)</sup> Մի եղծուած, բառ.      <sup>\*\*) Մի կտմ երկու բառ եղծուած.</sup>

<sup>\*\*\*)</sup> Մի բառ եղծուած.

<sup>1)</sup> Ա. Թեսող. Դ. 14.

- մեզ բան.** իսկ առ հաւատացեալս պարտ խաւա(Ալ), որք հարցանեն: Սակայն ասեն (?) զ.... լականն, եթ՛ ամենայն կենդանութիւն յապականութիւն լինի, ամենայն բոյսը և ամենայն սերմանիք, ոչ տեսանի (?) | թղենին՝ որչափ ու-  
**313r.** 5 նի ....\*, որչափ ստեղունս և սաղարթս, քանիւնս ոստա, արմատս այսքան վերունելով և գոգացեալս (?). այս այսու- հետեւ այսչափս, այսպիսիս ի կորեկանէ յայնմանէ լինի՛ ի վայր արկեցելով, և նորա ապականեցելոյ նախ. և եթ՛ ոչ փոտեսցի և լուծցի, ոչնչ այսոցիկ եղանի: Ասա ինձ, ուս-  
10 տի՞ այս լինի, և այգի իսկ այսպէս գեղեցիկս և տեսանել և ընդունելի ի թճէն լինի նորա: Զինչ իսկ, ասա ինձ. ոչ ջուր է մի (?) ի վերուստ վայր եկեալն. իբր յայսքանս փո- խարկեալ լինի. այս ահա քան զյարութիւն պամչելագոյն: Քանզի անդ և նոյն սերմն և նոյն առաջիկայ բոյս, և աղ-  
15 գակցութիւն բազում. իսկ աստանաւր, ասա ինձ, իբր մի ունելով որակութիւն և մի բնութիւն՝ յայսքանւոյ եղանի. յայգւոջ լինի գինի. ոչ գինի միայն, այդ և մնացորդն այգւոյ նովաւ բուծանին. ի ծիթենւոջ ձէթ և այդք որ- քանք. և հրաշագոյնն աստանաւր խոնաւ, անդ չոր, աս-  
20 տանաւր քաղցր, անդ սուր (?), այդուր թթու, ի միւսում  
**313v.** դառն. | իբր, ասա ինձ, յեղանի յայսքանս: Ասա զրանն, այդ ոչ ևս ունիս .....\*\* ինքեան, ասա ինձ. քանզի մաւ- տագոյն այս սերմնս վայրարկեալս. իբր յաշս, իբր ի ձեռա, իբր ի սիրտ, իբր յայսքանս պատկանի և գաղափարի. ոչ 25 բեւր զանազանութիւնք ի մարմնի՝ ձևոցն, մեծութեանցն որակութեանցն, գրութեանցն, կարութեանցն, յարմարա- նացն՝ ջիղք և երակք և միս և ոսկերք և միզն և հագա- գապահք և յաւդք և խաղճունք, և որքան այդք սոցին յոլովք ճշգրտարանեն մանկունք բժշկացն, զմերս շարունակէ բնու-  
30 թիւն, և այս ի միոջէ սերմանէ: Արդեւք ոչ յոլովագոյն գոլ քեզ թուի սոցայն գոլ տարակուսանք. իբր խոնամն և գողտրն և չոր և խոշոր մածանի ոսկերն. իբր ի ջերմ և խոնաւ միա- ցեալ, իբր ի ցուրտ և ի գողտր ջիղն, իբր ի ցուրտ և ի խոնաւ չնչապահն. հւատ այս, ասա ինձ: Զայս ոչ տարակուսանաս,  
35 հչ տեսանես ըստ իւրաքանչիւր աւուր յարութիւն և մահ  
**314r.** ի հասական եղեալ. ուր մանկութիւնն չոգաւ, ուստի ծե- րութիւնն եկն, իբր ծերա ....\*\*\* ինքն մանուկ առնել ոչ կարաւատ (?), միւս համբակ ծնանի նորագունագոյն, և զոր

\* ) Մի բառ եղծուած.                         \*\*) Երկու կամ երեք բառ եղծուած.  
 \*\*\* ) Երկու բառ եղծուած.

իւր ոչ կարէ տալ, միւսում տայտ Զայտ և ե\* վերայ ծառոց և այզոց կենդանեաց է տեսանել, և այն զի, որ այդում տայր, իւր նախկին պարտ էր տալ. այդ զայտ մտածութիւն մարդկային պահանջէ, իսկ յորժամ Աստուած արուեստագործէ, ամենայն տեղի տացէ:

5

Եթ' այսք այսպէս տարակուտականք և գերազանցութեամբ տարակուսեալ, ի ներքս եկն ինձ այժմ մտածութիւն կատաղեացն և ղծնելութիւնն անմարմին աւելագործաւղացն՝ ըստ իւրաքանչիւր աւուր եղեալքն և ընդ ձեռամբ անկեսէք և բիւրիցս ինչդրելքն ոչ ոք ոչ ևս գտա- 10 նել կարաց, իրը արդեւք զանձառելին զայն և զանասելին ծնելութիւն յոլովաբանեն, ասա ինձ. ոչ վաստակեաց մտածութիւն ասաւղացն, ոչ ի բերս շրջանս պարայեղեաց, ոչ անբացական\*\* եղեն. և սակայն և ոչ այսպէս խրատին յազգամ խաղողոյ և թզոյ ոչինչ | (ասել ՞) կարացնալք՝ յաղա- 15 Յ14v. զըս Աստուծոյ ....\*\*\*նեն: Ասա իսկ ինձ, իրը ....\*\*\*\* այն վերլուծանի ի սաղարթս և ի ստեղունս. իրը նախ այսորիկ ոչ էր ի նմա և ոչ տեսանիւր. այդ ոչ թնիճն է ասեն, այդ երկրի ամենայնն, և իրը թանց սորա ոչինչ բերէ յիւրմէ: Այդ մի յիմարենացուք, քանզի ոչ երկրի է և ոչ կորեկան 20 եղեալն, այդ և երկրի և սերմանցն Տեառն. սակս այսորիկ և թանց սոցա և սոքաւք զայս եարար լինել, զիւրն կարութիւն ցուցեալ, յորժամ ասէր՝ «Արտաքս ածցէ երկրը բան- ջար խոտոյ<sup>1</sup>, իսկ յետ ցուցանելոյ զիւրն կարութիւն և զմեզ խրատելով գոլ երկասէրս և սիրագործաւ:

25

Զինչ ահա այս մեզ ասացաւ, ոչ պարզաբար \*\*\*\*\*\*, այդ զի և յարութեան հաւատացուք. և յորժամ մինչ դարձեալ մտածութեամբ կամեցեալ հասանել՝ ոչ գտցուք, մի դժարեացուք և հեռացուք, այդ բարեմտութեամբ ենթադարձեալք և վերագիսելով զմտածութիւն, ապաստանելով 30 ի կարութիւն Աստուծոյ և քաջանարութիւն:

— — — — —

\* ) Երկի պիտի լինէր «ի».      \*\*) Լուսանցքում՝ «անբանալի», իրը բերան.      \*\*\*) Մի բառ եղծուած.      \*\*\*\*) Մի կամ երկու բառ եղծուած.      \*\*\*\*\*) Լուսանցքում՝ «վարկպարազի».

<sup>1</sup>) Եննդ. Ա. 11.

## Պ.

Յաղագս ոչ պարծել եւ ի բաց աալ իւրեանց զիմաստունս եւ զկարողս մարդկան իմաստութեամբ ամփարթամութեան, այդ գիտել, եթե զամենայն յԱստուծոյ ունի զազնիւն մարդ, եւ յաղագս պատ-<sup>5</sup> բաստապէս վասն նշմարտութեան մեռանել.

Երանելին Պաւոս յամենայնի գոհանալ ուսուցեալ զմնզ Աստուծոյ, ուսոյց եթե և ամենայն մարդ՝ զինչ ստա-  
ցեալ պիտաւորացն յԱստուծոյ, զայս ստացեալ, և զի ոչ  
պարտ պարծել յիմեկ զմարդն իրը յիւրմէ ինչ ստացեալ.  
10 ասէ իսկ. «Զինչ ևս ունիս, զոր ոչ առեր. իսկ եթ՛ և առեր,  
զի՞ պարծիս իրը ոչ առաւղ»<sup>1</sup>. «Քանզի ամեն տուչութիւն  
բարի և ամեն ձիր կատարեալ ի վերուստ է ստորանցեալ, առ  
ի Հաւրէ լուսոյ, որպէս ասէ Յակովոս<sup>2</sup>: Քանզի ինքն է  
տուողն զիմաստութիւն իմաստնոցն ե բան և խոհականութիւն  
15 զիտաւղացն խորհուրդ. դարձուցանէ իսկ և զիտհականսն ի  
յետոյսն և զխորհուրդնոցա յիմարութիւն ամեննեցուն ցուցա-  
նել կարէ, որպէս աստուածային գրութիւնն վկայէ<sup>3</sup>: Քանզի  
հրաժարելով երանելոյն Մովսէսի երթեալ յԵգիպտոս առ  
Փարաւորին և ասացեալ առ Աստուած. «Տէր, զայլ ձեռնար-  
315v. 20 կել կարող, զոր առաքես, | ոչ բաւականել (?) նախ քան ղե-  
րէկ և նախ յերրորդ աւրէ, և ոչ յորմէ հետէ սկսար խաւսել  
բուժաւղի քո, (և) (վ՞)սախտածայն և հեղգալեզու եմ.  
ասէր առ նա Աստուած. Ո՞վ ետ բերան մարդոյ, ով եա-  
րար վատախուլ և խուլ, տեսող և կոյր. ոչ ես Տէր Աս-  
25 տուած. և այժմ զնա, և ես բացից զրերան քո»<sup>4</sup>: Եւ երա-  
նելոյն իսկ Երեմիէի ասաւղի առ Աստուած՝ «Հակդ իշխա-  
նական Տէր, ահա ոչ հանճարեմ խաւսել, զի նորագոյն ես  
եմ», պատասխանէր ուսուցանելով, զնա Աստուած՝ եթ՛  
ինքն տայ բան ոչ գիտաւղաց խաւսել. ասէ իսկ առ նա  
30 Տէրն. «Մի ասեր, եթե նորագոյն ես եմ, զի առ ամենե-  
սեան, առ որս եթ՛ առաքեցից գքեզ, զնասցես, և ըստ ա-  
մենայնի, զոր եթե պատուիրեցից գեղ, խաւսեցիս. մի  
երկիցես ի դիմէ նոցա, զի ընդ քեզ եմ՝ առ ի յարտաքս  
առնուլ<sup>\*</sup> զքեզ, ասէ Տէր»<sup>5</sup>: Եւ զի ասեմ յաղագս բանա-

Լուսանցքնեմ՝ «(կ)եցու(ցան)ել».

<sup>1)</sup> Ա. Կոբենթ. Դ. 7. <sup>2)</sup> Յակովոս. Ա. 17. <sup>3)</sup> Եպոյի  
Խ. 25. <sup>4)</sup> Ելք. Դ. 10—12. <sup>5)</sup> Երեմ. Ա. 6—8.

կանացն և սրբոցն արանց, ուր և պաճարի անբանի երաց Աստուած զբերան առ յանդիմանութիւն, վարձ անիրաւութեան տարաւրինաբար սիրաւղին Բաղաամու. քանզի էշ անձայն մարդկային ձայնիւ բարբառեալ արդել | զմարգարեին 316r.

մաւր Աստուածոյ և անիւաւըն խաւախն և անբանկն բարբառին մարդկային ձայնիւ, զնոյն յեղանակ հրամայելով Աստուածոյ և կամելով, քաջախաւովն և իմաստունք անխաւով լինին և բանաւոր մարդիկ իբր անբանք եղանին:

Քանզի և զնաբուքողնոսոր՝ զթագաւորն տիրացեալն 10 ամենայն երկրի, կամեցեալ պատուհասել Աստուած, սակա որոց եարար տարաւրէնութեանց, առ ը(ն)դ դրով զնա լինել մարդկան, իբր ոչ ամպարտաւանել և ոչ կարծել յիւրմէ հարստութենէ կամ իմաստութենէ ստանալ ինչ զմարդն, սիրու դազանի ետ նմա, որչափ կամեցաւ և որոշեաց ամա- 15 նակ Աստուած, և խոտ իբր եզն ուտել նմա և ընդ իշաւ վայրիսն բնակել. և տեսանիւր յամեննեցունց իբր գազան՝ տիրացեալն ամենայն երկրի: Եւ լցելոյ ամանակին, զոր սահմանեաց զնմանէ Աստուած, դարձեալ կամեցեալ ստեղծաւողին միայն զսիրտս մեր՝ խորհուրդք իւր դարձան առ 20 նա. և ի պատիւ թագաւորութեան իւրոյ կացոյց զնա Աստուած, | և յ(այն)ժամ զիւտաց, եթե կարող է Աստուած 316v. զամենայն գնացեալս յամբարտաւանութեան նուաստացուցանել<sup>2</sup>: Եւ ի վերայ սրբոցն իսկ արանց է գտանել, եթե Աստուածով կեամբ և շարժիմք և եմք, որպէս զրեալ է, <sup>3</sup>: Եւ 25 կամեցաւով Աստուածոյ լոել, զատապսրտին յերկիւղէ մարդկայնւոյ և յերկրայութենէ ըմբռնեալք իբր մարդիկ: Քանզի և երանելումն Եզեկիէզի հրամայեալ Աստուածոյ՝ յետ ահաւրաց տեսութեանցն այնոցիկ, իբր զի զնալ և խաւաել տան իսրայէզի աներկիւղաբար զառ ի յԱստուածոյն 30 տուեալս նմա բանան, և զայս հրամայեալ նմա բազում անգամ, մտեալ ի գերութիւնն՝ չըջէր ի մէջ նոցա եւթն աւուրս, հչ պատմելով նոցա զառ ի յԱստուածոյն. ապա յետ այսորիկ ուսուցանելով զնա Աստուած, զի դէտ տուաւ յԱստուածոյ տանն իսրայէզի և եթ' ոչ պատմեացէ նոցա զառ ի 35 յԱստուածոյն և ի մեղս իւրեանց մեռանին, և արիւնն նոցա ի նորա ձեռաց խնդրի առ ի յԱստուածոյ<sup>4</sup>. յետ այսորիկ դարձեալ լուցելոյ նորա երկիւղի իսրայէզի և հչ պատմելով ժո-

1) Թիւք Ի. 28.

2) Դան Դ. 34.

3) Գործք Ժէ. 28.

4) Հմմա. Եզեկ. Լ. 7—8.

